




850

L III.5







ՆՈՐ ԺՐԴԱՆ

I SURB

ՄՈՒՐՐԱ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԵՎԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1901



ԹԻ ՖԼԻՌՈ

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ев. | Տպարան Պրաց Հրատ. Շնկերութեան
1901

№ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ.—5
2. ԿԵՌԱՔԻ ՍՊԼԱՆՈՍԸ, բանաստեղծ. Լօնգֆելլօի, թարգմ. Կ. Կրառիլենկեանի.—12
3. ԳԻՒԴԻ ՄԱՐԴԻԿ, պատմուածք Լեօի.—14
4. ԻՄ ԴԱՐԴԸ, բանաստեղծ. Յովին. Թումանեանի.—44
5. ՖՐՈՄՈՆ ԿՐՏՈՒՅ, վէպ Ալֆօնս Դօդէի, թարգմ. Տ. Յովհաննիլեանի.—45
6. ՀԱՅՆԵՒ ՆՈՐ ԵՐԳԵՐԻՑ, բան., թարգմ. Զ. Բալուշեանի.—70
7. Ա.Ռ.ՋԻՆ ՀԱՄԲՈՅՐ, բան. Ա. Շատուրեանի.—71
8. ՈՒՇԱՑԱՆ ՍԵՐ, պատմուածք Ա. Ահարոնեանի.—73
9. ՍԱՐՍՈՒԹԵԼԻ ԴԻՊԹ, պատմուածք Դի դր-Մօվլուսանի.—96
10. ԺՈՂՈՎ—(Գրչի հանագ), բան. Ա. Շատուրեանի.—99
11. ՀԵՆՏԻԿ ՍԵՆԿԵՒԻՉ, 25-ամեակի առիթով, Աս. Լիսիցեանի.—100
12. ՊՕԶՆԱՆԻ ՈՒԽՈՒՑՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ, պատմ. Մենկեւիչի, թարգմ. Աս. Լիսիցեանի.—111
13. ԵՂ.ԲԱՅՐ ԷՒԽՆՔ, բան. Արշ. Միսիքարեանի.—130
14. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ. Գլ. I—Միսիթար և Միսիթարեաններ, Լեօի.—131
15. ՀԱՅԱԳԻՑՈՒԹԻՒՆԸ XX ԴԱՐԻ ՄԿՁԲՈՒՄ, Աս. Մալխասեանի.—157
16. Ա.ՄՈՒԵՆՈՒԹԻՒՆ, առողջապահական էտիւդ, բժ. Վ. Արծրունու.—170
17. ՊԱՐԻԶԻ ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱՆ, բժ. Գ. Ա.—194
18. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՒԽՍԱՀԱՅԵՐԻ ՄԷջ 1900 թ., Տ. 8.—197
19. ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ—1. Ա. Էպ. Սեղրակեան. Քահանապական խընդիր, 1. Ա.—2. Գ. Առախնեան. Նոր բառզիրք Ֆրանսահայ, Աս. Ա.—3. Հայկունի. Թաղաւոր Առախիկ և Սետե Հովիկ, 1. Ա.—4. Ա. Զարզագ. Բանաստեղծութիւններ, 1. Ա.—5. Գ. Տումառու, Խարաքտերистիկ և Յօսպոմանիա, 1. Ա.—6. Ս. Շահազիդեան. Յիշողութիւններ Վարդանանց տօնի առիթով, 1.—202
20. ՏՆՏԵՍՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. Մեր երկրի քնած ոյժերը, Ա. Քալանքարի.—223
21. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱԲՀԱՑ. Արեկելան և զանակները Եւրոպական երաժշտութեան մէջ, Խ. Կարա-Մուրզայի.—230

Կողման 1 տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԵՎԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1901

—○—○—○—○—

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ва. | Տպարան Վլադ Հրատ. Ընկերութեան
1901

Дозволено цензурою Тифлисъ, 11-го января 1901 г.

№ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՄԵՐ ՀՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ.—5
2. ԿԵՌՆՔԻ ՍԱՂՄՈԽԸ, բանաստեղծ. Լօնգֆելլօի, թարգմ. Կ. Կրապլինկեանի.—12
3. ԳԻՒՂԻ ՄԱՐԴԻԿ, պատմուածք Լեօի.—14
4. ԻՄ ԴԱՐԴԸ, բանաստեղծ. Յովին. Թումանեանի.—44
5. ՖՐՈՄԾՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ Ալֆօնս Դօդեի, թարգմ. Տ. Յովհաննինեանի.—45
6. ՀԱՅՆԻ ՆՈՐ ԵՐԳԵՐԻՑ, բան., թարգմ. Զ. Բալուղեանի.—70
7. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՅՐ, բան. Ա. Մատուրեանի.—71
8. ՈՒՇԱՑԱԾ ՍԵՐ, պատմուածք Ա. Ահարոնեանի.—73
9. ՍԱՐՍԱՓԵԼԻ ԴԿՊԲ, պատմուածք Դի դը-Մօպասանի.—96
10. ԺՈՂՈՎ.—(Գրչի հանուպք), բան. Ա. Մատուրեանի.—99
11. ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵԻՆՑ, 25-ամեակի առիթով, Աս. Լիսիցեանի.—100
12. ՊՕԶՆԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՅԻՇԱՏԱԿՄԱՆԻՑ, պատմ. Սենկելիչի, թարգմ. Աս. Լիսիցեանի.—111
13. ԵՂԲԱՅՐ ԷՒՆՔ, բան. Արշ. Մխիթարեանի.—130
14. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ. Գլ. I—Մխիթար և Մխիթարեաններ, Լեօի.—131
15. ՀԱՅՈԳԻՑՈՒԹԻՒՆԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ, Աս. Մալխասեանի.—157
16. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ, առողջապահական էտիւդ, բժ. Վ. Արծրունուլ.—170
17. ՊԱՐԻՉԻ ԿԱՆԱԼԻՉՈՑԱՆ, բժ. Գ. Ա.—194
18. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՄԵԶ 1900 թ., Տ. Յ.—197
19. ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—1. Ա. Եպ. Սեղրակեան. Քահանապական խընդիր, Ա. Ա.—2. Գ. Լուինեան. Նոր բազգիրք Ֆրանսահայ, Աս. Ա.—3. Հայկունի. Թագաւոր Լուիկ և Սետե Հովիկ, Ա. Ա.—4. Ա. Զարզդ, Բանաստեղծութիւններ, Ա. Ա.—5. Գ. Տումանով, Խարակտերистիկ և Յօսպունուանուանուան, Ա. Ա.—6. Ա. Շահազիզեան. Ցիշողոթիւններ Վարդանանց տօնի առիթով, Ա.—202
20. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. Մեր երկրի քնած ոյժերը, Ա. Բալանիքարի.—223
21. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ. Արեւելեան եղանակները եւրոպական երաժշտութեան մէջ, Խ. Կարա-Մուրզայի.—230

22. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին անցքերի ազդեցութիւնը երկրի ներքին կեանքի վրայ. — Ամսուաց ընթացքում հրատարակուած օրէնսդրական կարգադրութիւններ. — Մի քանի վերանորողութերի լեռա-ձգումը. — Լուս. մինխառըի շրջարերականը. — Նոր բարձրագոյն դպրոցներ. — Ծէալխատներին համալսարանում ընդուներու հարցը. — Զինուորական մինխառըի կարգադրութիւնը՝ նորակոչներին գրագիտութիւն սովորեցնելու մասին. — Աքաղի վերացումը. — Գիշահարդի վերացումը Կովկասում. — Ծալըրերի և կենսունի խնդիրը. — Հովանաւորեալ արդիւնագործներ. — Գոյութեան կոսի էթիկան. — Ազգոց միջոց սանձահարկու շահագէտներին. — Նաւթագործների ժողովներում ձախնասութեան եղանակը. — Պեսութեան տարրեր ցեղերը կապող զգացմունքներ. — Յօրելեաններ և մահեր. — Հայոց հոգևորականութեան վերարերմունքը զէպի իր ժողովուրդը. — Նորագոյն նմուշներ կոնսիստորիական իրաւագիտութեան, 1. Ա. Ս. — Երէցիոնական հարց, Յ. Ս. — 235
23. ԳԱՒԱՐԱԿԱՆ ԿԵԱՆԻՑ, Մուացուած աշխարհ կամ «Մեռնող երկիր»: — Մեր գիմումը մեր ընթերցողներին. — Ընդհանուր տեսութիւն անցեալ տարուայ. տնտեսական վիճակ, ընական աղէտներ. — Ախալքալաքի երկրաշարժը. հասարակական լայն բարեղործութիւն. Ժողովրդի մասնակցութիւնը. — Վաշինտութիւնը Նխալքալաքի գաւառում. մամուլի կատարած զերը. — Նոր գծախոսութիւն Նխալքալաքի գաւառում. հայի բզեզ. — Կարս. գիւղանտնեսական ընկերակցութիւններ կազմելու միտքը. — Ալէքսանդրօսօթ. Կարսի երկաթուղին. — Երեւան. հոգարարձական ընտրութիւններ. — Շոշի. «Եշանակովի» հոգարարձուներ. — «Մեռած կէտեր»: — Կազզուան. վէճեր հասարակութեան և բարերարի մէջ. — Բաթում. քահանական ոտքի հարցը. — Բագու. բանուորների ապահովագրութիւն. Ճրի ճաշարան հայ աղքանների համար. թատրոն և դերասանական հանապարհուղութիւններ. բարեղործութիւններ. մի զատաստանական գործ: Ս. — 253
24. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ա. Ս. — 267
25. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, Նամակ Թէհրանից. * — 276
26. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ — 280
27. ՅԱԼԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլսովի, Թարգմ. Տ. Յովիանիսիսանի: 1—32
28. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Դեռ ևս ամենահին ժամանակներում մարդկութիւնը իր թէ բանաստեղծական և թէ կրօնափիլիսով փայտական ստեղծագործութիւնների մէջ դուրս է բերել բարին ու չարը պատկերացնող երկու ներհակ ոյժերի կտաաղի մաքառումը:

Այնուհետև անցել են դարեր, կործանուել են ու ծնուել ազգեր, տէրութիւններ, վոփոխուել են կրօններ և ստեղծուել նոր քաղաքակրթութիւններ, բայց բարին և չարի կոխն այսօր ևս չէ դադարել:

Եւ դա բնական է:

Այնտեղ, ուր կայ հասարակական կեանք, ուր կայ մոռքի աշխուժութիւն՝ չեն կարող կեանքի զանազան երևոյթների նկատմամբ չը լինել տարբեր տեսակէտեր շարի և բարի, լաւի և վատի մասին:

Այդպիսի մուաւոր աշխուժութիւնից, բարեբախտաբար, զուրկ չէ եզել և հայերիս կեանքը, նոյն իսկ հին ժամանակներում, օրինակ՝ Հինդերորդ դարում՝ ի հարկէ ժամանակի ընթացքում փոփոխուեցին թէ մեր կեանքի պայմանները և թէ մեր պահանջները, ուստի և փոխուեցին նաև մաքառման առիթներն ու խնդիրները:

Այդպէս ահա մեր նոր կեանքի վերածնութեան օրից որոշ դիրք բռնեցին երկու տեսակէտեր. մէջ կը ձգտում էր հիմնովին նորոգել մեր լճացած կեանքը, եւրոպական առաջադէմ հասկացողութիւնների համաձայն, իսկ միւսը՝ ամեն ճիզ էր թափում պահպանել մեր նախնիներից մնացած ոչ միայն մագալաթների լեզուն, այլև մեր պապերի նախաջհեղեղեան հասկացողութիւնները՝ կնոջ, ընտանիքի, ազգայնութեան, կրօնի, արդարադատութեան, կրթութեան և եկեղեցավարչական կարգերի մասին:

Անխուսափելի էր երկու ուղղութիւնների ընդհարումը Սկսուեց ճակատամարտը, որ մերթ սաստկանալով, մերթ մեղմանալով հասաւ անընդհատ հոսող ժամանակի ան անջրապետին, որ ցնծութեամբ այսօր ամեն տեղ կանգնեցնում է մորդկութիւնը, կարծես վերացական այդ նոր սահմանով, այսինքն՝ նոր դարով, նա ցանկանում լինէր հաւատալ, որ այսուհետեւ սկսուելու է մի նոր կեանքի դարադուիս Բայց, ի հարկէ, այդ պայմանական շէմքի առաջ կեանքը կանդ չ առնիլ, և Քսաներորդ դարում ևս կը շարունակուի առաջադէմ հոսանքների մաքառումը նրանց կաշկանդող յետադէմ խոշընդուների հետ:

Իսկն ասած, ինչպէս վարդադոյն արշալոյսից մինչեւ արեկի վերջալոյսը և դրան յաջորդող գիշերային խաւարը անթիւ են արեգակի շողբերի ուժնութեան ու փայլի նրբութիւնները, այնպէս և բազմաթիւ են մարդկանց հայեացընների տարբերութիւնների աստիճանները: Բայց այդ բոլոր բազմազանութիւնը կարելի է վերածել երկու հիմնական տեսակի—լոյսի և խաւարի, կամ՝ առաջադիմութեան և յետադիմութեան: Այն ժամանակ այդ երկու հակառակ բեկոնների արանքում կը մնայ զետեղել միւս՝ շատ թէ ըիչ տարբերուող աստիճանները: Ուրեմն, թէ առաջադիմութեան և թէ յետադիմական ուղղութիւններն ունին բազմաթիւ զանազանակերպութիւններ, սակայն մեր խօսքը՝ բնորոշ հայեացընների մասին է:

Այսպէս թէ այնպէս, մեր մօտիկ անցեալում թէն շատ ջանքեր անպատռվ կորան, շատ կորուստներ եղան և երիտասարդութեան շատ օդային ամրոցներ փուլ եկան, բայց, այնուամենայնիւ, այդ անցեալ գաղափարական կոռուի շնորհիւ շատ նոր լուսաւոր մոգեր մոտան մեր ժողովրդի մէջ և գտան իրականութիւնը շատ բան պարզեց մեր ինստելիզենցիայի համար:

Անշուշտ կենսական անաջողութիւնները և իրականութեան սարսափելի հարսւածները չէին կարող վհատեցնել առաջադէմ գործիչներին, որովհետեւ հոյեացք ձգելով գէտի այն երկայն ճանապարհը, որ անթիւ զոհ հարերութիւններով հասցրել է մարդկութիւնը ներկայ կացութեան, —ուր թէն գեռ լուսում են թշուառութեան լայն ու հեծեծանքը, սակայն, այնուամենայնիւ, ակներե է հասարակական կարգերի բարւոքումը, —այդ գործիչները հիմք ունին հաւատալու, որ ճշմարտութեան և արգարութեան դադափարները, միացած տոկուն և անձնուեր աշխատանքի հետ, կարող են ամայի անապատներն անգամ գեղեցիկ բուրաստաններ գարձնել:

Այդ հաւատը սակայն չէ ասում առաջադէմ մորդկութեան, թէ ձեռներդ ծալած սպասիր, որ ճակատագիրը տնօրինէ ապագագ և վերացնի յուսի պայմանները, այլ ստիպում է նրան՝ լորել իր մոքի, զգացմունքի և կամքի բոլոր ոյժերը՝ իդէալների համար կռուելու նպատակով:

Եւ տիրող չարութիւնը չէ կարող յուսահատեցնել նրան:

Ճիշդ. է, գոյութեան կռիւն ընդհանուր բնական մի օքէնք է. նո անդութ է խոյլերի նկատմամբ և զժուխային տանջանքներ է պատրաստում անպաշտպանների համար, սակայն չը պէտք է մոռանալ, որ այդ նոյն ահեղ բնութիւնը մարդուն տուել է մի այնպիսի հզօր զէնք, ինչպէս նրա համարձակ միտքն է և անխորստակելի կամքը: Դրանց շնորհիւ մարդը մինչև օրս մեծամեծ յաղթութիւններ է տարել բնութեան վիթխարի ոյժերի

վրայ և այսուհետեւ կարող է, նոյն զէնքերին միացնելով ամենակարող սէրը, կերպարանափոխել նաև հասարակական այն պայմանները, որոնք մեծամասնութեանը տանջանքներ են պատճառում:

Այդպիսի փորձեր սկսուած են, և մենք հաւատում ենք, որ կը գայ մի երջանիկ օր, երբ գոյութեան կուուի արիւնալի ճանկերից կը խլուի մարդկանց՝ լինելու լինելու խնդիրը:

Եւ գա ցնո՞րդ չէ:

Անշուշտ, մենք չենք մոռանում, որ տարբեր են կեանքի պայմանները երկրի զանազան մասերում, իրար նման չեն հասարակական կարգերը, պետական կազմակերպութիւնները, կրօնական հայեացքները, ցեղական ընդունակութիւնները, տնտեսական գրութիւնները և մաքի ու ճաշակի առանձնայատկութիւնները. բայց չը նայած այդ բոլոր զանազանութիւններին՝ մարդկութիւնն ունի և ընդհանուր կարիքներ, համամարդկային շահեր ու պահանջներ, որոնք ուսիպում են ազգերին օրեցօր աւելի և աւելի մօտենալ իրար, եղբայրական օգնութիւն հասցնել միմեանց և կամաց-կամաց ջնջել ազգերը բաժանող այն արուեստական անջրպեանները, որ կանդնեցրել է տղիտութիւնը՝ միացած չարութեան ու յիմարութեան հետ:

Բոլոր մարդիկ միենայն մայր բնութեան զաւակներն են:

Եւ եթէ անհուն տիեզերի ամենաչին կէտի (Երկրի) վրայ ապլող մարդ-արարածը կարողացաւ իր մաքի, զգացմունքների և կամքի խիղախ թռիչքներով ստեղծել մի նոր աշխարհ և միայն մարդուն յատուկ՝ գաղափարների եւ իրերի մի նոր տիեզերք, այդ անշասկած նա արաւ հին և նոր մարդկութեան յաջորդական ու հաւաքական ջանկը երով: Միայն այդպիսի չանքերով էլ նա կարող է համնել արդարութեան իդէալին, այսինքն՝ ընդհանուր բարօրութեան:

Իսկ թէ համամարդկային բարօրութեան դադա-

փարը մի խորթ հասկացողութիւն չէ ազդերի համար և յոյս կայ մօտենալ ապագայում այդ փրկարար կատարելութեան, դա երեւում է միջազգային շատ ձեռնարկութիւններից. դա երեւում է նաև ամենավերջին քաղաքական անցքերից:

Անկանակած մեր խօսքերին հակասում են հեռաւոր Զինաստանում կամ Աֆրիկայում կատարուող արիւնալի անցքերը: Բայց չը պէտք է մոռանալ այդ երեսյթների և միւս կողմը: Միթէ ոչ մի ուշադրութեան արժանի չէ այն ճիշդ իրողութիւնը, որ հակառակ կառավարողների համակրութիւններին կամ հակակրութիւններին՝ կառավարուող ժողովուրդների ահագին՝ խմբեր, բոլորովին անկախ և իրանց խղճի թելադրութեամբ վճիռներ են կայացնում, ներկայացնելով այդ ձեռով երկրի վրայ երդուեանների մի տեսակ հսկայական համամարդկային դատարան:

Այդպէս, օրինակ, Անգլիայի հզօրութիւնը չարգելեց՝ ոչ միայն օտար ժողովուրդներին, այլև իր հարազատ զաւակներից շատերին, սպարսաւել նրա բոնածընթացքը բօէրների դատում: Եւրոպական խոշոր կապիտալի շահերը չը կուրացրին նոյն Եւրոպայի հասարակական կարծիքը, որ չարդարացրեց չինացի ժողովրդի գէմ գործ դրած բարբարոսութիւնները: Այդ նոյն կարծիքը չը ծափահարեց, երբ լսեց՝ Աֆրիկայի խորքերում, անպաշտպան սեամորթներին՝ գաղանային տանջանքների միջոցով «քաղաքակրթող» գերմանացի և ֆրանսիացի դահլիճների խժդժութիւնների մասին: Քաղաքակրթ ազդերն անտարբեր չը գտնուեցան և մի հրէայ Դրէյֆուսի դատում, չը նայած որ այդ ֆրանսիայի մի ներքին գործ էր և բռնաբարուում էր արդարադատութիւնը մի օտար երկրում:

Վերև յիշած երեսյթներն ի նկատի ունենալով, կարելի է հաւատալ, որ կամաց-կամաց կ'ոչնչանան մարդկանց բաժանող նախապաշարմունքներն ու մոլորութիւնները և համամարդկային բարօրութեան դաղափարը

Ժողովուրդների հասկացողութիւնների մէջ, ժամանակի ընթացքում, աւելի ընդարձակ գրաւումներ կ'անէ:

Եւ այդ առաջադիմական հանդիսաւոր ընթացքի մէջ մամուլը մեծ դեր ունի կատարած և դեռ ևս աւելի մեծ դեր ունի իր առաջ:

Այդպէս ուրեմն՝ մամուլը մի նուրբ և զգայուն գործիք է, որ իր մէջ արտացոլում է ոչ միայն անհուն տիեզերքը եր արեգակներով և մոլորակներով, որ իր էջերում ցայց է տալիս ոչ միայն լոյս աշխարհը եր բոլոր հրաշալիքներով, այլև պատկերացնում է այդ նոյն էջերում մարդկութեան լայնածաւալ և մշտափոփոխ կեանքի ծփող ովկիանոսը, լսելի է դարձնում թէ հարազատ և թէ մերձաւոր ու հեռաւոր ազգերի ուրախութիւններն ու ցաւերը, յոյսերն ու ձըգումները:

Ի հարկէ այդ նոյն մամուլը կարող է խաւար բռնութեան ձեռքում էլ գործիք գառնալ, բայց այդ գեղքում ևս չարիքի ամենազօրեղ թշնամին դարձեալ ազատ և առաջադէմ մամուլն է:

Միւս կողմից չը պէտք է մնանալ, որ ժողովուրդների կեանքը օրէցօր բարդանում է, չատ խնդիրներ խճճւում և գժուարարուծ հանգոյցներ են դառնում, ուստի նրանդ, մորքի խորութիւն, դիտողութեան սրութիւն և մարդասէր անաշառութիւն է պահանջւում գրական գործիշց: Բայց նո լրջութեան հետ պէտք է միացնէ և կենդանութիւն, որպէսզի նրա խօսքը կարողանայ սթափեցնել առօրեայ հողսերի մէջ մարդկանց մանրացած միտքը, կարողանայ բորբոքել նրանց մէջ մարած աղնիւ զգացմունքները և ոյժ տայ նրանց լքուած կամֆին, գրդելով ներդործական դեր կատարել շրջապատող հասարակական կեանքում՝ ինպաստ արդարութեան ամենաբարձր իդէալին, այն է՝ անխափիր բոլոր աշխատող և խաղաղ ժողովուրդների բարօրութեան:

Եւ այդ վսեմ նպատակին հասնելու համար գրական բոլոր առաջադէմ ոյժերը պէտք է հաւաքուեն մի աղնիւ գրօշակի տակ, որոշ հանդէսների շուրջը, և համերաշխ ջանքերով աշխատեն՝ անշէջ պահել ժողովուրդների ուղին լուսաւորող առաջադիմութեան վիթխարի ջահը:

Յանկանք և աշխատենք, ընթերցող, որ Մուրն ամսագիրն էլ բախտ ունենայ այդպիսի մի հանդէս դառնալու:

ԿԵԱՆՔԻ ՍԱՂՄՈՍԸ

(ԼոնգՇելլո)

Ի՞նձ մի՛ ասիր ք երգերում վետառ,
Թէ մեր կեանքը լոկ երազ է անցաւոր.
Ամեն բան էլ ունի իմաս մի ներքին,
Մեռած է նա, ում մէջ նիրհում է ոգին:
Կեանքը կեղծիք եւ կատակ չէ կամ երազ,
Մահ, գերեզման նպատակ չեն անկատած:
Այն խօսերը՝ „հող էիր դու, հո՛ղ դառնաս“,
Քո այդ անմահ հոգու համար չէ ատուած:
Վայելքների, վետի մէջ չէ կեանքը մեր,
Այս մեր ուղին ունի եւ սո՛ւրբ նպատակ,
Մեր ոյժի չափ սիրե՛լ, գործել բարիքներ,
Եւ ամեն օր յառա՛ջ գնալ անսայթաք:
Յառա՛ջ, յոյսով, աշխարհի մէջ գործ շա՛ս կայ,
Ժամանակը այնիւն արազ է քռչում—
Մեր խեղն սիրտն էլ, քէպէս բաղիում է վասահ,
Բայց մեր կրծքում քաղման երգ է մե՛րբ հիշում:
Ողջ աշխարհը կռուի դաշ է մեզ անվերջ.
Ընդդէմ քաղդի՛ հւմարտութեան կռուի մէջ,
Դու՝ մունջ սրուկ, անկամք գրաս մի՛ լինիր,
Յառա՛ջ գնա՛ եւ սուրբ մարտում հա՛ջ մեռիր:

Թո՞ղ ապագայ երազանքը հաճելի,
 իսկ անցեալը մեռելներին քո՞ղ քաղէ...
 Ներկան է կեանք: Մարտնչողի համարիս
 Նպատակն էլ ու կոչումն էլ այդտեղ է:
 Նրա գործը — օրինակ է ամենքին,
 Որ կարող ենք անարդարը մենք յաղթել.
 Եւ մտնելով մուր գերեզման, քանիկազին
 Հետքեր բողնել: Եւ մահուանից յես ապրել:
 Եւ կեանքի զոռ ալիքներից հալածուած,
 Գո՞ւցէ մի օր, մեր եղբայրը մոլորուած,
 Թարմ հետքերով նա կը գտնի այդ ուղին,
 Եւ կը զարքնի նորից աշխայժ վեհ հոգին:
 Դէ՞հ, վե՛ր կենանք, գործի զնանք մենք շուտով,
 Հերիս քննեն, արդէն ժամ է արքնութեան:
 Եւ քո՞ղ հոգին ապրի, գործի հաւատով —
 Յօգուտ քարու եւ համարտի յաղթութեան:

Կ. ԿՐՍ.ՍԻԼՆԻԿԵԱՆ

ԳԻՒՂԻՄ ԱՍՐԴԻԿ

I

ԱՅԾԱՐԱԾ ԵՂՈՆ

Ա

Դարնան արձակուրդներին ես ստիպուած էի մնալ
քաղաքում։ Հեռու էր մեր գիւղը, բայց պատճառը հետ-
ուաւորութիւնը չէր, այլ այն, որ նա լեռնային գիւղ
էր։ Մեր գարունը գալիս է ուշ, գալուց յետոյ էլ եր-
կար տանջում է մարդկանց իր ձիւնախառն անձրենե-
րով, թանձր մշուշներով, մանաւանդ անտանելի ցեխե-
րով։ Ոչինչ հրապոյր չը կար տարուայ այդ ժամանակ գիւղ
գնալու մէջ։

Բայց մի տարի Զատիկն ուշացաւ։ Ապրիլի 15-ին
մեզ արձակեցին մինչև 29-ը. իսկ դա մի ժամանակա-
միջոց էր, երբ նոյն իսկ մեր մառախլապատ ու ջրողող
սարերն էլ չորանում են։ Եղբայրս եկաւ, ինձ համար
ձի բերեց։ Իմ գոլոցական կեանքի մէջ դա առաջին
անգամն էր, որ Զատիկին տուն էի գնում։

Հենց այդ պատճառով էլ մայրս գրկեց ինձ մի ա-
ռանձին, կրակոտ հրճուանիքով։ Նա հաշուել էր, որ վեց
անգամ Զատիկը մտել է մեր տան դռնով և ոչ մի ան-
դամ չէ գտել ինձ մեր օջախի կողքին։

—Մահը մերն է, մենք մահինն ենք, աւելացրեց
նա, իր արտասունքոտ համբոյրները դրոշմելով իմ
դէմքին։

Անցեալ տարի՝ մայրս հաղիւ էր ազատուել մահից,

և այնուհետեւ այդ խօսքերը սովորական առացուածք էին դարձել նրա բերանում։ Ամեն մի նշանաւոր օր նա կամենում էր գուշակել, թէ արդեօք դա վերջինը կը լինի իր համար։ Եւ այս անդամ էլ նա արտասանեց.

— Ո՞վ գիտէ, եկող տարի...

Բայց չը վերջացրեց։ Մի ակնթարժում զգաց, որ ինձ տխուր մոքեր յայտնելու համար չեր բերել տուել և շտապեց քաղցրացնել իմ սիրուը, ինչպէս կարող էր։ Հարցերի տարափ էր աեղում ինձ վրայ։ — Ի՞նչպէս եմ քաղաքում, գլուխս հօ չէ ցաւել, անկողինս փափռւկ էր։ Մայրական հետաքրքրութիւնը գեռ չը յագեցրած, նա յանկարծ ընդհատեց իր հարցուփորձը և յայտնեց, որ այծարած եղօն պսակուել է։

— Հա, բացականչեցի ես սաստիկ զարմացած։

Միայն մոյրս գիտէր, թէ ինչ է ինձ համար այդ այծարածը։ Նա, ի հարկէ, նկատեց, թէ որպիսի մեծ ախորժանքով եմ ես լսում այդ նորութիւնը, ու ինքն էլ ծիծագլուտ և ուրախ էր։ Կարծես պսակուել էր մեր տան անդամներից մէկը, կարծես այդ հարսանիքը մեր ընտանեկան կեանքի մէջ մի նոր շրջան պիտի բաց անէ։

Ես նոյն իսկ մոռացայ, որ քաղաքից ընծաներ եմ բերել իմ եղլոր երեխաների համար, որոնք շրջապատել էին ինձ, ձգձգում էին իմ աշակերտական զգեստը, ճխլուում էին իմ գլխարկը, տշխատելով իրանց բոլոր մատներով շօշափել և եթէ հնար է՝ նաև պոկել նրա վրայ կպցրած պղնձէ նշանը։ Հարցնում էի մօրս. Երբ, ինչպէս եւ նա պատմում էր, հիացած իմ վառ հետաքրքրութիւնից։

Այն, այդ գէպքը, որ տեղի էր ունեցել եօթը շարքաթ առաջ, բարեկենդանին, աւելի հետաքրքրական էր ինձ համար քան Զատիկը, որ արդէն սկսել էր իր ազմկալի գնացքը և որին ես վաղուց չեի տեսել։

Ամեն բան կարող էր պատահել։ Բայց այծարած եղօն ամուսնացած — դա անհաւատի էր...

Բ

Ես նրան ճանաչում էի վաղուց, իմ մանկութեան օրերից։

Մեր բակի մեծ մասը Մէհրունց կտուրն էր Մեզ համար մի երկրորդ տուն էր այդ կտուրը։ Ամառուայ գիշերներն այդտեղ քնելը մի առանձին հրապար ու նէր եղբայրներիս և ինձ համար Այդտեղ էինք խաղում մենք, այդտեղից էինք տեսնում գիւղը և կամ երբ այլ ևս գործ չէր մնում անելու, մօտենում էինք Մէհրունց ահագին երդին և նրա ծակով նայում էինք ցած, տեսնում էինք թէ ինչ են անում այնտեղ։

Լեռնային հայ գիւղը զարմանալի դրացիասիրութիւն է սովորեցնում։ Տեղաւորուած լինելով լերան լանջի վրայ, նա այնպէս է սահմանում, որ մի տան կտուրը միւսի բակը լինի։ Մեր կտուրն էլ ուրիշի բակն էր և մենք էլ տեսնում էինք երդի ծակով դէպի մեզ ուղղած հետաքրքիր աչքեր։

Ընդհանուր կանոն էր՝ բողոքել այդքան մօտիկ հարեւանութեան դէմ միայն այն դէպօւմ, երբ երդի ծակից անզգուշութեամբ կամ դիտմամբ հող էին թափում։ Խոստովանում եմ, այդ տեսակ չարութեան համար ես շատ անգամ եմ Մէհրունց պառաւի հայհոյանկներն ու անէծքները կերել։ Մի անգամ նա տանից հանեց և մօրս մօտ բերեց մի մեծ կաթսա, որ լիքն էր նոր մէրած մածնով։ Իմ թափած հողը ծածկել էր մածնի երեսը։ Այն օրուանից ես վախենում էի պառաւից։

Բայց և այնպէս, Մէհրունց տունը զարմանալի համբերող էր այն կողմով, որ նա դրացիական փոխադարձութիւնից զուրկ էր. նա չունէր իր առջեւ հարեւանի կտուր, ուրեմն չէր կարող քնել ուրիշի կտրին, նայել ուրիշի երդից։ Մէհրունց տանից ցած զառիվայրը այնքան ուղղաձիգ էր, որ տուն չինել անհնարին էին համարել, և լայն տեղ էր մնացել փողոցի համար, որ պը-

տոյտ էր գալիս Մէհրունց մեծ ցանկապատի տակով ու երկու հինաւուրց մեծ ծառերի միջով գլորւում էր դէպի նեղ ու երկար ձորը:

Սակայն հարևանի կտուրի փոխարէն Մէհրունց տունն ունէր մեծ ու լայն, թէև շատ էլ զառիվայր բակ: Այնտեղ բուսած էին թթենիներ, դրանց տակ թափուած էին հին մեծ գերաններ, իսկ այդ գերանների վրայ էր լինում եղօն:

Ես նրան այնտեղ էի տեսնում: Տեսնում էի ամեն երեկոյ, գարնան սկզբից մինչեւ աշնան վերջը:

Ինչպէս որ Մէհրունց բակից չէր կարող պակասել այծերի հօտը, այնպէս էլ այդ հօտից չէր կարող պակասել եղօն:

Երբէք: Ես այժմ էլ աշխատում եմ յիշել գոնէ մի երեկոյ, երբ եղօն իր տեղը չը լիներ: Բայց չը կայ իմյիշողութեան մէջ այդպիսի բացառութիւն և ինձ թւում է թէ նա չէր հիւանդանում, գոնէ այն ամիսների ընթացքում, երբ նա այծեր էր արածացնում: Տեսնուածքան՝ չէր, որ նա իր հօտից յետ մնար արօտ գնալիս, թէ վերագաւնալիս: Գնալը, քանի երեխայ էի, չէի տեսնում, բայց ամեն օր վերադարձը մեր աշքի առջեւ էր: Օրուայ որոշ ժամին եկեղեցու դաւթում երեսում էին եղօի առաջընթաց այծերը, երկու կամ երեք հատուկապատճեններ, միմեանց ետեւից լոյս էին ընկնում և միւս այծերը, իսկ յետոյ, անպատճառ բոլորից յետոյ, երեսում էր ինքը եղօն:

Նա չէր սիսալուում նոյն իսկ այնպիսի օրերին, երբ արեգակ չէր լինում: Իսկ մեր գիւղը շատ ու շատ էր տեսնում այդպիսի օրեր: Մշուշը պատել է ամբողջ աշխարհը, չը գիտես՝ արդեօք մթնում է, թէ լուսանում է մուայլ, անլոյս, խոնաւ օրը: Գիտցողը եղօն է: Այդպիսի օրերին մայրս քանի անգամ ուղարկել է ինձ Մէհրունց կտուրը, որպէսզի իմանամ՝ արդեօք եկել է եղօի հօտը:

Միայն այն ժամանակ, երբ հաստատում էր, որ

եկել է, կանայք վերջ էին դնում իրանց գործին և վեր
կենում, երեկոյեան պատրաստութիւններն սկսում:

Նառ հօտեր էին մոռնում մեր գիւղը, բայց միայն
եղօն էր, որ երբէք չէր խաբում իր հարեւաններին...

Գ.

Միջահասակ էր եղօն, բարակ կազմուածքի տէր:
Նա ջահէլ էլ չէր: Մայրս ասում էր թէ վազուց է նրան
այդպէս տեսնում:

Բացի այս տեղեկութիւններից, ինչ կարող եմ աշ-
սել՝ Եղօին նկարագրելու համար: Գուցէ այն, որ նա
հագնում էր գեղնաւուն շալի չուփայ, մէջքին կազած
ունէր հսկուի գորշ, գործած քստկը, որի մէջ, ի հարկէ,
նրա հացն էր պահւում: Նա մի մեծ մահակ էլ ունէր:
Բայց այդ բոլորը գիւղական աշխարհում շատ սովորա-
կան բաներ են:

Իսկ ինչ էր արտայայտում Եղօի գէմքը, ինչ տե-
սակ մարդ էր նա: Ահա այդ գժուար է ասել: Մարդու
հոգին նրա հայեացքի մէջ է երեան գալիս և այն ար-
տայայտութեան մէջ, որ ստանում է ամբողջ գէմքը.
Իսկ Եղօի աչքերը աեսնել անկարելի էր. նրա գէմքի
վերին մասը մշտապէս ծածկուած էր: Եղօի սովորու-
թիւնն էր փափախը քաշել աչքերի վրայ, այնպէս որ
երբ նա կամենում էր քիչ գէպի վեր նայել, պիտի
բարձրացնէր ամեսող գլուխը:

Ինչու էր այդպէս անում: Ահա այս հարցն էր, որ
գրաւում էր իմ մանկական հետաքրքրութիւնը: Ես
անթիւ անդամ գիմել եմ մօրս. նա աշխատում էր բա-
ցատրել, բայց զանազան ենթագրութիւններից գէնը
գնալ չէր կարողանում: Հաստատն այն էր, որ ոչ ոք չէ
աեսնել Եղօի ճակատը: Ոչ ոք, բայցի, ի հարկէ, նրա մօ-
րից, որ Մէհրունց պառաւն էր: Տարէնը երկու կամ
երեք անդամ, ինչպէս պատմում էր իմ մայքը, պառա-
ւն աջողւում էր ամբողջ օրեր շարունակուող աղաչանք-

ներով ու յանդիմանութիւններով կակզեցնել Եղօին և
լուսնալ նրա գլուխը Այդ ժամանակ էլ նա տեսնում
էր որդու ճակատը:

Միայն շատ ուշադրութեամբ նայողը կարող էր
նկատել փափախի մազերի տակից երկու նեղ ու փոք-
րիկ աչքեր, որոնք անդադար ճաճապում էին, կիսախոռվ,
կարծես միշտ իրանց առջև փայլուն առարկաներ ու-
նէին, որոնց չէ կարելի նայել առանց կոպերը կուչ տ-
ծելու:

Բաց էին մնում նրա բարակ ու մեծ քիթը, դուրս
ցցուած, նիհար այտերը և միշտ կիսաբաց բերանը:
Նա ունէր փոքրիկ բեղեր և շատ ցանցառ միրուք, որ
կարծես երբէք չէր երկարանում:

Զը գիտեմ դուք ինչպէս կը հասկանաք այսպիսի գէմձ-
քը, բայց ինձ վրայ նա միշտ թողնում էր մի խորհրդա-
գաւոր, դժուար հասկանալի տպաւորութիւն...

Դ.

Երեկի հէնց այդ է պատճառը, որ ես այժմ էլ,
այնքան տարիներից յետոյ, կարողանում եմ մտաքերել
Եղօին միայն մի տեսակ խորհրդաւոր քօղով ծածկուած
միշտավայրի մէջ:

Այն երեկոները, երբ ես տեսնում էի նրան, ի հար-
կէ, միանման չէին: Կային պարզ, աստղագարդ երեկո-
ներ, կային միանդամոյն խաւար ու մառալապատ,
ինչպէս նաև հրաշալի լուսնեակ երեկոներ: Բայց իմ յիշ-
շողութիւնը մի տեսակ երեկոների մէջ է ծրաբել Եղօին
ու այդպէս էլ պահել:

Խաղաղ է չորս կողմը, ամեն ինչ մի տեսակ սպա-
սողութեան մէջ է, կարծես ուղում է վճռել՝ կը լինի
արդեօք թէ ոչ: Այդպէս տրամադրովը երկինքն է: Նա
ծածկուած է ամպերով, տեղատեղ ծանր ու սե, շատ
տեղ բարակ, կամքնագոյն ամպերով: Սպասում ես անձ-
քեի, բայց բնութեան մէջ կայ մի առայդ, յուսատու-

շեշտ, որ թելադրում է թէ անձրեւ, երեխ, չի լինի. և
ամբողջ գիւղը դուրսն է գտնուում:

Շների հաշոց անդամ չէ լուում, կարծես այդ տես-
սակ գիշերներին երկինքը ինքն է հրամայում լուռ ու
հանդիսաւ մնալու Հեռու հորիզոնի վրայ, մթութեան մէջ
միայն իրանց անորոշ ուկուագծերը ցոյց տուող սարերի
գլխին, եռանդով փայլատակում է կայծակը, բայց որոտ
չը կայ: Նա յաճախ այնքան զօրաւոր է, որ լուսաւորում է
և գիւղը, նօսր խաւարի միջից հանելով կամ Եղօի այ-
ծերի միրուքաւոր գլուխները, կամ կտրի ծայրին նըս-
տած ալեորի գէմքը, կամ թէ շտապով ինչոր տեղ վա-
զող շանը: Մեզմ կերպով, կարծես վախվախելով, օրօր-
ւում են թթենիների տերեները. և երկնային այս խա-
զաղութեան մէջ աղօթքի մրմունջների նման բարձրա-
նում են մարդկանց հանդարտ ու հեղ խօսակցութիւն-
ները: Նոյն իսկ աղաղակներն անդամ մի կերպ զսպուած
ու մեզմ են հասնում՝ բնութեան պէս տրամադրուած
մարդու ականջնին...

Զը գիտեմ ինչն այդ տեսակ երեկօների հետ իմ յի-
շողութեան մէջ կապուած է և զիւղական թոնիրը:
Ահա այն բարձր բակում, մեր տան կողքին, հայ են
թխում: Հրեղէն սիւնը երբեմն դուրս է թռչում թոնրի
միջից, տարածում է մի պայծառ լուսաւորութիւն, որ
բաց է անում այսպիսի տեսարան.— այծերի հօտը դան-
դաղ որոնում է. Մէհրունց հարսը վերջին այծերն է
կթում: մի քանի բարձրահասակ այծեր գերանների
վրայ են և նրանց մէջ եղօն իր կարճ երեկոն է անց-
կացնում:

Ի՞նչ էր նա անում այդպէս անշարժ ու անխօս,
երեսը դարձրած զէպի գիւղամէջ: Ինձ թւում էր, թէ
նա չէ կշտանում գիւղը գիտելուց. չէ որ միայն երե-
կոյեան մի քանի վաղանցուկ ժամերն են տուած նրան՝
աշխարհը, մարդկային աշխարհը տեսնելու համար:
Մնացած ժամանակը նա բացակայ էր այդ աշխարհից
և նրա համար ոչ տօն ու կիրակի կար, ոչ անձրեւ ու ցեխ:

Մացնելով հօտը մեծ ու զառիվայր բակը, Եղօն չէր հեռանում այնաեղից մինչև վաղ առաւուր, մինչեւ արօտ դնալու ժամը՝ կարծես իրաւունք չէր համարում գնալ զիւղամէջ, մարդկանց շարքերը մտնել: Հեռու ամենքից, նա կարծես խորթ ու օտար էր հայրենի գիւղում և զիւղն էլ հաստատում էր, որ նա, այն, այդպէս է: Հարևան բակերում մարդիկ էին լինում կանգնած, շատերն անցնում էին փողոցի բայց ոչ ոք «քարի երեկոյ» չէր ասում Եղօն: Նոյն իսկ շատ քիչ էր պատահում, որ Մէհրունց տանը ապրողներից մէկը մօտենար նրան՝ միքանի խօսք փոխանակելու համար...

Եւ նո գերանների վրայից, շրջապատուած իր սե նոխաղներով, նայում էր, նայում էր իր փափախի տակ կուչ եկած նեղիկ աչքերով: Այդ էր այն ամենը, ինչ մոցնում էր նրան մարդկանց հասարակութեան մէջ. թւում էր թէ նա շատ ուշադիր և հետաքրքրուող մէկը պիտի լինէր. ուզում էիր ասել թէ նրա ականջները մի առանձին քաղցրութեամբ, առանձին ախորժակով են ներս ընդունում գիւղական ձայները և նա այդ ծիծաղների, գանդատաների, հայհոյանկների հետ մոքավ մտնում է ապրող մարդկութեան ծոցը, ճաշակում է այն ամենը, ինչ կայ այդտեղ:

Բայց այդպէս էլու—Զը գիտեմ:

Նրա նստած տեղից միքանի քայլ էր մինչև այն տունը, ուր ծնուել էր նա, ուր այժմ ապրում էին նրա ծերունի հայրը, երկու եղբայրները: Բայց նա այդ տան շէմքով էլ շատ քիչ էր մտնում, երբ պէտք էր կամ ջուր խմել, կամ հաց վերցնել: Մէհրունց տան մէջ պատահում էին ուրախ և ախուր գէպքեր. եղել էին հարսանիքներ, մահեր, բայց Եղօն իրանից այդքան մօտիկ կեանքի արտայայտութիւններին էլ սիրում էր նայել օտարի նման, իր գերանների գլուխց: Մայրս պատմում էր, որ իմ ծնուելուց մի տարի յետոյ մեռաւ Եղօն եղբայրը: Երիտասարդ մարդ էր, շատ տնարար. ծերունի Աւագը իրանց սրահից բառաշում էր,

թէ քանդուեց Մէհրունց տունը. մեռածի մայրն անդադար ուշաթափուում էր: Հարեւաններն անդամ լայ էին լինում: Խոկ Եղօն: Նա ներս մտաւ, կանգնեց շէմքի մօտ, մի թէ երկու անդամ հառաչեց և ապա էլի դուրս դնաց: Միւս օրը թազումն էր, բայց Եղօն սովորական ժամին քշեց իր հօտը դէպի արօտ: Դեռ եկեղեցու մէջ չէ եղել նա...

Եւ սակայն, նա չար մարդ չէր: Զարերին ամենից լաւ ճանաչում են երեխաները. խոկ մեր դիւզում չը կար երեխայ, որ վախենար Եղօնց: Դեռ չէր պատահել, որ մի անդամ Եղօն մի երեխայից հաց խէ կամ ծեծէ նրան, ինչպէս անում էին հովինները, այն էլ այնպիսիները, որոնք Եղօնի պէս տարօրինակ մարդիկ չէին:

Ահա հեղիկ անցնում է դիշերը: Թթենիների տակ վինչում, հազում են այծերը, թունրի շուրջը մի քանի կանայք են երեւում: Ես տեսնում եմ մէկի դէմքը—մի պառաւ է դա, երկար շամփուկով խառնում է կրակը: Բոցերը մի անդամ էլ արձարծուում են ու ցած ընկնում: Ահա հրեղէն սիւնը բոլորովին վերջացաւ և միայն խառարի մէջ երեացող թեժ կարմրութիւնն ու պառաւի դէպի առաջ խօսնարհուելն ու յետ նստելը ցոյց են տաշլս, թէ ինչ է կատարուում այնտեղ: Բարձրացաւ, մինչ չե դիւզի ծայրը տարածուեց նոր հացի սուր, ախարժելի հօտը: Հարեւաններին միշմի հաց է ուզարկուում: Չէ մնուացուում և Եղօն: Դա կարդ է, որ կատարուում են կանայք՝ իրանց միայն յատուկ ջերմեռանդութեամբ:

Հետզհետէ մարտում են ճրադները. քունը մէկ քաշում է դէպի փափուկ անկսղին: Բոլոր այծերը նստուածել են միմեամց մօտ, դիշերային թոյլ լոյսի մէջ նըրանք երեւում են իբրև անշարժ սկ բծերի մի խումբ: Նրանց մէջտեղը, գերանների վրայ, երեւում է մի նոյնովիսի անորոշ, բայց աւելի երկար բիծ: Դա այծարածն է, «անտառի մարդը», ինչպէս սովոր ենք մենք անուանել այդ աեսակ մարդկանց:

Բայց ես պէտք է ասեմ, որ «անտառի» բառը բու-

լորովին ճիշդ չէ Եղօի վերաբերմամբ։ Մեր գիւղը ունի թանձր, լայնատարած անտառներ, որոնք ծածկում են մի քանի լեռնային բարձրութիւններ։ ստուերների այդ հոկայական աշխարհը, ուր ման գալու համար պէտք է մի քիչ էլ հոկայ լինել, Եղօի համար չէր։

Երևակայեցէք՝ մի ուրիշ, բայց աւելի ահագին ու երկար սար, լերկ, ամբողջովին ժայռեր, կաղմուած սե, փխրուն քարից։ Նա մեր գիւղի ետևումն է, մօտ երեք ժամ ճանապարհ հեռու նրանից։ Տեղատեղ այդ սարը ծածկում են ցածրահասակ թփեր, իսկ ամեն տեղ միապաղաղ սե տարածութեան վրայ ցաք ու ցրիւ երեւում են վայրի կարճահասակ բյոյսեր, որոնք մի խրզ ճուկ ու աղքատիկ կենդանութիւն են հաղորդում ընդհանրապէս չոր ու ցամաք քարային անհուն զանդուածին։ Ապառաժների կրծքին, քարակոյտերի արանքներում վաղվագում են միայն բարակ խլէղները և անճոռնի քարաթօթօները։ Բայց ողորմած է բնութիւնը, կան միքանի ծորեր, որոնց մէջ պահուել է հողը. այդտեղ փոքրիկ ջրեր են բղասում և բուսականութիւնը մի քիչ հարստանում է. գոյներով աղքատ ծաղիկներ են պատահում հօսր ու կարճլիկ խոտերի մէջ, իսկ մի երկու երեք տեղ էլ փոքրիկ անտառներ են գոյանում։

Դա էր Եղօի աշխարհը։ Այդտեղ, ժայռից ժայռ թափառելով իւր այծերի հետ, նա անց էր կացրել ամբողջ տարիներ, ապրել, մեծացել էր այնպէս, ինչպէս այդ բնութիւնն էր կամեցել։

b

Եւ այդ մարդը ամուսնացել էր...

Գեղեցիկ Զատիկի ունեցանիք։ «Ուկի օրեր են», առ սում էին գիւղայիները։ Եւ իրաւ, ամբողջ ժամանակ ժողովուն երկինքը ոսկի էր թափում, իսկ մեր սարերի բնութիւնը գիտէ այդ ճառագայթների առաջ բաց անել մի ապշեցնող շոայլութիւն։

Թաթախման օրը գիւղը գզրդում էր աղաղակներից ու իբարանցումից։ Բայց տօնի ամբողջ ծանրութիւնը կանանց վրայ էր ընկած։ Մայրս շունչ քաշելու ժամանակ չունէր։ մեր տունը մեծ է, շատ են մանաւանդ երեխաները։ թէև օդնում էին հարսերը, բայց տան մեծի գործը միշտ կրկնապատիկ է։ Այնուամենայնիւ, մայրս ժամանակ դտաւ՝ ինձ մի հետաքրքրական նորութիւն էլ հաղորդելուց նա ասաց, որ Եղօի հարսին էլ պիտի «Ժամ հանեն»։

Եկեղեցում կանդնեցի քահանաների մօտ, որպէսզի կարսղանամ տեսնել կանանց վերնատունը։ Վերջապէս նկատեցի նրա երկու անկիւնում վառ մոմենք բռնած աղջիկներին։ Երեսում էր, որ երկու հարս են ժամը բերել։ Բայց ո՞ն էր Եղօինը։ Ժամը վերջանալու վրայ ներս մտաւ հարսանիքի շորեր հագած մի երիտասարդ։ Ես նրան ճանաչում էի։ Նկատեցի, որ նա անդադար նայում է գեղի ձախ անկիւնը։ Ուրեմն Եղօի հարսը աջ անկիւնումն էր։ Շատ հետաքրքրական էր—կրտար արդեօք և Եղօն, որպէսզի ինքն էլ նայէ այդ երեկոյ իրան պատկանող անկիւնին։

Նա չեկաւ

Ժամը արձակուած էր, բայց ծերունի քահանան ինձ պահեց բակում և հարց ու փորձ էր անում քաղաքի մասին։ Այդ ժամանակ ես տեսայ սովորական պատշերը։ գալիս էին Եղօի այծերը, իսկ ամենքից յետոյ նա ինքը, ինչպէս միշտ, գլուխը բարձրացրած, որ մոիկ տայ փափախի տակից։

Յայտնի է, թէ ինչ վճիռ պիտի կայացնէի ես տուն վերադառնալիս. ամեն ինչ վկայում էր, որ նա չէ փոխուել և երկու կեանքերի միացումից մի նոր գրութիւն համարեա չէր ստեղծուել։ Իսկ երբ տեսայ Եղօին թթենիների տակ, իր սովորական տեղը, բոլորովին անտարբեր գեղի զատկական երեկոյի յուղմունքները, ինձ համար զրեթէ այլևս կասկած չը մնաց, որ այդ ամուսնութիւնը մի թիւրիմացութիւն է Եղել, որ Եղօն

ինքն էլ չէ խմացել, թէ ինչ է անում։ Այդպէս էլ ես ասացի մեր տանը, զատկական ընթրիքի վրայ, և ոչ ոք շասաց, թէ ես սխալում եմ։

Մարդուն ճանաչելը ամենագժուար բանն է աշխարհում—այս եղբակացութեան վրայ էլ կանգ առանք ամենիրուն

Այն, դա շատ ճիշդ էր։

Կիրակի առաւօտեան մենք, ի հարկէ, շատ վաղ վեր կաց ցանք։ Եկեղեցում մատաղ կար, իսկ գիւղին յայտնի էր, որ մեր տէրտէրներից մէկը սաստիկ շտապող է, սիրում է կարճ կարել։

Աքեգակը արդէն դուրս էր եկել։ Ո՞րքան մեծ եւ զաւ զարմանքս, երբ տեսայ, որ Եղօի այծերը գեռ բակումն են։ Իրանք, այդ անբան անառուներն էլ, կարծես զգում էին, որ մի բան պատահելէ, և առաջ նորդ այծերն անհանդիսա կերպով դնում էին գէպի բակի այս ու այն կողմը, քաշելով իրանց ետեից տմբ բողջ հօտը։ Քիչ անցած, ես եկեղեցուց տեսայ աւելի զարմանալի բան։ Եղօն դնում էր հօտի ետեից, բայց ոչ իր սովորական շորերով։ Այժմ նա հագել էր ու չուխայ, գլխին դրել էր «բուխտա» վասփախ։ Մի խօսքով—հարսանիքի շորերումն էր։

Ես դուրս եկայ այդ նոր մարդուն նայելու։ Բուլութին գժուար կը լինէր ասել, թէ դա Եղօն է, եթէ նրա թուլս ու բաւական գեղեցիկ փափախը էլի գէպի գէմքը քաշած չը լինէր։ Հովուական մսխրագոյն ու կոսպիտ քամին այլևս չէր երեսում նրա մէջքին։ Եւ ի՞նչ ովէս կարող էր երեալ. նա չէր սազի տօնական զգեստին։
—Լաւ է, բացականչեցի ես ժողովականից։ —Նա, ուրեմն, մասնակցում է տօնին...

Անցնելով մի խումբ երիտասարդների մօտով, որոնք ձու էին խաղում, նա կանգ առաւ, և մի բոպէ կար, երբ ինձ թուլմ էր, թէ ու ժայռերի վրայ կազմուած այդ մարդը մտաւ կեռնքի խնձորքի մէջ, իր տեղը բռնեց այնտեղ։ Դա մի բոպէ էր, կրկնում եմ, որովհետեւ

Եղօն իսկոյն էլի շարունակեց իր ճանապարհը Բայց ևս զգացի, որ տան մէջ կար մէկը, որ ուղղում էր նրան գէպի մարդիկ, գէպի օրուայ չարն ու բարին։
Եւ ես գիտէի, թէ նվ է այդ մէկը...

Բայց հասարակական կարծիքն այդպէս չէր դաւում։ Հասարակական կարծիք... շատ մեծ չէ այդ անունը մի խեղճ ու կորած հովուի վերաբերմամբ։ Ես չեմ ասում, թէ ամբողջ գիւղը մտածում էր Եղօի մասին և կարծիք կազմում։ Բայց չեմ էլ կարող ասել, թէ մտածողներ բոլորովին չը կային։ Մեր թաղի կանայք խօսում, դատառում էին Եղօի և նրա «խեղճ ջահէլի» մասին. իսկ նվ կարող է ասել, թէ գիւղում հասարակական կարծիքի առաջին հիմքը կանայք չեն գնում։

Այն հանգամանքը, որ Եղօի ջահէլը «խեղճ» անունն էր ստացել, մի վկայութիւն էր, որ այդ նորահարսը բախւատառներից չէր։ Ճիշդ է, ասում էին, նա խեղճ ու կորած ընտանիքից էր գուրս եկել, ճիշդ է, հասակն առած աղջիկ էր նա, բայց հօ Եղօն էլ մի բռի ու անխօս հովուից աւել չէր, իսկ տարիքով իր կնոջից երկու անգամ աւելի մեծ կը լինէր։ Այլ հովուին էլ Աստուած շնորք, հասկացողութիւն է տուել, մինչդեռ Եղօն չը գիտէ, թէ ինչ է ընտանիքը։ Այսպէս դատելու համար կանայք, ի հարկէ, ունէին իրանց փաստերը. փաստէր, որոնց ազբիւրը, ով գիտէ, զուցէ հենց ինքը, «խեղճ ջահէլն» էր։

9

Ես այդ կարծիքն աւելի ևս հաստատ ու տարածուած գտայ, երբ ամառուայ արձակուրդներին տուն վերադարձայ։ Մայրս, չը նայած որ առաջ Եղօին անպայման դատապարտողներից չէր, այժմ նոյնպէս խըլճնում էր նրա կնոջը։ Եղօն իր երեկոները անց էր կացնում առաջուայ նման։ Միակ տարբերութիւնն այն էր, որ առաջ նա, նայած եղանակին, քնում էր կամ բաց

Երկնքի տակ կամ գոմում, մինչդեռ հիմա նրա համար պատրաստուած էր տնկախ օջախ, առանձին տուն:

Դեռ փոքրիկ ու խախուտ էր այդ անկախութիւնը: Զառիվայրի գլուխն, փողոցի այն տեղում, ուր երկու հին ծառերն էին բուսած, Մէհրունց ցանկապատն ընդհատում էր, տեղի տարով ձորին նայող մի տնտեղի, որ ունէր մի հատ փոքրիկ պատուհան և նրա կողքին մի գուռ: Շինուած էր այդ բնակարանը մեծ խնայողութիւններով, գտ համարեա խորանարդ մի արկղ էր, ցածրիկ կտուրով. նրա գոռնով հաղիւ թէ մարդ կարսղանար մտնել առանց կրանալու: Բայց հին շինութիւն չէր. առջեկի պատը նոր էր, նոր էին և այն տախտակները, որոնցից շինուած էր պատուհանի փեղկը: Մի բան, որ չէին խնայել այդ տանը, անասունների ազբն էր: Մէհրունց բակի բարձր տեղից ապրիների ընթացքում գէպի այդ կողմն էին սրբել այծերի, ոչխարների, տաւարի ազբը. կազմուել էր բաւական ազբի ընկնող մի երկար կոյտ, որ ձգուած էր բակից գէպի ձորը և որի մէջ մինչեւ կէսը թաղուել էր տնտեղ:

Մէհրունց Աւագը, ամսւանացնելով իր որդուն, այդ տեղը նշանակեց նրա բնակութեան համար: Եւ նրա նոր հարուր այդ ազբերի մէջ էլ վառեց գիւղական տան ճրագը: Յաճախ, երեկոները մեր պարտէղից վերագառնալիս, ես մի տեսակ քաղցրութիւն էի զգում, տեսնելով այն փոքրիկ ու համեստ լոյսը, որ երեսում էր ուղիղ փողոցի վրայ բացուող գուան և պատուհանի փեղկի ճեղքերից: Նա զգալ էր տալիս, որ ներսում, պատառառած փալասների վրայ նստած, հայ կինը՝ միայն իրան յատուկ յամառութեամբ հիւտում է գիւղական օջախ...

Մենակ էր այդ կինը. նա չուներ սեփական թոնիր, սեփական տաշտ՝ հաց թխելու համար: Այդ կողմից Եղօի տանը գեռ խառնուած էր նրա հօր տան հետ: Բայց կարելի՞ էր կասկածել, թէ գեղջկուհուն չի աջողվի մի անկախ ծուխի բոլոր սեփականութիւնները մտցնել այդ իւեղճ ու կրակ տան մէջ: Պատմում էին, թէ նա

շատ է աշխատում, բայց Եղօն ժայռի պէս անընկճելի էր: Եղօն սովորեց այն փոքրիկ փոփոխութեան, որին ենթարկուեցին նրա գիշերելու տեղերը: Կամաց-կամաց նամի քայլ արաւ գէպի մարդկանց հասարակութիւնը, բայց կարծես վախենալով, կանգ առաւ և յամառութեամբ հաստատ մնաց իր գերանների վրայ:

Մի երեկոյ ես էլ Եղօն նման մենակ անշարժացել էի կարի ծայրին: Երկնքի մէջաեղից բոլորակ լուսինը կաթնային մի ծով էր փառել մեր հսկայական աշխարհի վրայ: Աննման էր բնութիւնը, իւրաքանչիւր ծառ, իւրաքանչիւր ձայն կախարդում էր...

Նուազվ իմ ուշագրութիւնը խլեց մի արտասովոր ուրախ աղմուկի, որ այդ միջոցին մտնում էր գիւղի ծայրով: Ես տեսայ բեռնաւորուած ջորիների երկար շարքը և նբանց ուղեկցողներին, որոնք, համարեա առանց բացառութեան, երեխաներ էին: Ջորիները, շարան ընկած, քայլում էին աշխոյժ և թւում էր, թէ նրանք այս գիշեր մի առանձին հաճութեամբ են շարժում իրանց բօժօնները: Նրանք սկսեցին բարձրանալ Մէհրունց փողոցվ և ես նկատեցի մեր ջորիները, եղբօրս որդուն՝ փոքրիկ Արտաշին, որ մեծի հովեր առած, երկար ճիպոսն ուսին դրած, քայլում էր իր ընկերակիցների հետ:

Առաջին խուրձերն էին, որ արտերից փոխագրուում էին կալերը: Սկսուեց մի կատարեալ տօն բոլորակ լուսնի տակ, մէկն այն գիւղական տօներից, ուրոնք ծնւում են յանկարծ, ինքարուղիս, առանց ծրագիրների և պատրաստութիւնների: Զեմ կարծում, թէ ինչեր ացք ունեցող մի մարդ, որ գուրս չը գալ ողջունելու նոր հացի այդ բարերախտ յաղթական մնառքը և ամբողջ սրտից չը ցանկար նրան ամեն բարիք: Այս ու այն կողմից հարցեր էին տալիս երեխաներին: ո՞ր արտից է, ինչ են անում այնտեղ մնացած մէծերը... Մեր Արտաշը վաղեց ինձ մօտ և առւեց ինձ ցորենի մի խոշոր, նշեղեցիկ փունջ: Ես համսուրեցի նրան և թոյլ տուի, որ գնայ իր գործին:

Ինձ բերած ընծան ամենասիրուն ապացոյցն էր, թէ ինչու այնքան գեղեցիկ է գիւղական այս փոքրիկ տօնը, ինչու նոյն խոկ չներն էլ, լեզուները կախ, վազում են ահաս ջորեպանների ետեկոց և միմեանց հետ հաշում են ու բարեկամ Պեղմն, չաղ, խոշոր հասկեր... Եւ այս բարիքի մի ամբողջ ծով ծփում էր գիւղի շրջականերում, հնձուռի մանդաղ հրաւիրելով...

Դիւղացու գոհունակութիւնը այն աստիճանն յաշվշակել էր ինձ այդ անմահական երեկոյին, որ բաւական ուշ նկատեցի իմ առջև բացուած փոքրիկ տեսսարանը—եղօի կարին էլ մարդ կար, բայց գա Եղօն չէր։ Մինչև կուրծքը հարսանիքի կարմրը քօղով ծածկուած նորահարսն էր բարձրացել իր խղճուկ արկղի դրսվող, լուսինն ու խուզձելոց տեսնելու համար։ Թէև ամեն տեղ մազգիկ կային, բայց նա կարելի համարեց չամաշել ու ձախ ձեռքով քիչ բարձրացնելով քօղի ծայրը, մի փոքրիկ պատուհան լացեց իր աչքերի համար։ Նա նայում էր այս ու այն կողմը, իսկ ես հետեւում էի նրա դվյու շարժումներին, որպէսզի իմանամ թէ ինչով է հետաքրքրուամ այդ փակուած, անխօս լեզուն։ Եւ առանում եմ։ Երկար դէս ու գէն նայելուց յետոյ նա յանկարծ շուռ եկաւ դէպի այն կողմը, ուր դերաններն էին դպրուած...

Այս անդամ երկար էր նրա հայեացքը—ես մինչև անդամ կարսպացայ նշանաբել նրա գէմքի մի փոքրիկ մասը, ոչքան թոյլ էին տալիս կարմրի ծածկոցը և երկինքի լոյսը։ Մի քանի անդամ նա, ցոյց չը տալու համար թէ շարունակ մի կէտի է նայում, փսխեց իր գիրքը, բայց իրովութիւնը նոյնն էր մնում—նա նայում էր իր ամուսնուն։

Եղօն պառկած էր թթենու տակ, կիսով չափ ծածկուած տերենների ոտուերներով։ Այժերը, երեխ խրախուսուած երեկոյի ողայծառ լոյսերից, թռչիստում էին դերանների դրսվող և այնտեղից ցածր Եղօն շատ քիչ էր համբերութիւնից դուրս դալիս և նրա սաստող ձայ-

նը շատ քիչ էր լուսում։ Միայն երբ նրա աչքի առաջ ելակու շաբաճճի ջահելներ կռուի բռնուեցին իրանց եղջիւրներով, նա մի ակնթարթում վեր ցատկեց և բռնելով երկու ախոյեանների ականջներից, տարաւ գէպի բակի ծայրը, ապա նորից յետ բերեց ու բաժանեց իրարից։ Իսկ ինքը էլի նստեց իր տեղը, էլի զլուխը դրեց գերանին։

Զորիները վերադառնում էին կալերից։ Նրանք գեռմի անդամ էլ պիտի դնային արտերը և խուրձեր բերէին, ամառնային այսպիսի գիշերները գիւղացին ձեռքից չէ տալիս աշխատելու համար։ Դարձեալ սկսուեց աղմուկը, աներից հարցեր էին առաջարկւում փոքրիկներին, պատուերներ էին տալիս։ Ես էլ ասացի մեր Արտաշին որ վերադառնայ իր հօր հետ։ Այդ միջոցին ինձ թւում էր թէ խեղճ նորահարսի հայեացքը աւելի և յամառութեամբ մեխուեց այծերի մէջ պառկած իր ամուսնու վրայ։ Կարծես նա ուզում էր վեր կացնելնրան, տանել, եթէ կարելի է, իր մօտ, որ միասին նստեն, միասին նայեն արտ գնացող երեխաններին, մի բան էլ իրանկ ասեն։

Ես այդպէս հասկացոյ այդ ծածկուած մորդու ծածուկ սիրաը, թէև, առհասարակ, սիրտ հասկանալը անկարելի է։ Ով գիտէ, գուցէ նորահարսը աւելին էր ուզում ասել իր ամուսնուն, գուցէ այդ կաթնային ովկիւանոսի մէջ նա կը կամենար աւելի հեռու գնալ, բաց անել զգացմունքների մի ամբողջ աշխարհ իր եզօփ, իր նշանածի առաջ։ Դիւղացին զգացմունքների մի զանգուտծէ—մի նայեք նրա կոշտ գէմքին, նրա անտաշ լեզուին։

Եղօն միենոյն գրութեան մէջ մնաց—անտարբեր գէպի ամբողջ աշխարհը, որ ոչինչ առնչութիւն չունէր նրա այծերի հետ։

Ո՞չ։ Նա մարդկային մի այլ, նախնական, չքացած կեցութեան ներկայացուցիչն էր։ Ես հասկանում էի, որ գտ հացի, գութանի անշարժ տան մարդը չէ։ Նրա մէջ ապրում էր հին թափառական հովիւը, որի տան յարկը

Երկնակամարն էր, իսկ հոգան ու հասկացողութիւնը — իր մի քանի անասուններին ծառայել և փոխարէնը նրանցից ուտելիք ստանալ:

Երբ այսպէս էր, կարելի՞ էր զարմանալ որ այդ մարդը այնքան ատում էր մարդկային հանրակեցութիւնը, իսորթ էր մնում նրա աղմուկին ու իրարանցումներին և ապրում էր գիւղի մէջ այնպէս, ինչպէս ապրում էր իր սարի փխրուն, ամայի ապառաժների վրայ...

Եւ ես վճռեցի որ այլևս հետաքրքրութիւն չէ ներկայացնում մեր հարեան բակում ապրող նախնական մարդու այդ բեկորը: Նա այնպէս էլ կը մնայ մինչև գերեզման...

Է

Հետեւալ ամառը ես ուշ գնացի տունի Վերջին քննութիւններս էին և ինձ յուղովը միայն ոսկետառ, տռաջնոտկարդ վկայական ստանալու ակնկալութիւնը չէր: Ես նրան շուտ ստացայ և առաջին օրերում նա ինձ համար ոսկէ ցնորքներ էր հիւսում, օդային ամրոցներ կառուցանում: Բայց շուտով ես սկսեցի կարգալ և այն ինչ չէր գրուած իմ սիրուն վկայագրի մէջ, այլ երեսում էր նրա տառերի և թուանշանների ետևից: Դա ծանր, մոշեցնող հարցն էր՝ ինչ անել այժմ...

Իբրև զիւղացի տղայ ես պարտաւոր էի ժամանակ չը կորցնել, պարտաւոր էի արագ և ճիշդ կերպով վճռել, թէ որ կողմից և ինչպէս մոննեմ կեանքը մէջ: Եւ այդ պարտաւորութիւնը երկար պարտեցնում էր ինձ քաղաքի խեղդով ու կրակուած փողոցներում: Ես գիտումներ էի անում, ինդգում էի, իսկ ինձ խորհուրդներ էին տալիս, առաջարկում էին սպասել, այս ինչ օրը գալ, և այն...

Յուկիսը վերջանում էր, երբ ես մնայ մեր գիւղը, որ գոնէ այնտեղ մի բան վճռեմ: Նոյն երեկոյեան մեր ընտանեկան խորհուրդը քննում, ծանր ու թեթև էր անում իմ մասղութիւնները, ակնկալութիւնները:

Հաստատ բան ես ինքս էլ չը գիտէի և յաճախ նեղ դրութեան մէջ էի ընկնում մօրս կամ եղացրներիս հարցերից ես կարծես կտիուած էի օդի մէջ և միջից կիսում էի, որ ոտներս զնելու մի յենակէտ գտնեմ մայր հողի վրայ:

Անախորժ դրութիւն... Բայց հայրենի բնութիւնը ինձ հանդատացնում էր, վստահութիւն ու անհոգութիւն էր ներշնչում իմ մէջ: Եւ ես միւս օքը վերցրի հրացանսու գնացի լոր որսալու: Սիրում եմ հանդարտ, անլոելի քայլերով թափառել նոր հնձած արտերի սահմաներում, երբ լորերը տեսանելի են դառնում, երբ նրանք գուրս են դալիս բաց տեղերը՝ հնձուորի թափած հատիկները կըտցահարելու համար: Բայց այս անդամ ես ուշացել էի. արտերում ոյլես չը կային դարսած խուրձեր և միայն բարակ քամին էր խաղում կարճ ցողունների երկար տարածութեան վրայ:

Իրիկնապահ էր արգէն, բայց ես որս համարեա չունէի: Գնացի գէպի լեռնակողմերը, յոյս սանենալով գտնել այնտեղ կօրեելի արտեր: Թէև այդ միտքն էլ ինձ մի առանձին օգուտ չը տուաւ, բայց ես չը զջացի: Դեռ զարմանալի թարմու անուշաբոյր էին այնտեղի կանաչները. ինչպէս էին նրանք սքանչացնում մարդուն տարսուայ այս ժամանակին, երբ արեգակը այրած ու վերշացրած է լինում նոյն իսկ մեր գիւղի չափ բարձր տեղերի բուսականութիւնը: Մի արիւնուշտ որսորդից ես ակամայ դարձայ խաղաղ զբունող, որ բնութեան զարգեր է որսնում:

Ես ճանաչում էի մի այդպիսի զարդ և դա Ուռենիների հռչակաւոր ձորն էր: Հռչակաւոր էր ձորը նըրամնով, որ այնտեղ ուռենիներով հովանաւորուած մամուսուած քարերի միջից բղիսում էր մի յորդ ու ցուրտ աղբիւր: Ժողովրդի մէջ կար համոզմունք, թէ դա անհմական ջուր է և կարող է կենդանացնել նոյն իսկ ծանր հիւանդներին: Եւ ես տեսել էի գիւղական դեղին մոմեր, կողցրած այդ հրաշագործ ջրի ակոնքի քա-

րերին. տեսել էի հաջուած հիւանդներ, որոնք եկել էին խմելու և առողջութիւն գտնելու:

Անտարբեր անցնել այդ սրբութեան մօտով չէր կարող ոչ մի դիւզացիւ Քայլերս ուղղեցի դէպի Ռւռենին ների ձորը: Բայց դեռ աղքիւրը չը տեսած՝ ես կանգ առայ: Ազքիւրի գլխին փուստած էր խոտերի և ծաղիկների մի մեծ դորդ. այդտեղ ծունկ շրբած և երկու ձեռքերի վրայ յենուած մի մարդ սողում էր մի փոքրիկ մանուկի հետ...

Ես խկոյն ըմբռնեցի, որ գա ուխտաւոր հիւանդ չէ: Պարզ էր որ մենաւոր մարդը խաղում էր երեխայի հետ. աշխատում էր ամեն կերպ երեխայանալ, ինչ որ բան էր ասում նրան մի տարօրինակ խուլ ձայնով, յաճախ և ծիծաղում էր ու նրա ծիծաղը նման էր նեղ քարային խոռոչում դգնչող ջրի ձայնին:

Նայեցի ձորին: Այնտեղ ցրուած էր այծերի հօտը, իսկ ուռենիների մօտ կանգնած մի կին նայում էր թէ այծերին և թէ երեխայի հետ խաղացող տղամարդին: Աւելի վերջինիս էր նայում, և նրա ծաղկատար, ընդհանրապէս տգեղ, շատ հաստ գէմքը յաճախ փայտում էր մի հրճուանքից: Ուշ նկատեց նա որ այծերից մի քանիւոր աշխատում են դուրս գալ ձորից՝ նրա մի խիստ ուղղակի կողով: Շատ վատնգաւոր ճանապարհ էր դա, և կինը՝ շտապով քարեր շպրտեց գէպի այն կողմը, կանչեց իր զիլ ու սուր ձայնով, առա և վագեց այդ կապը կտրածների ետևեց: Այժերը վերջապէս յետ դարձան և կինը իր նախկին տեղն էր գնում, երբ տեսաւ ինձ ու խկոյն ինչոր բան ասաց ոտովզգլխով երեխայութեան մէջ թաղուած տղամարդին:

Սա բարձրացաւ աեղից, նստեց, նախ երեխան դուղումը դրեց, առա նայեց՝ ինձ:

Եղօն էր... փափախը յետ դրած, ճակատը բաց...

Ամենից անակնակը, ամենից զարմանալին այդ էր — ճակատը բաց... Ամբողջ գիւղը համոզուած էր, թէ դեռ ոչ ոք չէ տեսել եղօնի ճակատը, բացի, ի հարկէ,

նրա մօրից: Բայց ի՞նչպէս է, որ այժմ ես տեսնում եմ
նրան, իսկ նա կարծես դիտմամբ չէ ծածկում, կարծես
տնզատմառ ուղում է, որ ամենքը տեսնեն: Մի զար-
մանալի ճակատ... Դէմքի միւս մասերի հետ համեմա-
տած՝ նա սովորակ էր, համարեա ձիւնափայլ: Քանի
տարի էր, նա արեկ երես չէր տեսել: Այժմ յուլիսեան
արեգակը թափում էր իր ճառագայթները այդ սպի-
տակ ու քնքոյշ կաշուր վրա, և Եղօն... ոչինչ, կնճիռնե-
րով շրջապատուած իր նեղլիկ աչքերով նայում է ինձ,
և նրա կարճ շրժունքները կարծես ժպտում են, կար-
ծես հարցնում են ինձանից, թէ ի՞նչպէս է գոգի երեխան:

Դա այն Եղօն չէր, որին ես ճանաչում էի տամն և
հինգ տարիներից ի վեր: Մօտենալով նրան, ևս ասացի:

— Յարի օր, գրացի Եղօն:

— Աստուծու բարին, բարով եկար, իսկոյն պատառ-
խանեց նա ատամների արանքով:

Առաջին անգամն էի լուսմ նրա խօսակցութիւնը,
առաջին անգամն էի տեսնում նրան պատասխան տա-
լիս: Բայց ի՞նչը չէր տալին անգամ...

Սեմահական ջրից կուշտ խմելոց յետոյ, եւ յետ
դորձայ բախտաւոր հօր մօտ:

Է

— Երեխան քո՞նն է, գրացի Եղօն:

— Հա, մատաղ եմ, Աստուծու տուածն է:

Ես նստեցի նրա կողքին: Մի փափլիկ, սիրուն երե-
խայ էր՝ շատ աշխոյժ ու խոշոր աչքերով, որոնք իսկոյն
յառաւեցին ինձ վրայ: Սկսեցի մատովս խաղացնել նրա
ուռուցիկ, փոքրիկ շրժունքները, նա յետ տարաւ իր լիքը
թշերը և ծիծաղեց: Մի կատարեալ հրեշտակ էր: Նկա-
տեցի որ հայրը կամացուկ սեղմեց նրան իր կրծքին և
թեթե կերպով հառաջեց:

— Անունն ինչ է, գրացի Եղօն:

— Անթառամ, քահանան գրեց:

— Դու համաձայն չեիր, ինչ է:

— Ասում եմ, Աստուծու տուած երեխայ է... առունն էլ քահանան գրեց... Ասում եմ, անունը որ քահանան գրեց... Աստուծու կարդն է... Ուրեմն անունը այնպէս էլ կը լինի... Անթառամ...

Նա կարծես զգում էր որ գժուար է իրան հասկանալ, ուստի աւելի ևս առաջ տարաւ իր բացատրութիւնները: Բայց որքան առաջ էր գնում, այնքան գըժուարանում էր բանը. խօսքերը նա արտասանում էր դէմ ընկնելով, համարեա զուով:

Խեղճ Եղօ... նոր էր սովորում խօսելը: Ես նկատեցի, որ նա հեշտ պատասխանում է կարճ հարցերին, երբ պատասխանն էլ կարճ է: Այդպէս նա վարժուել էր իր կեանքի ընթացքում: Բայց այժմ նրան յուզում էին զգացմունքներ, որոնց պէտք էր բացատրել, վիճասովայական հայեացքներ, որոնց պէտք էր արտայայտել: Առանց գրանց անկարելի էր այժմ եօլաւգնալ, որովհետեւ այժմ այդ երեխան տակն ու վրայ էր արել նրա ամբողջ էռթիւնը: Ահա այդ նոր, բարդ զգացմունքները նա սկսում էր «ասում եմ» բառերով, բայց էլի խօսնում էր, խօսքի տակն ու դլուխը չէր դանում և դուածն էլ ճիշդ չէր արտասանում:

Ես այսքանն իմացայ, որ նա իր այդ կցկտուր, անկապ խօսքերով կամենում է ասել, թէ իր երեխան աշխարհն է եկել ամենայն օրինականութեամբ. տուել է Աստուած, մկրտել է քահանան, հետեւաբար Անթառամը Անթառամ պիտի լինի, ինչպէս մի ուրիշը Եղօ է, Մարփամ է, կամ Հուսմոխմ:

— Ի հարկէ, ի հարկէ, գրացի Եղօ, շտապեցի հաստատել ես—քո երեխան հրեշտակ է, մեր գիւղում հազիւ թէ գրտ պէս մի ուրիշ տիպիկը լինի:

Եղօն ուրախութիւնից ձեռքը տարաւ յօնքերի վըրայով. միենայն ժամանակ ես լսեցի մի խեղդուած շնչոց. «Աստուած քեզ պահէ»:

Այսպէս ասողն արգէն Եղօն չէր, այլ ձորի կինը,

Երեխայի մայրը, որ նստել էր մեզանից քիչ հեռու և կողքից նայում էր մեզ, աջքից չը դցելով և այծերին։ Ամեն օր նա երեխան շալակած բերում էր այստեղ, իր ամուսնուն փոխարինելու համար։ Երեխան տալիս էր նրան, իսկ ինքը նայում էր հօտին։

Եւ Եղօն ոչինչ չէր խնայում փոքրիկի համար։ Տեսայ նրա կոշտ ձեռքերի ու նախնական մարդուն յատուկ հնապիմացութեան նշանները։ Անթառամի վկից կախած էր խոտերի մէջ փաթաթած մի խլունջ։ Տեսայ, ինչպէս նա շարունակ ցոյց էր տալիս երեխային մի փայտի կտոր, որի վրայ նա դանակով փորփորել էր մարդու գէմքի նման մի բան, որ աւելի վախեցնել կարող էր իր այլանդակութեամբ։

Եղօն ճանաչում էր մօրս, ինչպէս նաև ուրիշ հարևաններին։ Նո գովից մօրս, բայց ես տեսնում էի, որ նրա բոլոր տեղեկութիւնները նորագոյն ժամանակից էին սկսւում, երեխայի ծնուելու օրից ոչ հեռու։ Նա հետաքրքրուեց և ինձանուի։

Երեկոյեան ստուերիները շատ էին երկարացել։ Մենք ճանապարհուեցիք գէտի գիւղ։ Երեխային շալակեց մայրը։ Եղօն քշում էր այծերը։ Ես նրա հետ էի գնում։ Յանկարծ նա կանգ առաւ, վերցրեց հրացանս, սկսեց տալին-գլխին նայել։

—Լաւն է, քաղաքի է, երեխ, հարցրեց նա։

Ես ցոյց տուի ամեն ինչ, բացարեցի։ Բայց նա յանկարծ ընդհատեց ինձ մի նոր հարցով։

—Սա մարդ սպաննում է։

Ստանալով դրական պատասխան, նա շտապով ինձ տուաւ հրացանը և առաջ դնաց։

—Ասում եմ երեխատէրը... չը պէտք է բռնէ... Որ սպանող է... Ասում եմ այսինքն չար է... Զի իմացուի...։

Ես հանդստացրի նրան, ասելով որ գատարկ է հրացանը։

—Քաղաքում լաւ բաներ կան, համ... Ասում եմ

ով գիտէ, խսկի խեզք չը կտրելի բաներ, զարմանալի...
Ասում եմ՝ այստեղ մարդ էլ են շինում...

— Ինչ որ սիրտդ ուզէ, դրացի եղօ:

Դրացիս մի անձկալից, ճնշուած հայեացք դցեց
դեպի այն վիթխարի լեռնաշղթան, որ մեր գաւառի
սահմանագլումն է կազմում։ Մեր գիւղացիների համար
գա ծանօթ աշխարհի վերջն էր և ամեն մի անձանօթ,
անիմանալի բան նրանք տեղաւորում էին այդ շղթայի
ետևում։ Եղօն էլ, երեխ, կարծում էր թէ քաղաքը,
ինչպէս այդքան զարմանալի աշխարհ, դարձեալ այստեղ
է գտնուում։ Ես ձեռքով ցոյց տուի ըոլորտին հակառակ
ուղղութիւն։ Բայց նա ուշադրութիւն չը դարձրեց. նրա
համար իրողութիւնը չէր փոխում այն հանգամանքից,
թէ քաղաքը այս կողմում չէ, այլ այն կողմում։

Լսուեց երեխայի լացը։ Մայրը մօտեցաւ, յայտնեց
որ հօր համար է լաց լինում։ Եւ նորից դերերը փո-
խուեցան։ Հովուական ցուպը վերցրեց կինը, իսկ երե-
խային խտանեց եղօն։ Սա դեռ չէր էլ սովորել երեխայ
խտանելը։ Երկու ձեռքով սեղմել էր նրան իր կրծքին ճիշդ-
այնպէս, ինչպէս մի ուժ տարեկան երեխայ կը խտանէր։

Հէնց որ փափիթկ մանուկը տաքացրեց հայրական
կուրծքը, եղօն էլի կարիք զդաց խօսելու, երկար խօ-
սելու։ Էլի կմկմալով, յաղթահարուելով բառերից, ամեն
վայրկեան կորցնելով մտքի թելլը, նա ասաց ինձ։

— Այսպէս հազար-հազար ուլեր եմ մեծացրել...
Ասում եմ, գիտեմ... այսինքն թէ ինչ է փոքր երե-
խան... Տաք, փափուկ, ասում եմ; թոյլ, վայր դցես,
հոգին կը տայ... Դժուար է պահելլ... Ասում եմ...
Չը կայ այծի պէս սիրուն երեխայ ծնող... Բայց դէ
մարդը ջոկ բան է... Ասում եմ՝ օ, քանի ուլիկներ եմ
պահել մեծացրել փէշխ մէջ, ծոցումս Սովոր եմ։ Ան-
լեզու, պուճուր են, մարդու սիրով այրում են... Ա-
սում եմ գայլից, թշնամուց, ցրտից պահել եմ շատե-
րին։ Բայց դէ մարդը ջոկ է։ Ես տեսայ... Ասում
եմ, Անթառամի պէս խսկի մի ու չեմ տեսել...

Ահա որտեղից էր այդ մարդը վերցրել այնքան սէր դէպի փոքրիկները։ Նորածին ուղերին խնամողը ամբողջովին յափշտակութիւն էր դարձել, երբ ծնուել էր ոչ մի ուղի նմանութիւն չունեցող Անթառամը...

Դիւղի վերեւում մենք բաժանուեցանք միմեանցից։

Մեր տանը վաղուց դիտէին որ Եղօն փոխուել է, տանու մարդ դարձել Երեկոները այլևս Եղօնի չէր կարելի տեսնել թթենիների տակ։ Նա կտրել էր բակի մեծ մասը մի բարձր ցանկապատով, ուր և գիշերները փակում էր այծերին։ Ինքը կամ իր տան շէմքումն էր լինում նստած, կամ կտուրի վրայ։ Եւ շատ քիչ էր պատահում որ հրաշագործ փոքրիկը նրա մօտ չը լինէր։

Օդոստոսի կէսին, ստանալով նամակ, որի մէջ ինձ առաջարկում էին ուսուցչի պաշտօն մի մեծ գիւղաքաղաքում, ես այլևս տեղորդ համարեցի տատանուելու ու ճանապարհ ընկայ իմ պաշտօնատեղին։

Եղօն այլևս չը տեսայ։ Խոկ այն, ինչ որ հիմա պիտի պատմեմ, ես վերցնում եմ մօրս հաղորդածներից։

Թ

Աշնանը խիստ փոփոխական և վատ էին եղանակները մեր գիւղում։ Եկաւ վաղաժամանակ ձիւն։ Նա հալուեց մի տաք քամուց, ապա սկսուեցին անվերջ խոնաւ օրեր։ Գալիս էին անընդհատ անձրեներ, ամեն տեսակ անձրեներ, կամ մանր, ասդի ծայրերի չափ մանր, կամ յորդ-գարնանային, կամ ձիւնախառն—կատարեալ բուք ու բորան...

Ամեն ինչ փառում, լուծւում էր։ Հիւանդութիւններ երեացին անասունների մէջ, խոկ չատ չանցած, սաստկացան և մարդկանց հիւանդութիւնները։

Պարզ նրկինք չէին տեսել շաբաթներից ի վեր։ Ողբում, հառաջում էր Եղօն տնակը։ Աղբային խոր ցեխերի մէջ թաղուած, ցուրտ ու ջրողող էր նա և անց էր կացնում մուայլ ու յուսահատ օրեր։ Նրա մէջ չը կար

մի ափ տեղ, որ չոր լինէր. ջուրը ծլում էր կտուրից, կաթոյը չէր դադարում մի բողէ անդամ, որպէսզի տանը աչք բաց անեն: Վառում էր փոքրիկ օջախը, բայց ծուխը խեղդում էր այնպէս, որ նոյն խոկ գիւղացին էլ չէր դիմանում նրան. բաց էին անում դուռն ու պատուհանը, այժմ էլ ցուրտն էր ներս թափուում: Տան ներսը ոչնչով չէր զանազանում վողոցից:

Ահա այդ թշուառ յարկի տակ էլ մտաւ, այն հիւանդութիւնը, որ սկսել էր գերեզման տանել երեխաներին: Բկուռո՞ց...

Սարսափահար էր ամբողջ գիւղը: Ինչպէս ընդհանուր դժբախտութեան ենթարկուած մի հօտ, գիւղացիները աւելի մօտենում էին միմեանց, աւելի սեղմում էին իրար: Ո՞րքան կուրծքիր էին ծեծւում, ո՞րքան արտասուր թափուեց: Կտրուած ամբողջ աշխարհից, գլխի վերև ունենալով մի պղտոր, ցուրտ ու լացկան երկինք միայն, գիւղը երեխայի նման հեկեկում էր, ողորմութիւն էր հայցում յուսահատ, մատազներ էր մորթում: Եղօն իր ձեռքով մի լաւ նսխազ մորթեց իր տան շէմքում: Բայց հիւանդութեան չար ոգին ոչինչ պաղատանք ու արիւն չէր ընդունում:

Պատի մէջ շինած մի փոքրիկ խորշում, ուր գիշշիները նաւթի ճրագն էր վառւում, պառկած էր Անթառամը: Ամբողջ տան մէջ միայն այդ անձուկ տեղն էր, ուր չէին հասնում կտուրից ներս ծծուող ջրի կաթիլ ները: Հազիւ էին կարողացել տեղաւորել այնտեղ երեխային, որ առանց այդ էլ սարսափելի դժուարութեամբ էր շունչ քաշում:

Դիշեր է: Նաւթի ճրագը ձեռքին, կանդնած է եղօն իր սիրուն ուլիկի դիմաց և նայում է, անվերջ նայում: Կտրծես նա լաւ զգում է որ երեխային աղատելու համար միայն այդ միջոցն է մնում—նայել, նայել...

Երրորդ անդամն էր, ինչ նա դիմում էր իր կը նո՞ց.

—Մաթու աղջիկ, դեղ չես իմանում... Դու այսպէս շատ կը լինես տեսած...

Բայց Մաթու աղջիկը միայն կարկուտի պէս արտասուլքներ էր թափում. նա ոչինչ չը գիտէր:

Արդէն կապտել է սկսում պատի մէջ դրած երեխայի սիրուն, լվաց երեսը: Նրան խեղդում են: Այդ լաւ է տեսնում հայրը և այս ու այն կողմ է նայում: ձեռքը մտցնում է պատի խորշը, ուզում է գտնել այն ձեռքը, որ խեղդում է, ուզում է կռուի բռնուել այդ անգութ խեղդողի հետ:

Նա յետ նայեց. կինն արդէն ծեծում էր ծնկները և մորմոքուելով ասում էր, թէ երեխան ձեռքից դնաց:

—Զան, Մաթու աղջիկ, դու էլ ես ցաւ իմանում...

Ասաց նա, գլուխը դրեց կնոջ ուսին և իր արտասուլքները, իր առաջին արտասուլքները, խառնեց նրա արտասուլքների հետ:

—Խեղդեցին, խեղդեցին, մրմնջաց Մաթու աղջիկը:

Եղօն մի անդամ էլ նայեց մորթուող հաւի պէս թրպրտացող երեխային: Եւ այս անդամ նա դուաց.

—Այն ով է, որ խեղդում է երեխայիս:

Ու ճրագը տալով կնոջը, ինքը դուրս վաղեց:

Գնում էր խեղդողի դէմ մարդ կանչելու: Սարտափելի մութ գիշեր էր: Ամեն տեղ միայն անձրեսի լսու, միանման վշշոցն էր տիրում:

Եղօն ծեծեց տանուտէրի դուռը, ուշադրութիւն չը դարձնելով չնահաչոցին, որ բարձրացրեց այդ տարաժամ աղմուկը: Դուռը բացուելուն պէս՝ Եղօն ներս ընկաւ և հեալով ասաց.

—Երեխայիս խեղդում են. ես թագաւորի հպատակ եմ, մի տարի է, առանձին գլուխ էր դրել ու հարկ էր առնում:

Տանուտէրը նոյնպէս ցաւոտ մարդ էր և շուտ հասկացաւ Եղօին: Արտասուլքները կուլ տալով, նա ասաց թէ երեք օր է ինչ այդ նոյն անգութ խեղդողը տարել է իր մի թոռանը, իսկ միւսը հիմա էլ պառկած է:

Յետ է գնում Եղօն, դիտէ որ այդ կողմից օգնութիւն չը կայ:

Բայց նրա միտքը գործում է տեհնդային եռանդով ու նա նոր միջոցներ է գտնում: Գալիս է, մեր դուռն է ծեծում:

—Մի ճար, Առուշանենց հարս, ասում է նա մօրըս.—քաղաքում մարդ ունիք... Ասում եմ՝ գուցէ քաղաքի մի հնարք իմանաք... Այնտեղ իմանում են, այնտեղ—քո տղան էր ասում—ինչ ուզում ես...

Քաղաքն էլ ոչինչ չէ տալիս: Բայց Եղօն չէ էլսպասում մօրս պատասխանին: Յանկարծ նա յիշում է անմահական ջուրը: Ու վերցնելով մեր սրահում դրած փոքրիկ ամանը, վազում է դէպի Ուսենիների ձորը:

Սարսափելի է մտածել որ դիշերուայ այդ ժամին այդպիսի եղանակին, կը լինի մէկը, որ դուրս գայ մեր գիւղեց, միշտ և միշտ դէպի բարձր, դէպի սարերը կը գնայ: Բայց Եղօն մանկութիւնից լսել էր մեծից ու փոքրից, թէ անմահական է այդ ձորի ջուրը, թէ նա դեղ է բոլոր հիւանդութիւնների դէմ: Այժմ նա միայն այն գիտէր, որ ուշ է յիշել, որ պէտք է վազել, սար ու ձոր կտրել, որ կարելի լինի մի ժամ առաջ հասնել, մի ժամ շուտ հասցնել անմահական ջուրը Անթառամին:

Յիշում էր նա կապտած փափլիկ թշերը, փոքրիկ բերանը, կրծքի վրայ դրած թաթիկը: Իսկ սարերում ձիւն էր դալիս, բուքն էր բոլորսւել...

Եղօն էլ բոլորւում էր բուքի հետ, բայց վազում էր, վազում...

Երբ ջրով լցրած ամանը ձեռքում բարձր բռնած մօտենում էր նա իր տնակի դռան, արդէն առաւօտեան լոյսը բացւում էր: Բայց և ամեն ինչ վերջացցել էր...

Երեք հոգի էին Անթառամին գերեզմանատուն տանողները—քահանան, տիրացուն, որ խտաել էր երեխային, և ինքը՝ Եղօն: Փոս փորողը դեռ չէր վերջացրել գործը, անձրել մաղում էր անդադար, որքան ցեխու

Էր Անթառամի յաւիտենական բնակարանը. իսկ նա արկղիկ էլ չունէր...

Քահանան այժմ մանաւանդ շտապում էր Ռով գիտէ, եթէ նա այնքան չը շտապէր, գուցէ Եղօն աւելի ժամանակ ունենար իր սրտին միտթարանք դանելու ։ Նա մնաց գերեզմանատանը մենակի: Արդեօք ինչ էր անում այնտեղ: Պոկեց իրանից մի բան ու գրեց Անթառամի խոնաւ ծոցում թէ ինչ էր, բայց այն օրուանից Եղօն սկսեց, ինչպէս ասում են, «բարակ մանել»:

Տանջուեց ամիսներ. չէր պառկում, շրջում էր իբրև ստուեր: Մարդուն գուրս էին հանել այն աշխարհից, ուր նա ապրել էր երեսուն տարիներ՝ փափախը աչքերին քաշած: Ցնցումները այնքան ուժդին էին, որ անծանօթ կեանքը այնպէս անողորմ կերպով սկսեց տակն ու վրայ անել նրա խեղճ միտքն ու հոգին, որ նա դարձաւ մի փխրուն աման, վայր ընկաւ ու ջարդուեց, գնաց պառկելու իր ուլիկի կողքին:

Ժ

Նորից եկաւ ամառը, նորից նա իր կախարդական հմայքներով ծածկեց թէ արտերը, թէ գերեզմանները, թէ կեանքի գեղաժպիտ յոյսերը, թէ անկենդան աւերակները:

Ես տիտուր էի տուն վերադառնում: Մեր գիւղը գեռ չէր մոռացել իր կորուսոները: Այս անդամ ինձ դիմաւորեցին լացով. ընդհանուր աղէտը մեղ էլ շատ վնասներ էր տուել, մեր երեխաներից մէկն էլ մեռել էր:

Բայց, խոսանվանում եմ, ամենից շատ ինձ ցաւեցնում էր այն աւերանքը, որին ենթարկուել էլ այծարած եղօի տունը:

Ցնացել էր միայն Մաթու աղջիկը. նա վերցրել էր ծնօտի վրայ կապած կարմիր կտորը. գա սուդի նշան էր:

Փակ էին Եզօի դուռն ու պատուհանը։ Ես առաջ
էր, շատ էի տեսել այդպէս փակ։ բայց այժմ—գերեզ-
մանը, յաւիտենական ոչնչութիւնն էր այդպէս կանգնել
այդ խեղճ տան մէջ, ուր նոր սկսել էր մի գիւղական
օջախ։ հաստատուել։

Իմ այս տպաւորութիւնը հաղորդեցի մօրս։ Իսկ նա
ցոյց տուեց ինձ եկեղեցու մօր ցցուած ահագին ժայռը
և ասաց։

—Տե մնիւմ ես այն քարը։ Դիր նրա մէջ սիրու, և
նա էլ կը հալուի...

Լէ 0

Ի Մ Դ Ա Ր Դ Ը

— Ինչո՞ւ այդպէս ինձ մոռացար,
Ասաւ աղջիկն ինձ մի or.

— Ինչո՞ւ այդպէս մեզ մոռացար,
Դանգատուեցին սար ու ձոր:

— Ո՞հ, մի՛ հարցնէք, իին ընկերներ՝
Ինչո՞ւ էլ չեմ երգում ձեզ,
Շատ եմ փոխուել այն օրից վեր,
Այնպէս մի ցա՞ւ ունեմ ես...

— Ի՞նչ է ցաւըդ, մի հար անենք,
Ասաւ սիրունն անձնուեր.

— Ի՞նչ է ցաւըդ, տուր մենի տանենք,
Ասին սարեր ու ձորեր:

— Ո՞հ, չէ՛, սիրուն, էլ ոչ մի սեր
Ճար չի անիլ իմ սրտին.
Դուք էլ, անուշ սար ու ձորեր,
Չէֆ դիմանալ էս դաւդին:

Ա՞խ, իմ դաւդը... բայց ո՞նց անեմ,
Որ իմ դաւդը իմանաք,
Սիրուս խորն է, թէ բաց անեմ,
Սիրուս խորը, լեզուս փակ...

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԵՐ

ՌԻՍԼԵՐ Ա.Ի.Ա.Գ

(Ալֆօնս Դոլեի)

ԳԻՐՔ Ա.Ռ.Ա.ԶԻՆ

I

Մի հարսանիք Վեթուրի հիւրանցում:

—Տիկին Շեր:

—Ի՞նչ է, որդիս...

—Շատ գոհ ևմ...

Քսաներորդ անգամը կը լինէր այդ օրը, որ Ռիսլերն ասում էր, թէ շատ գոհ է, և միշտ միևնոյն խանգաղատ ու անդորր կերպարանքով, միևնոյն ծորուն, խոր ու խուլ ձայնով,—ձայն, որ ճնշում է յուզմունքից և չէ համարձակում շատ բարձր խօսել, որ մի գուցէ յանկարծ խողուի արցունքից:

Ի հարկէ, Ռիսլերը աւելի լաւ կը համարէր զետինը մանել, քան լալ այդ բոտէին, —ով է տեսել, որ նորափեսան լայ հարսանիքի խնջոյքում: Սակայն սիրտը շատ լիքն էր: Երջանկութիւնը խեղդում էր նրան, սղմում էր կոկորդը, կապում էր լեզուն: Այնքան էր կարողանում միայն, որ երբեմն-երբեմն մըրմիջում էր փոքր ինչ դողուն շրթունքներով՝ «Շատ գոհ ևմ... Շատ գոհ»...

Եւ իրօք հիմք ունէր նա գոհ լինելու:

Առաւոտից ի վեր խեղճ մարդը երազի մէջ էր կարծում իրան, այն չնաշխարհիկ երազներից մէկում, որոնցից մարդ վախենում է զարթնել յանկարծ՝ շլացած աչքերով. լայց սրա երազը անվերջանալի էր թւում իրան: Առաւոտեան ժամի հինգին էր սկսուել այդ և երեկոյեան ժամի տասին, ուղիղ տասին վէֆուրի մեծ ժամացոյցով, դեռ շարունակում էր այդ...

Ի՞նչ բաներ կին անցել այդ օրը, և ինչպէս պարզ աչքի առաջն էին ամենաշնչին մանրամասները:

Նա ա եսնում էր իրան՝ լուսաբայցին, իր անհակում, այդ ծեր-ամուրիի սենեակում, որ նա չափչում էր անհամրե-րութեան ու հրճուանքի խառն զգացմունքով, միրուքն ար-դէն շիտկած, ֆբակը հագած ու երկու զոյտ սպիտակ ձեռնոց զրաբանումը պատրաստ... Յետոյ ահա մի շարք հանդիսացին կառքեր և այն տուղին՝ սպիտակ ձիերով, սպիտակ եր ասաններով և գեղին զաւասկի աստառով կառքում նորահարսի զ արդարանքը, որ սպիտակին է տալիս ամսի պէս... Այսուհետեւ մոււաքը եկեղեցի՝ երկ-երկու և գարձեալ առջեւմ այդ սպիտակ ամսպ՝ սաւառուն, թեթե ու շացուցիչ... Ապա երգեհոնը, լուսաբարբ, քահանայի քարոզը, մուերի լցուում փայ-լող զուքսերն ու գարնանային զգեսաները... և բաղմութեան խոնուելը խորանում, որի բնթացքում սպիտակ ամսպիկը կոր-չում է, թագուում, շրջապատում, զբկից զիրկ անցնում, մինչգետ նորափեան փսիէփսի ձեռք է տալիս Փարփղի ամրոց բարձր առետբականութեան, որ եկել է այդանող պատուելու նրա հարսանիքը... Եւ երգեհոնի վերջին ուժգին բախումը, աւելի և հանդիսաւոր չնորհիւ եկեղեցու բայնարաց դասն, որ ամբարձ փո-ղոցը մասնակից է գարձնում ընտանեկան ծէսին, և հնչիւնների անցքը գաւթով միաժամանակ թափօրի հետ, և թաղի բնակիչ-ների բայցականչութիւնները, և նրանց մէջ այն մեծ զողնոցաւոր կնոջ բարձրածայն նկատողաթիւնը՝ «ինսան զեղեցիկ չէ, բայց հարսը շատ սիրունն է...»:—Նորափեայ պէսք է լինէք, որ իմանաք, թէ ինչպէս է այդ հոգաբառութեամբ լցնում մարդուս սիրտը...

Յետոյ նախաճաշը գործարանի՝ պաստառներով ու ծաղիկ-ներով զարդարուած արհեստանոցում, զրօսանքը Բալօնեան ան-տառում, կատարուած ի հաճոյս գրանչի, որ, իր Փարփղի մանր բուրժուալիային պատկանալ կին, չէր հաւատալ, թէ աղ-ջիկը պատկուել է, եթէ չերժային պատելու լի շուրջը և այցե-լելու ջրվէժը... Ապա վերադարձը անտառից ճաշին, այն ժամա-նակ, երբ լապտերները վառում էին բուլվարում, ուր բոլորը շուռ էին զալիս նայելու հարսանիքին, այդ իսկապէս ճոխ հարսանի-քին, որ վարձկան ձիերը հասցրին մինչև վէֆուրի սանդուինները:

Իր երազի այդ կէտումն էր նա:

Եւ այժմ, յոնութիւնից ու երջանկութիւնից թմրած, Ռիս-լերը մտամոլոր նայում էր այդ ահազին, ութսուն սարքաւոր սե-ղանին, որ վերջանում էր պայտածե ծայրերով և շրջապատուած էր ժպտուն ու ծանօթ զեմքերով,—և թուում էր նրան, թէ բո-

լրի աչքերումն էլ արտավայրում է իր բախտաւորաւթիւնը: Ճաշը վերջանալու վրայ էր: Մասնաւոր խօսակցութիւնների ալիքները ծփաւմ էին սեղանի շտրջը: Երեսում էին դէմքեր՝ գարձած դէպ իրար, ֆրակի և թեքեր՝ ծաղկաղամբիւղների յետմից, մի ծիծաղոն մանկական երես՝ թեքուած պաղպաղակի ափաէի վրայ, և դէմքերի բարձրաւթեամբ շարուած դէսէրտը, որ հըրճուանկը, գոյներ ու շողքեր էր տարածուած ամբողջ սփոցի շորջը:

Այս, այն, շատ զոհ էր Ռիսլէրը:

Բացի եղբօրից՝ ֆրանցից, այդանու էին նրա բոլոր սիրելիները: Նախ և առաջ նրա դէմ ու դէմ նաստած Սիրօնին, երէկուայ փոքրիկ Սիրօնին, որ այսօր նրա կինն էր արդէն: Ճաշին նստելիս նա հանել էր քողը, դուրս էր եկել իր սալիտակ ամսկի մէջից: Այժմ նրա մնաւքուէ միահարթ և սալիտակ հաղուստից վերեւ երեսում էր նրա սիրուն դէմքը, որի սոլիտակաթիւնը աւելի մեղմ էր և փայլաւ, քան մնաւքանը, և նրբահիւա ծաղկէ պատակի տակ՝ մազերի պատկը, որ թուշելու պատրաստ փետուրների կենաւից խլատումներ ու ցողքեր ունէր: Բայց ամուսինները երբ են նկատուած այդպիսի բաներ:

Սիրօնիցից ու ֆրանցից յետոյ Ռիսլէրի ամենասիրելի մարդը աշխարհում՝ տիկին Ֆօրժ Ֆրօմօնն էր,—«տիկին Շօրչը», Ռիսլէրի արտասանութեամբ,—նրա առեարական ընկերակցի կինը, նրա առաջտայ պատրօնի ու կուռքի, հանգուցեալ Ֆրօմօնի աղջկը: Նա նասացրել էր տիկինը իր կողքին և խօսուած էր հետը ակներեւ քնքութեամբ ու ակնածութեամբ: Բոլորավին ջանել էին էր այդ, դրեթէ աարեկից Սիրօնին, բայց աւելի կանոնաւոր, աւելի անգորը գեղեցկութեամբ: Նա քիչ էր խօսուած, խորթ զգալով իրան այդ խանակ հասարակութեամն մէջ, սակայն աշխատուած էր լինել սիրալիք:

Ռիսլէրի միւս կողքին նստած էր նորահարսի մայրը՝ տիկին Շէրը, որ պլազմամ, քրֆուում էր իր՝ վահանի պէս պաղպան կանաչ սատինէ զգեստուած: Առաւոտից ի վեր նրա բոլոր մասած մոնաքները նոյնքան փայլուն էին, որքան այդ խորհրդաւոր գոյնով զգեստը: Բողէ չէր անցուած, որ նա չասէր ինքն իրան՝ «Աղջիկս պսակւում է Վիէլ-Օզրիւտ փողոցի Ֆրօմօն կրտսերի և Ռիսլէր աւագի հետ...»:—Նրա խելքով, միայն Ռիսլէր աւազը չէր, որ կնութեան էր առնուած նրա աղջկան, այլ այդ ամբողջ հուշակաւոր առեարական տունը: Եւ ամեն սննդամ, երբ տիկին Շէրը հաւաստուած էր այդ փառաւոր դէպքը, աւելի ևս ձգւուած էր, այնպէս որ վահանանման զգեստի մնաւքաը ճրճուած էր վրան: Ի՞նչ հակապատկեր այն զիրքին, որ բռնել էր մի քանի

աթոռ դէնը նստած պարոն Շէքը՝ Բնուանիքում, ընդհանրապէս, մինոյն պատճառներն առաջացնում են բոլորովին տաքեր հետևանքներ։ Այդ փոքրիկ մարդը, որ ունէր ուտօվիստի մեծ ճակատ՝ ուռուցիկ ու դատարկ, ինչպէս սրբած զարդարող գունատերը, նոյնքան զայրացած էր երեսում, որքան ուրախ-ուրախ ցնծում էր իր կինը։ Ասենք՝ այդ ամեննեին փոփոխութիւն չէր քցում պարոն Շէքի մէջ, որովհետեւ նա զայրացած էր լինում ամբողջ տարին։ Այդ երեկոյ, սակայն, նրա դէմքը այնպէս թթուած ու թօշնած չէր, ինչպէս առհասարակ, և նա չունէր հագին իր լախ ու ծփուն վերարկուն, որի գրաբանները միշտ ուռուած էին լինում այլ և այլ ձեթերի, գինիների կամ քացախների նմուշներից, նայելով թէ այդ ապրանքներից որ մէկն էր նա դնում նրանց մէջ։ Նրա ֆրակը, հոյակապ ու նոր, կարող էր մրցել կնոջ կանաչ զգեստի հետ, բայց դժբախտաբար նրա մտածմունքներն էլ սև էին ֆրակի նման... Ինչու նրան չէին նստացրել նորահարսի կողքին, ինչպէս պահանջում էր հարկը... Ինչու էին բազմեցրել նրա տեղը ֆրօնն կրտսերին... Եւ ծեր Գարդինուան, Ֆրօնների պապը, ինչ էր շինում նա Սիրոնիի կողքին... Այդպէս է, այդպէս Ամեն բան ֆրօնների համար և ոչնչ Շէքերի համար... Եւ դեռ զարմանում են, որ մարդիկ յեղափոխութիւն են անում...

Բարեբախտաբար՝ այդ զայրացած փոքրիկ մարդու կողքին նստած էր իր բարեկամ Դըլօրէլը, —մի անդործ հին դերասան, որի առաջ նա թափում էր սրտի գառնութիւնը և որ լսում էր նրան իր՝ մեծաշուք օրերի վեհ ու անդորր դէմքով։ Շատ էլ մարդ, թատրոնապետների չարակամութեան չնորհիւ, տամնհնդ տարի հեռացած լինի բնմից, այնուամենայնիւ, պէտք եղած ժամանակի, նա կարող է գտնել դէպքերին պատշաճող բեմական դիրքեր։ Եւ իրաւ՝ այդ երեկոյ Դըլօրէլի զլուխը կատարելապէս հարասնիքային էր, կերպարանքը՝ կիսալուրը, կիսաժամուն, ներողամիտ դէպի փոքրիկ մարդիկ, միաժամանակ և անբռնազրօսիկ և հանդիսաւոր։ Կ'ասես բնմի վրայ լինէր, մի որևէ առաջին գործողութեան ինչոյքի ժամանակ, նստած ստուարալիթէ կերակուրները շըջալատող գերակատարների շարքում, հանդիսաւուներով լի դահլիճի առաջ, և այդպէս գեր կատարողի կերպարանք ունէր այդ տարօրինակ Դըլօրէլը ևս աւելի այն պատճառով, որ կարծելով թէ անչուշտ երեկոյի լնթացքում կ'օգտուեն իր տաղանդից, սեղան նստելու բոպէից կրկնում էր մոքում իր սէպէրտուարի ամենասիրուն կտորները, որ տալիս էր նրա դէմքին մի տեսակ անորոշ, չինծու և մտամոլոր արտայայտութիւն, այն կեղծ ուշադիր կերպա-

բանքը, որ ունենում են առհասարակ բեմում՝ զտնուող գերաս-
սանները, որոնք ձևանում են, թէ լսում են իրանց հետ իօսո-
վին, բայց ամբողջ ժամանակը իրանց տալիք պատասխանի մա-
սին են միայն մտածում:

Տարօրինակ բան,—նորահարսի դէմքի արտայայտութիւնն
էլ մի քիչ այցպէս էր: Ինչ որ գաղտնի հողս էր երեսում այդ
ջահէլ ու սիրուն երեսի վրայ, որ աշխացժ էր ստացել երջան-
կութիւնից՝ տունց պայծառանալու, և ժամանակ առ ժամանակ
մի թոռոցիկ ժափտ էր խաղում նրա բերնի անկիւնում,—կ'ասես
թէ խօսելիս լինէր իրանց իրան:

Նոյն թոռոցիկ ժալիտովն էր պատասխանում նա իր աջա-
կողմը նստած Գարդինուա պատի փոքր ինչ համարձակ կատակ-
ներին:

—Այ քեզ աղջիկ, ասում էր ծերուկը ծիծաղելով... Երկու
ամիս չը կայ, ինչ ասում էր, թէ կուսանց է մտնելու... Էյ զի-
տենք այդ ջահէլ աղջիկների կուսանցները... Այդ ոնց որ մեր
գիւղացիք ասում են—կուսանցի խցի մէջ՝ չորս ոտնաման տախ-
տի տակ:

Եւ բոլոր սեղանակիցները սրտանց ծիծաղում էին, լսելով
զուհիկ կատակները այդ ծերունի գեղջուկի, որի կնաճքում
վիթխարի հարսառութիւնը փսխարինում էր ամեն բան՝ և սիրտ,
և կրթութիւն, և բարութիւն, բայց ոչ խելք, որովհետեւ խելք
ունէր այդ աղուէս ուամիլը, և նոյն խակ տեկի, քան այդ բոլոր
բուրժուաները միամին: Այն սակաւաթիւ մարդկանցից, որոնք
փոքր ի շատէ համակրութիւն էին ներշնչում նրան, Գարդի-
նուային առանձնատէս դուր էր զալիս այդ փոքրիկ Շէրը, Սի-
դօնին, որին նա ճանաչում էր նրա երեխայ ժամանակից: Սի-
դօնին էլ, որ, իբր գեռ նոր հարսաւացած, չէր կարող առանց
ակնածութեան վերաբերուել ոչ պի հարսառութիւնների, ակնյայտնի
պատկառամկով և կօքէտութեամբ էր խօսում իր աշակողմեան
հարեանի հետ:

Իւր ձախակողմեան հարեանի, իւր ամուսնու ընկերակից
Ժօրժ Ֆրօմօնի վերաբերմամբ, ընդհակառակը, շատ զուսալ էր
ցոյց տալիս նա իրան: Նրանց խօսակցութիւնը չէր անցնում ան-
դանակիցների մէջ պարտապիք քաղաքավարութիւնների սահմա-
նից, և նոյն խակ մի տեսակ շինծու անտարբերութիւն էր նկատ-
ում նրանց մէջ:

Յանկարծ բազմականների մէջ սկսուեց այն թեթի իրա-
բանցումը, որ ցոյց է տալիս, թէ շուտով վեր են կենալու, —
մետաքսի իշխչոց, աթունների աղմուկ, խօսակցութիւնների վեր-
ջին բառերը, ծիծաղների ընդհատումը, —և այդ կիսալուսթեան

մէջ արկինն Շէքը, որի լեզուն բացուել էր, ասում էր իր դաւառացի աղքականներից մէկին, որ հիանում էր, թէ ինչպէս զուսպ ու հանգստ է պահում իրան, այդ բոպէին ոք. Գարդինուայի հետ թևանցուկ կանգնած, նորահարսը.

—Տեսնում էք այդ երեխային... Երբէք ոչ ոք չէ կարողացել իմանալ, թէ ինչ կայ զրա մոքստմը:

Այդ ժամանակ ամենքը վեր կացան և գնացին մեծ դահլիճը:

Մինչ պարահանդէսին հրաւիրուածները խումբ-խումբ գալիս խառնում էին ճաշի հուրերի հետ, և նուադախումբը լարում էր գործիքները, իսկ վալս պարող մշնուժնայաւոր (մօնոկլասոր) երիտասարդները քըքըւում էին անհամբեր օրիորդների սողիտակ զգեստների առաջ, նորափետան, որ աստիկ քաշում էր այդ ահազին բալմութիւնից, իր բարեկամ Պլանուսի հետ,—երեխուն տարիից ի վեր Ֆրօմօնների ասետրական տան գանձուղան Սիդիզմունդ Պլանուսի հետ,—պատրապարուել էր այն փոքրիկ ծաղկազարդ սրատչգամբում, որ իր ծաղիկներով ու պատերի թղթի սրատառուկարույսերի նկարներով մի տեսակ կանաչազարդ նկարահիմք է կազմում Վէֆուրի սոկեզօծ դահլիճների համար: Գոնէ այնաեղ նրանք մենակ էին, կարող էին խօսել:

—Սիդիզմունդ, սիրելիս... շատ գոհ եմ...

Սիդիզմունդն էլ շատ գոհ էր, բայց Ռիսէրը ժամանակ չէր տալիս նրան այդ տեսելու: Այժմ, երբ նոս այլիս չէր վախենում, թէ կարող է լալ բարմութեան առաջ, որտի ամրող ուրախութիւնը գեղուում էր անդուսով:

—Մէկ մատածիր, սիրելիս... Ռիսէրին տարօրինակ բան է, որ նրա ոէս մի ջահէլ աղջիկ ինձ հաւանեց: Առողջ այսօրտայ այն աներես ինուջ ասելան էլ ևս վաղաց գիտէի, որ զեզեցիկ չեմ: Այս էլ կայ, որ քառասուն երկու տարեկան եմ... Իսկ նոս այնքան սիրան է... Քանի՞քանի ուրիշներ կտպին, որոնց նա կարող էր բնարև և աւելի ջահէլ, աւելի լաւ, էլ չեմ խօսում մեր խեղճ մրանցի մասին, որ այնքան սիրում էր նրան... Բայց չէ, բարբին թողեց ու իր ծեր Ռիսէրին ջոկեց... Եւ արքան տարօրինակ կերպավ հղաւ այդ... Շատ ժամանակ էր, տիսուր էր երեսում աշքիս, բոլորովին փոխուած: Անորատճառ սիրահարուած կրցինի աղջիկը, ասում էի ինձ ու ինձ... Ես ու մարը խելք խելքի էինք տալիս, ջարդում էինք զլուխներս, որ խմանաք, թէ ով կը լինի այդ... Եւ ահա մի տուաւօտ տիկինն Շէքը մանում է սենեակս ու ասում ինձ լալով.—«Քեզ է սիրում աղջիկս, իմ աղջիւ բարեկամ, քեզ...»: Ինձ... հասկանում ես, ինձ... Հը, ուժմ մաքսավը կ'անցնէր այդպիսի բան: Աստաւած երկու ձեւ-

ոսկ է տաղիս լնձ այս տարի... Ֆրօմօնների տան առետրական ընկերը դարձայ և Սիդօնիի ամուսինը... Օօ...

Այդ բարեխն վաս պարողների մի զոյգ պտոյտ գողով մտաւ փոքրիկ գահլիճը Նորանարսն էր այդ Ռիսլէրի լնկերակից ժօրժ Ֆրօմօնի հետ Երկուսն էլ ջանէլ, երկուսն էլ նրբաշնորհք, նրանք խօսում էին կիսածայն, պարփակելով իրանց խօսքերը վալսի նեղ չրջաններում:

—Մնաւ էք ասում... պնդում էր Սիդօնին, մի քիչ գունատուած և դարձեալ թուուցիկ ժպիտը բերանին:

Ֆրօմօնը, աւելի գունատ, պատասխանում էր.

—Մուտ չեմ ասում: Հօրեղօրս կամքովն եղաւ ամուսնութիւնս: Նա մնանելու վրայ էր... դուք կնացել էիք... Զը համարձակուցի չէ ասել...

Ռիսլէրը հեռուից հիսնում էր նրանց վրայ.

—Ռբրան սիրոն է կինս, որքան լաւ են պարում...

Բայց պարողները, նրան նկատելով, բաժանուեցին իրարից և Սիդօնին աշխուժավ մօսեցաւ նրան.

—Վա, այսանդ էք եղել: Ի՞նչ էք անում այսոեղ... Ձեղ ամեն աեղ վնարում են ինչու այսանդ չէք...

Այդպէս խօսում էր հետը ու միւնյն ժամանակ՝ ամհամեցներ կնոջ սիրուն շարժումով շիտկում էր նրա վորդպատի հանդոյցը: Ռիսլէրը հիացել մնացել էր ու աչքի սրոշով ժպտում էր Սիդլընադին և անքան երջանիկ տրամադրութեան մէջ էր, զգալով կնոջ փոքրիկ ձեռնոցապատ ձեռքի շփումը իր վզին, որ չէր կարող նկատել, որ այդ ձեռքը դողդողում էր իր բոլոր նուրբ մասներով:

—Տուէք ինձ ձեր թեր, ասաց նրան կինը, և նրանք մոտան միասն գահլիճները: Կնոջ երկարաւուս սպիտակ զգեստը աւելի ևս նկատելի էր դարձնում մարդու վատ ձեզի և վատ նստող ֆրամի անհնորքութիւնը: բայց ֆրակը փողպատ չէ, որ շիտկուի, —ուղէք չուղէք, պէտք է հաշտուէր այդ որակասութեան հետ... Մինչ նրանք, անցնելիս, բարեսում էին բոլոր հիւրերին, որոնք շտապում էին բարենել նրանց, Սիդօնիի սիրոք մի բոսէ լցուեց հապարտութեամբ և մնավառութիւնը յազուրդ ստացաւ: Դժբախտաբար երկար չը տեսեց այդ: Դահլիճի մի սնկիւտում նստած էր մի ջանէլ ու սիրուն կին, որին ոչ որ չէր հրաւիրում պարելու և որ գիտում էր պարերը ասածին մայրութեան հըրծուանքով փայլող անդորր հայեացքով: Հէնց որ նրան նկատեց, Ռիսլէրը կնաց ուղիղ գէպի նա և ստիպեց Սիդօնին նստել նրա կտղբին: Աւելարդ է ասել, որ տիկին «Շօրչ» էր այդ: Էլ ուրիշ ում հետ կարող էր Ռիսլէրը խօսել այդպիսի գործվալից

պատկառանքով: Ել ուրիշ ուժ ձեռքի մէջ կարող էր նա դնել իր սիրունիկ Սիդօնիի ձեռքը, ասկեալ. «Դուք կը սիրեք սրան, այնպէս չէ: Այնքան բարի էք դուք... Սա այնքան կարօտ է ձեր խորհուրդներին, ձեր աշխարհաճանաչութիւնն...»:

— Բայց չէ որ, իմ բարի Ռիսլէր, պատասխանում էր տիկին Փօրծը, — Սիդօնին ու ես հին բարեկամներ ենք... Եւ հազարաւոր պատճառ կայ, որ մենք այսուհետև ել շարունակենք սիրել միմեւանց...

Եւ նրա հայեացքը, անկեղծ ու անդորր, աշխատում էր հանգիպել իր հին բարեկամունու հայեացքին, բայց ի գուրք...

Ռիսլէրը, որ ամենսկն չէր ճանաչում կանանց և սովոր էր երեխայի տեղ դնել Սիդօնիին, շարսնակեց նոյն եղանակով.

— Սրան օրինակ շնիր քեզ, փոքրիկս... Տիկին Շօրչի հատք չը կայ աշխարհում... Տեղն ու տեղը հանգուցեալ հայրն է իր անսման սրատով... Իսկական ֆրումն է...

Սիդօնին, աչքերը քաշ քցած, լուռ ծոռում էր գլուխը, աննշմարելի սարսուռ զղալով, որ անցնում էր նրա ամբողջ մարմնով մետաքսէ հողաթափերի ծայրից սկսած մինչև ծաղկէ պըսակի վերջին շիւղը: Բայց Ռիսլէրը ոչինչ չէր տեսնում: Սրաի յուղմունքը, պարերը, երաժշտութիւնը, այդ բոլոր ծաղիկները, այդ բոլոր ճրադիները... Նա հարբածի պէս էր, ցնորտածի պէս: Նա կարծում էր, թէ ամենքն էլ իր պէս հնչում են այն անսման երջանկութեան մթնոլորտում, որ շրջապատում էր իրան: Նա չէր զգում, թէ ինչ մրցութիւններ և մանր տաելութիւններ են անցնում դասնում այդ բոլոր պճնազարդ ճականներից բարձր:

Նա չէր տեսնում բռւխարիին կոթնած Դրլորէլին, որ արդէն յոդնել էր միշտ միենոցն զիրքում մնալով, ձեռքը միլէախ արանքում ու զլխարկը ազդրի վրաց պահած, մինչդեռ ժամեր էին անցնում և ոչ ոք չէր մասածում շահազործել նրա տաղմանդները: Նա չէր տեսնում պ. Շէրին, որ մասյլ կուչ էր երկել երկու դռան արանքին, աւելի քան երբեկցէ կատաղած՝ Ֆրօմօնների գէմ... Օ՞հ, այդ ֆրօմօնները... Խնչ միծ տեղ էին բռնում նրանք այդ հարսանիքում... Նրանք ամենքը այստեղ էին իրանց կանանցով, իրանց երեխաններով, իրանց բարեկամներով ու իրանց բարեկամների բարեկամներով... Հենց իմանաս նրանցից մէկի պասկը լինէր... Ո՞վ էր հարցնում Ռիսլէրների կամ Շէրերի մասին... Իրան նոյն իսկ չէին ներկայացրել հիւրերին, իրան, նորահարսի հօրը... Բայց այդ փոքրիկ մարդու կատաղութիւնը աւելի ևս սասակացնողը, կրկնապատկողը՝ իր կնոջ վարժունքն էր, իր կնոջ, որ, կանաչ ու կարմրին տուող զղեստը հաղին, մայրաբար ժպտում էր ամենքին:

Պէտք է ասած, որ այդանու էլ ինչոքս գրեթէ բարոր հորժանկաներում, երկու տարբեկ հոսանքներ կային, որոնք շրջառում էին իրար՝ առանց խառնութելու։ Այդ հոսանքներից մեկը շուտով աեղի տուեց միւսին։ Պ. Շէրին այնքան զրոյուղ և հարսանիքի աղնուական դասը կազմող Ֆրօմօնները՝ առեարական տաեանի հախտագահը, հաւատարմատարների աւազը, Օրէնսդրական ատեանի^{*)} պատգամաւոր յայսնի չօկոլատ արդիւնապերազը, ծեր միլլիօնէր Գարդինուան—զրանք լոլորը քաշուեցեն զնացին կէս դիշերից մի փոքր անցած։ Նրանց յիտիկց Ժօրժ Ֆրօմօնն ու իր կինն էլ տուն զնացին կառուց։ Այսուհեակ մնացին միւտայն Խիսլէրն ու Շէրինը, իրանց ծանօթ ու բարեկամներով, և Երեկոյթը, անմիջաղաղէս փսխելով տեսքը, դարձաւ տւելի տղալի։

Հոչակաւոր Դրլոբէլյո, տեսնելով, որ ոչ ոչ ոչինչ չէ իրնադրում իրանից, ձանձրացաւ ու վճռեց ինքն իրանից ինսդրել մի բան և զօղանջող ձայնով ականց Ռիւյշ-Բլասի մնախօսութիւնը։ „Bon appétit, messieurs!..“ («Բաղցը ախտժակի, պարտններ...»), մինչդեռ հարսանիքաւորները խոնուում էին սեղանի մօա չօկօլսուի ու փաւնչի բաժակների ասած։ Խնացողաբար կարած կանացի զգեսաներն ականցին ազատ փստել աթոռների վրայ, ուրախացած, որ վերջապէս իրանք էլ կարող են մի տարաւորութիւն գործել, և քրքրուան ջահէլ խանութպանները, սիրո տոսած, ակսեցին քաղըիլ պարեկ այսանուց։ Խորահարսր վաղուց ուզամ էր տուն զնալ։ Վերջապէս նա անյայտացաւ Ռիսլէրի և տիկին Շէրի հետ։ Ինչ վերաբերում է պ. Շէրին, որ այժմ ձեռք էր բերել իրան վայել ամբուղջ կարեսութիւնը,— անկարելի էր նրան առն առնել։ Վա, հօ չէ կարելի, որ ոչ մի հարսանիքատէր չը մնայ հարսանիքում։ Եւ պէտք է տառծ, խեղձը իրան մորթում էր հարսանիքաւորներին զբաղեցնելու համար։ Պէտք է տեսնէիք, ինչոքս էր կարմրատակել՝ բորբոքուել, կրակ կարել, ինչ աղմիկաբար, զրեթէ խոռվարար էր դարձել։ Ներքից լսում էր, որ նա Վէֆուրի հիւրանոցապետի հետ քաղաքական հարցերի մասին էր խօսում և այնպիսի յանդուզն բաներ էր ասում^{**})...»

...Հարսանիքային կառը, որի թմրած կառապանը մի քէշ թոյլ էր պահուած սպառակ երասմները, ծանր-ծանր զնում էր ամեայի փաղացներով գէսկի Մարէի կողմը։

*) Նապօլէոն III-ի ժամանակ պատգամատարների ժողովը կոչում էր Օրէնսդրական առեան (Corps législatif)։ Տ. Թ.

**) Վէտի նիւթը վերաբերում է Նապօլէոն III-ի կալսութեան ժամանակին։ Տ. Թ.

Տիկին Շէբը անսկերջ խօսում էր, թուելով այդ յիշատակելիք օրուայ բոլոր պահնչելքները, զմայլուած մանաւանդ ճաշից, որի ամենասովորական կերակուրները շուայլութեան ամենաբարձր արտայայտութիւնն էին նրա աչքում: Սիրոնին երազում էր կառքի ստուերում, իսկ Ռիսլէրը, նստած նրա գիմայը, եթէ այլ ես չէր էլ ասում՝ «չատ գոհ եմ»..., մտքումը կրկնում էր այդ ի բոլոր սրտէ: Մի անդամ նա ուզեց բռնկել Սիրոնիի փոքրիկ սպիտակ ձեռքը, որ նա դէմ էր տուել բարձրացրած ապակուն, բայց ձեռքը իսկոյն յետ քաշուեց, և նա մնաց անշարժ իր տեղում, խորասուզուած անբարբառ երկրպագութեան մէջ:

Անցան շուկաները ու բանջարավաճառների սայլերով վե Ռամբիւտո փողոցը, յևսոյ, Ֆրան-Բուրժուա փողոցի ծայրում, ծուեցին Արքիմենի անկիւնի մօտով ու մտան Բրաքի փողոցը: Այնտեղ նրանք մի քիչ կանդ առան, և տիեկին Շէբ իջաւ կառքից իրանց դռան առաջ, որ շատ նեղ էր տիեկնոջ պահնչելի կանաչ մետաքսէ զգեստի համար, որ պառակուեց սրահանցքի մէջ խոռվածայն խշխոյով և բոլոր ծակքուծուելքների մրմոթոցով... Մի քանի բոլոք անց՝ Վիէլ-Օդրիէտ փողոցում կրունկի վրայ բացուեց ու ճանապարհ տուեց հանդիսացին կոտքին մի ահագին կուռ դարձաս, որի հին ապարանային վահանակը, կիսով չափ եղծուած տոհմանիշի տակ, կրում էր կապոյտ տառերով զրած «Որմաթղթեր» ցուցատախտակը:

Այս անդամ, նորահարսը, անշարժ ու քնածի պէս, կարծես յանկարծ դարթնեց և, եթէ բակում ձգուող ահագին շէնքերի, արհեստանոցների ու պահեստների բոլոր ճրագները հանդցրած չը լինէին, Ռիսլէրը կարող էր տեսնել, թէ ինչպէս միանդամից մի յաղթական ժպիտ պայծառացրեց այդ հանելուկային սիրուն գէմիքը: Սնիւների ձայնը մեղմացաւ մանր աւազի վրայ և կառքը շուտով կանդ առաւ մի երկյարկանի փոքրիկ ապարանքի մուտքի առաջ: Այդտեղ էր ասլրում ջահէլ մրօմնների զայլը, և Ռիսլէր աւազը իր կնոջ հետ բնակութիւն էր հաստատելու նրանց վերեւում բնակարանի սարք ու կարգը մեծավայել էր: Այդտեղ հարուստ վաճառականութիւնը իր ովր հանում էր խաւար փողոցից ու յետ ընկած թաղից: Մի ահագին գորդ սանդուխքի ներքեից տանում էր մինչեւ նրանց կացարանը, որի նախասենեակը զարդարուած էր ծաղիներով, և ամեն կողմից երեսում էին սպիտակափառ մարմարներ, չողչողուն հայելիներ և կովտած պղնձերէն:

Մինչդեռ Ռիսլէրը հրձուալից սրտով պատում էր իր կացարանի բոլոր սենեակները, Սիրոնին մնացել էր մենակ իր սենեակում: Սովորից կախուած փոքրիկ կապտագոյն լամպի լոյսով՝

Նա նախ և առաջ մի հայեացք գցեց հայելիի վրայ, որ ցոլացնում
էր նրան ոտից մընչեւ գլուխ, և բոլոր այդ թարմ շռայլութեան
վրայ, որին այնքան անսովոր էր նա, յետոյ, փոխանակ
պառկելու, նա բայց արեց արտուհանը և մնաց անշարժ,
յենուած ճաղերի վրայ:

Գիշերը պայծառ էր ու տաք: Նա պարզ տեսնում էր ամ-
բողջ գործարանը, նրա անթիւ անվանդակափեղկ պատուհան-
ները, նրա շողուն ու բարձր ապակիները, նրա երկար ծինե-
լոյզը, որ կորչում էր երկնքի խորութեան մէջ, և աւելի մօտ՝
այդ փոքրիկ ճոխ պարտէղը, փարուած հինաւուրց ապարանքի
հնամաշ պատին: Ու չորս կողմը՝ տիսրատես ու աղքատիկ տա-
նիքներ և խաւար, խաւար փողոցներ... Յանկարծ սարսուռ ան-
ցաւ նրա մարմնով: Այնտեղ, այդ կարծես աղքատութեան ծան-
րութեան տակ իրար կուչ եկած, իրար կոթնած վերնատուննեւ-
րից մէկում, որ ամենամուայն էր ու ամենատծել, երեսում էր
հինգերորդ յարկի մի լուսամուտ, լայն բացուած ու լի խաւա-
րով: Նա իսկոյն ճանաչեց այդ պատուհանը: Իր ծնողների բնա-
կարանի սրահի պատուհանն էր այդ:

Սրահի պատուհանը...

Ո՞րքան բաներ էր յիշեցնում նրան լոկ այդ անունը: Ո՞ր-
քան ժամնը, ո՞րքան օրեր է անցրել նա այնտեղ, նայելով գոր-
ծարանի կողմը, կռացած այդ լուսամուտի անյենարան ու ան-
վանդակի խոնաւ չուրթի վրայ: Հենց այդ րոպէին էլ նրան թւում
էր, թէ տեսնում է այնտեղ, վերեսում, փոքրիկ Շէքի սիրուսիկ
գէմքը, և նրա աչքի առաջ՝ այդ աղքատիկ պատուհանի շրջա-
նակում անցնում էր իր ամբողջ մանկական կեսանքը, իր տիսուր
ջանէլութիւնը փարիզեցի աղջկայ:

II

Փոքրիկ Շէքի պատմուքիւնը:—Երեք լինտանիք մի սրահի տուրզ:

Փարիզում, աղքատ ընտանիքների համար, որոնք շատ նեղ-
ուածք են զդում իրանց չափաղանց փոքր բնակարաններում, ընդ-
հանուր սրահը աւելսրդ սենեակի տեղ է բննում, մի տեսակ
յաւելուած է կաղմում կացարանին կից: Այնտեղն է ներս թա-
փանցում ամառը մի փոքր օդ դրսից, այնտեղ են կանացք զրոյց
անում, երեխանները՝ խաղում:

Երբ փոքրիկ Շէքը շատ էր աղմուկ անում առանք, մայրը
տուածք էր նրան—«Է՛, զլուխս տարար... Գնա սրահում խաղ
տարաց: Եւ երեխան խալոյն վազում էր այնտեղ:

Այդ որահը, որ դանւաւմ էր վերջին յարկումը մի հին տան, որի շնորհները ամենեին չէին խնայել տեղը, կազմում էր մի տեսակ մնած ու բարձրատիք միջնորդը, պաշտպանուած՝ սահսրական կազմից երկաթակոռ ճաղերով և լուսաւորուած մի լայն պատուհանով, որի մէջից երեսում էին շրջակայ տանիքները, բակերը, ուրիշ պատուհաններ և հեռուամ՝ ֆրօմօնների գործարանի պարագեղը, որ կանաչին էր տալիս հնացին ու հսկայակերպ պարփակների արանիքն:

Նատ էլ ուրախ տեսք չունէր այդ բոլորը, բայց երեխային այդտեղ աւելի էր գուր գալիս, քան ներսեւում, որովհետեւ նրանց առանին կեանքը չափաղանց ախուր էր, մանաւանդ անձրեւ օրերը, երբ ֆերդինանդը տանն էր մնուած:

Ֆերդինանդ Շէրը ծով ու ծրագրամոլ բուրժուաներից մէկն էր, որոնցից այնքան շատ կայ Փարիզում, և նրա գլուխը միշտ լիքն էր նար-ներ ծրագիրներով, որոնք գժբախտաբար երբէք չէին իրագործուած: Նրա կիբը, որին նա կարողացել էր շլաշնել սկզբում, շատ շուտով նկատեց նրա ոչնչութիւնը և ի վերջոյ սովորեց միակերպ համբերութեամբ տանել նրա մշտական երաղանքները հարսաւեալու մասին և այդ երաղանքներին անմիջապէս հետեւով ձախորդութիւնները:

Կնոջ օժիտ բերած և մարդու ձեռքով անհեթեթ ձեռնարկաւթիւնների վրայ վասնուած ութունն հազար ֆրանկից մնուած էր միայն մի փոքրիկ հասոցի, որ զեռ բարձր էր պահում նրանց իրանց հարեաններից, ինչպէս նաև տիկին Շէրի՝ բոլոր փորձանքներից աղասած կաշմիրէ շալը, հարսանիքի ժամանակները, որ Սիրնիի աղաչանքով մայրը երբեմն-երբեմն ցոյց էր տալիս նրան պահարանի աշքի խորքում, սպիտակ թաւիչով պատած մի հին տուփի մէջ, ուր զոհարափաճառի երեսուն տարի առաջ ոսկետառ գրոշմած անունը զրեթէ ջնջուել էր բոլորովին: Միակ շոայլութեան առարկան էր զա այդ խղճուկ բնակարանուած:

Երկար, շատ երկար ժամանակ պ. Շէրը տեղ էր փնտուամ՝ իր փարբիկ հասոցիը տաելացնելու համար: Բայց այդ տեղը նա փնտուամ էր միայն, ինչպէս ինքն անուանում էր, ունկայ առեւտրի մէջ, որովհետեւ նրա առողջաւթիւնը չէր գիմանուամ նըստական պարագմունքի:

Կարծեմ, խեղճը, ճիշդ՝ որ, ամուսնութեան սկզբի ժամանակները, երբ խոշոր առեարի մէջ էր և յատակ ձի ու փոքրիկ կառք ունէր վաճառատան գործերի համար, մի օր սաստիկ վայր էր ընկել կտորից: Այդ փորձանքը, որի մասին նա խօսուած էր

տեղի անտեղի, արդարացնող պատրուակ էր նրա ծուլութեան համար:

Անկարելի բան էր, որ մարդ հինգ րոպէ մնար պ. Շէրի հետ և նա չ'ասէր գաղանաբորհուրդ եղանակով.

«Յայտնի է ձեզ Օրլինի գոտիսին պատահած վորձանքը...»

Ու յետոյ չաւելացնէր, թիժիսկացնելով իր ճաղատ գանգը.

«Իմ գլխին էլ նոյն փորձանքն է եկել ջահէլ ժամանակու»:

Այդ հոչակառուոր անկումից յետոյ՝ ամեն տեսակ զլխակոր աշխատանքից նրա ացքերը միթնում էին, ուստի նա ճակատագրօրէն ստիգուած էր բաւականանալ ունիկայ առեւտրով: Այդպիսով նա հետզհետէ դարձել էր վաճառամիջնորդ զինու, զրքերի, թալլի, *) ժամացոյցի և հազար ու մի տրիշ բաների առեւտրի մէջ: Դժբախտաբար նա շուտ զգում էր դործից, երբէք բաւարար չը դանելով իր գիրքը՝ երեխն յատուի կառք ունեցած վաճառականի համար, և այդպէս քիչ-քիչ, սոլորելով միշտ իրանից ստոր համարել ամեն մի պարագմունք, ծերացել էր ու դարձել մի անողէտք ու անողործ արտրած, զրաշուած միայն փողոց չափելով ու քամի կուլ տալով:

Շատ են յարձակուել արտիստների վրայ նրանց տարօրինակ վարունքների, նրանց ընտառութեան քննահաճովների և դէպի սպատշաճականութիւնը տածած ատելութեան համար, որ նրանց մզում է դէպի կողմնակի շաւկովներ, բայց ով կարող է նկարագրել այն բոլոր ծիծաղելի երեակայանքները, այն բոլոր յիմար տարօրինակութիւնները, որոնց կարող է հասնել մի անողործ բուրժուա իր կեանքի գատարկութիւնը լցնելու համար: Պ. Շէրը սրոշ օրէնքներ ունէր անից գուրս գալու և զրօսանկների համար: Սելլաստօլովնեան բուլիսրը շննելիս, սկզբից մինչեւ վերջը, նա օրը երկու անդամ գնում էր տեսնելու, թէ ինչպէս է, «առաջ է գնում դործը»:

Ոչ ոք նրանից լաւ չէր ճանաչում յայտնի խաճութեարը և յատուկ վաճառաանները, և յաճախ, երբ տիկին Շէրի համբերութիւնը հատնում էր, տեսնելով իր ամսունու տուտուց զլուխը կասմ պատուեանի ապակուն, մինչգետ ինքը ժրաշտն կարկատում էր տանու սպիտակեղինը, նա զլխիցը կորցնում էր հոգեւորին, ուղարկելով նրան այն կողմները... «Դու զիտես է այն տեղ, մոյ են ասում, այն փողոցի անկիւնում, ուր այնպէս համուլ խմորեղէն են ծախում... Գնա մի քիչ առ ճաշի համար»:

Եւ մարդը վնում էր, չափչիում էր բուլվարը, թրե էր գալիս խաճութեանի առաջ, սպասում էր հանրակառքին, օրուայ

*) Տօմբօլան, տրիմֆել:

կէսը զրսեն էր անցկացնում հատը երեք սու *) արժող երկու խմորեղէնի համար, որ ի վերջոյ բերում էր տուն յաղթական կերպով ճակատի քրաինքը սրբելով:

Պ. Շէրը պաշտում էր ամառը, կիրակիները, երկար զրօսանքները սարդ կւամարի կամ Ռոմէնիվիլի փոշոտ ձանապարհով և տօնօրեայ ամբոխի աղմուկը: Նա այն մարդկանցից էր, որոնք օգոստոսի 15-ից մի ամէուղջ շաբաթ առաջ գնում էին դիտելու ապագայ հրավառութեան պատրաստութիւնները: Եւ կինը չէր արտնջում այդ բանից: Գոնէ առ ժամանակ նրա հոգին ազատում էր այդ անվերջ ախ ու վախ անող արաբածից, որ ամերող օրերով պատյտ-պտոյտ էր զալիս նրա աթոսի շուրջը հսկայական ձեռնարկութիւնների ծրագիրներով, առաջուց ձախորդութեան մատնուած կօմբինացիաներով, հին դարմանը քամուն տալով և զայրոյթը թափելով, թէ ինչու չէ կարողանում փող վաստակել:

Խեղճ կինը ինքն էլ փող չէր վաստակում, բայց նա այնքան լաւ ինայել դիտէր, նրա հիմանի անարարութիւնը այնքան լաւ կարողանում էր ամեն պակաս լրացնել, որ աղքատութիւնը, նրանց մեծ կարօտութեան դրացին, երբեք չէր կարողացել մտնել այդ երեք՝ միշտ մաքուր սենեակներն ու փշացնել այդ ինամքով կարկասած շարեղէնները, այդ շապկած հին կահկարասինները:

Շէրերի դուն դէմ, որի պղնձէ բռնակը բուրժուաբար փայլում էր սրահի մէջ, բացւում էին երկու ուրիշ, աւելի փոքր գոներ:

Դրանցից առաջինի վրայ, արհեստաւոր նկարիչների սովորութեան համեմատ՝ չորս մեխով ամրացրած մի այցետուն կրում էր «Գործարանի ղծաղրիչ Ռիսէր» անունը: Միւսից կացրած էր մի փոքրիկ կաշետախտակ հետեւեալ սոկետառ մակագրութեամբ.

ՏԻԿՆԱՅԹ ԴԵԼՈՒ Է

Բոչուններ ու ճամճեր զարդարանքի համար

Դըլօրէնների դուռը բաց էր մեռում յաճախ և ցոյց էր տաւիս մի մեծ սալայատակ սենեակ, ուր երկու կին, մի մայր ու աղջիկը (զրեթէ մի մանուկ), մէկը միւսից գունատ, մէկը՝ միւսից յոգնած, պարապում էին այն հաղարաւոր փոքրիկ քմածին ար-

*) Սուն հինգ սանտիմ է: Սանտիմը քրանկի հարիւրերորդ մասն է: Մի սուն ոռուաց փողով կ'անէ երկու կոպէկ:

հեսաներից մէկով, որոնցից կազմւում է «l'Article de Paris *» կոչուող բանը:

Այն ժամանակ մօդա էր զարդարել կանացի զլխարկները և պարահանդիսացին զգեստները հարաւային Ամերիկայի այդ գոհարի գոյն ու ականքների շողք ունեցող թռչնիկներով ու միջաներով։ Այդ արհեստն էին բանեցնում տիկին Դըլօրէլները։

Մի խոշորագաճառ առնտրաստուն, որ ստանում էր ապրանքը ուղղակի Անտալլեան կղղիներից, անբանալ ուղարկում էր Դըլօրէլներին երկար ու թեթև արկղներ, որոնց մէջից, խուփերը պոկելիս, բարձրանում էր մի անախորժ հոտ ու մինդեղի փոշի, որի մէջ փայլում էին քորոցուած ճանձների շեղջեր և իրար հուզ տուած ու թեևը բարակ թղթի հանդոցներով կապած թռչուններ։ Պէտք էր սարքել այդ բոլորը, այնպէս անել, որ ճանձները գողգոզան արոյրի թեւերի վրայ, բզեզել կօլիրրիների վեստուրները, փայլ տալ նրանց, կարկատել մետաքսի թելով կարմրագոյն թաթիկների կոտրուածքները, երկու պստղան ուղունքներ զնել մարած աչքերի տեղ, տալ միջատին կամ թռչնիկն իրան յատուկ դսղարիկ ու կենդանի գիրքը։

Մայրը բանում էր աղջկատ զեկավարութեամբ, որովհետեւ Դէզիրէն, դևո բոլորովին ջահէլ, ունէր նուրբ ճաշակ ու յաւէրժահարսի հնարապիառ թիւն և ոչ չէր կարող նրա նման՝ ուղնաքէ աչքեր անցկացնել թռչունների վրբրիկ զլուխներին կամ բանալ նրանց ընդարձացած թեւերը։

Մանկութիւնից ի վեր կաղ, չնորհիւ մի պատահարի, որ ամենին չէր վնասել կանոնաւոր ու նուրբ դէմքի սիրունութեանը, Դէզիրէ Դըլօրէլը ծուխնում էր առնասարակ զուբոզալ տանից։ Նրա այդ ծուլութեան և զրեթէ հարկադիր անշարժութեան հետևանքն էր անշուշտ նրա դէմք մի անսակ արիստօկրատական գոյնը և ձեռների առանձին սպիտակութիւթիւնը։ Միշա կօքէտարար սանրուած, նա անցնում էր ամբողջ օրեր իր մնած բաղկաթոռի մէջ, մօդացին պատկերներով ու գոյնզգոյն թռչնիկներով ծանրաբեռնուած սեղանի առաջ, զըսնելով իր արհեստի քմածին ու աշխարհիկ զողարիկութեան մէջ մոռացութիւն իր վշաբի և մի անսակ վրիժառութեան միջաց իր չնորհագուրի կեանքի համար։

Թւումք էր նրան, թէ բոլոր այդ վրբրիկ թեւերը թոփշք ևն առնելու իր անշարժ սեղանի վրացից, որպէս զի խսկական ճանապարհորդութիւններ կասարեն Փարիզիան աշխարհում ու շող-

*.) Փարիզիան մանրունքներ։

շողան աօնախմբութիւնների մէջ, ջահերի լոյսում. և բաւական էր տևանել միայն այն, թէ ինչպէս էր նա ցցում իր ձանձերն ու թոշնիկները, որպէս զի մարդ կարողանար զաշակել նրա մոքերի գարծուածքը: Վհատութեան ու տարութեան օրերում թոշնիկների երկարուկ կտուցները ձգում էին առաջ, թերը լայն բացում, կարծես կտառողի թափ ստանալու. համար դէպի հեռու, չնա հեռու հինգերորդ յարկի բնակարաններից, երկաթէ վասարաններից, զրկանքներից, չքաւորութիւնից: Աւրիշ օրեր, երբ նրա սիրան ուրախ էր լինում, թոշնիկները կենսավայլ տեսք էին ունենում, կատարեալ խիզախու ու չարաճճի տեսքը մօդային քմայրի...

Երջանիկ թէ գերախտ, Դէղիրէն աշխատում էր միշտ մի և նոյն եռանդուի: Լուսաբացից մինչի ուշ զիշեր նրա սեղանի վրայ լիքն էր լինում բանաւածքը: Արեի վերջին շողբերը մարելիս, երբ ամեն կողմից սկսում էին հոչել շրջակայ գործարանների գանգերը, տիկին Դըլօրէլը վառում էր լումսը և, աւելի քան թիթի ընթրիքից յետոյ, մայր ու աղջիկ նորից նստում էին զրծի:

Այդ երկու անխանջ կանացք մի նորասակ, մի յարակայ գտղափար աշեխն, որ թոյլ չէր տալիս նրանց զգալ հարկադիր աղնութիւնների ծանրութիւնը: Հաչակաւոր Դըլօրէլի գերասանական փառքն էր այդ:

Այն օրից ի վեր, երբ թողել էր գաւառական թատրոնները և եկել Փարփղ այնաւող բեմերում խորվալու. համար, Դըլօրէլը միշտ սպասում էր, որ մի բանիմաց թատրոնապետ, — հանձարներ յայտարժող խիչալական և նախախնամատաք թատրոնավետներից մէկը, — գայ գտնի նրան ու առաջարկի նրա ձիրքին վայել մի գեր: Թերեւ նրան յաջողեր գտնել, մանաւանդ սկզբներում, մի միջակ պաշտօն երրորդակարդ թատրոններից մէկում, լայց Դըլօրէլը չէր տպաւմ իր արժեքը իշեցնել:

Նու աւելի լաւ էր համարում սպասել, մաքասել, ինչպէս ինքն տառում էր... Եւ ահա թէ ինչպէս էր նա հասկանում այդ մաքասումը:

Առաւանան, իր սենեակում, յաճախ նոյն խակ գեռ տնկողնում, նա կրկնում էր իր հին սէպէրատարի գերները, և մայր ու աղջիկ գողգողում էին, լուելով, իմ ինչպէս միջնորմի յետեւում թնդում էին «Անաօնիի» և «Մանուկների բժշկի» նշանաւոր հատուածները, արտասանուած սրոտալից ձախողի, որ խառնուում էր Փարփղի ահաղին հաղարահնեսա վինթակի աղմուեին Յետոյ, նախաճաշից վերջը, գերասանը ամբողջ օրով գուրս էր գտիս տանից և զնում կատարելու իր սպիրական «պտոյտը»,

այսինքն փոքրիկ քայլերով գրօննելու Շատո-դ'Օի և Մադլէնի միջի, առամիսրիկը բնինին, զլխարկը մի քիչ թէք դրած, միշտ ձեռնոցները հազին, որդած ու կոկած:

Հաղոնուածքի հարցը միծ կարեսրութիւն ունէր նրա աչքում: Այդ նրա յաջողութեան ամմանամենծ դրաւականներից մէկն էր, այն խայծն էր, որ հրապուրելու էր թատրոնապետին, այդ հոչակաւոր բանիմաց թատրոնասկատին, որի մոքովն անզամ չէ կարող անցնել գերասան վարձել անչնորհի հագնուած թերմաշի մէկին:

Եւ ահա աիկնայք Դրլօրէները ամմն կերպ հոգո էին տունում, որ ոչինչ չը սրակափ նրան: Երևակայեցէր, թէ նրքան ճանճ ու թուչուն էր հարկաւոր, որտէս զի խնդ կանայք կարսկանային զուքել այլ զափի մարդուն: Դերասանը չատ բնական էր գանում այդ:

Նրա կարծիքավ, կնոջ ու աղջկայ գործ դրած ջանքերն ու քաշած զրկանքները տղղակի իրան չէին վերաբերում, այլ այն խորհրդաւոր ու անցյատ հոնճարին, որի մի տեսակ աւեանգապահն էր հոմարում իրան:

Որոշեալ նմանաթիւն կար Շէքերի ու Դրլօրէների ընտանեկան զբութեան մէջ: Միայն թէ Դրլօրէների տանը այնքան տխուր չէր, որքան Շէքերի տանը: Շէքերը զգում էին իրանց փակուած մանր հասոյթատէքերի միջտ միակներպ և անհորիզն կուսնարի շրջանակում, մինչդեռ գերասանի ընտանիքում յայսը և պատրանքը հրոշովի տեսարաններ էին բանում ամեն կողմից:

Շէքերը նմանում էին անսնցիկում (յառասե, ԵՍԱԿԵ) բնակող մարդկանց: Դրլօրէները ապրում էին փոքրիկ ու կեղասա, անլայս ու անօդ փողոցամ, որի միջալ չաւողի պէտք է անց կ'ացնէին մի միծ բուքվար: Բացի այդ, տիկին Շէքը հաւատ չունէր ուղի ևս իր մարդու վրայ, մինչդեռ նրա հարեւանուհին, լոկ «գեղարուեստ» մուգական բառի չնորհիւ, երբէք չէր երկմանել իր ամուսնու նկատմամբ:

Եւ սակայն երկար տարիներից ի վեր ոլ Դրլօրէլը բոլորովին անօգուտ վէրմատա էր խմում թատրոնական գործակալների հետ, օշինոր՝ վարձկան ծափահարների պարագլուխների հետ, ընտաէր՝ վօգրվիչներին, գրամսառուրզների և թատրոնական հոչակաւոր մեքենասպանին հետ: Հրաւիրով չը կար ու չը կար: Այսպէս որ, դեռ ոչ մի անգամ բեմ զուբս չ'եկած Փարիզում, խեղճ մարդը քիչքիչ անցել էր առաջին սիրահարների գերերից դօրեղ զրամատիկական շէքերի, յետոյ Փինանսիստների, յետոյ աղնիւ-

հայրերի, յևոյ պարզամիտների դերերի...

Այդտեղ նա դէմ էր առել:

Երկու-երեք անգամ ծանօթները միջոց էին տուել նրան իր ապրուսար վաստակելու, փորձելով տեղաւորել նրան իըրեն անօրէն ժողովարանում՝ կամ սրճարանում, կամ իբրև վերակացու մեծ խանութներում, Phares de la Bastille-ում, Colosse de Rhodes-ում, Դրա համար բաւական էր միայն ունենալ վայելուչ ձևեր, իսկ ինչ պակասէր, պակասէր Դըլօրէլին, այդ չէր պակասին և սակայն ամեն անգամ, երբ այդպիսի առաջարկութիւն էին առում, մեծ մարդք պատասխանում էր հերոսական մերժումով.

—Ես իրաւունք չունեմ հրաժարուել թատրոնից... ասում էր նա:

Այդ անպահնդի բերնում, որ տարիներից ի վեր ուաք չէր զրել բեմի վրայ, սաստիկ ծիծաղելի էր այդ, բայց կարող էր ծիծաղի սիրո մնալ, երբ մարդ աեսնում էր, թէ ինչպէս նրա կինու ու աղջիկը օր ու դիշեր կուլ էին տալիս մինդեղի փուխն, երբ մարդ լսում էր, թէ ինչպէս նրանք եռանդուն կերպով կըրկնում էին, կոտրասելով ասեղները թռչնիկների արոյրէ թելերի վրայ.

—Ոչ, ոչ: Պ. Դըլօրէլը իրաւունք չունի հրաժարուել թատրոնից:

Երջանիկ մարդ,—միշտ զիջողաբար ժպտուն կոկն աչքերը և զրամաներում թագաւորելու սովորութիւնը ընդ միշտ ստեղծել էին նրա համար՝ երես տուած ու հիացմունքով շրջապատուած արքայամանուկի մի բացառիկ զիքք: Երբ նա զուրս էր դալիս տանից, Թրան-Բուրժուա փողոցի խանութպանները, իբրև իսկական փարիզեցիներ, որոնք սիրում են ամեն ինչ, որ առնչութիւն ունի թատրոնի հետ, զլուխ էին տալիս նրան յարզակից կերպով: Այնքան լաւ էր հագնուած լինում նա միշտ: Եւ բացի այդ, այնքան բարի էր, այնքան սիրալիք... Եւ արի տես, որ ամեն շաբաթ երեկոյ նա, Ռիւյի Բլասը, Անտօնին, Մարմարէ աղջիկների Ռաֆայէլը, Սալվադի հեների Սնդրէն, գուրս էր դալիս տանից մօղիսառենու թղթէ արկղը կոնատակին և տանում էր կնոջ ու աղջկայ աշխատանքը Սէնտ-Դընի փողոցի արհեստական ծաղիկների խանութը...

Բայց նոյն իսկ այզպիսի յանձնարարութիւն կատարելիս՝ այնքան աղնուական տեսք ունէր անպիտանը, այնքան բնական վեհութիւն, որ հաշխւը ստուգով գործակատարուհին սաստիկ քաշւում էր վճարել մի այզպիսի անաղարտ ջնալմէնի այն չնշն դումարը, որ համելու էր նրան և որ սակայն նրա կնոջ ու աղջկայ ամբողջ շաբաթուայ չարչարանքների վարձն էր:

Ի՞նչ խօսք, որ այդ երեկոները գերասանը ընթրիքին տուն չէր վերադառնում։ Տնեցիք առաջուց զիտէին այդ։ Նա միշտ հանդիպում էր բուլվարում հին ընկերներից մէկին, իր նման մի անաջուղութեան զոհի, — այնպան անաջողութեան զոհներ կան այդ սրբազնան արհեստում, — որին հրաւիրում էր ճաշարան, սրճարան... Յետոյ, ամենայն ծառութեամբ, — և տնեցիք շատ չնորհակալ էին նրանից զրա համար, — նա տուն էր բերում մնացած փողը, երբեմն էլ հեաը մի փունջ կնոջը, մի փոքրիկ ընծայ Դէղիրէին, մի գատարկ, մի սչինչ բան։ Ի՞նչ արած։ Թատրոնական սովորութիւններ են այդ։ Ի՞նչ արժի մէջոգրամաներում մի բուռը ոսկի շալրուել պատուհանով։

«Ե՞յ, հաստագլուխ, առ այս քսակն ու դնա տիրուհուդ ասա, որ սպասում եմ իրան»։

Եւ այդպիսով, չը նայելով իրանց մեծ արիութեանը և բանեցրած արհեստի բաւական շահաւէտութեանը, տիկին Դըլօրէլ-ները յաձախ փողի նեղութիւն էին կրում, մանաւանդ փարիզնան մանրունքի առեսքի մեռած շրջաններում։

Բարեբախտաբար, հեռու չէր բարի Ռիսլէրը, որ միշտ սպատաստ էր օգնել իր բարեկամներին։

Գիլիօմ Ռիսլէրը, նրբորդ սրահակից մնուորը, ապրում էր իր Ֆրանց եղբօր հետ, որ մօտ տասնհինգ տարով փոքր էր նրանից։ Այդ բարձրահասակ, չէկ, յաղթանդամ ու կարմիրեւս շվեյցարացիները գեղջուկ և առողջ գլուխներ էին մտցնում այդ մուայլ աշխատաւոր տան խեղգուկ մթնոլորտի մէջ։ Մեծ եղբայրը զծագրիչ էր Ֆրամոնների գործարանում, իսկ փոքրը մեծի հաշուով սպատաստում էր Շապտալի վարժարանում Կենտրոնական դըպրոցը մանելու։

Երբ Գիլիօմը նոր էր եկել Փարիզ և չը գիտէր ինչպէս սարքէր իր փոքրիկ լնակաբանը, տիկնայք Շէրերը և Դըլօրէլ-ները օգնում էին նրան խորհուրդներ ու տեղեկութիւններ տալով և առհասարակ ցոյց էին տալիս ամեն տեսակ աջակցութիւն, որ սմնաժեշտ էր այդ միամիտ, ամաչկուս ու մի քիչ ծանրաշարժ խելքի տէր տղազին, որ սաստիկ քաշում էր իր օտարական արտասանութեան ու կերպարանքի պատճառով։ Մի քիչ ժամանակուայ հարեւանութիւնից ու փոխադարձ ծառայութիւններից յետոյ, Ռիսլէր եղբայրները այդ երկու ընտանիքների անգամները գարձան։

Տօն օրերին նրանք միշտ ճաշում էին այդ ընտանիքներից մէկում կամ միւսում, և մեծ ուրախութիւն էր այդ երկու պանդուխտների համար ընտանեկան կեանքի ու գորովի մի սնկիւն զանել այդ հարեւանների տներում, որքան էլ համեստ ու

խղճուկ լինէր նրանց ասպրուսարք իր արհետառամ շատ վարպետ գծաղրիչի սածիկը թոյլ էր տալիս Գիլիօմին օվնել Դըլօրէլներին տան վարձի պայմանաժամերին և ուցցելել Շէրերին, իբր մեծ հօրեւլլայր, միշտ ծանրաբեննում սիւրարիդներով ու ընծաներով, այնազէս որ փոքրիկ Շէրը նրան տեսնելուն պէտ վազում էր մօտը, անտողում գրավաները, թուչում ծնկների վրայ:

Վիրակի օրերը նա բոլորին տանում էր թատրոն և զրեթէ տամնն երեկոյ պ. Շէրի ու Դըլօրէլի հետ զնում էր Բլօնդէլ փողոցում գանուող մի վարեջրատուն, ուր հիւրասիրում էր նրանց գառեջրալ ու աղած պրախտելներով: Գարեջտոք ու պրախտէ, — այդ նրա թոյլ կազմն էր:

Նրա համար չը կար աւելի մեծ բախտաւորութիւն, քան դարեջրի դաւաթն առաջին նատել այդ երկու բարեկամների արանքին ու ականջ դնել նրանց զրոյցին, կուշտ-կուշտ ծիծաղով ու զլսի թօթւումով միայն խանճուելովնրանց խօսակցաւթեան մէջ, որ առհասարակ բազկացած էր լինում անվերջ արտոնջներից հասարակութեան դէմ:

Շնորհիւ իր մանկակուն ամօթխածութեան և զերմանաբանութիւններին *) որոնցից ժամանակ չէր ունեցել աղստուել իր անընդհատ աշխատանկութալ լի կենաքում, նա շատ գժուարանում էր մսղերը արտայայտելիք Բայց զրանից, այդ երկու բարեկամները սպատկառանք էին աղջում նրան: Նրանք այն ահազին գերազանցաւթիւնն ունեին նրա համեմատաւթեամբ, որ ունենում են առհասարակ ոչինչ չանող մարդիկ աշխատաւորների համեմատաւթեամբ, և պ. Շէրը, նուազ վեհանձն քան Դըլօրէլը, առանց քաշուելու զգալ էր տալիս այդ նրան: Շատ բարձրից էր վերաբերում նրան պ. Շէրը: Նրա աչքում՝ Ռիսլէրի պէտ օրը տաս ժամ աշխատող մարդը մնընդունակ էր այդքան աշխատանքից յետոյ մի խելքը զլիմին կարծիք յայտնել Երբեմն գծաղրիչը, բոլորամբին ջարդուած տուն զալով գործարանից, պատրաստուում էր գիշերը լուսացնել մի որ և է վոադ աշխատանքի վրայ: Պէտք էր տեսնել այն ժամանակ պ. Շէրի վրդումունքը:

«Որ քաշովս մէկ սակի տային, ոյդովիսի արհեստով չէի պարսպից» տառամ էր նա վարուելով և յետոյ աւելցնում, նայելով ուղիղ Ռիսլէրի երեսին՝ այցելու բժշկի ինքաւխարական հայեացրով. «Այս, երբ որ կաթուածահար կը լինէք...»

Դըլօրէլը այդքան վայրագ չէր, բայց աւելի ևս բարձրից էր վերաբերում նրան.

*) Ռիսլէր Շվեյցարիայի դերմանախօս մասիցն էր:

«Le cèdre ne voit pas une rose à sa base *»:

Դըլօրէլը չեր աեմսում Ռիվալէրին իր ստների մօստ:
Երբ, պատահմամբ, այդ մնծ մարդը բարեհաճռում էր նկա-
տել նրա ներկայութիւնը, մի առանձին ձև ունէր, որով թիք-
ռում էր դէպի նա ականջ գնելու համար և ժպառում նրա խօս-
քերին, ինչպէս ժպառում են երևիաների խօսած ժամանակ, կամ
թէ զուարձանում էր շլացնելով նրան զանազան պատամոթիւն-
ներով գերասանուեհիների կեանքից և խրառ տալիս, թէ ինչողէս
պէտք է իրան պահի, ում մօտից առնի հազուստեղինը, չը կա-
րողանալով հասկանալ, թէ ինչպէս այդքան փող վաստակող մի
մարդ միշտ հազարուած է լինում տարրական զպրոցի մի հասա-
րակ միրակացուի նմոն: Բարի Ռիվալը, համոզուած իր նուաս-
տութեան մէջ, աշխատում էր նրանց ներսղամտութեանը ար-
ժանանալ անվիրջ հաճոցակատարութեամբ, հազար ու մի մանր
ծառայութիւններով, պարտաւոր լինելով ամեն կերպ սիրալիք
վերաբերուել նրանց, որովհեամ—չը որ—նա էր նրանց մշտական
բարերարը:

Այդ երեկը սրահակից աների մէջ փոքրիկ Շէրը միացման
գիծ էր անց կացնում իր անմիերը երթենեկութեամբ:

Օրուայ ինչ ժամին էլ որ լինէր, նա սպրդում էր Դըլօրէլնեւ-
րի արհեստանոցը, զուարձանում էր նրանց աշխատանքով, մտիկ էր
տապիս ճանձ ու թոշնիկներին և, արդէն աւելի կօքէտ քան խա-
զառէր, եթէ մի ճանձ ճանապարհին կորցրած էր լինում իր թե-
ւերից մէկը կամ մի կօքէրին՝ իր աղուամաղ վզնոցը, նա փոր-
ձում էր իսկոյն զարդ շնել իր համար այդ բնկորներից, խրել
այդ զառ զայնը իր նուրբ մաղերի խոպուիկների մէջ: Դէղիրէն
ու մայրը ծիծաղում էին, անմերով, թէ ինչպէս նա կոտրառու-
լով ու խալստալով ձգուում է սաների ծացրի վրայ՝ նսնմացած
հայելուն հասնելու համար: Յետոյ, ինքն իր վրայ զմացլելուց
կշտացած, երկասն բաց էր անում դուռը իր մասիկների ամ-
բողջ ոյժով և, մաղերը խառնուելու ահից, գլուխը ցից բռնած,
ծանր-ծանր զնում էր ծեծելու Ռիվալէրին դուռը:

Ցերեկը այնաեղ ոչ ոք չեր լինում բացի զպրոցական ֆրան-
ցից, որ խելք նստած պատրաստում էր զասերը, զլուխը քաշ
իր զգքերի վրայ բացց հէնց որ Սիրօնին մտնում էր, էլ մնաս
բարով պարապմունք: Պէտք էր ամեն բան թողնել ու ընդունել
այդ կօվքէրիազարդ մազերով զեղեցկահան, որ, իրդ մի իշ-
խանուհի, այցելելու էր նրան Շապտալի զպրոցում, որպէս զի
իր համար վիսացու ուզէր նրան տեսչից:

*) Մալրի ծառը չէ նշմարում վարդը իր ստորոտում:

Շատ տարօրինակ էր, յիրաւի, տեսնել, թէ ինչպէս այդ շատ արագ հասակ առած ահագին տղան խաղում էր այդ ուժ տարեկան երեխայի հետ, ինչպէս ինքն էլ փոքր երեխայ էր դառնում նրա քմահաճպըներին բաւարարութիւն տալու համար, ինչպէս պաշտում էր նրան ու զիջում ամեն բանում, այնպէս որ երր աւելի ուշ բոլորովին սիրահարուեց նրա վրայ, ոչ ոք չէր կարող ասել, թէ իսկապէս ինչ ժամանակ էր սկսուել այդ:

Ինչքան էլ գուրգուրում էին փոքրիկ նէրին այդ երկու ընտանիքներում, այնուամննայնիւ գալիս էր միշտ մի բողէ, երբ նա փախչում էր դէպի վերնագաւթիւ պատուհանը: Այդուն էր նա գտնում իր ամենամեծ զուարձութիւնը, մի մշտաբաց հորիզոն, կարծես մի ապագայի տեսիլք, որ փոքրիկը դիտում էր հետաքրքրութեամբ, կասցած դէպի նա առանց երկիւլիք, որովհետեւ երեխաները զլսի պտոյտ գալ չունեն:

Դէպի իրար թէքուած հերձսքարէ կտուրների արանքին, գործարանի բարձր պատը, պարտէզի ոսկեների կատարները և ապակեպատ արհեստանոյները երևում էին նրա աչքին իբր մի աւետեաց երկիր, իբր իր երազների աշխարհ:

Այդ ֆրօննների տունը հարստութեան վերջին խօսքն էր նրա համար:

Այն տեղը, որ այդ տանը բռնում էր Մարէի ամբողջ այդ անկիւնում, որ որոշ ժամերին կոլուած էր լինում նրա ծխում և լինրա արհեստանոյների ժխորով, նիսէրի յափշտակուած առասովեանին սպատմութիւնները ֆրօննի կարողութեան, բարութեան ու ճարպիկութեան մասին, հետովքքութիւն էին զարթեցրել երեխայի մէջ, և, ինչ որ կարելի էր տեսնել ընտելիքի չենքերից՝ կտրտած փայտէ նուրբ վանդակափեղկերը, կլոր գաւիթը, որի առաջ շարած էր պարտէզի կահկարասիքը, սպիտակ արոցրից շինած ու ոսկեղոծ լարերով թուչնախուդակը, որ փայլում էր արեւում, ծծուած կապատ կառքը բակումը, —երեխայի հիացման մշտական առարկաներն էին այդ բոլոր բաները:

Նա զիտէր այդ տան բոլոր սովորութիւնները, —զամազը տալու ժամը, բանուորների ելքը, շաբաթ օրերի վարձավճարումը, որի չնորհիւ գանձապահի փոքրիկ լսմզը վաս էր մնում այդ օրերը մինչեւ ուշ երեկոյ, և երկար ու ձիգ ժամերը կիրակինները կէսօրից յետոյ, արհեստանոյները փակ, վառարանը հանդած, չորս կողմը խորին լսութիւն, որի չնորհիւ նրա ակածին էին համում պարտէզում խաղացող ու վաղլիսող կլէրի ու նրա հօրեղոր որդու, Փօրժի ձայները: Մանրամասնութիւններն էլ նիսէրիցն էր իմանում:

«Յնյոց տուր ինձ հիւրասենեակի սպատուհանն երը, ասում
էր նա նրան... իսկ կլէրի սենեակը...»:

Ռիսէրը, հիւրաց այդ արտասովոր համակրութ իւնից գէ-
պի իր սիրելի գործարանը, բացատրում էր վկրեից երեխային
շէնքերի դասաւորութիւնը, յայց էր տալիս նրան տակելու, ոս-
կեզօծելու, գոյն տալու արհեստանոցները, այն սենեակը, ուր
ինքը զբաղուում էր գծապրութեամբ, շողեշարժ մնանամների սրա-
հը, որտեղից բարձրանում էր վիթիսարի ծխնելոյզը, որ իր եռան-
գուն ծխով սեացնում էր բոլոր շրջակայ պատերը և չէր կաս-
կածում անշուշա, թէ դրացի յարկերից մէկի տակ ծածկուած մի
փոքրիկ կետնք խառնում է իր ամնանուիրական մաքերը նրա
անխոնջ աշխատանքի ուժդին չնշառութեանը:

Մի օր վերջապէս Սիդօնին մուտք գործեց այդ հեռուից
նշմարուած դրախտը:

Տիկին Ֆրօմօնը, որի մօտ Ռիսէրը յաճախ խօսում էր իր
փոքրիկ հարևանուհու սիրունութեան ու խելօռութեան մասին,
իննդրեց նրան բերել փոքրիկին այն պարանանդէսին, որ ինքը
պատրաստում էր Ծննդեան տօների համար: Ակզրում պ. Շէրը
մերժեց շատ չոր կերպով: Արդէն այն ժամանակն էլ այդ Ֆրօ-
մօնները, որոնց սնունը միշտ Ռիսէրի բերնումն էր, գրգռում
ու ստորացնում էին նրանց հարստութեամբ: Բայց այդ
պարանանդէսը զգեստաւոր էր լինելու, իսկ պ. Շէրը —որ Ֆրօ-
մօնների պէս որմաթուովթ չէր ծախում—միջոցներ չունէր իր
աղջկան թռչկուանի հաղուստ հագցնելու: Բայց Ռիսէրը շատ
պնդեց, յայտնեց, որ իր վրաց է վիրցնում ամնն բան ու ձեռաց-
ձեռ սկսեց գծադրել մի շվեյցարական զղեստի օրինակ:

Յիշլիք երեկոյ էր այդ:

Տիկին Շէրի սենեակում, որ լիքն էր զանազան կտորնե-
րով, քորոցներով և առնասարակ հագուստեղէնի հաղար ու մի
մանր մունք առարկաներով, զարգում զարդարում էին Սիդօ-
նիին Դէղիբէ Դըլօրէլի զեկալարութեամբ: Պատլիկ Սիդօնին, որ
աւելի մեծ էր երեսում շվեյցարական հագուստի կարծ շրջապահու-
տով (իւրկա), ուղիղ ու անշարժ կանգնած էր հայելու առաջ,
շողշղալով իր զարդարանքի մէջ: Աքանչելի էր նաև Սեսե շեր-
տերով կարմիր ասուեակէ (Փլանէ) շրջազգեստը, սպլիտակ
կրծկալը ու կրծկալի վրայից իրանքի (կօրսած) խաչկապ արած
թափչէ ժաղքաւէնմերը, յարդէ զվահարկի տակից բաց թողած շա-
զանակագոյն մազերի հրաշալի երկար հիւսերն ու առնասարակ
շվեյցարուհու հագուստի փոքր ինչ գոեհիկ մանրամասները ով
առանձին փայլ էին ստանում չնորհիւ այդ երեխայի խելացի

կերպարանքին ու նաղմանի չնորհալիւթեանը, որ շատ սազում էր այդ թատրոնական պահուձանքի վառ գոյներին:

Բոլոր հարևանները հաւաքուել էին ու հիմնում էին բերանաբաց: Աւ զարկեցին ալ, Դրօքէլին կանչելու: Մինչենրա զալլ կաղիկ օրիսրդը շիտկում էր գրքիկի շրջազգեսամի ծալքերը ու հողաթափների ժամանակները և վերջին ակնարկն էր գցում իր արածի վրայ, առանց տակողը ձեռքբյու վայր գնելու, սրախետե խեղճն էլ կենդանացել էր, յափշտակուած այդ յուղիչ հանդէսից, ուր ինքը չէր գնալու: Մեծ մարդը եկուու: Նա կրկնել առեց Սիդոնիին առաջուց ասվարեցրած երկու-երեք գեղեցիկ ծնորդղպաններ (ոչվէրանս), ինչպէս և քայլելու, զիրք ընդունելու և ժպտալու ձեր, այնպէս ժպտալու, որ կլորիկ բացուած բերանում ուղիղ մի ծկութ գնելու անդ մնայ: Շատ ծիծաղելի էր տեսնել, թէ ինչպէս ծշառ թեամբ կատարում էր այդ բոլորը փոքրիկը:

— Դերասանուհաւ, արիւն կայ երակներումը... յափշտակուած ասում էր հին գերասանը, չը կարսզանալսի հասկանալ, թէ ինչու այդ ահազին էշ ֆրանցը քիչ էր մնում լայ...

Այդ երջանիկ երեկոյից մի տարի անցած Սիդոնին ամենայն ծշառ թեամբ կարող էր ասել ինչ ծաղիկներսի էին զարդարուած ֆրօմօնների նախասեներկները, ինչ զոյնի էին կահ կարսակիքները, ինչ պար էին նուազում նրա ներս մանելու բռպէին,— այնքան խոր էր եղել նրա հաճոցքի ասպաւրաթիւնը: Նա ոչինչ չը մուացաւ, ոչ իր շուրջը պայոյապատյա եկող զղեստները, ոչ մանկակոն ծիծաղները, ոչ նրբասախատակ սօթվիկ յասակի վրայ խասասացող փոքրիկ քայլելը: Մի բարէ, երլ մի մեծ կարսարամեսաքս բավանցի պոտոնդին նստած, իր առաջը զանուազ մատուցարանից վերցնում էր խմելու առաջին օշարակը իր կեանքի մէջ, նա յիշեց յանկարծ իրանց մութ սանդուխը և օգազորկ փոքրիկ բնակարանը, և ընդ մէշտ թողնուած հեռաւոր երկրի տպաւորութիւն դրաց:

Այն էլ պէտք է ասել, որ ամենքը հիմնում էին և զմայլում նրա վրայ, և չորս կողմից փայլվայում նրան: Սիրունիկ կէր ֆրօմօնը, նօրմանդուհու ժանեւակապատ զգեստով, ներկայացրեց նրան իր հօրեղօրորորդի Փօրմէն, որ հիմնալի հուսար էր դարձել և ամեն քայլափսիւմ շուռ էր գալիս տեսնելու, թէ ինչ տպաւորութիւն է զործում իր գօտուց կախուած պայուսակը:

— Կամ, Փօրմ, առ իմ ընկերուհին է... կիրակի օրը կը գայ մեզ հետ խագուլու... Մայրիկը թոյլ առեկց:

Եւ երջանիկ երեկոսիցի միամիտ սրտարացութեամբ նա համբուրեց փոքրիկ Շէքին ի բոլոր սրակ:

Սակայն պէտք էր տուն գնալ... Դեռ երկար ժամանակ,

մութ փողոցում, ուր հալչում էր ձիւնը, ճրագները հանդցրած սանդուխի վրայ ու նիրհած սննեակում, ուր սպասում էր նըրան մայրը, դահլիճների շողողուն լոյսը փայլում էր Սիդօնիի շլցած աչքերի առաջ:

—Հը՞, ինչպէս էր, լաւ էր... լաւ ուրախացար, կամաց ձայնով հարցնում էր նրանից տիկին Շէրը, մի առ մի արձակելով նրա փայլուն զգեստի ճարմանդները:

Եւ Սիդօնին, յոգնութիւնից թմրած, առանց պստախանելու քնում էր կանդնած տեղը, սկսելով տեսնել մի գեղեցիկ երադ, որ տեսելով էր նրա ամբողջ ջահէլութեան լնիտացքում և որ այնքան արտասուք էր խլելու նրանից:

Կլէր Թրօմօնը կատարեց իր խօսքը: Սիդօնին շուտշուտ գնում էր խաղալու աւազած սիրուն պարտէզում և կարող էր մօտիկից տեսնել կտրած փայտէ նուրբ պատուհանածածկերը և ոսկեղօծ լարերով փանդակը: Նա ծանօթացաւ ահարին գործարանի բոլոր խորչերին ու անկիւններին և շատ կիրակիններ, կէսորից յետոյ սիրող խաղաղութեան մէջ, տափկիննալուկ էր խաղում տպագրական սեղմանների յետեկն: Տօն օրերին նրա համար միշտ աման էր դրած լինում մանկական սեղանի վրայ:

Ամենքը սիրում էին նրան, բայց ինքը երբէք առանձին սէր չէր ցոյց տալիս ոչ ոքի վերաբերմամբ: Քանի որ այդ փարթամութեան մէջն էր լինում, նա իրան գորովալից էր զղում ու երջանիկ և կարծես գեղեցիկացած, բայց հէնց որ վերադառնում էր տուն ու սկսում սրահի պատուհանի նսեմ ապակինների միջով նայել գործարանին, ինչ որ կակիծ էր զարթնում սրտում, ինչ որ անքացատրելի զայրոյժ:

Եւ սակայն՝ կլէր Թրօմօնը բոլորովին ընկերաբար էր վերաբերում նրան:

Երբեմն Թրօմօնները իրանց երեսելի կապոյտ կառքով նրան տանում էին զբունքի բուլօնեան սնստատը կամ Տիւյլըի, և կամ գիւղը, մի ամբողջ շարաթ անց կացնելու ֆարդինուա պապի գղեակում, Սալլինի-սիւր-Օրծում: Ռիսլէրը շատ հպարտանում էր իր փոքրիկի յաջողութեամբ և նրա տուած ընծաների չնորհիւ փոքրիկը միշտ հագնուած էր լինում սիրուն ու չնորհքով... Այդ՝ պատուի ինպիր էր տիկին Շէրի համար, իսկ սիրուն կաղիկն էլ այնտեղ պատրաստ էր ծառայեցնելու իր բարեկամուհու օգտին իր բնածին կօքէտութեան բոլոր անշահագործ մնացած գանձերը:

Գալով առ Շէրին, որ միշտ թշնամաբար էր վերաբերում Թրօմօններին, նա ծուռ աչքով էր նայում այդ հետզհետէ սաստկացող մտերմութեանը: Դրա իսկական պատճառն այն էր, որ

իրան չէին հրաւիրում, բայց նա միշտ ուրիշ պատճառներ էր բերում և ասում էր կնոջը.

—Չես տեսնում, ինչ է, որ աղջիկդ այնտեղից վերադառնալուց յետոյ տխուր է լինում ու ժամերով երազում է պատռահանի մօտ կանգնած:

Բայց խեղճ տիկին Շէքը, որ այնքան անրախտ էր ամուսնանալուց ի վեր, աննախատես էր դարձել դրա չնորհիւ: Նա պնդում էր, թէ սպագայի ահից պէտք է աշխատել օգտուել ներկայից և ձեռքից բաց չը թողնել երջանկութեան վազանցուկ բոպէները, որովհետեւ մարդս յաճախ ուրիշ ոչ մի նեցուկ ու սփոխանք չէ ունենում իր կեանքում բացի երջանիկ մանկութեան քաղցր յիշատակից:

Այս մէկ անդամին այնպէս դուրս եկաւ, որ պ. Շէքի ասածն էր ձիշդ:

(Կը տարունակուի)

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԵՅՆԻԻ ՆՈՐ ԵՐԳԵՐԻՑ

* *

Զրի Շուշանն ծովի ափին
Մըսքամոլոր վեր նայեց,
Գունաս դէմքով մառուած լուսինն
Բարեւ նորան ուղարկեց:

Ամաչելուց Շուշանն իսկոյն
Գլուխիկը ցած խոնարհեց,
Բայց խեղճ լուսնի դէմքը սըժգոյն
Իր ոսի տակ նըկատեց...

Զ. ԲԱԼՈՒԴԵԱՆ

Ա. Ռ. Ա. Զ Ի Ն Հ Ա. Մ Բ Ո Յ Շ

(Խորիմի ալբոմից)

—

Խորին ցնծուրեամբ նայում եմ, ինչպես
Հարավի արեւն զարնան երկնեւմ
Ժայռում է եւ, չերմ սիրահարի պէս,
Երկրին առաջին համբոյր է ղըրկում:

Եւ լոյս-համբոյրից այնին ոսկեվառ
Ցընցում, զարքում է քրմրած բընոքին,
Զարքում է սիրով նոր կեանիի համար
Եւ զգում իր մէջ մի նոր զօրոքին:

Հալչում է ձիւնը—սարալանչերից
Արագ, անհամբեր վազում դէս ու դէն.
Յաղբուած արեւի հօր տողերից,
Փախչում է ձրմեռն անօր ու անզին:

Եւ ես լլսում եմ մօսակայ ձորից,
Ինչպէս յորդացած, անհանգիս գետակ,
Ազատ կարկաջող, դուրս ելած ափից,
Ասես, երգում է զարնան յաղբանակ:

Եւ մեղմ ծըփալով կենսաւունչ հովիկ
Գետակի պլդուր երեսն է ոյցում.
Մեղմ յուզում ջրեր, օրօրում ալիք,
Եւ անոյշ սուլում դալար ափերում:

Եւ նորափիքիք ծաղիկներ գարնան
Գետակի ափին զրբաւի՛չ շարուած,
Ժբագտում են քընիոյց, բուրում դուրեկան,
Հենց նոր արեւից վառ համբոյր ժաղած:

Օդն է մեղմանում, պարզում է երեր,
Երկրի երեսին նախում ծիծեռնակ.
Կանաչ են հազմում սարեր ու դաշեր,
Գեղջուկին կանչում դէպի սուրբ վասակ:

Խորին ցնծութեամբ նայում եմ, ինչպէս
Կեանեն է նորոգում մայր-երկրի կրծքին.
Եւ ջերմ, սրբաբուղիս օրհնում եմ ևս մեզ,
Կենսագեր գարնան համբոյր առաջին:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՈՒՇԱՑԱԾ ՍԵՐ

Իղձը և ջանքը, որոնք մարդու ամբողջ
էռթինն են կազմում, նման են անլադ,
այրող ծարավի. մարդկային գոյութեան
հիմոնքը կարիքն է, պակասը և տան-
ջանքը... Կեանքը՝ ահա նա, ցանկանալ՝
առանց պատճառի, շարունակ տանջուել,
շարունակ մաքառել, յետոյ մեռնել և
այսպէս անվերջ դարեր և դարեր, մինչև
որ մեր մոլորակի կեղեց պատառ-պատառ
ճաքճքոտի և ցրիւ դայ մանր կտորնե-
րով...

«Շօվենիառեր»

Տարուայ չորս եղանակներից ես ամենից շատ
աշունն եմ սիրում և այն ուշ աշունը, երբ բնութեան
մնային այնքան մեղմ դրաւչութիւն ունի, երբ արցուն-
քը քաղցր է, վիշտն ախորժ, դուրեկան:

Այս առաւօտ նկատեցի, որ իմ լուսամուտի տակ
եղած ծառը խապառ տերեւաթափ է եղել. խեղճ, դեռ
երեկ նա զարդարուած էր, դաշտերն էլ այժմ մահուան
վսեմ գեղեցկութիւնն ունին: Ես շտապ հազնւում եմ
և դուրս եմ գնում:

Հեռու, հեռու. ինչ որ կտրուած է մարդկային
բնակութիւնից, այն է գրաւիչ ես քայլում եմ մենակ
մերկացած գաշտերում թօնած խոտերի վրայ. չորացած
սաղարդը ուներիս տակ մեղմ խշխում է, ասես եր-
գում է իր օրհասական մեղեղին. գլխիցս վեր, վեր
չուող կոռւնկները մելամաղճոտ կղղիւնով անիծում են
բնութեան անողոք օրէնքների յաջորդականութիւնը, որ
կեանքերի սահմանները որոշելու գերագոյն իրաւունք-
ներն ունին:

Շուրջս ամեն ինչ գունատ է, մահատեսիլ. համաշտարած այդ մռայլ պատկերի վրայ կանաչ մի ծիլը, մռացուած մի խղճուկ ծաղիկը նրբան շատ բան են ասում մարդկային սրտին, նրբան անհուն է նրանց պօէզիան, որ խօսում է կեանքի խորհրդից, նրա ամենածածուկ ծալքերից, նրա անլուծելի առեղծուածներից: Մահամերձ կեանքի վերջին ճիգերն են նրանք, ապրել ուղող, արև, ջերմութիւն, վայելք հայցող վերջին մըրմունջը, որով աղերսում է յետածգել անողոք անխուսափելին, խնդրում է էլի մի վայրկեան, էլի մի տաք շող. էլի... էլի...

Ամեն ինչ որ միայնութիւն է, ինչ որ յիշեցնում է մոռացութիւն, խեղճութիւն, յատուկ է աշնանը և գրաւիչ է: Օրինակ այս ծառը, այս մենաւոր ուռենին կարծես դողում է մի անսրոշ սարսափից. մահու երկիւզն է այն, որ խաղում է օդի մէջ: Պատկերը և տխուր է, և գեղեցիկ: առաջին ցրտերը կապտել են ուռենին իր զարդերից, հաղիւ են երեսում մի քանի խղճուկ կանաչ տերեներ, որոնք յուրահատ ճիգով կպած մայր ծառի կրծքին, օրօրւում են ցուրտ վամու առաջ, ասես աղերսում են խնայել իրանց... Նրանց մեղմ սօսափիւնի մէջ ես լսում եմ կեանքի նոյն անկուշտ կոչը, մահից դողացող արարածի յաւիտենական երգը՝ «էլի... էլի»...

Ծառի տակ ես նկատում եմ մի գերեզման. «Այստեղ հանդչում է զնդապետ Գլօբբ, ծն. 1810-ին և ընկաւ Սադովայի ճակատամարտում՝ 1866»: Տապանագերը կարդում եմ երկու անդամ և 1866 թ. գլխիցս չէ անցնում, դա իմ ծննդեան թուականն է. մի բոսկ ինձ տարօրինակ է թւում, որ ես ծնուել եմ նոյն տարին, երբ այս անծանօթ գնդապետն ընկել է կոռի դաշտում. ով գիտէ, գուցէ և նոյն ժամին, նոյն վայրկենին, երբ իմ առաջին ճիշն է լսուել, նրա վերջին հառաջանքը ոսուել է շրթունքին: Անհունութեան մէջ իւրաքանչիւր վայրկենում որպան վերջին միմունչներ են մարում և նրբան նոր ճիշեր են լսում: ապրում են,

ընկնում, աեղ տալիս ուրիշներին և այսպէս դարեց.
ուր է գնում ափեղերքը, ուր է գոյութեան խորհուրդը...
վախճանը: Վերից թափուած տերեները գունատ ափու-
ցով պատում են գերեզմանը, շուրջը չորացած խոտեր,
և սակայն տեղատեղ դուրս են ցցում տակաւին մի
քանի կանաչ ծիլեր, դունատ ծաղիկներ, նրանք կրում
են իրանց վրայ մահու դէմ մղուող պայքարի դրոշմը,
նրանք ոլորուած, այլանդակուած են իրանց վերջին
ծիդերով և թւում է, թէ ես դարձեալ լսում եմ նոյն
անվերջ աղերօք՝ «Ելի... Ելի...»: Օ՛, կեանքը շատ է
քաղցր և բնութեան օրէնքները շատ են անողոք, ան-
դարձ:

Ես նստում եմ սաղարդապատ այս տապանագարի
վրայ և մտածում եմ հազար ու մի բաներ. որքան ա-
խորժելի է ուշ աշնանը ամայի դաշտի մէջ երազել:
Սնցեալ յուշեր և պատկերներ շարանշարան գալիս
անցնում են աչքիս առաջից: Յիշում եմ, ճիշտ մի այս-
պիսի օր և մի այսպիսի ծառի տակ թաղեցինք իմ մի
ծեր բարեկամին, մի ուրիշ գնդապետ: Խեղճ, դուցէ
ոչ ոք նրա պէս իր կեանքի վերջալուսին այնքան ու-
ժով չէ փարել փախչող վայրկեաններին, ոչ ոք այնպէս
խորը չէ զդացել մեռնող բնութեան անհուն ցաւը: Եւ
այժմ յիշելով նրան այս դաշտի ամայութեան մէջ, երբ
շուրջն ամենն ինչ մեռնում է լացով, ես տելի խորն
եմ զդում՝ ասլրել ուզող, վարկեաններ աղերսող արա-
րածի այդ անբուժելի ցաւը, հոգեվարքի վերջին մըր-
մունջը: Ինչպէս մայր մտնող արեւի վերջին շողերը մի
առանձին մելամաղձուտ քնիքութեամբ են փարում լեռ-
ների կատարներին, ճիշտ այդպէս ուշ աշնանը ամեն
ինչ իւր ոյժերի վերջին թափով փարում է կեանքին և
ես լսում եմ իմ չորս կողմում նոյն թախծալի աղերօք՝
«Ելի... Ելի...»:

Պարսն Արհողդը, այսպէս էին անուանում նրան այն
պամախօնում; ուր ես պատահեցի նրան առաջին ան-
դամ, այն ծերերից մէկն էր, որոնք չեն հաւատում

իրանց տարկքին, խոյս են տալիս հայելուց՝ ճերմակ
մաղերն ու դէմքի կնծիռները չը տեսնելու համար և
մանաւանդ ատում են սպիտակ միջուրը։ Նա փոքրա-
հասակ էր, մի քիչ կռացած, թէև աշխատում էր ու-
զիդ պահել իրանը, մանաւանդ՝ երբ կանանց հասա-
րակութեան մէջ էր։ Փոքրիկ, խոր ընկած աչքերում
մի ուշացած կրակ կար, որ իւր արագաշարժ թերթե-
րունքները կարծես բորբոքում էին անդադար, որ չը մա-
րի և հաստ վաւաշոտ շրթունքների շուրջը անցեալ
խելագար կետները մի քանի ծալքեր էր թողել։ Նրա
դէմքը միշտ ածիլած էր, միայն վարի շրթունքի տակ
և քունքերի վրայ միւմի փոքրիկ կօքէտ փունջ կար.
սպիտակ մաղերը միշտ կարճ կտրած և խնամքով սան-
րուած ու վրձինած։ Նա հագնում էր ամենավերջին
տարագով, շատկի սպիտակ օձիքի վրայ կրում էր լայն,
գունաւոր փողպատ, որի վրայ ցցուած էր մի ականա-
զարդ սոկեայ դնդասեղ։ Խօսում էր արագաշարագ, քայ-
լում էր մանր, արագ քայլերով, ուրախ, անհոգ, զուար-
ճախօս մի ծերունի, որ անում էր ամեն ինչ՝ ջահէլ
երեալու համար, և այդ յարաակ հոգաը բռնել էր նրա
ամրով էութիւնը. երեսում էր, որ տարիներն ու հա-
սակը հալածում, տանջում են նրան, բայց նա բոլոր
ուժով ծածկում էր իր անհանգստութիւնը. իր տա-
րիքից երբէք չէր խօսում, այդ մասին եղած խօսակցու-
թիւնն աշխատում էր փոխել, բայց նրան համարում
էին վաթսունուհինդ տարեկան։ Ասում էին նոյնպէս, որ
պ. Արնօլդը հարուստ է, անժառանդ և կենսասէր։

Այսուեղ էր նաև մի գերմանացի ուսանող, բոլորո-
վին երիտասարդ, վերին շրթունքը հազիւ խաւապատ,
բայց հասուն մարդու յաւակնութիւններով. Նա հպարտ
էր մանաւանդ իւր այտի վրայի սպիտվ, որ հետեանք
էր մի մենամարտի՝ գերմանատկան ուստիտղների աւան-
դական յիմարութեան։ Նա քիչ էր խօսում, խոկ երբ
խօսում էր, նիւթը կամ Բիսմարկն էր, կամ Վիլհելմը և
շատ յաճախ զինավարժութիւնն ու պարերը, որ նա սո-

վորում էր մասնագէտների մօտ Յետոյ խմայայ, որ նա ապրում էր պանսիօնից գուրս և միայն ճաշերին և ընթրիքներին էր դալիս՝ իբր Փրանսերէն սովորելու համար հասարակութեան մէջ:

Հետաքրքիր դէմք էր նաև մի հարուստ տիկին, մի ամերիկուհի, որ «ճանապարհորդում էր հին աշխարհում յիշողութիւններ տանելու՝ նորում երազելու համար», ինչպէս ասում էր ինքը կատակով։ Կօքէտ, տղամարդկանց հասարակութիւն փնտրող, ինչպէս լինում են առհասարակ կանայք և մանաւանդ ճանապարհորդող և արկածներ փնտրող կանայք։ Բայ երևոյթին համեստ, բայց ինքն իրան համար անհամեստութեան սիւրազիդներ ստեղծող, մելանխոլիայի ներկայացումներ տալու շատ յաջող գերասանուհի, թեթև «ախը», անսոշ «ուհը» շարունակ խամրած շրթումնքին, հաճոյակատար, սիրալիր, և այդ բոլորով հանդերձ միշտ մոռացուած, միշտ լքուած, որովհետեւ իր բույր պակասութիւնների հետ երիտասարդ հայեացքները շատ շուտ նկատեցին, որ ձախ աչքը ապակուց է։ Նա այն տարիքումն էր, երբ կանայք նմանում են խողառ բացուած և խամրած ծաղիկների, որոնց թերթիկները հեշտութեամբ տարւում են քամու առաջին չնչով։ կենն այդ տարիքում խորհրդաւորութիւնը կորցրած անհետաքրքրութիւնն է ներկայացում, յայնի դադոնիքը, և վայ նրան, եթէ ըմբոստէ անխուսափելիի դէմ; նա տանջում է անվերջ։ Այս ամերկուհին ըմբոստներից էր և տանջում էր:

Պանսիօնի զարդը և ամենքի հետաքրքրութեան առարկան աղջացի մի ջահէլ օրիորդ էր, որ եկել էր շվեյցարական Աշուբերի օդով կազդուրուելու։ Ուրախ կենսակից աշարած, շաշմուն՝ ինչպէս թիթեռը և շատախոս՝ ինչպէս կոչաղակ, առաւօտից մինչեւ երեկոյ նրաքրքից, ուրախ բացականչութիւնները լուսում էին պարտիստ կամ պատշգամիքի վրայ այս կամ այն երիտասարդի հետ, որին նա կամ ծաղկում էր, կամ բարակ,

դալար ճիպոտով քնքոյշ հարուածներ էր տալիս ու վախչում: Առանձին, ուժեղ տպաւորութիւն էր դործում այդ աղջկայ մանաւանդ գլուխը: Հարուստ, շաղանակագոյն խոպանները գեղարուեստական անկարգութեամբ ցաք ու ցրիւ ծածանում էին նրա կլոր, լիքը ուսերի վրայ, երբ նա վազում էր կամ սաստիկ ծիծաղում, իսկ երկու սիրուն ոլորներ մի տեսակ պսակ էին կազմում գրաւիչ ճակատին: այդ խոպանների հովանու տակ նրա բոցոս և մի քիչ խորամանկ աչքերն ստանում էին ինչ որ խորհրդաւոր և զօրեղ արտայայտութիւն: «Մեդուզա», մտածեցի ես առաջին անգամ նրան տեսնելով, և ճշմարիտ, այդ զլուխը, այդ սիրուն, արտայայտիչ աչքերը մի բան ունեին, որ գիւթել, քարացնել կարող էր ինչպէս առասպեկտական Մեդուզան:

Սրանցից և ոչ մէկի անցեալն ինձ չէր հետաքրքրագրում, այնուամենայնիւ նրանցից երկսի՝ ալզասցի օրիորդի և պարոն Աջնօղդի պատկերը գեռ վառ է իմ յիշողութեան մէջ, շնորհիւ այն տարօրինակ սիրոյ, որ ծեր գնդապետը տածում էր գեղսի գեղեցիկ ալզասունին, կամ Մեդուզան, ինչպէս անուանեցի նրան, և ահա թէ ինչողէս.

Դեռ առաջին օրը՝ երբ ի միջի այլոց ինձ ներկայացրին օրիորդին, սեղանակիցները մի ճնշուած ծիծաղբարացը ըրբութին, օրիորդը կարմրեց, նստեց և գլուխը քաշ ձգեց: Ես վիրաւորուեցի այս տարօրինակ ընդունելութեամբ, բարեբախտաբար տանտիկինը՝ մի հասակ առած և փորձուած կին, այդ զդաց և մէջ ընկաւ.

— Դիտեք, պարոն, ասաց նա ժամալով, այստեղ մենք ամենքս մի տան պէս ենք, նորեկին էլ ընդունում ենք ընտանեբար, ինչպէս նոյն տան անդամ (ծառնօթ լեզու էր, բոլոր ղանսիօններում մի տան պէս են). օրիորդը, որի հետ գուք այժմ ծանօթացաք, սիրում է անուններ զնել իր բոլոր ծանօթներին, մինչև այժմ մեր բոլոր փորձերը՝ նրան մի լաւ անուն թխելու, անշախչող են անցել: Բայց մենք գեռ չենք յուսահատուել և

ամեն անդամ, երբ նոր պահսփօնէր է յայտնւում, ամենքս էլ ուրախանում ենք, յուսալով, թէ նոր անձը կարող է վերջապէս մեզ գոհացնել՝ սրան մի լու անուն գնելով։ Ահա թէ ինչու ամենքը ծիծաղեցին, երբ օրիորդը ներս մտաւ և ձեղ հետ ծանօթացաւ։ Այժմ հերթը ձերն է. մտածեցէք այսօրուանից օրիորդին մի յաջող անուն, եթէ ձեղ անախորժ չէ այդ աշխատանքը։

— Տիկին, ասացի, զա կարող է անախորժ լինել օրիորդին իրան և ոչ ինձ։

— Ամենելին, պարմն, մէջ ընկաւ օրիորդը, ինձ համար այդ բոլորովին մի և նոյն է, անուանեցէք ինձ, ինչ կ'ուղէք, և կը տեսնէք, որ ինձ չի կպչի։ Գիտցէք սակայն, որ մի քանի օրից ես կը փորձեմ ձեղ մի այն պիսի անուն գնել, որ գուք գոհ կը մնաք ինձանից։

— Ա՛խ, եթէ այդպէս է օրիորդ, պատասխանեցի, թոյլ տուէք ասել, որ ես ամենելին կարէք ել չունեմ մի քանի օր սպասել ձեղ անուն գնելու համար, ես կարող եմ ասել հէնց այժմ, եթէ կամենաք։

— Միանդամայն ազատ էք, և ինձ մեծ հաճոյք կը պատճառէք։

— Ասացէք, ասացէք, ձայն առուին այս ու այն կողմից միւսները։

— Մեղուզական ազատ էք, և ինձ մեծ հաճոյք կը պատճառէք։

— Մեղուզական, բացականչեցին ամենքը. ինչ լու է, նրան յաջող, վերջապէս... Մեղուզական, Մեղուզական։

Օրիորդը կարմրեց այդ ընդհանուր բացականչութիւններից, գլուխը նորէն քաշ ձղեց, ժպաաց, ինձ նայեց գոհութեամբ, նրան հածելի էր այդ անունը։

— Ենորհակալ եմ, պարմն, ասաց նա, ես վրէժիքն գիր կը լինեմ նրանով, որ կ'աշխատեմ առաջինը ձեղ քարացնել։

— Փոյթ չէ, օրիորդ, հայեացքներ կան, որոնցով քարանալը կենդանի մնալուց շատ աւելի արժէ։

Օրիորդը դարձեալ կարմրեց և լռեց. այն օրուա-

Նից նրա անունը մնաց Մեղուզա և նա հպարտութեամբ էր կրում իր այդ նոր անունը:

Այսուհետեւ սեզօնն անցնումէր միշտ ուրախ, միշտ աղմկալի. խօսակցութեան նիւթը գլխաւորապէս օրիորդ Մեղուզան էր և նրանից առաջ եկած ընդհանրացումները համեմած բարոյագիտական և գեղագիտական մերթ կարկատուն, մերթ յաջող խորհրդածութիւննեւրով: Մէրը քննուումէր բազմակողմանի ձեռվ և գրա հետ միտովն փոքրիկ ակնարկներ էին ուղղւում արական կամ իդական սեռին՝ նայելով թէ խօսողը կին էր թէ տղամարդ, ինչպէս այդ սովորաբար տեղի է ունենում ամեն անդամ, երբ երկու սեռից բազկացած մի ուրախ հասարակութիւն խօսում է սիրուց և մօրալից: Մեղուզան և իր առասպեկը անսպառ նիւթ էր տակիս որախօսութիւնների, հաճոյախօսութիւնների և օրիորդը իր յաջող պատասխաններով զուարճացնում և ընդհանուր գոհութիւն էր պատճառում: Այս ընդհանուր ուրախօսութեանն ամենից քիչ մասնակցողը գերմանացի ուսանողն էր, մանաւանդ՝ երբ խնդիրն օրիորդի շուրջն էր դառնում, նա մեծաւ մասամբ լուռ էր մնում, տշխատում էր չը նայել Մեղուզային, բայց նրա փոխարէն ամենից աւելի աղմուկ հանողը, ուրախացողը ծեր գընդապետն էր, ալ. Անդոլդը: Դերերի մի տարօրինակ փոփոխութիւն կար այդ երիտասարդի և այդ ծերունումէջ, որոնցից առաջնը կարծես դիտմամբ ուխտել էր ծեր ձեւանալ և միւսո՞ երիտասարդ, զարմանալի էր:

Գնդապետը սովորաբար տեղ էր բռնում օրիորդ Մեղուզայի կողքին, և աշխատում էր ըստ ամենայնի հաճելի լինել, ծառայել նրան, նախատեսել նրա ամենաշնչին ցանկութիւնները, ափսէ մատուցանել, հաց մեկնել, գինի ածել նրա բաժակը: Այդ ժամանակ իմ կողքին նստած ամերիկուհին սովորաբար կամացուկ ինձ ասում էր.

—Մերունին կը խելագարուի, այ կը տեսնէք:

Ապա խորհրդաւոր տռն ընդունելով աւելացնում
էր, առողջ աչքը արագ-արագ թարթելով։

— Զը դիակը, թէ ինչ մութ բան կայ այդ յարա-
քերութեան մէջ. կապը կտրած աղջիկը այդ խեղճ ծե-
րունուն իսպառ գժուացրել է։

Եւ ճշմարիտ ծերունին խելագարի պէս էր, երբ օ-
րիորդը նրա կողքին էր։ Երբեմն նա մոռանալով հա-
սարակութեան ներկայութիւնը, իր մանր, կրքոտ աչ-
քերը սեեռում էր օրիորդին, մանաւանդ երբ ոտ իօ-
սում էր. այդպէս նայում էր երկար անթարթ, յափլշ-
տակուած նրա դէմքով, մազերով, ձայնով շատ ժամե-
րով. կանացի այդ հմայիչ պատկերից ասես մի անու-
շահոտ բուրմունք էր արձակում և շշմեցնում այդ ծեր
ուղեղը, նրան կայկանդում, գերի գարձնում։ Օրիորդն
առանց նայելու, լաւ զգում էր իր վրայ ուղղուած այդ
հայեացքը, նա դասնում էր յանկարծ, նոյն ձեռվ նայում
էր իր ծեր սիրահարքն մի երկու վայրկեան, ապա ցըն-
ցում էր իր սիրուն խոսպաները և յետ ընկնելով աթո-
սի վրայ բարձրածայն ծիծաղում։

— Սրան պիտի քարացնեմ։ չէ՞ որ ես Մեդուզան եմ,
բացականչում էր նա։

Այդ բոսպէներին սեղանը ընդհանուր ծիծաղով ձայ-
նակցում էր նրան բացի ամերիկուհուց, որ «այդ անա-
խորժ քրքիջը անվայել էր գտնում մի ջահէլ օրիորդի
համար»։

— Աներես, մըթմըթում էր նա։

Ամերիկուհին նախանձում էր, և այն կանացի թու-
նոտ նախանձով։ Նա նախանձում էր այդ աղջկայ ջահէ-
լութեանը, նրա գեղեցկութեանը, նրա մազերին, աչ-
քերին, մի խօսքով այն բոլորի համար, ինչ որ գրաւիչ
էր գարձնում նրան և ինչից որ ինքը զուրկ էր։ Համո-
զուած եմ, որ նա ատում էր նաև բոլոր սեղանակից
տղամարդկանց, որովհետեւ ոչ իր ամեն օր փոփոխուող
զարգերը, ոչ իր պշանքն ու անուշահոտ իւղերը և ոչ
իր գիտաւորեալ խօսքի գարձուածքները չեին կարողա-

նում նրան ընդհանուրի ուշադրութեան առարկայ գործնել։ Օրիորդ Մեղուղայի ամենսկին փոյթն էլ չէր ամերիկուհու թունոտ հայեացքները, նրա միթմիթոցը, որա նշա ականջին փոփոսք։ Այդ չարաճճի աղջիկը կարծես պայքարի հրաւերը սիրով յանձն առած և իր հակառակողութեան աւելի կատաղեցնելու համար կապուել էր ծերունու հետ, թողել էր անուշագիր երիտասարդներին, կամենալով ասել՝ «Ասպարէղն աղատ է, եթէ կարող ես»։ Բայց հակառակորդուհին անզօր էր, չէր կարողանում, միայն նախանձում էր և զայրանում, աշխատելով որ և է կերպով վսէժխանդիր լինել, խայթել։ Մի անգամ խօսում էին այն մասին, թէ կանայք աւելի սէր են տածում երբեմն դէպի տանու կենդանիները, քան թէ դէպի տղամարդիկ։

—Իրաւունք ունին, ասաց ամերիկուհին. տանու կենդանիներ կան, որոնք տղամարդկանցից աւելի հաւատարիմենց ինձ գալով, օրինակ, ես սիրում եմ ամեն մի շուն, որ մեծ է, շատ մեծ, որ առիւծ է յիշեցնում։ ոյժն ու հաւատարմութիւնը միացած է մի այդպիսի շան մէջ. ի՞նչ աւելի դրաւիչ բան։

—Իսկ ես, ասաց օրիորդը, ատում եմ շներին, ես սիրում եմ մեծ, սիրուն աքաղաղներին։

—Մէկ չէ, փետրաւոր կամ անփետուր, վրայ բերեց ծերունին և ոտի կանդնելով բարձրածայն խօսեց աքաղաղի պէս։

Այս արդէն որքան սրամիտ էր, նոյնքան և անսպասելի էր և չափազանց անպատշաճ. ամերիկուհին լաւ առիթ գտաւ։

—Օրիորդ, լաւ որ գուք էլ ինձ պէս շուն չը սիրեցիք, ասաց նա հեգնութեամբ. պ. Արնօլդը չը պիտի կարոցանար գուցէ նոյն հաճոյքը պատճառել ձեզ իբ գեղեցիկ ձայնով։

Ակնարկը չափազանց կծու էր. ծերունին խոժուուեց, օրիորդը վերաւորուեց և զայրացած շեշտով պատասխանեց։

— Տիկին, դուք պիտի գիտնաք, որ մենք երկսով երբէք չենք կարող մեր սիրոյ առարկայի մէջ որ և է նմանութիւն ունենալ. ձեր տարիքը, ձեր փորձառութիւնը և ձեր ճաշակը ձեզ անպայման առաւելութիւնն են տալիս. դո՞հ էք այժմ։

Երկու կանանց մէջ թշնամութիւնն այնուհետեւ բացարձակ եղաւ։

Կասկած չը կար, որ ձեր գնդապետը խելագարի պէս սիրում էր օրիորդին, բայց ինչ որ ամենիս զարմանքն էր շարժում և հանելուկ թւում, այդ այն էր, որ օրիորդն էլ ըստ երևոյթին անտարբեր չէր դէպի այդ ուշացած սէրը և նոյն իսկ չէր աշխատում թագացնել այդ։ Ամեն օր ընթրիքից յետոյ նա ծերունու հետ մի երկու ժամ անց էր կացնում պարտիզում և շատ անգամ մինչեւ ուշ գիշերի ծառերի տակից լսւում էր նրա ուրախ քրքինը, նրա ոտնաձայնը։ Նա վաղվը զում էր այս ու այն կողմը, կամկախւում էր ճիւղերից և օրօրւում, կամ ստիպում էր ծերունուն, որ նոյնն անի, նրան վաղեցնում էր, քրքչալով ծիծազում նրա շարժումների վրայ և ապա հրամայում, որ նստի անշարժ քարանայ իր հայեացքի առաջ։ Ծերունին հնազանդում էր վարժուած շան պէս։

Ոչ ոք չը գիտէր այդ յարաբերութիւնների գաղանիքը, բոլորը ինչ որ յայտնի էր, այդ այն էր որ նրանք միասին էին յայտնուել պանսիօնում, որպէս ընկեր ճանապարհորդներ։ Ամերիկուհին սակայն ամենքիս հաւատացնում էր որ, այդ Մեդուզան ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի «սովորական աղջիկ», և ոչ թէ օրիորդ։ որ կապուել է ծեր գնդապետի հետ, նրան խօսք է տուել հետոն ամուսնալուն՝ նրա ժառանգը դառնալու պայմանով, և որ ծերունին էլ համաձայն էր հարստութիւնը նրան կտակել. այժմսպասում են գնդապետի պառաւ կնոջ մահուան, որի օրերը համարուած են մի ծանր օպերացիայից յետոյ։

— Այսպէս են տղամարդիկ, աւելացնում էր նա, այդ «քաւթառ» կիսախելագարը կեանկից դեռ չէ կշտացել,

իր խեղճ մահամերձ կնոջը թողել է հիւանդանոցում և ինքը ճանապարհորդում է այս կապը կտրածի հետ:

Ճիշտ էր ասում այդ բոլորը ամերիկուհին, թէ ոչ, և եթէ ճիշտ էր, նա որտեղից գիտէր այդ բոլորը, այդ գժուար էր իմանալ, ով կարող է սահման որոշել կանացի հնարամտութեանը. իսկ երբ կինը կամենայ վրէժինդիր լինել, ով կարող է մեղմել նրա լեզուի թոյնը: Ամերիկուհուն չինք հաւատում, հանելուկը հանելուկ մնաց և անցան դարձեալ մի քանի օրեր:

Մի գեղեցիկ առաւօտ միտք ծագեց վերելք կատարել Մօն-Պելը ին լերան կատարը: Պանսիօնի բոլոր հասարակութիւնը յանձն առաւ. մեղ ընկերացան նաև մի քանի հարեաններ: Լեման լճի վրայ շրջող նաւերը մեղ շուտ տեղափոխեցին լերան ստորաը: Վերելքը շատ հեշտ չէր, բայց ոչ մէկը չէր ուզում միւսից յետ մնալ, մանաւանդ որ հասարակութիւնը բաղկացած էր երկու սեռից: Վերելքի այդ պահպարի մէջ ամենից ծանրը գնդապետի վիճակն էր. նա աշխատում էր անպատճառ Մեգուզայի կողքին գտնուել, բայց հակառակի պէս կայտառ ու արագաշարժ օրիորդը ցատկուում էր այծեամի պէս և ամենից առաջ էր: Խեղճ ծերունին մի առ ժամանակ հեալով, քրտնած հետևում էր նրան, բայց վերջ ի վերջոյ յետ մնաց, կանգ առաւ, մինչդեռ աղջիկը մի հարիւր քայլ աւելի բարձրանալով յետ դարձաւ նայեց և սկսեց ծիծաղել: Նա ծեռքում բռնած ունէր մի լեռնային ծաղիկ:

— Նրան՝ ով ամենից շուտ կը հասնի ինձ, կանչեց նա:

Ամենքս էլ համոզուած էինք, որ այդ մրցութեան հրաւերը բացառապէս երիտասարդներին է ուղղուած, որովհետեւ ծեր գնդապեան ըստ երեսյթին իսպառ ուժասպառուած նստել էր մի քարի վրայ, հանդստանում էր: Մի քանի երիտասարդներ և գերմանացին չափընկան լեռն ի վեր. բայց որչափ մէծ եղաւ բոլորիս զարմանքը, երբ ծերունի Արնօլդը վեր ցատկեց տես-

զից և վերջին ճիգերը հաւաքելով, նոյնպէս վազել սկսեց դէպի վեր։ Այս տեսնելով վազողները բոլորը կանգ առան ծիծաղելով բացի գերմանացուց, որ շարունակում էր բոլոր ուժով վեր ենել։ Մեղուղան վերից ծիծաղում էր ծաղիկը մեկնած, ներքեւից ծիծաղում էր մնացած բազմութիւնը. իսկ լեռնալանջի վրայ երկու հոգի՝ մէկը ծեր, իսկ միւսը երիտասարդ, վազում էին համ վազում։ Սերունդների մի մրցութիւն էր կատարում; հինը չէր ուզում տեղի տալ, նա աշխատում էր գեռ իր տեղը պահել արևի տակ, գեռ վայելել կեանքը. իսկ նորը՝ այդ անակընկալ գիմաղբութիւնից կարծես աւելի զայրացած, կատաղի սստիւններ էր գործում գէպի որսը՝ երիտասարդին յատուկ բոլոր կորովով, բոլոր ուժով։ Տեսարանը յուղիչ էր. մարդկային երկու սերունդներ խելադարի ոլէս վազում էին գէպի վեր, վեր, կեանքի խարսուսիկ իցիւղիան գրկելու, մի վազանցուկ, մի խզճաւկ ծաղիկ, որի թերթերը շուտով տարուելու էին քամու չնչով գէպի եթերի անսահմաթիւնը։

Եւր գնդապետի մէջ զարթնել էր զինուորականի քիրտ, չը զիջող ոգին. նա տարօրինակ էր, նա զարմացնում էր եռանդի այդ յանկարծական բռնկումով. թւում էր, թէ այդ ծաղիկ ստացողը կը խլի նրանից իր հոդին, իր կեանքի էութիւնը, այդ գեղեցիկ աղջիկը և իր գերեզմանը կը փորի։ Եւ նա վազում էր յուսահատ, օրհասական թափով։ Թէ վերեսում և թէ ներքեսում ծիծաղը դաշտաց. այդ տեսարանը մի բան ունէր, որ արգելում էր ծիծաղել, այդ ոտների արագ, ջղուտ շարժումների մէջ, այդ հետոցների մէջ, այդ քրտնաթոր ճակատների, այդ ծոմուուղ մէջքերի վրայ մի ինչ որ խիստ բան կար, յաւիտենական տրագեդիան էր կրկնում, սեռի յարատեսութեան համար կոյր եռանդի, կոյր կամքի հզօր պոռթկումն էր, որ իշխում էր թէ գերակատարների և թի հանդիսատեսների մտքերի վրայ. անհնա-

րին էր ծիծաղել: Վաղում էր երիտասարդը, յետ չէր մնում և ծերունին...

Ելի մի քանի վայրկեան և նրանք երկուսով էլ քրտնաթոր, հեալով կանդնած էին Մեղուզայի առաջ, ով առաջ հասաւ, այդ գժուար էր որոշել, և օրիորդը շուշարած, մտախոհ մնացել էր, սպասելով մեղ, որպէս զի հասարակութիւնը որոշում կայացնի:

—Ես չը գիտեմ ով առաջ հասաւ, ասաց նա մեղ. որին պիտի տալ ծաղիկը:

—Ինձ, որովհետեւ, ես հեռուից վաղել սկսեցի, ասաց գերմանացին:

—Ո՛չ, պ. Արնօլդին կը հասնի, մէջ ընկայ ես. նա թէեւ աւելի մօտ էր, բայց մի մոռացէք ձեր և նրա տարիքի տարբերութիւնը:

Մերունին շնորհակալութեան մի ակնարկ ձգեց ինձ վրայ. խեղճ, որքան շատ արժէր նրա համար այդ ծաղիկը: Մեղուզան շարունակում էր անվճռական մնալ. նա զգում էր, որ ինդիրը սովորական զուարձութեան սահմանից դուրս է եկել և լուրջ բնաւորութիւն է ընդունել. նա դարձեալ մի բոպէ մտախոհ նայեց այդ երկու տանջուած դէմքերին, որոնցից իւրաքանչիւրն իր քրտինքի վարձն էր ուզում, ապա մէկէն ցնցեց իր խոսպոաները, կարծես մի անախորժ միտք հալածելու համար, ձեռքի մի շարժումով փետեց ծաղիկը և նրա թերթիկները ցանեց երկրի գլխին և ինքը փախաւ անյայտացաւ դէպի վեր:

—Դւռ, բայցականչեց ամերիկուհին:

—Բրնձո, ծափահարեցին միւսները. արդար բաժանեց:

Երկու մրցակիցները շուշարած դլխակոր մնացին, բայց ծերունին մանաւանդ առանձնապէս խոժուռուեց:

Քիչ յետոյ խումբը հասաւ օրիորդին, որ նստած հանդստանում էր անդադար յետ-յետ տանելով քըրտնած ճակատից մազերի վնջերը: Նա մտախոհ էր:

—Դիտէք ինչ, ասաց նա յանկարծ դլուխը բարձ-

քացնելով. ես այնպէս յոգնած եմ, այնպէս յոգնած, որ էլ բարձրանալ չեմ կարող, մի քիչ գնացէք, ես կը հանդստանամ և ձեզ կը հասնեմ:

—Եկէք օրիորդին ձեռնափայտի վրայ բարձրացնենք տանենք, առաջարկեց մի երիտասարդ:

—Տանենք, տանենք, բայց կանչեցին մի քանի հոգի:

Գերմանացի ուսանողը մեկնեց իր ձեռնափայտը. ընդհանուր ծիծաղ բարձրացաւ, երբ գնդապետը առաջ անցաւ շտապով և բռնեց ձեռնափայտի միւս ծայրից։ Ի զուր անցան իմ ջանքերը նրան յետ կանեցնելու այդ մտադրութիւնից։ Նրանք փայտի վրայ դրին մի վերարկու, օրիորդը նստեց, երկու ձեռքը ձգեց իր երկու կողմի պարոնների ուսերին և այսպէս սկսեցին բարձրանալ։ Ուրեմն պայքարը դեռ չէր դադարել. տարօրինակն այն էր, որ միշտ լուռ և անտարբեր գերմանացին այօր առանձնապէս ճակատող գիրք էր ընդունել և ծերունին զինուորականի հոտառութեամբ այդ զգալով, կարծես որոշել էր մինչև վերջին շունչը կոռուել։ Նրանք մի տասն րոպէ այսպէս գնացին, ծերը կամաց-կամաց սկսում էր երերալ, օրիորդի փոյթը չէր, նա շարունակում էր նստած մնալ. դարձեալ մի քանի րոպէ, ծերունու ոտքը մի քարի դիպաւ, նա ընկաւ երեսի վրայ, օրիորդը հետք Ամենքը խառնուեցին. գերմանացին չարցաւ, գնդապետը կարմբեց, երբ տեսաւ մանաւանդ որ օրիորդի մատը քերցուած է և արիւն է դնում. յուղմունքի մէջ նա մօտեցաւ, բռնեց օրիորդի ձեռքը, բայց չը գիտէր ինչ անէր, գերմանացին հանեց իր մետաքսէ թաշկինակը, պատռեց և վերը փաթմաթեց։ Մեր գնդապետի դրութիւնը դարձաւ անտանելի, ամօթահար ու յոգնած. նա կատաղաբար նայեց ուսանողին և այնուհետեւ բոլոր զբօսանքի ժամանակ ընդհանուր տրամադրութիւնը չը վերականգնուեց. մի բան կար, որ ճնշում էր ամենքին, ճնշուած էր երեսում նաև օրիորդը։ Ամենքն շտապում

Էին շուտ վերադառնալ և հազիւ կատարին հասած՝ ըստ
կսեցինք ցած դալ և դէպի տուն գնալ: Ուրախ գնա-
ցինք, անտրամադիր վերադարձանք:

Օրեր անցան. ծեր գնդապետի անհանգստութիւնը
էլ չը փարատուեց, նա նոյն իսկ աւելի և աւելի մռայլ-
ւում էր: Թէև սեղանի ժամանակ նա աշխատում էր
նոյնպէս ուրախ, նոյնպէս հաճոյակատար երեալ, ինչպէս
առաջ, բայց չէր կարողանում թագցնել իր ներքին
խոռվութիւնը, սրտում մի որդ էր բուն դրել և կրծում
էր: Նա կասկածում էր գերմանացի ուսանողից, այդ-
պարզ էր, բայց այդ երիտասարդը ոչ մի բոսկ օրիոր-
դի հետ մենակ չէր մնում և ես չը գիտէի, թէ ինչի՞
վրայ է հիմնուած այդ կասկածը. մտածում էի, որ ա-
մերիկուհին դեր է խաղում հաւանականաբար, և ճշ-
մարիտ, որքան աւելի էր անհանգստանում ծերունին,
նոյնքան աւելի էր ուրախանում ամերիկուհին. կարծես
նա սպասում էր մի շատ ուրախ բանի:

Դեռ առաջին օրերում մի անքուն անցրած գիշեր
ես նկատեցի, որ իմ սենեակից անմիջապէս վեր գըտ-
նուող սենեակում ինչ որ իբարանցում է կատարւում:
կէս գիշերից յետոյ մի լուսամուտ բացուեց, փակուեց
զգուշութեամբ, մի դուռ հազիւ բացուեց և խփուեց
նոյն զգուշութեամբ, ապա ամեն ինչ լրեց: Զիմնալով
թէ ով է ապրում այնտեղ, ես անտարբեր եղայ դէպի
այդ բոլորը: Օրեր յետոյ, երբ իմացայ որ դա օր. Մե-
դուզայի սենեակն է, ակամայ ինձ զգացի այն մարդու
յիմար դրութեան մէջ, որ դիտէ թէ պատի յետեռում
մի բան է կատարւում, իսկ թէ ինչ, այդ չի կարողա-
նում իմանալ և սրտատրով նայում է անթափանցիկ ու
համբ պատին: Արդեօք ծեր գնդապետն էր ներս գնում
այնտեղից կէս գիշերին, թէ օրիորդն էր դուրս գնում
մի ուրիշի մօտ: Առաջին ենթագրութիւնն ինձ իսկոյն
թուաց անհիմն, ծերունին իմ հարեան սենեակումն էր
և ես ամեն երեկոյ լսում էի, թէ ինչպէս օրիորդին
նախասենեակում բարի գիշեր ասելուց յետոյ նա ներս

էր մտնում և իսկոյն յետոյ լաւում էր խռմիոցը, որ այնպէս յատուկ է ծերերին, և համարեա մինչև լոյս նա խռիտացնում էր: Երկրորդ ենթադրութիւնն աւելի հաւանական էր. բայց ուր էր գնում այդ օրիորդը կէս գիշերին մենակ, ում մօտ, և ինչպէս: Այս հարցերը կամաց-կամաց ինձ զբաղեցնում էին, ինչու, ես այդ չը գիտէի, ես ոչ մի կապ չունէի այդ օրիորդի հետ, ոչ մի զգացմունք չէի տածում դէպի նրան, չէի նախանձում ոչ ոքի, ում կը պատկանէր նա, այդ իմ փոյթը չէր, ինչու էի ուղում անպատճառ իմանալ, թէ ինչ է անում, ուր է գնում, ում հետ... Պարզ հետաքրքրութիւն է երևի իմ կողմից, մտածում էի ինքս ինձ. մի բան, որ յատուկ է ամենին, ուրիշ ինչ կարող է լինել: Ոչ, կ'ասեմ ես այժմ. դա պարզ հետաքրքրութիւն չէր, որովհետեւ ոլարդ հետաքրքրութիւն չը կայ աշխարհիս երևին: Այն՝ ինչ որ դարերի գործադրութիւնից պարզ, անմեղ հետաքրքրութեան կերպարանք ունի մեր աշխատմ, այժմս էլ մենք սիրում ենք այդպէս ընդունել, դա իսկապէս նոյնքան եսական, նոյնքան անձնական հիմունքներ ունի, որքան և ամենաչար հետաքրքրութիւնը ես անգիտակցաբար, առանց ինքս ինձ լաւ հաշիւտալու, երևի նախանձում էի, այլապէս ինչի՞ս էր հարկաւոր իմանալ, թէ ուր է գնում այդ օրիորդը: Երբէք, երբէք մի աղամարդ անտարբեր չէ, թէ ումն է պատկանում մի գեղեցիկ կին, հակառակ բացատրութիւնները փարխեցիական են և կեղծ բարոյագիտութեան արդասիք: Խանդոտութիւնը իւրաքանչիւր արուի, ինչպէս և իւրաքանչիւր էդի գոյութեան հիմքերից մէկն է. յարատե, անողորմ պայքար կայ արուների մէջ էդերի համար և էդերի մէջ արուների համար: Իւրաքանչիւր կին չարաչար տանջւում է, երբ նկատում է մի ուրիշ կնոջ որ և է առաւելութիւն տղամարդ գրաւելու համար, գեղեցիկ սեռի երկու անձանօթ ներկայացուցիչներ իրար պատահելիս ուշադիր հայեացքով նախ քըննում են իրար զգեստն ու զայդերը, հագնուելու ձեւ,

գլխի սանրուածքը, ինչու. որովհետեւ նրանկ հակառակորդներ են, դարաւոր պայքարն է այն արուի տիրապետութեան համար, ինչպէս որ ոչ մի տղամարդ չի կարող առանց գէթ մի փոքր նախանձի տեսնել մի ուրիշ տղամարդի հետ թեանցուկ մի գեղեցիկ կին։ Ահա թէ ինչու համար էի ես հետաքրքրուած այդ օրիորդի գիշերային արկածով. այժմ ես այդ շատ լաւ զգում եմ, այն ժամանակ անգիտակից էի, ինքս ինձ խաբում էի։ Եւ այսպէս ես ուզում էի իմանալ, թէ ուր է զնում օրիորդը, և ինչ որ ամենից տարօքինակն է, որոշել էի յարմար առիթին հետեւ նրան, յագեցնել ինձ այրող հետաքրքրութիւնը։ Բայց բախտին հաճելի եղաւ, որ այդ բանը ես իմանամ առանց անձնական ձեռներէցութեան, առանց ինձ անախորժութեան ենթարկելու։

Մի երեկոյ ես լաւ լսեցի, թէ ինչպէս ծեր գնդապետը ներս մտաւ իր սենեակը նախասենեակում օրիորդի հետ իրար «բարի գիշեր» մաղթելուց յետոյ, լսեցի, թէ ինչպէս նա հանեց ոտնամանները և հաղաւ հողաժամփերը, ինչպէս մարեց իր ճիւազը, բայց չը քնեց։ Երկար ժամանակ ես պարզ ու որոշ լսում էի նրա ոտնաձայնը. նա քայլում էր գոնից մինչև պատուհան, այնտեղ մի փոքր կանգ էր առնում, երեխ նայում էր գէպի գուրսը, ապա յետ էր դառնում և կրկին քայլում գէպի գուռը և այսպէս շարունակ. նա անհանգիստ էր, ինչու...»

Ես որոշեցի անկողին չը մտնել, սպասել և տեսնել, թէ ինչ է լինելու, ինչու է թափառում ծերը խաւար սենեակում։ Երկար նստած էի գլուխսքաշ արած և մտածում էի հաղար ու մի բաներ։ Քիչ առաջ այս անհանգիստ ծերը և այն օրիորդը իրար շատ բնական, շատ քաղցր տոնով բարի գիշեր ասացին, մտածում էի ես, իրար չը խաբեցին արդեօք։

Յետոյ աչքս ընկաւ անկողիս վերև կախուած մի պատկերի. ես երբէք ուշադրութիւն չէի դարձրել, թէ

ինչ է ներկայացնում այն, գիտէի, որ պահսխօնների և հիւրանոցի պատերի զարդերը միայն զայրոյթ կարող են զարթեցնել, ուստի չէի նայել։ Այժմ նայեցի մի կերպ ժամանակն անցկացնելու համար, նիւթը վերցրած էր Հիւդոի Հերնանից, այն մօմենտը ներկայացրած, երբ ծեր ու սիրահարուած դուքս Դօն-Գօմեցը՝ իր ջանձէլ նշանած գեղեցիկ Դօնու-Սոլային բռնում է նրա սիրականի՝ երիտասարդ Հերնանի հետ։ Դուքսը կանգնած է շեմքի վրայ, ձեռները ծալած կրծքին, մազերը և միրուքն անկարգ, աչքերից կայծեր են ցայտում, մինչդեռ յանցաւոր զրյգը՝ ոտնատակ տալով ամուսնութեան ընդունուած կարգերն ու ամօթխածութիւնը, շարունակում է օրօրուել հեշտութեան և վայելքի գրկում, երկու սիրահարների շրթունքները մի երկար, կրգոտ համբոյրով գեռ միացած են. նրանք ոչինչ չեն տեսնում, ոչինչ չեն լսում, երիտասարդ կեանքն է խօսում։ Ինչ ասել է նրա հզօր թափի առաջ մի ծերի զայրոյթ, ընկերութեան ստեղծած կարգեր։ Պատկերն ինձ դրաւում է, ես մօտենում եմ և նրա տակ կարգում եմ հետեւեալ տողերը նոյն դրամայից. Դօն-Գօմեց. — «Ի՞նչ հեղնութիւն, ծեր օրերի կազ սէրը գնում է մեր սրտում այսքան բոց և հեշտութիւն, վերակենդանացնում է հոգին, մոռանալով մարմինը»։

Ուրքան տիսուր զուգագիպութիւն. հարեւան սենեակում այդպէս անհանգիստ քայլողը նոյնապէս մի ծերունի Գօմեց չէ... յոգնած, ուժասպառ մարմնի մէջ բոցավառող հոգին չէ, որ խլել է այդ թշուառ ծերունու քունը և արդեօք սա էլ չէ աշխատում բռնել իր նշանածին մի Հերնանի հետ։ Երկար տեսեց այդ դրութիւնը. կէս գիշերն անցաւ արդէն, ծեր գնդապետը գեռ քայլում էր խաւար սենեակում։ Նայեցի ժամացոյցն, առաւտեան ժամի 1-ն էր. յանկարծ վերի սենեակում լսուեց ինձ ծանօթ թրխկոյը, եւ ցնցուեցի և շտապով ճրագս մարեցի. մի լուսամուտ բացուեց և փակուց նոյն զգուշութեամբ, ապա ես լսեցի կանացի

թեթև ոտնաձայներ, շրջազգեստի խշխոց իմ բաց լուսամուտի տակ և ամեն ինչ լուեց երկու բողէ յետոյ ես լսեցի, թէ ինչպէս ծեր գնդապետը զգուշութեամբ դուրս գնաց և իջաւ պարտէզ: Ես կամացուկ մօտեցայ լուսամուտին. աշնանային տիսուր գիշեր էր, երկինքը տեղատեղ պատաճ էր մութ ամողերի պատառներով, որոնց տակ մերթ թագնւում և մերթ յայտնւում էր լուսինը, պաղպաղ լուսաւորելով պարտէզը և տիսուր ու խորհրդաւոր ստուերներ կազմելով ծառերի նօսրացած սաղարդների տակ. երբեմն էլ նա խսպառ ծածկւում էր մի թանձր, ու ամպի տակ, այդ ժամանակ ընդհանուր խաւարի մէջ ծառերն ընդունում էին ու այլանդակ պատկերներ: Թեթև, բայց ցուրտ աշնանային հովը փըշում էր, սլալացնում էր ծառերի գեղնած տերևների վերջին մնացորդները և նրանք մէկիկ-մէկիկ ընկնում էին հաղիւ լսելի խշոցով: Լուսինը մէկ էլ լուսաւորեց պարտէզը և այդ ժամանակ ինչպէս մի վայրկենական աչքի երեսյթ ես նկատեցի ծառերի տակ մի զոյգ մարդկային ստուերներ, որոնք և շտամով գիմեցին գէպի մի մութ ծառախումբ, ուր շնուրած էր բաղեղապատ վերանդա. այնտեղ, այն վերանդայում ծածկուեցին հաւանականաբար: Ոչ մի կասկած չը կար. մէկը Մեղուզան էր, իսկ միւսը՝ երխասարդ գերմանացին, և այսպէս հանելուկը լուծւում էր. կէս գիշերից յետոյ նա պարտէզ էր գալիս և օրիորդը ցած էր իջնում ու նրանք տեսակցում էին: Ապա քիչ յետոյ ես տեսայ ծեր գընդապետին ծառերի մէջ, նա քայլում էր գարան մտած կատուի զդուշութեամբ և աշխատում էր մնալ ստուերներում: նա մերթ կանգ էր առնում, կարծես շունչ առնելու և ականջ գնելու համար, մերթ ծնկների վրայ էր ընկնում, մերթ սողում էր չոր գերաների և խոնաց գետնի վրայ և երբեմն էլ կուշ է կուշ էր առաջ գնում գէպի նոյն վերանդան, ուր թագնւուեցին սիրահարները: Խանդուութիւնն ու վիշտը որ բուն էին գրել նրա սըրտում օձի պէս, այդ ծեր ջարդուած մարմնին տուել էին

նաև օձի ճկումնութիւն. նա դաշտարւում էր ոստերի մէջ, սողում էր գետնին և շարումնակ առաջ էր գնում առանց ուշք գարճնելու ցրտին, խոնաւութեանը, չը նայելով որ գիխաբաց էր երեւումք Վերջապէս նա մօտեցաւ և թագնուեց ծառերի յետեւումք ես դուրս եկայ պատշգամբ. ծառախումբն ու վերանդան, ուր թագնուեցին նրանք, հեռու չէր պատշգամբից և քամին գիշերային խաղաղութեան մէջ բերում էր մինչև ինձ սիրահարների փափսոյն ու համբոյրների ձայները:

—Ա՞ս, ինչպէս անխոհեմ եղար դու անցեալ օրը Մօն-Պելը էնի զբօսանքի ժամանակ, ասաց Մեղուզան:

—Ես չէի անխոհեմը, այլ դու, իմ հրեշտակ. ինչու էիր մեղ հրաւիրում ծաղիկն ստանալու համար. ես չը կարողացայ տեսնել, թէ ինչպէս այդ ծեր բաղն օրորուելով վազում էր դեպի քո ծաղիկը:

—Հապա ձեռնափայտի պատմութիւնը, ասաց առաջին ձայնը:

—Ձեռնափայտի պատմութիւնը... քեզ ով էր ասում յօդնած ձեւանաս. ես դիտէի, որ դու յետ մնաս, ծերն էլ պիտի մնայ, ես էլ ուզեցի քեզ անպատճառ տանել. Արդարանում ես, չէ, դու կարող էիր չը նստել. ինչու ընդունեցիր:

—Օ, դու չը գիտես. այդ անպիտան ծերուկը իր խանդոսութեամբ, իր անվերջ զզուելի քնքշութեամբ հոգիս բերանս է բերել, դիտմամբ նայեցի, որ տանելիմ; տանչեմ; հոգին դուրս գայ. քթիս տակ միշտ ցցուած է:

—Բայց ինչ վարպետն ես, ինչ չարաճճին ես, իմ սիրունիկ Մեղուզա. ինչպէս կարողացար հեշտ լուծել ծաղկի իմուգիրը:

Լուսթիւն տիրեց, լուսում էր միայն փոքրիկ համբոյրների ձայն, փոքրիկ խեղդուած բացականչութիւններ, փափսուկ:

—Ծերունին հաւատում է քեզ, ասաց երիտասարդը:

—Առաջ աւելի էր հաւատում, այժմ չնորհիւ քո

անխոհեմութեան մի քիչ թթուել է. լաւ որ դու այս-
տեղ չես ապրում:

— Զգուշացիր ամերիկուհուց միայն, նա քեզ նա-
խանձում է, որովհետեւ գեղեցիկ ես, իմ հրեշտակ, և քեզ
ատում է, որովհետեւ ամենքը սիրում են քեզ, հոգիս.
Նա կարող է ծերունուն գայթակղեցնել և մի հարուա-
ծով քանդել քո ծրագիրը:

— Անհնդ կաց, հեշտութեամբ կը հանդստացնեմ;
ծերին խաբելը դժուար չէ, միայն թէ աչքով չը տես-
նի. մի համբոյր և մնացածը...

— Օ՞չ, դաւաճան, ճշաց յանկարծ ծերը մի այն-
պիսի ձայնով, որ կարծես կուրծքը պատառուեց. ապա
կանդնած տեղում օրօրուեց և ծառի բնին յենուած,
սողալով ընկաւ գետին թուլացած:

Ես շտապով ցած իջայ, փազեցի պարտէզ. նա կըծ-
կուել էր ծառի տակ և ամբողջ մարմնով դողդողում էր
տենդով բռնուածի պէս. բռնեցի, բարձրացրի և նըս-
տեցրի մօտիկ նստարանի վրայ:

— Ա՛խ, որքան բարի էք, պարոն, տասց նա, չարը
այ նրանք են, նա մատը մեկնեց դէպի վերանդան, որ-
տեղից հէնց նոյն բոպէին դուրս եկան երկու ստուեր-
ները և անյայտացան զանազան կողմեր:

Ես փորձեցի ներս տանել ծերունուն, յիշեցնելով,
որ պարտէզը խոնաւ է, ինքը թեթև հաղնուած, հողա-
թափերով, դլսաբաց:

— Ինչու համար ասրել այսուհետեւ, տասց նա,
դլուխը ձեռքերի մէջ տուաւ և գտոն կերպով հեկեկալ
սկսեց: Ծերութիւնից և վշտից երեխայ դարձած, նա էլ
հպարտութիւն չունէր, և լալիս էր ինչպէս լաց կը լի-
նէր մի մոռացուած, մայրը կորցրած մանուկ: Ես բըռ-
նեցի նրա վտիտ, դողդողուն ձեռքը, չմանալով՝ ինչ-
պէս միսիթարեմ այդ ջարդուած ծերունուն:

— Որքան էի սիրում նրան, Տէր Աստուած, և ինչպէս
խաբեց ինձ. չար, չար, խորամանկ օձ, թունաւոր օձ:
Կտակն էր շտապեցնում... եթէ ամերիկուհին չը դրէր

ինձ... Ապօւշ, ապօւշ գլուխ, վաթսունուհինդ տարին քեզ ոչինչ չէ սովորեցրել. ես հաւատում էի, թէ ինձ սիրում է...

Նա կրկին հեկեկաց:

— Չար, չար է աշխարհը, այնպէս չէ, պարսն...

Խեղճ, նա մոռացել էր, որ աշխարհի չարն ու բարին այստեղ գործ չունեն, որ տիեզերական օրէնքներն են անողոք, անփոփոխելի. նա չէր տեսնում այս կամաց-կամաց մեռնող բնութիւնը, չէր նկատում իր ճերմակ գլխին թափուող դեղնած տերեները, որոնք տեղ էին բաց անումնոր, կանաչ տերեներին, նա դեռ ապրել էր ուզում: Վայելել, սիրել, էլի՛, էլի՛... և լալիս էր երեխայի պէս, որ չի կարողանում բռնել լուսնի շողը, վերջալոյսի փայլը, փախչող սառւերը: Իր անգորութեան մէջ նա անիծում էր բախտը, արտասւում էր իմ կրծքի վրայ և ողբում էր իր անցած օրերը, իր վառ անդարձ երիտասարդութիւնը, երբ կեանքը խինդ էր և ծերութիւնն ու ցաւերը թւում էին անհնարին: Ես խորին ցաւով էի նայում այդ հեկեկացող վշտահար ծերունուն. այդ յոդ-նած, մաշուած սրտում բռն դրած սէրը յիշեցնում էր ինձ վերջալոյսի մի ուշացած շող, որ խեղդւում է վրայ հասնող համատարած խաւարից. յիշեցնում էր ինձ գերեղմանի ամուլ կրծքից դուրս ցցուած մի ծիլ, աշնաւնը ծառի վրայ օրորուող մի կանաչ տերե, չոր խոտերի մէջ կծկուած մի փափտ ծաղիկ, որոնք բոլորն էլ ասես հոգեվարքի վերջին օրհասական ցնցումները լինին:

Քամին վշում էր պաղապաղ, վերից մեռած տերեները շարունակում էին թափուել այդ վշտաբեկ ծեր գլխի վրայ և իրանց մեղմ փափոցով ասես կրկնում էին՝ «էլի՛ էլի՛», և ծերունին արտասւում էր այդ տերեների հետ, մեռնող բնութեան հետ և նրա հեկեկոցի մէջ ես լսում էի բոլոր հոգեվարք արարածների յաւիտենական երգը՝ «էլի՛, էլի՛...

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԴԷՊՔ

(Գի դը-Մօպասանի)

Բառական մնած թուով սեղանակիցներ նստած էին ամառանոցում, կլոր սեղանի շուրջը, որի վրայ շարուած էին փոքրիկ թառեր և բաժակներ: Նոր էին վերջայրել մի սարսափելի դէպքի պատմութիւն, որ պատահել էր նախընթաց օրը:

«Սարսափելի» բառը իր լիակատար նշանակութեամբ չը պէտք է շատ յաճախ գործ ածել, —սասաց այդտեղ նստած գեղներալ ժ. —մեռելների, արիւնահեղ պատերազմների, նոյն իսկ մեծ մասամբ ամննակատաղի յանցանքների մասին եղած պատմութիւնները կատարելապէս արժանի չն այդ անուան: Ահա ես կը պատմեմ ձեզ մի դէպք, որի մէջ անձամբ մասնակցութիւն եմ ունեցել և որ ինձ բացատրեց այդ խօսքի իսկական նշանակութիւնը:

Դէպքը տեղի ունեցաւ 1870 թուականի պատերազմի ժամանակ: Մենք նահանջում էինք: Մեր զօրքի գրութիւնը յուսահատական էր: Շատ էին յետ մնացողները, որոնք ընդունակութիւն չունեին առաջ շարժուելու. տանջում էին սովոր, ցրտից, սարսափելի յոդնածութիւնից... Հաղիւհաղ էին շարժուում...

Այդ ժամանակ, ճանապարհից քիչ հեռու, ևս նկատեցի երկու ժանդարմների, որոնք բռնել էին մի օսարոտի մարդութերից, մի փոքրիկ, ծեր, անմօրուս մարդու, որ, իսկապէս, զարմանալի դէմք ունէր:

Ժանդարմները որոնում էին մի օֆիցիրի, կարծելով թէ լրտես են բռնել:

«Լրտես» բառը մի տեխնիքարիթում տարածուեց յետ մնացածների մէջ, և գերին իսկոյն շրջապատուեց: Մէկն աղաղակեց. «Պէտք է զրան հրացանի բռներ», եւ բոլոր զինուորները, որոնք մինչև այդ ժամանակ ընկնում էին ուժասպառութիւնից և կարողանում էին սուրբի վրայ մնալ միմիայն յենուելով հրացանի վրայ, յանկարծ զգացին կատաղի բարկութեան մի ոյժգին ցնցում, որից ամբոխը վայրագութիւնն է համառում եւ պատրաստ է ամնն տեսակ յանցանք ու կաղանութիւն գործելու:

Ես ուզում էի խօսել: Ես բատավիօնի հրամանատար էի, բայց այդուղ այլիս իշխանաւոր չէին ճանաչում. ինձ էլ կը խըֆէին, եթէ ես մասածէի հակառակուել:

Ժանդարմներից մէկն ինձ ասաց.

—Երկը օր է, ինչ սա հետեւում է մեղ: Ամենքից ուզում է տեղեկութիւններ դուրս քաշել թնդանօթաձիգ գօրքերի մասին: Ես փորձեցի հարց ու փորձ անել այդ էակից.

—Ի՞նչ ես անում գու այսուղ: Ի՞նչ է հարկաւոր քեզ: Ինչու ես զնում գօրքի եանից:

Նա մի քանի խօսք վնթինթաց մի անհասկանալի բարբառով:

Դա, իսկ որ, մի տարօրինակ մարդ էր, նեղ ուսերով, յօնքերը կիտած: Նա այնքան չփոխուեց իմ առջեն, որ ես այլիս չէի կատածում. մի լրտես էր դա: Տեսքով նա շատ հասակաւոր էր և շատ թույլ ինձ նայում էր պարզահոգութեամբ:

Չորս կողմում կանչում էին.

—Կախեն, կախեն:

Ես զիմնեցի ժանդարմներին.

—Դուք պատասխանատու էք զերու համար...

Ես գեռ չեմ վերջացրել խօսք, երբ ուժեղ կերպով հրեցին ինձ և ես լնկաց: Ես աեսայ, թէ ինչպէս այդ մարդուկին մի ակնթարթում բռնեցին կատաղած զինուորները: Նրան ցած զլորեցին և սկսեցին ծեծել անդթարար. ասա քարշ տուին ճանապարհի ծարրավ և զցեւին մի ծառի տակ: Նա ընկաւ ծինի մէջ համարեա մեռած:

Մի ակնթարթում նրան հրացանի բռնեցին: Գնդակահար անելով նրան, զինուորները նորից լցնում էին հրացանները և նորից զնդակահար անում զաղանների վայրազութեամբ: Նրանք վիճում էին միմինանց հետ զիակի մօսով անցնելու հերթի համար, որպէսզի զնդակի խիմեն նրան, ինչպէս անցնում են զագազի մօսով՝ օրհնած ջաւր սրսկելու համար:

Բայց յանկարծ մի աղաղակ լսուեց.

—Պրասացիները, պրասացիները...

Եւ ես լսեցի գլուխը կորցրած և վախչող ամբոխի յուսահատական աղմուկը:

Աստանդական մարդու վրայ պարպած հրացանների ձայները սասափիկ վախ էին պատճառել, որ խելքահան արին հէնց այդ զահիճներին: Նրանք չըմբռնեցին, որ իրարանցման պատճառը հէնց իրանք են, թողեցին վախսան և անյայտացան խաւարի մէջ:

Ես մնացի մնակ զիակի մօտ երկու ժանդարմների հետ,

որոնք ինձ մօտ մնային ծառայութեան պարտաւորութիւնից
դրդուած:

Նրանք բարձրացրին այն մսային զանգուածը, որ տրորուած
էր, ծուէն-ծուէն դարձած, արիւնոտ:

—Պէտք է դրան խուզարկել, ասացի նրանց:

Ես զրպանից հանեցի մոմէ լուցկիների տուփը: Մի
զինուորը լոյս էր անում միւսին: Ես կանգնած էի երկուակ
մէջանեղը:

Դիմակը խուզարկող ժանդարմը դեկուցանում էր.

—Հադած է կապոյտ բլուզա, սպիտակ շապիկ, վարտիկ,
կօշիկներ...

Առաջին լուցկին հանդաւ վառեցին երկրորդը: Դուրս հա-
նելով զրպանները, նա շարունակեց:

—Եղջիւրից շնած դանակ, չթէ աղլուխ, ծխախոտի աման,
բարակ թոկի կտոր, մի պատառ հաց...

Երկրորդ լուցկին վերջանում էր: Վառեցին երրորդը: Ժան-
դարմը, դիմակը երկար շօշափելուց յետոյ, յայտնեց.

—Էլ չը կայ:

—Մերկացրէք դրան, ասացի. գուցէ մի բան գտնենք մարմնի
վրայ:

Եւ որպէսզի երկու զինուորներն էլ գործ տեսնեն, ես
ինքս սկսեցի լոյս անել: Լուցկիի արագ հանդշող լոյսի մէջ ես
տեսայ ինչպէս են հանում չորերը միմնանց ետեւից, մերկացնե-
լով գեռ տաք, մեռած մարմնի այդ անձեւ արիւնային բեկորը:
Յանկարծ նրանցից մէկն ասաց.

—Գրնջը տանէ... Պարոն հրամանատար, կի՞ն է...

Ես չեմ կարող ասել ձեզ, թէ թախիծի որպիսի օտարութի
եւ սուր զգացմունք շարժուեց իմ սրտի մէջ: Ես չէի կարողա-
նում հաւատալ, ուստի ծունկ չոքեցի ձիւնի մէջ, մսի այդ
կտորի առաջ, որ, նայեմ. այն դա կի՞ն էր:

Երկու ժանդարմները անշարժ և շնկուած, սպասում էին
որ ես ասեմ առաջին խօսքը:

Բայց ես չը գիտէի՝ ինչ մտածեմ, ինչ ենթադրեմ:

Այն ժամանակ աւագ ժանդարմը դանտաղ կեպով արտա-
սանեց.

—Գուցէ նա որոնում էր իր որդուն, որ զինուոր էր
թնդանօթաձիդ զօրքի մէջ և որի մասին նա լուր չունէր:

Միւսը պատասխանեց:

—Շատ կարելի է:

Ես իմ կենանքում շատ սարսափելի բաներ եմ տեսել, բայց
այստեղ չը կարողացայ չարտասուել: Ես զգացի այդ մեռածի

առաջ, այն ցուրտ ու մութ տաղիարակի մէջ, այս սպանուած անյայտ կնոջ գաղտնիքի առաջ այն, ինչ անուանւում է բառովս՝ «սարսափ»...

Ժ Ո Չ Ո Վ

(Պարզի հանաբ)

Հաւախուել էինք բազմաթիւ հայեր
Մի շատ կարեւոր, մեծ գործի համար.
Ժողովում Կիրքը—մեզ նախագահ էր,
Ռւունցը—հուեսոր, Ոխը—քարտուղար:

Եւ ակնթարքում մենք իրար անցանք,
Քիչ մնաց բանն հասնէր տուրուղըմփոցին...
Վերջն էլ ժողովը քողինք, հեռացանք,
Մազի չափ մի շահ չը բերած գործին...

Միայն դուրս գալիս, դըռան մօս անձայն
Տեսանք մի էակ՝ վիզը ծուռ կանգնած.
Արդարութիւնն էր այդ հալածական,
Մրին նախագահն ժողով չէր քողած...

ԱԼ. ՇԱՏՈՒՐԵԱՆ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵԻ ԻՉ

(25-ամեայ գործութեաբեան առիբուլ)

«Մի մարդ, որ ձգտում է գիտութեան, պէտք է իրան բացառապէս միայն նրան նուիրէ, մոռանայ աշխարհն էլ, երջանկութիւնն էլ, մարմնանայ նրա մէջ և լինի նրա զօրավիզն, նրա հիմքը, նրա խօսքը», ճգնում է ապացուցանել մի ինչ-որ փիլիսոփայ, Սենկեիչի առաջն մանրավէպերից մէկի մէջ («Բղուր»), աւելի աշքի առջեւ ունենալով տպաւորութիւն գործելը, քան թէ՝ ճշմարտութիւնը:

«Թու. թնդ գերմանացիք պսակուեն այդպիսի գիտութեան հետ, ոչ թէ մենք», բողոքում է փիլիսոփայի բարձրահնչիւն բառերի գէմ ընդգիմախօսը, որին ակներեւ կերպով համակրում է ինքը հեղինակը: «Ամ կարծիքով, գիտութիւնը մարդկանց համար է, ոչ թէ մարդիկը գիտութեան համար: Թէ չէ՝ այս ինչ է: Այն ժամանակ, երբ ժողովուրդը սովից ու ցրտից մեռնելիս կը լինի, գու քեզ համար զբաղուած կը լինես լրյուղ և նրա համար ոչ թէ օգնական, այլ՝ բեռ կը լինես...»:

Ահա հէնց այսպիսի օգնական, ոչ թէ բեռ կամեցել է լինել ինքը Սենկեիչը իր աւելի քան 25-ամեայ գործունէութեան միջոցին՝ թէ լեհական ազգի և թէ ամբողջ մարդկութեան համար:

Մանր հանդամնքների մէջ է անցել Սենկեիչի պատանեկութիւնը: Ծնուելով 1846 թուին Լիտուայի Wola Oszejska-ում, նա 17—18 տարեկան հասակում ականատես էր այն ապարդիւն ջանքերին, որ լեհական հասարակութիւնը, եւրոպական օգնութեան կոյր յօյսերով յափշտակուած, անում էր իր քաղաքակրթութեան ինքնուրոյնութիւնը վերաստեղծելու համար: Այդ օրերից անմիջապէս յետոյ Սենկեիչը մտնելով Վարչավայի Գլխաւոր

դպրոցը (այժմեան համալսարանը), իր ուսանողութեան տարիներում յաճախ առիթ էր ունենում տեսնելու, թէ ինչ անծայր հիասթափունք է տիրում շուրջը բուրու խաւերի մէջ և որպէս մութ է, անորոշ է ապագան... Այդ միջոցին արդէն նա մամակցում էր գրականութեանը, լոյս ընծայելով զանազան պարբերական հրատարակութիւնների մէջ իր առաջին, քննադատական ու հրապարակախօսական յօդուածները, որոնք սակայն շուտով սկսեցին տեղի տալ գեղարուեստական երկառիրութիւններին Լիտոս (լիտացի) ծածկանուան տակը Բայց նրա առաջին մանրավէպերը չը կարողացան ընդհանուրի ուշագրութիւնը դարձնել իրանց վրայ. այդ ժամանակ լեհացոց հասարակութեան ամբողջ հետաքրքրութիւնը գրաւել էին կրաշեսկու բազմահատոր պատմական վէպերը, որոնք, տեղափոխելով ընթերցողների երևակայութիւնը տժող ոյն ներկայից պայծառ անցեալը, կարծես սփոփում էին խոցուած զգացմունքները: Բայց ահա լոյս են տեսնում Սենկելիչի «Երգիծաբանական նկատողութիւնները Վարչելլայի պայուսակից», յետոյ՝ «Կեանքըց ու ընութիւնից» պատկերները, ապա՝ «Հանեա», «Պատկերներ ածուխով»: Պարզ էր, որ ծագում էր արտասասփոր մի տաղանդ. բոլորն էլ սկսեցին հարց ու փորձ անել, թէ ով է այդ Լիտոսը: Այնուհեաւ հետզիւետ սկսեցին տպագրուել նրա հոչակաւոր ճարապարհորդական նամակները Ամերիկայից, որոնց մէջ զարմանալի գեղարուեստական հմտութեամբ նա իր անձնական ճանապարհորդական միջնադէպերի նկարագրութեան հետ հիւսում է այցելած աեղերի մանրակիւտ ուսումնասիրութիւնը: Միջնադէպերից մի քանիսը միշմի ամբողջական մանրավէպի տպաւուրութիւն են թողնում, միւսները վառ պատկեր են ներկայացնում ամերիկական կեանքի զանազան կողմերի, զանազան գառակարգերի, զանազան աեղերի: Այս ճանապարհորդութիւնն ընդլայնեց Սենկելիչի հասարակական աշխարհահայեցողութիւնը, ծանօթացնելով նոր մարդկութեան այնպիսի որորանների հետ, ուր գաղքակարգերի, զանազան աեղերի: Այս ճանապարհորդութիւնն ընդլայնեց Սենկելիչի հասարակական աշխարհահայեցողութիւնը, ծանօթացնելով մարդկութեան այնպիսի որորանների հետ, ուր գաղքակարգերի, զանազան աեղերի:

գերի բազմակողմանի ուսումնասիրութեան շնորհիւ, և արտասահմանից վերադառնալով՝ նա առաւել ևս մեծ եռանդով սկսեց գործել այն ընկերական շրջանի մէջ, որ յայտնի է լեհացոց գրականութեան մէջ «Երիտասարդ մամուլ» անունով։ Այս խումբը հետզհետէ մի քանի թերթեր հրատարակեց, որտեղ աշխատակցում էր, երբեմն նոյն իսկ խմբադրական պարտականութիւններ էր կատարում Սենկելիչ։ Ընկերների մեծագոյն մասը կրթուել էր Գլխաւոր Դալբոցում նրա հետ միասին, և նրա ընդարձակ գիտութիւնն ու զարմանալի հեզ, հաշտ, գրեթէ կանացի բնաւորութիւնը, որի շնորհիւ իր կեանքում ոչ մի անձնական թշնամի չէ ունեցել, դարձնում էին նրան այս խմբի կենդրոն։ Այս շրջանում նա գրեց եանկօ երաժիշտ, Հացի համար, Պօզնանի ուսուցչի յիշատակարանից, Բարտէկ յաղթող և քանի մի ուրիշ զրոյցներ, որոնց մէջ նկատում է թափիծ ու խորին յոռետեսութիւն։ «Հաղիւ թէ կարելի է հերքել, որ Սենկելիչի յոռետեսութեան հիմնական գիծը սրտամաշ գիտակցութիւնն է, թէ մեր անձնական ջանքերը ոչինչ են ընդհանուրի բարօրութեան գործում, հաւատի բացակայութիւնն է, թէ գոյութիւն ունեցող պարագաները երբ և է լաւանալու են, գիտակցութիւնն է, թէ իրողութիւնները իրանց անողոք տրամաբանութիւնն ունեն, որ մեր տրամաբանութեան հետ չէ հաշտում, և մի ծանր զգացում է, թէ մենք ստրուկ ենք արտաքին, երբեմն նոյն իսկ մեքենայական հանգամանքների» (Շեպելիչ)։ Առաքինութիւնը ոտնհարուած է անողորմ ոյժից, և մենք պէտք է անտարբեր նայենք այդ ոյժի յաղթանակին—ահա Սենկելիչի մոտածողութեան վերջակէտը։

«Երիտասարդ մամուլ» վաթսունական և եօթանամնական թուականներին տեսնում էր շուրջը թէե ճորտութիւնից ազատուած, բայց գեռ ևս մտաւոր թանձր խաւարի, յետին աղքատութեան, վայրենութեան մէջ ընկզմուած գիւղական ու քաղաքային ստորին դասակարգ, կեանքից կտրուած ինտելիգենցիա, որի միջից դուրս էին գալիս ժողովրդական տղիտութիւնը շահագործող մարդիկ, կամ ազգասիրական դիմակով փայլող «փրկողներ», կամ, վերջապէս, ինքնահաւանութեամբ մուլեգնած, մեքենայաբար իրանց պարտականութիւնները կատարող բժամիտներ։ Տեսնում էր հոգեորականու-

թիւն, որ խօսում էր միջնադարեան աղանդի, վերջին դատաստանի, գժոխքի մասին, իսկ երբ գիւղացին նրան դիմում էր օդնութիւն խնդրելով ամենազաղելի բըռ-նութեան դէմ, կարողանում էր միայն մի խորհուրդ-տալ՝ դիմել Աստուծուն և իր անքախտութիւնը նկատել իբրև արդարացի հատուցումն մեղքերի համար։ Շըրջանի հայեացքների ամենամունդ արտայայտիչն էր Սենկելիչը, և այս անկեղծ ժողովրդասիրութիւնը շուտով նրա համար հռչակ հանեց։ Յարձակումները ազնուականութեան ու հոգեորակականութեան դէմ՝ բազմաթիւ գըրականական հակառակորդներ ստեղծեցին, որոնք սկսեցին մեղադրել նրան, թէ աշխատում է խորտակել լեհ հական կեանքի դարեւոր նեցուկները։ Սակայն նրանք չը կարողացան նրա այն համոզմունքը խախտել, թէ ամեն մէկը պէտք է աշխատի «ժողովրդի օդնականը լինել և ոչ թէ բեռոք»։

«Մարդիկ պէտք է մտածեն տրամաբանօրէն, և որովհետեւ նրանք կամենում են ապրել, ուստի պէտք է օգու աշխուժութիւն մթերեն, ասում է Սենկելիչը իր մի քննադատութեան մէջ։ Ինքն ուզում էր ապրել, ուզում էր, որ իր ժողովուրդն էլ ապրէ, ուստի յոռետեսութեան, հիասթափմունքի վրայ կանգ առնել չէր կարող։

Մի քանի անգամ իր հայեացքը լեհական գիւղը ձգելով ու նրա ներկայի մէջ ապագայի իդէալներ ըլքանելով, նա դիմեց անցեալին։ «Այնտեղ ամենը այն-պէս ապշեցնում է կորովութեամբ ու վեհութեամբ՝ ժամանակակից կեանքի ոչնչութեան հետ համեմատած», գրում էր նա իր բարեկամներից մէկին նամակի մէջ։ Վաղուց է, որ նրան գրաւում էր XVII դարի լեհական արիւնալի պատերազմների ժամանակը, և ահա 1884 թուից սկսում է երեալ նրա «Հրով ու սրով» պատմական վէպը, որին յաջորդեց իբրև շարունակութիւն «Զրհեղեղ» և ապա «Պան Վոլովիյովսկի»։ Բոլորովին ապահովուած նիւթական վիճակը թոյլ էին տալիս նրան լիովին անձնատուր լինել պատմական աղքիւրների բազմակողմանի ուսումնասիրութեանը և իր մեծ առաջնորդի գեղարուեստագիտական հակումներին։

«Հրով ու սրով» վէպի առաջին գլուխ տալադրելուն պէս չը տեսնուած օգեստութիւն տիրեց լեհացի հասարակութեան մէջ։ Ծառաներ, դռնապաններ, մանր աստիւ-

ճանաւորներ, ուսանողներ, ազնուազարմ մեծաւորներ, կառապաններ—խոնուում էին տպարանի առջև փողոցում; կանգնեցնելով անց ու դարձը և սպասելով թերթի համարի լոյս տեսնելուն, որտեղ տպագրուումէր վէպը Ոչ մի խօսակցութիւն չէր լինում այնպէս, որ չը սկըսուէր կամ չը վերջանար վէպի առիթով ծագած վիճաբանութիւններով. հերոսների մասին այնպէս էին խօսում, կարծես նրանք ներկայումն գեռ կենդանին լինէին. աշակերտները, իրանց ծնողներին նամակներ գրելիս, անպատճառ հաղորդում էին, թէ ինչ է արել պան Սկրժետուսկին կամ ասել պան Զագլօբան (վէպի հերոսները): Կանայք նամակներ էին գրում հեղինակին՝ աղաւելով, որ վրկի Սկրժետուսկուն, մեռած հերոսների յիշատակին հոգեհանգիւտ էին կատարել տալիս և այնու «Նրով ու սրով» վէպի մէջ նկարագրուած է Լեհաստանի կոխւը կազմակների ու Բոզդան Խմենիցկու դէմ, որի օրու Սալօրօսիան անցաւ ուսւաց թագաւորների ձեռքը. «Զրհեղեղի» մէջ՝ եան Կազիմիր թագաւորի կոխւը շվեդացոց դէմ՝ քաղաքական և գրական աղաւութիւնը պաշտպանելու նպատակով, իսկ «Պան Վոլոգիսովակի»-ի մէջ տրուում է XVII դարի աղնուականութեան ընտանեկան կեանքի պատմութիւնը՝ Նորերս Սենկեիչը հրատարակել է նաև «Սուսերակիրներ» պատմական վէպը, որ գրուած է նախորդ երեքի ուղղութեամբ և նկարագրում է լեհացիների կոխւը Տետօնեան ասպետական ուխտի դէմ, որ բուն էր գրել Վիսլայի գետաբերանի մօտ:

Բայց ինչով էր ոգեսորում նրան այս արիւնաշաղախ գարը, որտեղ իշխում են ֆիղեքական ոյժն ու ճարովի կութիւնը: Ի՞նչպէս կարող էր >XIX դարու կրթուած մարդու երևակայութիւնը որ և է բաւականութիւն, յագուրդ գտնել այս վէսքերի մէջ, որտեղ լսում է վիրաւորների հառաջանքը, չախչախուած սկզբների ճռոխւնն ու գետին տապալուսդ թշնամու գրմիոցը, որտեղ գլուխները թոշում են, լեզուն փրփրով է ծածկում, շրթունքից ցայտում է արեան «ալիքը»:

Ի հարկէ՝ թէ լնթերցողներին և թէ մանաւանդ հեղինակին այս տեսարանները չեն, որ հիացնում էին Սենկեիչը չէր գտնում ներկայում մի այնպիսի գործ, որի մէջ «անհատական հոգին ձուլուելիս լինէր ընդհանուրական հոգու հետ», իսկ այն հեռաւոր անցեալը, իր

վայրենութեամբ հանդերձ, վարանում չը գիտէր, այլ կոտորած, աւեր ու մահ սփռելով, ջղերին սարսափելի աշխատանք տալով՝ ծառայում էր ոչ թէ անհատական բարօրութեամնը, անհատական երջանկութեամնը, այլ արդարութեան դաշտավարին, որպէս այս արդարութիւնն այն ժամանակին էր հասկացւում, ծառայում էր ընդհանուր բարօրութեան, հայրենասիրութեան, որ բոլոր գործիչների զգացմունքները ի մի էր ձուլում, գրգում էր մի ընդհանուր աշխատանքի, յափշտակում էր, ոգեւորում էր մինչև հերոսութիւն։ Ահա Սենկելիչին դրաւում էր այն ժամանակուայ մարդկանց այս անդրդուելի հաւատը դէպի իրանց գործի սրբութիւնը, հաւատը, որ չո՞նի ժամանակակից հասարակութիւնը։

Կարծես, հէնց հին և նոր մարդու հակադիր լինելը ընդգծելու համար, Սենկելիչը շատ շուտով իր սպատմական վէսլերից յետոյ ձեռնամնուխ եղաւ «Առանց դաւանանքի» վէպի ստեղծագործութեան^{*}։ Այս գործը, նկարագրելով լեհացի ազնուատոհմ, ապահովուած մարդու հոգեկան վիճակը, միաժամանակ տալիս է մի համաշխարհային նշանակութիւն ունեցող տիպարի սպառկեր, որ բնորոշ է առհասարակ մեր «դարավերջի» կրթուած հասարակութեան համար։ Այս վէպի մէջ Սինկելիչի տաղանդը լիովին ցոյց տուեց իր բոլոր լաւագոյն յատկութիւնները—զարմանալի զարգացած գեղարօւեստական ճաշոկ, նկարագրութեան անաշառութիւն (օբեկտիւիսմ), իրական կեանքի խորին ըմբռնոցութիւն, ուշալական ոգի և նուրբ հոգեբանական դիտուղութիւն։ Դրուածքի ձեւը—յիշատակարանականը—ամեն հնարաւորութիւն էր տալիս հեղինակին իր դլիսաւոր հերոսի ներքին կեանքի ամեն մի ելեէջին հետեւելու և լիակատար կերպով լուսաբանելու այն հիւանդութիւնը, որ թոյլ չէ տալիս ժամանակակից մարդուն ամենայն անձնուիրութեամը մի գաղափարին ծառայելու։

Վէպի հերոս լէօն Պլօշովսկու փիլիսոփայաբար զարդացած միտքը չէ կասովանում ոչ մի գործի, ոչ մի համոզմունքի վրայ հանդշել, որովհետեւ վերլուծական ուժով քրքրում է ամեն ինչ—և՛ փառքը, և՛ սէրը, և՛ մահը, և՛ յաւիտենականութիւնը, և՛ ամեն տեսակ հաւատալիքները, և ամենը հերքելով՝ հարցնում է ինքն

*) Հայերէն թարգմ. պալ. Տ. Յովհաննիսեանի և Խ. Թաղիանոսեանի

իրան՝ որն է ուրեմն ճշմարիտ, ու տարեկուսուած կանդանում է՝ «ը գիտեմ»-ի վրայու «Երբ խօսում եմ սիրոյ կամ կեանքի մի ուրիշ գէպքի մասին, ես ասում եմ ու դրում եմ այն, ինչ որ այսօր եմ մտածում, — նկատում է նա, — իսկ ինչպէս վաղը կը նայեմ նոյն հարցի վրայ— ը գիտեմ» Ա՞հ, եթէ գիտենայի, թէ որ և է իմ հայեացքը, որ և է համոզմունքը, որ և է կանոնը կը գիմանայ թերահաւատութեան (սկեպտիցիսմի) վաղուայ փշելուն, երկու ձեռքով կը բռնէի նրանից, իմ կրօնը կը ստեղծէի նրանից և կը լողայի՝ բոլոր առագաստներս արձակած, արևի պայծառ լոյսով, փոխարէն խաւարի և դատարկութեան մէջ՝ խարիսափելու»: Պլոշովսկին մեր ժամանակի Համբէտն է, բայց Համբէտը գոնէ սիրոյն, գոնէ ընկերական զգացմունքին է անձնաւառը լինում, իսկ նա այս էլ չէ կարող, որովհետեւ այս էլ է ենթարկում իր թերահաւատութեան, ու անվերջ անբախտ է: Անբախտ է նրա համար, որ «ը գիտէ կամենալ», որ իր կամքի առջեւ անկարող է մի այնպիսի նպատակ դնել, որ վաղը իր վերլուծութեամբ չը տապալէր: Նա միայն երազումն է տեսնում մի կեանք, որ տարբեր է «մերինից. լոյսն այնտեղ աւելի պայծառ էր ու շոյիչ. օդի մէջ զգացւում էր քաղցր զով, և գլխաւոր տարբերութիւնը նրա մէջն էր, որ անհատական հողու կապը այնտեղ աւելի սերտ էր — սերտ այն աստիճան, որ անկարելի էր ջոկել՝ նրտեղ է վերջանում անհատը և նրտեղ է սկըսւում ամբոխը»: Եւ կեանքի մէջ չէր գտնում այս կապը, որ կարողանար իրան հաւատ ներշնչել գէպի ձեռնարկած գործը և հանգստութիւն տալ վարանող սրտին: Այսպիսի մարդիկ չէին կարող «օդնական» լինել ժողովրդին: Նրանք ծծում էին հէնց իրանց հիւթերը:

«Առանց դաւանանքի»-ից յետոյ Սենկեիչը հրատարակեց «Պոլանեցիիների ընտանիքը» մեծ վէպը: Այստեղ հերոսը պակաս բնատուր ընդունակութիւններ ոււնի և աւելի սահմանափակ զարգացում, քան թէ Պլոշովսկին: Նա էլ ազատ չէ եղել կասկածներից ու թերահաւատութիւնից, բայց կեանքի գրական ու լաւագոյն նպատակը գտել է անձնական բարօրութեանը ձգտելու մէջ: Եթէ չէ կարելի կտրական կերպով պատասխանել բոլոր՝ «ինչի» հարցերին, պէտք չէ ձեռները ծալած նստել, այլ պէտք է աշխատել— ինքը գործը

պատասխան կը տայ կեանքի հարցերին։ Պօլանեցկին
ոչ մի միջոցի առաջ կանգ չէ առնում իր նիւթական
ապահովութիւնը հիմնելու համար, և վերջը տոկունու-
թեամբ ու հաստատամտութեամբ սարքում է և բախ-
տաւոր ընտանեկան կեանք, որից յետոյ սկսում է նրա
համար «կեանքի միակերպութիւնը կամ, աւելի ճիշտն
առած, պայծառ անդորրութեան և երջանկութեան միա-
կերպութիւնը»։ Բայց իսկապէս ինչ հասարակական նը-
շանակութիւն ունի այս անդորրութիւնն ու երջանկու-
թիւնը։ Այստեղ ևս «անհաստական հողին չէ ձուլում
ընդհանրական հոգու հետ», այստեղ ևս տեսնում ենք
«մի հսկայական բարոյական այլանդակութիւն հերոսի
մէջ, որ մի ստոր շահագործող է, զուրկ ամեն բարոյ-
ական կապից ժողովրդի հետ, որի գժբախտութիւննե-
րից օգուտ է քաղում սովի տարին հայի վաճառումը
շահագործելով» (Հօֆշտետաէր)։ Պօլանեցկիների անձնա-
կան ու դասակարգային եսականութիւնը չէր կարող Սեն-
կեիչի իրէալը համարուել և այս եսականութեան մէջ նա
չէր կարող գտնել լեհական ազգի ասլագայի գրաւականը։
Եսականութիւնը չէ, որ «ամրացնում է կեան-
քը»։ «Հազար տարի մեղանից առաջ արդէն գիտէին, որ
բարի և բարոյական կարելի է համարել միայն այն,
ինչ որ ամբացնում է կեանքը, իսկ գատարկութիւնն ու
ոչնչութիւնը չարի սահմանների մէջ են»—ասում է մի
տեղ Սենկեիչը, և իր ամենամեծ հոչակ ստացած «Յո-
նրթառ» վէպի մէջ ցոյց է տալիս, որ իսկական երջան-
կութիւն տուողը այն է, ինչ որ հաստատ համոզմնենքի,
կեանքի պարզուոց նպատակի և մանաւանդ եռանդուն
հասարակական գործի հետ է շաղկապուած։ Վէպի մէջ
նկարագրուած քրիստոնէական աշխարհն ապրում է մէկ
զգացմունքով և կատարելապէս ձուլում է անհատական
կեանքն ընդհանրական կեանքի հետ—ոչ մի փարա-
նում, ոչ մի տատանում չը կայ, կեանքի նպատակը
պարզ է։ Այս գրուածքի «հանրամարդկային սիրոյ» մի
հոյակապ փառաբանութիւն է սկզբից մինչև վերջ, մի
սրտաբուզիս պահանջ, որ ժամանակակից մարդու անձ-
նական և հասարակական կեանքը վերանորոգուի քրիս-
տոնէական ճշմարտութեան և սիրոյ պատուիրանների
համաձայն։ Դեռ «Պօլանեցկիների ընտանիքը» վէպի մէջ
հերոսներից մէկն ասում էր. «քրիստոնէութիւնը գեռ
միայն իր ճանապարհի կէան է արել և մասնաւոր յա-

բարերութիւններից այժմ պէտք է անցնի հասարակական յարաբերութիւնների մէջ։ Մայնել Քրիստոսին պատմութեան մէջ, Նրա վրայ հիմնել պատմական իրուղութիւնները—ահա այն նպատակը, որին պիտի ծառայի սլաւօնական աշխարհը։ Առհասարակ լեհական ներկայ հեղինակների մեծագոյն մասի մէջ նկատում է այն հասաթափմանը, թէ եսականութեամբ և բռնի ուժով կարելի է համնել երջանկութեան, ու լուսում է ընդհանրական սիրոյ քարոզչութիւն։

«Յ՞ն երթասը» արտասովոր ընդունելութիւն դտաւ ոչ միայն լեհական, այլ և օտարազգի հասարակութեան կողմից, մասնաւանդ Անդլիայում, Ամերիկայում ու Խոտայում։ Մի քանի տեղ փորձեր եղան նրա հետեւղութեամբ վէպեր գրելու կամ վէպի բովանդակութիւնը բեմական գրուածքի վերածելու Միայն Անդլիայում տարածուել է մօտ 400 հազար օրինակ, իսկ խոտայական ժողովրդական բեմի վրայ սիրելի ներկայացումներից մէկն են այդ վէպի մի քանի պատկերները։

Անկասկած, քրիստոնէական սիրոյ վարդապետութիւնը այժմեան համդատմանքների մէջ ամենաանհրաժեշտն է «քաղաքակիրթ» աշխարհի համար, եւ եթէ գեկտ. Զին Վարշաւայում տեղի ունեցած՝ Սենկելիչի 25-ամեայ գործունէութեան յօբելեանին մասնակցել է ոչ միայն նրա ազգը, այլ եւ ոուսը, անդլիացին, ֆրանսիացին, գերմանացին, խոտայցին, հայը, առհասարակ բոլոր եւրոպական ազգերը, պատճառն հէնց այն է, որ Սենկելիչը կարողացել է զարնու ամեն մի քաղաքակիրթ մարդու հոգեկան չարերին, ցոյց տալով նրան նրա այժմեան խարխափող վիճակը ու կանչելով միահամուռ ողեւորութեան՝ յանուն սիրոյ դէպի ճնշուածները, զրկուածները, թոյերը,—յանուն բոլոր անձնական, աղդային, եսամոլական ձգտումների ձուլման ընդհանրական բարօրութեան հետ...

Սենկելիչը ունի նաև մի քանի բեմական հեղինակութիւններ, բայց սրանք համամատաբար թոյլ բաներ են։ Այժմ լուրեր են պտտում, թէ նա սկսել է մի մեծ վէպ ժամանակակից կեանքից, նոյն իսկ դրամատիկական գրուածք։ Յամենայն գէպս, նա գեռ այն հասակի (54 տարեկան) մէջն է, որ հեռու է զառամութիւնից, և նրա տաղանդը գեռ ցոյց է առափա զարդանալու ընդունակութիւն։ Տաղանդի մեծ դաղտնիքն է՝ կարողանալ ընթեր-

ցողի միտքը խլել շրջակայ իրական կետնքից ու տեղափոխել երևակայական կեանքը, որ աւելի իրական է, քան թէ ինքը իրականութիւնը, այս գաղտնիքին լիովին տիրում է Սենկեիչը:

Խեկապէս յօքելեանը պիտի կատարուէր 1897 թ., որովհետեւ նրա «Փզուր» առաջին վէպը ըսյս է տեսել 1872 թ.: Բայց այդ միջոցին լեհացի հասարակութեան ամբողջ ուշագրութիւնը գրաւած էր Արամ Միցկեիչի ծննդեան հարիւրամեակի տօնախամբութեամբ, և նոյն իսկ ինքը Սենկեիչը ուղղակի յայտարարեց, որ իրանց աղդային մեծ բանաստեղծի ծննդեան հարիւրամեայ տօնախամբութեան տարին ոչ մի ուրիշ անուն չը պիտի յիշուէ, բացի Միցկեիչի անունից, ու ինքն էլ մոտաւ տօնախամբութիւնը կարգագրող յանձնաժողովի մէջ։ Այժմ երախտագէտ լեհացիք հաւաքել են մի գումար ու գընել Սենկեիչի համար մի կալուածք (Օբլենհուրէկ) և հաստանի ամենագեղանկար մասում։ Դեկտեմբերի 9-ին տօնախամբութիւնն ակտուել է մի մաղթանքով Ա. Խաչեկեղեցում, ապա քաղաքային տան մէջ հաւաքուել են բոլոր պատգամաւորները ու իրանց շնորհաւորանքների հետ մատուցել են կալուածատիրական թղթերը։ Ուղերձներ են ստացուել քաղաքակիրթ աշխարհի ամեն ծայրից։ Պատախաններով ուղերձներին, Սենկեիչն ասել է.

«Դժուար թէ կարողանամ խօսքերով արտայայտել իմ ներկայ զդացմունքներս։ Նախկին ժամանակները այսպէս վարձատրում էին պատերազմի դաշտում երեւելի դարձած զինուորներին, իսկ այժմ պիտք է ծառայել հասարակութեանը առօրեայ տոկուն աշխատանքով։ Առտուած օրէնել է իմ աշխատանքը. մի բան էր ինձ պակասում՝ մի կտոր մեր հողից, Հայրենի երկիրը այս էլ է ինձ տալիս։ Ո՞րտեղից գտնեմ նոյնչափ բուռն բառեր, որչափ բուռն է իմ երախտագիտութիւնս։ Սրաիս խորքից կը գոչեմ՝ շնորհակալութիւնն Հայրենի երկրին և թողարքի այն մեծ ժողովրդական սիրտը, որ՝ գիտէ այսպէս զդալ, այսպէս վարձատրել։»

Այս խօսքերի վրայ, որոնք ցոյց են տալիս թէ ինչպիսի վառ սիրով սիրում է Սենկեիչը իր հայրենի հողը, կարող ենք տերլացնել այն բառերը, որ նա դնում է «Առանց դաւանանքի» վեպի մէջ մի յայտնի գրողի

բերանը.—«Փառքը մի ինքնախաբէութիւն է, որով
միայն բարոյական բախտախնդիրը կարող է իր կեանքը
լցնել ու փոխարինել երջանկութեան մնացած տեսակ-
ները։ Ուրիշ բան է համոզմունքը, որ գործդ ապար-
դիւն չէ, որ նա արձագանք է զարթեցնում հասարա-
կութեան մէջ,—սրանով հասարակական դործիչը կարող
է գոհ լինել»։

Այս, Սենկեփք կարող է գոհ լինել, որովհետեւ նրա
գործը հէնց այսպիսի արձագանք է զարթեցնում հա-
սարակութեան մէջ։

ԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

ՊՈԶՆԱՆԻ ՌԻՍՈՒՑՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

(Հենրիկ Սենկեւիչ)

... Լամպի, թէն մի փոքր մօնացրած, լոյսը դարթեցնում
էր ինձ և յաճախ ժամի երկուսին կամ երեքին կէս զիշերից անց
տեսնում էի Միխասին գեռ աշխատելիս: Նրա փոքրիկ և ուժա-
սպառ կերպարանքը, միայն ձերմակեղջնը հաղին, կուցած էր
լինում զբքի վրայ, իսկ զիշերային խաղաղութեան մէջ քնասար
ու տանջուած ձայնը մեքենայարար կրկնում էր լատինական
կամ յունական խոնարհումները նոյն միակերպութեամբ, որով ե-
կեղեցում կրկնում են «Տէր ողորմեա»-ի բառերը: Եւ երբ կան-
չում էի նրան, որ զնայ քնի, տղան պատասխանում էր ինձ.
«Դեռ դասը չը զիտեմ, որոն Վայրիթինկիիչ» Պատրաստած էի
լինում սակայն նրա հետ դասկերը ժամի չորսից մինչև աթը, իսկ
յետոյ ժամի իններց մինչև առանձներկուը, և ինքս չի մանում
անկողին, առաջ քան համոզուէի, որ ամենը զիտէ. բայց
ճշմարիտ՝ այս ամենը շատ շատ էր: Աւարտելով վերջին դասը,
տղան մոռանում էր առաջինը, իսկ յունական, լատինական,
զերմանական խոնարհումներն ու զանազան տեղերի անունները
այնպիսի խասնչփոթութեան մէջ էին ձգում նրա խեղճ զլուխը,
որ քնել չը կարողանում: Գուրս էր սրբնում այն ժամանակ
վերմակի տակից, վասում էր լամպը և նոտում նորից սեղանի
առջեւ երբ նրան սասառում էի, ինդրում էր և արտասաւում:
Յետոյ այն սատիճան ընտելացաց այս զիշերներավ նստելուն,
լամպի փայլին և խանարհումների մբթէրթոցին, որ երբ սրանք
չին լինում, ինքս քնել չի կարողանում: Գուցէ ես պէտք է
թոյլ չը տայի, որ երեխան չարչարուէր ուժից վեր, բայց ինչ
պիտի անէի: Զի՞ որ պէտք է ամեն օր այսպէս թէ այնպէս դա-
սերը սովորէր, որովհետեւ հակառակ դէպքում նրան դպրոցից
կը հեռացնէին, և Աստուած միայն զիտէ, թէ որովիսի հարուած
կը լինէր այս բանը պանի Մարիայի համար, որ ամուսնու վախ-
ճանելուց յետոյ մեալով երկու որբաւիները ձեռին՝ լողոր յոյ-
ու զրել էր Միխասի վրայ: Դրութիւնս ճշմարիտ որ անելանե-

ի էր, որովհետև միւս կողմից տեսնում էի, որ մտաւոր չափազանց լարումը խորակում է տղայի առողջութիւնը և կարող է վտանգաւոր լինել նրա կեանքի համար։ Հարկաւոր էր գոնէ նրան Գիղիքակս ամբասնդել, մարմնամարզութեամբ զարգացնել, ստիպել երկար զրօննել կամ ձի հեծնել, բայց ժամանակ չը կար այս բաների համար։ Երեխան այնքան աշխատութիւն ունէր, այնքան բան անդիր սերտելու, որ ձեռքը իզգին ասում եմ՝ Ժամանակ չը կար։ Տղայի ուրախութեան, առողջութեան և կեանքի համար հարկաւոր ամեն բողէն խլում էր լատիներէնը, յունարէնը և... գերմաներէնը։ Առաւոտները, երբ նրա գրքերը դարսում էի պայուսակի մէջ և երբ տեսնում էի, ինչպէս նրա նիհար ուսերը ծուռում էին այն լիւզանդական հասորների ծանրութեան տակ, սիրոս ուղղակի ճնշւում էր։ Երբեմն խնդրում էի, որ ներողամիտ ու զիջող լինեն նրա նկատմամբ, սակայն գերմանացի ուսուցիչները ինձ միայն պատասխանում էին, որ երեխային փշացնում եմ և երես եմ տալիս, որ Միխասը երեսի բաւական չէ աշխատում և «զրում է» չնշին առիթով։ Ինքս էլ կրծքացաւ տնեմ, մինակ մարդ եմ և գիւրազրդիո, ուստի այս յանդիմանութիւնները քանի՛քանի վայրկեաններս են թունաւորել։ Ամեններից աւելի ես զիսէի, արգեօք Միխասը բաւականի չէ աշխատում։ Նա մի միջին ընդունակութիւնների տէր երեխայ էր, բայց մի այնպիսի անխոնջ և, ամեն քաղցրութեամբ հանգերձ, կամքի այնպիսի ուժով օժտուած, որպիսին առիթ չեմ ունեցել պատահելու ոչ մի ուրիշ տղայի մէջ։ Խեղճ Միխասը բուռն և կոյր կերպով պաշտում էր իր մօրը, և որովհետև նրան ասել էին, որ մայրը սաստիկ դժբախս է, տկար է և որ եթէ ինքն էլ գեռ վաս ստիրի, կարտ է նրան սպանել, ուստի տըղան դողում էր այս մտքից ու ամբողջ գիշերներ նստում էր գրքերի վրայ, միայն թէ մայրիկին չը վատացնէ։ Ազիտողոմ լաց էր լինում, երբ վաս թուանշաններ էր ստանում, բայց ոչ ոքի գլխով չէր անցնում, թէ ինչու էր լաց լինում և թէ որչափ սարսափելի պատասխանատութիւն էր զգում նա այդպիսի վայրկեաններում։ Վա, ումն ինչ դործ։ Ես նրան չէի փշացնում, ոչ էլ երես էի տալիս, միայն թէ ուրիշներից լաւ էի հասկանում նրան և եթէ, փոխարէն յանդիմաննելու նրան անաջողութիւնների համար, աշխատում էի միսիթարել, այդ արդէն իմ բանն է, ինքս քիչ չեմ աշխատել, չարշարուել կեանքիս մէջ, տեսել քաղցածութիւն և ու օր, բախտաւոր չեմ եղել, չեմ լինի բախտաւոր և—Գրողը տաճի՛—մինչև անդամ արդէն ատամներս էլ չեմ սեղմում, երբ այս բանի մասին մտածում եմ. չեմ հա-

ւասում, որ արժ լինի առլենվ, բայց դուցէ այս պատճառով ճըշմարիս կարեկցութիւն ևմ զգում դէպի ամեն տառապողը:

Ես գտնէ Միխասի հասակում, երբ վազվզում էի փողոցներում ազաւնիների ետեից կամ վեց էի խաղում քաղաքային տան առջեն, տնեցել ևմ ուրախութեան և առողջութեան լմ ժամերը: Հազր ինձ չը առնջում, երբ ճանէն էի բնկնում, լաց էի լինում, քանի որ ծեծում էին, իսկ ընդհանրապէս ծախ պէս ազատ եմ եղել և ոչ մի հոգս չեմ ունեցել: Միխասը նոյն իսկ այդ չունէր: Կեանքը նրան էլ կը դնէր զնդանի վրայ ու կը ծեծէր մուրճով, սակայն այնքան գոնէ չահսծ կը լինէր, որքոն երեխայ հասակում սրահաց ծիծակած այն բանի վրայ, ինչ որ մանուկներին զուարձացնում է, զժութիւններ արած կը լինէր ու վազվզած բաց օգում արևի ճառապալիների մէջ: Բայց այսպիսի միաւորում աշխատանքի ու մանկութեան չունէի աչքիս առջեն: Ընդհակասակը, աւանում էի ինչպէս երեխան գնում էր ուսումնարան և վերադառնում այնամեկց զէրքը խոժուած, զրբքերի ծանրութիւնից կուցած, ուժասպաս, խորշոմիերը աչքերի անկիւններում, շարունակ կարծես լացի բոկումը զսակած, ուստի կարեկցում էի նրան ու ուզում էի նրա համար ապաւ ին լինել:

Ինքս վարժապետ եմ, թէի մասնաւոր, և չը զիտեմ, ինչ պիտի անէի աշխարհիս երեխին, եթէ զեռ հաւասար էլ կորցրած լինէի զէպի ուսման արժէքն ու այն օգտակարութիւնը, որ նրանից առաջ է գալիւ: Սակայն ուղղակի կարծում եմ, որ ուսումը չը պէտք է ողբերգութիւն լինի մանուկների համար, որ բարիներէնը չէ կարող նրանց առողջութեան անդը բոնել, իսկ լուս կամ վաստ արտաւանութիւնը չը պէտք է վորքիկ էսմիների ճակասապրի ու կեանփի խնդիրը վճռիւ:

Կարծում եմ նոյնպէս, որ մանկալարժութիւնն առելի լաւ է իրազործում իր նպասակը, երբ երեխան զդում է՝ իրան քաղցրաթեամբ առաջնորդող ձեռքը, ոչ թէ իր կուրծքը ճնշող ու այն ամենը կոխուազ սոր, ինչ որ սովորել է պաշտել ու սիրել տանր... Մի այնպիսի խաւաբամիտ մէկն եմ, որ երեխ չեմ փոփոխիլ արդէն իմ համոզմանքս այս բանի մասին, որովհետեւ տևելի ու աւելի ամբապնուաւմ եմ նրա մէջ, քանի յիշում եմ իմ Միխասին, որին այնպէս անկեղծօբէն սիրում էի: Վեց տարի էր որ նրա ուսուցիչն էի, սկզբում սրբէս զաստիարակ, յետոյ, երբ մասւ երկրորդ զաստիան, որպէս զասերը հետ կրկնող (ուսպիտիաօր), ուրեմն ժամանակ ունեի նրան սիրելու: Վերջապէս, ինչու պիտի ծածկես ինքս ինձնից, ինձ համար թանկազին էր իրեն ինձ համար ամենաթանկազին էակի

որդիք: Երբեք նրա մայրը չը գիտէր այս բանի մասին և երբեք չի գետենալ: Յիշում եմ, որ ես... մի ինչ որ պան վավրժինկերէ եմ, մասնաւոր վարժապետ, այն էլ տկար մարդ, իսկ նա՝ հարուստ աղջուական տան աղջիկ, մի խօսքով պանի (տիկին), որի վրայ չէի համարձակութիւ աչք բարձրացնել: Բայց որավիետե կենաքից մասուած մնանակ սիրուը վերջապէս պէտք է մի բանին կաչի, ինչպէս մի բանի է կազում ալիքով օրօրուող խեցին, ուստի իմ սիրու նրան է յարել: Ի՞նչ առնեմ. և վերջապէս ի՞նչ է այս նրան վիճառում: Չեմ ուզում նըրանից աւելի լոյս, քանի թէ արեից, որ գարունքին իմ տկար կուրծքն է առքայնում: Վեց տարի նրա տան մէջն եմ եղել, ներկայ եմ եղել նրա ամուսնու մահուան բուլէին, տեսել եմ նրան դժբախտ ժամանակ մնանակ, բայց միշտ հրեշտակի պէս, բարի, զտակասէր, գրեթէ սուրբ՝ իր որբայրութեան մէջ ուստի պէտք է այս տեղը հասնէր: Բայց աս սէր չէ իմ մէջ, աս աւելի չուտ իմ հաւասան է:

Միխասը շատ յիշեցնում էր մօրը: Յաճախ, երբ աչքերն ինձ վրայ էր բարձրացնում, թւում էր ինձ թէ նայում եմ մօր վրայ: Հէնց նոյն նուրբ դիմագծերն էին, նոյն ճակատը՝ խիտ մաղերից ընկնող ստուերով, հէնց նոյն յօնքի մեղմ նկարը, և մանաւանդ գրեթէ միատեսակ ձայնը: Մօր ու որդու տրամադրութեան մէջ նոյնպէս կար մի ընդհանուր բան, մի որոշ հակում դէպի զգացմունքների ու հայեացքների անզուսպ գրգռում: Երկուսն էլ այն տեսակ նեարդային, գիւրազգաց, ազնիւու սիրող էակների շարքին էին պատկանում, որոնք ընդունակ են ամենամեծ անձնուիրութեան, բայց որոնք քիչ բախտաւորութիւն են գտնում կեանքի ու նրա իրականութեան հետ ընդհարուելիս, առաջուց տալով աւելի, քան թէ կարող են ստանալ: Այս տեսակ մարդիկ անհետանում են այժմ, և կարծում եմ, որ մի որ և է այսօրուայ բնագէտը կարող էր ասել նրանց մասին, որ այս գլխից մահուան են դատապարտուած, որովհետև աշխարհ են գալիս սրտի արատով—չափազանց սիրում են:

Միխասի ընտանիքը մի ժամանակ շատ ունեոր էր, բայց—չափազանց սիրում էին... ուստի զանազան փոթորիկները ցիր ցան արին կարողութիւնը, իսկ այն, ինչ որ մնացել էր, ուղիղ է կարիք չէ, չէ նոյն իսկ աղքատութիւն, սակայն նախկին ժամանակների հետ համամատած մի չափառութիւնէ, Միխասը վերջինն էր տոհմի մէջ, և սրա համար էր, որ պանի Մարիան սիրում էր նրան ոչ միայն իրեն իւր հարազատ զաւակի, այլ և միաժամանակ իրին ապագայի իր ամբողջ յոյսը. դժբախտաբար, մայրերին յատուկ կուրութեամբ նկատում: Էր նրա մէջ արտասու-

վոր ընդունակութիւններ։ Տղան ուղիղ որ բժամիտ չէր, սակայն այն տեսակ երեխաներիցն էր, որոնց ընդունակութիւնները, սկզբում մրջակ, զարգանում են միայն մի քիչ ուշ, ֆիզիքական ոյժերի և առողջութեան հետ միասին։ Ուրիշ հանգամանքների մէջ նա կը կարողանար դպրոցն ու համալսարանը աւարտել և օգտակար աշխատաւոր դառնալ ամեն ասպարէզի վրայ։ Բայց այն հանդամանքների մէջ, որոնք գոյութիւն ունեին, միայն չարչարում էր և լաւ իմանալով թէ ինչ բարձր գաղափար ունէր մայրը իր ընդունակութիւնների մասին, իզուր լարում էր ուժերը։

Շատ բան են տեսել իմ աչքերը աշխարհիս երեսին, և վճռել եմ ոչնչի վրայ չը զարմանալ, բայց խոստովանուում եմ, գժուարութեամբ հաւատացի, թէ կարող է գոյութիւն ունենալ մի այնպիսի խառնաշվոթ մթնոլորտ, ուր երեխային չարկքի հասցնէլ հաստատամութիւնը, կամքի ոյժն ու աշխատասիրութիւնը։ Մի ինչ-որ անառողջ բան կայ այս բանի մէջ և եթէ խօսքերը կարողանային սիրովել իմ կակիծն ու դառնութիւնը, ես ճշմարիտ՝ կ'ասէի Համբէտի հետ միասին, որ աշխարհիս երեսին կատարւում են բաներ, որ փիլիսոփաները երազումն էլ չեն տեսել...

Աշխատում էի Միխասի հետ, կարծես այն թուանշաններից, որ նա էր ստանում առաջադիմութեան համար, իմ սեփական առաջան էր կախուած, որովհետեւ երկուսս էլ՝ ևս ու իմ անդին տղաս, ունէինք մի նպատակ, այն է՝ չը կոտրել մայրիկի սիրութ, ցոյց տալ լաւ երկամսեակիներ, երջանկութեան ժպիտ արծարծել նրա շրթունքների վրայ։ Երբ աշողում էր լաւ թուանշան ստանալ, փոքրիկը գալիս էր ուսումնարանից փայլող աշքերով ու երջանիկ։ Թւում էր ինձ, թէ այսպիսի գէպքերումնայնակարծ մածանում էր, թէ մէջքը ուղղում էր։ Նրա՝ սովորաբար աշտում աչքերը ծիծաղում էին այն ժամանակ անկեղծ, մանկական ուրախութեամբ և պսպղում էին երկու ածուխների պէս։ Խսկոյն վայր էր նետում իր նեղ ուսերից զրգերով ծանրաժանուած պայուսակը և աչքերն ինձ վրայ թարթելով առում էր դեռ չէմբից։

—Պան (ապրոն) Վալրժինկնիչ, մայրիկը գոհ կը լինի։ Այսօր աշխարհազրութիւնից ստացայ... ապա իմացէք՝ մրգան։

Եւ երբ ձևանում էի թէ չեմ իմանում, մօտ էր վաղում ինձ հպարտ գէմքով և, վզովս վաթաթուելավ, ասում էր կարծես սկանչիս, բայց շատ բարձր ձայնով։

—Հինգ, ճշմարիտ հինգ։

Երկուսիս համար դրանք երջանիկ վայրկեաններ էին։ Այդ

երեկոնքը Միխասը երազում էր և երեակայելով իրան, թէ ինչ կը լինի, եթէ բոլոր թուանշանները գերազանց ստանայ, առամ էր կէմն ինձ դիմելով, կէմն ինքն իրան.

—Ծննդեան տօնին կ'երթանք Զալեսին, ձիւն զալիս կը լինի—ճմուռուայ սովորութեան պէս—ուրեմն սահնակով կ'երթանք։ Տուն կը հասնենք մթնոլու բայց, օ, մայրիկն ինձ սպասելիս կը լինի, կը զրկի ինձ, կը համբուրի, իսկ յետոյ կը հարցնի թուանշաններս։ Ես դիտմամբ դէքս կը թթուացնեմ, իսկ մայրիկս կը կարդայ։—կրօնից զերազանց, զերմաներէնից՝ զերազանց, լատիներէնից՝ զերազանց, բոլորը զերազանց։ Օ՛, պան վալրժինկիչ։

Եւ խեղճ տղայի աչքերին արտասուֆներ էին երեռում, և փոխարէն նրան զաղելու, ինքս էլ հետեւում էի նրան իմ յոդնած երեակայութեամբ և մտարերում էի Զալեսինի տունը, նրա սպասկառելի խաղաղութիւնը, այն բարձրագոյն, աղնիւ էակը, որ այնտեղ տիրուհի էր, և այն երջանկութիւնը, որ նրան կ'աղջի տղայի վերադարձը զերազանց թուանշաններով։

Օգուտ էի քաղում այդ բուլէներից և խորհուրդներ էի տալիս Միխասին, բայցարելով նրան, որ մայրիկի համար մեծ նշանակութիւն ունի նրա առաջադիմութիւնը ուսման մէջ, բայց նոյնպէս և առողջութիւնը, և որ ուրեմն չը պէտք է լաց լինի, երբ ես իրան զրօնանքի ևմ ասնում, պէտք է քնի այնքան, որքան իրան ասում եմ, և յամառութեամբ չը նստի դիշերներով։ Սրաշարժուած աղան զրկում էր իմ վիզս ու կրկնում։

—Շատ լաւ, իմ անզին պան, այնպէս, այնպէս առողջ կը լինեմ որ... և կը զառնամ այնպէս մեծ, որ ոչ մայրիկը, ոչ էլ փոքրիկ կօկեան ինձ չին ճանաչիլ։

Սրանում էի նաև յաճախ նամակներ պանի Մարիայից, որոնք պատուիրում էին ինձ, որ ինամբ տանեւմ երեխայի առողջութեանը, բայց յուսահաստ թիւամբ ամեն օր համոզւում էի, որ հաշտեցնել ուսումը առողջութեան հետ ճիշտ որ անհնարին էր։ Եթէ աւանդած առարկաները գժուար-լինէին, ևս մի ճար կը զանէի, առեղափոխելով Միխասին երկրորդ գասարանից առաջինը, սակայն նա այդ՝ թէ անպէտք առարկաները շատ լաւ էր հասկանում, ուրեմն ցաւը ուսումը չէր, ցաւը միայն ժամանակն էր և այն գժբախտ զերմանական լեզուն, որին երեխան չէր տիրապետում բաւականաշափ։ Այս բանի ճարն արդէն ոչ մի կերպ չէի կարող զանել և միայն յոյս առնէի, որ երբ կը համուն տօները, հանգստութիւնը կը լրացնի արայի առողջութեան այն պակասորդները, որոնք առաջ էին եկել չափազանց աշխատելուց։

Եթէ Միխատը լինէր աւելի անտարբեր երեխոյ, աւելիք քիչ կ'անհանգստանայի նրա համար, բայց նա խիստպէս աւելի ևս սասափի էր զգում ամեն անաջողութիւն, քան թէ աջողութիւնները Ռւբախութեան և այն հինգերի վայրկեանները, ուրոնց մասին յիշեցի, սակաւադէս էին, դժբախտարար:

Այսովէս սովորել էի նրա դէմքից կարդալ, որ հէնց որ ներս էր մանում, առաջին հինգ հայեացքից հասկանում էի, երբ աջողութիւն ունեցած չէր լինում:

—Վատ թուանշան ես ստացել, հարցնում էի:

—Այո՞:

—Զը դիտէի՞ր:

Երբեմն պատասխանում էր.

—Զը դիտէի. —բայց աւելի յաճախ. —Դիտէի, բայց չէր կորող բացատրել:

Եւ փոքրիկ Ովլիցին, երկրորդ զաստրանի առաջին աշակերտ, որին դիտմամբ հրաւիրել էի, որպէսզի Միխատի հետ միասին պարապի, առում էր, որ Միխատը զինաւորապէս նրա համար է վատ թուանշաններ ստանում, որ չի կարողանում... միաքն արտայայտել:

Քանի աւելի էր երեխան իրան յողնած զգում մաքով և մարմնով, այնքան անաջողութիւնները աւելի յաճախ էին կըրկնուում Նկատել էի, որ երբ կուշտ լաց լինելուց յետոյ նստում էր այսուհետեւ դասեր սերտելու, հանդարա էր լինում և կարծես հանդիսա, բայց այն կրկնադասկակառած եռանդի մէջ, որով ձեռնամուխ էր լինում դասերին, մի ինչ որ յուսահատական և միաժամանակ տեսնդային բան էր լինում Երբեմն էլ զնում էր անկիւնը, երկու ձեռներով սեղմում էր զլուխը և լուռ մընում. զրգուուած երևակայութեան տէր տղան երևակայում էր, թէ զերեզման է փորում սիրած մօր ստների տակ, և չէր իմոնում, ինչ ճար անէ իր զլիսին, և աւզզակի մի պատուող անուի մէջ էր զգում իրան, որից եկը չը կար:

Նրա զիշերով նստելը դասնում էր աւելի ու աւելի յաճախակի: Վախենալսի, չը լինի թէ զարթնելով հրամայեամ նրան զնալ ու քննել, վեր էր կենում կամացուկ, միթութեան մէջ, զուրս էր ասանում լամով նախասենեալը, այսուեղ վստում էր ու նստում աշխատելու: Առաջ քան ես նրան բանեցի, մի քանի զիշեր անց էր կացրել այս կերպով չը վառած չորս պատի մէջ: Ոչ մի ուրիշ հնար չունէի, բացի այն, որ վեր կենացի, ներս կանչէի նրան սենեակը և հետը նորից ացքի անցնէի բոլոր դասերը նրան համոզելու համար, թէ բոլորը զիտէր և թէ զուր իրան ենթարկում էր մրսելու վտանգին: Բայց նա

արդէն ինքը վերջ ի վերջոյ չէր իմանում, ինչ գիտէր և ինչ չը գիտէր: Երեխայի ոյժերն սպառում էին, նիհարում էր, գեղնում: Երբեմն այնպիսի մի բան էր պատահում, որ ինձ համոզում էր, թէ սակայն ինքը աշխատանքը չէր որ ծծում էր նրա ոյժերը: Մի անգամ, երբ աւանդում էի նրան ազգային պատութիւնը, որ «Պատր իր թոռներին է պատմել»—մի բան, որ ամեն օր անում էի պանի Մարիայի պատուերով—Միխար վեր թռաւ ցոլացող աջքերով, իսկ ևս գրեթէ սարսափեցի, տեսնելով նրա դէմքի քննող և մռայլ արաւայտութիւնը, որով գոչեց.

—Պան, տրեմն այդ ճշմարիտ որ հերեաթ չ՞, որովհետե...

—Որովհետե ինչ, Միխար, —հարյնում էի ևս աղջած:

Պատասխանելու փոխարէն, ատամները սեղմեց, իսկ վերջը այնպիսի բռուն լացով լացեց, որ երկար չէի կարողանում նրան հանգստացնել:

Հարցը Ուլլցկուց այս բռնկման պատճառը. չէր կարսղ, կամ չէր ուղղում ասել, հասկացայ սակայն ինքս: Ոչ մի կասկած չը կար, որ լեհացի երեխային պատահում էր լսել զերմանական դպրոցում շատ բան, որ խոցոսում էր նրա զբացմունքները: Այսպիսի խօսքեր ուրիշ տղաների մէկ ականջից մտնում էին, միւսից գուրս գալիս, ոչ մի հետք չը թողնելով բացի գժկամակութիւնից դէսի ուսուցիչը և նրա ամբողջ ցեղը, բայց Միխասի պէս գիւրաղզաց տղան հիւմանգազին զգում էր այդ խօսքերը, բայց չէր համարձակում հակածառել, երկու ոյժեր, երկու ձայներ, որոնց լսելը երեխայի պարտականութիւնն է, բայց որոնք հինց այս պատճառով պէսք է իրար հետ հաշտ լինեն, քաշում էին Միխասին երկու հակառակ կողմեր: Ինչ որ մէկ ոյժը անուանում էր սպիտակ, առաքինի, սիրելի, միւսը արատաւորում էր բորստալի և ծիծաղաշարժ կոչումով, ինչ որ մէկը տոպքինութիւն էր անուանում, միւսը՝ յանցանք: Եւ այս երկպատակութեան մէջ երեխան գնում էր այն ոյժի ետեկց, դէսի որը քաշում էր նրան սիրտը, բայց պէտք է ձևանար, թէ լսում է ու սրտի մէջ է պահում հակառակ խօսքերը, պէտք է ձևանար առաւօտից մինչև երեկոյ և ապրէր այս տաժանելի լուսաղբօսութեան մէջ օրեր, շաբաթներ, ամիսներ... Այս ինչ զրութիւն է... երեխայի համար:

Տարօրինակ էր Միխասի ճակատագիրը: Կեանքի ողքերոգութիւնները սովորաբար սկսում են աւելի ուշ, երբ առաջին տերենները թափուում են երիասարդութեան ծառից.—իսկ նրա համար այն չամնենը, ինչ որ անբախտութիւն է կազմում—բարոյական բռնութիւն, քօղարկուած դասնութիւն, անհանգստութիւն, զուր ճիգեր, մարտնչում դժուարութիւնների գէմ, յոյսի

աստիճանաբար խորառակում,—այս ամենը սկսուել էր կեանքի տամնումէ կամեայ հասակում: Ոչ նրա քամած կերպարանքը, ոչ նրա քամած ոյժերը չեն կարող տանել այսպիսի ծանրութեան: Անցնում էին օրեր, շաբաթներ, խեղճը կրկնառակում էր ճիգերը, իսկ արդիւնքը օրէց օր աւելի փոքր էր լինում, աւելի ևս ողորմնի: Պանի Մարիայի՝ թէև քնքոյշ նամակները աւելի ևս ծանրացնում էին այս բնոր:

«Ասուումծ քեզ օժտել է, Միխաս, արտասովոր ընդունակութիւններով—գրում էր մայրը.—ուստի յոյս ունիմ, որ չես խարիլ այն յոյսերը, որ քեզ վրայ եմ դրել, և որ մխիթարանք կը դառնաս մեր երկրի ու ինձ համար»:

Երբ տղան առաջին անգամ ստացաւ այսպիսի մի նամակ, բանեց ցնցողաբար իմ ձեռները և, պատրաստուելով լաց լինել ակաց կրկնել:

—Ի՞նչ անեմ, պան Վակրժինկիչ: Ի՞նչ կարող եմ անել: Իրաւ որ՝ ի՞նչ կարող էր անել, ի՞նչ ելք կարող էր դանել, քանի որ չէր եկել այս աշխարհ բնատուր լեզուագիտական ընդունակութիւններով և քանի որ չը գիտէր արտայտել իր մոքերը գերամներէն: *

Հասաւ Ամենայն Սրբոց տօների **) ժամանակը, երկամսնեալի թուանշանները բոլորովին մի բան չեն. Երկը ամենաւելարևը առարկաններից տնէր չափաւոր: Նրա ամենախիստ ազաշանքներին ու պաղատանքներին զիջանելով, չուզարկիցի պանի Մարիային:

—Իմ անգին պան, —աղերսում էր նու, ձեռները ծալելով, —մայրիկը չը գիտէ, որ Բոլոր Սուրբերի տօներին են տայիս թուանշանները, իսկ մինչև Ծնունդը գուցէ Աստուած ինձ ուղարմի:

Խեղճ երեխան իրան զուր յոյսով խորում էր, թէ այդ վաս թուանշանները կ'ուզզի, մի բան էլ ճիշտ է, ևս էլ էլ ինձ խարում: Մտածում էի, որ կ'ընտելանայ գալոցական կարգերին, որ կ'ընտելանայ ամեն բանին, կը տիրապետի լեզուին և կ'ուղղի արտասանութիւնը, և նախ և առաջ, որ աւելի և աւելի քիչ ժամանակ կը պահանջի ուսման համար: Եթէ այս չը լինէր, վաղուց վրած կը լինէի պանի Մարիային և ներկայ ացրած իրերի վիճակը: Եւ իրաւ, թւում էր թէ յոյսերս զուր չեն: Իս-

*) Պոզնանեան զպոցներում գերմաններէնն է դասաւութեան յեղուն և աւելի է պահանջում, քան թէ լեհներէնը, որ ոչնչի տեղ է դպրում և արհամարում է, որպէս և իրանք լեհացիք:

**) Նոյեմբերի մէկին:

կոյն «Ամենայն Սրբոց»-ից յետոյ Միխասը ստացաւ երեք գերազանց թուանշաններ, որոնցից մէկը լատիներէնից։ Դասատան բոլոր աշակերտներից միայն նա էր, որ դժուէր որ ցաւծո բայի անցեալ ժամանակն է՝ ցաւծոս սամ, իսկ զիսէր նրա համար, որ ստանալով դրանից առաջ երկու զերազանց, հարցրել էր ինձ, ինչպէս է լատիներէն՝ «ուրախանում եմ» Կարծում էի աղան երջանկութիւնից կը ցնորուի։ Գրեց մայրիկին մի նամակ, որ սկսում էր այս խօսքերով։

«Անզին ու անուշ մայրիկ, արգեօք իմ սիրելիս զիստի, որ ցաւծօ-ից կայ perfectum, ի հարկէ չը դժուէ ոչ մայրիկը, ոչ Լուեան, որովհետև ամբողջ դասատան մէջ միայն ես դժուէի»։

Միխասը ուղղակի աստուածայնում էր մայրիկին։ Այդ օրից ի վեր նա ամեն բողէ հարցնում էր ինձնից գանազան perfekta (անցեալներ) և participia (բայածականներ)։ Ստանալ այդ զերազանցները դասաւ այժմ նրա կեանքի նպատակը Բայց այդ միայն երջանկութեան կարճատես փայլ էր։ Շուտով օրհասական լինական արտասահմութիւնը քանդից այն, ինչ որ կառուցել է աշխատասիրութիւնը, իսկ առարկաների չափազանց քանակութիւնը թոյլ չէր տալիս երեխային նուիրել նրանցից ամեն մէկին այնքան ժամանակ, որքան պահանջում էր նրա ուժապառ լիշտութիւնը։ Մի գէպք ևս նպաստեց անաջողութեանց աւելանալուն։ Միխասն ու Ովիցկին մոռացել էին ինձ ասելու մի գրաւոր դասի մասին և չեին պատրաստել։ Ովիցկին գուրս պրծաւ, որովհետև որպէս առաջին աշակերտ նրան նոյն իսկ չեին հարցրել՝ արգեօք պատրաստել է թէ ոչ, իսկ Միխասը հրապարակական յանդիմանութիւն ստացաւ գոլրոցում և միաժամանակ նրան սպառնացին որ կ'արձակուի։

Ակներե էր որ ենթադրել էին, թէ դժումամբ է ինձանից զասը թագցրել, որ չը պատրաստի, իսկ աղան, որ ամենաչընչին սաափօսութեան ընդունակ չէր, հնար չաներ իր անմեղութեան մէջ համոզելու։ Կարող էր, ուղիղ է, իրան պաշտպանելու համար ասել որ Ովիցկին էլ էր մոռացել իր պէս, բայց այս թոյլ չէր տալիս աշակերտական պատուասիրութիւնը։ Իմ հաւատացնելուն դերմանացիք պատասխանեցին նկատելով, թէ իրախուսում եմ տղայի ծուլութիւնը։ Այս ինձ վրայ քիչ սրանեղութիւն չը նստեց, բայց աւելի մեծ անհանդպատութիւն պատճառեց ինձ Միխասի անոքը։ Այդ օրը երեկոյեան նկատեցի, ինչովէս նա սեղմելավ զլուխը երկու ձեռներով, չնչում էր, կարծելով որ՝ իրան չեմ լառում։ «Յաւում է, ցաւում է, ցաւում»։ Մօր նամակը, որ ստացուեց յաջորդ առաւօտ կանուխ և որի մէջ պահի-

Մարիան քնքոյց խօսքերով զուրդուրում էր Միհուսին նախորդ գերազանցների համար, տղայի համար մի նոր հարուած էր:

—Ո՞հ, լու կը միսիթարեմ մայրիկին,—կանչում էր նա, ծածկելով դէմքը ձեռներով:

Յաջորդ օրը, երբ ուսուերին չէի ձգում պայուսակը դրքերով, տարուքերուեց ու քիչ մնաց՝ ընկներ: Ուզում էի չը թողնեմ գնայ ուսումնարան, բայց ասաց, որ ոչինչ չտնի. խընդրում էր միայն, որ իրան ճանապարհ ձգեմ, որովհետեւ վախենում էր գլխի պոտոյ գալուց: Կէսօրին վերադարձաւ նոր չափաւորով: Ստացել էր մի այնպիսի դասի համար, որ հիանալի դիտէր, բայց նվիշելու ասելով, դէմ էր ընկել ու չէր կարողացել խօսել: Նրա մասին հաստատուել էր վերջնականապէս այն կարծիքը, թէ «հակառակ կարծիքներով և բնազգումներով ներնչած մի տղայ է, թթամին և ծոյլ»:

Վերջին երկու նկատումների դէմ, որոնց մասին դիտէր, մաքասում էր, ինչպէս խեղգուողը ալիքի դէմ,—կասապի, բայց ազպագիւն կերպարով:

Վերջ ի վերջոյ կորցրեց ամեն հաւատ դէսի ինքը, ամեն վստահութիւն սեպհական ոյժերի վրայ. հասաւ այն համոզմունքին, որ ջանքերն ու աշխատութիւնը դուր են, որ պէտք է վաս սովորի, և միաժամանակ երեսիացում էր իրան, ինչ կ'ասի այս բանի վրայ մայրիկը, ինչ ցաւ կը լինի նրա համար այս, ինչպէս կարող է այս նրա առողջամիւնը խորտակել:

Զալեսինի քահանան, որ երգեմն նամակներ էր զրում նրան, մի շատ քաղցրաբարոյ, բայց անշրջանկատ մարդ, ամեն գիրը վերջացնում էր խօսքերով.

«Միխան, յիշիր միշա, որ մայրիկիդ ոչ միայն ուրախութիւնը, այլ և առողջութիւնը կախուած է քո առաջադիմութիւնից ուսման ու բարոյականութեան մէջ»: Յիշում էր, յիշում էր, մինչև անդամ չափից գուրս յիշում, որովհետեւ նոյն իսկ երազի մէջ կրկնում էր ողբալի ձայնով. «Մայրիկ, մայրիկ»,—կարծես նրանից թողութիւն էր աղերսում:

Իսկ արթուն ժամանակ ստանում էր աւելի ու աւելի վատ թուանշաններ: Մինչ այց՝ Քրիստոսի Ծնունդը արագ մօտենում էր և ինչ վերաբերում էր երկարմսեակին, անկարելի էր մողորուել: Գրեցի պանի Մարիային, կամենալով այս առիթով նրան նախազգուշներ: Բացարձակ և հաստատ կերպով ասացի, որ երեխան թոյլ է և ծանրաբեռնուած, որ, հակառակ իր անչափ աշխատասիրութեան, չէ կարողանում գլուխը գուրս բերել և որ հաւանական է տօներից յևոյ հարկաւոր կը լինի նրան ուսումնարանից վերցնել պահել, զիւղում ու նախ և առաջ ամ-

բացնել նրա առողջութիւնը։ Թէև պատասխանից դպացի, որ մայրական ինքնասիրութիւնը մի փոքր խացուած է, այնուամենայնիւ գրում էր, որպէս խելացի մի կին և սիրող մայր։ Զասացի Միխասին ոչինչ այս նամակի մասին և որ մտադիր ենք իրան ուսումնաբանից հանելու, որպէսևս խոյս էի տալիս նրան որ և է սասարիկ յուզմունք պատճառելուց. միշեցի միայն, թէ ինչ էլ որ լինի, մայրիկը գիտէ որ աշխատում է, և կը կարող զանայ հասկանալ որդու անաջնորութիւնը։ Սյս բանը ակներե թեթեռութիւնս պատճառուց նրան, որովհետեւ երկար ու աղիողորմ լաց եղաւ, մի բան, որ մի յայտնի ժամանակից ի վեր չէր պատահել։ Լաց լինելիս, կրկնում էր. «Ո՞քան կակիծ եմ պատճառում մօրս»։ Սակայն մտածելով, որ չտառվ գնալու է զիւզը, որ ուսմնելու մօրը, և փոքրիկ կօհեայն, և Զալսավնը, և քահանայ Մաշինսկուն, ժպառում էր արտասառքի միջից։ Ես էլ նոյն պէս շատապում էի Զալեսին, որովհետեւ արդէն ըոլորովին չէի կարողանում առնել երեխայի տիրութիւնը։ Այնտեղ նրան սպասում էր մօր սիրաը, և մարդկանց քաղցրութիւնը, և խաղաղութիւնը, և համարութիւնը։ Այնտեղ ուսումը նրա համար ունենալու էր հարազատ ու զրաւիչ, ոչ թէ օսար ու ես մըզդող կերպարանք, այնտեղ ամրազջ մինոլորտը հարազատ էր ու մաքուր, և նրանով մանկական կուրծքը կարող էր լի չունչ քաշեր։

Ուստի սպասում էի նրա համար առներին, որպէս փրկութեան՝ և մասներով հաւաքում էի բարեխները, որոնք մեզ նրանցից բաժանում էին և որոնք Միխասին օրեցօր առելի միշա էին բերում։ Թւում էր թէ ամենը նրա գէմ էր երդուել։ Միխասը, որպէս թէ ուրիշներին անբարյականացնով, կրկնին հրապարակական յանդիմանութիւն սատացա։ Սյս բանը արդէն զրեթէ հէնց առներից առաջ էր, ուստի առաւել ես մեծ նշանակութիւն ունեցաւ։ Թէ ինչպէս ինքնասիր ու գիւրազգաց երեխան վերաբերուեց այս պատահարին, յանձն չեմ առնում նշանակութիւն, ինչ խասնչիսթութիւն պիտի սակողաւէր նրա զիսի մէջ։ Պատառ-պատառ էր լինում ամեն բան նրու մանկական կրծքի մէջ ու իր աչքերի առջև նա աւեմնում էր, լոյսի փոխարէն՝ խաւար։ Թեկրում էր, որպէս հասկը քամաց։ Վերջը այս սասմնեմէկամեայ երեխայի դէմքն ընդունեց ուզգակի ողբերգումկան արտացայտութիւն։ այնպիսի երես ունէր, կարծես լացը չարունակ խեղքում էր նրա կոկորդը և կարծես բոնի զարսում էր հեկեւ կանքը, երբեմն նրա աչքերը նայում էին հիւանդ թունակի աչքերի պէս, ապա նրան աիրեց աստրօրինուկ մի մատիսոհութիւն ու քնածութիւն։ նրա շարժուածքները կարծես անզիտակցական

դառան, իսկ ձայնը դարմանալի դանդաղ: Եղաւ սնսովոր կերպալ խաղաղ, հանգիստ ու մեքենացարար հնազանդ: Երբ իրան առում էի, որ ժամանակ է զրօսանքի զնալու, առաջուայ պէս չէր հակառակում, այլ վերցնում էր զդակը և հետեւում էր լուռ ու մունջ: Մինչեւ անզամ զան կը լինէի, ևթէ այս մի անտարբերութիւն լինէր, բայց տեսնում էի, որ անտարբերութեան զիմակի տակ ծածկուած է լարուած, ցաւոպար ինքնուրացում: Նստում էր զասերի, պատրաստում էր տուածք առաջուայ պէս, բայց արդէն աւելի լսաւ սալիրութեան: Երեսում էր, որ մեքենայարար կրկնելով խոնարհումները, մտածում էր մի ուրիշ բանի մասին, կամ աւելի ճիշճ՝ ոչնչի մասին չէր մտածում: Մէկ անզամ, երբ իրան հարցիր, արգեօք արդէն բոլորը վերջացրիլ է, պատասխանեց ինձ իր զանդաղ և կարծես քնարիթաթախ ձայնով «Կարծում եմ, պահ, որ ամենը ի զար է»: Վախենում էի մինչև անզամ լիշել նրա ներկայութեամբ մօր սնանը, զառնութեան այն բաժակը չը լցնելու համար, որից խմում էին նրա մանկակոն շրմունքները:

Օրէցօր աւելի էի անհանդատանում նրա տուազջութեան համար, որում նեան անդադար նիհարում և վերջը զառաւ իսկ որ ուրուականի նման: Նուրբ երակների ցանցը՝ որ առաջ երեւում էր քունքերին, երբ շատ էր յուղուում կամ սպեսուում, ամժմ նկատում էր շարանակ: Գեղեցկայաւ այն ասաթձան, որ դառաւ բոլոր ալին մի տեսակ տուրք պատերի նման: Մարդու սիրալ մղլուում էր այս մանկական, կիսավ չափ հրեշտակային զվիսին նայելիս, որ թառամող ծաղիկի ապաւորութիւն էր թողնում: Արաւաքուստ կարծես ոչինչ չունէր, բայց մարտում էր և ոյժերը կորցնում: Զեր կարողանում արգեն բոլոր զրքերը կրել իր պայտասակում, ևսակ մէջն էի զնում միայն մի քամիսը, մնացածը ինքս էի վերցնում, պամիեան այժմ սամէն օր ինքս էի տանում ու ընրում գալրոցից:

Տօները վերջապէս դրայ հասան: Զալեսինից եկած ձիերը երկու օր է, որ սպասում էին, իսկ պանի Մարիայի նամակը, որ նրանց հետ միասին եկաւ, յայսնաւմ էր, որ այնակ մեզ առմինքն սպասում են անհամբեր: «Ասել եմ, որ, Միթաս, զործերդ ծանր են գնում,—վերջացնում էր պանի Մարիան,—արդէն զերազանցների յոյուր կարել եմ. կ'ու զէի միայն որ քո ուսուցիչներդ էլ այնպէս մտածէին, որպէս ես, որ ինչ որ ոյժերդ սպասում էին բոլորը արել ես և որ լաւ վարքով աշխատում էիր լրացնել անբարար առաջապիմութիւնդ»:

Բայց ուսուցիչները ամեն կազմից այլ կերպ էին մտածում, ուստի երկառմանակը ի գերեւ հանեց և այս յագուը: Վերջին հրապա-

բակական յանդիմանութիւնը վերաբերում էր ուղղակի տղայի վարքին, որի մասին պանի Մարիան նոյնպէս հիանալի կարծիք ունէր: Գերմանական ուսուցիչների աշքում այն երեխան միայն իրան լաւ էր սպահում, որ ծիծաղով էր ուստասիսանում նրանց՝ «լեհական ետամինացութեան», և զոտի ու աւանդութիւնների ծաղը ու ծանակ անելուն: Այսպիսի բարոյադիական հասկացողութիւնների չնորհի, Միխասը, որպէս այնպիսի մէկը, որ յոյս չը տալիս, թէ ասպագյում կարող կը լինի արդիմաւոր կերպով լսել գասաւութիւնը, և որ իզուր ուրիներից տեղ էր խլում, արձակուած էր գործոցից: Այս գասաւալճիոը բերեց եւրեկոյեան գէմ Սենեակում արդէն գրեթէ մութ էր, որովհետեւ դուրսը շատ խիտ ծիւն էր զալիս, և այս պատճառով չը կարողացայ երեխայի երեսը զննել: Տեսայ միայն, որ գնաց գէպի պատռհանը, կանդնեց նրա մէջ և անմիտ հայեացքով լուռ նայում էր ձիւնի փաթիլներին, որոնք պատռում էին օդի մէջ: Զէի նախանձում խեղճի մտածողութիւններին, որոնք այն փաթիլների պէս պէտք է որ պատռելիս լինէին նրա գլխի մէջ, և առելի լսու էի համարում չը խօսել հետը երկամսեակի ու վճռի մասին: Այս կերպով անցաւ մի քառորդ ժամը ծանր լուռթեան մէջ, որի միջոցին գրեթէ բոլորովին մթնեց: Պատրաստուեցի իրերը գարսուելու սադուելի մէջ, բայց տեսնելով, որ Միխասը շարունակ կանդնած է պատռհանի մօտ, վերջապէս ասացի:

—Ի՞նչ ես անում, Միխաս:

—Ճշմարիտ է,—պատասխանեց մի ձայնով, որ դողում էր ու կանգ էր առնում ամեն մի վանկի վրայ, —մայրիկը այժմ նստած է լոլեացի հետ կանաչ առանձնաւենեակում կրակի առջև և իմ մասին է մտածում:

—Գուցէ ճշմարիտ է: Ի՞նչու է ձայնով այդպէս դողում, հիւանդ հօ չես:

—Ոչինչ չունեմ, սպան, միայն թէ սաստիկ մրսում եմ:

Շորերը հանեցի և խկոյն պատկեցրի անկողնի մէջ, խոկ հանելիս, կարելցութեամբ տեսայ նրա նիհարացած ծնկներն ու եղեղնու ցօղունի պէս բարակ թևերը, թէյ խմեցրի ու ծածկեցրի ինչով որ կարելի էր:

—Մի փոքր տաքացար:

—Այն, գլուխս մի փոքր ցաւում է:

Խեղճ գլխիկ, ցաւելու պատճառ ունէր: Տանջուած նրեխան շուտով քուն մտաւ և ծանր շտանչ էր քաշում քնի մէջ իր նմադքիք, խել ես վերջացրի նրա և իմ իրերի դարսելը, յետոյ, ուրախետեւ ինքս էլ ինձ անասողը էի զգում, իսկայն պատկեցրի: Հանգցնելով մոմը, քնեցի գրեթէ նոյն վայրկեանին:

Կէս զիշերին, մօտ ժամի երեքին, զարթեցրեց ինձ լոյսն ու միակերպ՝ ինձ լաւ ծանօթ՝ մրթմրթոցը։ Աչքերս բաց արի, ու սիրսա անհանգիստ սկսեց բարախել։ Սեղանի վրայ վառւում էր լամպը, իսկ սեղանի առջե բաց արած զրբերի վրայ կռացած նստած էր Միքասը միայն շապկանց. նրա այտերը այրուում էին, աչքերը կիսող չափ փակուած էին՝ կարծես յիշողութիւնն աւելի լարելու համար, զլուխը մի փոքր ետ էր ձղուած, իսկ քնատար ձայնը կրկնուում էր.

—Conjunctivus. Amem, ames, amet, amemus, ametis...

—Միխան:

—Conjunctivus. Amem, ames...

Բոճեցի նրա ուսից:

—Միխան:

Զարթնեց ու սկսեց աչքերը թարթել զարթնացած, այնպէս նայելով ինձ վրայ, կարծես չէր ճանաչում:

—Ի՞նչ ես անում. ինչ է, տղաս:

—Պան, —պատապիսանեց, ժպտալով, —կրկնում եմ ամենը սկրբից, վաղը պէտք է գերազանց ստանամ:

Առաջ նրան թերքիս մէջ ու տարայ անկողին. նրա մարմինն ինձ այրուում էր կրակի պէս. Բարեխախտաբար բժիշկը կհնում էր հէսց միւնոյն տան մէջ, ուստի իսկոյն հրաւիրեցի նրան։ Մի բոլէ ձեռքուում պահեց երեխայի զարկերակը, յետոյ ափը դրեց նրա ճակատին, —Միխասը ուղեղի բորբոքում ունէր։

Ա՛հ, երեկ շատ լաներ չէին կարողացել նրա զլխում տեղաւորուել։

Տկարութիւնը արագ ընդունեց անհանգստացնող ծաւալ։ Հեռազբեցի՝ պանի Մարիային և միւս օրը նախասենեակում սաստիկ քաշած զանգը յայտնեց ինձ նրա զալուստը։ Եւ իրաւ, բաց անելով դուռը, տեսայ նրան քաթանի պէս զունատուած, ոհքողը ձգած. նրա մասները անստիգր ուժով յենուեցին իմ ուսիս, և ամբողջ հողին դուրս ցցուեց ինձ վրայ յառած աչքերի մէջ, երբ կարծ խօսքերով հարցրեց.

—Կենդանի է:

—Այո, Բժիշկն ասում է որ աւելի լաւ է:

Ետ քաշեց քողը, որի վրայ նստել էր չնշառութեան եղեամը, և ներս վաղեց երեխայի սենեակը։ Խարդում էի. Միխասը իրաւ որ կենդանի էր, բայց տուելի լաւ չէր։ Զը ճանաչեց մինչեւ անգամ մօրը, երբ սա կողքին նստեց և ձեռքը բռնեց։ Միայն երբ զլխի վրայ թարմ սառուց դրի, սկսեց թերթերունքները թարթել և ուշի աշով գննել իր վրայ կռացած դէմքը։ Ակներե էր

որ նրա միսքը լարւում էր, մաքառելով տագութեան և խելացնուրութեան գէմ, իսկ վերջը նրա շրթունքները շնչացին.

— Մայրիկ...

Մայրը բանեց նրա երկու ձեւներից և նստած մնաց այսպէս նրա կողքին մի քանի ժամ, վրայից չը ձգելով նոյն իսկ ճանապարհի զդեստը։ Միայն երբ այս բանի վրայ նրա ուշադրութիւնը դարձրի, ասաց.

— Ճշմարիտ որ, մոռացայ զվարկս հանել:

Երբ զվարկը հանեց, սիրոս ձմլուեց տարօրինակ զգացմունքից, ահա այս երիտասարդ, զեղանի զլուխը զարդարող չէկ մազերի մէջ խիստ-խիստ փայլում էին արծաթէ թելեր։ Երեք օր առաջ զայցէ նրանք այնտեղ չը կային։

Սյժմ ինքն էր փոխում ազայի սառուցը և դեղերը տայիս Միսասը ետիկց աչքերն էր ման ածում, ուր էլ որ շարժւում էր, բայց նորից նրան չէր ձանաչում։ Երեկոյիան ապատութիւնը սաստիցաւ։ Զառանցանքի մէջ կարգում էր Փօլիեսկու «եղիզներզը» Նեմցեիչի ստանաւորներից, երբեմն խօսում էր գերմաներէն լիդուով, մէկ էլ հոլովում խոնարհում էր զանազան բաժինական բառեր։ Ամեն բռուէ գուրբ էլ փախչում սենետիկց, որովհետև չէի կարողանում այս բոլորին ականջ դնել։ Երբ գեռ առողջ էր, ծածուկ սովորել էր ministrantur *), կամենալով մօրը յանկարծակիի բերել, երբ պիտի գնար գիւղը։ — և այժմ մարմինս փշաքաղւում էր, երբ զիշերացին խողաղութեան մէջ լըսում էի այս տասննմէկամենաց երեխացին մոռհից առաջ միակերպ, հանգչող ձայնով կրկնելիս։ Deus meus, quare me repulisti et quare tristis incedo, dum affligit me inimicus **)

Չեմ կարող ասել, որպիսի ողբերգական տպաւորութիւն էին անսում այս խօսքերը։ Քրիստոսի Ծննդեան նախատօնակին էր։ Փողոցից մնոր ականջներին էր համսում մարդկանց աղմակն, առազակը և սահնակների բօժմների զնդզնդոցը։ Քաղաքը ստանում էր տօնաւկան և ուրախ կերպարանք։ Երբ բոլորավին մըթնեց, պատուհանի միջով փողոցի միուս կողմից երեսում էր վասում մոմերով պսոպղուլ մի տօնածառ, որի վրայ կախուսաւած էին սուկենոծ ու արծաթազօծ փայլուն լնկուղներ, իսկ ծասի շուրջը սպիտակ և թուխ մանկական զվարկներ, օդի մէջ ծածանուող գանգուրներով, թռչկոտում էին կարծես զսականակների վրայ։

*) Պատարագից առաջ կարսացուող աղօթք, նոյնպէս պատասխաններ, որ գասից տրում են պատարագչին։

**) Տէր Սատուած, ի՞նչու մերժեցիր ինձ և ի՞նչու տխոր շրջում եմ, մինչզեռ թշնամին ինձ մօտենում է։

Պատուհանները շաղչողում էին լոյսից, իսկ ամբողջ ներսը հընչում էր ուրախութեան ու գարմանքի բացականչութիւններից: Փողոցից համոզ ձայններից մէջ բացի ուրախ ձայններից ուրիշ ոչինչ չը կար, և ուրախութիւնն ընդհանուր էր գոտնում. միայն մեր փոքրիկն էր, որ կրկնում էր, կարծես մեծ կոկիծով. Deus meus, Deus meus, quare me repulisti? Դարպասի մօս կանգ սուան տղաներ տապանը *) ձեռներին, և շուտով մեզ հասաւ նրանց երգի ձայնը. «Մասւրի մէջն է պառկած, ով կը վաղի, Մանկան վառքը երգելու են»: Ծննդեան գիշերը մօտենում էր, իսկ մենք գողում էինք, չը լինի թէ դա մահուան գիշեր լինի:

Մի բողէ սակայն թւում էր մեզ, թէ աղան ուշքի է եւ կել, որտինեան սկսեց կանչել կօլեային և մայրիկին, բայց այս կարծ տեսեց: Նրա արագ չնչառութիւնը երբեմն բոլորավին կը արւում էր: Այլիս ինքնախարէութիւնն համար տեղ չէր մնում: Այս փոքրիկ հոգին արդէն միայն կիսով չափ էր մեզ մօս: Նրա հոգին արդէն թսել էր, իսկ այժմ ահա ինքն էլ հեռանում էր զէշ պի մի բնչ որ խաւար անդորրութիւն ու յաւախենականութիւն, և արդէն ոչ ոքին չէր տեսնում և ոչինչ չէր զգում, նոյն իսկ չէր զգում մօր զլուխը, որը մեսածի պէս ընկած էր նրա ոտոների վրայ: Անսապրեր էր զանել ու արդէն ևս չէր նայում մեզ, նրա կրծքի ամեն չնչառութիւնը հեռայնում էր նրան ու կարծես մայցնում խաւարի մէջ: Տկարութիւնը հանգցնում էր կեանքի մէկ կայծը միւսու ևուեց: Երիխան ձեռները վերմակի վրայ ընկած արդէն զծագրուում էին մեսած իրի ծանր անշարժութեամբ. քիթը սրանում էր, իսկ զէմքն ստանում էր մի բնչ որ սամն լրջառթիւն: Ծնչառութիւնը աւելի ու աւելի արագանում էր և վերջ ի վերջոյ զառաւ ծխախտի շվչոցի նման: Մի բողէ ես, մի շունչ ես, ու աւազի վերջն հասիկը վայր էր թափուելու աւաղէ ժամացոյցից, վնրջ էր լինելու:

Կէս գիշերին մօս հստատա թւում էր մեզ, թէ արդէն մեռնում է, որտինեան սկսեց խոխոսալ ու հառաջել, որպէս մի մարդ, որի շրթանքները ջարն է կայտում, իսկ յետոյ յանկարծ լուց: Բայց հայելին, որ բժիշկը մօտեցրեց նրա շրթանքին, ծածկուեց դեռ ևս չնչառութեան զոլորչափ: Մի ժամից յետոյ տաքութիւնը յանկարծ սկականց, բոլորս կարծում էինք, թէ արդէն փրկուած է: Ինքը բժիշկը մի փոքր յայս ունեցաւ: Խեղճ ոլանի Մարիամ ուրախութիւնից թուլացաւ:

*) Տապանը մի տնակ է Քրիստոսի Ծննդեան պատմութիւնը ներկայացնող պատկերներով: Ծննդեան տօներին լեհացի տղաները անէ սուն են պատեցնում տապանը ու տօնը շնորհաւորում:

Երկու ժամուայ ընթացքում նա աւելի ու աւելի լաւառնում էր։ Առաւօտեան դէմ, որովհետեւ արդէն չսրբորդ գիշերն էր, որ անքուն անց էի կացնում երեխայի անկողնու մօտ, և որովհետեւ հազս աւելի և աւելի էր ինձ խեղդում, դուրս եկայ նախառանեակը և, սպառկելով խոտէ մահճի վրայ, քոն մոայ։ Զարթեցրեց ինձ պանի Մարիայի ձայնը՝ կարծեցի թէ ինձ է կանչում, սակայն զիշերային խաղաղութեան մէջ պարզ լսեցի։ «Միխան, Միխան»։ Մազերը զիխիս վրայ բիդ-բիդ կանդնեցին, երբ հասկացայ այն սարսափելի նրանակը, որով կանչում էր երեխային, բայց նախ քան տեղից վեր թռչելը, ինքը դուրս վագեց նախառանեակը, ձեռքալ մումը պաշտպանելով և ցնցուող շրթունքներով արտասանեց։

—Միխանը... մեռաւ։

Շնչառապատ վազեցի տղայի մահճակալի մօտ։ Այդուհետ էր Գլուխ ճնշուածքը բարձի վրայ, բաց շրթունքները, մի կէտին անշարժ բենուած աչքերը և լարուած զիմադերը ամենափոքր կասկած չէին թողնում։ Միխանը մեռած էր։

Ծածկեցի նրան վերմակով, որ մայրը՝ անկողնուց վեր թռչելով, նրա նիհարած զիակից քարշել էր, ու փակեցի նրա աչքերը, իսկ յստոյ պէտք է սիրտ տայի պանի Մարիային։ Տօնի առաջին օրն անցաւ յուղարկաւորութեան սասարաստութիւնների մէջ, որոնք ինձ համար մի սարսափելի բան էին, որովհետեւ մայրը չէր կամենում զիջանել դիտիլ և շարունակ ուշաթափ էր լինում։ Սիրար գնաց, երբ եկան դադաշի չափն առնելու, յետոյ՝ երբ սկսեցին զիակը հագցնել, վերջապէս՝ երբ դրին զիասեղանի վրայ։ Նրա յուսահաստութիւնը ամեն բռնէ հանդիպում էր յուղարկաւոր ծառաների սմստարբերութեան, որոնք ընաելացած էին այդպիսի տեսարանների, և փոխում էր զրեթէ խելագարաւթեան։ Ինքը փոստ էր տաշեղը դագաղի մէջ մետափափ տակ, զառանցելով կարծես տագաւոթեան մէջ, որ երեխայի զըլուխը շատ ցածր էր լինի։ Իսկ Միխանը այդ միջոցին պատկած էր մահճակալի վրայ, արդէն նոր շքաղիսան ու սպիտակ ձեռնոցները հաղին, ձգուած, անտարբեր ու պայծառ։

Դրինք վերջապէս մարմինը դադաղի մէջ և տեղաւորեցինք զիակաւեղանի վրայ, իսկ չուրջը երկու շարք մոմեր։ Սենեակը, որի մէջ խեղճ երեխան այնքան լատինական խօսքեր էր հսկովել ու խօսաբնել և գատեր սկրտել, կարծես մասուռի փոխուեց, որովհետեւ փակուած փեղկերը ներս չէին թողնում ցերեկուայ շողը, իսկ մոմերի դեղին աղօտ լսուը տալիս էր պատերին մի ինչ որ եկաղեցական ու հանգիսաւոր տեսք։ Երբէք, այն ժամանակից ի վեր, երբ ստացել էր վերջին զերազանցները, չէի տե-

սել Միխասի դէմքը այսչափ պայծառացած. նրա նուրբ կիսա-
դէմը, առաստաղին դարձրած, քաղցր ժագում էր, կարծես տղան
ախորժում էր մահուան այդ ներդորժութիւնից ու իրան բախտա-
ւոր էր զգում: Լոյսի պսպղոցը նրա դէմքին ու այդ ժափտին
տալիս էին կեսանքի ու քնի կերպարանք: Կամաց-կամաց սկսե-
ցին հաւաքուել նրա ընկեր աղաները, որոնք քաղաքից չէին
մեկնել տօներին:

Երեխաների աշքերը լայնանում էին զարմանքից, տեսնե-
լով մոմերը, դիասեղանն ու գագաղը: Գուցէ այդ վարդիկներին
զարմացնում էր գաւանկերոջ լրջութիւնն ու գերը: Ահա գեռ
նոր իրանց մէջն էր, իրանց պէս մէջքը ծռում էր գեր-
մաներէն գրքերով լցրած պայուսակի ծանրութեան տակ,
ստանում էր վաս թուանշաններ, ենթարկուում էր նախա-
տինքների ու հասարակական յանդիմանութիւնների, իրանցից
ամեն մէկը կարող էր քաշել նրա մաղերից կամ ականջից,
խալ այժմ պառկած էր այնչափ իրանցից բարձր, հոնդիսաւոր,
հանդիսատ ու լսյունի պատաճ: Բոլորն էլ մօտենում էին նրան պատ-
կառանքով ու մի տեսակ չփոթութեամբ—և նոյն իսկ Ռվիցին,
այն առաջին աշակերտը, ոչինչ էր նրա առջեւ: Տղաները մի-
մանց թե հրետով, փախում էին իրար մէջ, որ նա այժմ
ոչնչի հոգ չունի, որ եթէ մինչեւ անդամ Herrg Inspector-ը դար,
նա այլ ևս տեղից վեր չէր թուչի, չէր սարսափիլ, այլ կը ժըպ-
տար հէնց այսպէս հանդիսատ—որ նա այնտեղ բոլորովին, բոլո-
րովին կարող է անել այն, ինչ որ իրան հաճելի է, աղմուկ բարձ-
րացնել, որչափ սիրան ուզում է, և խօսել փոքրիկ թեաւոր
հրեշտակների հետ:

Այսպէս չնշալով, մօտենում էին մոմերի շարքին և «Հոգւոցն
հանդուցելոց» էին ասում Միխասին:

Յաջորդ օրը ծածկը զրին գագաղի վրայ, բեկուցին մե-
խերով ու տարան գերեզմանասուն, ուր ձինի հետ խանուած
աւագէ կոշտերը շուտով ծածկեցին նրան իմ աշքերից... յա-
փտեան:

Այժմ, երբ այս զրում եմ, անցել է արդէն այդ ժամանա-
կից մօտ մի տարի, բայց յիշում եմ քեզ ու խղճում եմ քեզ, իմ
փոքրիկ Միխաս, իմ վաղաթառամ ծաղկիս: Զը գիտեմ, ուր ես,
լսում ես արդեօք ինձ. զիտեմ միայն, որ քո առաջուայ ուսու-
ցիչը օրէց օր աւելի է հազում, որ նրա սիրաը օրէց օր աւելի
է ծանրութիւն զգում ու մենակութիւն, որ գուցէ նա էլ շու-
տով հեռանայ, ինչպէս դու հեռացար...

Թարգմ. լեհերէնից ՍՏ. ԼիՍիցեան

ԵՂԲԱՅՐ ԷՒՆՔ ՄԵՆՔ...

Եղբայր էինք մենք. եւ մի ժամանակ
Խըմբուած իրաւ նես անբաժան սիրով
Մի հայրենական անուն յարկի տակ՝
Գոհ էինք նոյն խոկ եւ ցամաք հացով:
Եւ հրնչում էին մեր ուրախ երգեր
Մեր տնակի ռուրջն Արաքսի ափին,
Երբ զարնան արեւն իր ոսկի ռողեր
Խըմբում էր հեռու սարի կատարին.
Երբ դեռ վառում էր մարզը ցօղալից
Ու մենք զայտ էինք տապամ խըմբով,
Երբ ջռում էինք Սասուծու աշխարհից
Մեզ բաժին տուած արտը քրտինենով.
Երբ ռոգ կեսօրի արեւից այրուած
Հանգչում էինք մենք անոյց սոսուերում,
Երբ դառնում էինք ձեռք ձեռքի տուած
Ու մի յարկի տակ նորից բոլորում:
Եւ այդ սիրելի, բաղր օրեւանում
Նոյն էին եւ մեր վետեր ու հոգուեր,
Եղբայրն իր եղբօր ցաւովն էր տանջում,
Նոյն արտասումն էր թշում մեր աչքեր:

Մեր զայտ ու ձորում բացում է նորից
Գարունը ահա իր արդ ու զարդով,
Նոյն անուշ հովն է փչում սարերից,
Նոյն կանաչ մարզերն են փայլում ցօղով:
Բայց տիառ եւ լուռ է մեր յարկի տակ,
Եւ նրա ռուրջը չեն հնչում երգեր,
Լոկ ես եմ շըզում այսեղ միայնակ
Ու մենակ քրքրում նին ու նոր ցուեր:

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ХVIII ԴԱՐՈՒՄ *)

Գլ. Ա.

ՄԽԻԹԱՐ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ

I

Ցիր ու ցան ապրող, ընդհանուր շահերի համկացողս ւթիւնը կորցրած հայ աղջը XVIII դարի սկզբին ներկայացնում էր մի գրութիւն, որ որքան ժամանակում յուստուու հանդամանքներ ուներ իր մէջ, նոյնքան էլ ցաւալի ու ողբերգական էր:

Այդ միջոցին Սրեելեան Հայաստանի ծայրը կազմող մի լեռնաստան սովասողութեան մէջ էր: Հարաբաղի մի քանի մէջ վեճների լիազօրութեամբ Խարայէլ Օրին ճանապարհորդում էր Եւրոպայում և իր բալոր ընդունակութիւնները դործ էր զնում, որպէսզի կարողանայ ազատութեան դուռ բաց անել հայութեան համար: Օրին մեծամեծ խոստումներ էր անում, հաւատացնում էր թէ հայերը պատրաստ սպասում են և հէնց որ եւրոպական մի զօրաբաժին կ'անցնէ Նրանց երկիրը, իսկոյն կը բարձրացուի սպասամբութեան դրօչակը, որի տակ կը հաւաքուեն տասնեւսկ հազարաւոր զինուած հայեր: Հայ պատգամաւորի ծրագիրները ըարեհաճ ուշադրութեան արժանացան նախ Պիտույշի կուրֆիւրսի մօտ, առա Պետրոս Մեծի արքունիքում: 1701 թուականին Օրին Մոսկուայստմն էր և այդուղ թէ գաղտնի խօսակցութիւնների միջոցով, թէ գրաւոր բացատրաւթիւններով մշակուում էր ոռուսական արշաւանքի ծրագիրը. Ի՞նչ ճանապարհներով պէտք է գնալ, ի՞նչպէս պիտի կերակրուի զօրաբաժինը, յարձակողական ի՞նչ գիրքեր կարելի է դրաւել և հայերը ի՞նչոքս ովիտի օվնեն արշաւող բանակին:

*) Ներկայ դործը կազմում է իմ «Հայկական Տպագրութիւն» աշխատութեան երկրորդ հատորը: Առաջին հատորը նոր լոյս տեսաւ Ե. Հ.

Սա պատկերի ժպտուն, յուսատու կողմն էր: Միւս կողմը, ողբերգականը, ցաւալին՝ ներկայացնում էր արևմտեան հայութիւնը, որ հէնց մինչնոյն միջոցին ալեկոծւում էր կրօնական երկպառակութիւնների մէջ:

Իրարանցումների զվարակոր բնմը Կ. Պոլիսն էր, բայց նըրանք հաւասար չափով յուղում էին թիւրքիայի այն բոլոր տեղերը, ուր կային հայ-լուսաւորչականներ և հայ-կաթօլիկներ: Դեռ երբէք այդ երկու գաւանութիւնների մէջ ընդհարումը այն տատիճան կատաղութեան չէր հասել. գեռ երբէք կրօնով բաժանուած աղջակիցները այնքան մողեռանդութեամբ միմեանց չէին ծուասել: Եփում եռում էր կղերական կրքերի ծովը: Թիւրքաց բանտերը, թիւրանները լցուած էին այնպիսի հայերով, որոնք մեղադրուում էին իբրև ֆրանկներ: Այդտեղ էին ուղարկուում և այն պատրիարքները, քահանաները, աշխարհաւկանները, որոնք անխելքութիւն ունէին խօսելու խաղաղութեան, եղբայրութեան մասին:

Մըրող երկու կողմերն էլ կատաղի էին, Փանատիկոս, անխիղճ: Բայց և այնպէս, մենք պիտի զանազանութիւն որոնենք զրանց մէջ: Տիրապետող մեծ ոյժ և իրաւունքներ ունեցող կողմը հայ-լուսաւորչականներն էին. բայց նրանք ամսամեմատ շատ համբերող էին, քան կաթօլիկ փոքրամասնութիւնը—սա պատմական փաստ է: Թիւրքիան չէր ճանաչում հայ-կաթօլիկ եկեղեցի: բոլոր հայերը ենթարկուած էին Կ. Պոլի հայ պատրիարքի իրաւասութեան: Չը նայած այս հանգամանքներին, լուսաւորչական կղերը այնքան համբերող էր, որ թոյլ էր տալիս կաթօլիկ քահանաներին աղատ մտնել հայոց եկեղեցիները, քարոզել այնտեղ: Այդ աղատութիւնը վայելում էին նոյն իսկ եղուիտները, որոնք քարոզ խօսում էին թիւրքերէն լեզուով *):

Շատ կարելի է որ դաւանական խարութիւնները այն տատիճան չը թշնամացնէին մինչնոյն աղջի անդամներին, եթէ չը լինէին Լոյօլայի աշակերտները: Եղբայրասպան խառնակութիւնների այս տիսուր ներունները չէին ուղում խաղաղութիւն, և չը կար խաղաղութիւն: Նրանք կամենում էին խել հայոց եկեղեցիները, միանգամայն անշատել կաթօլիկ հայերին և արգելել սրանց որ չը գնան լուսաւորչականների եկեղեցին: Կաթօլիկ համայնքի աղջեցիկ անդամները, հարուստ սեղանաւորները, եղուիտական գործիքներ գարձան: Լուսաւորչական եկեղեցուն պատկանող ամիրաններն էլ, ի հարկէ, քնած չը մնացին, և բացուեց սև, զղուելի գործողաթիւնների մի երկար շարք, որ հա-

*) Թօրէն—անրկաթէ դիմակավ մարդլու Կ. Պոլիս, 1870, եր, 64—65.

զարաւոր տառապանքներ բերեց առանց այդ էլ խեղճ ու տան-
ջուող ազգի գլխին:

Կոփոր սաստիկ սուր կերպարանք ընդունեց, երբ երկու
կողմերն էլ ձեռք բերին ուժեղ, կամակոր ներկայացուցիչներ: 1700
թուականին Կ. Պօլիս հասաւ ֆրանսիական նոր գևապան
Ֆէրիոլ, իսկ 1701 թուականին Կ. Պօլսի հայերը իրանց համար
պատրիարք հրաւիրեցին էրզրումի առաջնորդ Աւետիք վարդա-
պետին: Ահա այս երկուուր ախոյեան հանդիսացան միմեանց
զէմ կրօնական հողի վրայ և նրանց մաքառումները նոյն իսկ
քաղաքական մեծ կարևորութիւն ստացան:

Ֆէրիոլի նման գեսպան Կ. Պօլիսը զեռ չէր տեսել: Լու-
դովիկոս ԽIV-ի ներկայացուցիչը ցոյց տուեց թիւրքաց մայրա-
քաղաքում մի անօրինակ գոռողութիւն և կամակորութիւն.
Ֆրանսիան Եւրոպայի առաջին պետութիւնն էր և նրա գեսպանը
հարկաւոր էր համարում ոտի տակ տալ ամեն վայելչութիւն և
կարդ: Երբ նա առաջին անգամ դնում էր ներկայանալու սուլ-
թանին, պալատականները նկատեցին որ նա ունէր իր հետ մի
մեծ սուր և պահանջներին վերցնել սուրբ, որովհետև այդպէս էր
կարգը: Ֆէրիոլը չը կամեցաւ հապատակուել կարդին և այն իսկ
սենեակում, ուր սուլթանը պիտի ընդունէր նրան, տեղի ունե-
ցաւ ընդհարում նրա և մի պալատականի մէջ: Մեծ վեղիրը պա-
հանջնց Ֆէրիոլից կամ կատարել այն, ինչ պահանջում են թիւր-
քաց արքունիքի կանոնները, կամ հեռանալու Եւ գեսպանը ընտ-
րեց վերջնը: Չը կամենալով բաժանուել իր սրբց, նա դուրս
գնաց ունկնդրութեան սենեակից, չը տեսնելով սուլթանին:
Այնուհետև նա տասը տարի գեսպան մնաց Կ. Պօլսում և ոչ մի
անգամ չարժանացաւ սուլթանի ունկնդրութեան: Մի ուրիշ ան-
գամ Ֆէրիոլ մկանց զքօնել հօսֆօրի վրայ մի նաւակում, որ լոլո-
րովին նման էր սուլթանի նոււակին և վերջնիս պէս ունէր ծի-
րանի վարագոյներ: Մեծ վեղիրը սահալուած եղաւ իմաց տաղ
գեսպանին, որ ևթէ նա զբօսանքի դուրս կը գայ այդպիսի նա-
ւակով, ինքը հրաման կ'արձակէ որ ոմքակոծեն նտւակը:

Այս տեսակ գործողութիւնների համար Ֆէրիոլը թիւրքերից
ստացաւ «զիթ գեսպան» (գէլի-էլչի) անունը: Գիթ գեսպանը
սկզբում չափաւորում էր Կ. Պօլսում բոյն դրած եղուխների
յարձակողական ձգտումները, բայց յետոյ բոլորովին ենթարկուեց
նրանց ազդեցութեան և դարձաւ նրանց կոյր գործիքը:

Իսկ Աւետիք պատրիարքը յայտնի էր նրանով, որ էրզրու-
մի մէջ սաստիկ հաղածննք էր համել «ախմարմանների» (հայ-կա-
թօլիկների) զէմ: Խոռվութիւնները այդ քաղաքում վերջացել
էին նրանով, որ հայոց առաջնորդը դուրս էր վոնտել բոլոր

փոքր ի շատէ աչքի ընկնող հայ-կաթօլիկոներին: Այդպիսի քաջագործութիւնների համար էլ նա հրաւիրուել էր Կ. Պօլիս Եւ իրաւ, Կ. Պօլիս համաւելուն պէս նա բաւականաչափ խիստ չը համարեց վաղուց սկսուած հալածանքները կաթօլիկոների դէմ: Նախկին պատրիարք Եփրեմին, որի հրամանով բանտարկուել և չարչարսնքների էին ենթարկուել բազմաթիւ հայ-կաթօլիկոներ, Աւեակը քչեց կջմիսածին, ուր նա պիտի ասղաշնարեր իբրև Փրանկ: Սրանից կարելի է խմանալ թէ որպիսի հրէշաւոր կասաղութեամբ էր բորբսպուած նոր պատրիարքը այլագաւան հայերի դէմ:

Աւետիքը շատ ուժեղ էր, նրա կողմն էր ինքը, Թիւրք կառավարութիւնը: Այդ ժամանակ չէցի-իւլ-իալամի պաշտօնը վարում էր Ֆէյզուլլահը, որ Աւետիքի կրկուցին էր և բաւ ճանաչում էր նրան: Մեծ ազգեցութիւն ունենալով սուլթան Մուստաֆայի վրայ, Ֆէյզուլլահը համարեա իր ձեռքն էր տուել պետութեան զեկը: Հասկանալի է թէ այսքան հզօր մի աջակից ունենալը ինչ ահազին նշանակութիւն ունէր Աւետիք պատրիարքի համար: Նա իսկայն նեթ պաշտօնից պցեց Երուսաղէմի Մինաս պատրիարքին, որին բերել տուեց Կ. Պօլիս և այնտեղ շղթայակապ բանտարկեց: Նոյն վիճակին ենթարկուեցան և ուրիշ հոգեւորականներ: Աւետիքը բանտարկում էր, տուղանքների էր ենթարկում, իր ձեռքալ ծեծում էր այն բոլոր մարդկանց, որոնց նա անհաւատարկիմ, կասկածելի էր համարում և որոնք յանդրդնում էին նոյն իսկ թեթև կերպավ բողոքել նրա գործերի դէմ:

Եղուիտները լարեցին իրանց ամբողջ կարողութիւնը՝ այդպիսի մի հակառակորդին տապալելու համար: Բայց տապալել Աւետիքին այնքան հեշտ չէր. գրգռուել էին ամբոխի ստոր կըրքերը, հարածանքները, բոնութիւնները վրկութեան միջոց էին համարւում և ժողավարքը իր պատրիարքի կողմն էր: Եւ զիջողները, խաղաղութիւնն ու հաշութեան ճանապարհ որոնտիները, ի հարկէ, եղուիտները չը պիտի լինէին: Երբ գեւպան Ֆէրիօլը փորձեց հասկացնել եղուիտների մեծաւոր Բրաքօնիէն, թէ կաթօլիկոների դէմ սկսուած հալածանքը կարող է ընդհանրանալ ամբողջ Թիւրքիայի մէջ, թէ սուլթանը կարող է սաստիկ հրամաններ հանել, որոնք մահացու հարուած կը տային պատականութեան, Լոյօլայի աշակերտը սրատասխանեց. «Եկեղեցին մի ժամանակ աւելի բուռն հարածանքներ է կրել. հայերը պիտի չարչարուել սովորեն. ինքը չէ կարող ընդունել որ կաթօլիկոները ամինավոր հաղորդակցութիւն անդամ ունենալին իրանց հերձուածող եղբայրների հետ և պիտի աչքի առաջ ունենան ամեն-

նսղաւոն չարչարանքներ» *): Եւ ահաբեկումը սաստկանում էր, կուտաղների կզգերը զնալով աւելի և աւելի բռնկւում էին, տարածելով մի հրգեհ, որի մէջ կուռմ-կոփուում էր եղբայրասպան սուրբ: Մարդկի բանակներն էին թափուում, զրկւում էին իրանց ստացուածքներից, թշուառանում էին մի քանի ժամում: Եղան նոյն իսկ նահատակութիւններ: Շատերը սարսափահար փախչում էին կ. Պօլսից:

1702 թուականի աշնանը կ. Պօլսից մի նաւ էր գնում դէպի Զմիւռնիա: Ճանապարհորդների թւում կար մի մարդ, որ հագել էր վաճառականի զգեստ, բայց վաճառական չէր, այլ կրօնաւոր: Սյդպէս ծալտած փախչել թիւրքաց մայրաքաղաքից այն միակ միջոցն էր, որ ազատում էր նրան Աւետիք պատրիարքի բարբարոսութիւններից: Նրա հետ էին երեք նոյնազիսի կեղծ վաճառականներ, որոնք նրա աշակերտաներն էին:

Համնելով Զմիւռնիա, կեղծ վաճառականները իջան ընդհանուր վաճառականական մի սպանդոկում և սպասում էին նաւի, որ պիտի տանէր նրանց դէպի արևմուսք: Բայց մի քանի բարեկամ մարդիկ խնացան թէ ալ են վախսատականները: Եւ ահա այդ բարեկամներից մէկը մի օր վազեց կրօնաւորի մօտ, յայտնեց, թէ քաղաքի գատառողը ստացել է, կ. Պօլսից արքունի հրաման, որի մէջ ասուած է թէ վախսել է մի փրանկացած հայ վարդապետ: Ալէ ալ է նրան որոնել, գտնել և կալանաւորել: Կեղծ վաճառականների գլխաւորը իսկոյն հասկացաւ, որ հրամանը իրան է վերաբերում և շտապեց թաղնուել եղութանների վանքում: Ապա, երբ հոկտեմբերին Զմիւռնիա եկաւ մի նաւ, որ պիտի զնար դէպի Եւրոպա, վախսատականը մեծամեծ վզուշութիւններ գործ դնելով որ իրան չը նկատեն, գուրս եկաւ թաքստի տեղից և մատա: այդ նույը իր աշակերտաների հետ և աւը խարիսխը հանեց և փրանկացած վարդապետը ընդ միշտ հեռացաւ: Թիւրքիայի ավելիքից:

Աւետիք պատրիարքի հալածանքների այս մի մասը, որ ուղղած էր վախսատական վարդապետի դէմ, շատ հարկաւոր էր հայերի մտաւոր վերածնութեան համար: — Զմիւռնիայից Եւրոպա փախչողը Միիթար վարդապետ Սերաստացին էր, Միիթարեան հռչակաւոր միաբանութեան հիմնադիրը:

II

Հայոց մտաւոր վարդացման պատմութիւնը շատ էլ հաւուստ չէ խոշոր դէմքերով: բայց եղածներն էլ մեզ լաւ ծանօթ

*) Թօրէն, եր. 47.

չեն, այնքան չնչին են տեղեկութիւնները, որ պահել է ժամանակը նրանց մասին։ Հեռաւոր հնութիւնից մենք մեծ պահանջներ անել չենք էլ կարող։ Բայց ահա տամութերորդ զարի սկզբին հայկական հորիզոնի վրայ դուրս է գալիս մի խոշոր, նշանաւոր գէմք—Մխիթարը։ Սրդեօք կարող ենք տսել թէ գոնէ նրան լաւ ճանաչելու համար մենք ունինք բաղմակողմանի տեղեկութիւններ։—Դժբախտաբար, ոչ։

Մխիթարը եղել է կրօնաւորական ուխտի հիմնադիր և նրա կենսագրութիւնը գրել ու հրատարակել է այդ խել ուխտը *)— ահա պատճառը, որ իմանալ նրա մասին զուտ ճշմարտութիւն շատ գժուար է։ Մի վանք, մանաւանդ կաթոլիկ վանք, չէր կարող իր հիմնադրին չը բարձրացնել մինչև հրեշտակների դասը։ և զարմանալի չը պիտի լինի այդ վանական տեսակէտից, որ ԽVIII դարի մարդու մասին մենք ունինք այսպիսի տեղեկութիւններ, որոնք աւելի մի հին սուրբի վկայագրութիւն են կազմում, քան մի ճշմարիտ պատմութիւն։

Բարեխաշտական տոսապելները, զանադան տեսիլները, պանչացման տմենաբարձր արտայայտութիւնները այնքան մըթնացըել են Մխիթարի կեսնէքի նկարագրութիւնը, որ շատ գժուար է քայլ առ քայլ հետմել, թէ ինչպէս Փոքր-Ասիայի մի այնպիսի կորած ու խաւար անկիւնում, ինչպիսին է Սեբաստիա քաղաքը, զարգացաւ մի զարմանալի ուժեղ բնաւորութիւն, որ սեփական ջններով ճանապարհ հարթեց կատարեալ մնայատութիւնից դէսի մեծ և յաւիտենական հոչակ, կապեց իր անունը մեր մտաւոր վերածնութեան հետ, զառնալով մի ամբողջ դարաշիլիք սկզբնակատաւ կենսագրական այդ պակասութիւնները հազիւթէ այսուհետեւ էլ լրացրեն Մխիթարի հիմնած միաբանութեան ձեռքով իսկ մենք չունենք ուրիշ աղքաւրներ։ չունենք նրա նամակների և բոլոր դրաւթիւնների ժողովածուն, որովհետեւ կաթոլիկ վանքը առնասարակ չէ սիրում տան զաղտնիքներ դուրս հանել։ Այս պատճառով պիտի բաւականանք այն չատագովական

*) Մխիթարի կենսագրութիւնը ամենից առաջ համառառ կերպով պատմել է Հ. Զամշենմզ իր «Հայոց Պատմութեան» մէջ (Ք., զլ. խե.), ուր, սասմ են, մի մանրամասն կենսագրութիւն, որ գրել է նրա տշակերու և քարառագրա Խառնթէս վարզագետ նվազիացին, բայց այդ գործը մինչև պաօր էլ չէ հրատարակում։ 1810 թուն Վենետիկում տաղարուեց Պատմութիւն կենաց և վարոց Տևառն Մխիթարայ Խերաստացուք, հեղինակութիւն Ստեփանոս Գիւմիք Ազոնց Երբայի Գո միակ փոքր ի շատէ ընդարձակ կենսագրութիւնն է, որի վրայ Մխիթարեանները մինչև այժմ ոչինչ չեն աւելացրել։ 1899 թուն Թաղմակէտի մէջ առգուեց Մխիթարի ուսանաւոր կենսագրութիւնը, բայց դա նուն ներբողն է, ինչ ներկայացնում է Սղոնցի գրուածքը։

գրուածքներով, որոնք մինչև այժմ լոյս են տեսել Մխիթարի մասին և պիտի փորձենք այդ կղերական պահազարումների միջից դուրս բերել գործիչի բնական, մարդկային գծերը, ուշադրութիւնը չը դարձնելով կրօնաւորական այն չափազանցութիւնների վրայ, որոնք աշխատում են իւրաքանչիւր տողի ետևից Աստուծու մաս, Նախարարնամութեան անօթ հոչակել Մխիթարին:

Մխիթարը ծնուել է Սեբաստիա քաղաքում 1676 թուականի փեարգարի 7-ին: Նրա հայրը Մանուկի որդի Պետրոսն էր, մի վաճառական մարդ, իսկ մօր անունն էր Շահրիստան: Երեխան մկրտութեան ժամանակ ստացաւ իր պատվի անունը—Մանուկ, բայց մենք կ'անուանենք նրան Մխիթար անունով, որ արուեց նրան հոգեոր կոչման հետ:

Յայտնի չէ թէ ինչ տեսակ մարդիկ էին Մխիթարի ծնողները, այսինքն ինչ տեսակ աղջեցութիւնների տակ էր նա տանը: Կարելի է ենթադրել որ Պետրոսը ունեսոր վաճառականներից չէր.—գոնէ Մխիթարը հարուստ չէր: Կարեսորը ի հարկէ այդ չէր, այլ այն՝ թէ ինչ կրթութիւն ստացաւ երեխան: Այդ կողմից էլ Մխիթարը շատ բախտաւոր չէր. նրան տուին մի ողորմելի ուսում, որ հարաւոր էր այն խաւար ժամանակներում, թիւքական մի քաղաքի մէջ: Ասում են թէ նա հինգ տարեկան էր, երբ սկսեց կարգաշգրել սովորել տեղական քահանայի մօտ: Բայց գա չափազանցութիւն է: Ինչ և լինի, քահանայ ուսուցչի գիտութեան պաշարը այնքան աղքատիկ էր, որ Մխիթարը տասն տարեկան հասակում վերջացրեց ուսումը: Աւելի ճիշտ կը լինէր քահանայից նրա ստացածը անուանել մի հասարակ գրադիտութիւն:

Նա աշխատ, մտադի երեխայ էր, մանաւանդ խիստ տպաւորուղ, Քահանայի ուսումը, ծնողների եկեղեցասիրութիւնը Ժամանակից շատ առաջ հազորդեցին նրան մի սսստիկ կրօնամոլութիւն: Մանուկ խելքի մէջ գաղափարական ձևակերպութիւն է ստանում կրօնաւոր դառնալու միտքը: Այնքան յափշտակում է նրան այս միտքը, որ մի օր իր հասակակից երեխայի հետ նա ծածուկ հեռանում է տանից՝ մի քարայրում ճզնելու: Համար, հաւատացած լինելով որ ինչպէս մի ժամանակ Յովհաննէս Մըկրտիչը անապատում կերակրուում էր երենքի ինսամքոյ, այնպէս էլ այժմ Աստուծու հրեշտակները կերակուուր կը բերեն իր և ընկերի համար: Բայց Հրէտառանի հրաշքը չը կրկնուեց Սեբաստիայում: Հրեշտակներ չեկան, թէ և երկու երեխանները ամրող օրը ծնկաչոր աղօթքներ էին կարգում: Օրը մթնեց, քաղցածութիւնն սկսեց տանջել և խեղճ ճգնաւորները ուրիշ մի ճար չը գտնելով, սկսեցին լաց լինել, օգնութեան կանչել: Բարեբախ-

տարբար, ծնողները մարդիկ էին ուղարկել նրանց սրոնելու. սրանք լսեցին լայն ու աղաղակները և աղատեցին անչափահաս կրօնամոխներին վտանգից...

Բաւական չէր, որ միատիպական չափազանց յափշտակութիւնը այսպէս գերել էր տասը տարեկան երեխայի խելքը, ծրնողներն ուղարկեցին նրան գաստիքարակուելու մի ամսպիսի տեղ, ուր կարելի էր իսկոյն թաղուել ճգնաւորական խոհերի մէջ։ Սերասափայում ապրում էին երկու քոյրեր, Մանասէ և Մարիամ անոնով։ Դրանց երկու եղբայրները ճգնաւոր էին կիմ անապատում։ Մանասէն արդէն նշանուած աղջիկ էր, երբ նոյն ճգնաւորական տեսնդը նրան էլ բռնեց. Նա հրաժարուեց ամուսնութիւնից, և երկու քոյրերը նստեցին իրանց հօր տանը՝ պասով և աղօթքներով հոգի գտնելու համար։ Հաղիւ-հազ կարգակ սովորելով, այդ կոյսերը զարձան ֆանատիկոս միանձնուհիներ։

Ի՞նչ էր սովորում Միխիթարը նրանց մօտ։—Միայն կրօնական նախապաշարմունքներ, զանազան պատմութիւններ սըրբերի, գժոփաքի, արքայութեան մասին և ճգնաւորական ինքնակեղեգումների նորանոր վաստեր։ Նոյն իսկ այն ժամանակուայ վանական զիառութիւն էլ չէին կրորդ աւանդել այդ կոյսերը իրանց աշակերտին, տյնքոն աղէտ ու անապատրաստ էին։ Նրանք միայն երազներ էին աւեսնում, ի հարկէ, միայն բարեկաշտական բոլանդակութիւն ունեցազ երազներ, սրոնք մի-մի մարգարէական զուշակութիւն էին. զարմանալի է, որ այդ մարդարէութիւնները երկու քոյրերին միեւնայն ձեռլ էր ուղարկում երկինքը. Նրանք քնում էին առանձին, բայց աւեսնում էին մի և նոյն երազը։ Անկատակած, պատասխի Միխիթարի զլուխը աւելի ևս շատ էր այդ աւեսիներից։ Նա նրանց տարեց իր հետ իտալիա և XII դարի սկզբում, երբ նրա հիմնած միաբանութիւնը հայերի մէջ ամենաբարձր զիանականութեան ներկայացուցիչ էր համարում, անսրբակա կոյսերի երազները կատարեալ հաւատով զրի առնուեցան իրբե սաստածային յայտնութիւններ^{*)}։ Այսպէս, Միխիթարը մակրում պահել էր, որ կոյսերը մի տարի երազ աւեսան, որի մէջ պահնչելի տեսքով մի մարդ յայտնեց նրանց, թէ այդ օրը Հոօմում մի սուրբ մարդ է վախճանուում։ Կոյսերը, հաւատացնում է բարեկաշտական լեզենդան, մինչև այդ չէին էլ լսել Հոօմի անունը։ Եւ, ի հարկէ, կարելի է և պէտք է ենթազրել թէ այդ յայտնութիւնը նշանակուած էր Միխիթարի համար, որ Հոօմի հպատակը պիտի զարուհի առասպելը շարունակում է պատմել, որ տարիներ յետոյ, իտա-

^{*)} Աղոնց, «Պատմութիւն կենաց և վարուց Միխիթարութ», էր. 21—22.

լիայում, Մխիթարը տեղեկաւթիւններ հաւաքեց և իմացաւ, որ երազը ճիշտ էր, այն օրը վախճանուել էր իննոկենալիս ԽI պապը:

Երազները վերաբերամ էին և իրան, Մխիթարին Կոյսեարը երկու անգամ երազ էին առնել. մեկի մէջ Մխիթարը սպառաժուածու ճանապարհ էր հարթում, և աստաւածային չնորհքը յայտնում էր, թէ դա գետի արքայութեան դուռը տանող ճանապարհն է, որ հարթում է Մխիթարը: Խակ միաս երազի մէջ Մխիթարը մի խումբ լուսազգեաս մարդկանցից ընդունում էր ահսակեասակ անուշահնոս խզեր: Եւ ով, կարգալով ու լսելով այսպիսի մարգարեական զուշակութիւններ, չը պիտի հաւասար թէ նախախնամութիւնը Մխիթարին ընտրել էր լուսաւորելու հայերին Հոօմի լուսով և թէ Մխիթարը զեռ մանուկ հասակում վերին ահաշութիւնից ներշնչաւած էր հասկանալու թէ ուղիղ և ուղղափառ գաւառնութիւնը միայն հոօմէականն է:

Եթէ մենք յիշատակում ենք այս երազները, որսամառն այն չէ, որ մի աւելսրդ անգամ ցաց տանք թէ ինչպէս կզերը, մարդկանց միավը նուաճելու համար, չահագործում է նախապաշարմանքները, առասպեկտները: Ոչ, դա չափազանց լաւ յայտնի մի իրողութիւն է, բայց մենք կանգ տանք այդ առասպեկտների առաջ այն պատճառավ, որ գրանք լաւ բնորոշում են այն մթնոլորտը, որի մէջ մեծացաւ: Մխիթարին միաբանութեան հիմնազիրը: Սյդ մթնոլորտի աղքեցութիւնն էր, որ Մխիթարը, զեռ տասը տարեկան մի երեխայ, սկսեց ձգնաւորուկան սպահեցազութիւն: Նա հրաժարուեց մսից, գիմուց, եօթ տեսակ պատվներից, կամ մենում էր հրաժարուել և կաթնեղինից ու առհասարակ ամեն ահասակ մրցերից, բայց կոյսերը չափաւորեցին նրա այդ ձգնաւորական եռանգը, յայտնելով երկնքի կազմից, թէ նա պիտի դասնայ եկեղեցու վաստակաւոր մշակ, ուստի որպատաւոր է սրոհպաննել իր առազգութիւնը:

Բայց կարելի էր չափաւորել կրօնամսութիւնը մի տցնողիսի միջավայրում, ուր պատանին միայն չափազմնցութիւն էր ահամում և նրա իդէալը դառնում էր կատարեալ անձնասպանութիւնը: Երկու կոյսերը կենացնի օրինակ էին նրա համար, խակ ինչ էին ցաց տալիս նրանք: Բաւական չը համարելով տան մէջ աղօթելը, նրանք գիշերներն էլ գուրս էին գալիս՝ բաց երկնքի տակ աղօթելու: Եւ այդ պարտաւորութիւնը նրանք չեն մոռանում նոյն խակ ձմեռուայ յըաւերին: Ֆանաթիկուաթիւնը կուրացնող է, նա չէր թոյլ տալիս քոյրերին հասկանալ, որ ցըրտի մէջ գետնասարած աղօթելը պիտի վասէ նրանց առողջութեանը: Ճգնաւորական գերազանց իդէալը սկզբից եեթ եղել է մի մաշուած, կեղաստ, ալլանդակ մարմին ունենալ երկնքի

սիրոյ համար: Կոյսերն էլ հասան այդ երանաւէտ դրութեան: Չմեռնացին գիշերները, վերջապէս, սոսկալի աղամալուծութիւն առաջ բերին երկուսի մէջ. նրանք կծկուած, քայքայուած՝ անկողին ընկան կողձների պէս, անկարող լինելով շարժուել: Նրանց փառզ, շարաւոտ, որդնած մարմինները արգէն վկայում էին, թէ երկուան էլ Քրիստոսի հարսներն են դարձել: Եւ ամբոխի համար նրանք մեծարանքի, պաշտամունքի առարկայ դարձան: Իսկ երբ սոսկալի հիւանդութիւնը, տարիներ տանջելուց յետոյ, վերջ դրեց անդամալոյցների կեանքին, նրանք դարձան սուրբեր, այն էլ հրաշագործ սուրբեր:

Ահա թէ ինչպէս զաստիարակուեց Մխիթարը: Պարզ է, որ նրա համար կեանքում չէր կարող լինել մի ուրիշ ասպարէզ, բացի կրօնաւորականից: Տաճանհինգ տարեկան հասակում, չը նայելով մօր դիմադրութեան, նա սարկաւագ է ձեռնադրուում, հագնում է ճգնաւորական մազէ շապիկ, զրկում է իր անձը, աշքի առաջ ունենարով հասնել այն իդէալին, որ ներկայացնում էին նրա հոգու և մագի վրայ այնքան խոր տպաւորութիւն թողած կոյսերը: Բայց մի սովորական ճգնաւոր չը դարձաւ նա: Մի ուրիշը կը բաւականանար իր ստացածով, կը հեռանար կեանքից և կը սկսէր ինքն իրան կեղեկել ու մաշել մի որ և է ամայի տեղ, քարայրում: Իսկ Մխիթարը հէնց նրանով էլ զանազանուում էր հասարակ մարդկանցից, որ ունէր հարցասէր, խուզարկու ողի: Բաւականանալ իր ստացած կրթութեամբ նա չը կարողացաւ, ուստի սկսեց որոնել աւելի կատարելագործուելու, աւելի բարձրանալու միջոցներ, մնալով, ի հարկէ, ճգնաւորական խղէալի շրջանում: Այդ որոնումները նրան հանեցին Սերբաստիացից, ման ածեցին զանազան տեղեր: Դա մի աշխարհատեսութիւն էր, որ պիտի հաղորդէր նրա բնաւորութեան աւելի փորձառութիւն:

Ի՞նչպէս էին այն ժամանակներում կատարելագործուելու, կրթուելու հար գանուում: Մխիթարը հարիւրաւորներից մէկն էր: Դարոց չը կար, բան սովորել ցանկացող պատանին պիտի գտնէր մի հոգևորական և նրա սաների մօտ որոնէր ուսում և զիտութիւն: Ահա ինչպէս էր կատարուում այդ բանը: Էջմիածնից Սերբաստիա գնաց մի նուիրակ եղիսկոպոս, նա համարւում էր գիտնական և լաւ ճգնաւոր: Մխիթարը դառնում է նրա փոքրաւորը: Պէտք է ծառայել եղիսկոպոսին հլու հաւատարմութեամբ, որպէսզի փոխարէնը մի կաոր բան ստանայ նրա զիտութիւնից:

Այդ եպիսկոպոսի հետ Մխիթարը գնում է էջմիածին: Հայոց ամենագլխաւոր վանքը, ուր նստում էր բոլոր հայերի հոգեսոր գլուխը, անշուշտ ներկայացնում էր իւրաքանչիւր ուսումնածա-

բաւ պատանուն իբրև աւետեաց երկիր։ Բայց այնտեղ Մխիթարին սպասում էր հիմասթավումն։ Եթէ գրագիտութիւն իմացող մարդկանց այն ժամանակներում պէտք էր մատներով համբռել, զրա գլխաւոր պատճաններից մէկն էլ այն էր, որ հայ հոգնորականները իբրև ուսուցիչ այնպիսի բռնակալներ էին, որ շատ քչերը կարող էին զիմանալ նրանց ոտների մօտ։ Մխիթարի ուսուցիչ եպիսկոպոսը այդ մամնկավարժական բռնակալութեան մի շատ տիպիկական ներկայացուցիչն էր։ Ոչինչ մարդասիրական զգացմունք դէսփի աշակերտը. ծեծը, հայոցանքները սովորական միջոցներ են և կազմում են մանկավարժական զերագոյն իմաստութիւններ։ Տարիների մի երկար թիւ է հարկաւոր, որպէսզի ուսուցիչը կամաց-կամաց, փոքրիկ կտորներով բան սովորեցնէ իր ծառայ աշակերտին։ Մխիթարի ուսուցիչը վճռել է տամներկու տարի պահել նրան իր ոտների մօտ, ուստի չէ թոյլ տալիս նրան շատ բան սովորել. և երբ արելաները գալիս էին նրա իւուցը՝ ուսում առնելու, նաև նախ և առաջ դուրս էր տնում Մխիթարին, որպէսզի սա լսելով շատ բան չը սովորէ։ Աւելացնենք այդ բոլորի վրայ ծառայական տանջանքները։ Վաղ առաւտեան զանգակը միաբաններին վանք էր հրաւիրում։ Մխիթարը, միւս աշակերտների նման, պիտի շատ չուտ գնար՝ սաղմոս քաղելու ժամասացութիւնից յետոյ եպիսկոպոսները զնում էին նորից քննելու, իսկ թշուառ աշակերտը պիտի ոսի վրայ մնար, պատրաստ ամեն բովէ կատարելու այն, ինչ կարող էր յանկարծ հրամայել նրա տէրը։ Այսպանը բաւական չէր. աշակերտներին այդինքներում բանեցնում էին մշակի նման։ Անքուն գիշերները, այդու մէջ օրերակ աշխատելը յուղնեցրին Մխիթարին։ Նա ստացաւ աչքերի հիւանդութիւն և եպիսկոպոսը ոչինչ ուշագրութիւն չը դարձեց դրա վրայ։

Ահա ինչ գաճան տանջանքներով էր հայ պատանին ձեռք բերում կրթութիւն։ Այն էլ ինչ կրթութիւն։ Ժումանակի կաթողիկոսներն ու պատրիարքները չէին կարողանում կանոնաւոր, անսխալ հայերէնով գրել. փոքր ի շատէ լեզուազէտ մարդը մի երեսյթ էր, որ մատով էին ցոյց ապիս և որ հոչակւում էր աշխարհից աշխարհ։ Գիտութիւնը սուրբ զրքերի մեկնութիւնն էր, քերականութիւն սովորելը շատ և շատ բախտաւոր անհատներին էր միայն աջողւում. ահազին մեծամաստ թեան համար զա մի անհասանելի բան էր։

Հայրենի իրականութիւնը այդ էր։ Մխիթարը դժգոհ էր այդ իրականութիւնից—ահա ինչն է այդ մարդու ամենամեծ արժանաւորութիւնը։ Նա որոնում էր ուսում և գիտութիւն։ այդ բանը չը կար նոյն իսկ էջմիածնում, իսկ էջմիածնից բար-

ձրու տեղ չէր կարելի զանել հայոց աշխարհում: Որսնում էր ճգնաւորական մաքար, անսարսա կեանք, բայց զրա փախարէն զանում էր քուրծ հաղած, ապաշխարալ՝ կզերականներ, որսնք, սակայն, կոսվիս ու ապէս էին, արաւաւոր, ու նրանց գործերը չէին համապատասխանում խօսքերին: Այդ անրաւականութիւնը զրգում է նրան որոնել իր ցանկացածը արիշ տեղերում: Եւ նա զիշերալ փախչում է կշմբածնից, ապասուած է իր զահիճ ուստացից: Լուկ է թէ Սևանի ծալում մի մենաւոր կզզի կայ և այդ կզզու վրայ մի փանք, ուր ճգնում են հայ վարդապետներ: Ու գնում է այնտեղ: Բայց Սևանն էլ հայկական իրականութիւնն մի բեկորն է: Այնտեղ էլ խաւար աղիտութիւնն է տիրում: Փանական քարացած կունքի մէջ կայ ձևական բարեպաշտութիւն, կան ճգնողների արտագին երեսյթները, բայց չը կայ հոգի, չը կայ այն բարձրութիւնը, որին ճգնում էր Մխիթարը իր ճգնաւորական խօների մէջ: Սևանն էլ չը կարողացաւ և չը կարող բաւարարութիւն և անգորրութիւն սպարգել մի մարդու, որ իր ժամանակից որանանջում էր աւելի բան, քան նա կարող էր տալ: Եւ Մխիթարին Սևանի ցուրտ կամարների տակ բռնկց յուստհատուիրն մի տապնապը Անքան քաշչուել էր, այնքան չարչարուել էր, պյում թնչ տնել, ուր տեսնել՝ ճամսապարհ, ուղղութիւնն ուսնելու: Համար Սյո հարցերը ատնջում են նրան:

Մխիթարի պէս միստիքական բնաւորութիւնները չեն կարող որ և է վճուի համել ասանց երկնքի օգնութեան, և խրաքանչխոր վճիռ նրանց մէջ ձևակերպուած է երկնացին հրաշքի կերպարանքով: Մևանակ, անօդնական, ոչ որից չը հասկացուած մարդու պյու հարցերը ուղղուած էին Աստուծուն, թէ նրա համար պարզ էր, որ զարձեալ պէտք է որոնել զանելու համար, պէտք է աշխարհը չափչիել՝ ասանց յուսահասուելու: Բարեպաշտական լուկենզան ստում է, թէ նրան երեայ Աստուծունը ուերաստացի երկու քայր կոյսերի հետ և խոստացաւ կատարել նրա ցանկութիւնը: Այդ խոստումը անում էր կամքի ոյժը, առաջանալու, կտարելազործուելու անյօղգողդ ցանկութիւնը: Բայց պէտք էր քաջալերութիւն, պէտք էր հաւատալ ուսիսական ոյժերին և գնալ անծանօթ, զժուար ճանապարհով: Ահա այդ անհրաժեշտութիւնը վանքի խորհրդաւոր կիսամթութեան, աղօտ, հրաշքների ու վերացականութեան սպով տաղսրուած մթնոլորտի մէջ ձևակերպում է և տալիս նրա երեակարայութեան այն տեսիլը, որ գառնում է նրա համար ասացնորդող աստղը Մարգիկ կան, որոնք ունին այդպիսի աստղ իրանց սրափ և հոգու մէջ: բայց նրան հետեւմ են միայն այն ժամանակ, երբ տեսնում են նըրան որ և է տեսիլքի, որ և է երազի մէջ: Հոգու այդ տեսակ

ապդումը սովորականն է մանաւանդ կրօնականն և կրօնամոլ մարդկանց շրջաններում, ուր մարդկային լնաւորութիւնը ստորագրած է, կամքը յանցուոր և կորստականն է համարւում և ուր ամեն ինչ վերագրւում է Նախախնամութեան, որ բոլոր անցքերի ու ձգտումների միակ տէրն ու անօրէնն է...

Նեռանալով Սևանից, Միփիթարը ճանապարհ է ընկնում դէսի իր հայրենիքը: Բայց ճանապարհին մնում է Բասէնի վանքում, որի վանահայրը գոնէ այն արժանաւորութիւնն ունէր, որ զգում էր թէ ինքը սպէտ է, ուրեմն և պարտաւոր է յարդել աւելի վի գիտունին: Վանահայրը լաւ ընդունում է երիտասարդին և յանձնում է Նրան աշտկերտներ՝ ուսուցանելու համար: Այդ նոր պաշտօնում Միփիթարը մնում է մօա տարի ու կէս: Երկու հանգամանք նրա՝ այդ ժամանակուայ կեանքում ուշադրութեան արժանի են: Առաջինն այն էր, որ այդ միջոցին էրզրումի մէջ Աւետիք վարդապետը հալածանքներ էր յարուցել հայ-կաթոլիկների դէմ: այդ առիթավլ ծաղած եղբայրական խոսվութիւնները գրաւեցին և Միփիթարի ուշադրութիւնը, բայց անելով նրա առաջ առն դաւանական խարութիւնները, որնք տառնեակ դարերից ի վեր քարտաքանդ էին արել աշխարհը, բայց գեռ չէին կշացել արիւնոտ զոհերից: Հալուծել—սարածել, սա հին առացուածք է: Աւետիքը և նրա նմանները չէին հատկանում այդ, բայց ահա հալածուազների մեղքը ուսումնասիրել է սկսում և Բասէնի վանական գալոցից տառցիչը: Վանքի մէջ նա զտնում է ձեռագրեր, գրանցից իմանում է Քաղկեդոնի ժաղովի հանգստամանքներն ու ընդունած դաւանական սկզբանքները: Դա առաջին ծանօթութիւնն է կաթոլիկութեան հետ, զեռ ազօտ ու անկատար ծանօթութիւննը: Բայց դրանից, նա ծանօթանում է Պօղոս անունով մի հայ-կաթոլիկի հետ, որ եղել էր Հոօմում: Պօղոսը սլատմում է պապերի մայրաքաղաքի մասին, Նկարագրում է այնաեղի գալրացները, կրօնաւորական հատասատութիւնները, գրադարանները: Հաւականալի է, թէ ինչ յափշտակող տպաւորութիւն պիտի զործած լինի հեռուոր մայրաքաղաքը՝ որոնող, մեր գժրախա լիրականութեան մէջ տանջաւող երիտասարդի մաքի վրայ: Այդ ժամանակից նա հասկանում է որ իր որոնածը Հոօմում կարելի է գտնել:

Երկրորդ հետաքրքրական հանգամանքն այն է, որ Բասէնի վանքում Միփիթարին յանկարծ յափշտակում է աշխարհային կեանքը: Չը նայած, որ նու պահեցողութիւններով, զրկանքներով ամեն կերպ ճնշում էր իր մարմինը, բայց եկաւ մի ժամանակ, երբ երիտասարդական արիւնը խօսեց նրա մէջ: Երկու կանագք քիչ էր մնում որ հրապարէին նրան և, ով գիտէ, գուցէ նոյն

իսկ գուրս բերէին նրան վանական միջնորդտից: Մենք չը զիտենք այս դէպքի մանրամամնութիւնները. վանքում յօրինուած կենսագրութիւնը մեղ ուղում է հաւատացնել, թէ գա սատանայի գործն էր և մի քանի անորոշ ու անկապ խօսքեր ասելով, շտապում է փակել կղերական-ճգնաւորական տեսակէտից անախորժ դէպքի յիշատակութիւնը: Կարելի է, սակայն, ենթադրել որ աշխարհի սէրը այնքան էլ հեշտութեամբ չէ խեղդել ու սպանել Մխիթարը: Բասէնի վանքից հեռանալու մի պատճառն էլ եղել է կինը, որ քիչ էր մնում տակն ու վրայ անէր երիտասարդ ճգնաւորի բոլոր բարեպաշտական ջանքերը...

Հայրենի քաղաքում Մխիթարը ենթարկուեց մի ծանր դժբախտութեան: Այստեղ սաստկացաւ աչքացաւը, որ զեռ էջմիածնում էր սկսուել: Հիւանդութիւնը այնքան սաստկացաւ, որ երիտասարդ սարկաւազը կուրացաւ, ոչինչ չէր տեսնում ամբողջ ձմեռուայ ընթացքում: Բայց այդ գաժան փորձութիւնը միայն ժամանակաւոր անգործութեան դատապարտեց Մխիթարին: Մի ուրիշը նրա հասակում գուցէ և յուսահաառուէր, թողնէր ամեն ինչ. բայց Մխիթարը ճգնաւորական տոկունութեամբ տարաւ ճակատազրի հարուածը և կուրութեան ժամանակ էլ մտածում էր զրքերի, կրթութեան մասին: Այդ տոկունութիւնը նրա մի հրաշալի յատկութիւնն էր, որ վերջ ի վերջոյ այնքան բարձրացրեց նրան: Գարնանը աչքի ցաւերն սկսեցին մեղմանալ, իսկ մի հմուտ զեղագործի բժշկական միջոցները վերադարձին միջնած աչքերի լրացը: Եւ նա իսկայն սկսեց շարունակել իր պարապմունքները, ինքնակրթութիւնը:

Սակայն նա երբէք չէր մոռանում որ անային միջոցներով, ձեռքի տոսկ եղած զրքերով չէ կարելի բաւականանալ: Իրականութեան ազգած դժոնութիւնը զնալով աւելի սաստկանում էր. հարուստ ու քաղաքակրթուած Հոռոմը չէր հեռանում նրա մաքից: Ուստի նա դարձնալ ճամսապարհ ընկաւ. Սերաստիացից, այս անդամ հաստատ վճռերով լրյու և գիտութիւն որոնել այլիս ոչ թէ Հայաստանի վանքերում, այլ հեռաւոր տեղեր, օտար երկնքի տակ: Դա մի տիսուր անհրաժեշտութիւն էր ամեն մի հասկացող հայի համար: Մխիթարը, հեքենաթների անմահական խընձոր որոնողի նման, գնաց թափառելու դէպի արևմուաք: Նրա առջն կանգնած էին գժուարութիւններ, որոնք խնձոր որոնողների առջև կանգնած խոչընդոտներից պակաս չէին: Մի անյայտ, անօդնական ու ազքատ երիտասարդ, նա պիտի ճանապարհորդէր մեծ մասամբ ոտով: Քիչ էր մնում որ Մխիթարը խեղզուի մեծ, յորդացած գետում...

Հասնելով Բերիա քաղաքը, Մխիթարը այդտեղ պատեհու-

թիւն ունեցաւ ծանօթանալու կաթօլիկ կրօնաւորների հետ, ուրոնց մէջ առանձնապէս յիշատակւում է եզուփա Անտօնը: Սրա մօտ Մխիթարը մնաց մօտ երկու ամիս: Անշուշտ, ուշադիր երիտասարդը ահագին տարբերութիւն պիտի գտնէր հայ տղէտ և հայկաստակ վաճականութեան և ճարպիկ, զիտոն կաթօլիկ արեգաների մէջ: Եզուփա Անտօնը քարոզիչ էր Արևելեան Հընդկաստանում, նա խօսում էր Մխիթարի հետ թիւրքերէն լեզուով, երեխ ծանօթացրեց նրան Լօյօլայի հիմնած կարգի կազմակերպութեան հետ: Այստեղ էլ, անշուշտ, Մխիթարի մէջ միաք ծաղեց հիմնել կաթօլիկ միաբանութիւնների նման մի հաստատութիւն Հայաստանի վաճակերում: Բայց բաւական չը համարելով իր ստացած կրթութիւնը, նա եզուփա քարոզիչն էլ յայտնեց թէ վառ ցանկութիւն ունի Հոռմ գնալու: Մի այդպիսի միաք աջողութեամբ գլուխ բերելու համար պէտք էր, ի հարկէ, որ Մխիթարը կաթօլիկ լինէր: Եւ եզուփա Անտօնի տուած մի վրկայագրից մենք իմանում ենք, որ հայ սարկաւագը այդ ժամանակ արդէն իւրացրել էր հոօմէտական դաւանութիւնը:

Տեսնելով թէ որքան օգտակար գործիք կարող է զառնայ այդ ընդունակ երիտասարդը Հայաստանի մէջ գործող եզուփա ների ձեռքում, հայր Անտօնը աշխատում էր համոզել Մխիթարին, որ սա թողնէ Հոռմ գնալու միտքը: Գնալ օտարութիւն այսպէս էր ասում եզուփար—նշանակում է կորչել մի օտար ազգի մէջ, փոխել լեզուն ու այգային տարազը: Մինչդեռ Մխիթարի ունեցած դիտութիւնը միանդամայն բաւարար է՝ Հայաստանի մէջ օգտաւէտ գործունէութիւն ցոյց տալու համար: Աւելայն այդ խրամներն ու յորդորները չօգնեցին. Մխիթարը հաստատ էր իր վճռի մէջ: Եւ հ. Անտօնին մնում էր տալ նրան յանձնարարականներ, որոնցից մէկն աղջուած էր եզուփա կան կարգի գեներալին:

Այդ թղթերը ծոյցում՝ Մխիթարը մի քրանտիսական նաև մտաւ: Կասկած չը կայ, որ եթէ նա համնէր Հոռմ և ներկայացնէր Անտօնի յանձնարարականները, եզուփա կարգը նրան կ'ընդուէր իր շրջանը, և Մխիթարը, եզուփա գառնալով, կը կորչէր հայութեան համար: Բայց այսպէս չնղաւ: Մի սաստիկ տենդ բռնեց Մխիթարին, սկսեց տանջել նրան: Եւ նա հարկադրուած եղաւ կանգ առնել կիսրոս կզզում, ուր նրան սպասում էին դառն տանջանքներ:

Մեծ մարդկանց տանջանքները նրանց վասովի սուրբ յատկութիւններն են. և ասպագայ սերունդները, եթէ միայն նրանք զրկուած չեն երախտազիսութիւնն կենսատու զգացմունքից, պիտի երբէք չը մոռանան այդ տանջանքները: Ուստի մենք պի-

որ հետեւնք օաարտթեան մէջ ծանր հիւանդաթեան ենթարկուած Մխիթարին:

Կիսպրոս կղզու գլխաւոր քաղաքն էր Սալամինա, այնտեղ կար և հայոց եկեղեցին: Մխիթարը այնտեղ ուղիորուեց, որպէսզ զի օթեան զանէ եկեղեցու խուցերից մէկում: Երեք օր պառկած էր այնտեղ, բայց չը գտնուեց և մի հաս կարեկից մարդ, որ գոնէ ջուր տար ջերմի մէջ տապակուող օաարականին: Իսկ հիւանդաթիւնը գնալով սաստկանում էր: Այդ զրութիւնը միայն այն ազգեցութիւնն արաւ եկեղեցու ժողովրդի վրայ, որ վճռեցին հետայնել հիւանդին եկեղեցուց: Նա մի կրօնաւոր էր, ուրեմն կրօնաւորներն էլ պիտի պահպանէին նրան: Մի անգութեւ և տմարդի վճիռ, որին ընդունակ էր ասիական եսամոլ համայնքը: Սալամինայից մի օրուայ ճանապարհ հեռու գտնուում էր ճպնաւոր հայ վարդապետների մի վանք: Մխիթարին բարձեցին զրաստի վրայ և տարան զցեցին այդ վանքը: Բայց անմարդասիրութիւնը ուր պէտք է սրոնել, եթէ ոչ կրօնաւորների մօտ, վանքում: Մխիթարին այդտեղ ճանաշում էին, գիտէին որ նա հակուած է դէպի կաթօլիկութիւն: Այդքանն էլ բաւական էր, որ անօդնական հիւանդը մաանուի մի զագանային անտարբերութեան...

Մի կտոր կապերաւ էլ չը տուին, որ հիւանդը պառկէ: Մխիթարի անկողինը սեփական վերարկուն էր, որի մէջ փաթթւում էր նա: Մի կտոր հաց, մի աման ջուր բերող, ի հարկէ, չը կար: Հիւանդը ինքը պիտի զնար խոհանոց և խնդրէր ուտելու բան: Տենդը սաստկացած ժամանակը Մխիթարը համարեա խելակորոյս, ինքն էլ չիմանալով թէ ինչ է անում, իջնում էր խուցից, որ շինուած էր տանկիքի վրայ, ցած էր գնում զառիվայրով և մտնում էր քիչ հեռու գանուող պարակչը, ուր մի քարայրից ազրիւր էր ըզիսում և ջուրը հաւաքուում էր մի արհեստական առազանում: Իրան այրող տաքութիւնից գոնէ մի քիչ աղաստուելու: Հատնոր, Մխիթարը հանում էր շորերը և մտնում աւագանը, ուր մնում էր, մինչև որ զգում էր ջրի ցրութիւնը, ու չը զլուին էր զալիս և, հասկանալով թէ որքան վասնդաւոր գործ է կատարում, շատապում էր զուրս գալ աւազանից, հոգնում էր շորերը: Բայց այնքան նուազած ու թոյլ էր, որ չէր կարուանում շարժուել և ընկնում էր կանաչ խոտերի վրայ: Այդ ուղեսպաթիւնը դէպի ջրի աւազանը սովորաբար տեղի էր ունենում կէսօրին, երբ զողոցը կատազութեան բարձր աստիճանին էր հասնում: Յուլիս ամիսն էր, առել այրում էր: Կիսպրոսը հարուստ է օձերով, որնք անդադար սողում էին դժբախտ հիւանդի շուրջը: Բայց թունաւոր կենդա-

նիների տհն էլ չեր կարողանում շարժել տալ հիւանդին, այն սասիճան ուժասպատ էր նա։ Մօտ մի ժամ խոտերի վրայ պառկած մնալուց յետոյ նա վեր էր կնուում, մանում քարայրը, ուր նստում էր քարերի վրայ և ոտները զնելով ջրի մէջ, այդպէս մնում էր մինչեւ երեկոյ։

Արեւ մայր մտնելու վրայ ջերմը թուլանում էր։ Այդ ժամանակ Մխիթարը դուքս էր զալիս այրից՝ վանք գնալու համար Բայց պատեղ սկսուում էին նոր տանջանկաների Ռատով բարձրանալ զառիվայրը անհնարին էր կիսամեռ մարդու համար. և նա ընկնում էր երեսի վրայ, փորսով տալով էր անցնում այդ ճանապարհը, իսկ շունչ քաշելու համար յաճախ նստում էր և տալիս էր տանիքրկու տափեախներից մէկի մնունը։ Այս բոլորը կրատարւում էր վանքի աչքի առաջ, նրան տեսնում էին, բայց չը կար մէկը, որ բռնէր նրա ձեռքից, էլ չենք ասում թոյլ չը տալ որ հիւանդը ուշակորոյս զրութեան մէջ զնայ իր վատագուուր թափառումները կատարելու։ Մխիթարը, բացի այդ բոլորից, արհամարհուած էր վանքի մեծի ու փաքրի մօտ։ Երեւերները, երբ քաղցր յովեցնելու համար, մտնում էր խոհանոց, ամեն տեսակ կշտամբանքներ էր լսում խոհարարից, մինչեւ որ կարողանում էր սասանալ նրանից մի քիչ աղի ձիթապտուղ և մի կտոր զարեխառն հայ։ Այդ բարրարոսական միջավայրում միայն մի հատ մարդ դանուեց, մի անցորդ եսպիսակաս, որ ուշագրութիւն դարձրեց Մխիթարի սրաշարժ պաղատանկաների վրայ և եփեց նրա համար մի քիչ խուիծ։ Թշուառ հիւանդը կերաւ իր սրաի ուղածը մի այնպիսի ախորժակով, որ թւում էր նրան, թէ կեանքում տցնալիսի համեզ կերտելու չէ ճաշակել։

Ճգնաւորների այն վանքը, ուր մի կիսամեռ օտարական այդ տեսակ ամարդի ընդունելութիւն էր դանում, երեակայեցելը, գեռ ուխտատեղի էլ էր։ Վարդապատին քաղաքից ուխտատրներ եկան և Մխիթարը աղաչեց նրանց, որ իրան քաղաք տեղափոխեն։ Խնդիրը կատարուեց և հիւանդ երխտասարդը նորից Սպանամինայի հայոց եկեղեցու խուցը մասւ, վանքում երկու ամիս տանջուելուց յետոց հայոց Այս անզամ Մխիթարը զիմեց յատին կրօնաւորներին, որոնց մէջ կար և բժիշկ։ Խայելով ոսկորացած մարդուն, բժիշկը հրաժարուեց դեղ տալ նրան, հաւատացած լինելով, թէ նա պիտի մեռնէ, հետեւար անօդուտ է գեղը, մանաւանդ որ կառող է կասկած ծաղել, թէ նա միուս հէց այդ գեղից։ Սարսափելի վճիռը Մխիթարը իմացաւ թարգմանից, որի միջոցավ խօսում էր կրօնաւոր բժշկի հետ։ Բայց չը յուսահատուեց։ Մի հայ գեղ տուեց նրան, բայց դեղը չափազանց փորլուծութիւն առաջ բերեց, հասցնելով Մխիթարին մու-

հուսան դրանը, նա յամաքել էր, գարձել տերեւ Եւ միայն այդ սասկալի գրութեան մէջ նա հնարաւոր համարեց լուծել իը ճըդ-նաւորական պահեցողաթիւնը ու միս ուտել...

Օր օրի վրայ հալուելով ու մաշուելով, Մխիթարը, վերջառ-ալէս, վճռեց վերագառնալ տուն.—ահա ինչը ազատեց նրան Լօյօլայի աշակերտներից մէկը գառնալու դժբախտութիւնից; Բայց վերագառնալու համար պէտք էին միջոցներ, իսկ ինչպէս կարող էր այդ մահամերձ կմախքը շարժել իր աղջակիցների քարացած սիրալ և օգնութիւն գտնելու Բարեբախտաբար, օ-տարները աշաղութիւն գարձրին գժբախտ մարդու վրայ; Երկրի օրէնքով, պէտք էր հարկ տալ, բայց հարկահանը, տեսնելով նրա զրութիւնը և տեղեկանալով նրա կրած տանջանքներին, խղճաց և ազատեց հարկից: Մնում էր ներկայացնել մի երաշխաւոր՝ անցաթուղթ ստանալու համար: Տեղայի հայերի մէջ չեղաւ մէկը, որ յսնձն առնէր երաշխաւորութիւն. և անտանելի զրու-թիւնից Մխիթարին հանողը մի բարեսիրտ յոյն էր, որ թէն չէր ճանաչում նրան, բայց երաշխաւոր դարձաւ:

Այսպէս Մխիթարը աղասուեց կիսքրոսի զժոխացին չար-չարանքներից և նաւ նստելով, հասաւ Սելեկիա: Այդտեղից մի դաժան ճանապարհորդութիւն արեց մինչև Տերիա: Դեռ սաս-տիկ հիւսնդ ու թայր, նա աղքատ էր՝ բասիս բռն նշանակու-թեամբ, միջոց չունէր դրաստ վարձելու, ուստի հարկադրուած եղաւ ուսով դնալ: Ճանապարհին պատուեց նրա մի կօշիկը, նա գէն դցեց և միւսը ու ուսաբորիկ էր զնում: մի-մի կարողա-նում էր էշ վարձել և նստել նրա վրայ: իսկ սովամահ չը դառ-նալու համար ճանապարհին մուրացկանութիւն էր անում...

Մխայն Տերիայում խեղճ մարզը հանդսացաւ: Կային ծա-նօթներ, օգնեցին, գեղեր տուին: և մի քիչ առողջանալով, նա ճանապարհ ընկառ գէտի տուն: Հայրը և ընտանիքի միւս մն-դամները կրկաբաց ընդունեցին տարագիր որդուն, որին այդ-քան տանջել էր տալիս առաջանալու, կատարելագործուելու սաստիկ տենզը: Ծնողական յարկը խնամեց նրան, առողջացրեց իր քնքաւթիւններով: Բայց և այդպէս, չը կարողացաւ Մխի-թարին պահել իր տակ, հեռացնել այն փշու ճանապարհից, որ ընարել էր նա ճգնաւորի հաստատակամութեամբ: Կիպրոսի տանջանքները չը յուսահատեցին նրան, չը կարողացան զգուանք յարուցանել նրա մէջ, զուրս հրել նրան մի ազգի միջից, որ այգավիսի ողբալի իրականութիւն էր ներկայացնում: Մխիթարը, այդ իրականութեան նահատակ զառնալով, կարծես աւելի ևս համոզուեց, թէ չը պէտք է ձեռքերը ծալել և նստել մի մոռա-ցուած անկիւնում: Կորցնելով Հոօմ գնալու յոյսը, նա, ինչպէս

երեսում է, վճռեց մնալ հայոց եկեղեցու մէջ և գործել հայրենիքում: 1696 թուին, քանի տարնկան հաստակում, Սեբաստիացի ս. Եշան վանքի մէջ նա ձևնաշըռուեց արեղայ:

Այդ կոչումն ընդունելուց յետոյ ամսմիջաւէս նա ջանք է գործ դնում իր միավը իրազործելու, այն է մի կրօնաւորական միարանութիւն հաստատելու Նրան տուած էր մարդ զրաւելու, իր հետ տանելու ընդունակութիւնը: Առաջին մարտիկ, որոնց ընդունեցին նրա հրաւերը և համաձայնութիւն տուին կուսակրօն հոգիորականների կարգը մտնելու, Յովիաննէս և Յովիչէփ անունով սերաստացիներն էին: Բայց սրանց ծնույներց ահազին աղմուկ բարձրացրին: Լազմուեց Մխիթարի դէմ մի թէնամական կուսակցութիւն, որի յարուցած գժղոհութիւններից ազատուելու համար հարկաւոր նորաւ որ նորընծայ արևզան առժամանակ հետանայ քաղաքից:

Նթէ եկանքի մէջ կրած այնքան տանջանքները չը կարաղացան յետ կանգնեցնել Մխիթարին իր փայտայած մարփից, Ներսասակայի թեթև աղմուկները, ի հարկէ, աւելի ևս մնջօր սփառի վիսէին այդ ուժեղ կաթքը կուպրելու համար: Շարունակ որոնելով զիտութիւն, Մխիթարը յանկարծ մի զիւաւ արաւ: Կ. Պօլսում հոչակուել էր Խաչատրւուր վարչապետ Կարնեցին *), ահա այդ զիտուն կաթօվիկ կրօնաւորին կարելի էր ծրադրուող միարանութեան զբուխ կանգնեցնել: Եւ առանց երկար մտածելու նա ուղիւրուեց Կ. Պօլս: Բայց Պրօվագանդայի աշակերտի սրտին շտա մօտ չէին այն չարժառիթները, որոնք ստիպում էին սերաստացի երիտասարդին այս ու այն կողմ ընկնել և որոնել լոյս և զիտութիւն: Կարնեցին, երեխ, իր զիտականութեան և վայնած հերինականութեան համար ստորացուցիչ քան համարեց միանալ զաւատից եկած երիտասարդ և անյայտ վանականի հետ ու մերժեց նրա տառջաբկութիւնը:

Հինգ ամիս Կ. Պօլսում մնալոց յետոյ, Մխիթարը չը կարսղացաւ հաշտուել մի քարագիչ արեկայի: Որութեան հետ և նուրից փորձեց գործ սկսել Հայաստանում: Ընտքեց երդրումի նահանգի արեկերան մասը (Օլթի մօսեփքը), ուր մի վանքի մէջ, հեռու աշխարհից, պիտի հաւաքեր աշակերաններ և միարանութիւն հստատաւէր: Բայց 1698-ին համնելով էրդրում, այդտեղ փոխեց իր միավը և զիաց Կարմիր վանքը, որի վանահայր Մարգար եղիսակալոսը յայտնի էր նրան իրին բարի և համակրելի մարդ: Եւ իրու, Կարմիր վանքում էլ ինչպէս մի ժամանակ Բատէնի վանքում, նա զտաւ լաւ ընդունելութիւն: Վանական

*) ՀՀովկական Տպագրութիւն, հատ. I, էր. 304—306:

դպրոցի ուսուցիչը դարձաւ, ստացաւ վարդապետական զաւագան, շրջում էր գիւղերը և եպիսկոպոսի թոյլուութեամբ քարոզում էր: Զը նայած այդ բոլոր յարմարութիւններին, Կարմիր վանքը նոյնպէս բաւարարութիւն չը տուեց նրան: Միաբանութիւն հաստատելու միավոր: Էքր թողնում նրան, իսկ այդպիսի մի միավոր իրագործել էքր կարելի Հայաստանի հողի վրայ: Ի գուր Միխիթարը երկար համոզում էր Մարգար եպիսկոպոսին, ցոյց տարով այն բոլոր օգուտները, որ պէտք էր սպասել միաբանութիւններից: Բարի վանահայրը կարական կերպով հրաժարուեց այդ մաքից, զիսաւորապէս վախճնալով իր դասակիցների անբաւականութիւնից:

Այսուհետեւ Կարմիր վանքն էլ ոչինչ հրապոյր չունէր Մըխիթարի համար: Եւ նա իր երկու աշակերտների հետ 1700 թուին վերադարձաւ կ. Պոլիս, հաստատ վճռելով աշխատել այդտեղ՝ մի բան գլուխ բերելու համար: Թիւրքաց մայրաքաղաքում քսան և հինգ տարեկան վարդապետն սկսեց աշխատել մեծ աշխայժով: Նա գեռ պաշտօնապէս չէր բաժանուել լուսաւորչական եկեղեցուց, իսկ այդ ժամանակուայ Մելիքսէթ պատրիարքը ոչ միայն չէր հնուեւում իր նախորդների անհամբերող և հալածասիրական ողուն, այլ նոյն իսկ իր բարեկամ էր համարում այնպիսի թունդ կաթօլիկ վարդապետին, որպիսին էր Խաչատուր Կարնեցին: Կրօնական մրրիկները առժամանակ դադար էին առել և ափրող խաղաղութեան մէջ Միխիթարը, կաթօլիկ վարդապետների աջակցութեամբ, հրատարակեց չորս գիրք:

XVII գարի վերջին տարում մենք տեսնում ենք Լիվօրնօի տպարանը կ. Պոլիս փոխազրուած *), ուր նա շարունակում էր գործել էջմիածնի և ո. Սարգսի անունով: Միխիթարը այդ տպարանին դիմեց, սակայն իր հրատարակած գրքերի մէջ չը յիշատակեց իր անունը. փառքից փախչող, համեստութիւնը առաջին պայման ընդունած գործիչը «չնչին բանասէր» էր անուանում իրան այդ գրքերի յիշատակարանների մէջ: Մէնք, որ գիտենք Միխիթարի ճգնաւորական անզուսպ եռանդը, առանց բացատրութեան էլ կը հասկանանք, որ նրա հրատարակած գրքերը կարող էին լինել միմիայն զուտ կրօնական: Եւ իրաւ, այդ գրքերը ոչինչ նորութիւն չէին ներկայացնում մեր գրականութեան մէջ: Առաջին գործն էր թովմա կեմպացու աշխատութիւնը **), ապա Թիվլիսեցի կամ Մծխնթայի Պետրոս վարդապետի, թարգմանութիւնները լատիներէնից՝ «Գիրք մտածողա-

*) ԱՀԱՊԼԱԿԱԿԱՆ ՑԱՊԱՊՐ. 2, եր. 319.

**) Ibid., եր. 195.

կան աղօթից» և «Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու աւետարանչին». իսկ չորրորդ գիրքը Խաչատուր Կարնեցու աշխատութիւնն էր—«Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի»։ Այդ բոլոր գործերը տպագրուեցին Մելքիսէթ պատրիարքի թոյլտութեամբ։

Դրական գործն էլ հաւաքում է Միսիթարի մօտ աշակերտներ, որոնցից շուտով պիտի կազմուէր միաբանութիւնը։ Պահպանելով ամեն տեսակ զգուշութիւն, նա չը թողեց իր մօտ այն աշակերտներին, որոնք արդէն վարդապետական կոչում էին ստացել, այլ ուղարկեց նրանց դաւառները՝ քարոզչութեան համար։ 1701 թուականի ապրիլին Միսիթարը Բէյօղլու թաղում վարձեց բնակարան, ուր բաց արաւ կաղմատուն։ Բայց դա մի վարագուրած դպրոց էր։ Վարդապետական աստիճան չունեցող աշակերտները դալիս էին այդանու և Միսիթարն սկսում էր դասեր տալ նրանց. բայց հէնց որ դալիս էր մի օտար մարդ, աշակերտներն իսկոյն ընդհատում էին ուսումը և սկսում էին տպագրած գրքերի թերթերը ծալել, իբր թէ կաղմարարներ են։

Սակայն Կ. Պօլսի հայերի խաղաղութիւնը երկարատև չէր։ Ադրիանուալոսի առաջնորդ Եփրեմ Եպիսկոպոսը, թիւրք կառավարութիւնից հրաման ստանալով, յափշտակեց պատրիարքութիւնը և հալածանք սկսեց կաթոլիկների դէմ։ Մելքիսէթ պատրիարքը ուղարկուեց թիարան, իսկ չորս վարդապետներ, որոնց մէջ էր և Միսիթարը, պիտի ձերբակալուէին։ Միսիթարը իր ընկերներից աւելի բախտաւոր էր. մինչդեռ երեք հոդին ընկան Եփրեմի ձեռքը, Միսիթարին աջողութեց փախուստ տալ, թագնուել կամ եղուխների, կամ կապուցին վարդապետների, կամ թէ ֆրանսիական դեսպանի մօտ։ Աւելորդ է նկարագրել այդ հալածանքները, որովհետև իրանք անօրինակ բաներ չէին այն ժամանակները և կային շատ մարդիկ, որոնք աւելի վաստանքներ կրեցին։ Նշանակենք միայն հալածանքների հետևանքը։ Միսիթարը շատապեց նախ գլուխ բերել իր ծրագրած միաբանութիւնը և երկրորդ՝ որոնել մի տեղ, ուր այդ միաբանութիւնը կարող կը լինէր աղատ շունչ քաշել։

1701 թուականի սեպտեմբերի 8-ին, Աստուածածնի ծննդեան տօնին, Միսիթարը հաւաքեց իր համախոններին կապուցինեան վանքի այն սենեակը, ուր ինքը թագնուել էր հայոց պատրիարքի հալածանքներից։ Այդուն նա բացատրեց, թէ ինչ պիտի կապիմակերպութիւն պիտի ունենայ այն միաբանութիւնը, որի մասին նա մտածում է այսքան տարի։ Ընդունուեցին Անտօն Աբբայի կրօնաւորական կարգերը, Բայց զլաւորը այդ չէր։ Միսիթարը բաց արեց իր ունկնդիրների առջև իրերի դը-

բութիւնը և ասաց որ այդպիսի համգամանկիների մէջ չէ կարելի միաբանութիւնը հաստատել ոչ Կ. Պօլում, ոչ էլ Հայաստանի որ և է կողմում, ուստի պէտք է ընտրել մի այնպիսի երկիր, ուր յարմարութիւն կը լինի վաճար և միաբանութիւն հաստատելու։ Սկզբում գիտաւորութիւն կար ընտրել Լիբանանը, ուր կաթողիկ մարոնիստները տնէին առանձին պատրիարքութիւն։ Բայց, վաճառականների միջոցով անդմիւթիւններ հաւաքելով, Միխիթարը հասաւ այն նգրակացութեան, որ ամենայարժար աեղը Յունաստանի Մօրէա երկիրն է, որ գաճաւում է Վենետիկի խցանութեան տակ։ Ծողովն ընդունեց Մօրէա գնալը։ Աղօթքներ կարգացուեցին, ինդրուածքներ եղան և Մխիթարը յացարարեց, որ միաբանութիւնը հաստատուած է այդ օրուանից և նուիրում է իրան Աստուածածնին *):

Այսպէս սկիզբ տառա. Մխիթարեան հոչակաւոր միաբանութիւնը; Սկզբում նա կաղմուած էր տառան միաբաններից; Նրան հաւաքողն ու կաղմացը Մխիթարն էր, բայց նրան տառջնակարդ նշանակութիւն տուողը աւելի հանդամանքներն էին, որոնք միացան Մխիթարի անխոնջ ջանքերի և կաղմակալերպեղ ընդունակութիւնների հետ։

Սցդ հանդամանքների մէջ առաջին տեղն մն բռնուած հալածանքները։ Հաւածանքներն էին, որ գորս նետեցին այս նորակազմ կաթողիկ միաբանութիւնը ոչ միայն հայութեան միջից, այլ և Օսմաննեան պետութեան սահմաններից, հալածանքներն ստիպեցին որոնել մի քրիստոնեայ պետութիւն, ուր կարելի էր հանդասութիւն վայելնել։ Առանց այս հանդամանքների Մխիթարեան միաբանութիւնը չէր լինի այնպէս, ինչպէս եղաւ։ Նա կարող էր հաստատել Լիբանանում, Կ. Պօլում, Հայաստանի մի վաճում, նայն իսկ Յունաստանում։ բայց այդ զէազգում նա կը լինէր լոկ մի կրօնական հաստատութիւն, լոկ վանականների մի հանրակեցութիւն։ 1705 թուականին մի քանի կաթողիկ հայեր, հետեւելով Մխիթարի օրինակին, հիմնեցին Անտոնիան միաբանութիւնը Լիբանանում։ բայց այդ միաբանութիւնը ոչինչ գրական վաստակի չարտագրեց, և նրա անոնը միայն կաթողիկ արնդայական հիմնարկութիւնների ցուցակում է տեղ զրաւում։

Մխիթարը հիմնեց իր միաբանութիւնը գրական գործուէ. ինքն ըստ ինքնան հասկանալի էր, որ եթէ գրական դործունէութիւնը պիտի այսի լինէր այդ միաբանութեան հիմնարկութիւնների ցուցակում

*) Միաբանութիւնը ընդունեց կնիք, որ բարկացած էր չորս տառերից, Ռ. Ա. Վ. Ա. (Օրդեղիկ Կատին, Վարդապետ Խաղաշխարտ թեան)։

էր, ուրեմն, առանց հալածանկքների էլ թողնել ու հեռանալ հայկական խաւար իրականութիւնից, առաստան որոնել աւելի լուսաւոր և առաջադէմ մի երկրում:

Զգմում էր Միսիթարը զայդ անհրաժեշտութիւնը: Գործի սկզբում—նչ ՚երան աւելի զրաւում էր ճգնաւորական կենցաղը և, ոչ զիտէ, եթէ նու հասրաւորութիւն ունենար մնալ իր երկրում, զայցէ և բաւականանար այնպիսի զրական գործնրով, որնց նա հրատարակեց կ. Պօլսում և սրոնց շարունակելու համար պէտք էլ չը կար լուսաւոր երկիրներ որսնելու: Սկզբում Միսիթարը լուսաւոր երկիր չէր էլ որսնաւում: Մօրէան, նոր միաբանութեան այդ տուանեաց երկիրը, Եւրօպա էր լոկ իր աշխարհագրական գիրքսփ, բայց ոչ իր կենաքով ու առաջադիմութեամբ: Դա մէկն էր այն թշուառ երկիրներից, որմաք տանջուել էին Օսմաննեան լուծի տակ. մի քանի տարի առաջ էր Մօրէան՝ անցել Վհնեափիլին, բայց այդ կարճ միջոցում նա, ի հարկէ, չէր կարող աղատուել թիւքական իրականութիւնից, մանաւանդ որ Թիւքրիան քարտավին մտադիր էլ չէր իր այդ վաղեմի սնիւականութիւնը վենետիկյինների ձնորում թողնել: Հաղածանքները մղեցին Միսիթարին գէսպի արևմուաք, իրեւ դէպի մի խաղաղ նստահանգիստ. և նա ցամաք իջաւ առաջին պատահած տեղում, առանց մուածնլու թէ որքան զա յարմար է մտաւոր զորդունէութեան համար: Նոյն իսկ միջաշանութիւնը հաստատելուց ցեսոյ էլ Միսիթարը մի ամբողջ տարի մնաց կ. Պօլսում, կարծեն գեռ տատանուում էր, գեռ սպասում էր, թէ գուցէ կ'աջողուի մի անկիւն գտնել հայրենի երկրում: Եկաւ Աւետիքը սրատրիաբը, խոռովութիւնները սաստկացան և Միսիթարը, անկարող լինելով մնալ կ. Պօլսում, փախաւ, ինչպէս տեսանք, վաճառականի շորերով գէպի Եւրօպա:

Սյդ ժամանակից մի բարեհած ճակատագիր դալիս է հովանաւորնլու Միսիթարին—ահա այն երկրորդ մնջ հանգաւմանքը, որ նպաստեց Միսիթարեան միաբանութեան և գարձեց նրան մի կենաւուակ, յարաւու հիմնարկութիւն: Հայրենի հաւածագների զոհին իր հովանու տակ է ամսում կաթօվիկութիւնը, որ և մտակարարում է Նբան նիւթական առաստ միջոցներ: Թէ ի վանական կենաւորութիւնը ամին տեղ և ամին դէպում աշխատում է Միսիթարին Նախախնամութեան զործիք ցոյց տալ և այդ պատճառով խոռափում է այն տեսակ պատմուածքներից, որնց մէջ մնաք պիտի տեսնենք թէ ինչպէս էին արգրուում միաբանութեան զործերը—բայց և այդպէս, շատ փաստեր կան, ուրոնք կասկած չմն թողնում որ Միսիթարը լաւ դիտէր զործել ոչ միայն իրու կրօնաւոր, այլ իրրե քաղաքադէտ, իրրե «փօլի-

թիք»։ Նրան իր հոգանաւորութեան տակ է առնում նախ և առաջ Վենետիկի դեսպանը կ. Պօլսում, որ միւնոյն ժամանակ և Մօրէայի կառավարիչն էր. դրա յանձնարարականներով էր, երեխ, որ հանրապետութեան պաշտօնեանները տուին Մխիթարին Մեթօն բերդաքաղաքում տեղ՝ վանք կասուցանելու համար և յատկացրին միաբանութեան մի գիւղ, որի արդիւնքով պիտի ասլրէր նա։ Այսպիսի յանկարծակի աջողութիւնների միջոցով, որոնց էութիւնը, սակայն, մեզ յայտնի չէ։

Սկսուեց միաբանութեան կազմակերպութիւնը։ Համելով իր վաղեմի տենչանքին, Մխիթարը, ի հարկէ, չը պիտի խնայէր ոչ մի ջանք՝ բարեկարգութիւն հաստատելու համար։ Աշակերտների թիւը բաւական մեծացել էր, պէտք էր այժմ մտածել կանոնադրութիւն ունենալու մասին։ Այս նպատակով նա 1705 թուին Հոօմ ուղարկեց իր միաբանակիցներից երկուսին, որոնք պիտի ստանային Կլեմէս XI-ի հաւանութիւնը։ Բայց այդ գործը այնքան էլ հեշտ չէր. նա ձգձգուեց ամբողջ եօթը տարի։ Պատճառը, մեծ մասամբ, Մխիթարի թշնամիներն էին։ Դրանք այլնս լուսաւորչական հայեր չէին, այլ իսկական, ուղղափառ կաթոլիկ հայեր, այն զգուելի ֆանսափիկունները, որոնք Պրօպագանդայի աշակերտներն էին և Հոօմի չնորհները մուրում էին իրանց սարսափելի հայատեացութեամբ։ Այդ լատինամոլ հայերը նախանձից և չկամութիւնից կուրացած, ամեն տեսակ ամբառատանութիւններ էին անում Պրօպագանդայի ժողովների մէջ Մխիթարի և նրա սկսած գործի դէմ։ Եւ Հոօմը տարուրերում էր մինչև 1712 թուականը, երբ, վերջապէս, հաստատեց Մխիթարեան միաբանութեան կանոնադրութիւնը։

Մինչդեռ Հոօմը ձգձգում էր միաբանութեան հարցը, Մխիթարը Մեթօնում կառուցեց վանք և եկեղեցի, ահապին ծախսել արաւ, պարագերի տակ ընկաւ։ Բայց բախոր չէր հուանում նրանից. բարեպաշտ կաթոլիկները օգնում էին իրանց առատ նուէրներով, Վենետիկի կառավարութիւնը մի գիւղ էլ նուիրեց վանքին, և այդպիսով միաբանութեան դրամական միջոցները լաւացան։ Ի՞նչ էին անում միաբանները։— Աղօթում էին, գիւղանատեսութեամբ սարապում, աշակերտներ կրթում։ Մի հասարակ վանական միաբանութիւն էր դա։ Տասներկու տարի նա մնաց Մեթօնում, բայց ոչինչ գրաւոր վաստակ չարապըց։

Եւ դա բնական էր։ Միաբանութիւնը երկար կարող էր մնալ Յունաստանի այդ խոռ անկիւնում, կարող էր շատ լաւ մշակել վանքի ձիթներներ և, այնուամենայնիւ, մի առանձին

բարիք չէր լինի ազգի համար, թէս նրա հոգու փրկութիւնը իր ամենօրեայ աղօթքների առարկան դարձնէր: Բայց ահա զալիս է մի նոր յորձանք՝ Մխիթարեաներին այդ աննշան և անօգուտ տեղից էլ դուրս վռնտելու: Օսմանեան պետութիւնը պատերազմ է հրատարակում Վենետիկի դէմ, նրա զօրքերը արշաւում են դէպի Մօրէա: Մխիթարը, նայելով վենետիկցիների ոյժերին, հասկանում է թէ ինչ ելք պիտի ունենայ պատերազմը և 1715-ին, թողնելով իր վանքը և ըոլոր կալուածները չորս միաբանների հսկողութեան, ինքը մնացածների հետ փախչում է Վենետիկ: Սնիսուամելի վտանգը յաղթել չէր կարելի. պէտք էր միայն փախչել նրանից: Ակամայ էր այդ փախուստը, և Մխիթարը, սրտի կսկիծով հրաժեշտ տալով իր ձեռակերտին ու մըտնելով հին նաւը, որ պիտի տանէր նրան մի նոր, անծանօթ տեղ—երեխ չէր գդում թէ հէնց այդ կակալի փախուստն է, որ պիտի հռչակաւոր դարձնէ թէ իրան և թէ իր միաբանութիւնը...

Հայ փախուստականները Վենետիկում են: Ադրիական ծովի այս չքնաղ թագուհին հայերի հին բարերարն էր. Մեթօնի փախուստականները նրանից միայն բարիք պիտի տեսնէին: Գիտութեան և զեղարուսաստների վաճառաշահ հայրենիք, նա էր որ սուաջին անգամ տուեց հայերին տպագրութիւն. նրա մէջ էր, որ հայ գրականութիւնը մի երկարաժամկետ ապաստան գտաւ: Հէնց այն միջոցին, երբ Մխիթարը գեռ տուն ու կայան չէր գտել իր համար, այդտեղ պատրաստ կար հայ տպարան, հրատարակւում էին հայերէն գրքեր: Մի պարարտ, արդիւնաւոր հող էր դա, և Մխիթարին ու նրա գործակիցներին մնում էր որքան կարելի է շատ մշակել, շահագործել այդ հողը:

Մեթօնը գրաւեցին օսմանցիները, քանդեցին, այրեցին: Մխիթարը այլևս վերադարձի ճանապարհ չունի, նա սիպուած է իր միաբանութեան համար տեղ որոնել Վենետիկում: Բայց նոր դժուարութիւն: Վենետիկի կառավարութիւնը որոշել է այլ-ևս թոյլ չը տալ որ կրօնական միաբանութիւններ աւելանան եղածների վրայ: Մխիթարը դիմում է ազդեցիկ մարդկանց, ուրնցից շատերը ծանօթ էին զեռ Մօրէայից: Երկար պէտք էր ինչորեւ, շատ զոներ պէտք էր ծեծել: Նոյն բախտը, որ հովանաւորում էր սեբաստացի կրօնաւորին Մօրէայում, օդնեց նրան և այստեղ: Վենետիկի Սենատը համաձայն էր խախտել իր դրած օրէնքը և բացառութիւն համարել արևելցի կրօնաւորներին, եթէ նրանք կը հաստատուեն քաղաքից հեռու:

Վենետիկից դուրս, ցամաքի վրայ, դժուար էր յարմար տեղ գտնել: Մխիթարը աչք դրեց քաղաքը շրջապատող փորրիկ

կղզիների վրայ և ընտրեց գրանցից մէկը, որ շատ յարմարութիւնուներ էր ներկայացնում թէ գիրքի և թէ օգի կողմից: Կղզում բնակիչներ չը կային. միայն մի պարտիզասն էր առլում, որ մշակում էր այդտեղ նզած պարտէզը: Կար և մի հին եկեղեցի ու. Ղազար անունով՝ Նա ունէր հին, խարխուլ բնակարաններ, մի մեծ պարտէզ և երկու ջրհոր: Միսիթարը նորից սկսեց դիմումներ անել մեծաւորներին, ինչդրեւ որ իրան չնորհուի այդ կրղին: Սևնատն ընդունեց այդ աղերսանքը և, 1717 թուականի սեպտեմբերի 8-ին, միաբանութեան հիմնարկութեան տարեղարձին, Միսիթարը իր միաբանութիցների հետ հաստատուեց ո. Ղազարի կղզում:

Այդ օրուանից է, որ Միսիթարեան միաբանութիւնը ստանում է իր հոչակն ու պատկառելի անունը:

I. Է 0

(Կը Շարունակուի)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԽՍ-ՐԴ ԴԱՐԻ ՄԿՋԲՈՒՄ

Նոր, քասմներարդ դարի շնորհը ուսք զնովիս՝ բնական է որ մենք մեր անգամ զէպի յնտ նայենք, անցած և արդէն պատմութեան բաժին գարձած 19-րդ դարի վրայ, մի ամէխոփ հաշիւտանք մնալ, թէ ինչ էինք անցնալ դարում, ինչ հեք այժմ, և աշխատնք գուշակել, թէ ինչ կը լինինք ապօտայում։ Մեր կեանքի բարձրաւուսակ բարդ երևյթները թողնելով մնաք սահմանափակւում ենք մի համեմատական աինարկ ձգելով հայոց մոռաւորակամն գարդայման միամն մի ճիւղի, այն է հայագիտութեան վրայ։

Անցեալ, տասնեհններորդ դարի սկզբին, շատ բախտաւոր աղդ ենք եղել հայերս, ինքնարաւական և գոռող՝ մեր ազգային պատմութեամբ ու գրականութեամբ։ Եւ ինչպէս չը պարծենային մեր պապերը, գրախոտը՝ Հայաստանում, Արքանն ու Եւան Հայաստանի տառջին բնակիչներ, նրանք խօսելիս նն եղել հայերէն լուգուով։ Ասուուած էլ հայերէն է եղել նրանց հնու խօսելիս, Նոյի տագանը հանդշել է Մասիս ասրի վկին, գարձեալ Հայաստանում, Նոյը այգանեղ էլ տպրել է ու մնուել։ Ապացոյցներ՝ որչափ կ'ուզէք, ահա Նախճանան քաղաքը, որ նշանակում է նախիջնան, այսինքն առողջին իջնան Նոյի. ահա Ակսուին, որ նշանակում է արկ ուորի, այսինքն խօսդողի վազ անկեց. ահա Մարանոցը, որ նշանակում է մայր-անդ, այսինքն մայրը (Նոյի կինը) այնտեղ է թաղուած. ահա Երեանը, որ առաջին անգամ «երեւց» Նոյին և այլն։ Հայելը, մեր աղքի նահապեաը, Նոյի վեցերորդ սերունդն է եղել, աշուարակաշնութեան հսկաներից մէկը, որ Անսարից գաղթել է գարձնալ իր մայր երկիրը, Հայաստան, իր նախանաւ Նոյի մօտ, այստեղ սպանել է վիրագ հսկայ Բէլին, որին աղքերը ողաշում էին իրքի աստուած, և հիմնել է մեր աղքութիւնը։ Քրիստոնէութեան լոյսը առաջին անգամ ծագել է գարձեալ Հայաստանում։ Հայոց Արգար թագաւորը առաջին թագաւորն է լինում, որ ընդունում է քրիստոնէութիւն և միրաւում է և այն։ Ո՞ր աղքը ունեցել է այգան պարծանքի նիւթեր.—մի հայրենիք, որ երկու անգամ որրան է

Եղել մարդկութեան, մի լեզու, որ առաջինն է եղել աշխարհիս վրայ, մի նահապետ, ուղիղ աշտարակաշինութեան ժամանակից, բռնաւորութեան դէմ ազատութեան դրօշը կանդնեցնող, մի անդրանիկ քրիստոնեայ թագաւոր,—մի խօսքով՝ հայրենիք, ծագում, լեզու և կրօն՝ բոլորը առաջին կարդի...»

Այս գիտակցութիւնն ունէին, անկեղծ հաւատացած էին և քարոզում էին տասնեւններորդ դարի սկզբներում առաջաւոր հայ մատևնազիրները, և այս ինքնաբաւական, պարծենկոտ նուազը հնչում էր հայերէն պատմական գրուածքների և բանաստեղծութիւնների մէջ մինչև զարի երկրորդ գէսը և զեռ այս կողմը։ Դեռ եօթանասնական թուականներին մի ականաւոր հայ հեղինակ յիշեցնում էր իր հայրենակիցներին ազգային պարձագները, ասկեղով՝

«Մեր տէրն ի յերկնուց ծայրէն երբ իջաւ՝
Երկրիս հիման քարն յԱրարատ դրաւ...
Ի հայոց հողէն կազմնցաւ Ադամ,
Զօդն Հայոց Եւայն ծըծեց քաղցրահամ...
Այն սարին ծարէն Նոյ մտաւ ի տապան,
Զբագունդ երկրիս շուրջն եկաւ ման ու ման,
Իջաւ բազմնցաւ ի բարձրըն Մասիս,
Զաղու աղաւնին զըրկեց աւետիս.
Երկիրս էր դարտակ, անապատ ահեղ,
Լուկ ի Հայսատան կայր մարդկութեան տեղ...
Աբգար թագաւոր մեր քաջ, իմաստուն,
Թըղթով է խօսեր հետ Աստուածորդւոյն» և այլն։

Նուազք Զ. Ալիքանի

Բախտաւոր, զոհ էին մեր հայրերը։ Բայց այս բախտաւորութիւնը նման էր այն երեխայի բախտաւորութեան, որ իր ծննդավայր զիւղից ոտքը դուրս չը դրած՝ ճանաչում է միայն իր զիւղի հորիդոնը, որից գուրս աշխարհ չը կայ նրա համար, այլ կապոյտ սարերն են, որոնց վրայ համնգչում է երկնքի կապոյտ մեծ, բոլորակ խուփը, որի համար հօր տունը ամենայն կատարելութիւն է, գոմը՝ սենեակ, որից աւելի լաւը դժուար է երեակայել, մարխի ծխացող ճրազը՝ հիանալի լուսաւորութիւն, զիւղացու փչած զուռնան՝ զմայլեցուցիչ երաժշտութիւն. ցեխոստ, նեղ անցքերը՝ օրինաւոր փողոցներ։ Երեխան զոհ է ամեն բանից, որովհետեւ ուրիշ բան չէ տեսել՝ բայցի իրան շրջապատող զիւղի կեանքից. առիթ չէ տնեցել համեմատելու իրանց զիւղը մի քաղաքի կամ մայրաքաղաքի հնտ, որ աստ թէ ուղիղ հասկացողութիւն կազմեր իր հայրենի զիւղի, իր հայրական տան

ու նիստ ու կացի մասին։ Սրա նման էր և մեր հայրերի բախ-
տաւորութիւնը անցեալ դարի սկզբներում—տգիտութեան բախ-
տաւորութիւնն, որ աւելի վատ է քան անբախտութիւնը։

Իսկ այժմ, քսաներորդ դարի սկզբում: Օ՛, մենք այժմ ան-
բախտ ենք, մեր աչքերից ընկել են այն վարդագոյն ակնոցները,
որոնցով ամեն ինչ վարդագոյն էին տեսնում մեր պապերը։
Մենք այժմ զիտենք, որ դրախտը Հայաստանում չէ եղել, որ
նոյն տապանը Մասիփի վրայ չէ իջել, որ Ադամն ու Նոյը հայե-
րէն չեն խօսել, որ Հայկը չէ եղել և Բէլին չէ սպանել, որ Աբ-
դարը հայոց թագաւոր չէ եղել։ Մենք գեռ այն էլ զիտենք, որ
մենք հայերս Հայաստանի բնիկ մողավուրդ չենք, այլ որ մեր
նախահայրերը գաղթականներ են եղել, որոնք եկել նուածել են
Ուրարդուի բնիկ Խալդերին և տիրելով նրանց երկրին՝ կոչել են
Հայաստան, ծիշտ այնպէս՝ ինչպէս յետոյ մոնղոլական և թաթար
ցեղեր եկան նուածեցին հայերին և տիրեցին նրանց երկրին։
Եւ այս բոլորը զիտեն ոչ միայն առաջաւոր հայերը, զիտնական-
ները, այլ աշակերտները ևս սովորում են գպրացական նստա-
րանների վրայ։ Ուրեմն բոլոր, բոլոր ազգային պարծմանքները
մի դարի ընթացքում ոչնչացան, անդառնալի կերպով կորան,
և այսօր, երբ նրանց մասին խօսք է լինում՝ նրանք համարում
են միամիտ աւանդութիւններ աղքի խակ, մանկական հասակի,
չընայելով որ այդ ազգը երկու-երեք հազար տարուայ զրատկա-
ռելի հասակ ունի։

Սյապէս ուրեմն տեսնում ենք, որ տամնեիններորդ դարը
մեր պատմական-ազգային զիտակցութեան վերաբերմամբ մի
շատ կարեոր շրջան է կազմում, որի ընթացքում պատմական
բոմնատիկ ուղղութիւնը հետզհետէ տեղի է տալիս բէտրական
ուղղութեան, օրօրող, երազող բանաստեղծութիւնը՝ անողոք,
սիթափ իրականութեան։ Մեր մանկական զիտակցութիւնը թիւա-
կոխում է դէպի պատմանեկան հասակը, սկսում է չուրչը նայել,
ծանօթանալ, համեմատել, և ահա նախկին ինքնարտական
թմրութեան յաջորդում են՝ նախ կասկածներ, ապա բողոք, հե-
տազօտութիւն, հիասթափութիւն, որոնք վերջապէս տեղի են
տալիս հանդարս ինքնաճանաչութեան և ասպարէղ են բաց
անում եռանդուն աշխատութեան համար։

Ազգային զիտակցութեան մէջ տեղի ունեցած այս յեղա-
փոխութիւնը բնական է, որ առանց կոռուի, առանց դիմադրու-
թեան չէր կատարուի։ Խորտակել ազգային կուռքերը, ոչնչա-
ցնել այն փաստերը, որոնց հիման վրայ հայը իրան ճանաչում էր
իբրև Աստուծու ընարեալ ժողովուրդ, առաջինը աղքերի մէջ՝
հեշտ բան չէր։ Աւանդութեան միամիտ հաւատացողները քըն-

նագաստութեան սթափեցնող ձայնից վեր թռան, և սկսեց կոփերիու ուղղութիւնների մէջ։ Հայոց լեզուին ու գրականութեան տղէտ, հայատեաց, յանդուգն, սրբապիղը և այն հրատարակութեցին նոր ուղղութեան հետեւղները, բայց սրանք նոյնպիսի սահնասրտութեամբ շարունակեցին իրանց գործը՝ լնչպէս վիրաբոյժը բոլորող ու արտնջող հիւանդի վրայ կատարում է իր գործարակութիւնը, մինչև մերջապիտէս բողոքներն ու լուսանքները դասպարնեցին, աւանդութիւնը անդառնալի կերպով չքացան. և այսօր պատմական-մատենագրական ասպարէդում վիճաբանութիւնները կատարուամ են բոլորովին տարբեր, իրական, զուտքնաշտական հողի վրայ։

Ո՞վ էին նոր ուղղութեան հետեւղները և ինչ արին նըրանք, որ յաջողեցան յիշեալ յնողափոխութիւնը առաջացնել հայոց պատմական գիտակցութեան մէջ։—Սրանք մի խումբ գիտնական բանասէրներ էին, որ դիտական մէթոդով ձեռք զարկին ուսումնաօիքնելու և քննելու մեր հին մատենագրութիւնն ու լեզուն և նրանց համեմատելու ուրիշ ազգերի մատենագրութեան ու լեզուի հետ։ Սրանք սկզբուում եւրոպացի արևելացէտներն էին, որոնք հետախուզաց ազգերով մօտեցան մեր հին պատմութեան ու լեզուին, նախ անհամարձակ, տպա վստահ, վերջը խիզախաբար բաց արին նրանց քօղարկող խիտ վարագոյքը, սըրբեցին գարերով զիրուած փոշին, և հետզհետէ, աշխատութիւնը առաջ գնալու չափով, մեր պատմութիւնն ու լեզուն սկսեցին երեւել իրանց իրական դրութեամբ։ Եւրոպացի գիտականների հետեւղութեամբ առաջ եկան և հայ բանասէրներ, որոնք նոյն եռանդով աշակից եղան նրանց ճշմարտութիւնը բաց անելու արդիւնաւոր գործում։ Շրէօդէր, Լալլուգ, Վիտոն եղբայրներ, Սէն-Մարտէն, Լանգլուա, Ֆլորիվալ, Դիւլորիէ, Բրօսէ, Նէյման, Պէտէրման, Դը-Լազարա, Հիւրշման, Բառումզարտնէր, Լառէր, Գուտշմիտ, Բուգգէ, Կարրիէր, Գէցիէր, Կօնիբիր, Մառ, և այն և այն—սրանք այն եւրոպացի և ուսւ գիտականներն են, որ աշխատել եւ սմանք գեւու տշխատում են հայոց հին մատենագրութիւնն ու լեզուն լուսաբաններու։ Խոկ սրանց հետեւղ ու գործակից հայ հեղինակներ եղել են և են Գաֆթըրմեան, Գարագաչ, Էմին, Պատկանեան, Նորայր Բիւզանդացի, Այտնեան, Տաշեան, Մէնէլլիշեան, Գալէմբարեան, իրանց «Հանդէս Ամօրեայով», Սարգ. Սարգսեան, Խաբաթեանց, Միարան, (Գալուստ Տէր-Մկրտչեան) և այն։ Վենետիկի Միիթարեան միաբանութիւնն ու «Բագմավէլը» առանձին տեղ են զրուում հայ լնդուի ու մատենագրութեան մշակների շարքում։ Նրանք եղել են

և են սրահապանող առանգական հայեացքների, բայց հէնց այս ուղղութեան մէջ էլ չէ կարնի ուրանալ նրանց օգտակար նշանակաթիւնը նրանով, որ հին աւստակէաները պաշտպաննելով նոր հայեացքների դէմ՝ միջոց են տուել իմնդիրները սաղմակողմնի կերպով քննուելու, չը խօսեզով այն մասին, որ երբեմն ուղղել են նոր հայեացքներում մօւաք գտած սփառնները. բայց վիճակիցոց զիսաւոր ծառայութիւնը կայանում է ուրիշ ըանում: Նրանք եղան, որ ապագրեցին հայ հին հոգինակները, ապագրեցին բաղմաթիւ հայերէն քննականութիւններ, բառարաններ. նրանք առաջինը և մինչև այժմ միակն եղան, որ վարձեցին հայոց գրականութեան սիստեմուկան սպառութիւններ կազմել, հայոց հին թարգմանական գրամիանութեան մասին կարեւոյն չափ մանրամասն աւելինելութիւն տալ, հայերէն ասրագրուած զըրքերի ցուցակ պատրաստել: Վերջապէս նրանք եղան հայերէնի ուսուցիչ մի շաբթ եւրոպացի հայոգէանների: Այս աւստակէաններից՝ Վեննակի Միլիթարեանները անտարակոյս շատ նպաստել են հայացիառութեան բարյուցման, հարուստ նիւթ և միջոցներ մաստակարարելով քննութեան համար: Այս պատճմուով Զամշեանի, Խնձինանի, Մ. Աւգւենեանի, Բագրատունու, Աւետիքնանի, Ալիշանի, Զարբանակեանի և այն անոնմները միշտ պատռաւոր տեղ պէտք է բանեն հայագիտութեան պատռութեան մէջ:

Հայոց հին մատենագրութեան հետազօտութեան գաւառում հայագէանների ուշագրութիւնը պէտք է գրաւէր նախ և առաջ և զիսխառորապէս հայոց պատմութեան հայրը՝ Մագսէս Խորենացին, որովհետեւ նա միասի հողինակն էր, որ գրել էր հայոց պատմութիւնը՝ միզնաւորութիւնից, այսինքն աշտարակութեանութիւնից, մինչև հինգերբրդ զարի կէսերը Քր. յստոյ. նա էր, որ իբրև ազքիւր զոր էր ածել բարձր հետաքրքրութիւն անեցաղ պատմական դրուածներ, որոնք այժմ կորած են, վերջապէս նա էր սոսաջին հաւարագալը այն աւելինելութիւնների՝ որոնց վրայ զիսխառապէս հիմնուած էին առանդութիւններ հայ աղքի, չնզուի և կրօնի պատուաւոր զիբքի մասին: Եւ ահա Խորենացու պատմութիւնը սկսում են թարգմանել դաշնաղան եւրոպական լեզուներով *), որոնց միջոցալ թարգմանիչները զիսխառ-

*). Կատիներէն՝ Երկու անգամ, 1733-ին Երէնների ձևորով (կիսուո) և 1736-ին Վիտոն եղբայրների ձևորով. Գլանսերէն՝ Երեք անգամ՝ 1836-ին և 1842-ին Ֆլորիվալի ձևորով և 1857-ին Լանդլուալի ձևորով. իստակերէն՝ Երկու անգամ, 1841-ին Կատակելէստի ձևորով և 1849-ին Վինեալի Միլիթարեանների ձևորով. ոտոսերէն՝ Երեք անգամ 1809-ին Յոյն, սարկ, Յովհաննիստանի ձևորով և 1858-ին ու 1893-ին Կմինիւ ձևո-

կան աշխարհին ծանօթացնում էին մի հայ առաջնակարգ պատմագիր, հաւասար Հերոդոտին: Թարգմանութիւններին կցուած էին լինում ծանօթութիւններ, որոնց նպատակն էր բացատրել հեղինակի մութ գարձուածքները, աեղեկութիւն տալ նրա յիշած աղբիւրների և պատմական անցքերի մասին, կամ լուսարանել այն աեղերը, որոնք հակասում էին ուրիշ աղբիւրներից յայտնի իրողութիւններին: Քանի առաջ էր զնում զիտնականների ծանօթութիւնը Խորենացու պատմութեան հետ՝ այնքան հետզհետէ ծագում էին կասկածներ նրա աղբիւրների և աւանդած աեղեկութիւնների մասին: Մի ամբողջ հատոր հարկաւոր կը լինէր գրել՝ յիշելու համար բոլոր քննադատութիւններն ու պատասխանները Խորենացու պատմութեան վերաբերմամբ, այս պատմութիւնը ստեղծել է մի ամբողջ քննադատական գրականութիւն, որ արդէն մի մասնագիտութիւն է կազմում հայոց մատենագրութեան մէջ: Մենք միայն հարկանցի կը նշանակենք այդ քննադատութեան գլխաւոր փազիմները և այժմեան դրութիւնը:

Բանասէրների կասկածը ծագեցրեց նախ և առաջ Խորենացու նախնական պատմութեան գլխաւոր աղբիւրը, Մար-Աբաս Կատինան: Բատ Խորենացու վկայութեան՝ Վաղարշակ, Հայոց առաջին Սրչակունի թագաւորը (մօտ 150 տարի Քր. առաջ), կամնալով ստոյդ տեղեկութիւններ ստանալ Հայաստանի նախկին պատմութեան և նախարարական տոհմերի ծագման մասին և այսպիսի տեղեկութիւններ Հայաստանում չը գտնելով ուղարկում է իւր աւագ եղբօր, Սրչակ Մեծի մօտ մի ասորի զիտնական, Մար-Աբաս Կատինայ անունով և ինզրում է եղբօրից՝ զիտնականի առաջ բանալ Նինուէի զրատունը, որպէսզի Մար-Աբասը այնտեղ վնատոէ և իրան բերէ իրան հետաքրքրով պատմութիւնը: Մար-Աբասը Նինուէի զրատունը քրքրելով՝ գտնում է մի հին ձեռագիր, որ պարունակելիս է եղել նախնեաց բուն պատմութիւնը, քաղցէարէն և յունարէն լեզուներով և ունեցել է մակաղրաւթիւն, թէ քաղցէարէնից թարգմանուել է յունարէն՝ Աղեքսանդր Մեծի հրամանով, ուրեմն չորրորդ գարի քսանական թուականներում Քր. առաջ: Այս զրգից Մար-Աբասը քաղում է միայն հայոց վերաբերեալ պատմութիւնը և բերում է Վաղարշակին, որ զիրքը իբրև թանկապին զանձ պահում է իւր գամճարանում և մի մասը փորագրել է տալիս արձանի վրայ: Այս զրքից ահա օդտուելով Խորենացին պատմում է մեր նախնական

քով. գերմաներէն՝ մի անդամ, 1869-ին, Լառէրի ձեռքով. հոնդարերէն՝ մի անդամ, 1893-ին, Գրիստոֆ Սոնկոստի ձեռքով. հայերէն աշխարհարար՝ երկու անդամ, 1889-ին և 1898-ին Խորէն Սուելիանէի ձեռքով:

պատմութիւնը, որի մէջ մտնում են Հայկ, Արամ, Տիգրան և մինչեւ Վաղարշակ և նրա որդին Արշակ:

Եթէ վաւերական է Խորենացու այս պատմածը Մար-Աբասի և նրա զրքի մասին, ապա վաւերական կը լինի, գոնէ մեծ հնութեան վարկ կ'առնենայ, և հայոց նախնական պատմութիւնը, իսկ Վաղարշակի և Արշակի պատմութիւնները բոլորովին վաստակելի կը լինին, որովհետո Խորենացու ասածից յայանի է, որ Մար-Աբաս ինքն է զրել զրանց պատմութիւնները իբրև ժամանակակից: Բայց զանազան բանապահ քննութիւննը մի քանի տասնեւակ տարիների ընթացքում՝ ցոյց տուեց, 1) որ Նինուէն կործանուած էր գեռ վկցերորդ դարում՝ Քր. առ., ուրեմն ոչ Աղեքսանդր Մակեդոնացու և ոչ Արշակ Մեծի ժամանակ նա գոյութիւն չունէր. 2) որ եթէ գոյութիւն էլ ունենար Նինուէն կամ նրա զրատուար՝ այնտեղ կը լինէին սեպազիր արձանազրութիւններով աղիւաներ, ինչպէս երեսում է այժմեան պեղումներից Նինուէի աւերակներում, այն-ինչ ըստ Խորենացու պատմութեան՝ Մար-Աբասը դաել է այնտեղ զիրք՝ երկու լեզուով. 3) որ եթէ այդպիսի զիրք էլ լինէր Նինուէի զրատանը՝ զրա որարունակութիւնը համապատասխան կը լինէր Ասորեստանի պատմութեան ոգուն, որ արտապայտում է սեպազիր արձանազրութիւնների մէջ. այն-ինչ Մար-Աբասի պատմութեան մէջ Ասորեստանի նախնիք—Բէլ, Շամիրամ և այն, շատ անպատճ կերպարանքով են դուրս բերուած, և ընդհակառակին, զիւցալնացած են նրանց հակառակորդ հայերը. 4) որ Բէլը, Շամիրամը իրական մարզիկ չեն եղել, այլ Բարելա-Ասորեստանեան աստուածութիւններ, ինչպէս և Հայկը՝ նին հայկական աստուածութիւն, ուրեմն և անփառերական է նրանց պատերազմների և ուրիշ գործերի մասին պատմուածը, 5) վերջապէս Մար-Աբասեան պատմութեան մէջ երեսում են բազմաթիւ նշաններ, որոնք ցոյց են տալիս, թէ հեղինակը քրիստոնեայ է, Ս. Գրքին հետևող, բայց կամնեցել է կեղծիքով ցոյց տալ ինքն իրան իբրև հեթանոս: Այս բոլոր և գեռուրիշ հիմքերի վրայ՝ բանասիրութիւնը եղբակացրեց, որ Մար-Աբասեան պատմութիւնն անվաւերական է և շարադրուած է Քրիստոնից շատ յևսոյ մի քրիստոնեայ բարեպաշտ հեղինակի ձեռքով, որ իր պատմուածքի նշանակութիւնը բարձրացնելու համար՝ հնարել է Վաղարշակի, Արշակ Մեծի, Աղեքսանդր Մակեդոնացու և այն առասպելը:

Այս եղբակացութիւնը առաջին մեծ հարուածն էր, որ արուեց Խորենացու պատմութեան նրա զրքի ամնաթանկաղին մասը, նախնական ժամանակակի մասին, որի պատմիչը ինքն էր և իր համբաւաւոր աղբիւրը, Մար-Աբասը՝ կորցրեց իր

նշանակութիւնը իրբե ստուգ պատմութիւնն և տու առաւելին մնաց իրքե մի առասպնդախառն առանցութիւն՝ շաբազրուած կամ զրի առնուած քրիստոնէակրն զարեւում: Հայկ և իր պատերազմը Բէլի հետ, քաջ ուշխարհակալ հայրենասէր Սրամը, առաքինի գեղեցիկ Սրան, քաջ Տիգրան Հայկազնեանը, որ սպանել էր իր ձեռքով Աժակակին, Վահէն և այլն, որոնք մի քանի հարիւր տարի հայոց մնածագործ նահատակներն էին համարուած՝ բոլորը երազի նմոն անհետացան իրբե պատմական անձնաւորութիւններ...

Բայց քննազատութիւնը գևո նոր էր սկսել իր զործը: Հարց ծագեց այնուհետեւ, թէ ով է եղել Մար-Արաւարոն պատմութիւն հնարազը, արդեօք Խորենացին ունեցել է իր ձեռքին մի այգափոխ պատմական աղբեւք, թէ... ինչն է ստեղծել թէ Մար-Արաւարոն և թէ Նրա պատմութիւնը: Ռուբենի բանասիրութիւնը սրանով չօշափնդ Խորենացու բարեկազմութեան հարցը, արդեօք նա զո՞ւ է զնացել մի անծոնօթի կեղծքին, թէ ինքն է կեղծիք հնարազը: առաջին զէտքում՝ Խորենացին միամասուրար մխալուած կը լիներ, երկրորդ զէտքում՝ նենդաւորութեամբ ստոր: Երկու տևասկէտներն էլ ունեին իրանց պաշտպանները: Վերջին ստորամնակում կատարուած քննութիւններով լուծակց և այս հարցը: Ակզբում պրօֆ. Կարբիկը մաթեմատիկական մէթոդով ասդացուցեց, թէ Խորենացի և Մար-Արաւարոն նոյն անձնաւորութիւններն են, ուրիշ խօսքով՝ Մար-Արաւարոն աղբիւք չէ ունեցել Խորենացին, ոչ լինէ որ զրում է նրա անունով ինքն է հնարում Բայց սրա հակասակ բաղմաթիւ քննութիւններ (Ե. Մառի, Ֆէտակիրի, Խաչաթեանցի հայլ) ցոյց տուին, որ Խորենացին ունեցել է և օգտուել է Մար-Արաւարի անունը կրող մի կերծ զրաւածքից, և թէ այդ զրուածքի մի ուրիշ խօմբազրութիւնը պահապանուած է ուրիշ մի հնկինակի մօտ (Խերէսափ Ա. դպրութեան մէջ): Վերջը Կարբիկը ինքն էլ խօսաովունեց, որ Խորենացին արդարի ունեցած պէտք է լինի Մար-Արաւարոն աղբիւք և թէ նա ընդունակ չէ հնարելու չնդած նոր աղբիւքներ:

Մի անգամ որ Խորենացու զիմուաւոր աղբիւքի, Մար-Արաւարի, կեղծիքը բացուեց՝ կսակածները սասակացան և նրա միւս աղբիւքների զնրարելուամբ: Յիշմաք մի-երկւուը միայն: Պրօֆ. Կարբիկը քննութեան ենթարկեց Խորենացու պատմութեան այն դէտիները, որտեղ պատմում է Սրամի, Սրդարի, Սանարուկի և Սնանունի մտաբն, և համեմատեց Լարութնացի (Ղերունացի) պատմութեան հետ, որ ծասացել է Խորենացուն իրի աղբիւք այս տեղերում: Համեմատութիւնը պարզեց ընթերցողի առաջ Խորենացու սովորութիւնները՝ աղբիւքներից օգտուելու

նկատմամբ.—Նա միւսնողաւոյն թէ բարեխիզծ է և թէ կամայական. բարեխիզծ է նրանով, որ ոչնչ իրանից չէ հնարում, այլ առնում կամ եղբակացնում է աղբիւրներից. կամայական է նրանով, որ աղբիւրի տեղեկութիւնները ինքն ուղղում կամ լրացնում է այն կերպով՝ ինչպէս իրան հաւանական է թւում՝ ուրիշ աղբիւրների կամ անձնական դաստիարակութեան հիման վրայ։ Այսպէս, օրինակ, Սբգարը Եղեսիայի թագաւոր է ըստ Լաբուրնայի. Խորենացին, գիտնալով, որ Եղեսիան Հայաստանի սահմանների մէջ է ընկնում՝ եղբակացնում է, թէ ուրեմն Սբգարը հայոց թագաւոր է եղել, որ իրօք այսպէս չէ։ Կամ՝ կարդարով հայերէն Լաբուրնայում Սբգարի տիտղոսը—«Սբգար Արշակ»՝ եղբակացնում է, թէ ուրեմն Սբգարի հայրն եղել է Արշամ, ուստի և ստեղծում է մի նոր թագաւոր հայոց—Արշամ անունով. այն ինչ սբարգում է, որ Լաբուրնայի հայերէն թարգմանութեան «Արշամաց» բառը աղաւաղութիւն է Լաբուրնայի տարերէն լուսագրի «ուկամայ» բառին, որ Սբգարի մակղիրն է և նշանակում է սե—«Սև Սբգար»։ Եւ այն Պրօֆ. Խալաթեանց քննութեան ենթարկեց Խորենացու վիրական աղբիւրները։ Յայտնի է, որ Խորենացին յունախ լիշում է հին Հայաստանի վիրասանաց երգները կամ Գողթան երգները, որոնցից երրեմն նոյնութեամբ հատուածներ էլ է մէջ բերում և մի քանի գլուխ իր պատմութիւնից—մանաւանդ Սբուաչս Բ-ի և Սբաւաաղդի մասին, հիւսում է այդ երգերի բովանդակութիւնից, նրանց այլարանութիւնը (այսինքն ըանաստեղծական փոխարերութիւնը) ճըշմարտելով (այսինքն՝ պատմական լիւուի վերածելով, մեկնելով): Մ. Էմինը շատ աշխատել է Խորենացու այս վէպերն ուսումնասիրելով, նրանցով զբաղուել են և ուրիշ բանասէրներ (Գաթըրծեան, Զարբանալեան, Դիւլորիէ, Ֆէտաէր և այլն): Էմինը ցոյց էր տուել, թէ ոչ միտոյն այն հատուածները, որ Խորենացին, բայ իր վկայութեան, տուել է վէպերից, ոչ և շատ ուրիշ գլուխներ (Հայկ—Սբամ—Տիգրան և այլն) հիւսուած են նոյն աղպային վէպերից, և թէ Մարտ-Սբաս, կամ ով և լինի նրա պատմութեան հնարազը, իր պատմական նիւթը քաղել է ոչ թէ նինուէի զրատանից, այլ հայոց ժողովրդական երգերից։ Այս տեսակէտով առանձին նոր որդէք կը ստանար Խ-ու պատմութիւնը, իբրև հաւաքիչ հայոց հին աղպային պատմական աւանդութիւնների, որսնը այժմեան բանասիրութեան աչքում թանկադին նիւթեր են որ և է աղգի հին պատմութեան, աղբադրութեան և կրօնի համար։ Ցայց Էմինի այս տեսակէտին ուժեղ հակառակորդ գուրս եկաւ. նրա աշակերտ Պրօֆ. Դր. Խալաթեանցը։ Սա 1896-ին հրատարակեց մի ընդարձակ աշխատասիրութիւն, «Արմանեկի

епохе въ исторіи Арменіи Моисея Хоренскаго» վերնագրով, որի մէջ ճպում է ի միջի այլոց ապացուցանել, թէ Խորենացու յիշած և գործածած հայկական վէպը՝ ժողովրդի ստեղծագործութիւն չէ, այլ գրաւոր ծագումն ունի և աւելի կամ նուազ յաջողութեամբ վերաբշակումն է ամսովիս նիւթերի, որոնք վերցրուած են Աստուածանչից և ուրիշ թարգմանական կամ հայերէն հեղինակութիւններից: Ուրիշ խօսքով առելով՝ պրօֆ. Խալաթեանց, հերքում էր գոյութիւնը այն ազգային վիպատանների, որոնց երգերից Խորենացին, ինչպէս ինքը վկայում է, քաղել է իր պատմութեան այս կամ այն հատուածը և որոնցից մի քանի տողեր տեղ-տեղ մէջ է բերաւ անփոփոխ: Խալաթեանցի այս աշխատութիւնը, չը նայելով որ պարունակում է շատ զեղեցիկ և յաջող ուսումնասիրութիւններ Խորենացու պատմութեան հետ կապուած ուրիշ խնդիրների մասին, բայց վերսոյիշեալ էական մասում ընդունելութիւն չը դատ քննադատութեան կողմից: Թողնելով ուրիշ քննադատութիւնները այս մասին՝ բաւականանակ յիշելով Մ. Արեգեանի ուսումնասիրութիւնը «Հայ ժողովրդական ասասապիկները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ» (մի շաբթ յօպուածներ, որ սկսեցին տպուել «Արարատ» ամսադրում 1899 թ. յոնիսից և դեռ շարունակում են), որի մէջ հեղինակը մի առ մի քննութեան է ենթարկում Խորենացու՝ իրեն վէպ մէջ բերած և իրեն վիպական աղբիրից քաղած հատուածները, քննադատում է Գ. Խալաթեանցի հայեացքներն ու փասեերը նրանց մասին և գալիս է այն եղբակացութեան, թէ հին Հայաստանում գոյութիւն ունեցել են պատմական բավանդակութեամբ ժողովրդական երգեր ու առասպեշներ, և Խորենացին օգտուել է նրանցից:

Բայց Խորենացու անձնաւորութեան և նրա պատմութեան վարկի նկատմամբ ամենամոռչոր հարցը որ ծագեց՝ այն էր, թէ երբ է զրուել այս պատմութիւնը։ Խորենացու իր մասին տուած կցկատը աեղեկութիւններից երեսում է, որ նա եղել է Ս. Սահակի և Մէկորովիքի աշակերտ, նրանց հրամանով Եփեսոսի ժողովից (432 թ.), յետոյ ուղարկուել է ընկերներով Ազգեստնդրիա քաղաքը՝ ամսնծալի յունաբէն եզրուն սովորելու, ուսումն առնելուց յետոյ Հայուսառան վիրագառնալով նա իր վարդապետներին չէ գտնում այլիս կենդանի, և նրանց մահը ողջուում է շատ սըրտառուչ կերպով, ինչպէս մէկը, որ զրկուել է բալոր յախից ու միտթարութիւնից և շուրջը տեսնում է միայն քայլայում և թշնամական վերաբերմունք դէօփի իր անձն ու գիտական պատրաստութիւնը։ Հիմնուելով այս ցուցանքների վրայ և յիշելով որ պատմապիրը ինքն իրան կազում է—պատմութիւնը զրկու.

ժամանակ—«ծեր, հիւանդու»՝ բնականապէս եղրակացնուոմ էր, որ Խորենացին ապրել է հինգերորդ դարում և պատմութիւնը գրել է նոյն զարի վերջերում։ Այսպէս էլ ճանաչուած էր Խորենացին երկար դարերի ընթացքում, մինչև մօտ ժամանակներու Բայց բանասիրական քննադատութիւնը այս կողմից էլ չօշափեց նրա պատմութիւնը և մի շարք փաստերի վրայ հիմնուելով կարծիք յայտնեց, թէ այդ պատմութիւնը հօթներորդ—ութերորդ, մինչև իսկ իններորդ դարի գործ է։ Այս կարծիքը ճշտուելու գէպքում՝ Խորենացու պատմութիւնը կը դառնայ մի գրական կեղծիք, իսկ հեղինակը—կը լինի նա, Մովսէս Խորենացին կամ մի անձանօթ հեղինակ—կը հանդիսանայ իբրև խարեւայ կեղծող երկու գէպքումն էլ վերջնականապէս կը կուրուի այս պատմութեան ու նրա հեղինակի պատմական ու բարոյական վարկը։

Այս կարծիքն արծարծող ու փառարանող հանդիսացաւ անցած դարի իննամական թուականներում (1893-ից սկսած) ֆրանսիացի հայագէտ պրօֆ. Ա. Կարրիէր, թէպէս նրանից մօտ 10 տարի առաջ էլ նոյն կարծիքը յայտնել էր և գերմանացի գիտնական Գուաշմիտը, որ մի քանի պատմական-ժամանակագրական փաստերի հիման վրայ՝ եղրակացնում էր, թէ Խորենացու պատմութիւնը դրուած պէտք է լինի եօթներորդ դարի առաջին կէսում (634—642 թուականներին), մի անձանօթ հայի ձեռքով, որ իւր վրայ է առել Մովսէս Խորենացու դիմակը։ Բայց Ա. Կարրիէր աւելի առաջ գնաց, նա ցոյց առեւց հօթներորդ դարի վերջում զրուած հայերէն ազգիւրներ (զլսաւորապէս Սեղբեստրոսի վարքի և Սոկրատի եկեղեցական պատմութեան հայերէն թարգմանութիւնները), որոնցից անկասկածելի կերպով օգտուել է Խորենացին, որից եղրակացըրեց, թէ այս պատմութիւնը չէ կարող զրուած լինել ութերորդ դարի սկզբներից առաջ։ Կարրիէրի հետքով գնացին և հայ բանասէրներ, որոնցից պրօֆ. Գր. Խալաթեանց մի քայլ էլ աւելի առաջ գնաց—պատմութեան զրութեան ժամանակը հասցընց ութերորդ դարի վերջերը կամ իններորդ դարի սկզբները Այս ժամանակները (1897) տպագրաեց Սեղբեստրոսի վարքի հայերէն թարգմանութիւնը, որ կատարուած է 678 թուին, այստեղ գտնուեց մի երկար գովասանական հասուած Սեղբեստրոս հայրապետի մասին, մի և նոյն հատուածը, չատ աննշան տարբերութիւններով, գտնուում է Խորենացու պատմութեան միջն յարմարեցըրած Ա. Մեսրովին... Այս նմանութեան կամ փոխառութեան վրայ միաժամանակ մատնանիշ եղան Գր. Խալաթեանց և Գ. Տէր-Մկրտչեանց, և քանի որ անտարակուալի էր համարւում, որ այստեղ փոխառութիւնը անողը Խորենացին է և ոչ թէ վարքի թարգմանիչը՝ ինքն

ըստ ինքեան եղբակացրուեց, որ 678 թուից առաջ Խորենացու հայոց պատմութիւնը չը կար, այլ պէտք է զրուած լինէր դրանից յետոյ ութերորդ դարում, կամ նոյն իսկ իններորդի սկզբում, ինչպէս կարծում էր Գր. Խալաթեանցը:

Այս՝ միմեանց յաջորդող մերկացումներն ու եռանդով տարուած քննադատութիւնները առժամանակ զրեթէ բոլորին համոզեցին, թէ Խորենացու պատմութիւնը մատնադրական կեղծիք է, 8—9-րդ դարերում սարգուած, համոզուեցին մանաւանդ եւրոպացի բանասէրները, որոնք հնարաւորութիւն չունէին մանրամասն հետազօտութիւններ կատարել հայ մատնագրութեան մութ գաւառմներում): Բայց քիչ յետոյ (1898-ի վերջերումև 1899 թ. սկզբներում) լոյս տեսան երկու նոր ուսումնասիրութիւններ, որոնք հերքում էին վերոշիշեալ, արդէն զրեթէ ճշմարտութիւն համարուած կարծիքը: Առաջին ուսումնասիրութեանը մէջ, որ տպուեց «Մշակում», հեղինակը, Նորայր Շիւզանդացին, բազմաթիւ օրինակներով և համեմատութիւններով ցոյց տուեց, թէ այն տեղերում, որտեղ Խորենացին մի կողմից, իսկ Սեղբեստրոսի վարքն ու Սոկրատի եկեղեցական պատմութիւնը միւս կողմից՝ բառացի նմանում են միմեանց՝ փոխ առնողը ոչ թէ Խորենացին է, այլ Սեղբեստրոսի և Սոկրատի թարգմանիչները. ուրեմն Խորենացու պատմութիւնը 678 թուին եղել է արդէն մի հեղինակաւոր դրական երկասիրութիւն, որի հազորդած պատմական տեղեկութիւններից և յունարէն բնագրից թարգմանած պատրաստ հատուածներից օգտուել են Սեղբեստրոսի և Սոկրատի թարգմանիչները: *) Երկրորդ ուսումնասիրութեան մէջ («Սերէսոսի պատմութիւնը և Մովսէս Խորենացի») մենք աշխատեցինք ցոյց տալ, որ եօթներորդ դարի կէսերին զրող Սերէսս պատմագիրը օգտուել է Մովսէս Խորենացու պատմութիւնից, նրան յանուանէ յիշելով և կոչելով «հաւաստի և ճշմարիտ մատնազիր», ուրեմն Սոկրատի և Սեղբեստրոսի թարգմանութիւններից դեռ 30 տարի առաջ գոյութիւն ունէր և հոչակուած էր Մովսէս Խորենացու պատմութիւնը:

Այս վերջին ուսումնասիրութիւնների գէմ դեռ առարկութիւններ չեն եղել, և Խորենացու պատմութեան զրուելու ժամանակի ինդիրը այս զրութեամբ էլ մտնում է քսաներորդ դարը, դեռ վերջնական մօսի սպասելով:

Թէ՛ այս խնդիրը գեռ առկախ է մնացել, բայց 19-րդ դարում, մանաւանդ վերջին երկու տասնամետակում կատարուած քըն-

*) Ավտոս որ Խորացի ալո հետաքրքրական ուսումնասիրութիւնը, հեղինակի լնաւանեկան զժրախառնութեան պատճառով, թերի մնաց:

Նութիւնները շատ բաներ պարզեցին Խորենացու պատմութեան նկատմամբ: Խորենացին այժմ անսխալ պատմագիր չէ, պատգամափոս աւետարան չէ, ինչպէս համարուած էր զարերով և գեռ համարուոմ էր 19-րդ դարի սկզբում: Նա սխալական է և յաճախ՝ սխալաշատ: Նա չէ գործածել հին, ներկայուած անհետացած, վաւերական և խիստ հետաքրքրական աղբիւրներ, այլ նրա գործածած աղբիւրները ամենամեծ մասամբ ծանօթ են մեզ, իսկ որոնք անծանօթ են՝ կասկածելի է նրանց գոյութիւնը: Նա այլիս առաջնակարգ պատմական աղբիւր չէ, այլ երկրորդակարգ, որովհետև բանասիրութեան այժմ յայտնի են Խորենացու աղբիւրները, ուստի և բանասիրութիւնը ուղղակի աղբիւրներին է դիմում փոխանակ Խորենացու միջնորդութեանը դիմելու: Սրանց հետ միաժամանակ պարզուեց, որ Խորենացին հմտութեամբ, հայեացքներով, ճաշակով բարձր է կանգնած քան բոլոր հայ հեղինակները, որ նա մի հանճարեղ մատենագիր է, և նրա գրուածքը չէ կարելի վեր ի վերոյ քննադատել, այլ պէտք է մանրակրկիա ուշադրութեամբ կանգ առնել նրա ամեն մի խօսքի, ամեն մի բասի վրայ—պէտք է մեկնել նրան, որովհետև նրա ամեն մի խօսքը մտածուած և ըստ այնմ գրուած է: Այստեղից բնականարար ծագեց մի սրահանջ, որ սկսեց աւելի և աւելի ընդհանրանալ—այն է՝ նախ ունենալ Խորենացու պատմութեան բննական հրատարակութիւնը, և ապա նրան քննադատել. նախ հաստատ գիտենալ, թէ ինչպէս է զրել Խորենացին, յետոյ հասկանալ նրա գրածը, ապա թէ քննադատել: Այս պահանջը ծագեց նրանից, որ բազմաթիւ փորձերից երևաց, թէ շատ բան որ մենք մինչև այժմ կարդում էինք իբրև Խորենացու գրած և դէն էինք ձգում իբրև սխալ՝ Խորենացու գրածը չէ, այլ ձեռագիրների աղաւազութիւն է. երեաց նոյնպէս, որ շատ բան մենք գեռ չենք ել եղել հասկացած և մեր չհասկացողութեան պատճառով մեղադրելիս ենք եղել Խորենացուն: Այս կարեսր պահանջն էլ—ըննական, ստուգուած հրատարակութիւն, ոչ միայն Խորենացու պատմութեան, այլ և մեր հին հայ հեղինակների—19-րդ դարից անցնուած է քսաներորդ զարը և անկասկած կիրագործուի ներկայ դարում:

ՍՏ. ՄԱԼԵԿԱՍԵԱՆՑ

(Կը տարունակուի)

Ա.Մ. ՈՒ ՍՆ ՈՒ Թ. Ի Ւ Ն

(Առողջապահական ետիւդ)

«Քաղաքակրթութեան հիմքը ընտանիքն է։ Առաքինութիւնը ծաղկում է այն օջախում, որտեղ թագաւորում է սէրը ամուսինների մէջ։ Տիեզերքի բոլոր լեզուների ամենաշքեղ և ամենավսեմ բառերն են։ իմ կինը, իմ հայրը, իմ մայրը, իմ երեխան։ Առանց այս բառերի աշխարհը կը դառնար մի ահագին որչ, իսկ միջի մարդիկ—անասուններ»։

Այսպէս է խօսում մի փիլիսոփայ, որ բնական է համարում միմիայն օրինաւոր միակնութիւնը։ «Ո՛չ մի լեզուով չի կարելի նկարագրել այն վնասը, որ բազմակինութիւնը բերում է մարդկութեանը», ասում է նա։

Ամուսնական կեանքը թէ ֆիզիքական և թէ բարոյական տեսակէտներից, երջանկութեան մի անսպառելի աղբիւր է ամուսինների համար։

Ընտանիքը երկրային դրախտ է, եթէ նա բախտաւոր է։ Հակառակ դէպքում նա դժոխք է դառնում։

Բախտաւոր ընտանիքը կազմում է այն ժամանակ միայն, երբ պսակուղները լուրջ ու գիտակցօրէն կերպով են վերաբերուել դէպի իրանց ընտրութիւնը, այսինքն։ ղեկավարուել են գիտութեան ցուցմունքներով։

Սէրը դէպի պսակ տանող միակ ուղին պիտի լինի, անձնական երջանկութիւնն ու հասարակութեան բարօրութիւնը—ամուսնութեան նպատակը, իսկ ցեղի տևողութիւնը—նրա հետեանքը։

I

ՀՆՏԱՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ամուսնութիւնը իին դաշերում:—Ռազմամարդութիւն եւ բազմականութիւն:—Ամուսնանալու երեք սխտեմները, ոռեւանգումն (աղջիկ փախցնելը), զնումն (բաշլու) եւ փոխադարձ համաձայնութիւն:—Կնոջ դրութիւնը:—Նախնական բնտաճիք, առենակցական բնտաճիք, պրանակուա:

Նատ դարեր են հարկաւոր եղել մարդկութեանը, որ նա համնէր երկու սեռերի համակեցութեան ազնուացած ձեխն—միակնութեան և միամարդութեան:

Լեսանիքը նոյնպէս իր երկար, տխուր պատմութիւնն ունի, ինչպէս մարդկութեան բոլոր հիմնարկութիւնները:

Մեղ յայտնի չեն ընտանիքի էվոկեցիայի բոլոր աստիճանները, որոնցով այս փրկարար հիմնարկութիւնը հասել է մեր ժամանակուայ միակնութեանը: Հետազօտութիւններից ակներև է եղել այն, որ քաղաքակրթութեան արշալուսին տղամարդու և կնոջ մէջ կարող էին գոյութիւն ունենալ միմիայն սեռական յարաբերութիւնները, և մօտ դարերի լնթացքում միայն դիտութիւնը և հասարակական կեանիքը մշակել են և արդիւնել մի ուրիշ, աւելի բարձր, աւելի գաղափարական գերաբերումն դէպի կինը: Հին դարերում տղամարդը, իբրեւ աւելի ուժեղը, իշխող և տիրող էր, և նա նայում էր կնոջ վրայ, իբրեւ թոյլ էակի վրայ, որ ստեղծուած է նրան հաճոյք պատճառելու համար միայն:

Այս հայեացքն էր իսկապէս այն նսեմացնող, ստորացնող գերի պատճառը, որ խաղացել է կինը մարդկութեան կեանիքի մէջ, ծառայելով տղամարդուն միայն իբրև էգ:

Նախնական դարերում ընտանիք չը կար: Կինը ամենքին էր պատկանում: սիրոյ զզ ացմունքը ձուլում էր

սեռական կրքի հետ և տեսւմ էր այնքան, որքան տարշիանքը: Այս պայմաններում մարդը պիտի ազատ լիներ խանդոտութիւնից, որ զարգանում է միմիայն իսկական սիրոյ հետ: Չը կար նոյնպէս և այն սրբազն կապը—որդին, որ միջնորդ է և յաճախ գրաւական ամուսինների փոխադարձ յարգանքին ու սիրուն, որի վրայ, յամենայն դեպս, կենդրոնանում են երկու ծնող սրտերի ամբողջ քնքշութիւնը, նրանց բոլոր յոյսերը: Այս շղթան բայցակայ էր, քանի ոչ ոք չէր ճանաչում երեխայի իսկական հօրը, որ իր կողմից չէր հոգում իմանալու, թէ ինչ հետեանք էր ունեցել իր մի ժամուայ սէրը... Երեխան մօր զաւակն էր: Նա աչքերը բաց էր արել և միայն մօրն էր տեսել, մօր գրկումն էր մեծացել, վերջապէս մօր անունն էր կրում ու պիտի միշտ կրէր:

Բազմաթիւ հետազօտութիւններ ու վիճաբանութիւններն են տեղի ունեցել հների մէջ դոյութիւն ունեցած «ամուսնական սիստեմների» մասին:

«Այս անվերջ վէճերից, ինձ թւում է՝ թէ պարզուել է մի բան միայն», ասում է Տարտը, «այն, որ նախնական ընտանիքի կազմութիւնը մի քանի տեսակ է եղել. — մի տեղ տիրել է միակնուրիւնը, միւս տեղ—բազմակնուրիւնը, մի ուրիշ տեղ—բազմայրուրիւնը:

Այս ամուսնական ձեերի կողքին կարող էին գոյսութիւն ունենալ, երեխ, և տամաւոր ուրիշ դրութիւններ:

Սակայն բոլոր դրութիւնների հիմքը եղել են կամ կնոջ առեանգումն, կամ նրա գնումն և կամ փոխադարձ համաձայնութիւնը:

Բազմայրութիւնը (պօլիանդրիա)՝ երբ մի կին ապրում է երկու կամ մի քանի տղամարդկանց հետ, որոնք կարող են եղբայրներ լինել,— մինչեւ հիմի էլ գոյսութիւն ունի Հնդկաստանի թերակղզում, Հիմալայի վրայ, Տիբեթում և Մալաբարեան ծովեզրում:

Եատ աւելի տարածուած է եղել և է այժմն էլ,

բաղմակնութիւնը, որ, ինչպէս ասել ենք, կնոջ համար ստեղծում է մի վերին աստիճանի ստոր գիրք:

Հնդկաստանում, Եղիպտոսում, Ասորեստանում ու Բաբելոնում, տիրում էր բազմակնութիւնը: Մովսէսի օրէնքը չէր արգելում մի քանի կին առնել, իսկ մահմեդակաթիւնը սրբագործեց բազմակնութիւնը և քանդեց Զենդաւեստի օրէնքը, որով իսկական կինը մէկ հատ էր, թէև թոյլ էր արւում հարճեր էլ պահել:

Ամուսնութիւնը հին գարերում, իսկ մեր ժամանակներում ոչքաղաքակրթուած աղքերի մէջ, կատարւում է կամ զօռով (յափշտակութեամբ) կամ գնումով:

Առեւանգումն կամ աղջիկ փախցնելը անտարակոյս ամենազոեհիկ միջոցն է ամուսին ձեռք բերելու համար: Պատմական օրինակը—Սաբինեան կանանց յափրշտակումն էր, որ կատարեցին նախնական Հռովմայեցիները, դաժան կերպով, մի խնջոյքի մէջ: Հին գերմանայիները, իսկ մեր օրերում Դալմուխները, Զերքէզները նոյն կերպով են ամուսնանում: Նոյն ձեզ նկատում է կամչատկայում, նոր Զելանդիայում; իսկ մի քանի հնդիկ ցեղեր և Սամօյեցները ուղղակի զողանում են պատահած աղջիան կամ կնոջ, ինչպէս քաղցած գաղանը հանդիպած որաք: Յունաստանում և ոռւսաց երկրներում երեխ աղջիկ փախցնելը նոյնպէս հասարակական վարք ու բարքի մէջ է մտած եղել: Յունաստանում հարսին փախցնելը և մի քանի օր պահելը հարսանկքի ծէսի մէջ էր մտնում: Երկրորդ ձեզ—գնումն է, կամ աւելի ճիշտն ասած՝ փոխանակումն մի ուրիշ «ապրանքի» հետ: Կինը գառնում է մի ցանկալի առարկայ, որին աիրելու համար տղամարդը վճարում է իր ձին, իր տաւարը, մի զգեստ, մի զէնք, մի օղ, մի զարդ և այլն: Այս մի աւելի մեղմ, աւելի բաղաքակրթուած միջոց է.—կինը էլի որոշ գին է ստանում, թէև յաճախ աւելի էժան, քան մի որ և է թանկագին առարկայ:

Փամանակակից մի քանի աղքերի և մահմեդական ցեղերի մէջ աղջիկն ուղղակի գնում է փողով, և այս-

պիսով հարուստը հնարաւորութիւն է ունենում հարեմներ սարքելու։ Մեր ժամանակներում այս ձեզ գոյութիւն ունի մահմեդական աղդերի մէջ, ինչպէս և կաֆրների և ուրիշ նեղրերի մէջ։ Աֆրիկական ցեղերից մէկի թագաւորը կարող է մինչև 3300 կին ունենալ (բայց ոչ աւելի!)։ Մադագասկար, Մարկիզ և հարեւան կղղիների վրայ, Աֆրիկայում և ամերիկական հնդիկների մէջ, բազմական մինչև այսօր էլ բնական երևոյթ է։

Զինացիներն ու թիւրքերը (նոյն իսկ կրթուած դասակարգը) այժմն էլ պահպանում են ամուսնութեան այդ պախարակելի ձեզ։ Միանդամայն զարմանալի է, որ արդէն բաւականին քաղաքակրթուած ճապոնացին ևս գեռչի հրաժարուել հարեմական կացութիւնից։ Ճշմարիտ է, այնտեղ, ինչպէս և Զինաստանում, օրինական է համարւում առաջին զորս կանայքն էլ իսկական ամուսիններ են։

Մարդիկ միշա բողոքել են կնոջ այս սարկական գիրքի գէմ։ Նոյն իսկ հին գարերում, բազմակնութեան կողքին, մենք տեսնում ենք միակնութիւն, ամուսնական այս լաւագոյն ձեզ, որով հիմնում է իսկական ընտանիքը, որբազան օջախը։

Միակնութիւնը պահանջում է փոխադարձ հաւանումն եթէ ոչ հարսի ու փեսայի, դոնէ նրանց ծնողների մէջ։ Յաճախ ծնողները նշանադրում ու ամուսնացնում են իրանց զաւակներին, թէև պսակուողները իսկի իրար տեսած էլ չը լինէին։ Այսպէս էր նահապետական ժամանակներում արևելեան ցեղերի մէջ։ Այն ինչ հռովմայեցի աղջիկը ինքն էր ընտրում իր փեսացուին, և ծնողները չեին ստիպում նրան ամուսնանալ ըստ սիրած տղամարդու հետ։ Կելտ օրիորդը նոյնպէս իր ընտրութիւնով էր ամուսնանում։ — փեսացուն նա էր լինում, որին մատուցանում էր ընկելիքը։ Մի քանի սկամորթ ցեղերի մէջ աղջիկն աղատ է գնալ մի քանի օր մի տղամարդու հետ անց կացնել և յետոյ պսակուել նրա հետ և կամթէ կրկին վերադառնալ հօր տունը,

ըստ իր հաճութեան։ Այսպիսի փորձերն արգելք չեն լինում այդ աղջկան իր համար ամուսին դտնելու։

Անկարող լինելով աւելի երկար կանգ առնել այս աեղ ընտանիքի էվոլիցիայի վրայ, որի մասին մի շարք գիտականներ հետազոտութիւններ են արած, ես առաջ կը բերեմ Շրեօդերի կարծիքը այդ կարևոր խնդրի մասին։

Նախնական ընտանիքում սեռական յարաբերութիւնները կատարում էին ընտանիքի բոլոր անդամների մէջ, առանց խարութեան, իսկ օտար մարդ ներս չեր ընդունում։ Ընտանիքը կազմում էր մի մարմին, որ անհրաժեշտ էր թէ գազաններից և թէ ուրիշ մարդկացին խմբերից պաշտպանուելու համար։ Նախնական ընտանիքի մէջ իւրաքանչիւր կին պատկանում էր բոլոր տղամարդկանց և ընդհակառակը։ Զը կար ոչ մի հասկացուզութիւն արենակցութեան մասին և ոչ իսկ մի նշոյլ՝ խանդոտութեան։

Ընտանիքի զարդ ացման երկրորդ ֆաղը կազմում է արենակցական ընտանիքը, որի մէջ սեռական կապ ունին միմիայն առաջին պորտի անհատները։ — Ճնողները, երեխանները և եղբօր ու քրոջ զաւակները։ Այս ընտանիքից գուրս էին վանաւում հետագայ սերունդները, որոնք հեռանում էին ու կազմում նոր արենակցական ընտանիքներ։ Այստեղ արգեն հօրն արգելում է մերձենալ իր աղջկան, իսկ մօրը — աղային։ բայց եղբայրներն ամուսնանում են քոյրերի հետ, եղբօր ու բրոջ զաւակները իրանց հօր ու մօր եղբայրների ու քոյրերի հետ։

Յետոյ մի մօրից ծնուած զաւակներին նոյնպէս արգելում է միանալ, և չհառութեան գաղափարը սկիզբն է ստանում։ Սակայն հասարակաց ձեւը պահպանուած է մնում, այսինքն քոյրերը, կամ հօրեղբօր, մօրաքրոջ, քեռու աղջիկները ընդհաննուր ամուսին են դառնում մի քանի տղամարդկանց, միայն օրանց մէջ եղբայրներ չը կան այլեւ։ Նոյնպէս և մի քանի եղ-

բայրներ ամուսնանում են միասին մի քանի կանանց հետ, որոնց մէջ իրանց քոյրը չը պէտք է լինի:

Այս էր պոնալուա կոչուած ընտանիքը:

Քաղաքակրթութիւնը, հիմնուած քրիստոնէակոն մարդասէր ուսմունքի վրայ, բարձրացրեց կնոջ գիրքը, ստիպեց, որ օրէնքը կնոյն էլ ճանաչէ իրեւ իրաւաբանական անհատ, տալով նրան եթէ ոչ տղամարդուն հաւասար, գոնէ մի քանի իրաւունքներ: Այսպիսով նա հանեց կը նոյն էգի ու գրաստի գրութիւնից: Աւազ, ոչ ամեն տեղ: Մահմեդական, այսպէս ասած, հակակին ուսմունքը, հակառակ ամենատարրական մարդասիրութեան զգացմունքին, Քրիստոսից և դար յետոյ, սրբագործում է կնոջ ստրկութիւնը, թոյլատրելով բազմակնութիւնը:

II

Ա.ՄՈՒՄՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՌԱ.ԻԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամուսնութեան օգտուետուրիւնը տոռջապահուկան տեսակիտից:—Պատճառները:—Սպապների հիւանդութիւնները:—Ժումկալութեան փառ հետանիները կնոյն վրայ:—Սանրութիւնը ներփային դրութիւնը:—Հիւեւիա և խելազարութիւն:—Շնուանեկան կեանքի բարոյական կողմի:

Ամուսնական կեանքը մեծ առաւելութիւններ ունի ազապութեան վրայ: Բաղմաթիւ հետազօտութիւններ և ամեն երկներում ժողոված վիճակագրական տեղեկութիւններ ակներեւ են արել այն իրողութիւնը, թէ ամուսնակոն կեանքը միայն կարող է իսկապէս առողջապահական համարուել, թէ ընտանիքի մէջ մարդ աւելի առողջ է լինում, աւելի տոկուն, աւելի գործունեայ և, որ գլխաւորն է, աւելի երջանիկ:

Այս վիճակագրութիւններն ապացուցել են, որ պըսսակուածների մէջ աւելի սակաւ են պատահում զանազան հոգեկան հիւանդութիւններ (հիստերիա, խելացնորութիւն), ինքնասպանութիւններ, վերջապէս վաղաժամ մահ, քան աղապների: Ապացուցուած է և այն

Նշանաւոր գակտը, որ այս վերջինների մէջ քրէական յանցաւորների թիւը աւելի մեծ է, քան ամուսնացածների: Կանայք նոյն չափով են օգտուում ամուսնութիւնից, ինչ որ տղամարդիկ, եթէ միայն ամուսնացել են հասունացած (չափահաս) հասակում: Այսպէս, նոյն իսկ ծննդաբերական շրջանում (20—45 տարեկան), երբ կանայք ենթարկուած են լինուում զանազան ծննդական վըտանդալից հիւանդութիւնների, աւելի երկարակեաց են (ի հարկէ միջին թուով), քան նոյն հասակի օրիորդներն ու այրիները: (Եթէ աղջիկը աւելի մատաղ, դեռահաս տարիքումն է ամուսնանում, բոլորովին հակառակն է նկատուում: Ինչպէս կը տեսնենք յետոյ): Այսպէս, եւրոպացի համարեա բոլոր երկրներում ժողոված ստահատիկան ցոյց է տալիս, որ ամուսնացած թէ տղամարդը և թէ կինը $1\frac{1}{2}$ մինչև 2 անգամ աւելի երկար են ապրում, քան ամուրիները: Այս թուի մի մասը կազմում են ի հարկէ այն վատառողջներն ու թոյլերը, որոնք անընդունակ են լինում պուակի տակ մտնելու և ազապ են մնում: Այս տարբերութիւնը աւելի ևս մեծ է բարձր հասակներում: Եւ, ծմբարիտ որ, 100 տղամարդուց 60 տարեկանի հասնում են 48 ամուսնացածներ և միայն 22 ազապ: 80 տարեկան հասակ ունեցողների մէջ 9 պուակուածին ընկնում է 3 ազապ միայն:

Նկատենք, որ այրիները աւելի ևս վաղ են մեռնում, քան ազապները:

Ամուսնացածների այս պուակասաւոր մահացումն (համեմատելով ամուրիների և մանաւանդ այրիների հետ) բացատրում է այն առողջապահական կեանքով, որ թէ տղամարդի և թէ կնոջ համար ստեղծում է համակեցութիւնը, ընտանիքը:

Ամենից առաջ սեռական յարաբերութիւնները մընում են մաքուր և անվտանգ. այդ ֆիզիքական ակտը կատարում է չափաւոր կերպով, լաւ առողջապահական պայմանների մէջ, առանց այն յուղմունքների և վը-

տանգների, որոնց ենթարկուած են ազապ մարդու կամ կնոջ մերձաւորութիւնները:

Ես չեմ խօսում, այսպէս կոչուած, «բարձր դասակարգի», հարուսանների «աղապ կեանքի» մասին իր անընուն գիշերներով, իր արբեցնով ու անբարոյականացնող ընթրիքներով և իրանց բոլեական «սիրով» և գընւած (և յաճախ էլ, աւազ, առողջութեան գնով գնուած) կանանց հետո: Աւելի խղճալի է պանդուխտ բանուոր դասակարգը, որ, թողնելով իր պապերի հողը, կամ առանց հողի մնալով, իսկ, աւելի յաճախ, նաւթային ճառագայթներից կուրացած, գնում է հեռու պանդխուութիւն և այնաեղ վատնում իր առողջութիւնը գինեանների ու պունկանոցների մէջ, թունաւորելով իր ամբողջ կազմուածքը սպիրտով ու սիֆիլիսով:

Տղամարդիկ դոնէ հնարաւորութիւն ունին բաւարարութիւն տալու իրանց բնտկան պահանջներին և նըրանք աւելի քիչ են ենթարկում այն բազմաթիւ ներփային հիւանդութիւնների, որոնց հիւնաքարը ֆիղիքական սիրոյ անբաւականացումն է: Բացի դրանից տղամարդը աւելի զբաղուած լինելով իր պարապմունքներով՝ ֆիղիքական թէ մտաւոր աշխատանքով, սորուկ չէ դառնում իր սեռական հակումներին:

Բազմաթիւ բժիշկներ այն կարծիքն են յայտնել, թէ սեռական ժուժկալութիւնը ոչ մի մնաս չի հասցնում մարդու, թէ մինչեւ ամսւանութիւնը պէտք է անարատ մնալ: Անտարակոյս ժուժկալութիւնը ոչ միայն չի կարող առաջնել ոչ մի հիւանդութիւն, այլ ընդհակառակը աղատ է պահում երիտասարդներին զանագան հիւանդութիւններից: Սակայն մեր կարծիքով այդ իրաւացի է միայն մինչեւ որոշ հասակ, քանի որ տղայի սեռական գործարանները չեն հասած իրանց զարդացման վերջնական աստիճանին: Անկարելի է ենթագրել, որ մի շաբաթ կարեւորագոյն գործարաններ, կարող են անգործ մնալ առանց աղգելու որ և է կերպով մարդու ամբողջ կազմուածքի վրայ:

Տղամարդի վերաբերմամբ այդ կարծիքը գուցէ և ճշմարիտ լինի, բայց կնոջ վրայ բացառիկ ողջախոհութիւնը չի կարող աւանց հետեւանքի մնալ: Եւ, իրաւ, կնոջ սեռական գործարանները բազկացած են մի շարք խոշոր մասերից, որոնցից կարեսրադպյնը զաւակատունն է. կարելի է վստահ ասել, որ կինը ամենից առաջ որպեճնութեան համար է ստեղծած: Նրա սեռական գործարանները հասել են չափազանց զարգացման ի վեաս միւս գործարանների, դարձնելով նրան աւելի նուռատ ու թոյլ քան տղամարդը: Կնոջ արդանդն ու ստիճանքները կենդրոնացնում են իրանց մէջ նրա, այսպէս ասած, զգայնական կարողութեան մի խոշոր մասը, կարծես նրա ներվերի գլխաւոր կենդրոնացման աեղերը լինեն: Տեսէ՞ ինչ է դառնում մի յղի կին, որի արդանդը կրում է ապագայ երեխայի սաղմը և որի ծծերը փքուած են կաթի ճնշումից:

Այսպիսի կարեսր օրգաններ չեն կարող երակարտարիների ընթացքում անգործունեայ մնալ առանց վտանգելու ամբողջ կաղմուածքին: Մի շարք ներվային խամնդարումները (գլուխումն կամ ընկճումն) հետեւանք են լինում յաճախ հասունացած կնոջ սեռային երկարաւու ժուժկացնութեան: Ամեն «աղաւաւած աղջկայ» վրայ նկատում է մի տեսակ յուսահատ յոդնածութիւն առօրեայ հոգսերից, գիւրագրդութիւն, ներդայնութեան, յաճախ հիստերիայի երևոյթներ: Աւելի բարձր աստիճանները կազմում են անքնութիւնը, կամ կօշմարներով (սարսափելի երազներով) ու տարփական տեսսիներով լի քուն, յետոյ գալիս են սեռական օրգանների գրգռումները, միաւորութեան անսամինձ պահանջը (սանձած, սակայն, կանքի ոյժով կամ ամօթխածութիւնից), յափշտակումն այն ամեն բանով, ինչ որ տարփականն է, —վերջապէս կատալեպսիա և խելապակումն: Այս վերջնը հարիւր ձև է ընդունում, —հասարակ անամօթ շարժումներից ու ցինիկ խօսքերից սկսած մինչև դադելի գերզգայնութիւնը, որ ֆրանսիական բժիշկները կնքել

Են sureur uterine (արդանդային կատաղութիւն) անունով։ Միջին գարերում կանանց մենաստանների մէջ անպակաս էին տարփականութեան համաճարակները, —բազմաթիւ աղջիկներ, փակուած միասին, գատապարտուած ստիպողական կուսութեան, սեռական կատաղի գրգռման մէջ ատարփական տեսիլներ էին ունենում։ Նրանք պատմում էին, թէ այս ինչ քահանան կամ այս ինչ գարշելի գեր, մտնում է գիշերները իրանց ննջարանը և սեռական յարաբերութիւններ է ունենում իրանց հետ, կամ թէ իրանք թուչում են գնում Սաբբա, գեւերի ինջոյքը, և գիշերները զազերելի օրդիաների մէջ անցկացնում։ Եւ պատմում էին այս բոլորը գարշելի մանրամասնութիւններով, համեմելով վաւաշոտ շարժումներով ու զազերելի հայհոյանքներով, առանց քաշուելու և, որ գլխաւորն է, առանց վախենալու զարհուրելի ինկուբիցիցից, որ հարիւրներով ու հաղարներով ողջող այրում էր նրանց այդ գիւականութեան յանցանքի համար *):

Աղապ մարդը չունենալով սեփական օջախ, «դուքս է գցում իրան» իր ամայի ցուրտ տնից ու գրսում որոնում այն, ինչ որ պակասում է նրան։ Անկանոն ու անժամանակեայ մնունդ զանազան տրակտիրներում, անկանոն ու անժամանակեայ քնել զարթները խոնդարում են աղապի մարսողութիւնը, սրտի ու միւս գործարանների կանոնաւոր գործնունենութիւնը և հարիւր տեսակ հիւանդութիւններ առաջացնում։ Միւս կողմից տախտկալից մենակութիւնը, անկեզծ սիրոյ և յարգանքի անշահասէր խնամատարութիւնը և նոյնիսկ բարեկամութեան բացակայութիւնը, վերջապէս սեռական կեանքի անկանոնութիւնը—այս բոլորը ներփային է գարճում ամսուրի մարդուն, և հիւանդափեցնում կեանքից, կստրում է նրա հոգեկան ոյժերը, ակներեւ անելով սրտի գատարկութիւնն ու աշխատանքի տագնապի աննալատակութիւ-

*) Մանրամասնութիւնը տե՛ս իմ «Հիպնոտիսմ», II հատ.

նը։ Այս ներփային գցութիւնը, այս հիասթափումն ու անբաւականութիւնը կեանքից հասցնում է ամուրի մարդուն կամ ծայրայեղ եսամոլութեան կամ ծայրայեղ յուսահատութեան։ Խելագարութիւնը և ինքնասպանութիւնը աւելի յաճախ են պատահում աղապների (մանաւանդ այրիների), քան ամուսնացածների մէջ։ Ըստ Բերտիխօնի մինչդեռ այս վերջիններից հարիւրն են անձնասպանութիւն գործում, ամուրիներից իրանց սպանում են 115-ը, իսկ այրիներից 256-ը։ Նշանաւոր և հասկանալի երևոյթ է այրի ինքնասպանների այս ահազին թիւը։ Մարտէնի առելով, խելագարութիւնը համարեա երկու անգամ աւելի է ամուրիների մէջ, քան պսակուածների։ (Պէտք է ի հարկէ նկատի ունենալ, որ շատերը հենց հոգեկան հիւանդութիւնների պատճառով չեն ամուսնանում)։

Ընտանեկան կեանքը, նողաստելով ամուսինների երկարակեցութեանը, պահպանելով նրանց զանազան հիւանդութիւններից, ներփայնութիւնից, խելագարութիւնից ու յուսահատութիւնից, կաղմումէ այն բարոյականացնող հնոցը, որի մէջ կովում կոփուում են աւելի տոկուն, աւելի ուժեղ բարոյական սկզբունքներ։ Պսակուած մարդը թէ կինը անհամեմատ աւելի բարոյական են, քան ամուրիները, մանաւանդ երբ ամուսինների կապը ամրապնդուած է զաւակի սրբազան կապով։ Այսպէս, ամուսնացածների մէջ յանցանքների թիւը դարձեալ երկու անգամ աւելի քիչ է, քան աղապների։ Իսկ յանցաւոր պսակուածների մէջ նկատում է, որ զաւակաէր ամուսինները աւելի քիչ են յանցանքներ դորձում, քան անզաւակները, դոնէ այդ ապացուցուած է մօր վերաբերմամբ։ Ուրիշ խօսքով՝ ամուլ կանանց մէջ աւելի յաճախ են պատահում քրէական յանցաւորներ, քան զաւակ ունեցողների, – զաւակի ներկայութիւնը աւելի բարոյական է դարձնում կնոջ։

Մինչեւ այժմ մենք, հիմնուելով ժողովրդադրական թուերի վրայ, աշխատեցինք ցոյց տալ ամուսնական կեան-

քի առաւելութիւնները։ Տեսանք, որ պսակուած մարդը աւելի առողջ է, աւելի գործի ընդունակ, աւելի բարոյական։ Այդ են ամուսնութեան, այսպէս ասած, փիզիքական շօշափելի առաւելութիւնները։

Կայ և բարոյական կողմը, որի բարիքները ոչ մի թուանշաններով չի կարելի արտայայտել։

Ամուսնական կեանքը, յետոյ երեխայի ներկայութիւնը ընտանիքի մէջ, ազնուացնող և մարդու մէջ ամեն մի լաւ զգացմունքը զարդացնող խթաններ են։

Մարդու գործունէութիւնը բղխում է երկու աղբիւրից—մտաւոր և զգացողական։ ուրիշ խօսքով՝ նա գործում է կամ մի որ և է գաղափարի, կամ որ և է հոգեկան տրամադրութեան տակ (կիրք, սէր, ատելութիւն, մոլութիւն և այլն)։ Ընտանեկան կեանքը մի մեծ զարկ է տալիս այս երկու ձեւի գործողութիւններին։

Ամենից առաջ նկատում է էներգիայի, գործելու ոյժի աւելանումն, — ինչպէս նկատում է Սպենսէրը։

Մարդը թէ կինը ամուսնանալով՝ մի մեծ պատասխանատառութիւն են յանձն առնում։ Ոչ միայն նրանք պիտի օգնեն ու ուղեկցեն միմեանց կեանքի փշալից ուղիով, այլ պէտք է հոգս տանեն նոր սերնդի բարօրութեան և երջանկութեան մասին։ Եւ նրանց համար ոչ մի աշխատանք ծանր ու ձանձրալի չէ թւում մինչ այն աստիճան, որ իր սիրած էակներին աւելի երջանկութիւն տալու համար մարդն աւելի է աշխատում, քան թոյլ կը տային նրա ոյժերը և ընկնում է չափազանցման մէջ, ի վեաս իր սեփական առողջութեան։

«Ոչինչ աւելի ընդունակ չէ մեզմացնելու մարդուն, աղնուացնելու նրա բնաւորութիւնը, ներշնչելու նրան առողջ ու բարձր գաղափարներ, քան մի էակի հետ ապրելը, որին սիրում է, որից կը ցանկանար յարգուած ու սիրուած լինել»։ (Մարտէն)։

Ամուսնական կեանքը մեզմացնում է կրքերը, յաւ փշտակումները, մոլութիւնները։ «Կը պսակուի, կը

դրստուի», ասում է ժողովրդական փորձնականութիւնը: Ով չէ ճանաչում կրքոտ, կատաղի, անսանձ, նոյն իսկ անբարոյական երիտասարդների, որոնք մըտնելով ամուսնական քաղցր լծի տակ, ուղղում են, լրջանում, յաճախ ազնուանում, նբբազգաց դառնում; կորցնումեն իրանց տգեղ սովորութիւնները, խօսակցութեան ձևերը և օրինակերի «ընտանիքի գլուխ» դառնում:

Յամենայն դէպս, ժամանակի ընթացքում, փոխադարձ ազգեցութեան տակ, երկու ամուսինները համակերպում են միմեանց հայեացքներով, ձգտութեարով, իդէաններով: Նրանք ոգեսորւում են, յուզում, զայրանում միենոյն երեսյթներով: Այս միակերպումն կատարուում է նմանողութեան կամ ընդօրինակման մեծոյժով, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հիպնոտումն, ներշնչումն: *) Եւ քանի որ հոգեկան շարժումները արտայայտուում են մեծ մասամբ դէմքի վրայ, այստեղից հասկանալի է լինում և այն, առերես տարօրինակ, երեւոյթը, որ ամուսինները վերջի վերջոյ սկսում են զարմանալի կերպով նմանուել իրար թէ շարժումներով, թէ խօսակցութեան ձևով և թէ նոյն իսկ դէմքի գծադրութիւններով:

Ամուսնութիւնը մի մեծ բարիք է, նա մի ճանապարհ է, որ աւելի հեշտ և աւելի հաստատ կերպով տանում է մեզ դէպի երջանկութիւն, եթէ երջանկութիւնը գոյութիւն ունի մեր ազմկալից դարում: Ֆրանսիական մի տաղանդաւոր գրող, Գիւտաւ Դրօդ, հասնում է մինչև անգամ այն եղրակացութեան, թէ ամուսնութիւնից դուրս չկայ երջանկութիւն: «Ես չեմ հաւատում, որ ազապ մարդը կարողանայ երջանիկ լինել», ասում է նա: «Զկայ երջանկութիւն նրանց համար, որոնք մոլորուած լինելով, կամ մի որ և է հաշուով, խուսափել են հասարակական այս լաւագոյն օրէնքից»: Թողնենք չափազանցութիւնները: Մարդու կեանքի հորիզոնը կա-

*) Տե՛ս իմ «Հիպնոտիսմ»:

բող է մի ուրիշ աստղ ևս լուսաւորել, բայց և այնպէս
մի մեծ պակասութիւն է կեանքի մէջ զրկուած լինել
աեփական կին և հարազատ որդի ունենալու երջան-
կութիւնից...

III

Ա.ՄՈՒՍՆԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՍԱԿԸ

Սեռական հասունութիւն:—**Ա.Յօնանական հասուկը:**—**Վաղաժամ ա-
մուսնութիւն:**—**Գուշաննու ու սեռական հասունութիւնը:**—**Վաղաժամ
ամուսնութեան վաստգները** թէ՝ ամուսինների եւ թէ զատկների
համար: — **Տարաժամ ամուսնութիւնը** եւ նրա վաստգները: **Անհաւա-
սոր ամուսնութիւնը** եւ նրա հետեւանքները:

Պատկուղների հասակի տեսակէտից ամուսնութիւ-
նը երեք տեսակ է լինում: Վաղաժամ ամուսնութիւն,
երբ տղամարդը 21 տարեկանից, իսկ կինը 18 տարե-
կանից պակաս են. յարմար (ժամանակեայ) ամ., երբ
տղամարդը 45 տ. մեծ չէ, իսկ կինը 30-ից. վերջա-
պէս տարաժամ (ուշացած) ամ., երբ տղամարդը 45—60
տարեկան է և աւելի, իսկ կինը 30—45 տ. և աւելի:

Վաղաժամ ամուսնութիւն:

Ա.մուսնութիւնը, առողջապահական տեսակէտից,
թոյլատրելի է այն ժամանակ միայն, երբ տղան ու
աղջիկը հասունացած են. ուրիշ խօսքով՝ երբ նրանց
սեռական գործարանները բաւականաչափ զարդացած են
ամուսնական վատանգալից կեանքին դիմագրելու համար:

Ա.յս է սեռական հասունութիւնը:

Ա.յս պահանջը աւելի ևս սահպողական է աղջկայ
համար, որին վիճակուած է կրել իր վրայ ծննդաբե-
րութեան ամբողջ ծանրութիւնը:

Զանազան երկրների օրէնսդրութիւնները, մանա-
ւանդ անցեալում, մի անբացարելի անհոգութեամբ ա-
նուշադիր են եղել գէպի ամուսնացողների ֆիզիքական
հասունութիւնը և թոյլ են առւել ամուսնանալու նոյն
իսկ երեխամների:

Անծանօթ լինելով սեռական գործարանների զարդացման կանոններին, նրանք հետևում էին կարծես ժողովրդի անմիտ համազմունքին, թէ «աղջկան փափախով խփիր, եթէ վայր չը ընկնի, պսակիր»:

Այսպէս, հին հրէական օրէնքով տղան չափահաս էր գառնում 13 տարեկան և 1 օրական, իսկ աղջիկը 12 տարեկան և 1 օրական հասակում: սակայն աւելի մատաղ հասակումն էլ չէր արգելում ամուսնանալ, բայց «ոչ մի կերպով չէ կարելի պսակել տղային 9 տ. և 1 օրականից պակաս, իսկ աղջիկներին - 8 տ. և 1 օրականից: Հնդկաստանում 8 տարեկան աղջիկներին կարելի է մարդու տալ: Հոռոմում ամուսնական չափահասութիւնը սահմանուած էր այսպէս. 14 տ. տղաների և 12 տ. աղջիկների համար: Նոյն հասակը սահմանել է և արևմտեան եկեղեցին, իսկ բողոքականը երկու սեռի համար ևս 14 տ.:

Անգլիական պետական օրէնքը թոյլ է տալիս պըսակուել տղաներին 14 և աղջիկներին 12 տ. հասակում: խսօրէն արգելում է եօթ տարեկանների պսակը միայն: Ֆրանսիական օրէնսդրութիւնը ամուսնական հասունութիւնը որոշել է 18 տ. տղամարդկանց, 15 տ. աղջիկների համար: Գերմանիայում պաշտօնապէս արդելում է ամուսնութիւնը 18 (տղայ) և 16 (աղջիկ) տարեկաններից պակաս հասակներում:

Ուսւա պետական օրէնքով (1830 թ. Բարձրագոյն Ուկաղը) ընդունուած է գերմանական չափահասութիւնը: Այս ընդհանուր օրէնքից թոյլ են տրում հետեւեալ բացառութիւնները. ա) Կովկասաբնակ աղջութիւնների համար ամուսնական հասակը որոշուած է 15 (տղայ) և 13 (աղջիկ) տարին: բ) Թոյլ է տրում թեմական առաջնորդներին կարևոր գէպքերում կէս տարով աւելի վաղ պսակել:

Մեր եկեղեցական կանոնները, եթէ չեմ սխալում, թոյլ են տալիս ամուսնութիւնը 14 և 12 տարեկանների մէջ և ոչ աւելի փոքրերի:

Այսպէս ուրեմն, նոյն իսկ նորագոյն օրէնսդրութեան տրամաբանութեամբ ամուսնանալու և սերունդ արտադրելու ընդունակ են համարում 13—12 տ. արդան ու աղջիկը, որոնք հազիւ են գուրս եկել մանկութիւնից թէ իրանց ֆիզիքական զարգացմամբ և թէ մտաւոր կարողութեամբ, իսկ շատերն իրանց կազմը ւածքով և խելքով գեռ կատարեալ երեխաներ են...

Օրէնսդրութեան անհեթեթութիւնն ակներև է: Մի երեխայի, որին ընդունակ չէ համարում ձայն ունենալ հասարակական ու քաղաքական ինդիրներում և որ զրկուած է ամենաչին քաղաքական իրաւունքներից անգամ, այդ անշափահասին նա հաւատում է մի ամբողջ սերնդի բարօրութիւնը, առողջութիւնը, նոյն իսկ կեանքը...

Այսպիսի օրէնսդրութեան չնորհիւ է, որ վաղաժամ ամուսնութիւնը տարածուած է եղել և է նոյն իսկ ամենաքաղաքակիրթ երկիրներում: Անգլիայում բոլոր ամուսնութիւններից 51% վաղաժամ է (տղամարդու համար), Ֆրանսիայում 27% , Իտալիայում 26% , Շվեյցիայում 23% , Բաւարիայում 19% : Ամենից բարձր տոկոսը տալիս է Ռուսաստանը, որտեղ անշափահաս ամուսնացող տղամարդիկ կազմում են 67% , իսկ կանայք մինչեւ 85% : Այս նշանակում է, որ Ռուսաստանում 100 մարդու գնացող աղջիկներից 85% դեռահաս են: Քաղաքներում դեռահաս տղաների պսակները գնալով պակասում են, և այդ հասկանալի է, քանի որ քաղաքներում տղամարդը աւելի ուշ է կարողանում իր համար մի դիրք ստեղծել և աշխատանք գտնել, քան գիւղում:

Առողջապահական տեսակէտից տղամարդը կարող է ամուսնանալ ոչ աւելի վաղ՝ քան $22—25$ տարեկան (նայելով կազմուածքին), իսկ կինը՝ $18—20$ տարեկան հասակում միայն:

Ահա ընդհանուր կանոնը:

Նա հիմնուած է այն ֆակտի վրայ, որ այս հա-

սակներում միայն թէ տղամարդու և թէ աղջկայ սեռական գործարանները իրանց կատարեալ զարդացմանն են հասնում, և ընդունակ են դառնում ծառայելու զաւակածնութեան գժուարին ու վտանգալից գործին, առանց ընդհանուր կաղմուածքին վնասելու։

Յիշած հասակում միայն (ի հարկէ մենք չենք խօսում այստեղ բացառութիւնների մասին) կնոջ զաւակատունը ուժեղացած է ու մեծացած, նրա ձուարանները զարդացած, ծծերը ամրացած, խոշորացած ու կլորացած (իսկապէս ծծերի միջի կաթնագեղձերը) և ընդունակ են դառած կաթ արտադրելու։ Միենայն ժամանակ աղջիկն սկսում է գիրանալ, նրա կոնքը լայնանում է, բայլուածքը ծանրանում և առհասարակ բոլոր շարժուածքներն ընդունում են մի ինչ-որ ծանրութիւն ու լրջութիւն։

Աղջիկների վաղաժամ ամուսնացումն, երեխ, մասամբ հիմնուած է այն սխալի վրայ, որով դաշտանի երեալը համարւում է սեռական կատարեալ հասութեան նշան։ Սակայն ինչ է ապացուցանում աղջկայ «լուսին տեսնելը», —այն միայն, որ նրա ձուարանները արդէն ընդունակ են ձուիկներ արտադրելու, և ուրիշ ոչինչ Բայց այդ դեռ չէ նշանակում, թէ նրա ձուիկները կարող են կանոնաւոր կերպով բեղմնաւորուել, չէ նշանակում, թէ զաւակատունը պատրաստ է սաղմն ընդունելու և ապագայ երեխային տեղ տալու, այդ դեռ ապացոյց չէ, թէ նրա ամրող կաղմուածքը, արիւնը, սիրտը, թոքը ևայլն, բաւականաչափ զարդացած է սաղմին ինն ամիս սնուցանելու, աճեցնելու և կենդանի ու առողջ երեխայ արտադրելու։

«Նոր լուսին տեսած աղջիկը, դեռ բոլորովին պատրաստ չէ ամուսնական կեանքի համար» Թիգիօլիօդիական տեսակէտից անհրաժեշտ է, որ դաշտանը բացուելուց գոնէ երկու տարի անցած լինի»。^(Բիբրինդ) Այն ինչ, նոյն հեղինակի բերած վիճակագրութիւնից երեւում է, որ միջին կլիմաներում դաշտանը բացում է

շուրջ 15 տ. հասակում (Բերլին, Լոնդօն, Պարիզ, Վիեննա, Վարչաւա), հիւսիսում 16, նոյն իսկ 18 տարում (Կոպենհագէն, Շվեցիա, Լազլանդիա), իսկ շոք երկրներում (Կալկուտա, Եգիպտոս) 12, նոյն իսկ 10 տարեկան երեխաներն արդէն տեսնում են: Աւելորդ է առել, որ բոլոր աղջիկները մի տեսակ չեն կազմուած և մի կերպ չեն զարգացած: Մէկը 15 տ. հասակում արդէն բոլորովին կազմակերպուած է, մի ուրիշը 20 տարեկան դառած գես երեխայ է:

Ընդհանուր կարծիքով գիւղացի աղջիկները, աւելի ազատ կենցաղ ունենալով և ազատ լինելով քաղաքի վասակար մթնոլորտից, ուսման ճնշող աղջեցութիւնից, աւելի շուտ են զարգանում ֆիզիքապէս, քան քաղաքացիները, թէև որանց մէջ աւելի վազ է արթնանում սեռական կիրքը: Յետոյ պէտք է դիտենալ, որ Սրեմուեան երկրներում աղջիկները աւելի վազ են կազմում, քան Հիւսիսում:

Բայց ֆիզիքական զարգացումից, ամուսնացովներից պահանջում է որոշ չափով մտաւոր զարգացումն: Օրիորդը պիտի ժամանակ ու միջոց ունենայ ծանօթանալու կեանքի պահանջներին, հաշիւ տալու իրան սեփական յակումների և իդէալների մէջ, որպէսզի կարող լինի գիտակցորէն վերաբերուել գէպի ամսւանութեան ծանր խնդիրը: Նատ օրիորդներ օբիորդ չեն եղած. գոլորշի նստարանից նրանք ուղղակի ընկել են մի օտար մարդու գիրկը Սրանք գեռ մանսւկներ էին, զուրկ փորձնականութիւնից, զարգացումից, զուրկ աշխարհահայեցողութիւնից, անփոյթ երեխայ էին, որոնք ոչ մի բոպէ չէին ապրել անկախ կեանքով և ոչ մի ինքնուրոյն քայլ չէին արած, եւ յանկարծ բաց են անում սրանք իրանց շուարած աչքերը և սարսափում այն ահազին պատասխանատութեան առաջ, որ ըստանձնել են անգիտակցաբար, կամ աւելի ճիշտն ասած՝ որ ուրիշները կապել են նրանց վզին:

«Եատ օրիորդների պատկը ես կը յետաձգէի մինչ
չև 24—25 տարեկան հասակը», ասում է Ռիբբինզը:

Մի քանի խօսք վաղաժամ՝ պատկների վնասակարութեան մասին:

Թէ՛ աղամարդի և թէ կնոջ համար վաղաժամ ամուսնութիւնը վնասակար է:

Ամենից առաջ պատանի ամուսինները վնասուում են իրանց սեռական յարաբերութիւնների չափաղանցումով, որովհետեւ նրանց սեռական գործարանները անընդուռնակ են դիմադրելու չափաղանց գործունէութեան: Հետեւանդքը յաճախ ակներեւ է դառնում: Տղամարդը հասնում է վաղաժամ յոդնութեան, ընդհանուր թուլութեան: Նրա տոկունութիւնն ու աշխոյժը թուլանում են, և առաջ են գալիս մի շարք ներփային դրութիւններ: Կնոջ վրայ նկատում է սեռական գործարանների անկանոն գործունէութիւն, չբերութիւն (գտնէ առաջին երկու տարիներում), կամ վիճումն, իսկ յդութիւնն ու ծննդաբերութիւնը ուղղակի վտանգալից են լինում:

Բայց միայն ծնողները չեն, որ առւժում են վաղաժամ ամուսնութեան համար. — Նրանց երեխաններն էլ պատժում են ծնողների անզգուշութեան պատճառով:

Դեռահաս ամուսինների սերունդը (բաւական է, որ ամուսիններից մէկը գեռահաս լինի) չէ հասնում յաճախ ֆիզիկական և մտաւոր զարգացման ցանկալի աստիճանին: — Եատ երեխաններ մեռնում են հէնց առաջին տարում: Աւելի ես վտանգաւոր են գեռահաս պսակները, երբ նրանք կրկնուում են որդոց-որդի, այսինքն երբ մատաղ հասակում ամուսնացած մայրը իր աղջկան է: Վաղահաս է մարդու տալիս: Մի քանի հեղինակութիւններից երեսում է, որ պատանեկան հասակում ամուսնացած տղաները 7 անդամ աւելի են մէռնում, քան նոյն հասակի ամուրիները, և 19 տարեկան հասակում նրանք այնքան են մահանում, որքան 70 տարեկանները, որոնք ամուսնացած են եղել չափահատ: Կանայք նոյնպէս աւելի են մեռնում գեռահաս ամուսնութեան մէջ, քան նոյն հա-

սակի օրիորդները։ Այսպէս 15—20 տարեկան հասակում պսակուած կանայք ֆրանսիայում ու Բելգիայում մեռնում են $1\frac{1}{2}$ անգամ աւելի, քան նոյն հասակի օրիորդները, իսկ Հոլանդիայում նոյն իսկ 2 անգամից էլ աւելի։ Տարաժամ ամուսնութիւն։

Ոչ պակաս վնասաբեր են նաև ուշացած կամ տարաժամ ամուսնութիւնը, երբ տղամարդը 45 տարեկանից բարձր է, իսկ կինը 30-ից։

Որոշ հասակից տղամարդի և կնոջ սեռական գործարանները կորցնում են իրանց թարմութիւնն ու ոյժը։ Պր. Դիւզլէն ցոյց տուեց, որ 51 ծերունիներից (60—86 տ.) միայն երես ընդունակ էին արտադրել բեղմնաւորող հեղուկ, իսկ մնացածի սեռական կենսունակութիւնը կամ բոլորովին կորած էր, կամ չափազանց թոյլ։ Յայտնի չէ, թէ յիշած վեց ծերունիներից արտադրած սերունդը ինչ կը լինէր։ Այս հասակներում տղամարդու կազմուածքն սկսում է կորցնել իր էներգիան, իր կենսական ոյժը և սկսում է նրա բոլոր ֆունկցիաների նուազումն։ Գուցէ ամենից վաղ այդ նուազումն արտայայտում է սեռական օրգանների վրայ, որոնք անընդունակ են գառնում արտադրելու լաւ կազմակերպուած։ Փիզիքապէս ու մատարապէս առողջ սերունդ։

Վերջապէս չկայ ծերունու մէջ այլևս բուռն յակումն դէպի կինը, այն առողջ փիզիքական ձգտողական ոյժը, որ ստիպում է երիտասարդին մօտենալ կնոջ, և ոչ էլ դիմացկութիւն սիրահարական յարաբերութիւնների մէջ։ Իսկ եթէ նկատում էլ է որ և է այդպիսի ձգտումներ, նրանք ընդունում են վաւաշոտութեան կերպարանք և անզօրացած, կիսաթառամած կրքի վերջին բռնկումն են գառնումն։

Կնոջ համար տարաժամ ամուսնութիւնը նոյն վնասներն ունի. 40—45 տարում յզիացած կանայք շատ դժուարութեամբ են տանում իրանց յզութիւնը և աւելի ևս դժուար է լինում նրանց ծննդաբերութիւնը, որով

Հետև նրանց սեռական խողովակը, որի մէջ պիտի զարդանայ և որի միջով պիտի անցնի երեխան, կորցրած են իրանց առաձգականութիւնն ու կծկման ոյժը։ Այսպիսիների երկունքը ծանր է լինում և յաճախ պահանջում է միջամտութիւն։ Վիճակագրութեան ասելով, 100 կանանցից, որոնք մեռնում են ծննդաբերութեան միջոցին, 35-ը միայն երիտասարդ հասակումն են մեռնում; իսկ մնացած 65 կանայք տարաժամ ամուսնացածներն են։

Անհաւասար ամուսնութիւն։ Ամենից զազրելին, ամենից հակառաղջական և անբարոյական ամուսնութիւնը անհաւասար պսակն է, երբ պսակուողների հասակների մէջ մեծ տարբերութիւն կայ։

Յաճախ կարգում ենք լրագրներում բողոքներ այսպիսի անբարոյական ամուսնութիւնների դէմ, բայց դարձեալ 50—60 տ. ծերերը չեն քաշւում մի 15 տարեկան երեխայ իրանց կին ուղելու, իսկ այս երեխայի ծնողները չեն սարսափում իրանց աղջիկը այդպիսի ծերերին ծախսելու։ Այդ մի առեւտուր է և զազրելի առեւտուր, որի դէմ բողոքում է տարրական բարոյականութիւնը։ Հարուստ ծերութիւնը գնում է աղքատ երիտասարդութիւնը, որովհետեւ ոչ մի ծերունի չի կարող ենթադրել, որ ջահէլ աղջիկը կարող է սիրել նրան։ Նա պիտի հասկանայ որ չի կարելի կապել անցեալը առլագայի հետ։ Իսկ անցեալն ինքն է որ կանգնած է գերեզմանի եղրին, ինքն է որ չորացած ծառի է նման, իսկ ապագան—պյան նորաբողբոջ, գեռ չը բացուած կոկոնն է, որ նա անխնայ պոկում է իր կոշտացած ձեռով և թառամեցնում իր գարշահոտ չնչով...

Իսկ աղջիկը... Եթէ նա գիտենար, թէ ինչ է զոհ բերում իր ճոխասիրութեանը, հարուստ ծերունու կինը դառնալով։ Առաջին համբոյը քաղում են չը սիրած, երբեմն նրան զզուելի շրթունքները, առաջին գգուանքը նա ստանում է սառը, տախտակացած կրծքի վրայ։ Նա տալիս է այդ չը սիրած օտարին իր կուսական քըն-

քոյշ թարմութիւնը, տալիս է յաճախ զգուանքով, առանց ոգեկան յակման, առանց սիրային կրփի, նոյն իսկ առանց ֆիղիքական զուարձութեան:

Նրա միակ միտթարութիւնը նրա զաւակները պիտի լինին, այն զաւակները, որոնք յզացած են առանց սիրոյ և ծնած առանց յոյափ...

Այս, այն սէրը, որ նա չէ կարողացել տալ իր ամուսնուն, կը դարձնի իր մանկիկի վրայ։ Այդ էակին կը նուիրի իր բոլոր հոգեկան ոյժերը, կը կրթի, կը մեծացնի, կը փչի նրա մէջ իր դոյութեան ամբողջ ոյժը և այդ կը լինի նրա միսիթարութիւնը։ Բայց, աւազ, այդ ամուսնութիւնից սերուած երեխաները փոխանակ սփոփելու իրանց մօր վշաերը, նոր ցաւերի աղբիւր են դառնում նրա համար։ Նոր սերունդը թոյլ է և նուազ կազմուածքով, թոյլ են նրա հոգեկան ոյժերը, թոյլ է նրա մտաւոր ու ֆիղիքական կենսունակութիւնը։ Խեղճ կնոջ սիրու խոցւում է ամեն անգամ, երբ աչք գցում է իր վատառողջ, արնապակաս, խուլախտոտ, արատաւոր կազմուածքի տէր սերունդի վրայ, որից մէկը կամ մի քանիսը դատապարտուած են վազաժամ վախճանի։

Այսպէս, դատապարտելի են թէ վազաժամ և թէ տարաժամ ամուսնութիւնները. աւելի ևս յանցաւոր են անհաւասար պսակները։ Այս բոլոր պսակների մէջ տուժում են ոչ միայն ամուսնացողները, այլ և նրանց սերունդը։

Բնական և իսկապէս առողջապահական ամուսնութիւնը պահանջում է՝ 1) որ տղամարդը լինի ոչ պակաս քան 22 տարեկան և ոչ աւելի քան 30 տ.։ (Սառը երկրներում, որտեղ մարդիկ աւելի ուշ են զարգանում ֆիղիքապէս, պահանջում է, որ ամուսնացողները 2—3 տարով աւելի մեծ լինին)։ 2) որ ամուսինների հասակի մէջ տարբերութիւնը 7 տարուց աւելի չը լինի։

Յանկալի է, որ առողջապահութեան այս հիմնական պահանջը մտցուէր եկեղեցական և քաղաքական օրէնսդրութեան մէջ, և այն ժամանակ մարդկութիւնը այլևս չէր արտադրի այն վատոյժ, ներփային, անընդունակ և ծոյլ էակներից գոնէ շատերին, որոնք ամեն երկներում և ամեն ժամանակներում մի բեռն են դարձած հասարակութեան վզին:

ԲԺՇԿ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

(Այս շարունակուի)

ՊԱՐԻԶԻ ԶԻԿԱՆ ԱԼԻ ԶԱՅԻ ԱՆ

Վերջին, XIX-րդ Միջազգացին Բժշկական Համաժողովը Պարիզում գրաւել էր Ռուսաստանից բժիշների բաւականին մեծ տոկոս։ Տողովում ներկայ եղած բժիշների 6170 ընդհանուր թուից 805 Ռուսաստանից էր։

Հարկաւոր էր օպուել Պարիզում գտնուելուց և ծանօթանալ այնաեղի ընդհանուր առողջապահական հիմնարկութիւնների հետ, ինչպէս կանալիքացիան է, ոռոգման գաշտերը և այլն։ Այդ նպատակով Ռուսաստանի բժիշներից մաս 100 հոգի էքսկուրսիա կազմեցին այդ տեղերն այցելելու Անձամբ տեսած լինելով այդ տեղերը, աւելորդ չեմ համարում ծանօթացնել մեր ընթերցողներին այդ վիթխարի քաղաքի կանալիդացիայի հետո

Երկու մեծ քարաշէն աւաղաններ տարածուած են Սենա գետի ափին։ Մէկը նրանցից, աւելի մեծը, բոլորովին կտրուած է գետից, այնպէս, որ մի կաթիլ կեղոսո ջուր անգամ չէ ընկնում գետի մէջ։ Միւրը, աւելի փոքրը, շինուած է այնպէս, որ ըստ ցանկութեան կարելի է աղբաջրերի մի մասը բաց թողնել գետի մէջ։ Մեծ աւազանի մէջ ջրերը հաւաքում են մշտական, իսկ փոքրը նշանակուած է բացառիկ դէպքերի համար, օրինակ, երբ յորդառաս անձրմներից լետով, աղբաջրերը փողոցներից հոսելով, մի կարճ ժամանակում այնքան շատանում են, որ մէկ աւազանի մէջ չեն տեղատրվում, այն ժամանակ նրանց հաւաքում են փոքր աւազանի մէջ, որ հնարաւոր եղածին չափ մաքրելով արդէն բաց են թողնում գետը։

Այդպիսով թէ խախտում է՝ «րոլորը» աղբաջրերի մէջ և ոչինչ Սինայի մէջ» սկզբունքը^{*}), որ յայտնուած էր լուսիսի 10-ին 1899 թ.՝ Պարիզի քսանաքայլին խորհուրդի կազմուած մի ծրագրի մէջ, բայց դա լինում է միայն բացառիկ դէպքերում։ Սովորաբար, ինչպէս մենք կը տեսնենք, բոլոր աղբաջրերը նախապէս մաքրում են կեղոսուոթիւններից և միայն մաքրու և աղբիւրի ջրի նման պարզ ջրերը թողնում են գետի մէջ։

Ահա թէ ինչպէս է կատարվում աղբաջրերի մաքրումը։

Նախ և առաջ աղբաջրերից, մինչեւ աւազանի մէջ զրանց թափուելը, մի առանձին մէքենայի շնորհի հանուում են մէջը լողացող փոքր իշտաչ մեծ կոռոնները (փալաս, կաղամբ, փայտ եւ այլն)։ Խակ ջրի մէջ չը լուծուած մանր կոռոնները հեռացնում են աւազանի յատակի վրալից։ Այդ գործողութեան համար նշանակուած են առանձին ծառալողներ, որոնք մակուկների մէջ լողալով աղբաջրի վրայ, մի տեսակ երկաթէ թաթերի նմանութիւն ունեցող գործիքով բռնուում են աւազանի յատակի աղբը և ածում մակուկների մէջ։

Աղբաջրերից հանած գիբուը իզուր չէ կորչում։ Նա շատ հարուստ

*) Tout à l' égout et rien à la Seine.

է օրգանական մասերով և հողը պարաբռացնելու համար հարուստ նիւթ է ներկայացնում: Այդ ազքը տանում են բնակութիւններից հեռու տեղեր և փոռում ամայի զաշտերի վրաց, ուր նրանք լուծուելով և խառնուելով հողի հետ, վերջինիս զարձնում են պիտանի վարուցանքսի համար:

Խոկ ի՞նչ են անում ատագանի մէջ մասցած ջուրը:

Առաջանի մօտ, մի ահազին շինութեան մէջ սարքած են վիթխարի ջրմուկներ (ԽՈԾՕԸՃ), որոնք առանձին խողովակներով խրկում են այդ ջրերը ոռոգման դաշտերը Այդ խողովակները, անցնելով գետի տակից և համեմելով դաշտերը, այնուեղ ծառերի նման ճիշդաւորում են մեծ և փոքր ճիշդերի, որոնցից ամեն մէկը ոռոգում է դաշտերի մի մասը: Ճիշդերի ժայրերին, որոնեղից արդէն կեղտուու ջուրը դուրս է զալիս հողի երեսը, յարմարեցրած են մի-մի խթաններ, որոնց շնորհիւ կարելի է ջուրը վարարացնել կամ պակասացնել: Ջրերը դաշտում հոսում են առուներով այնպէս, որ ջրելով բոյսերի արմառները, նրանք բոյսերին ամենկին չեն կըշում և չեն կեղտուսում:

Դաշտերը ծածկուած են գոյնզգոյն հոտուէտ ծաղկիներով. առանձ, խնձոր, գեղձ, սալոր և ուրիշ պատւզներ այնքան իբն Են փոքրիկ ծառերի մրաց և այնքան մեծ-մեծ, որ ճիւզերի տակ, եթէ նեցուկներ դրած չը լինեն նրանք ծանրութիւնից կը կոտրուուին: Քաղաքի համար ամբողջ բանջարեցնը համարեած՝ այդ դաշտերն են մատակարարում: Խոտմ են, որ այդտեղ մի հեկտար հողի համար գիւղացիները առաջ տալիս էին քաղաքին 8—10 ֆրանկ տարեկան կապալ, խոկ այժմ 600—800 ֆր. են առաջարկում:

Ոռողման դաշտերը օգտուելով աղբուտ ջրերի օրգանական մասերից՝ բնորհի բոյսեր և պատւզներ աճեցնելու համար, միեւնոյն ժամանակ մաքրում են նրանոց աղտոտութիւններից թէ մեքենաբար, ինչպէս ֆիլտր, պահելով իրանց վրաց ջրի մէջ լողացող չը լուծուած մասերը, և թէ իրացնելով լուծուած ամմրակը, օրգանական բորակածինը եւ այլն:

Հողի տակ զցուած է խողովակների մի ցանց (դրենաժ), որոնց շնորհի արդէն մաքրուած ջրերը հաւաքում են մի տեղ և այնտեղից թափում գետք դրենաժի ջուրը այնքան մաքրու է, որ նրա մէջ շարունակ լողում են ոսկեղոյն ձկներ: Ֆրանսիացի ուղեցուցը այցելուներիս առաջարեց անուշ անել այդ ջրից, որ և կատարուեց բոյսը կողմից ախորժակով: Շրջակայ բնակիչները այդ ջուրը գործ են ածում թէ խմելու և թէ կերակրի համար:

Այդ դաշտերում վաս հոտ չէ զարացում: Այդ տեղերում պարապող բանուորների և շրջակայ բնակիչների առողջապահական դրութիւնը շատ բա է, խօլերա, տիֆ, կամ ուրիշ տարափոխիկ հիանդութիւն գեռ և այդ տեղ չէ նկատուել: Ռեալինում այդ տեսակ դաշտերի մէջ այժմ շինուած են նոյն խսկ անել ճիւանզութիւնից առողջացների համար, որոնք դուրս դադուի քաղաքաբին ճիւանդանուներից, գեռ կազդորուելու կարիք ունեն:

Այդպէս են ոռողման դաշտերը Այժմ տեսնենք Պարիզի բուն կանալիզացիան:

Անչպէս երեսի յալտնի է, Պարիզի բոյսը կեղտաջրերը խոհանոյներից, արտաքնոցներից, փողոցներից և այլն խողովակներով թափում են փողոցների տակ գոնուող անցքերի մէջ, որոնք իրանց կողմից միանում են տեղի մեծ անցքերի հետ, վերջիններս ևս առելի մեծենի և այլն, այնպէս որ աղտոտութիւնները հաւաքում են վերջ ի վերջոյ մի քանի շատ մեծ տառների կամ կուուզների մէջ (collecteur):

կամ կոյուղին հողի տակ շինուած մի մեծ կամարակառ նրբանցք (корридор) է, որի բասակով հոսում են ջրերը. կողքերից շինուած են մայթեր (тротуар), որ բանուալմերը կարողանան անց ու զարձ անել Երկու կողմի պատերին կից անցնում են չուզունէն է ահապին խողովակներ, որոնց միջով հոսում են մաքուր ջրերը՝ քաղաքի բնակիչներին մասամաշարելու համար. Այդուղ են գտնուած նոյնպէս հեռախօսական և հեռազբանական թելերը *).

Մարդ զմայլում է այդ ստորերկրեալ կոյուղու օդի մաքրութիւնից, որ առաջ է զալիս լաւ վենափլեացիացից ու ջրի շատութիւնից: Զրի մէջ ստուիկ նօպանում են կելուստութիւնները, այդ պատճառով Հոլուստ համարեա հոտ չէ զլացում: Եզդ ստորերկրեալ ճանապարհին աեղ-տեղ երեսում են մեծ ու փոքր առուներ, որոնց ջրերը միանում են Հոլուստի մէջ հոսող ջրին: Կոյուղու մէջ անցուզարձ են անում երկաթուղիով ելեքտրական կառքեր Ատրելի է զրօնել և նաև կերպով որոնք շարժում են ջրի հոսանքի շնորհի առանց կողմանի ոչժի: Պարիզի այդ ստորերկրեալ աշխարհից զուրա զալով նրա լոյս աշխարհը, մարդ ցաւում է, որ Կովկասի նոյն խոլ հարսաստ քաղաքները զուրկ են գեռ կանալիզացիացից, չը նայած որ նա անհրաժեշտ է քաղաքներում համախմբուազ բնակիչների առողջապահական տեսակէալից:

Բ. Գ. Ա.

*). Պարիզի վաղացներում հեռախօսական և հեռազբական թելեր չը կան, որովհետեւ այն բալորն էլ զետնի տակ են գտնուում:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌԱԽԱՎԱՅՐԵՐԻ ՄԵԶ
1900 ԹԱԼԻՆ

I

Երբ մի եւրոպացի ուզում է կազմել տարեկան տեսութիւն գրական երեսյթների, նա միշտ կարող է ձեռքի տակ ունենալ տարուայ ընթացքում լոյս տեսած բոլոր գրական աշխատութիւնները և նրանց վերաբերեալ բազմատեսակ ու բազմաթիւ քննադատական յօդուածներ և գրքեր:

Մենք այդ կողմից շատ աննպաստ պայմանների մէջ ենք գտնւում: Ճիշտ է, դժբախտաբար, շատ քիչ հայերէն զրգեր են հրատարակում տարրուայ ընթացքում, բայց այդ քիչ զրգերը չեն ենթարկվում սիստեմատիկական քննադատութեան և նոյն իսկ հնարաւորութիւնն չը կայ ունենալ նրանց լիակատար ցանկը, որովհետեւ մենք չունենք ոչ մի հիմնարկութիւն, որ գնէր կամ որին պարուագիր լինել ուղարկել բոլոր հայերէն հրատարակութիւնները, ինչպէս օրինակ Պետերբուրգի հասարակական գրադարանը, որին ուղարկուում են Ռուսաստանում՝ բառարակութիւնը:

Եթէ մեղնում էլ ընդունուած լինէր ուղարկել մի՛-մի՞ օրինակ բոլոր հայերէն հրատարակութիւններից, զիցուք, Գէորգեան ձեմարանին և Ներսիսեան գալրոցին, և եթէ, ի հարկէ, այդ հիմնարկութիւնները պահէին այդ օրինակները, ինչպէս հարելին է, այդ, բացի շատ ուրիշ օգուտներից, մեծ գիւրութիւններ կը տար գրականութեան պատմութեամբ և գրական քննադատութեամբ պարապողներին։ Բայց քանի որ այդ բանը գեռ չէ ընդունուած, շատ գիւրուր է գրական տեսութիւն կազմել առանց աջքաթող անելու որ և է գրական աշխատութիւն, մինչդեռ հէնց մեզնում տարեկան տեսութիւնից կարելի է պահանջել որ նա խօսի տարուայ ընթացքում հրատարակուած բոլոր աշխատութիւնների մասին, որովհետեւ, չորոշիւ սիստեմատիկական քննադատութեան բացակայութեան, պատահում են զէպքեր, երբ մի որ և է գրքի մասին խօսք չէ լինում ոչ մի տեղ։

Մենք, յամնայն դէպս, կ'աշխատենք, որքան կարելի է, ըստ բաւարարութիւն տալ այդ պահանջին:

1900 թուին մեզնում հրատարակուած աշխատութիւնների վրայ մի ընդհանուր հայեացք գցելիս ամենից առաջ աչքի է ընկնում թարգմանսական և քաղուածական գրուածքների քանակական գերակշռութիւնը ինքնուրոյններից:

Դա նոր երեւոյթ չէ մեզնում և առանձնայատուկ չէ մեզ. դա այնպիսի երեսյթ է, որ նկատում է բոլոր մանուկ և աշակերտող գրականութիւնների մէջ և որ ոչ միայն ընական բան է, այլ և անհրաժեշտ, մինչև որ ազգային գրականութիւնը ընդունակ դառնայ կանգնել իր սեփական ոտների վրայ:

Այդ «մինչև որ»-ը վերաբերում է թարգմանական զըրւածքների գերակշռութեան. ինչ վերաբերում է թարգմանական գրքերին, ընդհանրապէս, չի կարող լինել ոչ մի ժամանակ, երբ նրանք անհրաժեշտ չը լինեն, որքան էլ զարգացած լինի որ և է գրականութիւն: Մենք շեշտում ենք այդ բանը, որովհետեւ մեզնում, որոշ շրջաններում, մի փոքր բարձրից են վերաբերում թարգմանական գրականութեան, չը հասկանալով, որ մի կլասիքական գրուածքի չնորհքով թարգմանութիւնը ոչ միայն ինքն ըստ ինքեան հազարապատիկ մեծ արժէք ունի, քան մի ինքնուրոյն թէն չնորհալի, բայց միջակ գրուածք, այլ և այն մեծ օգուտն ունի, որ կարող է առաջ բերել հարիւրաւոր այդպիսի գրուածքներ:

Բրանգէսը շատ գեղեցիկ կերպով համեմատում է ինքնուրոյն սուեղծագործութեան անընդունակութիւնը համրութեան և օտար աղդերի մատարոր կեանքը իւրացնելու անընդունակութիւնը՝ խլութեան հետ, և պնդում է, որ այդ գէպքումն էլ խլութեան հետեանքը լինում է համրութիւն, և այն ազգը, որ չէ կարողանում իւրացնել ուրիշ ազգերի քաղաքակրթութիւնը, դառնում է դրանից ոչ թէ ինքնուրոյն, այլ ամուլ:

Թարգմանութիւնն է պամենագլխաւոր միջոցը օտարազգի մտաւոր կեանքի, որոնք ուղում են ամեն կերպ սահմանսփակել թարգմանական գրականութեան սասպարէզը իրեն թէ ինքնուրոյնի համար տեղ բաց անելու համար, նոյնքան հիմնաւոր վարուած կը լինէին, եթէ բամբակ կոխէին մի երեխայի ականջը, որպէսզի աւելի շուտ բացուի լեզուն:

Բայցի թարգմանական գրուածքների գերակշռութիւնից անցեալ տարրուայ մեր գրական կեանքում, նկատելի էր և այն, որ գրական աշխատութիւնների մեծ մասը կենզրունացած է պարբերական հրատարակութիւնների մէջ:

Լրագիրը և ամսագիրը սպանում են գիրքը,—այս այնպիսի երեսյթ է, որ այժմ աչքի է ընկնում բոլոր քաղաքակիրթ երկիրներում, աւելի քաղաքակիրթ արևմտեան եւրո-

պայում նոյնպէս, ինչպէս և պակաս քաղաքակիրթ Ռուսաստանում:

Կեանքի և մասնաւորապէս գրական աշխատանքի պայմանները փոխուել են լիովին:

Ստեղծուել է հասարակական կեանք, իր հրատապ հարցերով և իր հետզհետէ արագացող բախումով, տեմպով. ստեղծուել է ընթերցողների հոծ բաղմութիւն կանոնաւոր, սիստեմատիկական ընթերցանութեան պահանջով:

Ծանրաշարժ, ուշ-ուշ և անկանոն լոյս տեսնող զիրքը քիչ է համապատասխանում այդ փոխուած պայմաններին: Պարբերաբար հրատարակուող ամսագիրը և օրագիրը իրանք հէնց այդ պայմանների ծնունդն են և ամենից լաւ են բաւարութիւն տալիս նոր պահանջներին:

Միւս կողմից, գրողը դուրս է եկել վանական խցից և մեկենասի սլալատից, ուր նա կարող էր տարիներով, եթէ կարելի է այսպէս ասել, թուխս նստել մի շարադրութեան վրայ, և մտել է գոյութեան կռուի յորձանքի մէջ, ուր ամենօրեայ քրտինքով միայն կարելի է հաց ճարել և ուր ամեն ըոսէ պէտք է պատրաստ լինել վերք տալ և վերք ստանալ:

Դարձեալ պարբերական հրատարակութիւններն են, որ ամենից լաւ են համապատասխանում նոր ժամանակների գրողի աշխատանքի պայմաններին և հոգեբանութեան, և դարձեալ դա մի երեսյթ է, որ նկատուում է ոչ միայն մեղնում, այլ և ամեն տեղ: Անցեալ տարուայ համաշխարհային գրականութեան երկու ամենանշանաւոր երկերը—Տօլստօյի «Յարութիւնը» և Զօլայի «Բեղմնաւորութիւնը» ամենից առաջ տպուեցին առաջինը մի շաբաթաթերթում («ՀԱՅԱ»), երկրորդը մի օրագրի մէջ («Լ'Ասրու»):

Ցաւելու այդտեղ ոչինչ չը կայ, այդ մի երեսյթ է, որ պէտք է վերցնել, ինչպէս կայ: Բայց ահա մի ուրիշ երեսյթ, որ յատուկ է միայն մեր գրականութեան և որ վերին աստիճանի ցաւալի է,—գրական ճաշակի, չնորհքի և յաճախ նոյն իսկ գրադիտութեան պակասութիւն այն պարոններից շատերի մէջ, ուրոնք, ինչպէս բարձր ոճով ասում են՝ ուղում են մշակել հայրենի գրական անդաստանը:

Մի ժամանակ մի ոռու ֆէլիէտօնիստ գրել էր Աղամեանի մահուան առիթով, թէ նա, բացի հանճարենց գերասան լինելուց, մի քնքոյշ մանուշակ էր հայ գրականութեան «կաղամբային բանջարանոցում»: Այդ «կաղամբային բանջարանոց» բառերը վերաւորեցին ինձ այն ժամանակ, բայց այժմ շատ յաճախ են գալիս իմ միտքս այդ բառերը և յաճախ թւում է ինձ, թէ ճիշտ

որ «անդաստան» չէ ներկայացնում մեր գրականութիւնը, այլ ինչ որ մի բանջարանոց, ուր կարծէք պատահմամբ են բռւսել այս կամ այն ծաղիկը։ Եւ սակայն, ինչ է պակասում հայերին մի իսկական գրական անդաստան ունենալու։ Հստ երևյթին ոչինչ։ Բայց դա մեծ հարց է, որ կարող է մեզ շատ հեռու տառնել մեր խնդրից։

Դառնանք 1900 թուին ոռուսահայ բարբառով հրատարակուած աշխատութիւններին։

Բացի ձիրքի պակասութիւնից, նրանց մէջ նկատելի է և աշխատանքի պակասութիւն։ Նրանց մեծամասնութիւնը գրուած է շտապ-շտապ, անհոգ կերպով և կրում է վայրիվերոյութեան կնիք։ Ծաւալը այնքան էլ նշանակութիւն չունի այդ գէպում։ Նիհար գիրքը կարող է լինել մի շարք տարիների անխոնջ աշխատութեան արդիւնք կամ ամբողջ տարիների կեսնկը տպաւորութիւնների ամփոփում, և ընդհակառակը։ Տոքվիլի «Հին Կարգը» օրինակ, կամ Գի ող Մօվասանի մի որ և է պատմածք կենդրուսացնում են իրանց մէջ աւելի շատ մտքեր, տպաւորութիւններ, զգացմունքներ և պատկերներ, քան շատ որբի բազմահատոր գրքեր։ Չուր չէր գրում Պասկալը իր ծանօթներից մէկին։ «Ներեցէք, որ երկար դուքս եկաւ նամակս, կարծ գրելու ժամանակ չունէի»։ Եւ յիրաւի նոյն բանը արտայայտել կարծ խօսքերով շատ աւելի գժուար է, քան ճապաղ ոճով։

Եւ ցաւալին այն չէ, որ մեր գրքերը նիհար են, այլ այն, որ նրանց նիհարութիւնը բացատրուամ է ոչ թէ աւելորդ ճարպի և ուռածութեան պակասութեամբ, այլ սակաւարիւնութեամբ և բարակացաւով։

Այսպիսի աշխատութիւններ, ինչպէս Արիստակէս եպիսկոպոս Սեղբակեանի «Քահանայական խնդիրը» կամ Լէօի «Հայկական Տպագրութիւնը», բացառութիւններ են կազմում, մինչդեռ սովորական երևոյթ են դառնում այսպիսի գրքոյներ, ինչպէս բժ. Սիմէօն Շահ-Նազարեանի հրատարակութիւնները, որոնց շատերը միշտ ճառեր են կամ գեկուցումներ, որ սովիթ է ունեցել արտասանել կամ ներկայացնել այդ մեծապատիւ բժիշկը այն ժամանակ, երբ քմահած բախտի բերմանը տեսչութիւն էր անում երեանի թեմական գալրոցում,—ճառեր և զեկուցումներ, որոնց նմանը տրտասանել և դրել են բոլոր տեսաւճները և որոնց իբր գրքով լուսաւելու համար անհրաժեշտ էր, բայց հեղինակի առանձնայատկութիւններից, նոյնպէս և քննադատութեան այն բացակայութիւնը, որ ես առիթ ունեցայ չեցտել վերեամ։

Սակայն դրա մասին հետեւալ անգամ, երբ ես առիթ կ'ու-

նենամ իսուել մասնաւորապէս բոլոր այն զրական աշխատութիւնների մասին, որոնք լոյս են տեսել մեղնում անցեալ տարի առանձին հրատարակութեամբ կամ պարբերական հրատարակութիւնների մէջ։

S. 6.

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱՐԻՍՏԱԿԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԴՐԱԿԵՑԱՆ

Քահանայական խնկիր, Մոսկով, 1900 թ., գինը 1 ռ.

Հեղինակը երկար տարիների ընթացքում զանազան պաշտօններ է վարել համարեսա մեր բոլոր թեմերում, ուստի նրա պատմածը ձիւա զիտողութիւններ են և պաշտօնական վաւերապրերով հաստատուած վաստեր: Նրա անվիճեր մերկացուները արդիւնք են անմիջական ծանօթութեան մեր տիտուր իրականութեան հետ: Վաղաց Արքստակէս և ավլուպուր, իբրև առաջնորդ, ձգտել է մայնել իրան յանձնուած թեմերում այն վերանորոգութիւնները, որոնց ջատագովն է եղել միշտ. բայց էջմիածնի կենարունական իշխանութիւնը խոչնդուտներ է յարուցել նրա գործունէութեան դէմ և աշխատել է այնչափ անախորժութիւններ պատճառել այդ գործիչն, որ նա ստիպուած հետանայ ասպարէզից: Ծաւալի վաստ է, որ էջմիածնի կենարունական իշխանութիւնը երբեք չէ զեկավարուել գործունէութեան մի հաստատ ծրագրով, մի որոշ սկզբունքով, այլ նրա մշտափոխն կարգապրութիւնները զորկ են եղել խելացի հրմանքներից և օբխնականութիւնից. ազէտ ասիսկան քմահաճութիւնը էջմիածնի իշխանութեան բնորոշ զիծն է եղել նա երբեք չէ յարգել մեր և կեզեցու ժողովրդական սկզբունքը, այլ թէ ծըխական ժողովների, թէ երէցփոխների և թէ հոգաբարձուների հետ արել է, ինչ ուղեցել է: Մի գրչի շարժումով մի ամսիտութեան «հրահանգով» յանկարծ այնպիսի փոփոխութիւններ են մայրել ժողովրդի գարեւոր իրաւունքների մէջ, այնպէս ըռնազրօսութեամբ կրծաւուել են կամ վերացուել նրա իրաւունքները, որ կարծես մեր վեղարաւորները վայրենիների բռնապետներ լինէին, որոնք զաղափար չունեն կարգ ու կանոնի մասին: Կաշառակերութիւնը միացած փաշայական կամոյականութեան հետ՝ ձգտել են քարուքանդ անել մեր մէջ ամսն բան, պղծել ժողովրդի ամեն սրբութիւն:

Այդ պայմաններում անկասկած Արիստակէս եղ. Սեղրակեանը մի բացառիկ տեղ է բոնում մեր հոգևորականութեան մէջ. նա, իրու քաջ և հաւասարիմ հովիւ, անվեհերութեամբ պաշտպանում է իր հօտն ու եկեղեցին փարաջաւոր գայլերից և դիմակաւորուած խաչագողներից: Նա իր անաշառ մերկացումներով ձգուում է մաքրել այն ապականուած կղերական մթնոլորտը, որից խեղդուում է մեր ժողովրդական եկեղեցին:

Սակայն անկասկած է, որ այդ մթնոլորտը կը պարզուի, եթք նախ ինքը՝ կենդրոնական իշխանութիւնը կը բարեփոխուի, և երկրորդ՝ երբ հայ հասարակութիւնը խստաբահանջ կը լինի և իր իրաւունքները գիտակցօրէն կը պաշտպանի կղերի ոտնձգութեան գէմ...

Քահանայական ինդրով հետաքրքրուողը կը գտնի այդ գրքի մէջ առատ նիւթեր մեր իրականութեան մի ցաւի մասին և կը տեսնի հարցի հիմնաւոր և բարեխիղճ լուսաբանութիւն: Եղրակացութիւնները, որոնց համար է հեղինակը, կարելի է ամփոփել հետևեալ ձևով.

1) Եկեղեցին պահանջում է ընծայացուից ուսում և անարատ վարք.

2) Այդ պահանջի կատարումն ոչ մի դժուարութիւն չէ ներկայացնում քաղաքներում և մեծ դիւղերում.

3) Մի քանի փոքր գիւղերի համար կարելի է մի քահանայ կարգել.

4) Արժանաւոր սմնձինք յօժարութիւն ցոյց կը տան դնալ գիւղ քահանայութեան համար, եթէ այսուհետեւ բացուելիք տեղերը կը ստանան միայն կրթութիւն և բարոյական վարկ ունեցողները, և եթէ դրանց կը տրուի նիւթական ապահովութիւն.

5) Ժամանակակից ապահովացման ամինայարմար ձեր, որ ազատում է քահանային մուրացկի և փողաւոր ծխականների հացկատակ լինելու դրութիւնից՝ հաստատ ոսճիկն է:

6) Ռոճկի հարցը դժուար չէ իրագործել: Ծխականը, փոխարէն գանձանակի մէջ փող զցելու և օրինակատարութեան համար տէրտէրի բուռը դրամ դնելու, վճարում է որոշ տուրք եկեղեցուն: Երէցփոխի մօտ զումարուած դրամից, ծխական ժողովի որոշմամբ, յատկացնուում է ոռնիկ եկեղեցու բոլոր պաշտօնեաններին:

Ցանկալի է, որ այս աշխատութիւնը կարդալով՝ մեր հոգևոր իշխանութիւնն աշխատի ուղղուել և վերջ դնել աիրող չարիքին:

Ժողովրդի համար կարեսրը այդ է, և պէտք է մեր հոգե-

ւորականները մտածեն այդ ուղղութեամբ և ոչ թէ աշխատեն՝ սուս ու մուս փաստաբանութիւններով անսլատճառ սպիտակացնել ակներեւ սև կողմերը:

Լ. Ս.

Յ) ԳՈԽԵՑՈՆ ԼՈՒԽԻՆԵԱՆ. Կոր բառգիրք պատկերազարդ Ժամանակակից համար առաջին. Ա-Հ., Պարիզ, 1900. Նր. Ժդ+1061.

Այս նոր բառարանը թուով վեցերորդն է Գրանոներէն-հայերէն բառարանների մէջ *), և բոլորի էլ հեղինակները տաճկահայեր են: Այս երեսյթը շատ հնատաքքրական է մեր մտաւոր կրթութեան պատմութեան համար: Այժան թուով Գրանոներէն-հայերէն բառարանների գոյութիւնը անհերքելի ապացոյց է այն բանին, որ մեր տաճկահայ նղբայրները իրանց մտաւոր մնունդն ստանում են Գրանոնիական գրականութիւնից, ինչպէս մնաք՝ ոռուսերէնից: ուրեմն և նրանց լեզուի ու գրական ուղղութեան մէջ բնականօրէն պէսք է տիրապետէ Գրանոնիական ոգին: Միւս կողմից երեսում է, որ մեր տաճկահայ նղբայրները թէ մայրենի լեզուի և թէ առհասարակ լեզուների ոռումնասիրութեան մէջ շատ աւելի առաջ են զնացել, քան մնաք: Մենք որ մեր մտաւոր մնունդն ու լեզուային ճաշակն առնում ենք գրեթէ միայն ոռուսերէնից՝ հարիւր տարուայ ընթացքում արտադրել ենք հազիւթէ և ոռուս-հայերէն բառարան, որոնցից ոչ մէկը չէ կարող բառարութիւն տալ նոյնիսկ հսմնուա պահանջներին, և այսօր ամեն մի կրթուած հայի ցանկութիւնն է ունենալ մի կատարեալ բառարան ոռուսերէնից հայերէն: Բացի ոռուս-հայ թարգմանական բառարաններից՝ ոռուսահայերս չենք առել և ոչ մի ուրիշ բառարան, ոչ թարգմանական և ոչ մայրենի լեզուի: Այնուհետև մեր տաճկահայ նղբայրները աշխատասիրել են մի երկար շարք բառարանների, թէ լոկ մայրենի լեզուի (և հատ) և թէ թարգմանական, գերմաններէնից, անգլիերէնից, յունարէնից, իտալերէնից, պարսկերէնից և Գրանոներէնից հայերէն: և սրանք բոլորը, ունենալով աւելի կամ նուազ պակասութիւններ՝ այնուամենավեր բոլորն էլ բարձր են քան ոռուս-հայերէն բոլոր բառարանները: Աւելացնենք սրա վրայ և այն իրողութիւնը, որ թէ հայերէնի և թէ օտար լեզուների հայերէն քերականութիւններ,

*) Առաջին հինգն են՝ Աւգերեանի (Վենետիկ), Էմինեանի (Վիեննա), Նուպարեանի (Զմիւռնիա), Տաղաւարեանի և Նորացի (Կ. Պոլս) բառարանները:

դասագրքեր, ընթերցարաններ, զրուցատրութիւններ և այլն դարձեալ արդիւնք են տաճկահայ հեղինակների, և մնաք կը տեսնենք, որ այս մասում մենք շատ յնտ ենք մնացել տաճկահայեցից։ Առհասարակ պէտք է խոսափանել, որ նրանք ուսանում, ուսումնասիրում են լեզուն, ապացոյց—այդ բազմաթիւ, բազմահատոր բառարանները, գերականութիւնները, ձեռնարկները և եւրոպական յայտնի հեղինակներից թարգմանութիւնները։ Իսկ մենք այն հասկացողութիւնն ունինք, թէ լեզու սովորելը պէտք չէ։ Կթէ զլսումդ մի միտք ծագեց՝ զրիր, ինչ լեզուով կը լինի, հոգ չէ։ կարդացողը մի կերպ կը հասկանայ—և այդքանը բաւական է։ Գրականութեան մէջ գործող մարդիկ կան, որոնք դաւանում են, թէ «մեզանում ոչ ոք հայերէն լեզու չը գիտէ», որից եղբակացնուում է, թէ ուրեմն «ես էլ կարող եմ չը գիտենալ» ու գրել, և չկայ մէկը՝ որից սովորեմ կամ որին հետեւեմ։ Մեր մէջ տիրում է մի ցաւալի նիհիլիզմ—լեզուի վերաբեր մամբ։

Բայց դասանք նոր ֆրանսահայ բառարանին։ Սրա հեղինակը, որ երբեմն վելսակի Միթիարեան միաբանութեան անդամ էր և կոչում էր Սմբրտսիոս վալ։ Գալֆայեան՝ անուն ունեցող, փորձուած հեղինակ է, հմուտ հայերէնի և ֆրանսերէնի, ունի յաջող թարգմանութիւններ, ընդհանուր պատմութեան դասագիրք (հինգ հատոր), հայ-ֆրանսերէն բառարան և այլն։ Բայց նրա զլուխ-գործոցը անսարակոյս պէտք է համարել այս բառարանը։

Որ և է բառարանի մասին դժուար է բացարձակ դատողութիւն անել, որովհետեւ չը կայ և չէ կարող լինել կատարեալ բառարան։ ամենալաւ բառարանները ձգտում են միայն համնել կատարելութեան, որ, իբրև իդէալ, անհասաննելի է։ Ուրեմն բառարանի մասին կարելի է դատողութիւն անել համեմատական կերպով—թէ ինչ առաւելութիւններ կամ պակասութիւններ ունի՝ ուրիշ բառարանների համեմատութեամբ։ Ինչ կարելի էր անել՝ լեզուի այս ինչ զրութեան մէջ, և ինչ է արուած իրապէս։ Այս տեսակէտով էլ մենք նայում ենք Գ. Լուսինեանի նոր բառարանին վրայ։ Ի հարկէ, նա ունենալով հինգ նախորդներ, որոնցից երեքը տառուած են վերջին տասնամենակում և դեռ չեն սպառուել՝ պէտք է մի շօշափելի պատճառ, մի raison d'être ունենայ իր լոյս աշխարհ գալուն։ ուրիշ խօսքով նա պէտք է անսւրանալի առաւելութիւններ ունենայ նախորդներից։ Եթէ մենք համեմատելու լինինք այս նոր բառարանը Նորայրի բառարանի հետ, որ մինչեւ այժմ եղածների մէջ լաւագոյնը և ամենից ընդարձակն է, որի հետ իսկապէս և պէտք է մրցի այս

նոր բառարանը՝ մենք կը կարողանանք նկատել նորի առաւելութիւնները և, այն, պակասութիւնները:

Նոր բառարանը պատկերազարդ է (մօտ 1200 նկարներ ու ձևեր), մի անպայման առաւելութիւն, որից զուրկ են եղել մինչև այսօր լոյս տեսած բոլոր հայերէն կամ թարգմանական դրական-բառարանները (բայց երկու մասնագիտական բառաններից, որոնք տպագրուած են վենետիկում): Աւելորդ է խօսել պատկերների օգտակարութեան մասին՝ առարկան ճիշտ ըմբռնելու համար:

Նկարները ֆրանսերէն բառարանների համար պատրաստուած կլիշէներից են, և այս հանգամանքը բաւական է՝ երաշխաւորելու նրանց ճշուութիւնն ու գեղեցկութիւնը: Նրանց չնորհիւ բազմաթիւ բոյսեր, կենդանիներ, գործիքներ, ճարտարապետական մանրամասնութիւններ, և այն և այլն, պարզ պատկերանում են ընթերցողին, այն ինչ եթէ սրանք միայն խօսքիրով նկարագրուէին՝ ազօտ, ուրեմն և սննդողակի մուժ հասկացողութիւն կը կազմէր ընթերցողը նրանց մասին: Հետեւաբար այս նոր բառարանի նկարները նրա առաջին, անպայման առաւելութիւնն են կազմում միւս բառարանի համեմատութեամբ:

Միւս առաւելութիւնը՝ այս բառարանի լիակատարութիւնն է: Լիակատարութիւնը երկու անսակէտով պէտք է հասկանալ. նպա՞ բառացուցակի (նօմէնկլատուրի) հարստութիւն, և երկրորդ՝ բառերի մշակութեան մանրամասնութիւն: Բառացուցակի հարստութեան կողմից այս բառարանը գերազանցում է ոչ միայն նորայրից, այլ և բոլոր (մեզ ծանօթ) ֆրանսերէն մատենագրական-բառարաններից, որովհետեւ պարունակում է մեծ քանակութեամբ մասնագիտական և տեխնիկական բառեր, որոնք առնասարակ չեն զետեղուում մատենագրական-բառարաններում:

Օր, նորայրի բառարանում Bichette բառին անմիջապէս յաջորդում է Bichot, այն ինչ նոր բառարանում այս երկու բառի մէջ զետեղուած են 6 բառ (քիմիական), որոնք ըլ կան նոյնիսկ Քաջունու Նրուեստից և Գլուոթեանց երկհասոր բառարանում: Նորայրի մօտ Երցոյթ բառին յաջորդում է Éolian, այն ինչ նոր բառարանը այս երկու բառի մէջ ունի աելորդ 11 բառ՝ կենդանաբանական, երկրաբանական եւ այլն նշանակութեամբ: Նորայրի մէջ Enter և Enterrement բառերի մէջ զետեղուած են 7 բառ, այն ինչ նոր բառարանը նոյն երկու բառի մէջ զետեղել է 61 բառ, մեծ մասամբ բժշկական մասնագիտական բառեր:

Այս կերպով նոր բառարանը ձգում է միանգամայն երկու նպատակի համեմ—լինել գրական և մասնագիտական բառարան (որ չափ դժուար իրագործելի է): Եթէ նորայրի բառարանը և առնասարակ գրական բառարանները չունին մասնագիտական բառերի բաժինը՝ սա պակասութիւն չէ. իսկ եթէ նոր բառա-

բանն ունի և յաջողութեամբ կազմել է նաև մասնադիտական բաժինը՝ այս անշուշտ առաւելութիւն է։ Բառերի մշակութեան մանրամասութիւնն էլ գարձեալ ցոյց տանք մի քանի համեմատութիւններով։

Embarras բառը նորայրի մէջ գրաւում է 19 տող, իսկ նոր բառարանում 37 տող *): Ennemi բառը նորայրի մէջ գրաւում է 15 տող, իսկ նորում 42 տող։ Compte բառը նորայրի մէջ գրաւում է 62 տող, իսկ նորում 128 տող։ Faire բառը նորայրի մէջ գրաւում է 182 տող, իսկ նորում 298 տող և այլն։

Ի հարկէ ամեն մի բառի մշակութեան մէջ չը կան այսպիսի մեծ տարբերութիւններ։ Կան բառեր, որոնց մէջ նորայրը նոյնքան մանրամասն է, որչափ և նորը, նոյնիսկ պատահում են դէպքեր՝ երբ նորայրը աննշան չափով ընդարձակ է նոր բառարանից, բայց այս դէպքերը բացառութիւն են։

Նոր բառարանի լիակատարութիւնը արտայայտուում է և նրա արտաքին ծաւալով, որ մօտաւորապէս երկու անգամ աւելի կը լինի քան նորայրինը. ուրեմն և երկու անգամ աւելի նիւթ կը պարունակէ։ Ի հարկէ, նոր բառարանում շատ տեղ են բըռնում նկարները. բայց սրանց բանած տեղը լիովին փոխարինուում է տեղի այն իմայողութիւններով, որ հեղինակը յաջողել է անել զանազան կողմերից։

Օր. Նորայրը բառայցուցակի ամեն մի ֆրանսերէն բառի մօտ գրել է և նրանց արտասանութիւնը հայերէն զրերով, որոնց գումարը բասական տեղ կը գրաւէ ամբողջ բառարանում. այն ինչ Գ. Լոսինեանը դրել է միայն այն բառերի արտասանութիւնը, որոնք շեղուում են ընթերցանութեան ընդհանուր կանոններից։ Նրանով տեղի զգալի խնայողութիւն է լինում, և չէ կարելի ասել, թէ առ որ նէ վասա ունենայ բառարանը գործածողի համար. որովհետև այսպիսի ընդարձակ բառարանից օգտուել ցանկացողը անհրաժեշտաբար պէտք է զիտենայ ֆրանսերէնի հնչիւնների և ընթերցանութեան տարրական կանոնները, ուրեմն աւելորդ ծանրաբեռնութիւն է կրկնել այն ինչ որ լայտնի պէտք է լինի ամեն մի գործածողի։

Բայցի սրանից՝ հեղինակը խիստ հետեղութեամբ գործ է ածել գծիկները՝ փոխանակ բառայցուցակի բառը կրկնելու, ինչպէս նաև կէտաղրութիւնը և ուրիշ պայմանական նշանները, մանաւանդ բազմաթիւ համառօտագրութիւնները։ Վերջիններս այնքան շատ են (319) և այնքան կրծատ, որ արդէն դժուար գործածելի են դարձնում բառարանը։

Օր. ի՛ նշանակում է իրական, իսկ իգ՛ իրաւագիտութիւն. զլա՛ նշա-

*) Իմկապէս՝ 55 տող. բայց քանի որ նոր բառարանի միւնակը պարունակում է նորայրի սիմակի 2/3, նիւթը՝ ուստի այսուեղ և յաջորդ օրինակներում նրա տողերի թիւը 2/3, մասով պակասացրել ենք, որպէսզի նիւթի քանակութեան համեմատութիւնը ճիշտ լինի։

նակում է «զարդիս լաւագոյն ասիս. միլ՝ կարծում էք նշանակում է ամակաց», բայց դուքս է զալիս՝ «մանվարաբժութիւն», բ' կարծում էք նշանակում է օրաց», բայց դուքս է զալիս պրոսարանութիւն» և այլն:

Նոր բառարանի այս առաւելութիւնների հետ պէտք է յիշել և պակասութիւնները, որոնցից նա դժբախտաբար աղատ չէ մնացել: Սրանք հետեւանք են հեղինակի—թոյլ տրուի մեզ ասել—սխալ հայեացքի բառարանագրութեան վրայ:

Հեղինակը միտքը դրել է՝ ամեն մի ֆրանսերէն բառի դէմ գնել անշուշտ հայերէն թարգմանական բառ, կնմ արդէն գոյութիւն ունեցող, կամ ինքնաստեղծ: Հիմա մի կողմից երեսակայնք ֆրանսերէն հարուստ լեզուն, որ ունի դարաւոր զարդացում և ահազին գրականութիւն՝ զիատութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ, որ լատինական և յունական արմատներից օգտաւում է աղուապար և ատամնեակ հազարներով բարդութիւններ է կազմում, որ ուրիշ լեզուներից էլ աննախանձաբար փոխ է առնում իր չունեցած բառերը: Միւս կողմից ի նկատի առնենք մեր աղքատիկ լեզուն, խեղճ գրականութիւնը, որի մէջ չեն յիշուած նոյնիսկ անուններն այն զիատութիւնների, որոնց վրայ բազմաթիւ մասնագիտական շարադրութիւններ կան ֆրանսերէն լեզուով: Աւելացնենք նաև մեր թունդ հայերէնասէրների խորշանքը օտարազգի բառեր գործածելու դէմ, այս «աղքատ ու հազարա»-ութիւնը: Ուրեմն նախակէս կարող ենք գուշակել, որ նոր բառարանում սրատահելու են հազարաւոր նորաստեղծ բառեր, որոնք նրան պէտք է զրկեն բնականութիւնից և տան արուեստական գոյն: Սյս կէտում համեմատութիւնը նորայրի և այս նոր բառարանի մէջ շատ խրատական է: Նորայրի համար ամեն մի գործածած հայերէն բառը սրբութիւն է. նա էլ, ինչպէս և Գ. Լուսինեանը, գրաբարի բառեր և լեզու են գործ ածում իրանց բառարաններում: Երկուսն էլ, հարկը պահանջած դէպքում, զիմում են նորաբանութեան, նորաստեղծ բառերի և աշխարհաբարի օգնութեան: Բայց նորայրը նորաստեղծ բառերը որոշակ է ասալզանիշով, նորաբանութիւնները (այսինքն հին բառեր նոր նշանակութեամբ գործածուած) կրկնակի ասալզանիշով, աշխարհաբար բառերը Ս. (ստորին հայերէն) նշանով, գաւառական բառերը՝ Գոյզ. շատ յանախ էլ, երբ մի ծանօթ բառ գործ է ածում անսովոր նշանակութեամբ՝ հին և միջին զարերի հայ հեղինակներից վկայութիւններ է բերում, որոնք արդարացնում են այդ անսովոր նշանակութիւնը: Սյնպէս որ նորայրի բառարանը գործ ածողը կատարեալ զիտակցութիւն ունի, թէ նրա առաջարկած բառերը որ աստիճանի ընտիր են, և բոլորով վին ապահով է նրա առւած հայերէն բառամթերքի հարազատու-

թեան մասինս Աւելացնենք և այն, որ նորալոի մօտ նորաստեղծ բառերը ընդհանրապէս ճաշակաւոր են, գանէ լեզուի օրէնքների դէմ չեն մեզանչում:

Բոլորովին ուրիշ երեսիթ է նկատուում նոր բառարանում: Գործ ածողը նրա մէջ պատահում է նորանոր, նորանշան բառերի հեղեղի, անթիւ բարդութիւնների, արմատական կերպարանիք ունեցող, բայց անծանօթ բառերի, և չէ կարող որոշել, թէ որտեղից են դրանք. հեղինակի ստեղծագործութիւններն են, թէ ուրիշ աղբիւրներից առնուած: Բայց այս գեռ ոչինչ. բարդութիւնները երբեմն այնպիսի ձևով են եղած, այնպիսի հրէշաւոր «բառեր» են չինուած, որ հայ ականջը և հայ լեզուի ճաշակը փշաքաղւում են: Հարիւրաւորներից բերենք մի քանի օրինակ.

Նոր բառարանում պատահում ենք այսպիսի բառերի. պարտնաշուանել (Débosser—սպարանին կապաւած շուանն քակել), նոր, ոնի. պուծանել զծոր չուանի, որ պինդ ունի զպայաննա), արգելաւածիլ (Forpaiser—երթալ արտծիլ լարգելեալ տեղուց), նոր, ոնի. «Թողու (էրէոյ) զբնիկ զարարան և երթալ ի հեռաստան, թ. բատելլիլ), հասագաղաւել (Étancher. պարարեցուցանել զհոսումն... չորցանել), նոր, ոնի. «գտարեցուցանել զհոսումն»). լրագում (Arrooint—«գրամմ ամրող ջացուցիչ զումարի», նոր, ոնի «նուցորդը պարուց»): Վ. հնիկեսաւանոյս (écharpe de Bièêtre)—պիմարնացի փոխածուծ), աղինահնձնուալավառութիւն (Entérejo myase), աղինծինապուրափուրիւն (Entétrépirolephalocèle):

Դժուար թէ ճաշակ ունեցող հայ մարդը կարողանայ հաշտուել այդ տեսակ նոր «բառերի» հետ, և դժուար թէ սրանք երբ և իցէ իսկապէս բառ գառնան: Դրանք ծնած օրից մեռած են և այս բառարանից դուրս, կիսների և գրականութեան մէջ, գործածութիւն չեն ունենայ: Շատ բանկալի է անշուշտ հարուստ իեզու ունենալ, եւրոպացու ամեն մի բառին դէմ հայերէն պատրաստ բառ: Բայց զրա համար հարկաւոր են բաղմաթիւ պայմաններ, որոնց քննութեան մէջ պյուղել չենք կարող մսնել. մի մոգական գաւաղանով, կարինէտում նստած մի հեղինակի թխուածքներով լեզուն չի հարստանայ, այլ կաղաւազուի: Ասսած է. եթէ հաւը կամենայ սազի ձու ածել կը տրաքուի:

Մի ուրիշ խոշոր պակասութիւն, որ դարձեալ բղիսում է հեղինակի թիւր հայեակըից՝ թարգմանական հայերէն բառերի կոտակութիւնն է: Բառարան կաղմողի պարտականութիւնն է՝ օսարտողի բառի ճիշտ և մանրամասն նշանակութիւնները առա, փոխարերական սոսումները բացարել, ոճաբանութիւնները հասկնալի գարձնել: Բայց նոր բառարանի հեղինակը մտադրուել է աւելին անել, նու կամեցել է հայ թարգմանիչների առաջ գնել հայերէն լեզուի այն բոլոր բառումթերքները, սրմաք որ և է դէպ-

քում կարող են օգտակար լինել այս կամ այն ֆրանսերէն բառը թարգմանելու ժամանակի: Այս տենչով բռնուած՝ նա մի հատիկ ֆրանսերէն բառի դէմ դնում է երբեմն տասը, քսան և աւելի հայերէն բառեր:

Այսպէս՝ Débat բառի համար դրուած են 11 թարգմանական բառեր, Débauché-ի դէմ՝ 19 բառ, Formidaple-ի դէմ՝ 21 բառ. Empressé բառի դէմ կարգում ենք. յօժար, յօժարամիս, մուայօժար, փոյթ, փոյթաշարք, յօժարափոյթ, յօժարասէր, յօժարակամ, միրայօժար, բարեխօժար, քաջավոյթ, փոյթայորդոր, փոյթկոտ, փոյթեռանդն, անձնապատրաստ, դիրապատրաստ, պատրաստական, մշտապատրաստ, յառաջամասոյց, բազմալորդոր, յօրդորամիտ, մտադիւր, բարեխորդոր, յօժարախորժ, ժամանակ, փոյթամիրու, շուտափոյթ, կամակար, վաղվաղուն, վաղվաղկոտ, վաղվաղուկ, եռանդոտ, եռանդոտն=34 բառ:

Այս մի օրինակը շատ լաւ է բացատրում, թէ հեղինակն ինչպէս է նայում իր, իբրև բառարանագրի, պարտաւորութեան վրայ: Նա կարծես հայերէն բառերի ցուցահանդէս է բաց անում, կամ բառերի վաճառանոց, որ եկողը նայի, հաւանի, ուզածն առնէ տանի: Բայց նրա առաջին պարտաւորութիւնն էր՝ empressé բառի ծից նշանակութիւնը տալ, որպէսզի այս բառարանին դիմողը նրա օգնութեամբ այդ բառը հասկանար: Եւ սակայն բառարանն այդ էականը, ծից նշանակութիւնը չէ տալիս, և նրան դիմողը ընկնում է տարակոյնների և անորոշութեան մէջ. ինչ է նշանակում իսկապէս empressé—նա չը գիտէ, չը նայելով 34 հայերէն բառերին: Ապացոյցի համար փորձենք թարգմանել մի ամենասովորական նախադասութիւն այդ բառով. «յօսuis fort empressé»—«ես շատ empressé եմ»: Հիմա դուք, ընթեցող, հայերէն «ես շատ empressé եմ» նախադասութեան մէջ փորձեցէք empressé բառը փոխարինել բառարանի առաջարկած 34 բառերով, որպէսզի հասկանաք ֆրանսերէն «յօսfort empressé» խօսքը. դուք շատ կ'աշխատէք, շատ սխալների մէջ կ'ընկնեք, բայց էլի զլիի չէք ընկնի, թէ այդ նախադասութիւնը պարզապէս նշանակում է. «շատ շտապում եմ», «շատ վագ եմ»: Տեսնում ենք ուրեմն, որ թարգմանական բառերի կուտակութիւնը, եթէ ֆրանսերէնը արդէն զիացոյնների համար երբեմն կարող է օգտակար լինել՝ ընդհանրապէս վնասակար է և բացարձակ դատարպարտելի՝ մի բառարանի մէջ: Նորայրը նոյն empressé բառի դէմ դրել է «փոյթ. փոյթկոտ»—միայն երկու բառ, որ կարծութեան հետ ունի և այն առաւելյութիւնը, որ գոնէ ֆրանսերէն բառի նշանակութիւնը աշխատում է ճշտիւ տալ. Նորայրի բառարանով հայը որու հասկացողութիւն է կազմում empressé բառի մասին, իսկ նոր բառարանով՝ մուք և խառն: Այս նկատողութիւնը կարելի է անել շատ հարիւրաւոր

բառերի մասին. մեր բերած օրինակը բացառիկ չէ, այլ մէկը բազմաթիւ օրինակներից երևոյթը ընդհանուր է և շատ ցաւալի:

Չենք կարող լուսվածեամբ անցնել և մի ուրիշ պակասութիւն, որ արգէն բուն հայերէն լեզուադիտութեան է վերաբերում: Հեղինակը գործ է ածում շատ անգամ այնպիսի բառեր, որոնց նշանակութիւնը խիստ կասկածելի է, կամ որոնք միանգամայն անծանօթ են, երբեմն նոյնեւ միավանդ կամ նշանակութեամբ կամ քերականական ձեռվէ Յատ օրինակներից գարձեալ բերում ենք մի-երկուսը: Ո՞յլ է լսել կոլոդուր, լոգաչեր, ոնի, տունաշի, ուռակել, և այլ այսպիսի բառեր: Շոհ (կրախմալ) առաջին անդամ գործ է ածել Նորայրը, նշանակելով որ դա գաւառական բառ է: Նրանից առել է Քաջունին, առանց իր աղբիւր և բառի գաւառական ծագումը նշանակելու. այդ տեղերից էլ նա մուտք է գործել այս բառարանի մէջ, ի հարկէ, դարձեալ առանց անցաթղթի: Լոգաչերտ (Därne) բառի գաղտնիքը կարելի է հասկանալ՝ ուրիշ բառարանների օգնութեան դիմելով: Նոր բառարանում գրուած է «D a r n e—լոգաչեր» (Տաստօն) եւ լոգաչեր (alose): ուրիշ ոչինչ: Դժուար թէ ընթերցողը հասկանայ կամ Darn e բառի նշանակութիւնը, կամ լոգաչերտին ու լոգաչերտինը: Սակայն գաղտնիքը բացւում է այսպէս. Նորայրը A l o s e բառի դէմ (որ մի ձկան անուն է) գրել է լոր? : (հարցական նշանով, որ ցոյց է տալիս, թէ նա տարակուսում է A l o s e-ի և լորի նոյնութեան մասին): Նոր բառարանը նոյն A l o s e բառի դէմ դրել է առաջին տեղում լոր (առանց հարցականի և առանց աղբիւրը նշանակելու). և որովհետեւ դարե նշանակում է ձկան շերտ *), ուստի լոր բառից բարգել է լորաչերտ. (իսկ լոգաչերտը հրտեղից է՝ այդ չը կարողացանք իմանալ): Բայց բառը սիսալ է կազմուած. լորաչերտ կարող է շատ շատ՝ նշանակել լոր ձկան շերտ, այն ինչ դարե նշանակում որ և է խոչոր ձկան շերտ, և ոչ թէ միայն լրփեր—Enfant naturel նոր բառարանում թարգմանուած է. «քնական զաւակ, աղջկորդի, հարճորդի, չնորդի, բողորդի, որդի անհարազատ, խորթ որդի»: Թողնենք այն, որ ֆրանսէրէն բառը երբէք չունի այն նախատական, հայհոյական բնաւորութիւնը, որ տալիս են հայերէն բողորդի, չնորդի (=շան

*) Larousse-ի բառարանն ունի («Darne—tranche d'un poisson, с о м е saumon, аlose e t c.», նորայրը ունի. («Darne—պատու, մասն ձկան մեծի», որ շատ ճիշտ է):

որդի) բառերը, այլ լոկ նշանակում է ապօրինի զաւակ (Նորայրը Naturel բառում դնում է. «Ծնեալ արտաքոյ ամուսնութեան (որդի), բնամիմն. (գորինաւոր»): Խնդիրն այն է, որ «խործ որդի» բառը հեղինակը գործ է ածում իրեւ աշխարհաբար բացառութիւն ենֆան naturel-ի, այսինքն, նրա կարծիքով՝ խործ որդի աշխարհաբարում նշանակում է հարձորդի, աղջկորդի, չնորդի, բողորդի և այլն: Սիսալը ակների է և շատ զգուշալի, Entrer en guerre նոր բառարանում թարգմանուած է «ի մարտ արշաւել. պատերազմի սկսիլ»: Վերջին, աշխարհաբար թարգմանութիւնը աւելի յարմար է ֆրանսերէնին, բայց նա չէ համապատասխանում գրաբար «ի մարտ արշաւել»-ին, որ նշանակում է «գէսի կոփւ վաղել» և բնորոշ դարձուածք է՝ հին ժամանակի կռուի եղանակը, «նահատակութիւնները» բացարեկու համար: Entrer dans une académie (ակադեմիա մանել) թարգմանուած է. մտանել՝ յօդանալ ճեմարանի: Վերջին բացարութիւնը (յօդանալ ճեմարանի) հեղինակն առել է Խորենացուց («ի ստոյդ յօդանալ ճեմարանի»), որի այս խօսքը թարգմանիչների համար մուլթ, անորոշ է՝ յօդանալ անծանօթ բառի պատճառով: Նոր բառարանը, առանց կարիքի, առել է այս անստոյդ դարձուածքը և գործածել իրեւ անտարակուածելի ստոյդ գարձուածք, այն էլ քերականօրէն սիսալ ձևով. պէտք էր գոնէ զրել մտանել ի նեմարան, յօդանալ ի ճեմարանի (ինչպէս ուղիղ ունի Խորենացին): Նախդիրները կրճատելով սիսալ լեզու է ստացուել և անհատականալի բացարութիւն: Նոյնպէս գրաբար չեն առում «խելամուտ առնել ումեք ինչ», ինչպէս գործ է ածում հեղինակը («մահամարին է խելամուտ առնել նմա ինչ», Entrer բառում), այլ խելամուտ առնել զար իմիք: Եւ այն և այլն:

Մի ընդարձակ հատոր հարկաւոր. կը լինէր զրել՝ սպառելու համար բոլոր նկատողութիւնները նոր բառարանի թերութիւնների կամ սիսաների մատին. իսկ մեր յօդուածը արդէն իսկ գուրս եկաւ սահմանուած ծաւալից: Ռւսաի ստիպուած ենք կանդ առնել այսաեղ և մի համառօտ եղարկացութիւն անել՝ հիմնուելով մեր սասաների և չասաների վրայ:

Նոր բառարանը իւր նկարներով, մանրամասնութեամբ, մասնագիտական բառերավ օգտակար է ամեն մի գործ ածովի: Թարգմանական (հայերէն) մտար կարող է օգտակար լինել միայն նրանց, որոնք ֆրանսերէն բաւական լրաւ զիտեն, այսինքն թարգմանիչներին, բայց վտանգաւոր, նոյն իսկ վեասակար է նրանց համար, որոնք այս բառարանի օգնութեամբ կամննում են ֆրանսերէն ընադիրը համարնալ: Այս բառարանը կարող են գործածել միայն հմուտները, այն էլ մեծ զգուշութեամբ ընտրութիւ-

անելով բազմախուռն թարգմանական բառերի մէջ։ Նորայրի բառարանը չը նայելով իր համեմատական համառոտութեան՝ սառւդարան, վասահելի, դիմասական աշխատավիւն է, նոր բառարանը աւելի զրծնական ուղղութիւն ունի, բայց ամեն քայլափոխում կասկածելի է։

Իբրև վերջաբան՝ մի նկատողութիւն ևս, որ բառարանից գուրս է և ըստհանուր դարձած մի զրական աղեղ երևոյթի է վերաբերում։ Շատ և շատ վաստեր կան նոր բառարանում, որոնք ապացուցանում են, թէ նրա հեղինակը մեծ չափով օգտական է նորայրից։

Համեմատել, օր. Appointer. Նորայր՝ «Հրաման տալ զատառորի (վկաս բառաջ բերելոյ)»։ Լուսինեան՝ «Հրաման տալ զատառորի (վկաս բառաջ բերելոյ)»։ Etoile filante, tombante. Նորայր՝ «թափեալ, սլաղեալ, սահեալ, թոփչ ասող, Ս. ասուպ»։ Լուսինեան՝ սրայեալ՝ սահեալ՝ թոփչ ասող, թոփչ, ասուպ։ և շատ ուրիշները։

Յայանի է միւս կողմից, որ մեղմանում զրական մեծ երկասիրութիւնների ձևանարկովները մի տեսակ նահատակներ են, որոնց ոչ միայն մտաւոր աշխատանքը նիւթապէս չէ վարձատրում, այլ դեռ իրանցից էլ զբամական զոհաբերութիւն է պահանջուում։ Այս զէպքում նրանց վարձատրութիւնը՝ միակ բարոյականը պէտք է լինի. պէտք է որ նրանցից օդատող, իբրև ազգիւր զործածող ամեն մի հեղինակ՝ նուիրական սրաբար համարէր յիշել իր նահատակ նախարգին՝ իբրև օժանդակ, իբրև ազգիւր իր աշխատութեան։ Այս պարտականութիւնն աւելի ևս ստիպողական է ներկայ զէպքում, երբ նորայրը իր բառամիջերքից նշանաւոր մասը քաղել է ինկնուրոյնաբար, ձեռադիրները քրքրելով փոշով միջից լրց աշխարհ հանելով, իսկ նոր բառարանի հեղինակը այդ պատրաստ նիւթը, առանց աշխատանքի, արտադրել է նրանցից։ Ավելան արդար լինելու համար աւելցնենք, որ նորայրի հետ նոյնակէս վարուել են և ուրիշները, և որ զրական ազգիւրները չը յիշատակելու ախար դժբախտաբար ընդհանուր, շատ տարածուած երկոյթ է մար մէջ։

ՄԱԼԻՍԱՑԵՍՆ

Յ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՊԱՆՈՐ ԼՈՒԽԻԼ ԽԱՆՏԵՐ ՀԱՊԻԼ. Պաղարշապատ,
1900 թ., դինը 25 կ.։

Հեքեաթանման այդ վեպի մէջ պատկերանում է Դերսիմի^{*)} պրանակնակ և խաչարած ցեղերի հողուական կեանքը։ Ժողո-

*) Թիւրքաց Հայաստանի արևմտեան մասում։

վըրդական այդ ստեղծագործութեան համառօտ բովանդակութիւնը հետեւեան է.

Կամախում ապրում էին եօթը եղբայրներ. Նրանց բազմաթիւ հօտերի և վրանների առաջ բաց էին Եփրատ գետի ձախ եղերքի բոլոր արօաները մինչև Դերսիմ: Եղբայրներից առաջը կամախի թագաւորի սիրած ոչն էր և հարկահանը: Մի քանի ժամանակից յետոյ մեռնում են բոլոր և եղբայրները անզաւակ և մնում է կենդանի միայն Փոթ անունով եղբայրը, որին և անցնում են միւս եղբայրների բոլոր հօտերն ու կայքը: Այդ հարուստ հովիւը նոյնպէս անզաւակ է լինում: Միայն շատ ուշ Աստուած տալիս է նրան մի աղջիկ, բայց դա էլ կոյր և անդամալոյծ է ծնւում:

Հովուի այդ աղջիայ հետ միևնոյն օրը լոյս աշխարհ է զալիս Բերդակի հզօր թագաւորի միակ որդի Լուսիկը, մի գեղեցիկ, կայտառ և ուժեղ տղայ: Վէպի միաքն է ցոյց տալ, որ ճակատագրի որոշումն անփոխին է և եթէ նա վճռել է որ գեղեցիկ և ուժեղ թագաւորադնը պամակուի մի հովուի կոյր և անդամալոյծ արջկայ հետ—անպատճառ այդ պէտք է կատարուի, և կատարում է:

Պատանի Լուսիկը մի օր որսի զնալիս պատահում է ուխտատենում մի խումբ աղջիկների: Նոյն զիշերը երազում նա տեսնում է որ իր նշանածը պէտք է լինի մի ինչ որ հալուի անդամալոյծ աղջիկը: Ճակատագրի այդ որոշումն անհաւատալի է թւում Լուսիկին: Անյնում են օրեր և նա մոռանում է երազը: Մի անգամ որսորդութեան ժամանակ անտառում նա հանդիսում է հովուական մի վրանի: Մանում է այդ տեղ գիշերելու: Վրանի տակ ապրում էին հովիւը, նրա կինը և անդամալոյծ աղջիկը: Լուսիկը երազում իմանում է որ հէնց այդ վրանում է գտնուում ճակատագրից իրան որոշուած նշանածը: Զարթնելով և հովուին ու նրա կինան ջը տեսնելով վրանում, նա մօտենում է մի անկինում ցնցոտիների տակ պատկած աղջկան և զարհուրում է աեմնելով նրա այլանդակութիւնը:

— Դանակի մի հարուածով եկ ազատուեմ սրանից, մտածում է Լուսիկը և ցցում դանակը աղջկայ փորն ու դուրս փախչում վրանից:

Աղջկայ մայրը վերադառնալով վրանը, հանում է դամսակը արիւնաշաղ աղջկայ մարմնից և կատում է նրա վէրքը: Ապա զանազան հրաշքներով աջողւում է բժշկել աղջկան բոլոր մարմնաւոր արաւաներից և վերջը՝ հովուի աղջիկը կերպարանափոխուելով դառնում է մի հրաշալի գեղեցկուհի, սատափի ատամներով, որի համար և կոչում է Սետե (սատափ):

Գեղեցկուհի Սետել սկսում է օգնել մօրն ու հօրը: Նա ցանկութիւն է յայտնում, որ հօր փոխարէն ինքը արածացնի ոչխարները: Շուտ սովորում է սքանչելի սրինդ ածել և հովառութիւն անել:

Մի անգամ, Համբարձման օրը, երբ աղջկերքը Սետելի հետ միասին մի լեռան լանջին վիճակ էին զցում և գուշակութեան երգեր երգում, եկաւ զրօննելու և Լուսիկը, որ արդէն ժառանգել էր հօր գահը: Լուսիկ թագաւորը տեսնելով Սետելի գեղեցկութիւնը, սասափիկ սիրահարւում է նրա վրայ. ի հարկէ նրա մաքով չէր կարող անցնել, որ իր առաջին հենց այն աղջիկն է, որին նա սպանած էր կարծում: Լուսիկը վերադառնալով իր սպալատը, երկար ժամանակ չէ կարողանում իր մտքից հանել Սետելի պատկերը, բայց միենոյն ժամանակ չէ ուզում որ շրջապատողները իմանան նրա սիրահարութեան մասին: Մի քանի ժամանակ տանջուելուց յետոյ նա վճռում է մենամենակ գնալ ու գտնել այդ գեղանի հովուհուն: Խոր, մութ և կուսական անտառներում նա մոլորւում է, հազար ու մի վտանգ և սարսափներ է տեսնում և երբ անտառից լոյս աշխարհ է դուրս գալիս, նա ամեն մի պատահողից հարցնում է.

—Աչքերը մէրջան, ատամները սատափ, եկաւ անցաւ, տեսաք Սյաքանը նա միայն գիտէր Սետելի մասին:

Շատ գժուարութիւններով վերջապէս նա հասնում է մի լեռան և իմանում, որ նրա վրայ է գտնուում հովուհին իր հօտի հետ, բայց սարը ամեն կողմից արդէն պաշարուած է լինում Քէլ թագաւորի զօրքերով: Նա ուզում է փախցնել գեղեցկուհուն: Լուսիկը այնու ամենայնիւ կարողանում է պատահել Սետելն: Բայց որովհետեւ սա հովուի չորերով է լինում՝ չի ճանաչում և յետ է դառնում տուն:

Յետոյ վրայ է հասնում ձմեռը: Զիւնը ծածկում է սար ու ձոր: Սետել ոչխարները կեր չունեն, խոտ չը կայ: Գիւղի առետրական հրէան էլ խոստանում է խոտ տալ, եթէ Սետել նրա որդու կինը դառնայ: Սետել գերադասում է կորցնել իր հօտը, քան դնալ մի հրէայի: Նա ջերմեռանդ ալօթքավ զիւմում է Սատուծու օգնութեան: Հասնում է գարունը, բացւում է երկինքը: Սարերը ծածկում են կանաչով ու ծաղիկներով: Հօտը դուրս է գալիս արածելու, բայց անչափ ուտելով նորածիլ խոտը, սկսում է սատկուել և եօթ հազար ոչխարից մնում է մի հազար:

Քէլ թագաւորն էլ ձեռք չի վերցնում գեղեցկուհուց լուսնէ լսու է զցում Սետելն: Ի՞նչպէս ալսատուել: Հովուհին զիւմում է խորամանկութեան: Իր «խատուտիկ» ոչխարի բուրգը

կտրում է և շինում միրուք ու բնինը և դրանով խարում Քէլի ձիաւորներին: Բայց վերջ ի վերջոյ նրա խորամանկաթիւնը բացւում է և կտրին հովուածին սովիագուած է լինում զէնքի զիւմնել իր պատիւը պաշտպաննելու համար: Այդ ինքնապաշտպանութեան համար նրան օգնում են իր երկու հաւատարիմ չները, «որոնք հայր Աբրահամի չների ցեղից էին», և ձևոնաստն առիւծն ու ինձը: Լուսիկն իմանում է իր սիրածի վտանգաւոր զրութեան մասին և օգնութեան է հասնում: Կոռուի ժամանակ ինքը Սետեն իր ձեռքով սպանում է իր ախոյեան Քէլին: Այդպէս ահա կատարում է ճակատագրի վճիռը և կուսիկը պատկանում է Սետեի հետ:

Ահա կարծ բովանդակութիւնը այս, երեխ, ազաւաղած դիւցազներգութեան, որ «փափր ինչ կոլուած» և գրական լեզուի վերածած զրի է անցկացրել ալ. Հայկանին: Նա «երկար երգերը» (Եր. 48) տեղ-տեղ դուրս է ձգել: Մենք կարծում ենք, որ աւելի մեծ ծառայութիւն արած կը լինէր ալ. Հայկանին թէ մեր զրականութեան և թէ աղջազրութեան, ևթէ «Ծինա Բաբրի» պատմածը նոյնութեամբ զրի առնէր և միայն ծանօթութիւնների միջոցով զիւրացնէր այդ ժողովրդական վէպի ընթերցանութիւնը: Գուցէ հէնց «փափր ինչ կոկնլու» չնորհիւ է, որ պատմուածքի կազմը տեղ-տեղ ընդհատում է: Սակայն լոյս տեսած ձևով էլ ժողովրդական այս վէպը արժանի է մեծ ուշադրութեան. մեր բանաստեղծները կարող են համնօմատել իրանց դժգոյն մուսան մեր ժողովրդի ասողը ստեղծագործութեան հետ:

Լ. Ա.

**4) ԱՐՍՄ ԶՈՐԸԴ. Բանասեղծութիւններ. Վենետիկ. 1900 թ.
զինը 1 ո.:**

Աստուածային կրակ ունեցող անդրագէտ մարդն էլ կարող է իր հոգու յուզմունքները բանաստեղծօրէն արտայայտեն: Դըրան ապացոյց մեր աշբաներից շատերը, որոնք պժբախտաբար թուրքերէն են երգել:

Ժաղավրդական շատ գեղեցիկ երգեր հէնց այդպիսի անհատների ստեղծագործութիւններ են: Այդպիսի հեղինակները մոռացւում են, բայց նրանց հոգին իրանց յօրինած երգերում զեռ ասլրում է, որովհետև ժողովուրդը նրանց մէջ արձագանք է գտնում իր վշտին և ուրախութեան, իր ձգտումներին ու յոյսերին: Բանաստեղծը կարող է մինչև անդամ միայն երգել իր անհատական զգացմոնքները, իր հոգու արամագրութիւնները:

Բայց երբ այդ սմնատական յոյզերն բանսատեղծօրէն են ձեւակերպուած—նրանք դառնում են ընդհանուրի սեփականութիւն, որովհետև ամեն մարդ ունենում է նոյն տեսակ զգացումներ և արամազրութիւններ։ Մենք ունենք այժմ շատ երգեր, որոնք մտել են գրականութիւնից կեսմնքի մէջ և ամեն տեղ երգուելով որոշ արամազրութիւն են առաջացնում լսողների մէջ, իմարակում են նրանց բանաստեղծի արտայայտած զգացմունքներով։ Այդպէս ահա բաւ քնարերգութիւնը պէտք է հազորդի իր արամազրութիւնը ընթերցողին, այդ նրա աջողութեան ամենալաւ չափն է։ Բայց կարգալով պ. Արամ Զարծդի աւելի քան 230 սուանաւորները, գժուարանում ենք ցոյց տալ բոլորովին աջողուածները։ Իւրաքանչիւրը ունի մի որ և է որակասութիւն։ մէկի լեզուն է սոսկալի աններաժշտական, օրինակ։

Յանձնենք մեղ անվախ մերիկներին,
Ու չը սարսափինք արիւն-արյունից-
Այնանզ վլթթում է մի վայելք վերին,
Որով Աստուած իսկ մեզի նախանձեց։

Կամ՝ հեղինակի յանկութիւններն ու միտքն են վայրենի ու տարօրինակ, պ. Զարըզը, օրինակ, ուղում է անպատճառ մարդկութիւնը փրկել «ուռանի վրայ խաչուելով» և յետոյ լուսնի վրացից երկրի վրայ իբրև դիմակ զլորուելով (եր. 19)։ Կամ՝ «բանսատեղծը» դէպի «սիրուն աղջիկներն» արտայայտում է այնպիսի սէր, որ հետու է վայելաւչ լինելուց, օրինակ։

Սիրուն աղջիկ, հասիր, հասիր,
Տնուր սըրտիդ կաթն ինձ ծըծել...
Արի սեղմենք սրակերը մեր
Իրար ամսուր ու իրկար...
Սիրուն աղջիկ, չուտանվ արի,
Անօգուտ են չոր, վատարան...
Արի կրծքիս վրայ նըստիր,
Որի տակ ծով սիրարս ուռչի և այն։

Կամ, վերջապէս, պ. Զարըզը ենթարկուելով դեկադենաների աղջեցութեան, այսպիսի անհեթեթ համեմատութիւններ է անում. «հոգին խիստ կապտում է», «երազները թիավարում են», «խաւարը լուռ խոկում է» եւ այն։

Եթէ ճոխ լեզու և զրականութիւն ունեցող եւրոպական աղղերը, կատացած փարթամութիւնից, իրանց հիւանդաս նոր զգացմունքներին ունոր յոյզերին համապատասխան ոճեր են որոնում, եթէ եւրոպական դեկատենաները կարծում են, որ «դեղին ցանկութիւն» կամ «ճնարի սիրտակ ձայն» բառերի մէջ մի ինչ որ միստիքական նրբութիւն կայ թագնուած, եթէ եւրո-

պացի հսկայ բանաստեղծների կողքին դուրս են գալիս ճիւազային լեզուով երգող գաճաճ դեկադենտներ, այդ դեռ չէ նշանակում, որ մենք էլ պէտք է խեղկատակների բօժօժներով զարդարուած տարօրինակ զգեստներ հաղցնենք բանաստեղծութիւններով աղքատ մեր լեզուին. այդ դեռ չէ նշանակում, որ մենք էլ, դեռ չը կարողանալով չնորբով արտայայտել մեր ամենապարզ զգացմունքները, չը կարողանալով բանաստեղծօրէն նկարազրել բնութիւնը, պէտք է սաւառնենք դեկադենտների զառանցական աշխարհներում: Սմէնն քայլափոխում արուեստականութիւններ մտցնելով, ինչպէս, օրինակ, «Վերջալոյսի», «Կէս գիշերի», «Համնայլ» և դրանց նման գրուածքների մէջ, պ. Զարզը տաժանելի է դարձնում իր ոտանաւորների ընթերցանութիւնը: Այդ կտորները կարդարով, մարդ էլի փառք է տալիս նրա «Հայրենի վնջիկին», կամ «Շող ու ցօղին», որովհետեւ դրանցից մէկում նկարագրուած են զաղթական հայերի տառապանքները, թշուառ մայրերի արտասուքը, որբերի տանջանքները, իսկ միւսում՝ գարնան գեղեցիւթիւնները: Թէև դրանցից ոչ մէկը այնպէս չէ գրած, որ խոր տապաւորութիւն թողնի, արամադրութիւն առաջացնի և ժողովրդականութիւնից ստանայ երաժշտականութիւնից և պլաստիկականութիւնից զուրկ լինելու պատճառով, բայց գոնէ չեն նկատում «երիկնքից վեր» և «անհունութիւնից անդին» թունելու ջանքեր...

Սակայն... ճաշակի բան է. գուցէ մի ուրիշը գտնէ խոր զգացմունք այսպիսի «բանաստեղծութիւնն» մէջ.

Ես դալկութիւն սիրեցի.

Ալ վարդի տեղ ես նրան

Ճակտիս պլսակ ընտրեցի.

Ես դալկութիւն սիրեցի.

Խոր տանջանքի այդ շողով

Սիրաս ու հոգիս լիցուցի.

Ես դալկութիւն սիրեցի:

Դալկութիւն (դեկտութիւն) սիրելը ճիւանդուտ ճաշակի արգիւնք է...

I. U.

5) Г. М. ТУМАНОВЪ. Характеристики и воспоминания. Тифлисъ, 1901..
Цѣна 50 коп.

Դամբանական և յօրելեանսական ճառերում ընդունուած չէ խօսել գործիչի բացասական կողմերի մասին, ուստի հասկանալի է որ այս գրքոյինում, որի մէջ ամիսովուած են կովկասի զա-

նաղան գործիչների մահուան կամ յօբելւանի առիթով՝ Գ. Թու-
մանովի գրած լրագրական թուցիկ բնորոշումները, գուրս են
բերուած կինսալրուողների զլխաւորապէս դրական կողմները:

«Ես կարծում եմ, տառմ է հեղինակը, որ այդ ուրուա-
գծերը կը լինեն որոշ հակակշխո պամֆլետների այն առատու-
թեան, որ գրում են մեղ մօտ ամեն մի փոքր ի շատէ աչքի
ընկնող հասարակական գործիչի մասին։ Այդպիսի գործիչներ
մենք քիչ ունենք և նրանց գործունէութեան արդիւնքը մեծ չէ,
չորսիւ ոչ միշտ բարեյացող պայմանների, որոց մէջ վիճակուած
է նրանց գործել ես ցանկանում էի ընդգծել գործիչների ար-
ժանիքները և այդպիսով ժողովրդականացնել այն բոլոր բարին,
ինչ որ աջողուեց դրանց կատարել իրանց դժուար ճանապարհ
վրայ»։

Այդպիսով այս զբոյկի ընթերցանութիւնը վիրակենդա-
նացնում է ընթերցողի յիշողութեան մէջ մեր մօտ անցեալիւ
ծանօթ գէմքերը, որոնց մարդկային բնութեան յատուկ պակասու-
թիւնները արդէն մոռացուած են, մինչդեռ բարի գործերը մոռա-
ցել են։ Գ. Արծրունին, Գ. Զանշեանը, Գ. Տէր-Ստեփանովը, Պ.
Խղմայլովը միացած Ծերեթելիի, էրիստովի, կազբէկի, Բարաթա-
չիլիի և այլ վրացի գործիչների հետ, կարծես ասում լինէին.
«Անդինից իւրաքանչիւրը գործելով թէ իր ցեղակիցների և թէ
ընդհանուր հասարակական կեանքում, մեր ոյժերի չափ նպաս-
տում էինք մեր ընդհանուր հայրենիքի առաջադիմութեան»։

Այդ զբոյկը թերթելիս պէտք է ցաւենք, որ թուրք ինտե-
լիցիանցիան գեռ ևս մինչև այսօր չէ կարողացել իր միջից հանել
հասարակական շահերին նուիրուած ինտելիցիանտ ոյժեր։ Գրոյ-
կի մէջ մի քանի էջեր են նուիրուած նաև Լիրմոնտովին, մի
քանի տողեր Գրիգորովին, Պուչկինին և ոռւս այն զրողներին,
որոնք զբաղուել են Կովկասով։ Ութը տարուան ընթացքում
(1892—1900) «Խօ. Օօօզր.» թերթում ցիրուցսն լոյս տեսած
համառօտ կենսալրական այս ակնարկները այժմ մի զբոյկի
մէջ ամիտիելով հեղինակը, կարելի է ասել, մեր կովկասուան
աղքատիկ հասարակական բուրատուանի անթառամ ծաղիկների մի
փունջ է կապել և այդպիսով միջոց է առել ընթերցողին համե-
մատել իւրաքանչիւր գրական ծաղկի ինքնորոյն գեղեցկութիւնը»։

Լ. Ա.

**Ը) ՍՄՐԱԾ ՇԱՀԱԶԻՋԵԱՆ. „Յիւղուրիւներ Վարդանանց տօնի
առիքով“։ Սոսկուա, 1901, 66 երես, զինը 75 կոպէկ։**

Հինգերորդ գարը մեր ամբողջ պատմութեան մէջ միակ
փայլուան կէտն է, որի վրայ բնեուուած է եղել մի շարք սկրունդ-

Ների հիացմոնքը: Դա այն գարն էր, երբ մնաք դաւրս եկանք ասխական վայրենութեան խաւարից: Մենք ունեինք լեզու, բայց դիր ու զովութիւն չունեինք, մնաք, առևճն, կիսաս մարդիկ էինք: Մեսրոպը տառեր հնարեց մեզ համար, Սահակը զպրացներ բացեց: Մայրենի լեզուով զրականութիւն ստեղծուեց, որ և կենացանցացեց մեզ: Մենք ոչ միայն սովորում էինք, այլ և սկսեցինք զոհուել դաշտափարի համար: Կատարելապէս հասունացանք իրեն աղբ: Մեսրոպի այբուբենը և Աւարացրի արիւնահետութիւնը—ահա ուր սկսուեց և ուր ամրապնդուեց վերածնուոծ ազգայնութիւնը, հինգերորդ գարի այդ ամենապահնչելի ձնանը:

Նոր անցած դարի կէսից, երբ մնը մէջ ծնուեց աշխարհիկ և աշխարհաբար գրաւեամսութիւն, երբ մնը կրակսա երիտասարդութիւնը սկսեց հայութեան մէջ իդէաներ որոնել, հինգերորդ դարը լուսոսուու աստղի մէջ բարձրացաւ մնը խաւար ու ուղրալի անցեալի մէջ: Մենք սկսեցինք պաշտել այդ գարը. հրապարակախօսը, պատամրանը արծարծում էին հինգերորդ գարի անցածն ու գարձածը մի անսահման հիացմոնքով: Հաղիւ թէ այն ժամանակների բանասահեղներից մէկը վորձած չը լինի երգել Վարդանին և նրա գործը: Պ. Շահաղիզեանը, այշ բանաստեղծներից մէկը, նոյնպէս իր սգեստութեան ժամերից շատ է նույիել հինգերորդ գարին: Նրա «Անսի վշար» և այլ բանաստեղծութիւնների մէջ, որոնք հրատարակւեցան 1865 թւակն, հինգերորդ գարի հայ կինը, Եղիշեն, Վարդանը երդուած են իրեն ազգայն իդէաներ, իրեն մնծ նոփնիքներ, որոնց հետեւ լով պիտի զնայ հայր, նթէ նա չէ ուզում արտաքսուոծ լինել առաջադիմոց աղգերի ընտանիքից:

Երեսուն և հինգ տարի անցնելուց յևաոյ բանաստեղծը գալիս է իր «Յիշողութիւններով» նորից խօսելու հայոց պատմութեան ամենանշանաւոր շրջանի առիթով: Այժմ այլևս քը նարով չէ նա խօսում ընթերցադիլ հետ. «Յիշողութիւնները» արձակ-հրապարակախօսական մտած ողութիւններ են. և զրանց մէջ մնաք տեսնում ենք նոյն «Անսի վշար» հեղինակին, նոյն 60-ական թուականների բանաստեղծին:

Նոր բան այս նոր հրատարակութեան մէջ ոլ. Շահաղիզեանը համարեա չէ ասում: Պատամական հետազոտութիւն չէ այդ զրուածքը. նա չէ ձգաւում լուսարանել ամբողջ հինգերորդ դարը, պատկերացնել նրա մտաւոր-զսովափարական շարժումը բարձր մանրամասնութիւններով: 59 երեսներից բազկացած մի տեսրակի մէջ հաղիւ թէ կարելի ել լինի մի այդպիսի ծրագիր գլուխ բերել. և բացի գրանից ոլ. Շահաղիզեանը հինգերորդ գար-

բի վերաբերմամբ մի սգեորտած բանաստեղծ է, ուստի և չէ կարող սառնասիրտ ուստիմնասիրովի դիրք բանն և քննել ու վերլուծել պատմական այն իշտաւակարանները, որոնք նկարագրում են մեր կեանքի այդ նշանաւոր շրջանը:

Ոչ: Հետազոտութեան, ուսումնասիրութեան տեսակէտից չը պէտք է նայել այս զործին: Իբրև երեսուն և հինգ տարի անփոփոխ մնացած լւսն՝ ար Շահազիզեանը վերցրել է կրօնական մեծ պատերազմի մի քանի բնորոշ հանդամանքները, արծարծել և լուսարաններ է նրանց մեր ժամանակակից կեանքի տեսակէտից: Խօսելով հինգերորդ դարի մասին, նա յաճախ թողնում է այն հին ժամանակակից և գիմում է մեր օրերին, չօշափում է գպրոցական, զրական խնդիրներ, կանգ է առնում մայրէնի լողուի ահազին նշանակութեան վրայ և խրատներ է տառվո, յորդորում է, ընդգծում է ժամանակակից հայի արատները, մղորտթիւնները: Դուռ 60-ական թուականների սկզբում, լեռնը, ճանապարհուելով հայրենիք, տեսնում էր գպրոցական յետադիմութիւն, գծուծ և անզգայ մնձատուններ, տեմնում էր հայ կողը՝ մոռացած իր մայրենի լեզուն, իր երեխանների գաստիարակութիւնը յանձնած խորթ, անհարազատ ձեռքների: Այսօր էլ, երբ բանաստեղծը իջնում է մեր իրականութեան աստրաբէզը, նոյն պակասութիւնները, նոյն յաւերն ևն դուրս գալիս նրա առաջ: Դա ցոյց է տալիս, թէ որքան անզգայ ենք մենք, որքան անբարեխիղն մեր պարտաւորութիւնների վերաբերմամբ: Երեսուն և հինգ տարուց ընթացքում մննք այնքան քիչ ուղղուեցինք, որ այսօր էլ պիտի ուտենք նոյն յանդիմանութիւնները, որոնք կարգացում էին 60-ական թուականներին: Ո՞րքան շատ են մնացած «մոռացուած խօսքեր»...

Ոչ ոք չէ կարող առել թէ իրկնել այդ «մոռացուած խօսքերը» հարկաւոր չէ: Ըստհակառակն, մեղ պէս մոռացելու, անպարտածանաչ աղջին անհրաժեշտ է անդադար յիշեցնել այն, ինչ որ չը պէտք է երբեք մոռացուի: Եւ ար Շահազիզեանը յիշեցնում է: Նրա «Յիշուղութիւնները» չը պէտք է հասկանու այն մտքով, թէ նա պատմում է իր գլխով անցած-դնացածը. ոչ, պահանջիղեանը միայն յիշեցնում է: Հինգերորդ դարի հանդամանքների մէջ նա խօսեցնում է մեր օրերը, ներկան: Կարգացեք, ընթերցող. այդ սակաւաթիւ էջերի մէջ գուք կը զանեք խելացի մաքեր, անուրանալի ծշմարտութիւններ, թիղ հայ մայրը ամենայն ուշագրութեամբ սովորէ այն կտորները, որոնք իւրան են վերաբերում: Հայ ուսուցիչը, հայ հոգեորականը, հայ անհարեխիղն մնձատունը կը զանեն այդտեղ ցուցմունքներ, թէ

ինչպէս պէտք է լինել՝ հինգերորդ դարի զաղափարական հայրածանի ժառանգությունը լինելու համար...

Դիրքը զրուած է պ. Շահաղիզեանին յատուկ աշխոյժ լեզուով և կարդացւում է հետաքրքրութեամբ:

I.

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Գիւտ ա. Քահ. Աղանեանցի «1901 թ. Պատի օրացոյց», գինը 50 կոպ.:
- 2) Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիւնատնից՝ իրրե նոր տարուայ չնորհաւորութիւն Նորին Վեհափառութեամ կողմից՝ «1901 թ. օրացոյց», 2 օրինակ, փառակազմ:

«Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը իմադրում է հեղինակներին և թարգմանիչներին ուղարկել իրանց աշխատութիւնները, որոնց մասին կ'աշխատի մատենախօսական նկատողութիւններ տալ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԵՐ ԵՐԿՐԻ ՔՆԱԾ ՈՅԺԵՐԸ

Անկարելի է երևակայել աւելի մեծ դժբախտութիւն մի երկրի համար, քան այն, երբ ժողովուրդն աղքատ է։ Մեր երկրը այդ դժբախտութեան մէջն է։

Խպը երկրը մեծ հարստութիւններ ունի թաղուած իր կրծքում. նա ընդարձակ զարգացման համար մեծ ընդունակութիւններ ունի։ Բայց նրա մէջ ապրող ազգաբնակութիւնը ներկայում շատ քիչ է օգտուում այդ հարստութիւններից և յաճախ, շատ յաճախ, նա օրեկան հացի կարօտ է լինում։

Ցաւալի դրութիւն։ Ունենալ հարաւի բնութիւն, որ կառող է բուացնել թանկագին արդիւնքներ, ունենալ ալզեան հրաշագեղ արօտներ, որոնք կարող են նպաստել ստեղծելու մեր երկրում շվեյցարական տնտեսութիւն, ունենալ առաստ և բազմատեսակ համարեր, ունենալ արդիւնագործական ձեռնարկութիւնների համար նպաստաւոր պայմաններ և այդ բոլորը ունենալով հանդերձ, վարել թշուառ ու զրկանքներով լի կեամք—այդ, արդարե, մեծ դժբախտութիւն է։

Իսկ երբ մի երկրի ժողովուրդն աղքատ է, այնուեղ շատ դժուար է երազել մտաւոր և հասարակական ընդարձակ առաջադիմութիւն։ Աղքատ ժողովուրդն անկարող կը լինի լուրջ և մեծ ծափքեր անել կրթական և համբային հաստատութիւններ հիմնելու և պահպանելու համար։ Նա ժամանակ չի ունենալ հոգեկան աւելի բարձր պահանջների մասին մտածելու և նիւթական միջոցներ չի ունենալ նրան բաւարարութիւն տալու մասին հոգալու։ Այդպիսի մի ժողովրդի մէջ լուրջ և ընդարձակ կերպով չեն կարող զարգանալ ոչ գարուցներ, ոչ թանգարաններ, ոչ թագարան, ոչ մամուլ և ոչ առհասարակ գրականութիւն։

Դուք կարող եիք գուցէ ենթադրել, որ մեր երկիրը խիտ է բնակեցրած և որ նա արդէն այլիս անկարող է տւելի աղքաբնակութիւն տեղաւորել իր մէջ։ Ոչ, բոլորովին ոչ։ Անդը կովկասը ունի ընդամենը հինգ ու կես միլիոն հոգի բնակիչ։ մի թիւ, որ կազմում է միայն երրորդ և չորրորդ մասը այն աղքա-

բնակութեան, որ կարող էր ապահով ապրել մեր երկրում: Ի հարկէ միայն մի պայմանով, այն է, որ երկիրը վարդայնէր իր մէջ արդինագործութեան բայր ճիւղերը և շահագործէր երկրի բնած ոյժերը:

Զարդարէք զիւղաստեառութիւնը, որ ժողովրդական մասսայի զվարաւոր զրազմունքն է, շահագործեցէր հանքայն հարստութիւնը, իսովմակերպեցէր անտառային խելացի անտեսութիւն, զարդարանական և տնայնագործական արդինաբերութեանը, շարժման մէջ զձեցէք երկրի մէջ եղած արունաստագիտական հմտութիւնները և գործ տուէք աչխատանքի ընդունուկ միջիօնաւոր ձեռքերին, այն ժամանակ կը խօսեն երկրի քնած ոյժերը և հրապարակ կը հանեն անբաւ հարստութիւն, որ կարող է կերակրել աճող աղբաբնակութեանը և միջոցներ տալ ուժեղացնելու նրա կուլտուրական բարդաւաճումը:

Արդարին մեր երկրի անպիսի լընդարձակ տարածութիւններ, ինչպէս են Մուղանի, Միլի, Սարդարաբաթի և ուրիշ անազաններ, մինչև այժմ մնացել են առանց մշակութեան և շահագործութեան: Այնաւոզ կարող էին հազարաւոր ընտանիքներ ընակութիւն հաստատել և արդինաւէտ անտեսութիւն առաջ տանել: Եւ միայն մի պայման է հարկաւոր այդ ամայի անապանները կենաքի վերածելու, այն՝ է նրանց պէտք է ոռողել, ջուր վերցնելով գետերից և ջրամբարներից: Բայց մինչև այժմ նչ մասնաւոր նախաձեռնութիւնը և ոչ պետական գանձարանը ձեռնամուխ չեղան այդ կարեւոր ծրագիրների իրադորժութեան:

Մեր երկրում, ճշմարիտ է, արուած են աջող արդիւնագործական փորձեր, բայց նրանք գեռ չեն գարձել լուրջ արդիւնաբերական գործ: Մենք այդ փորձերի սկզբնական շրջանից այն կողմը չանցանք և չը կարողացնեք մեծ վաճառանոցի համար մասսաններով առլրանք սրատրաստել: Եթէ նայենք մեր գիւղանտեսական ամենահին արդիւնաբերութեան, կը տեսնենք որ առաջադիմութիւնը այդ առարկեզում շատ գանգաղ է քայլում: Մենք չը կարողացնեք մինչև այժմ մեծ քանակութեամբ այնպիսի, օրինակ, զինիներ սրատրաստել, որ նրանցով փոխարինենք արտասահմանից եկած բազմաթիւ թանկադիմն զինիները: Մենք անկարող եղանք այնպիսի նուրբ բամբակ բուացնել մեր երկրում, որ նա առաջնակարգ տեղերից մէկը բաներ Մսսկուայի, Լօձի, Վարչակայի վաճառամուցում: Մենք անընդունակ եղանք մեր երկրի բօժօժը ամբողջապէս մեր նորկրում մշակելու և նրանից նուրբ թել պատրաստելով ուղարկել այդ ձեսով Ռուսաստանի գործարանները, որոնք ներկայում բոլոր թելի ապրանքն ստանում են արտասահմանից: Մենք չաշխատեցնեք մեր բուրդը և չը կարողացնեք նրանից

կաղմնու մեծ քանակութեամբ միատեսակ ապրանք, որպէսզի սաեղծինք մշտական կանոնաւոր պահանջ դործարանների կողմից։ Մենք անհմուտ եղանք մեր բազմատեսակ մրգերի համար ապահով վաճառանոյներ բանալու Ռուսաստանի ներքին նահանգներում, որոնք մրգեր են ստանում ուրիշ շրջաններից և յաճախ արտասահմանից։ Այդպէս և շատ ուրիշ արդիւնքների վնասաբերմամբ։ Սյն, ինչ որ այժմ արդիւնաբերում ենք, հետեւալ զրութեան մէջ է։ Խաղաղի այգու տարածութիւնը Անդրբեմիլաւում հաւասար է։

Թիֆլիսի նահանգում 25,000 դեսետինի։

Քութայիսի	»	35,000
Երևանի	»	8,500
Գանձակի	»	23,000
Բագուի	»	12,000
Դաղստանի	»	2,600
Կարսի	»	56
Զաքաթալի շրջանի		1,200

Այդ այգիներից ստացում է մինչև 9¹/₂ միլիոն վնայրո զինի և մօտ 5 միլիոն փութ խաղող, որոնք մեծ մասամբ սպառում են Անդրկովկասի սահմաններում։ Միայն սպոզատու այգիների տարածութիւնը համարում է 65,000 դեսետինի։

Բամբակի ցանքսերի տարածութիւնը միայն Երևանեան նահանգում փոքր ի շատէ մեծ է։ Միւս տեղերում նա սկսեց ընդարձակուել միայն վերջին տարիներում։ Բամբակի ցանքսերը բռնում են՝

Տարածութիւն	Պուտ բամբակ	արժողութիւն
Երևանեան ն.	25,000 դեսետ.	460,000 փութ 3,000,000 ռ.
Գանձակի	10,000 »	170,000 » 1,275,000
Բագուի	3,000 »	50,000 » 375,000
Քութայիսի:	3,000 »	30,000 » 225,000
Թիֆլիսի	400 »	4,000 » 3,000
<hr/>		
Հնդամենը	41,400	714,000 4,878,000

Մեր երկրը կարող է բռնացնել այդ արդիւնքները աւելի մեծ քանակութեամբ ու աւելի լաւ յատկութեան և այզպիսով տալ մեր երկրի ազգաբնակութեան աւելի մեծ եկամուա, քան որ տալիս է։ Նոյնը կարելի է ասել և ծխախոտի, շերամի, մնդրի և ուրիշ մթերքների մասին։

Անդրկովկասի լենայցին բարձրադիր մասերում, որոնք գտնւում են 6,000—10,000 տոնաչափ ծովի մակնիրենոյթից բարձր, մեծ աջողութեամբ կարող է զարգանալ անասնապահութիւնը։

Այդտեղ ներկայումս սկսել է զարգանալ շվեյցարական պանրի պատրաստութիւնը, որ, սակայն, գրաւել է մի շատ անշան մասը այն տարածութեան, որտեղ ապագայում կարող է ծաղկել կաթնատնտեսութիւնը նոյնպէս, ինչպէս այդ տեղի ունի, օրինակ, Շվեյցարիայում և Ֆիրօլում: Մեր ապկան արօտները տալիս են նոյնպիսի մննդարար և առողջ բուսականութիւն, ինչպէս շվեյցարական ալպերը: Կաթը մաքուր է և ունի անուշ համ, նրանց պատրաստած պանիրը նոյնպէս համեղ է, ինչպէս բուն շվեյցարականը: Կովիասեան պանիրները լաւ ընդունելութիւն են գտնում Մուկուայի և Պետերբուրգի վաճառանոցներում: Սակայն Անդրկովկասը ներկայումս պատրաստում է շատ քիչ շվեյցարական պանիր, ընդամենը 20,000 փութ: Մինչդեռ մեր երկրի ալպերը շատ ընդարձակ են և պանրի այդ քանակութիւնը կարելի էր սուելայնել ժամանակով նոյնիսկ տասն անդամ: Արդարեւ Անդրկովկասում կայ մինչև 6 միլիօն գեսեատին հող, որտեղ անասնապահութիւնը կարող է զարգանալ: Եթէ այդ վեց միլիոնից միայն հաշուենք մէկ միլիոն այնպիսի հող, որտեղ կարելի է պատրաստել շվեյցարական պանիր, մենք կը աեսնենք, որ իսկապէս կարող ենք կաթնատնտեսութեան այդ ճիւղը զարգացնել ընդարձակ կերպով և արդիւնաբերել մի քանի հարիւր հազար փութ շվեյցարական պանիր: Այդպէս և միւս ճիւղերում:

Անցնենք մեր հանքային հարստութեան: Մեր երկիրը միայն վերջին ժամանակներն սկսեց ցոյց տալ հանքային հարըստութեան իր ոյժը: Այդ հարստութեան ամենաշանաւոր առարկան՝ նաւթը, օրինակ, մի երեսուն տարի առաջ, արդիւնաբերում էր շատ աննշան քանակութեամբ, և այդ նաւթը սպառում էր երկրի մէջ, ծառայելով իրեւ կոսիս վառելիք և իբրև կուլպանաւթ: Խոկ երբ սկսուեց նրա կանոնաւոր շահագործութիւնը, զինուած տեխնիկայի կատարելագործութիւններով, նաւթային արդիւնաբերութիւնը ստացաւ մի այնպիսի միծ և ընդարձակ զարգացում, որի մասին երազել անդամ անկարելի էր: Ապշերոննեան թերակղզու շրջանը այժմ արդիւնաբերում է կէս միլիարդ փութից աւելի, մօտ 600,000 փութ նաւթ և օրէցօր ընդարձակում է իր արտաքինութեանը: Նաւթը մի գեղեցիկ օրինակ է, թէ ինչպէս կարող է մի երկրի մէջ ստեղծուել ընդարձակ արդիւնաբերութիւն, երբ միջոցներ են գտնուած շահագործելու հողի մէջ թաքնուած միծ հարստութիւնը:

Լեռնային գեղարտամենտի հրատարակած կովկասի հանքերի մասին մի յատուկ աշխատութիւն ցոյց է տալիս, որ մինչև այժմ յայտնագործուած են 2,058 կէտ, ուր կան զանազան

տեսակ հանքեր, որոնց համեմատական թիւը կարելի է դասաւորել հետևեալ կերպով. գտնուած հանքեր.

Պղնձի	.	.	.	212	կէտերում
Նաւթի	.	.	.	210	»
Աղի	.	.	.	164	»
Արծաթ-արծիճի	.	.	.	145	»
Քարածուխի	.	.	.	134	»
Երկաթի	.	.	.	100	»
Մարդանյի	.	.	.	53	«
Ծծմբային կոլչեղանի	.	.	.	45	»
Ծծմբի	.	.	.	40	»
Տօրֆի	.	.	.	25	»
Գլառւքերեան աղի	.	.	.	21	«
Գրաֆիտի	.	.	.	18	»
Արսենիկի (դառիկ)	.	.	.	15	»
Ոսկու	.	.	.	13	»
Ցինկի	.	.	.	13	»
Օղօկերիտ (լեռնամում)	.	.	.	6	»
Կօբալտի	.	.	.	5	»
Մնդիկի	.	.	.	3	»
Մօլիբդէնի	.	.	.	3	»
Վիսմուտի	.	.	.	1	»
Նիկելի	.	.	.	1	»

Սա ցուցակի միայն մի մասն է: Աւելացրէք դրան զանագան տեսակ քարերի և հողերի հանքերը, որոնք կարող են մեծ նշանակութիւն ունենալ իբրև շինութեան համար նիւթեր: Այդ հանքային հարստութիւնների շարքում ներկայումն, անկասկած, ամենամեծ նշանակութիւնը ունի իր քանակութեամբ նաւթը, ուրը դարձել է համաշխարհային առևտրի առարկայ է և զգալի կերպով ազգում է վաճառանոցի գների վրայ: Միւս հանքերից շահագործւում են նշանաւոր քանակութեամբ՝ մարդանէց, քարածուխ, աղ և պղնձ: Իսկ շատերի շահագործութիւնը գեռ նոր է սկսւում: Բայց նրանց շահագործութեան խնդիրը արդէն դարձել է հերթական:

Անորրկովլասի զանազան անկիւններում դուք հանդիպում եք ներկայումս մարդկանց, որոնք սար ու ձոր են ընկել հանքեր որոնելու: Եւ հետևանքը յաճախ գոհացուցիչ է: Ամեն օր նոր և նոր հանքատեղեր են գտնուում: Մեր հանքային հարստութիւնը, որքան պարզուել է մինչև այժմ արած ուսումնասիրութիւններից, աչքի է ընկնում իր բազմատեսակութեամբ: Մնում է գտնել այնպիսի հանքատեղեր, որոնք նշանաւոր վնէին հանքի

որակութեամբ, երակների առատութեամբ։ Բովագործութիւն և շահաղործութիւն սկսելու համար անհրաժեշտ է, որ հանգի քանակութիւնը մեծ լինի և գործի ձեւնեարկողները կարողանան պաշար ունենալ մի քանի տասնեւակ տարիների համար։

Վերջին տարիները մեր հանգային հարստութեան վրայ սկսեցին լուրջ ուշադրութիւն գարձնել արտասահմանեան ընկերակցաթիւնները և լուրջ տեղեկութիւններ են ժողովում այդ հանգերի յատկութեան և նրանց շահաղործելու պայմանների մասին։ Արտասահմաննեան ընկերակցաթիւնները կարող են մեծ դին տալ մեր հանգերից մի քանի խմին, նախատակ ունենալով իրանց ձեռքը զղել արդիւնագործութեան ամբողջ ճիւղեր և հաստատել մենավաճառութիւն համաշխարհային շուկայում։ Օրինակ, պը-դնձի ընկերութիւնների մի նշանաւոր մասը ներկայումն կազմում է մի խոշոր միութիւն, որ յայանի է պղնձի սինդիկատ անունով և ձգուում է իր ձեռքը զցել երկրագնդի բոլոր մասերի պղնձի արդիւնագործութիւնը և առետարը։ Մի այդպիսի սինդիկատի համար, որ հարիւրաւոր միլիօնների դրամագուխ է կինդրոնացրել իր ձեռքում, բաւական հեշտ է զնել աշխարհի այս եւ այն ծայրում գանուող այն հանգերը, որոնք կարող են նշանաւոր լինել իրանց արդիւնակներով։ Եթէ մեր մէջ բաւականաշափ զօրաւոր լինէր կազմակերպող ողին և սպառաստ լինէին տեխնիքամիան ոյժեր, մնաք կարող էինք ինքներս լուրջ ձեռնարկութիւններ սկսել և գարգայնել աեղական արդիւնագործութիւնը, աղատելով նրան մենավաճառութեան հաճոցներից և բօրսայի խաղերից։

Մենք մանրամասն կանգ չենք առնում մեր երկրի մի քանի ուրիշ խոշոր հարստութիւնների վրայ, ինչպէս են, օրինակ, անտառայինն, ձեմուրսական նշանաւոր հարստութիւնները։ Մեր անտառներն ընդունակ են մատակարարելու թանկագին ահատկի փայտեղին՝ նուրբ շինուածքների համար, մինչդեռ այժմ մնաք յածախ ինքներս ենք վայտելին նիւթի մի մասը ներմուծում մեր երկիրը արտասահմանից։ Մեր ձեմուրսական արհեստը գտնուում է դեռ նահապետական վիճակի մէջ և ոչ մի իւելացի միջոց գեռ չէ գործադրուած ձեմային հարստութիւնը մնաւցնելու նպատակով։

Այժմ մի քանի խօսք մեր երկրի անայնագործութեան և գործարանական կեանքի մասին։ Տնայնագործութիւնը մեր երկրի աղդաբնակաթեան հին, մանք արհեստն է, որով նա ժառանգաբար ստացել է անցեալից։ Այդ արհեստների թիւը կարելի է հաշտել մօտ յիսուն։ Նրանց մէջ կան այնպիսիները, որոնք զարգանալ չեն կարող և մատնուած են սմբկեացման։

Բայց կան և այնպիսիները, որոնք կարող են դարձնալ և երկար ժամանակ զիմանալ մըցումիշ Վերջապէս կան մանր արհեստներ, մեր երկրին անծանօթ, որոնց կարելի է մտցնել մեր երկրի մէջ և այդպիսավ տալ ազգաբնակութեան ձեռքը աշխատանքի նոր միջոցներ:

Ի՞նչ վերաբերում է գործարանական կեանքին, նա նոր է սկսում միայն զարգանալ: Գործարանական բանուորների թիւը մեր երկրում գետ չէ հասնում նոյնիսկ 25,000 անձի և հազիւ կազմում է ըսդհանուր ազգաբնակութեան 1,0%-ը: Եղած գործարաններում միջին թուավ աշխատաւմ են 18—20 բանուոր և արդիւնաբերում են մօտ 50,000 ոռորդու արդիւնք:

Բայց մեր երկիրը նպաստաւոր պայմաններ ունի արդիւնագործութեան լայն զարգացման համար: Մենք ունենք առաստվառնելիք և կարող ենք արդիւնաբերել առաստ հում նիւթեր: Նաւթը կարողութիւն է տալիս մեր երկրին ունենալ էժան և մեծ քանակութեամբ վառելիք, որ արդիւնապործական կեանքի ամենախոշըր և էական պահանջներից մէկն է: Ժամանակալ կ'աւելանայ և ելեքտրական ոյժի գործակցութիւնը, որ մեր երկրում կարող է մեծ զարգացում ունենալ: Ելեկտրական ոյժ զարգացնելու համար շատ նպաստաւոր են մեր լեռնային գետակները: Դժանց հոսանքից կարելի է օգտուել թէ գործարաններ կառուցանելու մեր երկրի լեռնային մասերում և թէ ելեկտրական ոյժ առաջ բերելու կենսական շատ պահանջների համար:

Ռւեբեմն կայ վառելիք, կայ ոյժ, արտադրելու կարողութիւն, կան նաև բազմաթիւ զիւղանանաւեական, հանգային և ուրիշ հում նիւթեր մշակութեան համար: Մնում է օգտուել այդ եղանակից և միջոցներ որոնել երկրի քնած ոյժերն արթնացնելու և շարժման մէջ դնելու:

Եթէ պատերազմի համար հարկաւոր է կանոնաւոր և սիստեմնել կաստարուած զինաշարժ, նոյնը աւելի մեծ չափով և աւելի բարպարեալ կերպավ պէտք է կատարել՝ պատերազմելու ժողովը գական աղքատութեան դէմ և նրա ձեռքը տալու իր հարուստ հայրենիքի ժառանգութիւնը: Այս ժամանակ կը վերանայ այն անհեթեթ և ախտոր փաստը, որին մենք ներկայ ենք, այն է, որ մեծ և ճոխ հարստութիւնների երկրում, ուսկիններով շրջապատւած, ասպրում է մի աղքատ և ալէտ ժողովուրդ:

Ա. ՔԱԼԱՆԹԱՐ

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՐՐԸ ԵԽՐՈՊԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կեանքը հոսանք է, իսկ երաժշտութիւնը ունի իր կեանքը, ուրեմն իր անցեալը, ներկան և աղագան: Կեանքը ընթանում է դէպի նորը: Երաժշտութիւնը ևս յետ չէ մնում: Չնայած վերջի դարերում իր արած առաջադիմութեան ահապին քայլերին, այս րոպէին պահանջ է զգացուում մի նոր տարրի ներմուծման:

Ի՞նչ է դրա պատճառը: Միթէ զգացուում է, որ երաժըշտութիւնը բաւականութիւն չէ ասլիս ներկայ քաղաքակրթութեան, թէ նրա նիւթերը այնքան սպառուել են, որ ոչինչ նոր չէ արտահանուում այլիս, թէ այն է պատճառը որ ձգաւում կայ օտար տարր ուսումնասիրելու, կատարելագործելու և զբանով դարզացնելու մարդկութեան այն մասը, որ մինչև այսօր դրի է մնացել այս գեղարուեսաթ ճաշակից: Շատ հեղինակներից լուռում է, որ դժուարանում են այլիս նոր երկեր գրելու, ուրովինեւն ինչքան էլ աշխատեն, պիտի առաջացնեն միենայն թիուրետիկական ձևերի (փօրմաների) տակ միենայն դարձուածքները և եղանակների միենայն բարեփոխումները, որով նոյն՝ եւրոպական կատարելագործուած երաժշտութեան պատկերն են գարձեալ երեալու հետաքրքրուող աշխարհներ: Տրանջուում են և վիրատուողները, և սիրովները, որ նոր հեղինակութիւնների մէջ մի առանձին շօափելի նորութիւն չեն տեսնում, կարծես միշտ հների կրկնութիւնն է, որ կատարուում է: Հետեւպէս հարկաւոր է մի նոր տարր երաժշտութեան մէջ:

Բայց զրանից, հեղինակի համար շատ հետաքրքիր է և նա չափազանց ոգնորւում է մի տարօրինակ, գեռ չը լսուած եղանակ ուսումնասիրելով: Այդպահի տարօրինակ եղանակ, երաժշտութեան հակատիտ, այս րոպէիս ներկայացնում են ասիական բոլոր աղգերի երգերը: Դրանով մուզիկան բաժանուում է երկու զվարարու տարրերի—եւրոպականի, որ մշակուած է, և ասիականի, որ գեռ մնում է իբրև հում նիւթ: Երաժշտութիւնը, ինչպէս և զիտութիւնն ու արուեստը, ծագնելով Ասիայում, անցնում և դարդանում է նախ Յունաստանում, յետոյ Իտալիայում և Սպա-

նիսյում և ապա տարածւում Եւրոպայի միւս մասերում: Բայց նախ քան դարձեալ արենլը հաստատ մուտք գործելը, նա պէտք է դեռ շարունակի նրանից ստացած մուզիկան կատարելագործել և նրա այժմնան եղանակները մշակել և ափա՝ արդէն Եւրոպա-կան ձեերին ընտելացած ասիացուն՝ առաջարկել նրա հարազատ երաժշտութիւնը մշակուած ձեւի:

Ուրեմն Եւրոպական երաժշտութեան մէջ ասիական տարրը հետզհետէ մտնում է հետեւեալ պատճառներից զրովուած.

ա. Հեղինակներին հետաքրքրում է ասիական երգը, իբրև արենեան նոր եղանակներ.

բ. Երաժշտական զեղարուեստը հարստացնելու համար հարկաւոր են արենելեան եղանակները, իբրև հում նիւթեր.

գ. Ասիացուն հարկաւոր է զարդացնել՝ մշակնելով նրա երգերը և իրան տալով, և

դ. Ճանապարհների լաւ հազորդակցութիւնը արենլը մէջ մտյնելով Եւրոպական քաղաքակրթութիւնը, դիւրացնում է նաև արենելեան երաժշտութեան մուտքը Եւրոպա:

Հետաքրքիր է որ Սրենեան երաժշտական տարրը մայնելու փորձերը եղել են դեռ սրանից 140—150 տարի առաջ, և շարունակում են մինչեւ այսօր:

Մօգարտը՝ գերմանացի հանճարասոր սակեղադադրծ հեղինակը, որին վիեննացիք «Երաժշտութեան թագաւոր» անունը տուին, 1760-ական թուականներին իր «Clavierstücke» երկերի մէջ զրել է «à la Turca» պիեսը, որ մեծ համբաւ է ստացել այն ժամանակ, չը նայելով որ այնքան էլ զուտ ասիական լինաւորութիւն չունի: Նրանից յետոյ ասիական եղանակներ գրել և մշակել են հետևեալ հեղինակներ.

Օպերային գրուածքներում.

Վերդի՝ իտալացի տաղանդաւոր հեղինակը գրել է 26 հատ օպերա և այժմս էլ է գրում: Յոդնելով իր Եւրոպական մուզիկայից՝ 1860-ական թուականներին ճանապարհորդում է Հընդկաստան, Եգիպտոս, Արարիա և այլ աեզներ և վկրագանալով, այդ ժարմ տապաւորութեան տակ զրում է իր՝ արտաքոյ կարգի վկեմ «Արդա» օպերան, մտյնելով նրա մէջ արենելեան եղանակներ: Նշանաւոր է երրորդ գործողութեան մէջ կատարելագործուած դուրնայի (օհօշ) կատարած սօլո գերը:

Հալեվի՝ հրէայ զգայուն և քնքայց հեղինակը իր «Հրէւեհի» օպերայում շատ յարմար կերպով յօրինել և ներդաշնակել է մի գեղեցիկ արենելեան եղանակ Ելլադարի «Դու իմ Ռաքէլ» արիայից առաջ նոյն օրու (զուրնա) գործիքի համար:

Իուքինչելեյն՝ ոռուաց վիթխարի երաժիշտ, հեղինակ, ման-

կտվարժ, պիանիստ-վիբրոսուօղի և Պետերբուրգի Ռուսաց կայսերական կոնսերվատորիայի հիմնադիրը, զրելէ անհամար պիեսներ, երգեր, երկեր և օվկերաներ: Ի միջի այլոց՝ «Թութակ», «Մակարայնյիք», «Ներն» և «Դէմն» օպերաները ունեն ասիական եղանակներ: Միայն թէ «Թութակում», որ զրելէ 17 տարեկան հասակում, բայց մի փոքր եղանակից, միւսները բոլորն էլ եւրոպական են, երկի նոր ուսման ազդեցութեան տակ:

Բօրօդին՝ ոռւս ասիասէր երաժիշտ հեղինակ-նօվատորը (նորութիւն մացնող) ունեցել է իր ձեռքի տակ չատ հարուստ օվկերային նիւթեր, բայց չի օկտուել նրանցից նրա համար, որ չէր կարելի այդ նիւթերով կազմած պիեսներում մտցնել ասիական տարր: Իրագործուել են նրա ցանկութիւնները, այն է՝ արեւելեան եղանակներ բնեմ դնել, իր դրած «Խօօր» օպերայով, որի երրորդ գործողութիւնը՝ իսանի ասպարանքը ամբողջովին ասիական նիստու կայ է, զարդարուած արեւելեան եղանակներով և ասիական պարերով:

Իպագոլիսով՝ Կվանով՝ ոռւս լուրջ հեղինակը իր «Աղբա» օպերայում չստ տեղերի տեսել է ասիական կօլօրիտ: Աչքի են ընկնում լիրիկ-տենօր-պրիմօյի Տօլօ ասիական երգերը, որոնցից զուտ արեւելեան է մի արիա, որ ճշտութեամբ «Վանեցոց խրախոյ» հայոց երգն է:

Բայց այս բոլոր հեղինակներն էլ ասիական երաժշտութիւն մացնելու գործում ծառայութիւն են մատուցել միմիայն իրանց ձգտութերով: Ինչ վերաբերում է եղանակների խևականութեան, նրանք արեւելեան ոգուն այնքան էլ մօտ չեն, որովհետեւ զրողները ասիացիներ չեն և չեն ասլել այն ժողովրդի մէջ, որի մասին գրել են:

Ուրիշ բան է «Լեովլեսլինի Հօր-Հօր Աղա» օպերայի հեղինակը:

Տիգրան Չուհանեան՝ պօլսեցի հայ անուանի երաժիշտ հեղինակը՝ Պարիզի կոնսերվատորիան աւարտելուց յետոյ 70-ական թուականներին Պօլսում սկսում է իր կործունէութիւնը մանկավարժութեամբ և հեղինակութեամբ: Նրա դրած չորս օպերաները և բազմաթիւ կամերային պիեսները հնչում են զուտ արեւելեան ողով: Նա՝ լինելով բնիկ ասիացի, իմանում էր մանկութիւնից միմիայն արեւելեան երգ. — հայոց եկեղեցական և աշխարհական երգեր, և չատ տաճկերէն տաղեր ու խաղեր օսմանեան եղանակներով: Նրա ստացած եւրոպական երաժշտական կրթութիւնը միջոց է եղել նրա համար իր ասիական եղանակները մշակելու և ներդաշնակելու: Նրա բոլոր զրուածքներով հիսնում են արեւելեան եղանակների ծարաւ. եւրոպական լուրջ

երաժշտները։ Մեծ հետաքրքրութեամբ նուագւում են նրա սիւլտները և սօնտաները Պարիզի սալօններում։ Իսկ օպերաները քանից ներկայացուել են ֆրանսիական բնիմի վրայ, որոնցից ամենահետաքրքրին է իր մելոդիաներով «Լեովեպիճի Հօր-Հօր Աղա» օպերան, որի «Զմեռն անցաւ» և «Ղանեցոց խրախոյս» երգերը տարածուել են և կովկասում։ Կամերային մուզիկայից նշանաւոր են. «La lyre orientale», «Illusion fantastique», «Le Zéphire», «Mouvement perpétuel», «Mignon», «Une gavotte», «La gaîté», «Cascade de Couz» և այլն իրանց զուտ արևելեան ճշութեամբ։ Սյուրուրը ունեն սօնտափ, նոկտիւրնի և կապրիչ ձև, և նուագւում են կօնցերաներում։

Կամերային զրուածքներում.

Լիս՝ գերմանայի ամենառչակաւոր պիանիստ-վիրտուոզ և իմպրովիզատոր հեղինակը հնչեցնում է իր «Մասուովիներում» ունգարական երգերի արևելեան ճիւղերը։

Պայլո Սարգասի՝ առաջին ջութակահարը իր զրած բօշայական երգերը զրեթէ բոլորն էլ զարդարել է մերթ սպանական և մերթ արեւելեան ոգով։

Գենարիս Առաջանան՝ հայ պիանիստ-վիրտուոզ իր «Բայաթիներով» հոչակ ստացաւ։ Սիրում են այդ «բայաթիները» ամեն տեղ, նրանք լի են կովկասեան և երևանի նահանգի եղանակներով, որոնք զուտ ասիական են։

Ն. Ս. Կիբովսկի՝ ուսւ թեօրեալի սիմֆոնիստ և արևելագէտը ունի մի շարք փորձեր և զրուած ասիական երկեր, որոնցից լոյս է աւելել «Կոտոնկ» հայոց երգը։

Կօրեչենիկօ՝ մալորոս նոր հեղինակը միշտ զրում է արևելական սիւլտներ և երգեր։ Ունի տպած շատ գեղեցիկ ներգաշնակուած հայոց «Կոտոնկ» երգը։

Նիկոլայոս Ֆիգրանեան հայ երաժիշտ վիրտուոզ և հեղինակը քիչ ժամանակուայ մէջ լոյս լինծայից մի շարք աշխատութիւններ մուծ ճշութեամբ ներդաշնակուած զուտ կովկասեան և հայոց երգեր, պարեր և եղանակներ։ Նշանաւոր են Պարսից բայաթիները՝ «Բայաթի-Քիւրդ», «Բայաթի-Շիրազ», «Շանազ» և այլն ասիական բնաւորութեամբ։

Անդրեաս Փալյանեան՝ խրիմյի հայ երաժիշտ օրդանիստը Սևաստոպոլի պատերազմի ժամանակ 1853—55 թուին ի պատիւ Նախիմովի ունի զրած «Մինօպսիկ մարշ» և սրա նման եւրոպական պիեսներ։ Բայց մշակել է և նրիմի եղանակներ (ասիական)։

Յովհաննես Նապանդեան՝ խրիմյի հայ յայտնի ջութակահար և ասիական եղանակների պիրահարը մշակել է մի քանի նրիմի եղանակներ շատ աջող կերպով։

Սպենդիարով՝ իրիմցի հայ թեօրետիկը շատ է սիրում գրել ասիական եղանակներ և ունի լոյս ընծայած մի քանի պիեսներ, ի միջի այլոց շատ զիւրեկան է նրա—«Խայթարման» (թաթարների պար), միայն ափառ որ հեղինակը ^{1/} տակտի փոխարէն գրել է ^{2/} տակտ, որ վնասում է եղանակին և պարին:

Կարգաթեսելի՝ վրացի երգիչ և հեղինակը ոռուսաց կոնսերվատորիայից տպած ունի մի քանի բօմանաներ, որոնք ուշադրութեան արժանի են իրանց կամ կովկասեան եղանակների հարազատութեամբ:

Կնինա՝ վիեննայի կոնսերվատորիայից պիանիստ և հեղինակը բաւական հայոց երգեր ունի զրած պիանոյի համար, որ մշակել է ուրիշի երգածից:

Թաշնեան՝ պօլսեցի հայ ձայնադրագէտ և մանկալարժը բոլոր իր գրածները հիմնել է միմիայն արենելեան եղանակների վրայ:

Եկեղեցական գրուածքներում.

Մ. Նկմալեան՝ հայ երաժիշտ թեօրետիկը գրել է հայոց եկեղեցու ամբողջ պատարագի արարողութիւնը իր պատշաճի երգերով ներդաշնակուած ևռաձայն և քառաձայն խմբերի համար: Այս գործում բոլոր ասիական եղանակները պահուած են իրանց հարազատութեամբ և հնչում են զիւրեկան ներդաշնակութեամբ:

Վեհեափկի Միիթարեսն ուխտը տպել է եկեղեցական երգեր և պատարագի արարողութիւնը: Արենեան ոզին եղանակներում ճիշտ պահուած է, բայց որովհեան ներդաշնակողը՝ Բիանինինի, իտալացի է, քառաձայնը այնքան էլ լաւ չէ:

Վերոյիշեալ հեղինակների նման գեռ շատերը զրում են այժմ արենեան մուգիկա և գեռ շատերն էլ զրելու են, որովհետեւ պահանջ կայ: Բայց դա գեռ չէ նշանակում, թէ ամեն մի թերուա երաժիշտ իրաւունք ունի վեր կենալ և երգեր հրատարակել, ինչպէս օրինակ՝ պ. Լ. Եղիազարեանը, կամ Դ. Ք. Յովաչչինը: Հարկաւոր է որ ասիացին գնայ Եւրոպա մուգիկա ուսանի, թեօրետիկ գառնայ և յետոյ, կթէ ձիրք ունի, գրի արենելիան եղանակներ եւրոպական երաժշտութեան ներդաշնակութեամբ: Այն ժամանակ միայն մնաք մի վոքք ծառայութիւն մատուցած կը լինենք գործին:

Խ. ԿԱՐԱ-ՄՈՒՐՃԱ

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արտաքին անցքերի ազդեցութիւնը երկրի ներքին կեանքի վրայ.—Ամառուայ բնթացքում հրասարակուած օրէնալրապան կարգադրութիւններ,—Մի քանի վերանորոգումների ցեսաձգումը, —Լուս, մինիսարի շրջալերականուն՝ նոր բարձրագույն զպրացներ, —Ըէալիսաներին՝ համալսարանում բներներու հալցը, —Զինուորական մինիստրի կարգադրութիւնը՝ նորագոչներին՝ զրագիտութիւն սովորեցնելու մասին, —Աքսորի վերացումը, —Գլասհարկի վերացումը Կոմիսարում, —Ծայրերի և կենուրոնի խնդիրը, —Հովանաւորեալ արդիւնազործներ, —Դուռընեան կոուի էթիկան, —Ազգու միջոց՝ ուսնձահարելու շահապէտներին, —Նաւթազործների ժողովներում ձայնասուութեան եղանակը, —Պետութեան տարրեր ցեղերը կատող զդացմունքներ, —Յօրեւեաններ և մահեր, —Հայոց հողենորականութեան վերաբերմունքը դեպի իր ժողովուրզը, —Նորազոյն նմուշներ կոնսիսոութական իրաւագութեան:

Մուսասատանը բունում է Եւրոպայի $\frac{2}{3}$ և Ասիայի $\frac{1}{3}$ մասը: Այդ լայնածաւալ պետութիւնը իր համարեա 135 միլիոն ազգաբնակութեամբ սահմանակից է բաղմաթիւ մնած և փոքր, լուսաւոր և խաւար պետութիւնների, որոնց հետ նա մշտապէս քազաքական և անտեսական յարաքերութիւնների մէջ է: Բնականաբար այդ հարեանների ներքին կեանքի վոփսիսութիւնները որոշ ազդեցութիւն պէտք է անեն Մուսասատանի պետական և թէ ժողովրդական կեանքի վրայ, որովհետեւ բոլորովին անջատել ու կզզիացնել իրարից ազգերն անհնարին է. այդ չը կարողացան անել նայնիսկ չինացիք, փակուելով իրանց հաշակաւոր պատերի յեսերը: Եւ այժմ այսօր նոյն Զինասատանի ներքին խոսվութիւնները նորից ու նորից գալիս են մեզ ապացացելու, որ մարդկացն կեանքը երկրագնդիս վրայ մի համատարած ովկիանոս է, որի մէջ անկարելի է սահմանափակել շարժումը որոշ վայրերում և արգելել, որ ծագած ալեկոծութիւնը չը արածուի շուրջը և չը հասնի նոյնիսկ ամենահեռաւոր եղերքներին:

Այսպէս օրինակ, Ծայրագոյն Արևեցքում Բուռնցամարտերի յարուցած խոսվութիւնը շարժման մէջ զցեց ոչ միայն Ասիան, այլ մանաւանդ Եւրոպան և եանկինների հայրենիքը: Այդ բոլոր երկիրներն սախալուած էին գուրս գալ իրանց նօրմալ վիճակից և զօրք տեղափոխել, պատերազմ մղել իրանց վաւնդած

շահերը պաշտպանելու նպատակով։ Նոյնը պէտք է ամէք և Ռուսաստանը։ Բնականաբար այդ արտակարգ և չը նախատեսուած հանգամանքների չնորհիւ երկրի ամբաղջ ազգաբնակութիւնը պէտք է պատրաստ լինէք ոչ միայն իր տնտեսական ոյժերը լարել՝ պետական արտակարգ ծախքերը ծածկելու համար, այլ և պէտք է պատրաստ լինէք իր զաւակներից շատերի արիւնը թափելու, կեանքը զահելու։

Զինական այդ բարգութիւնների հետևունք էին ամառուայ ամսում յայտարարած նաև այն կարգադրութիւնները, որոնցով աւելացում է եւբովական և չինական սահմանից մանող ապրանքների վրայ մաքսը, արտասահմաննեան անցաթղթերի գների վրայ անուում է որոշ յաւելում, և գինու, սովիրախ, գարեջրի ու ծխախոտի ակցիոնը բարձրացում է։

Նոյն չինական գործերի չնորհիւ պէտք է յետաձգուէին և զանազան ներքին կարեւոր վերանորոգութիւնների իրագործումը։ Այսպէս, օրինակ, թէ և սկզբունքով արդէն վճռուած էր քաղաքային ինքնալիքարութիւններին և զրա չնորհիւ քաղաքային դործերին մասնակից աննել տնտեսէրերի հետ նաև բնակարաննատէրերին, բայց յայտնի եղաւ, որ առայժմ յետաձգուում է և այդ որոշման իրագործումը։ Նոյնպէս յետաձգուում են անորոշ ժամանակավ նաև երգուեանների զաւարանի ներմուծումը։ Սիբիրիայում և մի քանի այլ վերանորոգութիւններ երեկի, մասամբ, այդ արտաքին հանգամանքների չնորհիւ անցեալ տարի մած ծաւալով չիրականացան լուսաւորութեան մինիստրութեան կողմից յարուցած այն հիմնական փոփոխութիւնները միջնակարգ գըպրոցների ծրագրների և կազմակերպութեան մէջ, որ սրտատրով սպասում էր ամբողջ մամուլը միացած ազգաբնակութեան հետ։ Օգոստոս ամսում բայց, մինիստրի յայտարարած շրջաբերականներից կարելի էր տեսնել, որ առայժմ մի քանի թեթև փոփոխութիւններով պէտք է սահմանադիմակուի վերանորոգութիւնը։ այդպէս՝ էին չեղանակից զրաւոր աշխատութիւններն ու քերականամուլութիւնը մի քիչ կրճատուում են և վարչական դործերում շեշտաւում է կօլլեգիալ սկզբունքի անշեղ դործադրութեան մասին։ մինչեւ այժմ այդ սկզբունքը մեռած տառ էին գարձել մանկավարժական և տնտեսական խորհուրդները և ամեն բան վճռում էր նախագահը (վերատեսուչը), իսկ միւս անգամները լոկ ձեւականութիւն էին կատարում, սոորազրելով ա բղէն նախապատրաստուած որոշումները դասամիջոցներին։

Սակայն նոր տառամսական տարուանից, այսուամենայնիւ, աւելանում են մի քանի նոր բարձրագոյն դպրոցներ, այսպէս ու

ամառու հիմք դրուեց Մոսկուայում կանանց գիւղատնտեսական կուլտուրին. նորից թոյլաւաբունց բանալ նոյն մայրաքաղաքում կանանց նախկին (Գևրիէի) բարձրագոյն կուրսերը, Օղեստայում բացում է համալսարանի նաև բժշկական բաժինը. Սիբիրի Տոմսկ քաղաքում հիմնուում է տեխնոլոգիական ինստիտուտ և Պետերբուրգում պէտք է բացուի մի պօլիտեխնիկում: Չը նայած այդ բայոր նոր բարձրագոյն դպրոցների բացման, ուսմնն պահանջը այնքան մեծ է, որ բայոր ցանկացողների համար տեղ չը կոյ: Թէ ինչ մեծ մրցում կայ տեղերի համար, այդ ցոյց կը տան մի երկու թուեր: Պետերբուրգում լուսային ինստիտուտի 70 ազատ տեղի համար 1244 ինսդիրք էր ներկայացրած, իսկ տեխնոլոգիական ինստիտում 250 ազատ տեղի համար 1053 ցանկացողներ կային: Անկատկած բարձրագոյն կրթութեան դմուրը աւելի մեծ դժուարութեամբ են բացում բէալիտների և կանանց առաջ, քան կլասսիկների: Ծէալիսաները, չը նայած որ աւելի մեծ պատրաստութիւն աւնեն համալսարանի բնագիտական, մաթեմատիկական և բժշկական բաժինների համար, քան կլասսիկները, բայց զրկուած են համալսարան մանելու իրաւունքից: Սակայն այդ հին կարգը, ինչպէս երեսում է, վերանալու մօտ է, որովհետեւ, լուրերին նայած, ոչ միայն զինուորական մինիստրն է մտադիր հարց յարուցանել, որ բէալիտներին թոյլաւաբուփ մտնել զինուորական-բժշկական ճեմարան, այլ լուսաւորութեան մինիստրան մէջ են քննուում է համալսարանի վերև յիշած բաժնիներին ընդունելու հարցը:

Խօսելով ժողովրդի լուսաւորաւթեան ինսդիրք մասին, չէ կարելի մատնանիշ չանել զինուորական մինիստրի այն կարգագրութեան վրայ, որով մեծ զարկ է տրում զրագիտութեան տարածման մասապէի մէջ. այսուհետեւ պարտադիր է զանուում կարգալ-զրելու ուսուցուածը անզրագէտ նորակոչներին, որոնց թիւը իւրաքանչիւր տարի մօտ 200 հազար է լինում:

Ժողովրդի կեանքի համար մեծ նշանակութիւն աւնեն ամսութայ ամիսներում հրատարակուած նաև օրէնսդրական այն կարգագրութիւնները, որոնցով փոխուում է աքսորը՝ Սիբիր և Անդրկոմիա: Քաղաքական յանդաւորների աքսորը մնում է, իսկ զատարանի և մեջան ու փիւղական հասարակութիւնների որոշմամբ կայացած աքսորները փոփոխութեան են ևնթարկուած:

Դատարանի որոշմամբ աքսորը փոխարինուում է բանտարկութեամբ կամ կալանաւորներին՝ ուղղիչ բաժիններին յանձնելով: Եյսուհետեւ օրէնքը զրկում է մեջան հասարակութիւնները իրաւունքից—հեռացնել իրանց միջից չը ցանկացած ան-

դամներին, իսկ գիւղական հասարակութիւնների նոյն իրաւունքը միայն սահմանափակում է:

Գիւղական հասարակութեան վրայ այժմ պարագ է զբնւում նախ՝ ճիշտ որոշել թէ ինչ հիման վրայ է հասարակութիւնից հեռացուող անդամը վտանգաւոր համարւում, երկրորդ՝ այդ որոշումը կայացրած համարել միայն ձայների $\frac{2}{3}$ -ով և երրորդ՝ աքսորման ծախսը զցել համայնքի վրայ: Անկասկած այդպիսով գիւղական համայնքը ստիպուած կը լինի աւելի ջրջահայեաց լինել և վրէժինդրութիւնից զրդուած կամ զօրեղ անհատների ճնշման տակ, չը գրկել իրաւունքներից իրանց՝ չատ անգամ անմեղ անդամներին:

Բացի յիշած օրէնսդրական կարգադրութիւններից, որոնք ունեն ամբողջ տէրութեան համար նշանակութիւն, տարուայ ընթացքում հրատարակուեցին և մի քանի որոշումներ, որոնք վերարերամ էին ձայներին՝ մինլազիային, կեհաստանին և Կովկասին: Սյս վերջինի նկատմամբ յիշնք այն կարգադրութիւնը, որով չնչահարկի փոխարէն մոտեւում է տուրքը հողերից, հասոյթաւորութեան համեմատ, և այդպիսով թեթեանում է չքաւոր դասի բեռը, որի մի մասը բարգւամ է խոչոր կալուածատէրերի վրայ: Բայց որպէսզի զիւրացնուի ազնուականների համար հարկատւաթեան նոր եղանակը, բարձրագոյն հրամայուած է աղատել թիֆլիսի և Քոթայիսի նահանդների տոհմային ազնուականութիւնը 1901—1903 տարիների ընթացքում պետական հողային հարկից:

Անցած տմառուայ ընթացքում որոշած է մայնել պետական հարկ բնակարաններից և կովկասում. մի կարգ, որ գոյութիւն ունի ներքին Ռուսաստանում 1894 թուից:

Պետութեան ծայրերի մասին խօսելիս ի դէպ է օգտուել առիթից մի քանի խօսք ասելու համար այն բանակուի մասին, որ երկար ժամանակ վարում էին ուսւ թերթերից մի քանիսը, շանկալով ապացուցել որ կենդրուական նահանգների ազգաբնակութիւնը ուժապատ է լինում, չնորհիւ ծայրերի, որոնց ազգաբնակութիւնը, իբրև թէ, աւելի քիչ հարկ է վճարում, քան կենդրոնի բուն սուս ժողովուրդը: Սակայն ուսւաց ամենալուրջ և տնաչառ թերթը՝ («ՀԱՅԵ. ԵՖԴ.») ապացուցեց որ, եթէ մի կողմ թողնենք այդ խնդրի ազգայնական—քաղաքական կողմը և բաւականահանք միայն հարցի մատեսական կողմի քննութեամբ, կը տեսնենք որ կենդրոնի ուժապատման պատճանները բոլորովին այլ են, քան ինչ որ առաջ են բերում ուսւ պահպանողականները:

Նախ կենդրոնի գիւղացիք չքաւոր են հէնց այն պատճառով,

որ ճորտութեան վերացման ժամանակ նրանք շատ մանր հողաբաժիններ ստայան. ուրեմն տիրում է զիւղացիների սովորականողութիւն. մի երեսոյթ, որ, կ'աւելացնենք մենք, տեղի ունի և կովկասում. իսկ երկրորդ ծայրերում հարկային բեռը աւելի թեթև չէ, քան կենդրոնում. իսկ եթէ ծայրի մի բնակչի վրայ, օրինակ կովկասում, աւելի քիչ է հարկ ընկնում, քան կենդրոնում, այդ բացատրում է նրանով, որ գոյքերի հասոյթները և արդիւնաբերութիւնը կենդրոնական նահանգներում աւելի բարձր են, քան ծայրերում, ուր թէ գոյքն է սակաւարժէք, թէ արդիւնագործութիւնն ու առևտուրն են թոյլ զարգացած։ Ուրեմն, աւելի մեծ գումար է գոյանում եկամուտներից կենդրոնում, քան ծայրերում։ Այդ գումարները բաժանելով աղջաբնակութեան տակածութեան թուի վրայ, ստացւում են միջին թուեր, որոնք միայն ցաց են տալիս արդիւնագործութեան և վաճառականութեան առաւել կամ պակաս ծաղկման աստիճանները։

Եթէ կենդրոնական նահանգներում մի բնակչի վրայ ուղղակի հարկ ընկնում է 1 ո. 84 կ., իսկ Կովկասում 71 կոտ., դա միայն ցոյց է տալիս որ գոյքերի զինն ու հասոյթաւորութիւնը, որոնք ենթակայ են հարկին, այդ շրջանում աւելի մեծ յարաբերութեան մէջ են բնակիչների թուի հետ, քան կովկասում։ Այդպէս, օրինակ, և կենաստանը, և Կովկասը ունեն աղջաբնակութեան համարեա նոյն թիւը. առաջինը 9,4 միլ. բնակիչ, իսկ երկրորդը՝ 9,7 միլիոն։ Մինչդեռ եկամուային հարկները կենաստանում կազմում են 13 միլ. 130 հազար ո., իսկ Կովկասում միայն 7 միլ. 287 հազար ո.։ Բիթամիսն էլ կը հասկանայ, որ այդ հանգամանքի չնորհիւ հարկի միջին թիւը աւելի բարձր կը դուրս գայ կենաստանում, քան Կովկասում։ Բայց զրանից բնաւ չէ հետևում որ հարկի ծանրութիւնը լինական նահանգներում աւելի է քան Կովկասում։ Այդ ցոյց է տալիս միայն այն, որ կենաստանում հարկին ենթակայ առարկաները աւելի արժէքաւոր են քան Կովկասում։ Մի օրինակ ևս բերենք։

Պետական կօնտրօլի վերջին հաշուեաւութեան համեմատ, 1898 թ. անշարժ կաքըերից հողային հարկերը և առևտորի, արդիւնագործական զանազան զբաղմունքների ու դրամաղլիի վրայ դրած տուրքերը Ռուսաստանի կենդրոնական նահանգներում տուլին 13,9 միլ. ոութլի, որ միջին թուով մի բնակչի վրայ ընկնում է 1 ո. 70 կոտ., մինչդեռ հիւսիսային երկու նահանգներում (Արխանգելսկի և Վոլոգդայի) նոյն տուրքերը տուլին ընդամենը 415,4 հազար ոութլի. կամ, այլ խօսքով, այդ նահանգների աղջաբնակչի մի չնչի վրայ ընկնում էր 25 կոպէկ։ Սակայն չը պէտք է զրանից եղբակացնել, թէ հարկը

աւելի մեծ էր կենդրոնական նահանգներում, քան հիւսիսում, այլ միայն պէտք է հասկանալ որ հարկատւութեան ենթակայ առարկաները աւելի արժէքաւոր են կենդրոնական նահանգներում, քան հիւսիսայիններում։

Որպէսզի թէ ծայրերը և թէ հիւսիսը կարողանան նոյնչափ ընդունակ դառնալ հարկատւութեան, պէտք է տշխատել, որ արդինագործական և առնտրական ոյժերն էլ այդ տեղերում նոյն քան դարդանան, որքան կենդրոնական նահանգներում։

Այժմ թէ կենդրոնի և թէ ծայրերի նահանգներում հարկերի զինաւոր ծանրութիւնը ընկնում է ոչ այն դասակարգերի վրայ, որոնք աւելի ընդունակ են տաճել այդ բեռը, այլ՝ աշխատող և չքաւոր մասսայից թեթևացնել դրանց զրութիւնը, առանց կրօնի և ցեղի խարութեան, ահա այդ կը լինի արդարութեան պահանջը։

Եւ, խելագէս, մինչի այժմ ոչ միայն հարկերի բեռն է տանում մասսան, այլ նա ամենից շատ է զոհաբերութիւններ անում «հայրենի արդինագործութեան» զարգացման համար։

Մաքսային հովանաւորութիւնը և վերջին տարիների ընթացքում շնորուած երկաթուղարքին գծերի ահազին ցանցը մեծ զարկ տուին ամբողջ Ծուսաստանի արդինագործութեան բոլոր ճևողերի արագ զարդացման։ Մաքսը օգնեց մեր արդիւնագործներին ոտի վրայ կանգնել, առանց ճնշուելու արտաքին մրցումից։ Եւ ահա մեր արդինագործները իրանց զգալոյ բոլորին ապահով արտաքին մրցումից, ոտի կանգնելուց յետոյ էլ չէին աշխատում ոչ աելինիւրական մեծ կատարելագործութիւնների, ոչ էլ արդինագների էժանացման մասին։ Ընդհակառակը. չափաղանց մեծ ախորժակներ էին ցոյց տալիս սպառող մնամաւնութեան գրանները հարուահարելու «քրիստոնէավայել» գործում։ Մարասող մասսան, ուղէ չուղչ, պէտք է իր կենցաղի անհրաժեշտ բոլոր իրերը զնի մեր արդինագործներից, որոնք միմնանց խօսք տալով՝ արդինագների վրայ չափաղանց բարձր զներ են պահպանում։ Այդ անօրմալ գրութեան չնորհիւ մի կտոր չմի համար սպառողը վճարում է կրիստուկի և մի փութ չափարի համար հինգ անգամ աւելի, քան նա կը տար, եթէ արտասահմանի ապրանքների վրայ մաքս գրուած չը լինէր։ Նոյնը աւելի է ունենում թէ նաւթ, թէ քարածուխ, թէ երկաթ, թէ թուղթ և թէ այլ ապահովներ զնելիս։

Իսկ երբ մեր արդինագործները ժողովում են, անպատճառ նախ և առաջ այդ մաքսերի անվերջ աւելացման կամ անստանն պահպանելու խնդիրն են լինում։ Ասենք արօրինակ էլ կը լինէր՝ վաճառականից կամ արդինագործից պահանջել, որ հետամուռ չը լինեն իրանց շահերին և «անաշառութեան», կամ՝ «ար-

դարութեամն» մասին խօսէին, կամ թէ ի նկատի անենային նաև սպառողների ու բանուորների պահանջները։ Միաժամանակ է ալտրուիզմը հաշտեցնել առևտուրի հետ... Գոյութեան կոռի ներկայ պայմանները մինչև չը փոխուեն, գայլը չի թողնիլ գառան համեղ միսը... Եւ ինչու մեղադրենք միայն արդիւնագործների և առևտուրականների դասակարգերը, քանի որ ինժեներների էր, փաստաբանն էլ բարոյականութեան մասին բոլորովին նոյն չափերը ունեն, «ինքդ կուլ տուր, եթէ չես ուզում որ քեզ կուլ տան», աճա ժամանակակից էթիկան և զոյտաթեան կոռի նշանաբանը...»

Խակ լոկ պօլիցիական—վարչական միջոցներով չի էլ կարելի ստիպել մեր արդիւնագործներին, որ բաւականանան համեստ շահերավի Օրինակ, Վարչավայում անցեալ ձմեռ 17 խոշոր շահադէամներ (սպեկուլեամնա) կազմել էին մի ընկերակցութիւն և սոսկալի կերպով բարձրացնում էին քաղաքում քարածուխի զները։ Նահանգապետը հրամայեց, որ ոչ ոք իրաւունք չունենայ որոշած գնից բարձր ծախել ածուխը, հակառակ դէսքում պատիժ էր սպառնում։ Եւ ինչ դուրս եկաւ, մեր ճարապիկ շահադէամները զադարեցրին քարածուխի առևտուրը Վարչավայում, իրանց ասրանքները դուրս տարան և ուրիշ քաղաքներում նոյնքան թանգ գնուով վաճառեցին... Բայց բոլորովին այլ ազգեցութիւն ունեցաւ, երբ կառավարութիւնը թոյլ առեց երկաթուղիներին և մի քանի ծովախնեայ քաղաքներին—առանց մաքսի անզիւական ածուխ գնելը Բակոյն, այդ կարգադրութիւնից յետոյ, մեր շահադէամների ճարապիկութեամբ արուեստական ձեռլ բարձրացած գներն ընկան։ Ուրեմն, երբ արդիւնագործութիւնը ոսի է կանգնում այնքան, որ կարող է առանց չափագանց հովանաւորուելու մրցել, բայց փոխարէնը սկսում է ի չար գործ գնել հովանաւորուող մաքսը, և արուեստապէս բարձրացնել գներն ու հարստահարել սպառողներին—այն ժամանակ մաքսի գոնէ ժամանակաւոր վերացումով կարևոր է սառը ջուր ածել շահադէամների տաքացած կատարների վրայ և նօրմալ դրութեան ըերել նրանց... Այլասէս ինչ կարող են անել իսոշոր արդիւնագործների գաղտնի սինդիկատների գէմ մեր չը կազմակերպուած սպառողները կամ բանտորները։ Զը պէտք է մսուանալ, որ մեղ մօտ զանազան ճիւղերի արդիւնագործները ունեն կանոնաւոր ժողովներ և կազմակերպութիւններ, որոնց չնորհիւ միշտ իրանց շահերն ապահովում են։ Եւ ինչքան խոշոր է արդիւնագործը, այնքան անխոցելի է նա։

Հէնց վերջերումս անդի ունեցան կովկասում մետագասագործների և նաւթագործների ժողով, որոնք բնականա-

բար դբաղուած էին իրանց գասակարգային շահերն ամրացնելու խնդիրներով: Իսկ աշխատող դասակարգի և սպառալիների յարաքերութիւնների մասին ամենամեծներ ակնարկներ միայն կարելի էր լսել: Եթէ հետոնէք նաւթագործների ժողովների նիստերին, կը նկատէք, որ նաւթագին թագաւորների երկու ձեռներն էլ լի են գնդակների կոյտերով. այդ կոյտերով միշտ խեզդւում են անհաճոյ բողզների ծվծվոցները. ինչ քուէարկութիւն կարող է լինել այդ պայմաններում, երբ մէկը ունի 300 ձայն, իսկ միւսը 1 ձայն:

Բայց թողնենք այդ ժողովները առանձին նկարագրութեան և դասակարգային շահերի աշխարհից գառնանք դէպի ընդհանուր հասարակականը:

Անհունութեան մէջ գլորուած դարի վերջին տարին աղետաբեր էր Անդրկովկասի մի ամբողջ գաւառի—Սխալքալաքի համար: Ամեն ցեղերից և աղքաբնակութեան բոլոր խաւերից տառապեամներին ցոյց տուած օգնութիւնը միսիթարական երեսթ էր ընդհանուր հայրենիքի բոլոր զաւակների մէջ եղած ուրոտ կապակցութեան: Այդ կապը երեաց և այն համակրական ցոյցերի ժամանակ, որ առանց ցեղի և կրօնի խտրութեան արտայայտուեց Ռուսաստանի հեռաւոր անկիւններից թէ Սենկերչի և թէ Միլանցլովսկու յօրելեանի ասթուի: Այդ կապը ապացուցուեց և Այլազովսկու ու Զանցեանի մահով: Մէկը իր գիւթիչ վրձինալ, իսկ միւսը իր աղնիւ գրչով և կամ ապացուցելու չարամիտ մարդկանց, որ սուսանայը ընդունակ է իր նոր հայրենիքին ոչ միայն պետական անձններ և քաջ զօրավարներ տալ, այլ և ոյժ ունի գուրս բերել իր միջից այդ հայրենիքի փառքին և առաջադիմութեան նուիրուած աշխարհահռչակ գեղարւեստագիտ և ազնիւ գրչի տաղմնաւոր ներկայացուցիչ: Թէ և աւելի նեղ էր երրորդ հայի՝ Խորէն Ստեփանէի գործունէութեան ասպարէջը, սակայն այդ գործին էլ իր բոցավառ քարոզներով և կենդանի գրչով օգնել է պետութեան բաղմալեզու տարբերից մէկի՝ հայի՝ մտաւոր բարոյական մակերնոյթի բարձրացման: Նա իր գործունէութեամբ փարաւում էր խաւարը, մորակում կուշտ եռամպութիւնը և այդպիսով նպաստում ընդհանուր առաջադիմութեան գործին: Այդ է պատճառը, որ Խորէն Ստեփանէի մահը զգալի էր ոչ միայն հայ ժողովրդի համար, այլ անհնկատելի չանցունակութագում մամուլի համար: Մեր հոգեւորականնութեան այդ արժանաւոր ներկայացուցչի մահումն առիթով չէ կարևոր չը միշել այն մի քանի կարգագրութիւնների մասին, որոնց չնորհիւ մեր հոգեւոր իշխանութիւնը, մանաւանդ այս վերջին 6 տարիների ընթացքում, բացել

է մի մեծ վիճ իր և ժողովրդի մէջ, ամեն քայլափոխում ոտնաւկուս անելով նրա իրաւունքները։ Այդպէս մօտ 80 տարի գոյութիւն ունեցող Ներսիսեան դպրոցի հոգաբարձական իրաւունքները մի գրչի հարուածով, առանց բնաւ տեղիք տուած լինելու, փոփոխուեցին։ Զօրեղացաւ նրա մէջ կզերական տարրը, որ միշտ և ամենուրեկ միայն խտարի և անկարգութիւնն նեցուկ է եղել։ Այդ ընդհանուր կղերական հոսանքի արտայայտիչներից մէկն էլ այն խաղերն են, որ թոյլ են տալիս անել կոնսիստորիաները մնոր ծուխերի հետ։ Իբրև նմուշ կոնսիստորիական կամայականութիւնների, մնաք առաջ կը ըերենք նրա բոնած ընթացքը Թիֆլիսի եկեղեցների ծովաներից մէկի գէմ։

Անցած տարուայ դեկտեմբերի 3-ին կայացաւ Քամունց ս. Գէռդ եկեղեցու ծխականների ընդհանուր ժողով եկեղեցու երէցփոխ պ. Վարդապետանի հրաւորով, նոյն եկեղեցու մենակում։ Ներկայ էին 51 ծխականներ, ծխականների ժողովի խորհրդածութեան առարկան էր, ի միջի այլոց, ծխի և վիճ։ Կոնսիստորիայի մէջ ծագած տարածաշնութիւնների խնդիրը։ Մեր հասարակութեան ինքնանանաշութեան տեսակտից և մեր հոգեւոր իշխանութեան մէջ տիրող անկարգութիւնները բնորոշելու նպատակով աւելորդ չենք համարում առաջ րերել ժողովի շշափած մի քանի հարցերը, օգտուելով արձանադրութիւնից։

Նրէցփոխը լաբոնեց, որ վիճ. Կոնսիստորիայից ստացել է նոյեմբերի 7-ից մի հրաման, № 5336, որով վիճ. Խոեանը անվաներ է համարում ներկայ տարուս ապրիլի 23-ին և 30-ին կայացած ծխականների ընդհանուր ժողովները, որովհետեւ 1) ժողովներին որպէս թէ ծխականների օրինական թիւ ներկայ չէ եղել, ծխականների ընդհանուր թիւը ընդունելով ոչ 232, այլ 246. 2) վիճ. Կոնսիստորիայից նախազէց թոյլ-տութիւն չէ ստացուել ծխ. ժողով հրաւիրելու, 3) ժողովի նպատակը նրան չէ յայտնուած։ 4) Նախագահը Կոնսիստորիայից չէ նշանակուած եղել, և 5) արձանագրութիւնները չեն կրում ծխականների ստորագրութիւնները, այլ վաերացրած են միայն նախազահի և քարտուղարի ստորագրութեամբ։

Բաց զործերից երեսում է, որ ապրիլի 23-ին կայացած ժողովում ներկայ են եղել երէցփոխի հետ՝ 48 հոգին Եկեղեցու երկու միաբան քահանաների առաջարկած ծխականների ցուցակների համաձայն նոյն եկեղեցու լուսարող ծխականների թիւը այն ժամանակ եղել է 232 հոգի և ոչ 246, հետեւարագ 48 թիւը օրինաւոր է, իբրև 7-ից առաւել նիստը բաց անելու համար։ Խակ ապրիլի 30-ի ժողովը շարունակութիւն էր նախալիթաց նիստի, ուր ո՛չ մի նոր առաջարկութիւն կամ խնդիր չէ քննուած, ինչպէս ապացուցում է նոյն ժողովների արձանագրութիւններով։ ուստի՝ այս դէպքում, ժողովականների թիւը, որ եղել է 30, վճռողական նշանակութիւն չունի։ Նթէ մինչեւ անզամ ծխականների ընդհանուր թիւը ընդունենք փոխանակ 232-ի 246, ինչպէս յայտնում է վիճ. Խոեանը, այնուամենաշնիւ 48 թիւը օրինական էր նիստը բաց անելու համար, որովհետեւ ըստ վկացութեան երկու միաբան քահանաների, այն ժամանակ քաղաքից բացակայում էին 32 ծխականների Խակ ընդհանուր կարգով ընդունուած է

քաղաքից բացակայողներին ընդհանուր թուից հանելոց յևոյ ¼, մասը որոշել:

Վիճակ. Կոնսիստորիալի կարծիքով եկեղեցու երէցփախը ինքնուրովն չէ կարող ծխականների ժողով հրահիրել, այլ պատասխան է նախօրօք թուլութիւն խնդրել վիճ. Կոնսիստորիալից, լաբանելով նրան գումարուելիք ժողովի նպատակը, որի թուլութիւնը տալով, Կոնսիստորիան իր կողմից նշանակում է և նախազահ նիստը կառավարելու համար Ներկայ ժողովը հորեւոր իշխանութեան ալո կարծիքը գտնում է անհիմ և հակառակ մեր եկեղեցու ժողովական որոն և տիրող օրէնքին:

Համաձայն մեր եկեղեցու բռն աւանդութեան, եկեղեցու հիմքը համարում է ինքը—ժողովուրդը. Նա է ընարում իր եկեղեցու բոլոր սպասարներին և պաշտօնեաններին, սկսած ժամակուցից մինչեւ ծարբագոյն Հայքաղաքեալ. ըստ այսմ գծագրուած է և 1836 թ. այն օրէնսդրութիւնը, որ Պօլօմէնիս է անուանում և վիրաբերում է մեր եկեղեցու ներքին կառավարութեանը նոյն օրէնսդրութեան մեջ կայ առանձին գլուխ, որ որշուած են վիճ. Կոնսիստորիալի, երէցփոխի և ծիփ իրաւասութեան ասհմանները Համաձայն 1896 թուի հրատարակած օրէնքի XI հատորի, I մասի 1229 յօդուածի, հսկողութիւնը եկեղեցական կայքերի պահպանութեան վրայ, եկեղեցու եկամուտների կառավարութիւնը, շինութիւն անելը, շինութիւնների կարկառելը, նրանց վարձով տալը, եկեղեցու գործերին վերաբերեալ վաստարանութիւնը պատշաճաւոր զիւանատներում և այլ դրանց նման գործողութիւնները—կազմում են երէցփոխի պարուատրութիւնները նա առհասարակ գործում է իրեն ծովսի հաւատարմատար. Խոկ կարեոր գործերի համար նա իրաւունք ունի պահանջիւ ծովսից առանձին հաւատարմագիր, որ ընդունելով, այդպիսի գործերի վերաբերութեամբ աղասի է մնում պատասխանաւուութիւնից ծովսի առաջ:

Խոկ 1232 յօդուածի համաձայն՝ երէցփոխը իւրաքանչիւր տարին անցնելոց յևոյ պարտաւոր է տակ ծխականների ժողովին լիակատար հաշի իր բարու գործողութիւնների մասին եկեղեցու անտեսական գործերի վերաբերմամբ, և մանաւանդ նրա վրամարկվի վիճակի մասին: Եց հաշիւ յատայ նա առաջարկում է Կոնսիստորիալին:

Նոյն օրէնսդրութեան համաձայն եկեղեցական կայքերի կառավարութեան վրայ ընդհանուր հսկողութիւնը պատկանում է Եջմիածնի Սինօղին, խոկ ամեն մի թեսում վիճակալին Կոնսիստորիալին, բայց երէցփոխին է պատկանում եկեղեցու կայքի և զոքի անմիջական կառավարութիւնը, որ և այդ դէմքում գործում է իրեն ծովսի հաւատարմատար:

Արդ՝ Խոկատի առնելով բոլոր վերաբերեալ կէտերը, ծխական ընդհանուր ժողովը գտնում է. 1) Երէցփոխի իրաւունքը և պարուականութիւնն է եկեղեցու անտեսութեան և կառավարութեան վերաբերեալ գործերի համար ինքնուրուն իրավիրել ժողովներ, առանց նախապէս թուլութիւն խնդրելու վիճ. Կոնսիստորիալից 2) Հետևապէս և իրէցփոխին է ժողովներում քննում լիք խնդրեն որոշադր. 3) Ծախսի իրաւունքն է, իրեն օրէնքով ընդունուած որոշ համադրումար ժողովի, իր միջից ընտրել նախազահ նիստը կառավարելու համար, խոկ հոգեոր իշխանութիւնը կարող է, եթէ կամենալ, իր ներկայացուցիչն ունենալ ժողովում, առանց իրական մասնակցութեան և ձայնի, և ո՛չ որպէս ժողովի նախազահ առանձին հրահանգներով, որ ո՛չ նախատեսուած է օրէնքով և ո՛չ բըդիում է եկեղեցու աւանդութիւններից. 4) Երէցփոխին իրաւունք չունի,

առանց ծուխի հաճութիւնն ստանալու, կատարել հոգևոր իշխանութեան՝ նիւթականի վերաբերեալ պահանջները, ուստի, վիճ. Կոնսիստորիան, այս կամ այն կարեոր դէպօռում, պէտք է երէցփոխի միջոցով դիմէ ծխական ժողովին, որ և անօրինում է արժանը: Ալտավէս վարուց և Վեհափառ Կաթողիկոսը, առաջադրելով ծովսի բարեհանութեանը՝ ուսանող Նալբանդեանի ոսման վճարի տուչութիւնը, Ախալքալաքի տառապեաններին և եկեղեցու միարան Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանցին բժշկութեան նպաստ տալու խնդիրները: Խլսավէս վարում է և Սինօղը: Ուրեմն՝ թէ՛ օրէնքը, թէ՛ Վեհափառ Կաթողիկոսը և թէ Սինօղը ընդունում են ծխական ժողովի իրաւունքը, մինչդեռ Կոնսիստորիան, իր վրայ վերցնելով Սենատի իրաւութիւնը բացատրել օրէնքը—բացատրում է բոլողովին քմահան կերպով և հակառակ Նալբանդի նշխանութեան կարգադրութեան: Ծխական ժողովը չէ ընդունում վիճ. Կոնսիստորիայի այդ իրաւութիւնը, այսինքն՝ ինքնակամ բացատրել օրէնքները: Են 5) ապրիլի 23-ի արձանագրութիւնը վամերացրել է յաջորդ՝ 30-ին կայացած ժողովը (որ և երեսում է ժողովի արձանագրութիւնից) և ապա՝ նոյն ժողովի հաւանութեամբ ստորագրել են միայն նախագահը և քարտուղարը, որպիսի կարգը ընդունուած է նոյնավէս այլ և այլ հասարակական հաստատութիւնների մէջ: Խոկ 30-ի արձանագրութիւնը այն նիստու Հկարդացուելուց յետոյ ժողովը հաստատեց, առանց որ և է առարկութեան: Ուստի՝ վիճակային Կոնսիստորիայի առարկութիւնը՝ թէ վերցիշեալ արձանագրութիւնները, կրելով միայն նախագահի ստորագրութիւնը՝ անվաներ են,—ժողովը՝ համարում է նոյնավէս անհիմն:

Նոյն թղթում վիճ. Կոնսիստորիան նախատում է երէցփոխին, որ սա չը պէտք է հրամիքը ծխականների ժողով նախկին երէցփոխի Զայալեանցի վատնած եկեղեցական զումարի խնդրի առիթով, այլ պէտք է ինքնուրոյն վարուէր, կամ Կոնսիստորիայի անօրէնութեանն ապահնէր: Զարմանք է զարուցանում Կոնսիստորիայի վարմունքը, քանի որ Նրան քաջ յաջանի պիտի լինէր, որ օրէնքի տրամադրութեամբ երէցփոխի սպառտականութիւնն էր անմիջապէս ժողով հրամիքել և ծովսին զեկուցանել եկեղեցու տնտեսական շահերին հասցրած վիասի մասին:

Ապրիլի 23-ի ժողովում ծովսը լսեց Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանցի խնդիրը, յանուն Վեհափառ Կաթողիկոսի, սրով նա խնդրում էր օժանականիթիւն բժշկութեան համար Նորին Օծութիւնը բարեհանձել էր մակադրել: Յանհնեմք երէցփոխի Ս. Գևորգ եկեղեցու կարդաղել համաձայնութեամբ ծխականաց յաղաց օգնելոյ քահանալիս: Ժողովը հապատակում է նորին Վեհափառութեան բարեհանձութեանը և յարգելով միանգամայն իր եկեղեցու միարան քահանալի խնդիրը, սրոցեց տալ նպաստ բժշկութեան համար 300 ո.։ Ելա գէպքը ևս առիթ տուեց Կոնսիստորիային նախատելու երէցփոխին, որ նա նախապէս այդ խնդրի առիթով չէ զիմել Կոնսիստորիային, ապա հարցնում է, թէ պիոնչ արտաքոյ կարգի և արդիմաւոր ծառայութեան համար ծովսը վարձատրում է այդ սպացանեալինքն և վերջացնում է զատապարուելով երէցփոխի գործողութիւնը, առաջադրելով նրան միանդամայն ալճարել իր սեփական միջոցներից Վեհափառ Կաթողիկոսի հաճութեամբ և ծովսի որոշմամբ տուած նոպաստը:

Կոնսիստորիայի բանած ընթացքը այս խնդրի վերաբերութեամբ ժողովը գտաւ միանդամայն ապօրինի և եկեղեցական զիսցիպլինալի հակառակ: Եւ որովհետու ապրիլի 29-ի արձանագրութիւնը իր ամբողջութեամբ

ծխական ժողովից վաւերացրած է, ոստի Կոնսիստորիայի առաջադրութիւնը՝ 300 ոստիյու վերադարձի մասին երեցփոխի սեփականութիւնից, ժողովը գտնում է անարդար:

Այսպէս է ահա Կոնսիստորիան յարգում մեր ծխականների իրաւունքները: Եւ ցաւալին այն է, որ Կոնսիստորիայի տարօրինակ հրամանադրերից շատերը ստորագրել է Բաղրատ վ. Թաւաքալևանը...

Լ. Ա.

ԵՐԵՅԱՆ ՓՈԽՎԱՐԱԿԱՆ ՀԱՌՑՈՒ

Վերջին տասը տարուան ընթացքում Թիֆլիսի ս. Գէորգ (Քամոյենց) Եկեղեցին 4 երեցփոխի ունեցել, իսկ նրանց հետ տեղւոյս հայոց վիճակային ատեանը տարօրինակի պաշտօնական յարաբերութիւնների մէջ է գտնուել. մինչդեռ մէկի վերաբերութեամբ նա եղել է մեղմ, ներողամիտ և բարեգութ մինչ ցօրինազանցութիւն ի պաշտօնէ, միւսի դէմ վիրաւորական և թըշնամական ցասումով լի պաշտօնական թղթեր է ուղղել, միայն ձգտելով ժողովրդական պաշտօնեայի սիրտը դառնացնելու և նրա հրամարականը յաջողեցնելու նպատակին... Բայց թնդ չը կարծէ ընթերցողը, որ հոգեոր ատեանի այդ տարբեր վարմանքըն առաջ է եկել երեցփոխական պաշտօնավարութեան մէջ նկատուած զրական կամ բացասական կողմերի չնորհիւ: Բնաւոչ, միայն երեցփոխի անձն է եղել Կոնսիստորիայի տրամադրութեան բարոմետրը. եթէ երեցփոխը սիրելի է Կոնսիստորիային իր հնազանդութեամբ և այլ՝ միայն հոգեոր ատեանի անդամներին յայտնի յատկութիւններով, նա այդ հաստատութեան persona grata-ն է. Նրանց մէջ հաստատուած բարեկամական կապը այն զօրութիւնն ունի, որ երկու կողմն էլ խլոյն մոռացութեան են տալիս իրանց պարտաւորութիւնը օրէնքի և հասարակութեան առաջ: Եւ ահա մենք տեսնում ենք, որ տարիների ընթացքում՝ հակառակ օրէնքի դրական պահանջմին ոչ երեցփոխն է տալիս տարեկան հաշիւ ծուխին, ոչ էլ Կոնսիստորիան է ստուգում իրաքանչիւր ամիս երեցփոխի մատեանները. իսկ այդ փոխադարձ օրինազանցութեան անմիջական հետեանքը միշտ եղել է եկեղեցական-հասարակական գումարների վատնումը և կորուստը: Բայց բոլորովին այլ կերպ է վարւում վիճակային ատեանը այն երեցփոխի հետ, որ չէ հնազանդուում Կոնսիստորիայի՝ օրէնքով չը նախատեսուած պահանջներին, օրինապահ և անկախ իր գործողութիւնների մէջ, որքան այդ թոյլ է արւում նրան, իբրև ծուխի հաւատարմատարին. Այդպիսի երեցփոխի դէմ Կոնսիստորիան պատերազմական արշաւանք

է սկսում, իբրև իր թշնամու դէմ և ամենայն միջոցներով աշխատում է հակառակորդի նուանդը կոտրել, ի չիք զարձնելով նրա արիաջան գործունէութիւնը յօդուու ժողովրդի և եկեղեցու շահերի Հաստատենք մեր ասածը փաստերով:

Մի ժամանակ ս. Գէորդ եկեղեցու երէցփոխի պաշտօնը պ. Հ.ն էր վարում. սա պատկանում էր կղերականներին նուիրուած երէցփոխների կարգին, որոնք ըստ մեծի մասին շատ շփոթ զաղափար ունեն հասարակական սեփականութեան և իրանց պաշտօնական պարտաւորութիւնների մասին։ Այդ մարդը մի անակնիւալ վարմունքով անմահացրեց իր անոնց երէցփոխական տարեզրութեան մէջ. մինչդեռ ժողովուրդը և մամուլը նրանից միաբերան պահանջում էին նրա պաշտօնավարութեան երկար տարիների հաշիւը, նա արհամարհելով ծուխի օրինաւոր և արգարացի պահանջը, խոյս էր տալիս հաշուեաւութիւնից, ասելով որ ինքը պարտաւոր չէ ծուխին հաջիւ տալ, թէ կայ մէկը, որի առաջ միայն նա պատասխանատու է։ Եւ ճշմարիտ, մի գեղեցիկ օր թիֆլիսի ժողովուրդը իմանում է, որ պ. Հ.-ը Մակար կաթողիկոսին է ներկայացրել թիֆլիսի ս. Գէորդ եկեղեցու հաշիւը. այնուհետեւ ծուխը Կոնսիստորիայից սատանում է տեղեկութիւն, որ Նորին Վեհափառութիւնը բարեհածել է ընդունել և վաւերացնել Հ.-ի ներկայացրած հաշիւը... Սակայն ծուխը մինչեւ այժմ անգիտակ է, թէ ինչ հաշիւ էր ներկայացրել Կաթողիկոսին այդ հնարագէտ երէցփոխը և ինչպէս պէտք է հասկանալ օրէնքի այն յօդուածը, ուր ասուած է հետևալը. «Տարին անցնելուց յետոյ երէցփոխը պարտաւոր է տալ ծխականների ընդհանուր ժողովին իր բոլոր գործողուրիւնների լիակատաւ հաւիր եկեղեցու տնտեսական գործերի վերտընթեամբ. այդ հաշիւը նա յետոյ առաջարկում է Կոնսիստորիային»։

Այդ երէցփոխի կատարեալ հակառակարն էր նրա յաջորդը՝ բարեկիշտակ Բ. Մելիք-Ղարաղեօքեանը։ Հասարակական շահներին նուիրուած և սկզբունքի տէր մարդ, նա երդուեալ թշնամի էր ամենայն կամայականութեան, անձնական հաճոյքի և անօրէն գերիշխանութեան. ինչ որ սահմանուած է օրէնքով, նա կատարում էր ամենայն ծշտութեամբ և չէր ներում որ և է օրինազնցութիւն, մանաւանդ եթէ վերջինը բղխում էր անձնական պղտոր ձգտումներից։ Բայց հաճելի չեն հոգեսոր իշխանութեան նրա նման մարդիկ և այդ պատճառով նրանց բարի ջանքը և գործունէութիւնը միշտ ապառաժ ժայռի հանդիպելով, փշրւում է առանց որ և է օգուտ բերելու հասարակութեան։ Այդ կողմից խրատական է իր բովանդակութեամբ հանգուցեալի տպագրած

տեղեկագիրը իր երէցփոխական գործունէութեան մասին *): Դա մի փոքրիկ գրքոյկ է, որի մեծ մասը կազմում են հանգուցեալի պաշտօնական թղթերը վիճակային կոնսիստորիային ուղղած: Տեղեկագրից երեսում է, թէ որքան հանրօգուտ ձգտումներ է ունեցել բարեկիշտառակ երէցփոխը, քանի քանի խելացի առաջարկութիւններ է արել Կոնսիստորիային այս կամ այն խնդրի առիթով և ինչպիսի եռանդով ծրագրիներ է մշակել բարեկիութելու համար արդէն հնացած և կեանքի պահանջներին հակասող կարգերը: Բայց իգուր անցաւ նրա աշխատանքը. Կոնսիստորիան թշնամութեամբ վերաբերուեց հանգուցեալի բոլոր առաջարկութիւններին, որի հետեանքը այն եղաւ, որ այդ օրինակելի ինտելիգենտա երէցփոխը հեռացաւ ասպարէզից և այնուհետև ամեն բան գնաց իր հին կարգով և եղանակով:

«Եկեղեցու երէցփոխը, ասում էր վիճակային ատեանը, է մեր ստորագրեալ պաշտօնեան, ուստի նա պարտաւոր է Կոնսիստորիայի բոլոր պահանջները անմիջապէս կատարենք: Այդ սկզբունքի հարց է, որ և հարկաւոր է վճռել օրէնքի իմաստի համաձայն և ոչ կամայականութեամբ. այդպէս ցանկանում էր հարցը պարզել և հանգուցեալ Բ. Մելիք-Ղարագիոզեանը, սակայն նա չը հասաւ իր նպատակին, Կոնսիստորիայում նրան լըսող չեղաւ: Յարուցուած խնդրի կարեորութիւնը աչքի առաջ ունենալով, մնաք յարմար առիթ ենք գտնում Կոնսիստորիային ուղղած հանգուցեալի մի նշանաւոր գրութիւնը այսուեղ նոյնութեամբ առաջ բերել, ուր շատ հիմնաւոր կերպով քննութեան են ենթարկուած Կոնսիստորիայում տիրած կարգերը և ուղղութիւնը մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ:

«Օրէնքով և նախանական աւանդութեամբ, ասում է նա, եկեղեցու ստացուածքը պատկանում է նրա ծխականների ընդհանութեամն և կարող է գործադրուել միայն վերջինի հաւանութեամբ և որոշմամբ. իսկ հոգեոր իշխանութեան վրայ պարագ է գրում հոկել, որպէս զի այդ ստացուածքը Կորստի չը մատնուի: Իրօք հըսկողութիւն չը կայ. Նրա փոխարէն վերջին միւերկու տամնեակ տարիների ընթացքում մտցնուում է մի այլ ուղղութիւն, որ առաջ գնալով, սակաւ առ սակաւ, խախտում է ժողովրդի իրաւունքը, անտես է ասնում նրան և ընտելացնում է նրան, անտարբերութեան դէպի եկեղեցու շահերը, թէ ըստ նիւթականին և թէ ըստ բարոյականին, և բառնալով նրանից նրա հոգացողութեան գործը, օտարայնում է նրան եկեղեցուց: Այդ ուղ-

*.) աջեկուցում և հաշին երէցփոխանի ծափի թաղի Ս. Գէորգ եկեղեցու նոյն եկեղեցու ծխականաց ժողովին ի 29 մայիսի 1891 ամիս:

դութեան չնորհիւ ժողովուրդն այլևս ինքն իրան չէ համարում եկեղեցու տէր և պարտաւոր հոգալու նրա շահերը, որովհետեւ նրա իրաւունքն ու պարտաւորութիւնը այժմ անցել են երէցփոխանի և հոգեոր իշխանութեան ձեռքը: Այդ է պատճառը, որ ժողովուրդը չէ յաճախում ծխականների ժողովները, չէ հսկում և չէ քննում երէցփոխի գործունէութիւնը, որովհետեւ եկեղեցու ստացուածքի կարգադրիչը ինքը չէ: Այդ դրութիւնը, իմ կարծիքով, մեծ վտանգ է սպառնում եկեղեցուն, շարժելով նրա հիմքը, որ ժողովուրդն է: Հարկաւոր է յորդորել, իրախուսել, կապել նրան եկեղեցու շահերի հետ. իսկ այդ կարելի է անել ընդունելով և գործադրելով նրա օրինական իրաւունքը և ցոյց տալով, որ հոգեոր իշխանութիւնը իրօք հսկում է երէցփոխանների գործունէութեան վրայ, անաշառութեամբ պաշտպաննելով եկեղեցու և ժողովրդի շահերը և ուղղելով օրինազանցութեամբ կատարածը: Այս, ինչ որ տեսնում ենք մեր շուրջը, շատ հեռու է այդ գաղափարներից, իսկ ժողովուրդը միջոց և յարմարութիւն չունենալով անկարգութիւնների առաջն առնելու, երեաը շուռ է տալիս եկեղեցուց, բայց խուլ տրտունջ ցոյց տալով անդադար»:

Այդ կծու, բայց արդարացի մեղադրութեան դէմ կոնսիստորիան ոչինչ չէ գտնում՝ պատասխաննելու, միայն կրկնում է իր հին և օրինաւոր հիմունքներից գուրս բանահիւսութիւնները, թշնամական տոնով համեմած... «Ոչ մի օրէնք կամ նախնական աւանդութիւն, պատասխանում է կոնսիստորիան, չեն տուեալ երէցփոխանաց իրաւունս չը կատարելոյ գհրաման թեմական իշխանութեան կամ առաջարկելոյ զգատողութիւնս ի մասէն արդէն եղեալ կարգադրութեան իշխանութեան վերաբերմամբ եկեղեցական կայից և դրամոց: Բայց այսմ գտանելով ի պաշտաման երէցփոխանի եկեղեցոյ պարտաւոր էք դուք կատարել ճշտիւ գհրամանս հոգեոր իշխանութեանս ձերոյ, առանց աւելորդ և անտեղի դրագրութեանց»: Այդ պատասխանի մէջ արտափայլում է կոնսիստորիայի երէցփոխական պաշտօնի վրայ ունեցած հայեցակէտը, որ հաստատում է Ատեանի միայն «այդպէս կամիմք» օրէնքով...

Բայց բաց անենք օրէնսգիրքը և տեսնենք, որքան համաձայն է կոնսիստորիայի մեկնութիւնը օրէնքի գրական իմաստին և մեր եկեղեցական հին աւանդութիւններին: Յայտնի է, որ մեր եկեղեցին իր ծագման և գոյութեան հիմնական սկզբունքով ժողովրդական է. նրա ողին, կենողանի կազմուածքը ժողովուրդն է, և այդ տարրի կենսական ոյժին ապաւինած նա իր բարձր կոչմանն է ծառայում, ում

մասնակցութեամբ, եթէ ոչ ժողովրդի, ընտրւում են եկեղեցու սպասաւորներ սկսած հոգեոր կոչման ստորադրեալ պաշտօնեայից մինչև Ծայրագոյն Հայրապետը: Այլ է, եթէ ոչ ժողովուրդը հոգեոր դասակարդի միակ նեցուկը և խնամատարը: Արդ՝ իրքն տիրապետող և կենդամնարար տարբ եկեղեցու կազմակերպութեան մէջ, նա բնականաբար խոչոր մամնակցութիւն պիտի ունենայ եկեղեցու բարեկարգութեան և անտեսական կառավարութեան շրջանում: այդ իսկ պատճառով 1836 թուին հրատարակուած Պոլոյշենին, որ բովանդակում է իր մէջ մեր եկեղեցու կառավարութեան վերաբերեալ կանոններ, որոյ նշանակութիւն է տուել հայոց եկեղեցու վերոյիշեալ աւանդական առանձնայատկութիւններին, որով և տարբերուում է նա այլադաւանների համար սահմանուած օրէնքից: Կոմիսատորիայի սխալ հայեցակէտը հերքելու համար այստեղ առաջ ենք բերում Պոլոյշենի այն յօդուածները, որոնք վերաբերում են երէցիոլուական պաշտօնին և եկեղեցու ստացուածքի կառավարութեան խնդրին.

յօդ. 1222 *). Եկեղեցական կայքի կառավարութեան գործի վրայ ընդհանուր հսկողութիւնը պատկանում է էջմիածնի Սինօդին, իսկ իւրաքանչիւր թեմում—թեմակալ առաջնորդին.

յօդ. 1225. Մասնաւորապէս հայոց եկեղեցու կայքի կառավարութիւնը անմիջապէս կախուած է ամեն մի եկեղեցու երէցիոլուից:

յօդ. 1227. Եկեղեցու երէցիոին ընտրուում է երեք տարի ժամանակով ժողովրդի պատուաւորագոյններից. երեք տարին լրանալուց յետոյ նա կարող է վերընտրուել նոյն պաշտօնի համար.

յօդ. 1229. Հսկողութիւնը եկեղեցական կայքի ամբողջութեան վրայ, եկեղեցու արդիւկների կառավարութիւնը, չինութիւնը և նորոգութիւնը եկեղեցապատկան կալուածների, նրանց վարձով տալը, երթեւեկութիւնը պատշաճաւոր դատարաններում եկեղեցական գործերի համար և այլ գրանց նման գործողութիւնները կազմում են երէցիոինի պարտաւորութիւնը. նա ընդհանրապէս իր պաշտօնը կատարում է իրքն լիազօր հաւատարմատար ժողովրդի կողմից. նշանաւոր գործերի համար նա իրաւունք ունի ժողովրդից պահանջել հաւատարմութեան առանձին թուղթ, որի ստանալուց յետոյ նա այդ գործերի վերաբերմամբ զերծ է մնում որ և է պատասխանատութիւնից հասարակութեան առաջ.

*] I մ. XI հատ. 1896 թ. հրատ.:

յօդ. 1232. Տարին լրանալուց յետոյ երէցփոխը պարտաւոր է տալ ծխականների ընդհանուր ժողովին լիակատար հաշիւ իր բոլոր գործողութիւնների մասին եկեղեցու տնտեսական գործերի վերաբերմամբ։ Այդ հաշիւը նա յետոյ առաջարկում է կոնսիստորիային։

Վերոյիշեալ յօդուածների իմաստից պարզ երևում է, որ երէցփոխը կոնսիստորիային ստորագրեալ պաշտօնեայ չէ, ուրեմն և պարտաւոր չէ նրա բոլոր հրամանները կատարելու երէցփոխը ժողովրդից ընտրուած պաշտօնեայ է և վարում է իր պաշտօնը, իբրև նրա հաւատարմատար, մինչև անդամ ամենանշանաւոր և պատասխանատու գործերում։ Նա չէ դիմում կոնսիստորիային հրահանգների համար, այլ անմիջապէս նոյն եկեղեցու ծխականներին, որոնցից և կախուած է տալ նրան գործերու կատարեալ լիսազօրութիւն։ այդպէս նա վարում է իւրաքանչիւր տարի և իր հաշուետութեան մէջ, միշտ ճանաչելով այդ մասում ևս ծխի իրաւասութիւնը անթերի։ Ահա այստեղ ակնյայտնի կերպով աչքի է ընկնում այն ժողովրդական սկզբունքը, որ օրէնսդիրը կամեցել է ընդգծել երէցփոխի և ծուխի փոխադարձ յարաբերութիւնների մէջ և վարուել է այդպէս, կամենալով եկեղեցական գործերի մէջ պահպանել մնը հենդեցուն յատուկ աւանդութիւնները։ Կոնսիստորիայի ասելով երէցփոխը պարտաւոր է ճիշտ կատարել հոգենոր իշխանութեան հրամանը, առանց ծուխի որ և է մասնակցութեան։ Շատ բարի։ Բայց ինչու օրէնքով երէցփոխական պաշտօնը ընտրողական է և ոչ նշանակովի, և ինչու ծխական ժողովը է ընտրում եկեղեցու երէցփոխ և ոչ կոնսիստորիան։ Եթէ ընդունենք վերջինի հայեցակէտը, պէտք է նախ ջնջենք օրէնքի այն յօդուածները, ուր առանձնապէս որոշուած է երէցփոխի և ծուխի իրաւասութիւնը եկեղեցու տնտեսական մասում և նրանց տեղը դնենք հոգենոր ատեանի «երենիլ» շրջաբերականները, որոնց մէջ փոխանակ պարզելու, աւելի։ ևս մթնացնում են օրէնքի ճիշտ իմաստը։ Իսկ եթէ երէցփոխին ծուխն է ընտրում և նա գործում է իր իրաւասութեան շրջանում, իբրև ծխական ժողովի հաւատարմատար, եթէ երէցփոխը իւրաքանչիւր տարի նոյն ժողովին տնտեսական մասի կառավարութեան լիակատար հաշիւ է ներկայացնում, ապա ինչպէս նա կարող է առանց ծուխի գիտութեան և հաճութեան կատարել անմիջապէս կոնսիստորիայի շատ անդամ անհիմն և անտեղի հրամանները։ չը որ ընդհանուր օրէնքի համաձայն նա, իբրև հաւատարմատար, նախ և առաջ պատասխանատու է իր բոլոր գործողութիւնների մէջ ծուխի առաջ։ Պարզ է ուրեմն որ կոնսիստորիան իրաւունք չունի տարածել իր իշխանութիւ-

Նը երէցփոխի վրայ և պահանջել նրանից, որ նա հոգեսր իշխանութեան բոլոր պահանջների հու կատարողը լինի։ *) Այդ դէպօւմ երէցփոխը կը լինէր ոչ թէ ժողովրդի ընտրուած պաշտօնեայ, այլ Կոնսիստորիային ստորագրեալ անձն, որ չէ համապատասխանում օրէնքի պարզ իմաստին և մեր աւանդութիւններին։**) Այդ բոլորը քաջ յայտնի է Կոնսիստորիային, բայց և այնպէս նա միշտ ձգտել է ծուխի իրաւասութիւնը ժխտել և արհամարել, իր ձեռքն առնելով եկեղեցու տնտեսական մասի կառավարութիւնը որոշ կարգի հսազանդ երէցփոխների միջոցով. . . Նա այնքան անհեռատես է, որ չէ նկատում, թէ ինչպիսի վիճ է բացւում ժողովրդի և եկեղեցու մէջ այդպիսի անխոհեմ ընթացքից, որից կը տուժէ միայն եկեղեցին իր սպասաւորների ամբողջ լեգէոնով։ Նաև մոռանում է հոգեսր իշխանութիւնը, որ նրա ոյժը և կարողութիւնը ժողովրդի մէջ է, և միայն ժողովրդի մէջ. արդ՝ ինչ է վաստակում նա, միշտ ոտնատակ անելով ժողովրդի իրաւունքը, միշտ թշնամանալով նրա արդարացի և օրինաւոր պահանջների դէմ. եթէ ոչ միայն անվերջ տրտունջ և երբեմն իսկ ատելութիւն, որով և լցուած է այսօր նրա դէմ ժողովրդի սիրտը։

Յ. ՍՊԵՆԴԻԱՆԻՑԱՆ

*) Մի քանի դէպելրից մեզ յալտնի է, որ էջ. Սինօգը և Հայոց Կաթողիկոսը հարկ եղած ժամանակ յանձնում են երէցփոխին՝ ծխականների համաձայնութեամբ կատարել այս կամ այն ինդիրը, օրին. ա. Շանշեանի, ուսանող ն. և թ. ք. Տ.-Պ. Խնդիրների առիթով։

**) Այդպէս վճռեց ներկայ ինդիրը և Քամոյենց Ս. Գէորգ Եկեղեցու ծխական ժողովը Կոնսիստորիայից ստացած մի պաշտօնական թղթի առիթով. նոյն ոգով է ընթանում և Մոլու Ս. Գէորգ Եկեղեցու ծուխը, որ նոյնպէս մեր քաղաքի նշանաւոր ծուխներից մէկն է։

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Մոռացուած աշխարհ կամ «Մեռնող երկիր»:—Մեր դիմումը մեր ընթերցողներին:—Ընդհանուր տեսութիւն անցեալ տարուայ, տնտեսական վիճակ, բնական ալէտներ:—Նխալքալաքի երկրաշարժը. հասարակական լայն բարեգործութիւն. ժողովրդի մասնակցութիւնը:—Վաշխառութիւնը Ախալքալաքի զաւառում. մամուլի կատարած դերը:—Նոր դժբախտութիւն Ախալքալաքի զաւառում. հացի բզեզ:—Կարս. դիզատնտեսական ընկերակցութիւններ կազմելու միտքը:—Նէքսանդրօպօտ. Կարսի երկաթուղին:—Երեան, հողարձական ընտրութիւններ:—Շոշի. «Նշանակովի» հոգարարձուներ:—«Մեռնած կէտեր»:—Կազզուան. վէճեր հասարակութեան և բարերարի մէջ:—Բաթում. քահանական ռոճիկի հարցը:—Բազու, բանուորների ապահովագրութիւն. ծրի ճաշալան հայ աղքատների համար. թատրոն և դերասանական ճանապարհորդութիւններ. բարեգործութիւններ. մի դատաստանական զործ:

Մեզանում ընդունուած է անուանել մեր գաւառները մոռացուած աշխարհ: Եւ այդ անունը, ընդհանրապէս, ճիշտ է: Գաւառը գնալով անկարեսոր, երրորդական նշանակութիւն է ստանում մեղ համար: Ամենքը, ինչպէս յայտնի է, փախչում են գաւառներից. մեր մի քանի խոշոր առևտրական-արդիւնաբերական կենդրունները—Բագուն, Թիֆլիսը, Բաթումը—անդադար ծծում են մեր գաւառները, դուրս հանելով նրանցից բոլոր կինսառնակ, հիւթալից ոյժերը: Քաղաքի, այն էլ անպատճառ խոշոր քաղաքի ընակիչ գառնալով, հայ ինտելիգէնտը կատարելապէս մոռացութեան է տալիս իր ծննդավայր գաւառը և այնքան սովորում է այն մտքին թէ զաւառը մոռացուած աշխարհ է, որ երբ պատահարար զնում է որ և է դիւլ կամ զաւառական քաղաք, այլև և չէ էլ հետաքրքրում այնտեղի կեանքով, ուշադրութիւն չէ դարձնում նրա ուրախալի կամ ցաւալի երևոյթների վրայ: Հետևանքը այն է լինում, որ հրապարակում ոչինչ նիւթ չը կայ մեր գաւառական կեանքը ճանաչելու համար:

Մենք չենք ուզում ասել, թէ այս երեսյթը միայն մեր, կովկասեան կեանքում է նկատելի: Այսպէս է համարեա ամեն

տեղ. քաղաքը ամևն տեղ, աշխարհի ամևն կողմերում կատարում է անխմայ ծծողի, գաւառներն ամայացնողի դեր: Թէ որքան Ֆրանսիայում այդ հանգամանքը ընդունել է ընդհանուր չարիքի, աղէտի բնաւորութիւն, այդ կարելի է իմանալ «Մեռնող Երկիր» անունով մի վէտից: Մեռնում է երկիրը, մեռնում է այն պատճառով, որ երկրի մարդիկ հեռանում են, քաղաքացի դառնում: Մենք մի ուրիշ անգամ կը ծանօթացնենք մեր ընթերցներին այս վէտի հետ: Առաջժմ կ'աւելացնեմ այն, որ մի քանի երկրներում արդէն հասկանում են, թէ ինչ սոսկալի դժբախտութիւն է «մեռնող Երկիրը» և մկնել են վերադառնալ վէտի զիւզ, վէտի բնութիւն: Այսպէս, Անդլիայում ոչ միայն չափաւոր կարողութեան տէր մարդիկ, այլ և խոշոր կարւածատէրերը, գիտութեան, գեղարուեստի ներկայացուցիչները կազմակերպում են ընկերակցութիւններ «մեռած Երկիրը» կենդանացնելու համար:

Մեղանում էլ վաղ թէ ուշ պիտի հասկացուի, որ մեռցնել Երկիրը, նշանակում է մեռցնել կեանքը: Բացատրութիւնների կարօտ չէ այն տարբական հասկացողութիւնը, թէ հողն է ժողովուրդների բարեկեցութեան, առաջազիմութեան միակ հիմնագարը: Պարերական մամուլի պարտըն է ամեն չանք դործ գնել որ իսպառ չը մոռացուի մեր գաւառը, որ մեր «մեռնող Երկիրը» խօսէ հրապարակով իր կարիքների և ցաւերի մասին: «Մուրճը» կը կատարէ այդ պարտականութիւնը, իւրաքանչիւր ամիս տեսութիւններ նուիրելով մեր գաւառական կեանքին: Այս անգամ մենք փորձում ենք մի ընդհանուր, թուցիկ տեսութեան մէջ ամփոփել այն ամենը, ինչ անցեալ տարի նկատելի էր մեր գաւառական կեսների մէջ: Այսպիսի տեսութիւններ կազմելու համար հարկաւոր են նիւթեր: Մենք առաջժմ վերցնում ենք մեղ հարկաւոր նիւթերը մեր լրագիրներից. բայց յոյս ունենք, որ «Մուրճի» ընթերցողներն էլ չեն զլանայ իրանց աջակցութիւնը ցոյց տալու՝ ուղարկելով մեղ տեղեկութիւններ գաւառների մէջ նկատուող հասարակական, անտեսական երեսյթների մասին: Այսպարութիւնը մեծ ուրախութեամբ կ'ընդունէ այդ տեղեկութիւնները և կ'աշխատէ օգտուել նրանցից իր տեսութիւնների մէջ:

Մի ընդհանուր ակնարկ զցելով մեր գաւառների կեանքի վրայ, մենք ամենից առաջ պիտի տեսնենք, թէ անտեսական ինչ հանգամանքների մէջ նա անցկացրեց մի ամրող տարի: Գաւառի համար ամենակարևորը այդ է: Եթէ նա ունի առատ տարի, նշանակում է որ նա ունի և համեմատարար բարեկեցիկ կեանք,

կարող է մտածել իր մտաւոր շահերի մասին, առաջ գնալու փորձեր անել: Իսկ եթէ աղքատ է ժողովուրդը և կարօտ, այդ դեպքում նրանից չէ կարևոր սպասել մի ուրիշ բան, բայց գանգատաներից:

Այս տեսակէտից անցեալ 1900 թուականը պէտք է համարել անբարեյածող: Դա մէկն էր այն տարիներից, որոնք վերջին տասնամետակում յաջորդում են իրար, հարուածելով մեր տնտեսական կեանքը զանազան կողմերից և հասցնում են մեր երկիրը ուժասպառութեան:

1899 թուականի երկարատև երաշտը, համարեա ամեն տեղ եկած կարկուտը և այդ աղէտների հետ միաժամանակ տարածուած անսասունների ժմանտախտը արդէն տնտեսապէս շատ թուլացրել էին ազգաբնակութիւնը 1900 թուականին: Բայց այս թուականն էլ բաւական հարուատ էր բնական պատահարներով, որոնք շատ տեղերում աղէտի կերպարանք ընդունեցին: Մեր երկիրը գարնանն ունէր շատ լաւ ցանքեր, բայց, դժբախտաբար, վրայ հասաւ չափից դուրս անձրևային մի ամառ, որ փչացրեց հունձի մեծ մասը և զիւղացուն ժամանակ չը տուեց հաւաքել ու կալել փառութիւնից ազատ մնացած փոքրիկ մասերը: Եկաւ սեպտեմբերը, շատ լեռնային տեղերում արդէն սկսուել էին ձմեռնային ցրտերը, բայց զիւղացին գեռ չէր հաւաքել իր հացահատիկները: Պակաս աղետաբեր չեղաւ և կարկուտը, որ վերջին տարիները առհասարակ մեր զիւղատնտեսութեան ոխերիմ թշնամիներից մէկն է դարձել:

Ահա այս բնական պատուհարները ընդհանրապէս շատ վատ ազգեցին գաւառացի ազգաբնակութեան բարօրութեան վրայ: Բաւական է յիշել մի հանգամանք, որ շատ լաւ ցոյց է տալիս մեր երկրի խեղճ դրութիւնը: Երկու տարի է ահա, Թուսատանից բերուող ալիւրն է պահպանում մեր գաւառների բնակիչներին: Այդ ալիւրը միայն քաղաքացիներին չէ հարկաւոր, այլ և զիւղացիներին: Գիւղը այնքան աղքատացել է, որ չէ կարողանում ոչ միայն հացահատիկ հանել մօտիկ վաճառանոցները և հայթաթել իր առօրեայ կարիքները, այլ և ստիպուած է ուտելու հաց գնել, մի բան, որ աւելի ևս պիտի ծանրաբեռնէ զիւղացու առանց այդ էլ աղքատիկ բիւջին: Թուսատանի ալիւրը տարածում է մեր երկրի զանազան կողմերում: Նրան մենք տեսնում ենք թէ Սլէքսանդրոսովոլում և թէ Ղարաբաղում, այսինքն այնպիսի տեղերում անգամ, ուր աղդաբնակութեան կամաւոր պարապմունքը հողագործութիւնն է:

Մի այսպիսի դրութեան մէջ մեր երկիրը, ճիշտ է, այս տարի հացի մեծ պակասութիւն կամ սով չը տեսաւ, բայց կա-

րոտութիւնը, թանգութիւնը, կարող ենք ասել, ընդհանուր է ամեն տեղ: Ի՞պէն ըստ ինքեան հասկանալի է որ պակասութիւնների մէջ խրուած ժողովուրդը չէր կարող ցոյց տալ աչքի ընկնող հասարակական և կուլտուրական գործունէութիւն: Եւ մենք, աչքի առջև ունենալով գոնէ այն փաստերը, որոնք մամուլի միջոցով յայտնի են գարձել հասարակութեան, չենք կարող մատնանիշ անել փոքր ի շատէ նկատելի ընդհանուր հոսանքներ, որոնք վկայեին, թէ գաւառական կեանքը առաջ է գնում անսայթաք քայլերով:

—

Դիմելով մեր երկրի առանձին-առանձին տեղերին մենք ամենից առաջ պիտի խօսենք մի իսկապէս բազմատանջ և խեղճ գաւառի մասին: Դա Ախալքալան է:

Երբ տարին լուսացաւ, Ախալքալաքի գաւառի մեծ մասը ներկայացնում էր աւերակների կոյտ: Դեկտեմբերի 19-ի երկրաշարժը հազարաւոր մարդկանց թողեց բաց երկնքի տակ, ձմեռուայ սարսափելի ցրտերի մէջ, զրկուած տնային կենդանիներից, դրյաբից, շատերը նաև կորցրած իրանց սիրելիներին: Աղէտը իր ահոնելի չափերով, իր պատճառած դժբախտութիւններով ցնցող էր, անսովոր: Մի ամբողջ գաւառի աղքաբնակութեան լինելու կամ չը լինելու հարցը կախուած էր այն օգնութիւնից, որ պիտի գար դրսից:

Եւ օգնութիւնը չը յապաղեց: Ամենից առաջ, տեղն ու տեղը, օգնութեան հասաւ կառավարութիւնը: Տեղական զօրքերից ուղարկուեց աղէտի տեղը մի քանի վաշտ զինուորներ, ուրոնց գործն էր փորել աւերակները, հանել նրանց տակից այն ամենը, ինչ դեռ կարելի էր ազատել: Ախալքալաքի գաւառի աղքաբնակութիւնը երախտագիտութեամբ պիտի յիշէ զինուորների և օֆիցիէնների անձնազնո՞ն ջանքերը. դրանք էին, որ հանցին զիակները, հայ ու օթեան տուին դժբախտացածներին: Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ տեղական մասնաժողով կազմուեց Ախալքալաքում: իսկոյն եռանդրուն միջոցներ ձեռք առնուեցան՝ վիրաւորուածներին հիւանդանոցներ տեղափոխելու և խնամելու համար. իր մարդասիրական ջանքերով առնուն հանեց մանաւանդ գաւառապետի ամուսին տիկին Զիսսերման:

Աղէտից դժբախտացած աղքաբնակութիւնը, որի ամենամեծ մասը կազմում էին հայերը, արժանացաւ և բարձրագոյն չնորհների: Թագաւոր Կայսրը բարեհաճեց 50 հազար ոտքի նուիրել՝ աղէտից վասառածներին և բացի դրանից հրամայեց

վերադարձնել իրանց մները այն երիտասարդներին, որոնք ծառայում էին զօրքերի մէջ:

Աղէտը լայն արձագանք գտաւ և կայսրութեան զանազան անկիւններում ու առաջ քերեց խոչոր հասարակական բարեգործութիւն: Թիֆլիսում, նահանգապետի նախագահութեամբ, կազմուեց գլխաւոր Կօմիտէտ, որ սկսեց ժողովել և դործագրել ամեն կողմից թափուող նուիրատուութիւնները: Վերին աստիճանի մխիթարական երոյթ էր տեսնել, թէ ինչպէս հայ ժողովուրդը միաժամ շտագեց օդնութեան համել դժբախտացած ախալքալաքիցներին: Աղէտը արձագանք տուեց ոչ միայն քաղաքներում, այլ և հեռաւոր, մոռացուած գիւղերում: Միայն «Մըշակ» լրագրին ուղարկուած նուէրների ընդհանուր գումարը հասնում է 85 հազար ոուբլու: Նշանաւոր է այն հանգամանքը, որ մեր ասլահովուած զասակարգը բարեգործական մի առանձին եռանդ ցոյց չը տուեց, մինչդեռ մեզանում կան հարուստներ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր իր սեփական միջոցներով, առանց ուրիշների օդնութեան, ապահովել երկրաշարժից մասուածներին: Դրա փոխարէն խոչոր գումարներ կազմուեցան այն փոքրիկ նուէրներից, որ ընդհանուր զանձարանի մէջ մըտցնում էր մնր հասարակ, գլխաւորապէս գաւառական ժողուուրդը: Ղազախի զաւառում կային գիւղեր, որոնք կարօտ էին օրական հացին, որոնց նոյնպէս պիտի օդնէր հասարակական բարեգործութիւնը. բայց այդ գիւղերը մոռացան իրանց ցաւը, 5—10 կոպէկանոց նուէրներով տասնեակ ոուրիշներ կազմեցին և ուղարկեցին ախալքալաքցիներին: Շիրակում եղան գիւղեր, ուր մարդիկ, առձեռն փող չունենալով, տալիս էին գարի, ցորեն, ալիւր, այրիներ եղան, որոնք իրանց մի հատ հաւով օդնեցին:

Այս ընդհանուր համակրանքի չնորհիւ, երկրաշարժից մնաւ սուած ազգաբնակութիւնն ազատուեց վերահաս կորուստից: Երկու մասնաժողովները իրանց տրամադրութեան տակ զրամական առատ միջոցներ ունէին և կարողանում էին իսկոյն, առանց յետաձգելու, բաւարարութիւնն տալ այն բոլոր պահանջներին, որոնք բղխում էին բացառիկ և անօրինակ դրութիւնից: Կազմակերպուեց բժշկական օդնութիւն, որ տարափոխիկ հիւանդութիւնների տարածման առաջն առաւ: Բացուեցին ձրի ձաշարաններ, ուր մարդիկ ստանում էին կերակուր: Մտածելով առօրեայ կարիքների մասին, մասնաժողովները գովելի հեռաւանութեամբ նկատի առան և այն անյետաձգելի պահանջները, որոնց առաջադինում էր վահասուած ազգաբնակութեան ապագան: Հարկաւոր էր տալ ժողովրդին գարնանացան անելու միջոցներ,

և որ գլխաւորն էր, վերանորոգել քանդառած բնակարանները, որպէսզի ժողովուրդն ապրելու տեղ ունենայ:

Առաջին հարցը հեշտութեամբ լուծուեց: Մասնաժողովի հաշուով Հիւսիսային կովկասում գնուեց բաւական չափով հացահատիկ և ձրի բաժանուեց ազգաբնակութեան իբրև սերմացու: Աւելի դժուար էր բնակարանների հարցը, որ դժբախտաբար, անկարելի եղաւ վերջացնել տարուայ ընթացքում: Օգտուելով պատեհութիւնից, մասնաժողովը հարկ համարեց և մի կուլտուրական գաս տալ հայ գիւղացիներին, շինելով նրանց գետնափոր խրճիթների փոխարէն ժամանակակից մարդկութեան վայել բնակարանները, որոնց մէջ ապրում է հայ գիւղական ժողովրդի ամենամեծ մասը: Մեր գիւղական բնակարանները շարունակում են մնալ նոյնը, ինչ եղել են դարեր առաջ. զետնի տակ փորած խոնաւ, օդից և լոյսից զուրկ որչեր են դրանք, ուր մարդիկ ապրում են անասունների հետ: Մասնաժողովը արդէն շինել է տուել մի քանի հատ տներ և ծրագրել է ներկայ տարում կառուցանել տալ 162 տուն:

Մինչև այժմ էլ զեռ շարունակում են նուէրները, թէն, ի հարկէ, փաքրիկ քանակութեամբ: Ընդհանուր առմամբ նուիրատութիւնները 200 հազար ոուրիշ աւել են: Գիլաւոր մասնաժողովը շուտով կը հրատարակէ իր հաշիւները և մենք կը ծանօթայնենք նրանց հետ մեր ընթերցողներին:

Եւ այսպէս, Ախալքալաքի գաւառը, չորհիւ հասարակական աջակցութեան, առանց մեծ ցնցումների ազգատուեց բնական պատահարի սոսկալի աւերմունքներից: Բայց դա մի թշուառ ու ճնշուած գաւառ է առհասարակ: Մամուլի մէջ երեսն հանունցին բազմաթիւ պերճախօս փաստեր, որոնք ցոյց էին տալիս, թէ որպիսի հրէշաւոր չափերի է հասել վաշխառութիւնը Ախալքալաքի գաւառում: Գիւղական անկուշտ ազգութեան սորուկ մի ազգաբնակութիւն է դա, որ այս բոսէին հիւծում է ահաղին պարագերի տակ: Որ վաշխառութիւնը մեր բոլոր գաւառների համար մի սոսկալի չափէ է, մի անբուժելի խոց, դա ամենքին է յայտնի: Բայց եթէ Ախալքալաքի գաւառը մի առանձին տիսուր հոչակ ստացաւ, դրա պատճառն այն է, որ այստեղ դոնուեցան մարդիկ, որոնք կուր սկսեցին գիւղական վամպիրների դէմ, յականէ յանուանէ, մատնելով նրանց հասարակական գատաստանին մամուլի միջոյով: Այդ արշաւանքը այնքան ուժեղ էր, մամուլի կատարած գնը (զիլսաւորապէս «Մշակ» լրագրի) այնքան դրական, որ գիւղացիներին ծծող ազրուկների վրայ մի տեսակ ան իջաւ: Այստեղից հետեւում է, թէ ինչ միջոց-

ներով պէտք է կառւիլ գիւղական այդ սոսկալի չարկքի դէմ: Ի հարկէ, լոկ լրագրական արշաւանքով չէ կարելի արմատախիլ անել մի չարիք, որ, ինչպէս վկայում է Պատարքոս, գոյութիւն ունէր դեռ մեր Տիգրան թագաւորի ժամանակ: Ամենակարուկ միջոցը այն կը լինի, որ կը վերացուեն վաշխառութիւնը ծաղկեցնող, նրան մի անխուսափելի չարիք դարձնող տնտեսական պայմանները: Բայց մամուլի կատարած գերն էլ առայժմ, քանի որ անկարելի է արմատական միջոցներ գործադրելը, բաւական աչքի ընկնող է, քանի որ զսպում է աղբուկներից շատերին. իսկ զսպել հեշտ է, նկատի ունենալով վաշխառութիւնը պատճող օրէնքը:

Կարծէք բաւական չէին սրկաշարժի պատճառած աւերանքները, և ահա ամառը Ախալքալաքի գաւառը այցելում է մի նոր դժբախտութիւն. հացի բզէզը ոչնչացնում է արտերը, պատճառելով ահագին վնասներ: Շատ գիւղեր գուրկ մնացին հունձից: Իր անհիւրընկալ բնութեան հարուածներին սովորած գիւղացին չը կարողացաւ դիմանալ այս նոր աղէտին: Առաջներում ինչ էլ լինէր, ախալքալաքցին իր հողից չէր բաժանելում և գաղթականութիւնը անյայտ էր նրան: Բայց այժմ տնտեսական ճղնաժամը Ախալքալաքի գաւառումն էլ անհրաժեշտութիւն դարձրեց գաղթելը: Գիւղացիները ցրւում են զանազան կողմեր, զլխաւորապէս գաղթում են թիվլիս, ապրուստի միջոց որոնելու համար: Թէե նոր աղէտը ուսումնասիրողները միարեւան վկայում էին, որ Ախալքալաքի գաւառի վնասուած տեղերը չը պիտի կարողանան առանց դրսի օգնութեան ապրել, բայց մինչև այժմ ոչ մի նպաստ չը տրուեց գիւղացիներին: Վերջին տեղեկութիւններին նայելով, որոնք տալուած են «Բավեազ» լրադրում, հացի բզէզի հասցրած թշուառութիւնը այն աստիճան մեծ է, որ համարեա սովէ է սկսուել դժբախտ գաւառում: Աղաչում են օդնել: Դարձեալ մեր հասարակութեան առաջդրուած է՝ իր բարեգործութեամբ մի ժողովուրդ ապրեցնելու անհրաժեշտութիւնը: Տեսնենք այս անդամ ինչպէս կը վերաբերուի նա իր այդ պարտականութեան:

Երկրաշարժ եղաւ և կարսի շրջանում, յունիսի 27-ին: Բայց սա այնքան աղետաբեր չէր: Վնասուեցին երեք գիւղեր, որոնցից մէկը, ամենից շատ վնասուածը, Բերնա հայաբնակ զիւղն էր: Տեղական նահանգապետի կարգադրութեամբ կազմուեց մի նպաստող յանձնաժողով. սակայն վնասները այնքան քիչ էին, որ հարկ չեղաւ դիմելու հասարակական օդնութեան: Կարսում փոքր ի շատէ աչքի ընկնող երեսյթ պէտք է համարել այն, որ

10 հոգի կազմում են գիւղատնտեսական-արդիւնաբերական մի ընկերակցութիւն։ Մենք յիշատակում ենք այս մասնաւոր, ան-նշան գէպքը՝ խրախուսելու, յորդորելու նպատակով։ Մեր գաւառների համար ահազին գործեր կարող են կատարել այդ-պիսի փոքրիկ ընկերակցութիւնները, եթէ միայն գործը դնեն լաւ հիմքերի վրայ։ Հայերը առհասարակ ընդունակ չեն ընկե-րական սկզբունքով կուլտուրական գործեր առաջ տանելու։ Նրանք միայն առեարի մէջ են կարողացել ընկերութեամբ գոր-ծելու անհրաժեշտութիւնն զգալ։ Նաւթային արդիւնաբերութիւ-նը եկաւ մի նոր զարկ տալու ընկերակցութիւններ կազմելու գաղափարին։ Բայց երկիրն արդիւնաբերելու, գիւղատնտեսու-թիւնը զարդացնելու նպատակ ունեցող ընկերակցութիւններ մնանում չը կան։ Թէս հայը սիրում է պարծենալ իր կուլտու-րական զարգացումով, բայց վատ չէր լինի, եթէ նա օրինակ վերցնէր այս գէպքում մեր հարևան վրացիներից։ Վրաստանում, առաւելապէս Քութայիսի նահանգում, ինչպէս լուսմ ենք, շատ զարգացած են գիւղատնտեսական ընկերակցութունները. Պը-րանք փոքրիկ մարմիններ են, միահամուռ ջանքերով և փոխա-դարձ աջակցութեամբ չորացնում են ծահիճները, ջուր են առ-նում անջրդի տեղերը, մշակում են գիւղատնտեսական որ և է ձիւղ և առհասարակ ջանք չեն խնայում իրանց մայր-հողը պտղաւէտ և արդիւնաւոր դարձնելու համար։ Մենք յոյս ու-նենք թէ կարող կը լինենք մի ուրիշ անուամ վերագանակ այս կարենոր և համակրեշի գործին։ Առայժմ կ'ասենք, որ ամենայն խրախուսանքի և համակրութեան արժանի է կարսի մէջ սկսած գործը։ Մենք, հայերս, պիտի հասկանանք, որ նաւթային հողեր շահագործելը, միկիօններ բերող ֆօնտանների ևտեից վազելը, դեռ բարեբախտութիւն չէ մեր հայրենի երկրի համար, եթէ նա շա-րունակ պիտի մոռացուած մնայ։

Կարսից մօտ գտնուող Ալեքսանդրօպօլ քաղաքը մի առան-ձին գործունէութիւն չէ ցոյց տուել։ Մեր գաւառական քաղաք-ներից այժմ պէտք է խիստ պահանջներ անել, քանի որ նրանք ունեն այժմ ինքնավարութիւն։ Ալեքսանդրօպօլի քաղաքային վարչութեան լաւ գործերից են. աղքատների խնամատար ըն-կերութիւնը և զբաղարան-ընթերցարանը, որոնք բացուեցան անցեալ տարի։ Ինչպէս լսում ենք, նոյն վարչութիւնը աշխա-տում է նոյնպէս, որ քաղաքում բացուի միջնակարգ դպրոց—մի բան, որի իրագործումը, անկասկած, պատիւ կը բերէր այդ հայաբնակ քաղաքին։

Ուշագրութեան արժանի է մի հանգամանք, երբ շինուում

Էր կարսի երկաթուղին, ամենքս էլ կարծում էինք որ ստոյգ ու յարմար հաղորդակցութիւնը կը բարձրացնէ երկրի սնտեսական գրութիւնը, կը մտցնէ բնակիչներին արդիւնագործութեան նոր և անծանօթ շրջանների մէջ: Բայց այդ ակնկալութիւնները, գոնէ առայժմ, չարդարացան: Երկաթուղին ոչ միայն չը նպաստեց, այլ ուղղակի սկսեց վնասել երկրին: Ծատ գիւղեր զըրկուեցան իրանց ապրուստի միջոցներից, այն է ծանրոցքներ տեղափխնելու, փայտ վաճառելու հնարաւորութիւնից: Այս մասին բարձրացած գանգատաները, ի հարկէ, չեն կարող ապացուցանել, թէ երկաթուղին, ուրեմն, անհարկաւոր էր երկրին: Թէն մենք առայժմ տեսնում ենք միայն բացասական կողմեր, թէն երկաթուղու շնորհիւ Ալէքսանդրօպօլին ու նրա գաւառը սկսել են դատարկուել (ով փռքը ի շատէ կարողութիւն ունի, գնում է հագու կամ թիֆլիս, իսկ տանը մնում են միայն անապահով, արհեստաւոր մարդիկ), բայց և այնպէս, մենք պէտք է յոյս ունենաք որ երկաթուղին կը կերպարանափոխէ իրերի զրութիւնը, և ազգաբնակութիւնը միջոցներ կը գտնէ իր կացութիւնը լաւացնելու համար:

Երեւանի քաղաքային ինքնավարութիւնը երկար զբաղւում է ջրանցքի հարցով, թէն վերջնական լուծում տալ այդ հարցին չը կարողացաւ: Անկարող եղաւ նա կոռւելու և հացի արուեստական թանգութեան դէմ, սանձահարել հայթուխների կամայականութիւնը, որից առաջանում էին դանազան անախորժութիւններ ազգաբնակութեան համար: Բայց ում է զրադարանընթերցարան: Առհասարակ երեանը ցոյց է տալիս մի քանի նշաններ, որոնք լաւ ապացոյց են թէ այդտեղ հաստատուել են առաջադիմական հոսանքները: Այսպէս, ամառուայ սկզբում էջմիածինը կարգադրեց հոգաբարձական ընարութիւններ կատարել թեմական դպրոցների համար: Այս անգամ մոցուած էր մի կղերական նորութիւն, հոգաբարձուների թւում պիտի լինէին և երկու քահանաներ: Ընտրութեան գործը ամենից առաջ սկսուեց երեանում, ժողովրդի կողմից պատգամաւորութիւն գնաց էջմիածին՝ խնդրելու որ ոչնչացուի ոչ մի հիմք չունեցող կարգադրութիւնը: Զը ստանալով այնտեղ բաւարար պատասխան, ընտրողները այնպիսի գրութիւն ստեղծեցին, որ քահանաները հրաժարուեցան հոգաբարձական սկաշտօն ընդունել: Եւ երեանում չը գործադրուեց այդ նորմուծութիւնը. Երեանը մինչև իսկ թիֆլիսից բարձր հանգիսացաւ այդ հարցի մէջ:

Սովորական անտարբերութեան և անշարժութեան մէջ թաղուած մնաց Ղարաբաղի մայրաքաղաք Շուշին: Միայն աչքի ընկնող երևոյթը այնտեղ այն էր, որ բէալական դպրոցի շինութեան հիմքը գրուեց: Շինութիւնը, ինչպէս յազանի է, յանձն է առել կառուցանել շուշեցի հարուստ Առափելեանը, որ նշանակել է այդ նպատակով 100 հազար ոռութիւ: Քաղաքային վարչութիւնը մի կերպ քարշ էր տալիս իր գոյութիւնը, անկարող լինելով որ և է ստեղծագործական չնորդ ցոյց տալ: Փակուեց Շուշու հայոց բարեգործական ընկերութիւնը, նրա գրադարանը յանձնուեց քաղաքին: Նահանդական վարչութիւնը թոյլ տուեց քաղաքին բաց անել այդ կրթական հիմնարկութիւնը: Բայց քաղաքը չը կարողացաւ կամ չը կամեցաւ մի ամբողջ տարուայ ընթացքում բաց անել գրադարանը, որի պահպանութիւնը ընդամենը պահանջում է 600—700 ոռութիւ: Շուշու յետամնացութեան մի նշանն էլ այն է, որ այնտեղ թեմական դպրոցի համար հոգաբարձուներ ոչ թէ ընտրուում էին, այլ նշանակուում: Դա առաջին, անօրինակ փորձն էր վերջին քառասնամնակի մեր դպրոցական պատմութեան մէջ: Ամառը այնտեղ էլ նշանակուեցին հոգաբարձական ընարութիւններ, բայց առանց քահանաների մասնակցութեան, որովհետև հողենոր կառավարութիւնը գտել էր որ Շուշում չը կան այդ պաշտօնի համար արժանաւոր քահանաներ—մի հանգամանք, որ շատ լաւ է բնորոշում մեր ժողովրդի գրութիւնը:

Սնդրկովկասեան մի շարք քաղաքներ ու բաղմամարդ տւաններ մեզ բոլորովին անյայտ մնացին անցեալ տարուայ ընթացքում և ներկայացրին մեր երկրի, այսպէս ասած, «մնուած կէտերը»: Այսպէս են, օրինակ, Գանձակը, Հին-Նախիլիանը, Ազգուիսը, Ախալցիան, Արտուինը, Սրբահաննը, Նուխին, Նամակին և այլն: Գուցէ նրանք էլ ունեցել են ուշագրութեան արժանի գործեր, բայց լրագրութեան մէջ արձագանք չեն գտել այդ գործերը: Մենք, ի հարիէ, ի նկատի չունենք անվերջ քահանայական, տիրացուական և երեցփոխանական վէճերը, որոնք կան ամեն տեղ, ուր հայեր են ապրում և որոնց մասին ահազին ազմուկ և իրարանցում բարձրացնելը մեր գաւառական թղթակիցների սիրած գործն է:

Փոքրիկ և համեստ Կաղզուանը տարուայ վերջերում ունեցաւ մի բաւական հետաքրքրական վէճ: Մի հարուստ մարդ յանձն էր առել իր հաշուով վերջացնել հայոց եկեղեցու կիսատ մնացած շինութիւնը: բայց մեր բոլոր «բարեչնորհներին» առհասարակ յատուկ է մի շատ անհամակրելի յատկութիւն—իրանց արած բարեգործութիւնների հաշուով բռնանալ հասարակական

իրաւունքների վրայ, պահանջել որ բարերարուող հասարակութիւնը փոխարէնը հատուցանէ իր հլու կամակատարութեամբ, կամ, ուրիշ խօսքով, մի կերպ ստրկանայ բարերարին։ Այս հողի վրայ էլ կաղզուանի հասարակութիւնը ընդհարումներ ունեցաւ եկեղեցի կառուցանող հարուստի հետ։ Մենք առայժմ չենք խօսի գործի էութեան մասին, կը սպասենք մինչև որ լաւ կը պարզուեն բոլոր հանդամանքները։ Բայց մի բան, որ պէտք է այժմ էլ մատնանիշ անել, հասարակութեան այն բուռն հետաքրքրութիւնն էր, որ յարուցեց այդ վէճը։ Մի առանձին հաճութեամբ ենք արձանագրում այն, որ կաղզուանի հասարակութիւնը դիմեց ազգու բողոքների՝ իր իրաւունքները պաշտպանելու համար։ Հասարակական այնպիսի աշխոյժ հոսանքներ, որոնք երեան եկան կաղզուանում եկեղեցու շինութեան գործում, սակաւադէալ երեսյթներ են մեր գաւառների ընդհանրապէս ճահճաղած կեանքի մէջ։

Բարումը անցեալ տարի մի նշանաւոր քայլ արաւ. այնտեղի հայ համայնքը իրականացրեց քահանաներին ոռոճիկ նշանակելու հարցը, որ վաղուց հասունացած է մեր մէջ և սպասում է իր լուծման։ Հայերի մէջ այդ նորմուծութիւնը մեծ ուշադրութեան արժանացաւ և առաջացրեց կարծիքների փոխանակութիւն։ Եւ որովհետև իրագանչիւր նորութիւն սարսափեցնում է ժողովրդի մէջ ապրող պահպանողական, մտավախ տարրերը, այդ պատճառով էլ Բաթումի մէջ սկսուած գործը որքան համակրութեան արժանի, օրինակելի մի բէֆօրմ համարուեց շատ շատերի կողմից, այնքան էլ եթէ ոչ աւելի, պահպանողական վայնասուններ պատճառուց։ Ամենից առաջ այդ նորութեան դէմ խօսողները թիւրքահայերն էին, որոնք գտնում էին որ քահանային ոռոճիկ տալը հակառակ է հայոց եկեղեցու աւանդութիւններին և կարգերին, ուրիշ խօսքով, որ հայոց եկեղեցին նորիրագործել է մուրացիկ քահանայի գոյութիւնը մեր մէջ։ Մեղանում նոյն հարցը դրուեց նախ Ալէքսանդրօպօլում և ապա Երեանում, բայց այդ երկու քաղաքներում էլ վերջնական լուծում չը ստացաւ։ Պէտք է խոստովանել, որ հարցը լաւ չէ ուսումնասիրուած և ժողովրդի համար չափազանց շատ մուժ կողմեր ունի, այդ պատճառով էլ մենք չենք տեսնում լուրջ վերաբերմունք դէպի գործը, գիտակցութիւն։ Յամենայն դէպս, կարող ենք վստահութեամբ ասել որ մեր ժողովրդի առաջ դրուած է բարեկարգութեան մի նշանաւոր հարց, որի բաւարար լուծումը պիտի սպասենք մօտիկ ապագայից, եթէ ի հարկէ, նա չը խլանայ և գտնէ բարեկարգութեան մշակողներ։ — Բաթումի կեանքի աշքի ընկնող մի նորութիւնն էլ ժողովրդական ձրի զրադա-

րան-ընթերցարան բաց անեն է: Որքան յիշում ենք, Անդրկովկասի ոչ մի անկիւնում գեռ գոյութիւն չէ ստացել մի այսպիսի հիմնարկութիւն:

Գաւառական քաղաքների թւում պիտի դնենք նաև հարուստ ու հոչակուած Բագուն, թէն նա հակայական հասակ քաշելով օրերով, շուտով, երեխ, շատ հեռու կը թողնէ իր եւտեռում Կովկասեան մայրաքաղաք Թիֆլիսը: Բագուի արդիւնաբերական գործունէութեան բոլոր հանգամանքները մենք, ի հարկէ, չենք կարող զետեղել մեր այս թուցիկ տեսութեան մէջ: Բայց և այսպէս, պիտի մի քանի գծեր հանենք այդ վաճառաշահ քաղաքից, որ ներկայումս ահազին գեր է կատարում մեր երկրում, դէպի իրան գրաւելով բոլոր փոքր ի շատէ աչքի ընկնող ոյժերը, դառնալով օրինակ և իդէալ մեր բոլոր քաղաքների համար:

Անցեալ տարի Բագուում գետ շարունակուում էր տենդոտ սպեկուլիացիան, որի ձգութեան էր օգտաւէտ առուծախով մնձ հարսաութիւններ ձեռք բերել: Այդ իրարանցումը, միլիօնների այդ սարսափելի ծարաւը հրապարակ էին հանում այնպիսի բարյական այլանդակութիւններ, որոնք ընդունակ են ապշեցնելու ամեն մի մարդու, որի համար կան յայտնի հասկացողութիւններ վատի և լաւի մասին: Նաւթի գինը շատ բարձր էր և փոքր ի շատէ աջող գործ ունեցողը վաստակում էր առասպելական հարսաութիւններ, գրգռելով նաւթային մայրաքաղաքում ամեն կողմերից հաւաքուած բազմութեան ախորժակը: Բայց Բագուի մէջ տիրած բարելոնական իրարանցումը, այստեղ հաստատուած Սոդոմ-Գոոմորը միանդամայն չը մթնացրին այդ արդիւնաբերական խոշոր կենդրունի մթնոլորտը և մենք կարող ենք մի քանի հատ միթարական երեսոյթներ արձանագրել:

Ամենից առաջ նշանակենք բանուղների գրութեան մէջ մոցրած մի վոփոխութիւն, որ թէն այդ չարքաչ և մոռացուած դասակարդի համար փոքր ի շատէ մարդավարի կացութիւն չէ ստեղծում, բայց գոնէ իբրև առաջին քայլ՝ ունի իր նշանակութիւնը: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործարանական կեամնքը բազմաթիւ վտանգներ ունի պահած աշխատող դասակարգի համար, վտանգներ, որոնցից հարիւրաւոր գժբախտ մարդիկ վեաստում են այնպէս, որ այլև գործելու անընդունակ են դառնում, — նաւթարդիւնաբերողների ժողովն ընդունեց բանուղներին ապահովագրելու պարագագիր կարգը: Դրա չնորհիւ ստեղծում է գոնէ այն միթարդիւնը, որ գործարանում ուտ, ձեռք, աչք կորցրած մարդը կ'ունենայ փոքր ի շատէ ասպահովութիւն և դուրս չի նետուի փողոց իբրև միանդամայն ան-

պէտք մի իր:—Զը լուծուած մնացին նոյն բանուորներին վերաբերուող մի քանի այլ հարցեր. օրինակ նրանց բնակարանների, առողջապահութեան հարցերը, որոնք աւելի կարեոր և կենսական նշանակութիւն ունեն տասնեակ հազարաւոր աշխատողների համար:

Բագուի հայերի գործերից նշանակենք մի քանի գծեր: Նոր կանոնադրութեամբ վերակազմուած Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը բաց արեց ձրի ճաշարան ազքատների համար, մի գործ, որ պէտք է իսկական բարերարութիւն համարել, քանի որ Բագուի պէս մի խոչոր արդիւնաբերական կենդրոնում, ինչպէս և ուրիշ այդպիսի տեղեր, ամենափարթամ և գեղիս հարըստութեան կողքին ապրում և տանջւում է ամենասոսկալի աղքատութիւնը:

Աւելի աչքի ընկնող և պատուաբեր իրողութիւն է այն, որ Բագուում գոյութիւն ունի հայոց մշտական թատրոն, այն էլ այնպիսի վիճակում, որ կարողանում է իր մէջ կենդրոնացած պահել հայ բեմի բոլոր փոքր ի շատէ աչքի ընկնող ոյժերը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է թատրոնի նշանակութիւնը Բագուի հայ հասարակութեան համար: Բայց մենք այստեղ արձանագրում ենք և այն հանգամանքը, որ Բագուն թատրոնական գործում օգնում է և մեր գաւառներին: Անցեալ տարի էլ, սեզօնը վերջանալուց յետոյ, գերասանական ընկերակցութիւնը զնաց ներկայացումներ տալու զանազան քաղաքներում: Նախ նա ուղևորուեց գէպի Ռուսաստան. և եթէ այնպիսի քաղաքներ, ինչպէս են Նոր-Նախիջևան, Եկատերինօդար և այլն տեսան տիկին Սիրանոյշի պէս մի տաղանդ, դա չնորհիւ Բագուի թատրոնի էր: Ամառը խումբը զնաց Շուշի. այս անգամ նրա հետ չէր տ. Սիրանոյշը, բայց զրա փոխարէն գերասանները Շուշում սկիզբ դրին ժողովրդական ներկայացումների. մի քայլ, որ մենք ողջունում ենք ամբողջ որտով:

Այստեղ չենք կարող չը յիշատակել և այն, որ Թիֆլիսում գործող հայ գերասաններից մի քանիսը ամառը ներկայացումներ էին տալիս Սղնախում, Թեղաւում, Զաքաթալում: Աւելորդ է ասել, թէ որքան մեծ բարերարութիւններ են այդ գերասանական ճանապարհորդութիւնները մեր մնուած ու զրկուած գաւառների համար...

Ուր կան դրամական մեծ միջոցներ, այնտեղ էլ պիտի կատարուեն հասարակական օղուածը նկատի ունեցող բարեգործութիւններ: Սա բնական պահանջ է: Անցեալ տարի պ. Յ. Թումայեանցը 40 հազար ոուբլի նուիրեց Բագու քաղաքին՝ մանկական հիւանդանոց բաց անելու համար: Աւելի նշանաւոր ե-

րեռյթ էր հանգուցեալ Ենովք Բուդաղեանի կտակը, որով զանարան բարի նպատակների յատկացւում էր 560,000 ռուբլի մի դումար: Կտակն ընդհանուր ուշադրութիւն գրաւեց մանաւանդ իր լայն մարդասիրական հիմքերով. այդուեղ խարութիւն չէր դրուած «հրէայի և հեթանոսի» մէջ. հանգուցեալի առատաձեռնութիւններից իրաւոնք ունի օգտուելու ամեն մի տառապող, կարօտ մարդ:

Արձանագրելով այս լուսաւոր երեսյթները, մենք չենք կարող չաւելացնել, որ Բագւում աւելի շատ են մուժ քծեր, ըստուերներ: Տարուայ վերջում քննուում էր մի դատաստանական գործ. նաւթ գողանալու մէջ մեղադրուում էին մի շարք մարդիկ, լուսաբանուեցան շատ և շատ խայտառակութիւններ: Բանից դուրս եկաւ, որ նոյնիսկ միլիօնատէրներ ամօթ չէին համարում ուրիշից նաւթ գողանալը: Այս հրէշաւոր բարքերից մննք, հեռաւոր մարդիկս էլ, պիտի կարմրենք...

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երևուն տարի առաջ հօհաննէսբուրդ քաղաքը Հարաւային Աֆրիկայում գեռ ևս գոյութիւն չունէր աշխարհիս վրայ և Վայտօտերսրանդի շրջանը մի ամայի և անմարդաբնալ անապատ էր: Ոչ մի պետական անձը, որքան էլ հեռատես լինէր նա, որքան էլ ազգերի բախտը նախագուշակելու ձիրքով օժտուած լինէր, չէր կարող մարդարէանալ, որ Վայտօտերսրանդի կամ, ինչպէս կրծատ կերպով անուանում են այժմ, Բանդի այդ ամայի անապատում կարճ ժամանակի մէջ սկիզբն կ'առնի ու կը զարդանայ մի բազմաբնակ, լայնանիստ քաղաք, որին վիճակուած կը լինի տասն և իններորդ դարի վերջին երկու տարուայ ընթացքում ահագին քաղաքական դեր խաղալ մարդկային պատմութեան մէջ:

«Ուր գէշն եղիցի, անդ և ժողովեացին արծուիք»: Ազգերի համար այդ գէշը միշտ էլ եղել է ոսկին, և նրա շուրջը իրար դլուխ կոտրելով, իրար արնաշաղախ անելով հաւաքուել են արծիւները... Անցած դարի 80-ական թուականների սկզբում, երբ լուր տարածուեց, թէ Տրանսվալի հանրապետութեան Բանդի շրջանում գտնուել են առասպելական հարստութեան ոսկի հանքեր, աշխարհիս ամեն՝ կողմերից, մանաւանդ Անգլիայից, թափուեցին այնտեղ բախտախիննիրներ՝ կարճ ժամանակուայ մէջ հարստութիւններ դիզելու դիտաւորութեամբ: Հիմնուեց հօհաննէսբուրդ քաղաքը, որ տասը տարի իր սկզբնաւորութեան օրից յետոյ ունէր արդէն 102,708 բնակիչ, որոնք քաղաքէս պարապում էին Բանդի հարուստ ոսկեհանքերի շահագործութեամբ: 1892 թուին այդ ոսկեհանքերից ստացուեց 1,210,868 ունց ոսկի, 1895-ին՝ 2,277,640 ունց, իսկ 1897-ին՝ 3,034,678 ունց, այսինքն աշխարհիս վրայ այդ թուականին ստացուած ոսկու ընդհանուր քանակութեան $\frac{1}{5}$ -ական մասից աւելի: Զը հաշուելով Աֆրիկայի սեամորթներին, որոնք կաղմում էին քաղաքի ազգաբնակութեան կէսը և որոնք օրակարձով

բանուորներ են, բնակիչների միւս կէսը բաղկացած է, բայց մեծի մասին, անգլիացիներից—ոյտենդիրներից (օտարերկուացիներից):

Թանդի շրջանի ապագայ Կորսուարեր գերը Տրանսվալեան հասարակութեան համար չէին նախագուշակում և երկրի բնիկ տէրերը՝ բօէրները: Այս նահապետական երկրագործ և խաչնարած ժողովուրդը, որ մողեռանդութեամբ սիրում է իր զաշտնու աղարակը, չը գրաւուեց ամենեին ոսկեհանքերով հարստանալու հետա միջոցով, չը թողեց իր գիւղատնտեսական արդար աշխատանքը ի սէր ոսկեհանքերի, թէև նրանք գտնւում էին Տրանսվալի հողի վրայ: Հանքագործութիւնը ամրողջովին անցաւ օտարների՝ ոյտլնդէրների ձեռքը:

Բանն այն է, որ թէ բօէր գիւղատնտեսները և թէ հանգագործ դրամատէրերը հաւասարապէս կարօտ էին սեամորթների աշխատանքին: Բօէրները, որպէս ընդարձակ հողերի տէրեր, սնկարող էին անձնական աշխատանքով կատարել այն ամենը, ինչ որ պահանջւում էր կատարել նրանց աղարակներում: այս պատճառով նրանցից ամեն մէկը պահում էր բաղրաթիւ սեամորթ բանուորներ: Նոյն բանուորները անհրաժեշտ էին և հանքագործներին և առանց սեամորթների անշուշտ ոչ մի աշխատանք չէր կարող կատարուել հանքահորերում: Սկսուեց կատաղի տնտեսական մրցում բօէր աղարակատէրերի և հանքագործ օտարների մէջ: Սմէն մէկը նրանցից աշխատում էր իր կողմը զրաւել սեամորթ բանուորներին: Իրանք սեամորթներն աւելի գերազաս էին համարում ծառայել բօէրների աղարակներում և մեծ դժուարութեամբ էին գնում Շանգի շրջանը, ուր բայցի հանքահորերում ծառայելու տաժանելի աշխատանքից, նրանք անձնատուր էին լինում նաև արբեցողութեան ու ոգելից խմիչքների տալիս իրանց վերջին կարողութիւնները:

Բանուորներ զրաւելու համար՝ հանքագործները ստիպուած էին շարունակ աւելացնել բանուորական օրավարձը, այսինքն շարունակ պակասեցնել իրանց արդիւնքները: Տնտեսական մրցումը քանի գնում, աւելի ևս սաստկանում էր գիւղատնտեսների երկրի տէրերի և օտար հանքագործների մէջ: Տրանսվալի հանքապետական կառավարութիւնը, բնականաբար, ամեն կերպ աշխատում էր պաշտպանել գիւղատնտեսութեան շահերը ի վեաս հանքագործների: Մի շարք օրէնքներով նա մաքսային բարձր սակագներ էր նշանակել գիւղատնտեսութեան օտար արդիւնքների վրայ՝ ներքին արդիւնքներութիւնը հովանաւորելու նպատակով, նշանաւոր չափով տուրք էր վերջնում հան-

քային արդիւնքներից և այդ գումարներով օգնութեան հասնում գիւղատնտեսներին:

Հանքագործների գրութիւնն աւելի ևս ծանրացնում էր այն հանգամանքը, որ սոկու վերին շերտերը հետզհետէ սպառւում էին, հարկաւոր էր փորել աւելի խորը՝ ստորին շերտերին հասնելու հտմար, հարկաւոր էր աւելի աշխատանք գործ դնելուց զատ՝ դործածել նաև աւելի կատարելագործուած մեքենաներ, ուրեմն և հետզհետէ աւելացնել ծախսերը: Հանքագործական մօտ 300 ընկերութիւններից շատերը հարկագրուած էին պակասնեյնել այն առատ գիվիդնտները, որ նախկին տարիներում տալիս էին նրանք իրանց բաժնետէրերին: Հանքագործութիւնը, չնորհիւ այս հանգամանքների, գիմում էր գէպի անկումը՝ սպառնալով ի կորուստ մատնել այն ահագին դրամագլուխները, որոնք գըրուած էին Բանդի ոսկեհանքերը շահագործելու վրայ: Անհրաժեշտ էր գիմել մի արտակարգ միջոցի՝ վերահաս կորստից ազատուելու համար:

Ի հարկէ, եթէ գիւղատնտեսների և արդիւնագործների մրցումը սահմանափակուէր լոկ տնտեսական ասպարէզով, այն ժամանակ այդ կարգը կը ստանար այն կերպարանքը միայն, ինչ կերպարանք որ ունի նա այժմ, օրինակ, Գերմանիայում, ուր նոյնպէս կատաղի մրցումն կայ խոշոր կալուածատէրերի և արդիւնագործների մէջ: Ինքն ըստ ինքնամն տնտեսական մրցումը չէր կարող դառնալ զինուորական ընդհարման անմիջական պատճառ, եթէ նրան չը նպաստէին այլ քաղաքական հանգամանքներ. բայց և այնպէս տնտեսական մրցումը բօէրների և ոյտենդէրների մէջ տարածայնութիւնների այն սկզբնական շարժառիթն էր, որի շուրջը փաթաթուեցին ապա քաղաքական հարցերը. հարցեր, որոնք վազուցուանից ի վեր գոյութիւն ունէին Տրանսվալի և Անգլիայի մէջ և որոնք արգէն մի անգամ, 1881 թուին պատճառ էին դարձել զինուորական ընդհարման այդ երկու պետութեան մէջ:

Փոքրիկ և աննշան Տրանսվալում անգլիացին դժնւում էր այնպիսի դրութեան մէջ, որին բոլորովին սովոր չէր նա, որ բոլորովին չէր համապատասխանում նրա պատմական տրադիցիաներին: Բօէրը երկրի տէրն էր և կարգադրիչը, իսկ, անգլիացին կատարում էր հպատակի գեր: Եւ ահա անզլիացի հանքագործները 1895 թուին կազմեցին մի գաղտնի գաւադրութիւն, իրանց պարագլուխ ունենալով «Աֆրիկայի նապօլէօն»՝ Սեսիլ Բօդսին, ու մի հարուածով կամեցան տապալել բօէրների պետութիւնը և երկրի իշխանութիւնը առնել իրանց ձեռքը: Հէնց այդ գաղտնի գաւադրութեան արդիւնք էր գոկտօր Զէմունի յայտնի արշա-

ւանքը գէպի Տրանսվաալ, որ վերջացաւ ամօթալի պարառւթեամբ անզլիացիների համար։ Դոկտօր Զէմսօնը իր 800 զինակիցներով գերի ընկաւ գեներալ Կրօնիէի ձեռքը և 64 դաւադիրներ ձերբակալուեցին ու բանտարկուեցին Խօհաննէսբուրգում։

Զէմսօնի արշաւանքը չառ բան պարզեց թէ բօէրների և թէ անզլիացիների համար։ Զէմսօնի մօտ դանուած թղթերից, որ նա չէր կարողացել կամ չէր կամեցել ոչնչացնել, բօէրները պարզապէս տեսան, որ դաւադրութեան մէջ խառն էր և անզլիական կառավարութիւնը. նրանք հասկացան, որ Անզլիացի ձգտումն է վերջ ի վերջոյ գրաւել ու ոչնչացնել Տրանսվաալի հանրապետութիւնը, և վաղ թէ ուշ իրանք օրհասական պայքար ևն մղելու Անզլիացի գէմ իրանց անկախութիւնը պաշտպանելու համար. իսկ Տրանսվաալի անզլիացիները հասկացան, որ տեղական միջոցներով, առանց անզլիական զօրքերի օգնութեան, նրանք անզօր ևն բօէրների առաջ։ Այդ 1895 չարաբսխտ տարուանից սկսած թէ բօէրները և թէ անզլիացիները կազմում ևն ապագայ գործունէութեան ծրագիր և ամեն մէկը նրանցից ամենայն եռանդով աշխատում է իրագործել իր ծրագիրը։

Բօէրների ծրագիրն էր զինել երկիրը կատարելագործուած զէնքերով, որքան կարելի է առատ և զաղտնաբար, առանց ցոյց տալու Անզլիացին, որ Տրանսվաալը զինուում է. ոյտէնդէրների և նրանց պարագլուխների ծրագիրն էր գրգռել Անզլիացի հասարակական կարծիքը բօէրների գէմ զլիսաւորապէս կաշառուած մամուլի մի տհաղին բանակի միջոցով։ Երկու կողմերը ևս զործում էին եռանդով։ Եւ ահա 1899 թուին, Անզլիան, առիթ բռնելով ոյտէնդէրների պահանջը բնարողական իրաւունքներ տալու նրանց Տրանսվաալում, Տրանսվաալի բնիկներին դրեց այնպիսի գրութեան մէջ, որ նրանք, իրանց հայրենիքի մօտալուս կորուստը նախատեսելով, ստիպուած էին զիմել մի վերջնական միջոցի, որից խուսափեն անհնարին էր այլն։ Անզլիան կարկագրել էր արդէն 50,000 զօրք ուղարկել գէպի Հարաւային Աֆրիկա և պատրաստում էր կանել բօէրների անկախութիւնը։ Բայցի սրանից՝ բանակցութիւնների ընթացքից, որ տեղի ունէին ոյտէնդէրներին ընարողական իրաւունքներ տալու հարցի վերաբերմամբ Տրանսվաալի և Անզլիացի մէջ, բօէրները պարզապէս համոզուեցին, որ ոչ մի զիջումն չէ կարող գոհացնել Անզլիացին և որ նա անդառնալի կերպով նախառուել է Տրանսվաալի բախտը, կամենալով ձեռք գցել մի այնպիսի երկիր, որ նախ համարեա ամեն կողմից շրջապատուած է բրիտանական տիրապետութիւններով և խախտում է այդ տիրա-

պետութիւնների ամբողջացումը և երկրորդ՝ լի է մեծահարուստ հանքերով։ Զը կամենալով առանց պայքարի զրկուել մի այդպիսի անգնահատելի բարիքից, որպիսին է հայրենիքի անկախութիւնը, բօէրները՝ մասամբ յոյսերն իրանց վրայ դրած, մասամբ կապի և նատալի հօլլանդացիների և մասամբ եւրոպայի միջամտութեան վրայ՝ 1899 թուի հոկտեմբերի 11-ին պատերազմ յայտնեցին Անգլիային։ Տրանսվալին միացաւ և հոգեան Օրանժեան հանրապետութիւնը՝ այն գաշնակցութեան գորութեամբ, որ նախապէս կապուած էր այդ երկու ցեղակից հարապետութիւնների միջև։

Մենք երկար կանգ չենք առնի անդօ-բօէրական պատերազմի մանրամասնութիւնների վրայ, նրանք արդէն յայտնի են լրագիրներից։ Կը ցիւնք միայն, որ համարեա մի ամքով տարի և կէս տեսող պատերազմը բաժանուեց երկու զլիաւոր շրջաների։ Առաջին շրջանն սկսուեց պատերազմի սկզբից և տեսց մինչև 1900 թուի մարտի 1-ը։ Այս ժամանակամիջոցում պատերազմական բախտի աջողութիւնը անընդհատ բօէրների կողմն էր. նրանք պաշարեցին Լէդի-Սմիտ, կիմբերլէյ և Մեֆինգ քաղաքները, տարան փառաւոր յաղթութիւններ անգլիական հողի վրայ, Ստրոմբէրգի մօտ՝ գեներալ Գատէգրի զօրքերի դէմ։ Մագերսիօնդէնի մօտ՝ լորդ Մեթուէնի զօրքերի դէմ և Տագելս գետի ափերին՝ գեներալ Բուլէրի զօրքերի դէմ։ Բօէր կառաւորների այս յաղթութիւնները ասլեցրին և հիացմունք պատճառեցին բոլոր ազգերին։ Նոյնիսկ անգլիացիները խոստովանուեցին, որ այդպիսի խիստ պարտութիւններ նրանք չեն կը եւ ամբողջ ՀԽ գարի ընթացքում։

Պատերազմի երկրորդ շրջանն սկսուեց 1900 թուի մարտի 1-ից, գեներալ Կրօնիէի գերութեան օրից, և տեսում է մինչև այսօր։ Այդ շրջանում պատերազմի բախտը թեքուեց անգլիացիների կողմը, զլիաւորապէս այն պատճառով, որ Անգլիան հարաւային Աֆրիկա ուղարկեց 220,000 զինուորից բարկացած մի ահազին բանակ՝ հմուտ զօրավար լորդ Ռօբէրտսի առաջնորդութեամբ, որի դէմ բօէրները հաղթու 30—35,000 զինուոր աւնէին։ Պատերազմի կերպարանքը փոխուեց բոլորովին։ մեծ բանակներով, ճակատ առ ճակատ մզուող կոփեներից յետոյ՝ նաընդունեց պարտիզանական պատերազմի կերպարանք։ Հասկանալի է, որ բօէրական փոքրիկ զօրաբաժինները չեն կարող արգելք դառնալ անգլիացիներին խուժելու դէպի Օրանժեան հանրապետութիւնը և Տրանսվալ, և լորդ Ռօբէրտսը հետզհետէ գրաւեց Բլումֆոնտէն, իօնաննէսբուրգ, Պրետօրիա և այն առլոր քաղաքները, որոնք գտնուում են երկաթուղային գծերի վրայ։

Բօէրները իրանց յաղթուած ճանաչեցին և երկու հանրապետութիւնների նախագահների միջոցով դիմեցին Անգլիայի մինհարունախագահ Սօլսբիւրիին հաշտութիւն խնդրելու՝ այն պայմանով միայն, որ բօէրական հանրապետութիւնների անկախութիւնը պահպանուած լինի, սակայն Սօլսբիւրի մերժեց ընդունել այդ պահանջը և յայտնեց, որ բօէրները պէտք է ենթարկուեն Անգլիային առանց որ և է պայմանի: Վերջապէս Անգլիան ի լուր աշխարհի յայտնեց իր թագորած ցանկութիւնը և այս փաստը պերճախօս ապացոյց է, որ ոյտենդէրներին ընտրողական իրաւունքներ տալու պահանջը լոկ պատրուակ էր միայն և պատերազմի առի Յ:

Բայց բօէրները չը յուսահատուեցին. Նրանք որոշեցին անընդհատ շաբանակել պատերազմը և միենոյն ժամանակ պատղամաւորներ ուղարկել Եւրոպա և Ամերիկա՝ պետութիւնների միջամտութիւնը խնդրելու համար: Տրանսվալեան և Օրանժեան հանրապետութիւնների պետական գործիչներից բաղկացած այդ ուստաժամաւորութիւնը ոչ մի աջողութիւն չը գտաւ թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում: Անգլիայի այն ազդարարութիւննից յետոյ, որով նա յայտնեց, թէ ամեն մի միջամտութիւն օտար պետութիւնների կողմից անգլօ-բօէրական հարցում նա կը համարէ թչնամական վերաբերմունք գէպի Անգլիան: Այդ անյաջողութիւնից յետոյ բօէրները ուղարկեցին Եւրոպա նոյն նպատակով Տրանսվալի ծերունի նախագահ Պաուլ Կրիւգըն: Սակայն նշանաւոր ծերունին հանդիպեց նոյն անաջողութեան: Ուզիղ է, Ֆրանսիայում, Գերմանիայում և Հօլլանդիայում ժողովուրդն ընդունեց նրան բուռն և անսահման ողեւորութեամբ, արտայայտելով Եւրոպական ցամաքի բոլոր աղքարի զգացմանըները, բայց կառավարութիւնները այդ երեք երկրներում և անձեռնպահ մնացին, իսկ գերմանական կայսրը հռչակեց իրան նաև նրանով, որ չընդունեց այդ մեծ հայրենասէրին և կեօնից յետ գարձրեց նրան... Եւրոպան պարզ և ակնյայտնի կերպով ցոյց տուեց գրանով իր բարոյական անվիճելի մնանկութիւնը:

Եւ մինչև այսօր այդ առասպեկտական հերոս ժողովուրդը շարունակում է կոռուել, կոռուել չը նայելով այն անգութե և անխիզ միջոցներին, որոնց գիմում են անգլիայցիները նրան զըսպելու համար, չը նայելով այն բոց ու հրդեհին, որին մատնուած են նրանց ադրբակները, չը նայելով այն անլուր տանջանքներին, որոնց ենթարկում են նրանց կանաքը և երեխանները:

Ռէիրներով լի >XIX դարի ամենավերջին ոճիրն էր այդ պատերազմը:

Տասն և իններորդ դարը թողեց քսաներորդին մաքրելու և մի այլ քաղաքական կնճռու հաշիւ—չինական հարցը։ Այդ հարցը նոր չէ, դա մի դարաւոր հարց է, որ անցեալ 1900 թուականին ստացաւ մի առանձին սուր կերպարանք։ Սկսած այն հին օրերից, երբ եւրոպացի միսիօնարք առաջին անգամ ոտք կոխեց չինական հողի վրայ՝ իր հետ աւետարանական արտաքին ծիսապաշտութեան հետ միասին տանելով նաև Եւրոպացի անկուչտ վաճառականին, չինական հարցը ծնունդ առաւ և մտաւ խանձարուր։ Որքան աւելի բազմացան միսիօնարները՝ Քրիստոսի այդ սուտաշակերտները Չինաստանում, որքան աւելի կրկնապատկուեց նրանց յանդգնութիւնը չինական կրօնի և ժողովրդական շահերի դէմ, որքան աւելի եւրոպացի վաճառականը պարզեց իր հոգին չինական ժողովրդի և կառավարութեան առաջ՝ շրջելով չինական բաց նաւահանգիստներում օպիումի, հրագէնսքերի կասկածելի որակութեան ապրանքների և դիսլօմատիական սպառնալիքների անհուն քանակութեամբ զինուած, այնքան աւելի չինական հարցը աճեց ու զարգացաւ՝ չինական ժողովրդի զգուանքի և անսահման ատելութեան հողի վրայ դէպի ի օտարերկրացիները։ Իր դարաւոր յարաբերութիւններից եւրոպական քաղաքակրթութեան այդ կարապետների հետ՝ չինական խաղաղ, աշխատասէր, թէն յետամնաց, բայց ոչ անխելք ժողովրդը այն համոզմունքը դուրս բերեց, որ օտարները բացի վիասից, ոչինչ օգուտ չին տալիս Չինաստանին, որ նրանք ոչ թէ իսկական բարիք, այլ նոյնիսկ բարեացակամութեան զգացմունքի նշոյլ անգամ չեն ցոյց տալիս դէպի չինական ժողովրդը։

Այս համոզմունքը աւելի ևս արմատացաւ նրանց մէջ չինեապօնական պատերազմից յետոյ, երբ եւրոպական պետութիւնները տեսնելով այդ հսկայ ժողովրդի զինուորական անգորութիւնը, չը բաւականանալով առետրական այն մեծ օգուտներով, որ նրանք ստանում էին չինացիներից, մէկը միւսից յետոյ սկսեցին գրաւել չինական երկրի զանազան մասերը։ Չինական ժողովրդի համբերութեան բաժակը լցուեց. նա պարզապէս տեսաւ, որ եւրոպացիները ձեռնամուխ եղան մի այնպիսի գործի, որի հետեանքը անխուսափելի կերպով պիտի լինի չինական պետութեան անկումը, այն պետութեան, որ իր անկախ դոյութիւնը պահպանել է անյիշելի ժամանակներից ի վեր։ Կազմուեց Չինաստանում՝ 'ի թիւս այլ ընկերութիւնների նաև մի բազմանդամ ընկերութիւն՝ «Մեծ-բռունցք» անունով, որի նպատակն էր գուրս անել Չինաստանից բոլոր օտարերկրացիներին և ազատել երկիրը մօտալում կորուսից։

Կազմակերպուած էր արդեօք այդ շարժումը չինական կա-

ուավարութեան և չինական պետական անձերի կողմից, թէ դա լոկ ժողովրդական շարժում էր, որին ապա հարկադրուած միացաւ և չինական կառավարութիւնը, չէ կարելի առայժմ հաստատապէս ասել, անկասկած է միայն այն, որ չինական պետական գործիչների և մանդարինների մէջ կային բազմաթիւ անձինք, որոնք տեղեակ էին պատրաստուող յեղափոխութեանը և ամեն կերպ քաջալերում ու աջակցում էին «Մեծ-բռուցքներին»։ Այդ գերում նշանաւոր հսնդիմացաւ մասնաւանդ իշխան Տուան, որ չինական այժմեան թագաժառանգի հայրն է և որ, նոյնիսկ ի սէր իր որդու, պէտք է աշխատէր փրկել չինական գործ կործանումից։

Թէ ինչպէս էին նայում չինական պետական անձինք «Մեծ-բռուցքի» շարժման վրայ, այդ երևում է չինական կայսրի եղբայր իշխան Չուանի խօսքերից որ հազորդեց ուսւաց հեռազրական գործակալութիւնը Պեկինից գեկանմբերի Յ1-ին։ «Մեծ-բռուցքի» շարժումը, ասուած է հեռազրի մէջ, իշխան Չուան անուանում է հայրենասիրութիւն։ Օտար աղջերը շատ տարիներ շարունակ աշխատում էին առևտրական արտօնութիւններ ձեռք բերել, և ձեռք բերելով այդ արտօնութիւնները՝ օգուտներ ստացան, հարստացան և փաթաթեցին Զինաստանի վզին անձեռնոտու դաշնագրեր, սպառնալով հակառակ դէպքում խլել երկրի ամենալաւ մասերը։ Զինական ժողովրդի զայրոյթը հետզհետէ գրգռում էր Վէյ-Խայ-Վէյի և միւս չրջանների կորստեամբ։ Զինացիները վարուեցին ոչ աւելի վատ, քան ֆրանսիացիները մեծ յեղափոխութեան ժամանակ։ Զինացին ամենախաղաղ ժողովուրդն է աշխարհիս վրայ։ Այսպիսի շարժումներ, ինչպէս էր ներկայ շարժումը, չեն կրկնւում, երսի, մի դարի ընթացքում։»

Եւ յիրաւի, իշխան Չուան չէ մեղանչում ճշմարտութեան դէմ։

Զարմանալին այն է, որ օտարերկրեայ պետութիւնների գեսպանները շատ քիչ տեղեկութիւններ ունեին «Մեծ-բռուցք»-ի պատրաստութիւնների մասին և չէին նախատեսում այն մեծ վտանգը, որ սպառնում էր ոչ միայն պետութիւնների շահերին ընդհանրապէս, այլ և մասնաւորապէս իրանց՝ գեսպաններին։ Փոխադարձ նախանձի, ինտրիգների և մրցութեան տեսնդով բռնուած՝ նրանք նկատեցին վտանգը միայն այն ժամանակ, երբ նա արդէն կոփել էր գեսպանաւորների չէմքը և երբ նրա առաջն անհնարին էր։ Պետութիւնների զինուորական նաւերից գեսպանաւորների պաշտպանութեան համար Պեկին հասած

փոքրաթիւ պահակախումբը աւելի ևս զրդոնց չինացիների զայրոյթը, և պատերազմն սկսուեց Զինաստանի ու օտարերկրեայ պետութիւնների մէջ առանց այդպիսի դէսքերում ընդունուած ձեւական պահանջների կատարման: Պեկինի օտարերկրեայ գեսպանատաները ենթարկուեցին պաշարման «Մեծ-բռունցքի» և չինական կանոնաւոր զրոքերի կողմից, պաշարման հէնց սկզբում տեղի ունեցաւ գերմանական գեսպան Կէտտելէրի սպանումը:

«Մեծ-բռունցքի» նշանաբանն էր արտաքսել Զինաստանից բոլոր օտարերկրացիներին, ոչնչացնել գաշնագրերը, յետ առնել նոյն երկիրները, որոնք գրաւուած էին եւրոպական պետութիւններից և փակել Զինաստանի մուտքը օտարների առաջ: Գրգոռուած և կատաղած ամբոխն ամենից առաջ իր զայրոյթի հարուածները ուղղեց օտարերկրեայ այն տարրի դէմ, որ տարիների ընթացքում ամենից աւելի ատելի էր զարձել նրան—միսինարների դէմ, որոնցից շատերը Զինաստանի զանազան շրջաններում զո՞ր զնացին ժողովրդի անզուսպ վրէժինդրութեան: Նրանց եկեղեցիները հրդեհուեցին, վանքերը կողոպտուեցին, մինաստանները աւերուեցին և միայն սակաւ շրջաններում, որոնց նահանգապետները չէին համակրում «Մեծ-բռունցքի» շարժմանը, նրանք կարողացան ազատ մնալ ամրոխի հալածանքներից: Միսինարների հետ միասին հալածում և կոտորւում էին նրանց արբանեակները՝ չինացի քրիստոնեանները, որոնց վրայ չինական հայրենասէրները իրաւամբ նայում էին որպէս ներքին թշնամիների վրայ:

Զինական կանոնաւոր զօրքը, միացած «Մեծ-բռունցքի»-ի կամաւորների բաղմութեան հետ, յարձակուեց նաև չինական-արևելեան երկաթուղային նոր շինուող դծի վրայ և ստիպեց սուս ինժենէրներին և բանուորներին հեռանալ Զինաստանի սահմաններից:

Պարզ է, որ օտարերկրեայ պետութիւնները չէին կարող անսպատիժ թողնել չինական կառավարութեան և ամբոխի այս արարքները, որոնք համարւում էին լոկ միայն չինական ազդի վայրենութեան և երախտամոռութեան նշան դէպի իրանց եւրոպացի բարերարները: Բայց ամենից առաջ պետութիւնների հոգմն ու մտածման առարկան էր ազատել պաշարումից Պեկինի գեսպանատները, ուր գեսպանների հետ միասին փակուած և վտանգի էին ենթարկուած նրանց ընտանիքները, գեսպանատների միւս բազմաթիւ անդամները և փոքրաթիւ պահակախումբը, որոնցից արդէն ոչ մի լուր, ոչ մի տեղեկութիւն չէր ստացում ոչ միայն եւրոպայում, այլ նաև չինական ծովափնեայ քա-

զաքներում, ուր ապրում էին բազմաթիւ եւրոպացիներ։ Պաշարումը տեսեց ամբողջ երկու ամիս, սկսած յունիսի 3-ից մինչև օգոստոսի 2-ը և միայն այս վերջին ամսի 3-ին եւրոպական միացեալ զօրքերին՝ ոռւս գեներալ Լինեհչի հրամանատարութեամբ, աջողուեց գրաւել Պեկինը և աղատել դեսպանատները պաշարումից։

Չինական արքունիքը Պեկինի գրաւումից երկու օր առաջ թողեց մայրաքաղաքը և հեռացաւ դէպի երկրի խորքերը, դէպի Սինաֆու։

Եւրոպացիները բաժանեցին Պեկինը զանազան մասերի, տեղաւորուեցին Պեկինում ինչպէս իրանց սեփական տանը և սկսեցին արիւնով ու սրով խաղաղացնել Չինաստանը։

Սակայն այդ գործի մէջ ամենից աւելի մնած փառք ու պատիւ վերապահուած էր գերմանական ֆէլլումարչալ կօմս Վալդերգէէին, որ գերմանական կայսրի առաջարկութեամբ և միւս պետութիւնների համաձայնութեամբ ստանձնեց օտարերկրեայ զօրքերի զլսաւոր հրամանատարի պաշտօնը Չինաստանում՝ յանձնարարութիւն ստանալով Վիլհելմ II-ից չը ինսայել ոչինչ և ոչ ոքի, նոյնիսկ անձնատուր եղած գերիներին։ Եւ գերմանացի ֆէլլումարչալը, Չինաստան հասնելով, ապացուցեց, որ նա առաջնակարգ կարգապահ զինուոր է և ամենայն սրբութեամբ գիտէ կատարել իր իշխանաւորի հրամանը։ «Պատժողական արշաւանքների» մի ահազին շարքով նա հիմնահատակ կործանեց և աւերեց այն բոլոր երկիրները, ուր միայն կարող էր հասնել եւրոպացու ոտքը։ Չինացի անհամար ամբոխ զոհ գնաց նրա սահնասիրտ վրիժառութեանը, որ չը գիտէր ջողել մեղաւորին անմեղից, երիտասարդին ծերից, սպառազէն պատերազմողին զինաթափ գթութիւն հայցողից։

Եւ Չինաստանում տիրեց համեմատական խաղաղութիւն...

Չինական կանոնաւոր զօրքն ու «Մեծ-բռունցք»-ները վերջնականապէս ջարգուեցին, թեպէտ և նրանք զինուած էին ամենամոր տեսակի հրացաններով և թնգանոթներով և ունէին ռազմամթերքի ահազին պաշար։ Չինացի խաղաղ աշխատասէր, իր զիւղատնտեսական պարապմունքներին մոլեռանդութեամբ նուիրուած ժողովուրդը բաւականաշափ ժամանակ չէր ունեցել զինավարժուելու, որաէսպի կարողանար դէմ հնուառապէս համեմատուել եւրոպական աշխարհականների հետ, որոնց ամբողջ ուշքը կեզրոնացած է զօրքի և նրա զինավարժութեան վրայ։

Բայց ինչպէս պէտք էր վարուել պարտուած Զինաստանի հետ։ Կործանել իսպառ այդ հինաւուրց պետութիւնը և բաժանել նրան մասերին։ Սակայն որ մասը տալ մի պետութեանը և որը միւսին։ Ընդհանուր պատերազմ չի ծագի արգեօք մասերը բաժանելիս, երբ մէկին ընկնի աւելի համեղ պատառ, քան միւսին։ Պետութիւնների մէջ տիրող մրցութիւնը, որի չնորհիւ մօտիկ Արևելքում թիւրքիան պահպանում է իր թշուառ գոյութիւնը, փրկեց նաև չինական պետութիւնը հեռաւոր Արևելքում։ Համաշխարհային ընդհանուր հրդեհի մեծ երկիւղն ստիպեց օտար պետութիւններին վճռելու՝ պահպանել չինական պետութեան գոյութիւնը։ Այս սկզբունքն ամենից առաջ յայտարարեց ոռուական կառավարութիւնը և ապա նոյնը հաստատուեց և անզլօգերմանական դաշնակցութեամբ։

Սկսուեց երկար ու անվերջ բանակցութիւններ Պեկինում օտարերկրեայ դեսպանների մէջ՝ խաղաղութեան պայմանների վերաբերմամբ միացած յայտագիր կազմելու չինական կառավարութեանը յանձնելու համար։ Վերջապէս կազմուեց և ստորագրուեց բոլոր պետութիւնների ներկայացուցիչների կողմից այդ յայտագրերը, որ իր մէջ պարունակում և հետեւել 12 կէտերը։

1) Զինական իշխաններից մէկը պէտք է ուղարկուի Բերլին, որպէսզի այնուեղ ցաւակցութիւն յայտնէ չինական կայսրի կողմից կետանելէրի սպանութեան առիթով։ 2) Ամենախիստ, գործած յանցանքներին համապատասխան, պատիժներ պէտք է նշանակուեն այն անձանց համար, որոնց անունները կը տան դեսպանները։ Պետական քննութիւնները պէտք է վերացուեն հինգ տարով այն քաղաքներում, ուր տեղի են ունեցել սպանութիւններ կամ բռնութիւններ օտարերկրացինների դէմ։ 3) Եաւ պօնիան պէտք է ըստ արժանույն ցաւարարութիւն ստանայ դեսպանատան դիւնապետ Սուզիամիի սպանութեան համար։ 4) Օտարերկրացինների բոլոր գերեզմանատներում, ուր տեղի է ունեցել գերեզմանների պղծումն, պէտք է կանգնեցուեն քաւողական արձաններ։ 5) Զէնքի և ուղղամթերքի ներմուծումը, նոյնպէս և նրանց պատրաստում, արգելուում են։ 6) Կրած վընասների համար համապատասխան վարձատրութիւն պէտք է վճարուի պետութիւններին, ընկերութիւններին, անհատներին և այն չինացի քրիստոնեաներին, որոնք վեաներ կրեցին օտարերկրացինների մօտ ծառայական պաշտօններ վարելու պատճառով։ Զինաստանը պէտք է դիմէ։ համապատասխան Փինանսական միջոցների, որոնք ընդունելի լինեն պետութիւններին և որոնցով ապահովուեն պետական փոխառութիւնները և վարձա-

տրութեան վճարումը: 7) Դեսպանութիւնները իրաւունք են ստում պահելու մշական պահակախումբ, գեսպանական թաղը պէտք է ամրացնուի: 8) Տակովի և Պեկինի ու ծովի միջն դանուած մարտկոցները պէտք է կործանուեն: 9) Մշտական զօրաբաժիններ պէտք է նշանակուեն այնպիսի կէտերում, ուր այդ հարկաւոր կը համարուի՝ հազորդակցութեան ճանապարհը Պեկինի և ծովի մէջ ապահովիլու համար: 10) Ամբողջ պետութեան մէջ երկու տարի շարունակ պէտք է կախուեն յայտարարագրեր, որոնցով մահուան պատիժ սպառնացուի իւրաքանչիւր մարդու, որ անդամ կը լինի օտարերկրացիներին թշնամաբար վերաբերուող ընկերութեան: Այդ յայտարարագրերի մէջ պէտք է թուած լինեն այն պատիժները, որոնց ենթարկեց չինական կառավարութիւնը անկարգութիւնների ղեկավարներին: Ապա պէտք է հրատարակուի կայսերական հրաման, որով փոխարքանների, նահանգապետների և նահանգական այլ իշխանութիւնների վրայ պատասխանատւութիւն դրուի օտարերկրացիների դէմ ուղղուած ապստամբութիւնների և գաշնազրերի խախտման համար այդ աստիճանաւորների իշխանութեան սահմաններում: Եթէ նրանք չեն աշխատի մաքառել այս չարկի դէմ, պէտք է անյապազ արձակուեն պաշտօնից և այլև չըստանան ոչ մի կառավարչական պաշտօն: 11) Զինաստանը յանձն է առնում վերացնել առևտրական գաշնազրերը՝ առևտրական յարակերութիւնները հեշտացնելու համար: 12) Յունդ-լի-եամէնը պէտք է վերակազմուի և պալատական արարողութիւնը դեսպանների ընդունելութեան վերաբերմամբ պէտք է փոխուի այն ձեռփ, որ ցոյց կը տան պետութիւնները:

Պարտուած և անձարացած Զինաստանը իր լիազօրների՝ իշխան Զինի և Լի-Խունդ-Չանդի միջնոյով ստիպուած էր ընդունել և ստորագրել այս խստագոյն և վիրաւորական պայմանները, որոնցով իսկապէս նա գառնում է մի վասալական պետութիւն՝ եւրոպական մեծ պետութիւնների, Միացնալ-Նահանգների և Եազօնիայի գերագոյն իշխանութեան ամակ:

Թրանսիական ժողովուրդը մտածում էր արժանաւորապէս պասակել XIX դարը 1900 թուականի ցուցահանդէսով, որի մէջ, իբրև մի համագումարի մէջ, հաւաքուէր և ի ցոյց դրուէր այն առննը, ինչ որ ձեռք էր բերել մարդկութեան առաջադիմութիւնը այդ հարիւրամնակի ընթացքում: Սակայն դարի վերջի տարուայ քաղաքական նշանաւոր անցքերը՝ երկու վերոյիշեալ պատերազմները, ձեռնարկուած յօդուա և ի շահ համաշխարհային բուժուազիայի և ի վեսս ժողովրդական մասսաների՝ եկան

փառաւորապէս ապացուցանելու, որ ՏԻԿ գարի պսակը չէր կարող համարուել ազգերի խաղաղ մրցութեան հանդէսը, որովհետև խաղաղ մրցութիւնը գերակշիռ գեր չէր կատարում այդ գարում, որ անթիւ և անհամար արիւննեղութիւնների, անլուր կոտորածների և աւերմունքների ասպարէզ էր բացել: Ցուցահանդէսը մի առանձին հետաքրքրութիւն չը զարթեցրեց. նա չը կարողացաւ գէթ առժամանակ լիովին կենդրոնացնել իր վրայ ազգերի ուշադրութիւնը.—այդ ուշադրութիւնը ամբողջովին ուղղուած էր գէպի հարաւա-աֆրիկական և չինական պատերազմական գաշտերը, ուր ազգերի փարթամ շրջանները հարուստ որս ունէին անելու՝ իրանց ապագայ բարեկեցութիւնը աւելի աջողեցնելու համար, իսկ զրկուած և ազգատ շրջանները կորցնում էին, գուցէ, իրանց միակ աշխատաւորին: Եւ ում կարող էին առանձնապէս հետաքրքրել մարդասիրական գաղափարների ջատագովութեան համար արտասանուած բազմաթիւ ճառերը՝ ցուցահանդէսի ժամանակ տեղի ունեցած նոյնքան բաղմաթիւ կօնդրէսների նիստերում, քանի որ այդ նոյն բոպէներին աշխարհի այս և այն կողմուած կատարուող խոշոր անցքերը, առանց որ և է կասկած թողնելու, ապացուցանում էին, որ մարդասիրական գաղափարները դեռ ևս ապագայ սերունդների համար վերապահուած միայն հեռաւոր երազ են: Թէ որ աստիճանի գեռ թոյլ և անզօր էին այդ գաղափարները դարավերջի տարուայ ընթացքում՝ դա պարզ երևաց այն անաջողութիւններից, որին հանդիպեցին բօէրները, երբ սմնաւասար կոուի մէջ ուժասպառ եղած՝ օդութիւն էին խնդրուած համարենա բոլոր քաղաքակիրթ ազգերից: Այդ ազգերը զգում էին, որ բօէրներն արդար են, որ ոլէտք է նրանց օգնել, որ անհրաժեշտ է մի բան անել, գէթ արդարութիւնը վերջնականապէս խայտառակուած չը տեսնելու համար, բայց և այնպէս ոչ մի պետութիւն չը կարողացաւ հրաժարուել իր եսամոլ չահերից, իր քաղաքական հաշիներից՝ արդարութեան և մարդասիրութեան սեղանի վրայ մի զոհ դնելու համար:

Ա. Մ.

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Ս Կ Ա Ս Ա Ս Ա Ն Ի Ց

1900 թ. դեկտեմբ. 23-ին Թեհրան

Օգոստով 27-ին դուրս եկայ Բազուից, 27-ին հասայ Պարսկաստանի առաջին քաղաքը—Են գելի: Բուսականութիւնը նոխ եւ գեղեցիկ է. պարտէզների ծառերի մեծ մասը նարնջի, փորքազի եւ լիմոնի է. անցնում ես պարսկական կեղտոց նեղ փողցներով, երկու կողմից նոյն ծառերից են տեկած. կատարեալ հակապատկեր: Են գելիում 20 տուն հայեր կան. ունեն մի փոքրիկ եկեղեցի եւ ուսումնարանի չենք. այս տարի մասդրութիւն չունենայ բանալ դպրոց, որովհետեւ այդ 15—20 տուն հայերը միմանց հետ այլ եւ այլ, մասնաւով վաճառականական հաշիւների պատճառով այնքան ել լաւ չեն: Ժողովի հրաւիրեցի, աշխատեցի մի համաձայնութեան բերել. քեւ խոսացան ուսուցիչ հրաւիրել, բայց այնքան ել չեմ հաւատում. պարսկական ընդհանուր եւ քաղաքավարութիւնն է եւ՝ քաղաքանութիւն—խոսանալ ու չը կատարել: Դժուար է լսել քո յայտնած կարծիքն մի հակառակ բան, ամենին խսկոյն համաձայնում են. մի կողմից լրսում է «հրաւանեղ» ինչպէս հրաւայեցիք, կ'աշխատեն կատարել, միւս կողմից «հրաւանեղդ ւնորի բերելով, ամեն բան լաւ կը լինի» եւ այլն այսպիսի պարսկական հանդյախօսութիւններ. բայց այդ խօսերը մասամբ արդեն պիտի վկայեն, որ իրանք ոչինչ չեն անի: Ենզելիից գնացի Ռատուս, որտեղ 100 տան չափ հայեր կան. ունեն մի գեղեցիկ օրիորդաց դպրոց (Թումանեանց տան գործակատարն է ժինել իր ծախով) եւ մի տղայոց խարխուլ դպրոց: Ինչպէս ենզելիում նոյնպէս եւ այսեղ տաս տարիների երեցփոխանական եւ հոգաբարձական հաշիւները չեն նայուած. ամեն որ իմբասպուխ, ամենայն ինչ խառն ի խուռն: Ուսումնարաններում պատահական ուսուցիչներ են, որոնք ինչ ցանկանում են, այն ել անում են. ոչ մի կողմից խսկողութիւն չը կայ:

Մատչեցից Թեհրան գալիս մայ եւ Կազուին քաղաքը, որ հաշանաւոր է մրգի եւ բնձի արդիւնաբերութեամբ. կան 40 տուն

հայեր, ունես եկեղեցի (աղօթառուն) եւ միդասեան ուսումնարան, տաճկաստանցի խաքերայ բախտախնդիր մի ուսուցչով: Դա Թաւրիգից զնալիս է եղել Զուղա Առաջնորդի մօս, որ իրան մի տեղ տայ՝ սոված չը մնալու համար. ուզեցել է բահանայուրեան տեղ գտնել. «Խարդ չի դարձել, գոնք բահանայ դառնայ»: Ղազուխնցիք հանապարհին բոնում են եւ վարձում իբրեւ ուսուցիչ. այժմ պատիճ է դարձել: Ղազուխնում հերադրում էի, թէ Թեհրանում մեր կրթական հաստատութիւնները գոնք զոհացուցիչ կը լինեն. բայց դժբախտաբար սպասածիցս վաս էին: Այս բանի օրերս միայն սկսուեց դասաւորքիւնը փոքր ինչ կանոնաւոր կերպով:

Հասարակական կեանքը Թեհրանում չափազանց բոյ է, ընդհանրապես ազգային գործերով հետաքրքրուելը շռայլութիւն է համարուում. հասարակական գործերին մասնակցողները մի բանի հոգի են, այս էլ թերի կերպով: Ընդհանակ քաղերում միմեանցից հեռու ցրուած են հայերը. ընդհանուր ժողով գումարելիս մի 15—20 հոգի արդէն սովորական մեծ թիւ է կազմելիս եղել: Այն մի բանի անհատներն ել, որոնք իրանց կրուած են համարում, աշխատում են շարունակ դպրոցների կառավարութիւնն իրանց ձեռքում պահել, դրանք եւս իրանց վարմունքով նպաստում են անտարբերութեան օրեղանալուն: Վեց տարու չափ է, որ այդ հոգաբարձութիւնը հաշիւ չի տուել ժողովրդին. Երկու տարի առաջ Առաջնորդը յիշեցրել է. պատասխանել են, որ հաշիւ տալու հետ իրանք էլ հրաժարուելու են: Առաջնորդը վախեցել է եւ ձայնը կտրել: Բայց եւ այնպիս խոսացել են յունուարին տալ իրանց հաշիւր: Ահա անցնում է երրորդ յունուարը, սակայն հաշիւր դեռ պատրաս չունեն: Դժբախտաբար կրուածներն ել են այսպիսի աղայական եւ բռնականական ձգտումներով: Երեսի լրաւ են եւ տեսել Պօլսոյ ազգային ժողովում մի բանի եֆենդիներին ու փատաներին, որոնք իրանց հակառակովրդական գործերով միայն զգուանք են ազդուած եւ հարուածներ տալիս մեր կեանքին:

Ընդհանրապես յայտնի է, որ Պարսկաստանում հոգեւորականութեան ոյժը զօրեղ է: Դեպի հայ հոգեւորականները եւս վերաբերում են յարգանենով և Առաջնորդին ընդունում են ազգակետ, որ իրաւունք ունի խառնուելու ժառանգական, կրտսակային, կալուածական եւ այլ գործերի մէջ՝ պատասխանելով այս կամ այն հայի, համայնքի կամ հաստատութեան օգուտը. նոյն իսկ բահանան հետօնութեամբ ներկայանում է սադրազմին կամ նախարարներին այդպիսի դատեր պատասխանելու համար. այն ինչ աշխարհականի համար դժուար է եւ մեծ կատաքներ էլ պիտի տայ մի որ եւ է գործ յաջողեցնելու համար: Դեպի են եղել, երբ պարսկի մօլաները (այս տարի Թեհրան) դիմել

Են հայ բահանապին, որ իրանց առաջ ընկնի, որպէսզի զնան այս կամ այն նախարարին բողոքելու, որովհետեւ իրանց կարող են դուրս վոնել եւ չընդունել:

Նաև ուրախալի է, որ հետզինետեւ ուրսական բաղաքականութեան ազդեցութիւնը այսեղ գօրեղանում է. Թեհրանում ամենաազդեցիկը ուրսաց դեսպանն է:

Ենզելիից մինչեւ Թեհրան նանապարհը ուրսաց ձեռքին է. նանապարհի հարկը ուրսաց պատճենեաներն են ստանում. Ղաղուինից Համադան երանե պիտի անցկացնեն նանապարհը: Ապրանքների մեծ մասը Ռուսասանից է. նոյն իսկ Զուղա են հասնում: Վաճառականական յարաքերութիւնները օրէցօր չափազանց գօրեղանում են Թեհրանում. կան Մուկուսի «միջազգային» կոչուած եւ ուրսաց պետական բանկերի նիւղեր. վերջինի ճիւղերը մի բանի պարսկական բաղաքներում մասդրութիւն կայ մօտիկ ապագայում բանալու. ի միջի այլոց եւ Սպահանում: Թեհրանի ձիաբարը Բելգիական բնկերութեան ձեռքին էր. հետզմետէ անցնում է ուրսաց ձեռքը. նոյնպէս եւ Պարսկասանի միակ երկարուղու զիծը Թեհրանից մինչեւ Շահարդու դուլազի մոխտանելին (10 վերտաշափ): Այս երեք տարի է, որ իսպահան հունի միմնուի է ուրսաց հիւպատոսարան: Այն կողմերը գօրեղ է անզիական ազդեցութիւնը. անզիերենը շատ է սարածուած Զուղայի հայերի մէջ. այդ պատճառով զուղայեցի հայերից շատերը ծառապում են անզիական հաստատութիւնների մէջ—բանկերում եւ հեռագրատներում: Պարսկասանում կայ անզիական բանկ, որ կոչում է Imperiale Banque de Perse. ունի ճիւղեր Թաւրիզում, Ռաչում, Ղազուինում, Շիրազում, Բուշիրում, Թեհրանում, Խապահանում եւ այն: Այս բանկը «Լիօնի վարկ» բանկի հետ յարաքերութիւն ունի. տալիս է 6%: Ռուսասանը շատ լաւ մրցում է անզիականի հետ. նոյնպէս տալիս է 6%:

Թեհրանում ապրուածը բանկ է. քէ' հացը, քէ' զուրը եւ քէ ոդր շատ վաս: Հացի զնի բարձրացնելը արհեստական է, ինչպէս Պարսկասանի այլ տեղերում եւս. մեծ կարուածաւեր կան, որոնի 50—100 զիւղեր ունեն, ցորենն ամբարում են. զիւղացին էլ կեղեւումների շնորհի այնպէս բայցայուած է սնտեսապէս, որ իր շնչին աւելցած հացանատիկը (որ երեւնն է պատահում) չէ կարողանում կամ չէ համարձակւում բերել շուկայ եւ ծախսել: Ցորենի զնի որոշողները մի բանի մեծ կարուածաւերն են: Պարսկասանի բաղաքների միջով երբ անցնում են կառենվ, բազմաբիւ երեխաներ կիսամերկ, մարդիկ եւ կանայք ետեւիցդ ընկած վագում են օգնութիւն խնդրելով. քէ' աղբատութիւնը եւ

քէ հարսուրիւնը ծայրայեղուրեան է հասած: Հարուսների մանաւանդ պատօնեաների տները կահաւորուած են աւելի եւրոպական ճաշակով—բանկագին բազկարուներ (ոսկեզօծ), սեղաններ. տեղ-տեղ տեսնում են եւ դաշնանուր, ի հարկէ տնորիմի համար: Տեսնում են աբաները զցած դուրս են զալիս կառերով. երեսն էլ վեց ձի լծած. մի խօսքով՝ բազավակրուրեան արտաքինը բաւականաչափ մուտք է գործել: Թրամաներէնը շատ տարածուած է պարսկիների մէջ:

Լսել էի, որ կաշառակերուրիւնը շատ է տարածուած, բայց չի իմանում որ բոլորովին սրբազործուած մի սովորիւն է. այսեղ մի տեսակ դաւանանքի կերպարանն է սացել: Երբ Խորեն վարդապետը Զուղայի Ամենափրկչեան վանքի կալուածական մի դաս պատըսպանելու համար ներկայանում է արտաքին գործոց նախարարին եւ խօսակցուրեան ժամանակ յայտնում, որ հակառակորդները շահի եղբօր՝ Զիլի Սուլբանին կատառքներ են տուել, արտաքին գործոց նախարարը ժպտալով առում է՝ «այս չե՞ որ մեր մէջ դա (կատառք) սովորուրիւն է»: Կաշառքի բանակուրեան մասին նախապէս համաձայնուրիւն են կայացնում: Կաշառքի բոլլ ասինանը—անամն է: Թագաւորի, երա որդիների, նախարարի եւ այլ պատօնեաների մօս զնալիս առաջովկի գնում են Ֆառառեներ փայտերը ձեռքերին. անպատճառ նրանց մի խնի բուման պիտի տա. Երէ ոչ հետեւեալ անզամ կամ մուտք չես ունենայ, կամ նամակդ չեն հասցնի եւ այլն: Բերում են նամակներ, հեռագիրներ, լրագիրներ երէ անամ (թա զան) չես տայ՝ շաբաթներով չեն բերի. ո՞ւմ գանգատուես, բանի որ մեծերն էլ նման են ծառաներին: Երէ տաս, այդ էլ ցաւ է, կը սկսեն ամեն օր մի-մի հատ բերի, երէ նոյն խսկ չորս-հինգ նամակ կամ լրագիր միասին ստացուած լինեն: Կառքերն այսեղ բելգ. Անօնիմ ընկերուրեանն է. պիտի ընկերուրեան կայարանն ուղարկես մարդ որ կառք տան: Ընկերուրեանը վճարելուց յետոյ, պիտի անամ տաս իւրաքանչիւր անզամ կառապանին երկու, երբեմն էլ երեք դռան (40—50 կոպ.): Մի խան-երեսուն եւ հինգ տեղ այցելեցի. մի ամիս յետոյ տեսնեմ ընկերուրիւնն ուղարկեց մի հաւի 24 բումանի (48 բուլըու չափ) բացի այն, որ կառապանին տուել էի իբրեւ անամ, ամեն անզամ երկու դռան: Աւելի ընդարձակ կը լինի միւս նամակս:

*

ՊԱՐԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հանդէս Ամսութեայ», գեկտեմբերի Վիեննալի Մխիթարեան ռուսումաթերթը» վերջին տարին շատ է անհետաքրքրական դարձել ընթերցողների լայն շրջանի համար. նաև միանգամայն խրուել է նեղ մասնազիտութեան մէջ և համարեա չէ մոտածում այն ընթերցողների մասին, որոնք ոչ հնախօս են, ոչ լեզուարանն ԶՇ՝ կարելի ուրանալ, որ մասնազիտական շրջանում «Հանդէսը» պահպանում է զիտնական լրջութիւն և կարող է նոյնիսկ հեղինակաւոր համարուել. բայց որովհետև հայերի մէջ չը կայ մասնազիտների այնքան լայն շրջան, որ կարողանայ պահպանել այսպիսի մի ամսորեալ հրատարակութիւն, ուստի ցանկալի է, որ «Հանդէսը» վերազառնայ այն ուղղութեան, որ ընդունել էր երկուերեք տարի առաջ, այն է՛ հնարեցածին չափ նիւթ տայ և սովորական ընթերցողներին. Ամբողջ համարում, բացի մատենախօսական բաժնից և քաղաքական համառոտու ալսպիսի հրատարակութեան մէջ անտեղի բաժնից, փոքր ի շատէ ուշադրութիւն է զրաւում պատմական բաժնից, ուր հետաքրքրական տեղեկութիւններ կան հայութիւնից կտրուած և հարութիւնը կորցրած մի հեռաւոր գաղութի, Ցրանսիլվանիայի Եղիսաբեթապօլիս քաղաքի մասին.

«Արարատ», 1900 թ., գեկտեմբերի Ալդ համարում շարունակում էին տպուել տեղեկութիւններ թէ՛ հայոց և թէ օտար եկեղեցիների

ընթացիկ կեանքի մասին: Բայց այդ շարունակում էին հետեւել յօդուածները. լեզուարանական քննադասութիւն Դարաքաղի Բարրառի՝ Սճառեանի, քննադասուական Հայ ժողովրդական առասպելները Խորենացու պատմութեան մէջ՝ Աբեղեանի, և պատմական Եջմիածնի հայոց մատենազարանից և Գիւանից զանազան նիմիթերի տպագրութիւնը: Կոյնակէս շարունակութիւն է և Ժիկրացործական անհրաժեշտ զիտելիքները յօդուածը, որից կարող էին օգուտ քաղել մեր զիւղական քահանաները, եթէ այնքան տպէտ չը լինէին: Ըմառենախօսական»-ի մէջ տպուած է Ս. Մ-ի քննադասութիւնը, որի մէջ Եջմիածնական լոռի կարգերը փաստաբանում են և զուր ջանք է զործ դրում համոզել ընթերցողին, որ Ս. եւզ. Սեղրակեանի Քահանանախօսական Խնդիր» զիրքը... պարաւագիր է: Դժուար էր Վանքի հայկատակից ուրիշ վերաբերմունք սպասել, Եջմիածնի պաշտօնական օրգանի այդ տեսակ վերաբերմունքը գէպի մի լուրջ և անկեղծ ցանկութիւն՝ վերանորոգել հինը, նեխուածը-ցոյց է տալիս, որ իզուր չէ ասուած. «Ակին սապոնն ի՞նչ անի, խեին՝ խրատը»:

«Թագմանվեալ», 1901, լունուար: ԶՇ՝ կարելի չը խոստովանել, որ Վենետիկի Մխիթարեանները աշխատում են իրանց ամսագիրը կենդանի և հետաքրքրական դարձել: Ենազմակալէու ալլևս բացասապէս հնախօսութեան և բանասիրութեան

Նովիրուած մի ժողովածու չէ, ինչ-պէս էր առաջ. նա վերայցրել է իրանից և ակրօնականս անոնը և ձգուում է դառնալ ժամանակակից կեանքին մօտիկ մի հրատարակութիւն։ «Ծեր ազգը և Բարքը 1800—1900» խմբագրական յօդուածի մէջ խօսում է անցեալ XIX դարի մասին։ Բայց զրոյը շատ թեթև է վերաբերուել իր գործին և յօդուածը ներկայացնում է բոպէի ազդեցութեան տակ զրուած մի վիճարանական տրտունջ, առանց փաստերի, առանց ծանրակշիռ ոստոմնասիրութեան։ Երբ նայում են մի ամբողջ դարի պատմութեան՝ զանազան մանր-մոնիր հանգամանքները, պատշաճական հոսանքները թողնում են մի կողմ և աշխատում են ընդհանուր ողին, երկարառու տիրող հանգամանքները բնորոշել։ Այս լաւակութիւններից զուրկ է այդ յօդուածը—Հ. Ալիշանի «Ծրշալուս և Արեելք լուսատրութեան Հայոց աշխատութիւնը, որի մէջ պատմում է քրիստոնէութեան մոտաքը Հայաստան, այս համարում էլ չէ վերջանում։ Առանարարակ «Քազմավէպը» մոռանում է իր փոքրիկ ծաւալը և տպագրում է ստուար աշխատութիւններ, փոքրիկ կոտրներով. դա մեծ անյարմարութիւն է, որի շնորհի ամսագիրը կորցնում է կենուունակութիւնը—Միւնոյնը պէտք է առել Հ. Եփրիկեանի «Բնաշխարհիկ Բառարան» անունով զնահատելի և հետաքրքրական աշխատութեան մասին։ Մի ամբողջ տարի է այդ բառարանը, որի մէջ նկարագրում են հայաբնակ տեղերը, տպում է Քազմավէպի մէջ, բայց մինչեւ այժմ միայն և տառին է հասցրած։ Միթէ Միթիթարեան միարանութեան համար էլ այժմ անկարելի է դարձել միանգամից տպագրել առանձին զրքով այդպիսի ստուար աշխատութիւնները— Յովսէփի գ. Սահմալճեանը զնում է այն սեպաձեկ

արձանագրութեան թարգմանութիւնն ու բացատրութիւնը, որ անցեալ ամառ գտնուել է Եջմիածնում։ Բանից գուրս է զալիս, որ զա մի թանկագին զիստ է, որովհետև ցոյց է տալիս, թէ Աւրարտեան թազաւորութիւնը ինչ տարածութիւն ունէր այն ահեղ պատերազմից յետով, որ տեղի ունեցաւ Ուրսա թագաւորի և Խոսրուստանի Սարգօն թագաւորի մէջ և վերջացաւ Ուրսարտուի կատարեալ պարտութեամբ։ Նոր գտած արձանագրութիւնը պատկանում է Ուրսա II թագաւորին, որի ուրիշ արձանագրութիւնները դանէլ է մի քանի տարի առաջ ոռու գլուխական նիկուլիի։ «Ժամանակակից պատմութենէ վերնագրի տակ բերուած է մի կտոր Հ. Նուրիեանի «Ժամանակակից Պատմութիւն» անունով գնահատելի աշխատութեան (XIX դարի պատմութիւն) Երրորդ հատորից, որի շուտ հրատարակութիւնը ցանկալի է։ —Գ. Վահան Զարգարեանը մի փոքրիկ յօդուածի մէջ խոսուանում է հրատարակիլ նոյն օճաղմավէպում։ Արևմտեան հայերի մէջ XIX դարում յայտնի զարձած բոլոր գործիների կենսագրութիւնները։ Դա էլ մի շատ հետաքրքրական գործ է երևում և մենք կը տեսնենք թէ հեղինակը ինչպէս է կատարում իր խոսուումը...»

—

«Միթ Եօյիա», դեկտեմբերի հնագրթութեան նուիրուած ալս զըրական և զիտական-ժալովիրգական ամսագիրը զնալով մեծացնում է իր ծաւալը և ճոխացնում բովանդակութիւնը, տալով ահազին քանակութեամբ նիւթ օգտակար ընթերցանութեան համար։ Վիպակւն բաժինը մեծ մասամբ անցեալ համարներից շարունակուող գործերից է կազմուած, այն էլ մեծ մասամբ թարգմանական թարգմանական է և զիտական յօդուածների մեծ մասը։ Դրանց թւում նշանակենք

«Ձիօրդանօ Բբունօ»: XVII դարի այս երևելի գիտնականը մեռաւ ինկվիզիցիայի խարովի վրայ այն պատճառով, որ Գալիլէի նման հաստատում էր, թէ երկնալին մարմինները առանձին-առանձին աշխարհներ են Յօդիսածը մանրամասն նըկարագրում է մանաւանդ արքալանինկվիզիցիայի գատաստանը, այն խայտառակ հանդէսը, որով պասպականութիւնը սպանել տուեց այդ մեծ մարդուն և այն սատնասրտութիւնը, որով զիտութեան նահատակը վերաբերում էր մահուան գատառին-Նմանազրի այս համարում վերջացաւ Ցիգէլրի «Ճամփիններորդ զարի մոտաւը և հասարակական հոսանքները» անունով աշխատութեան թարգմանութիւնը. Հեղինակը այդ գործի մէջ ի նկատի ունի միայն Գերմանիան և հետեւում է գերմանական մտքի զարգացման զարի սկզբից մինչև վերջը-Ա.Երջացաւ նաև հաշակաւոր զիտնական Նրանս Հելկէլի «Ճամփիօրմիդմ և զարդինականութիւն» աշխատութեան թարգմանութիւնը-Մանր յօդուանդներից ուշադրութիւն է զարսում կին-բժիշկ Պօկրովսկաեա «Պետերբուրգի բանուորուհին», որի մէջ հետաքրքրական տեղեկութիւններ կան իրանց աշխատանքով ապրող կանանց դրութեան մասին:

—

«ՋԵՅՆԻ», գեկտեմբեր ։ Խուսաց ամենահամակրելի ամսագրերից մէկը, հարուստ և հետաքրքրական բովանդակութեամբ. տալիս է և պատկերներ Խշասակիցների մէջ է և Սաքսիմ Գօրկի, տաղանդաւոր վիպագրողը, որ այժմեան ժամանակ ուսւ հասարակութեան ամենից շատ սիրած հեղինակներից մէկն է: Այս համարում Գօրկիի «Տրօե» (Երկքը) վէպի շարտնակութիւնն է տպուած: Կը խօսենք սրա մասին, երբ կը վերշամնայ: — Հէնրիի Խոհովի «Զին-

աստանի տնտեսական զարգացումը» յօդուածը (թարգմանութիւն գերմաներէնից) ծանօթացնում է Նրկնային կայսրութեան անցեալ և ներկայ կուտուրայի հետո Սիսակ է ասել թէ Զինաստանը ոչինչ տուածադիմութիւն չէ ցուց տուել մեր օրերում, քարացած է. նաև քան եւրոպացիների խուժումը, Զինաստանում հիմնած էին եւրոպական ձեռվ գործարաններ. Ներկայ խառնակութիւնները տնտեսական նոր պայմանների և մանաւանդ երկաթուղիների առաջ ընդունակ համար առաջ ընդունակ հրապարակները, ամենեկին նկատի չառան չինական կեանքի առանձնատեսակ, ինքնուրպէն պայմանները. և տեղի ունեցաւ ընդհարում: —Պրօֆեսօր Ղամբարեանն սկսել է զրել «Պարիզեան նամակներ»: այս համարում ապուած է տուաջին նամակը, որ ծանօթացնում է Գրանսիական ներկայ կառավարութեան ըըսնած ուղղութեան հետո Շատ հետաքրքրական կերպով է ներկայացրած Ֆրանսիականի դրութիւնը: Վեհրինանդ Լասաւալը յօդուածի մէջ պ. Սուրկովը խօսում է Լասաւալի կառարուծ դերի, նրա պակասութիւնների մասին: —Առապաշտութիւնը Վեհատկայի նահանգի մէջ» յօդուածը բաց է անում Խուսացտանի հետաւոր և անձանօթ անկիններից մէկի պատկերը: Բանից գուրս է զալիս, որ այդ նահանգում ընկեների մի նշանաւոր մասը 23 հազար հոգի, դեռ իրանց նախկին հեթանոսական կրօնի մէջ են մնացել, իսկ քրիստոնեալ մկրտուածներից շատերը գետերը գեռ շարունակում են կռապաշտական դոհեր մատուցանել: Վերջին սասանամեսակում ընիկների (չերեմիա) տնտեսական ծանր գրութիւնը և մանաւանդ 1892

և 1898 սով տարիները շատ նպաստեցին որ հեթանոսութիւնը վերածնուի և ունենայ շատ ֆանաստիկոս ներկայացոցիչներ Խոռա հողեւրականութիւնը միսիօներութիւնն է պահում այդ երկրում, բայց միանգամայն արմատախիլ անել հեթանոսութիւնը դեռ չէ աշողում: — Միշտ հետաքրքրական են «Գառառական պատկերները», որ գրում է ամսագրի իրավանչիւր համարում Եւգենի Չիրիկովու Այս անզաման էլ այդ պատկերները, որոնց մէջ զարարի ցաւերն են նկարում, գեղեցիկ տպաւրութիւն են թողնում: Միւս յօդուածներից աչքի է ընկնում հոչակաւոր իտալացի Նկարիչ Ազոնարդո գա-Վինչիի կենապրութիւնը, որ կազմել է Դէն և վերջանում է այս համարում:

«Научное Обозрение», դեկտեմբեր: Այս գիտական ամսագրի մէջ տպում են շատ օգտակար յօդուածներ: Ներկայ համարում տպուածներից յիշատակենք. «Միկրօրիօգիայի նշանակութիւնը արդիւնաբերութեան մէջ», «Բակտերիաները իրեն հիանդութիւնների պատճառներ», «Նախինական հասարակութիւնը», «Գի-Մօպսան և նրա հասարակութիւնը», «Մաքս Միլլէր», իրեն յաւելուած՝ համարին կցած է մի հետաքրքրական գործ, որ կրում է «XIX դար» վերնագիրը: Դա մի հասարական աշխատութիւն է, որի մէջ առանձին յօդուածներով պարզաբանուած են անցած զարի մտաւոր առաջադիմութեան, գիտութեան ճիշերը և քաղաքական ու կուլտուրական հանգամանքները:

«Кавказский Вестник», յունուար: Թիֆլիսում անցեալ տարուանից հրատարակուող ալս ամսագրի ներկայ տարուայ առաջին համարը բաւական հետաքրքրական ըովանդակութիւն ունի: Սկսուած է

բաժինի «Թե՛նթի» թարգմանութեան տպագրութիւնը, պ. Ալ. Խատիսեան քննական-կենսադրական մի յօդուած է տպագրել Յափփիի մասին, ալդուեղ նա մանրամասն խօսում է հայ տպանդաւոր միսպագրողի կեանքի հանդամանքների, գրուածքների մասին, փորձում է որոշել Յափփիի տեղը և նշանակութիւնը մեր գրականութեան մէջ, խոսոովանելով որ Յափփիի գրական գործունէութեան լիակատար գնահատման ժամանակը գեռ չէ եկել: Մի առանձին յօդուած էլ նուիրուած է անցեալ տարուայ հայ պարբերական մամուլին: — Մեղ վրայ շատ լաւ տպաւրութիւն թողեց Անվ. Կիպրանիի «Հաշուութիւն» ուսանաւորը, որի մէջ շատ գեղեցիկ կերպով պատկերացրած է ազգերի եղբայրասպան թըշնամութեան վնասը և զրուած է սրտառուչ հրաւէր որ ազգութիւնները միմնաց եղբայրաթեան ձեռք մեկնեն ու համբուրուեն: — Հետաքրքրական է Լ. Պետրովի ուսումնասիրութիւնը՝ «Սովորութի իրաւունք և օրէնք Կովկասում», ինչպէս նաև Ա. Մղիվանիի «Վաստականի և Խուասասանի և Խուասասանի դիպլոմատիական յարաբերութիւնները XVI և XVII դարերում»: Թամամշեանը խօսում է Լասկինի թարգմանած «Բիւզանդիայի Կոնստանդին Միքանածին կայսրի հեղինակութիւնները և էլեմերի և ծողովուների մասին». այդուեղ հետաքրքրական տեղեկութիւններ կան նաև Հայաստանի և հայերի վերաբերմարտ: — Զենք կարող առանց յիշատակութեան թողնել «Ընթերցող» ստորագրութիւն կրող մի նամակ, որ ուզզուած է ամսագրի խմբագրութեան և շօշափում է մի կենսական հարց: Դա այն է, որ Կովկասի պէս մի չքնաղ երկիր շատ քիչ է յայտնի Խուսասասանին: Անյայտ են մնում մանաւանդ այդուեղ ապրող ազգերը, մինչդեռ զրանցից երկուաը հայերը և վրացիները ու-

Նեցել են կուլտուրական անցեալ:
Այդ ազգերի ներկայի մասին ռուս
հասարակութիւնը ունի այն հասկա-
ցողութիւնները, որոնք դուրստիւն
ունին դեռ Պուշկինի և Ներմօնտո-
վի ժամանակ. մինչդեռ այդ երկու

է անցել կամուրջի տակով: Ճշմա-
րիտ և անկողմնապահ ուսումնասի-
րութիւն կովկասեան ազգերի և
բարքերի—ահա ինչ է ցանկանում
«Ընթերցողը», մի ցանդութիւն, ո-
րին մենք չենք կարող չը միանալ
ամբողջ սրտով...

Վ Ի Ւ Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	Տող	Տարուած է	պիտի և լինի
51.	9	ներքելից՝ շտապում՝ էին բարեել	շտապում էին ժպտալ
66.	11	» ծծուած	լծուած
86.	11	» երկրի	երկսի
166.	1	վերելից՝ Թոխъ	Թոսչ
195.	7	» հասօս	հասօս
198.	12	ներքելից՝ կեանքի, որոնք	կեանքի իւրացման և այն մարդիկ, որոնք
200.	10	» որոնց շատերը	որոնցից շատերը

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մուրն» ամսագրի համարները լոյս կը տեսնեն իւրաքանչիւր ամսուայ սկզբներին։ Դւրաքանչիւր համար կ'ունենայ մօտ 256 երես։ Խմբագրութիւնը ոչ մի ջանք չէ խնայելու՝ ամսագրի բովանդակութիւնը բազմակողմանի և հետաքրքրական դարձնելու համար։ Միայն պէտք է որ ընթերցող հասարակութիւնն իր անտարբերութեամբ չը լլատէ մեր ոյժերը։ Ժամանակ է, որ հայ ամսագիրն ունենայ այնքան բաժանորդներ, որ աշխատանքի վարձատրութեան սկզբունքը սկսէ գործադրուել և հայ գրականութեան մէջ աւելի լայն չափերով։ Խմբագրութեան ցանկութիւնն է, որ ամսագիրը բոլորովին ապահովուի իր բաժանորդներով։ Դրա համար պէտք է ունենալ առնուագն 800 բաժանորդ։

Ներկայ տարին բերում է մեզ, հայերիս, երեք նշանաւոր դարեղարձներ. անցաւ XIX դարը, լրանում է հարիւր տարի այն օրից, երբ սկսուեց ոռուսների տիւրապետութիւնը Անդրկովկասում; իսկ սեպտեմբերին Միթարեան միաբանութիւնը կը տօնէ իր գոյութեան երկուհարիւրամեակը։ Այս դարեղարձերի հետ «Մուրն» ամսագիրը կը ծանօթացնէ իր ընթերցողներին։ Միթարեանների մասին արդէն այս համարից տալիս ենք մի տեսութիւն, իսկ XIX դարի և Կովկասի համար նոր հարիւրամեակի պատմութիւնից ուրուագձեր կը տանք տարուայ ընթացքում։

Եկող համարից մենք կը սկսենք ծանօթացնել մեր ընթերցողներին էմիլ Զօլայի «Աշխատանք» նոր վէպի հետ։ Եւ որովհետեւ այդ վէպը ներքին կապ ունի հեղինակի «Բեղմնաւորութիւն» վէպի հետ, ուստի մի առանձին յօդուածով էլ կը ծանօթացնենք ընթերցողներին այս վերջինի հետ։

Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1901 ԹՈՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(ՏՊ-ՐԱ ՏԱՐԱ)

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱԳՐԻ

«Մշակ» հրատարակում է նոյն պրօգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրեւից:

Բաժանորդագինը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւմեկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը՝ 1 ռուբլի։

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գըրուելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ՏԻՓԼԻСТЬ, Ռեդակցիա «ՄՇԱԿԵ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունւում են բոլոր լեզուներով։

Ապահով բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

ԲԱՑՈՒԱԾ է 1901 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

XIX ԱՂԲԵԿԻ ՏԻՎ և XII ՏԱՐԱԶ ՏԻՎ

Միասնակաց պատգերազարդ հանդէս Պատկերազարդ շաբաթաթերթ լուն-
մանուկների և դաստիարակների տանեկան ընթերցանութեան
համար:

Կը հրատակուեմ նոյն ուղղութեամբ եւ աօխատակիցների
մատնակցութեամբ

Ն Պ Ս Ա Կ

Աղբիւրի նորառակն է զարթեցնել և դարդացնել հայ երեխայի մէջ բա-
րի նախանձ դէսի վսեմ ու ազնիւը և ատելութիւն զէսլի չափն ու վասակարը:

Աղբիւրը իր մասազ ընթերցողների սրտերում ցանում է զթոթեան,
ինքնաճանաչութեան, անվեհերտթեան սկրմելու:

Տարազը Աղբիւրի հասունացճ սանելի խնդակցութեան և վշար ար-
տակազողն է, նրանց մաքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգում է տասչիմութեան ովիլ ճանապարհով ընթացող,
առաջինութեամբ օժուած, դիտութեան անշէջ լուսով զարգացած, եղ-
րարիութեամբ բորբոքած հայ անդամներ սնուցանել:

Փ Ր Ս Գ Ի Ր

Աղբիւրը լոյս կը տեսնի իւրաքանչիւր ամիս 2—3 թերթ,
տարեկան 12 Նոն:

Ա. ՄԱԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանելավէսպ, Զբոյց, Հեքեռթ, Ճանապարհորդու-
թիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն, Գիտութիւն և արուեստ: Նոր
լուրեր, Ալլ և ալլը: Զուարանիք. — մանկական, Գրեօրէկեան, շախմատի և
այլ խաղեր, ըերտաներ, թուարանական խնդիրներ, Սնեկդոտ. Հաճելով,
երգել հօտաներով:

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ
և տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսու-
թիւն և նոր գրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ:

Տարազը լոյս կը տեսնի ամիս կիրակի, իւրաքանչիւր
Ն 1—2 թերթ. տարեկան 40—50 Նոն:

Գեղարվուեատ և գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէահեր, պատ-
կերներ, թատրոնական զրուածքներ, ճանաստեղծութիւն, Գննադասու-
թիւն, Կենսագրութիւն հար, ձեւ, ձեռազորդ և ամեն նորութիւն արհեստ-
ների վերաբերեալ: Տնային արդիւնազործութիւն, անոհեստթիւն ճանա-
պարհորդութիւն և արկածք: Երածշատութիւն և թատրոն: Լուրեր, տեղեկու-
թիւններ: Յօդուածներ և այլն: Ֆելիքտոն, ծաղր, առած և կատակ, Շախ-
մատի և ալլ խաղեր: Տերաս: Հարցեր, խորհուրդներ: Ալլ և ալլը: Սուր-
հանդակ: Յայտարարութիւններ:

Աղբիւր-Տարազարդ բաժանորդապրու 10 ոռւբի է, ար-
թիւնը յաւելուածով և պրէմիայով

**18 հ.
կամ 50 դր.**

Պարիզի մօդա, իլլիւսրասիօն, առողջապահական,
սեղանի փառակազմ ՕԲՍ.ՑՈՅՅ սահում են Աղբիւր-
Տարազի միեւնոյն հասցեով սացող բաժանորդները:

Աղբիւրի տարեկան գինը 3 հ. Տարազին 6 հ.:

Հայոցն՝ Տպլուտ, Պետական ալայստր. պար. ԱՐԵՒՐԵ-ՏԱՐԱՅԵ կամ
Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՄԱՅԻՆ ՌԵՎՈՐԱԿ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1901-ին
կը հրատարակուի Թիֆլիսում նոյն դիրքով եւ ծրագրով
ամեն օր, բացի տօներին հետեւող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 ռուբլի, զեց
ամսուանը՝ 6 ռուբլի, երեք ամսուանը՝ 3 ռուբ. 50 կ.,
թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝
7 կ., թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են 40
ֆրանկ։

Յայտարարութիւններ ընդունւում են եւ օտար լե-
զուներով, բառը 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փողոց,
տ. № 5.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցեն՝ Տիֆլիս, въ Редак-
цію „НОРЪ-ДАРЪ“, կամ Tiflis (Caucase) Rédaction du
journal „Nor-Dar“.

3—1

ОТКРЫТА ПОДПИСКА НА НАУЧНО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛ
ГОДЪ II. КАВКАЗСКІЙ ВѢСТИНИКЪ 1901 Г.

Издаваемый въ г. ТИФЛИСЪ В. Д. Коргановымъ подъ редакцію
К. Н. Бѣгличева.

Редакція помѣщается на углу Тургеневской и Авчальской ул.
№№ 11—28.

ПОДПИСКА принимается въ копторѣ журнала (Головинскій пр. № 10)
и во всѣхъ книжныхъ магазинахъ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

	Для городскихъ подписчиковъ	Для иногород- ныхъ	За границу
На годъ	9 р.	10 р.	12 р.
” $\frac{1}{2}$ года	5 ”	6 ”	7 ”
” 3 мѣсяца	3 ”	3 ”	4 ”

За перенѣну адреса взимается 50 коп.

ОТДѢЛЬНЫЕ ЭКЗЕМПЛЯРЫ ПРОДАЮТСЯ ПО 1 РУБ.

Въ 1900 году „КАВКАЗСКІЙ ВѢСТИНИКЪ“ далъ свыше трехъ тысячъ
печатныхъ страницъ.

Полный экземпляр журнала „Кавказский Вѣстникъ“
за 1900 годъ стоитъ 11 рублей.

3—1 Книжные магазины пользуются 5% уступкой.

Открыта подписка на 1901 годъ.

ТИФЛИССКИЙ ЛИСТОКЪ

(26-й годъ изданія).

„Тифлисский Листокъ“ и въ 1901 году будетъ выходить ежедневно по прежней программѣ газеты литературной, общественной и политической.

Будетъ обращено особое вниманіе на развитіе отдѣла корреспонденцій изъ разныхъ мѣстъ Закавказья.

Въ теченіе года подписчики получаютъ не менѣе 12-ти литературныхъ приложений, въ которыхъ будутъ помѣщаться статьи по кавказскому, новѣсти, разсказы, стихотворенія и пр.

Время отъ времени приложения будутъ иллюстрироваться портретами и рисунками.

По понедѣльникамъ подписчикамъ будутъ разсыпаться телеграммы.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Тифлисѣ: на годъ—5 руб., на 6 мѣс.—3 р., на 3 мѣс.—1 р. 75 к. и на 1 мѣс.—75 к.

Для иногородныхъ: на годъ—7 руб., на полгода—4 руб., на 3 мѣсяца 2 р. 50 к. и на 1 мѣс.—1 руб.

На всѣ указанные сроки подписка принимается съ первого числа каждого мѣсяца.

Разсрочка и подписка на другіе сроки не допускается.
Подписка принимается исключительно въ конторѣ изданія: Тифлисъ,
Головинской, № 3.

3—1

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1901 годъ

на издающуюся въ Тифлисѣ политическую и литературную ежедневную газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“.

Газета будетъ выходить въ 1901 году подъ прежней редакціей и по прежней программѣ.

Съ цѣлью удовлетворить все болѣе развивающуюся потребность въ теченіи, ФОРМАТЪ газеты съ конца нынѣшняго года будетъ УВЕЛИЧЕНЪ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ

съ доставкой и пересылкой:

На 12 мѣсяцевъ. 10 р. | На 6 мѣсяцевъ. 6 р.

За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на 3 мѣсяца—5 р.

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р. Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—7 р., на полгода—4 р.

Лица, подписывающіяся на будущій годъ, получаютъ газету въ нынѣшнемъ году бесплатно.

Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа каждого мѣсяца. Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Баратинская ул. д. № 8.

Книги, издаваемыя редакціею, будутъ продаваться подписчикамъ „Нов. Об.“ съ уступкою 50%.

3—1

ГОДЪ ОТКРЫТА ПОДПИСКА

XI.

на 1901 годъ

НА ИЗДАЮЩУЮСЯ ВЪ РОСТОВѢ НА ДОНУ
большую ежедневную политическую, литературную и экономическую
газету

ПРИАЗОВСКІЙ КРАЙ

съ еженедѣльными иллюстрированными приложеніями.

XI годъ изданія.

Давая ежедневно обширную хронику явленій и событий общей русской и заграничной жизни, „Приазовскій Край“ преслѣдуетъ разъ намѣченную путь—самую широкую разработку мѣстныхъ краевыхъ въпросовъ и нуждъ по всѣмъ отраслямъ общественной, экономической и торгово-промышленной жизни. Всѣ факты, отмѣченные общественнымъ интересомъ, находять мѣсто и надлежащее оображеніе на страницахъ газеты.

Собственные корреспонденты въ крупнейшихъ европейскихъ центрахъ, во внутренней Россіи и во всѣхъ мѣстностяхъ Донской области, Приазовья и Северного Кавказа.

Собственные и агентскія телеграммы—политическая, общественная и биржевые.

Въ еженедѣльныхъ „приложеніяхъ“—иллюстраціи, беллетристика, новости науки, литературы и промышленности, смѣсь.

УСЛОВІЯ ПОДПИСКИ ВЪ РОССІИ:

Съ доставкой и пересылкой для городскихъ и илл. подписчиковъ:	на годъ	9 руб. — к.	Безъ доставки для городскихъ подписчиковъ:	
			на годъ	8 руб. — к.
6 мѣсяцъ	5	— "	6 мѣсяцъ	4 " 50 "
5 "	4	25 "	5 "	3 " 75 "
4 "	3	50 "	4 "	3 " — "
3 "	2	75 "	3 "	2 " 25 "
2 "	2	— "	2 "	1 " 50 "
1 "	1	— "	1 "	— " 80 "

За пересылку газеты за границу взимается сверхъ подписной цѣны добавоч. 60 к. ежемѣсячно.

За перемѣну адреса взимается: съ иногородн. или съ городскихъ на иногородніе 25 к.

Подписька принимается въ Ростовѣ на Дону въ главной конторѣ газеты „Приазовскій Край“.

Разсрочка подписной платы допускается только для лицъ, подписывающихся съ 1-го января на годъ (о чёмъ должно быть заявлено при уплатѣ первого взноса), и только на сѣдующихъ условіяхъ: I) полугодичная—при подпискѣ—5 р. и къ 1-му июля—4 р. и II) въ три срока: при подпискѣ—4 руб., къ 1 мая—3 руб. и къ 1 сентября—2 р.

Редакторъ и ответственный издатель С. Х. Арутюновъ.

ОТКРЫТА ПОДПИСКА на 1901 годъ
НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

съ бесплатнымъ приложениемъ

„Вѣстника горнаго дѣла и орошения на Кавказѣ“

Издается канцеляриею главноначальствующаго гражданскою частью на Кавказѣ

„Вѣстникъ горнаго дѣла и орошения на Кавказѣ“, въ виду свое-
го специального характера, редактируется горнымъ инженеромъ, при
содѣйствии особаго редакционнаго комитета.

Приложение это выходитъ 2 раза въ мѣсяцъ, въ форматѣ $\frac{1}{4}$
листа, въ количествѣ 1—2 листовъ.

ПОДПИСНАЯ ЦІНА на газету „Кавказъ“ съ приложениемъ
„Вѣстника горнаго дѣла и орошения на Кавказѣ“: съ доставкою въ
Тифлисъ на годъ—11 руб. 50 коп., на $\frac{1}{2}$ года—6 руб., на 1 мѣсяцъ—
1 р., съ пересылкою и ногородными: на годъ—13 р., на $\frac{1}{2}$ года—7 р.,
на 1 мѣсяцъ—1 р. 50 коп.; за границу: на годъ—18 р. 40 к. на $\frac{1}{2}$ го-
да—10 р., на 1 мѣсяцъ—2 руб.

Отдельные №№ „Кавказа“ въ розничной продажѣ безъ прило-
женій по 5 к.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНИЯ: въ самой газетѣ—для объявлителей
Кавказскаго края впереди текста 16 к. позади текста—8 к. со строки
петита или занимаемаго ею мѣста; для остальныхъ—20 коп. впереди
текста и 10 коп. позади текста; въ „Вѣстнике“—15 к. съ такой же
строки или 20 руб. со страницы. Многократныя объявленія,—по согла-
шенію со скидкою.

Иногородные подписчики и объявители благоволять присыпать
плату по подпискѣ и за объявленія въ канцелярию Главноначальствую-
щаго гражданскою частью на Кавказѣ въполности, безъ вычета за
пересылку, и съ точнымъ указаніемъ, на какой предметъ (за подписку
или за объявление) высланы деньги, а при заказѣ объявлений—гдѣ та-
ковое должно быть помѣщено: въ газете или въ „Вѣстнике“.

АДРЕСЪ РЕДАКЦІИ „Кавказа“: Тифлисъ. Эриванская площадь,
домъ Харазовой. Телефонъ редакціи № 184, а конторы № 182. Адресъ
редактора „Вѣстника“: „Кавказское горное управление“.

3-1

**ՄՈՒՐՃ ԱՄՍԱԴՐԻ ԽՄԲԱԳՐԱՑԱՆԸ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱԼՈՒՆՈՑՈՒՄ**

ԹԱԼՈՒՄՆ ԵՐ

- | | |
|---|---|
| ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ՝ Այց Թիւրքաց Հայաստանին | Թիֆլիզ, 1890 թ. գինն է. 60 կ. |
| » » | Ժողովրդի կրութեան զոր-
ծը Անգանում, 1892 թ. գ. 20 » |
| » » | Հին ցաւ (Հրապարակախո-
սական խոհեր), 1900 թ. գ. 30 » |
| » » | և ԿՈՒՄԱԿԵԱՆԻ՝ Մայրենի խօս
(Հնթերց. ձեռնարկ) 1900 թ. 70 » |

1901 წლისათვის

8 n n /3 c o o s e b c o /3 n b o m f c n 3 e

მოამზე” - ცნობის ფურცელი - ა

კოველ თვიური ქურნალი

אנו לשוב

ეოგელ დღიური გაზეთი
სახლის ფუნდულია”

(Digitized by srujanika@gmail.com)

ფასი უურნადისა გაგზევნით:

ପ୍ରାଚୀନତାକୁ ଦା
ର୍ଥ୍ୟକୁ ଦା:

1	ଫ୍ଲାଇଟ .	10 ଟ.	1	ଫ୍ଲାଇଟ .	13 ଟ.
6	ଟ୍ୱୁଟ .	6	6	ଟ୍ୱୁଟ .	7
3	" . .	3 "	3	" . .	5

ფასი გაზეობს გაგვაგნო:

କ୍ଷାପ୍ତକାଳୀନିର୍ମାଣ ଓ | କ୍ଷାପ୍ତକାଳୀନ ଗୁରୁତ୍ବ:

ମୁଦ୍ରଣ ପାଇଁ ୨ ଟଙ୍କା । ମୁଦ୍ରଣ ପାଇଁ ୨ ଟଙ୍କା

ବ୍ୟାକୁଳ ତାତୋ ଧରେ ଫିଲେଗା

ଦିନବ୍ୟୁରେ—୫ ମନ୍ତ୍ର, ୧-ରେ ପଞ୍ଚିଲାମ୍ବଦ୍ୟ—୩ ମନ୍ତ୍ର
ଏବଂ ୧-ରେ ଶ୍ରୀକୃତ୍ସମ୍ବନ୍ଧାମ୍ବଦ୍ୟ—୨ ମନ୍ତ୍ର

ଏହି ପ୍ରକାଶକ ଅଧ୍ୟକ୍ଷ ହେଉଥିଲା ତଥା ମହାନାଳିକାଙ୍କ ପାଇଁ

ଶାର୍ଗ୍‌ପାଇଦି— ୩ ମାନ୍‌ଗଠ,
ଶାର୍ଗ୍‌ପାଇ ଅନ୍ତରୀଳାମିଦ୍ୟ— ୩ ମାନ୍‌ଗଠ.
ଅତିକ ବ୍ୟାଖ୍ୟାନ— ୩ ହାତ.

3063 „ମନ୍ଦିରାଳୟ“-ର ପତାଲିର ଛଳିତ ଧୀରଜିଙ୍କରୁ.

„ცნობის ფურცელი“ უფასოდ გამოვავლენა,
მხოლოდ კალაბ გარედ გასაგზავნ ზომიერის ხარჯისათ-
ვის უდინა დაუგატოს 1 მანეთი, რომელიც ხელის მოვა-
რისათანავე უდინა იქნას შეგორული.

ფისა განცხადებისა: პირველ გვერდზე სტრიქონი „პეტი-
ტით“—10 კაბ., შეოთხებზე—5 კაბ.; თუ განცხადება მ-ჯერზე
შეტად დაიბეჭდება, მაშინ დაბეჭდვა ნაკლები ელიტება.

„Цнобисъ Пурцели“.

რედაქცია იმყოფება ვანჭის დიდ ქუჩაზე, მარტინულოვის
სახლში. გადაწყვითა № 372.

22. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին անցքերի ազդեցութիւնը երկրի ներքին կեանքի վասդ, — Ամառուայ ընթացքում հրատարակուած օրէնսդրական կարգադրութիւններ, — Մի քանի վերանորոգութիւնը լուսաձուլմբ, — Լուս, մինիստրի շրջարերականը, — Նոր բարձրագոյն դպրոցներ, — Ծէալիստներին համարականում ընդունելու հարցը, — Զինուորական մինիստրի կարգադրութիւնը՝ Նորակազներին դրագիսութիւն սովորեցնելու մասին, — Արսորի վերացումը, — Գլխահարվի վերացումը Կովկասում, — Մայրերի և կենտրոնի խնդիրը, — Հովանաւորեալ արդինագործներ, — Գոյութեան կռուի էթիկան, — Ազդու միջոց սանձահարելու շահագէտներին, — Նաւթափորձների ժողովներում ձայնառութեան Էդանակը, — Պետութեան տարբեր ցեղերը կապող զգացմունքներ, — Յօրեւեաններ և մահեր, — Հայոց հոգևարականութեան վերաբերմունքը դէպի իր ժողովուրդը, — Նորագոյն նմուշներ կոնսիստորիական իրաւագիտութեան, 1. Ա. Ս. — Երեցփոխական հարց, 6. Ա. Ս. — 235
23. ԳԱԼԱՌԱԿԱՆ ԿԵՍՆՔ. Մոռացուած աշխարհ կամ «Մեռնող երկիր»: — Մեր դիմումը մեր ընթերցողներին, — Ընդհանուր տեսութիւն անցեալ տարուայ, անտեսամբան վիճակ, բնական աղջուններ, — Ախալքարտքի երկրաշարժը, հատարակական լայն բարեզործութիւն, ժողովրդի մասնակցութիւնը, — Վաշխասութիւնը Խխալքարտքի գտառում, մամուչի կատարած դերը, — Նոր դժբախտութիւն Խխալքարտքի գտառում, հացի բզեզ, — Կարս, գիւղատնութեական ընկերակցութիւններ կազմելու միտքը, — Ալէքսանդրոսով, Կարսի երկաթուղին, — Նրեւան, հոգարարձական ընտրութիւններ, — Շուշի, ճաշանակովիշ հոգարարձուներ, — «Մեռած կէտեր», — Կաղզուան, վէճեր հսաւարակութեան և բարեբարի մէջ, — Բաթում, քահանայական սոճիկի հարցը, — Բագու, բանուորների ապահովագրութիւն, ձրի ճաշարան հայ աղքատների համար, թստրն և գերասանական ճանապարհորդութիւններ, բարեզործութիւններ, մի զատաստանական դորձ: Ա. — 253
24. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ա. Մ. — 267
25. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆԻՑ, Նամակ Թէհրանից, * — 276
26. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ — 280
27. ՅԱԼԵԼՈՒԱՆ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլսովի, թարգմ. Տ. Յովի հանճիսեանի: 1—32
28. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ.
2. Խմբագրութիւնը խնդրում է յօդուածաղիրներից՝ գրել պարզ և թերթի միայն մի երեսի վրա:
3. Չընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերագրածնուում: 2եռապիրը լիս ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախուր:
4. Դրսածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:
5. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփէնելու կամ կրծառելու իրաւունքը:

ԲԱ.ՑՈՒԱԾ Է 1901 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱԿՐ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԱՎԻՆԻ

Ամբաղրութեան և մշտական աշխատակիցների նոր կազմով:
Ամբաղրութեան անդամներն են՝ պ.պ. Լեհուն ՍԱՐԳՍԵԱՆ և ԱՀՕ:

«ՍՈՒԹԻԾԸ» ամսագրին առայժմ խոստացել են աշխատավողել Ահարոննեան Աւետիս, Աղայեան Դ., Առաքելան Հ., Արծրունի Վ., Բարձրեան Մամուէլ, Բաղդազեան Զ., Բաշինջազեան Գ., Երմալեան Մ., Թումաննեան Յովհաննչս, Լիսիցեան Ատ., Լունկեսիլիչ Վ., Խալաթեան Գր., Ծառուրեան Ալ., Կարա-Մուրզա Խ., Կուսիկեան Կ., Մալխասնեան Ատ., Մելիք-Շէղլարեան-Օհաննեան բժիշուհի, Մխիթարեան Արշ., Յովհաննիսևան Տիգրան, Յովհաննիսևան Միք., Շիևան Սիմ., Սաղաթէլեան Յ., Մարզուեան Գար. բժ., Մարտիսնեան Առ., Մալուքիսան Յ., Օհաննեան Ք. բժ., և արիները:

«ՄԱԽԻՃ» ամսագիրը ունինալու է հետեւյալ բաժինները.

1. Վեպեր, սրբության կամաց, 2. Խաղաղության կամաց, 3. Գրականության և հրատարակակիցների գործադրության կամաց, 4. Քննադրանության և Մատուցման կամաց, 5. Նորության կամաց, 6. Արտադրանության կամաց, 7. Եղանական հարցեր, 8. Ներքին ակտության, 9. Գաւառական կեանք, 10. Արտաքին անուններ, 11. Խաղաղության արտադրանության, 12. Պարերական հրատարակության կամաց, 13. Յայուսաբարության կամաց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Թուսատանում տարեկան 10 պոր. Աւտասահման՝ 30 ֆրանկ.

կէս տարին	6	"	18	"
լ ամսուան	1	"	3	"

«Մարդօ ամստողին կարելի է գուշել Թօխելիսում—խմբովը սահմանը (Սրբանեան Հրապարակ), առ Խարազեանի»:

Արշակունյաց՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtch“.

Մանօքութիւն. 1900 թուի այն բաժաննորդները, որոնք լին չեն ստանայ ագդ թուի բաժաննորդակնի մնացորդը (5 ռ.), բայց և չեն ուղարկի 1901 թ. երկրորդ կիսամիակի 5 ոռորդին, կը ստանան «Ծուրճ» միայն մինչէ յունիս ամիսը—նվ դժուարանում է տարեկան բաժաննորդակնինը (10 ռ.) վճարել միանուազ, կարող է տալ մաս-մաս (սկզբում 5 ռ., մարտի՝ 1-ին 3 ռ. և յունիսի 1-ին 2 ռ.):